Ալեքին
Կառլենի ու Արամի հիշատակին

MARKAR MELKONIAN
SETA KBRANIAN-MELKONIAN

AVO

THE LIFE AND DEATH OF MONTE MELKONIAN

YEREVAN
PUBLISHED BY THE AUTHORS
2007

ՄԱՐԳԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՍԵԴԱ ԳՊՐԱՆՅԱՆ-ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՎՈ

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԱՀԸ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2007

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (2Հ)
Մ 537

Անգլերենից թարգմանեց՝
ԱՐԱՄ ԹՈՓՋՅԱՆ

Վերստուգող խմբագիրներ՝
ԱԼԵՔ ԵՆԻԳՈՄՇՈՒՅԱՆ, ՍԵԴԱ ԳՊՐԱՆՅԱՆ-ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մելքոնյան Մարգար, Գպրանյան-Մելքոնյան Սեդա
Մ. 537 Ավո. Մոնթե Մելքոնյանի կյանքը և մահը.- Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2007.- 428 էջ:

Գիրքը ներկայացնում է ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի կյանքի ուղին:

ԳՄԴ 66.3 (2Հ)

Հրատարակվում է Լոնդոնի I.B.Tauris and Co. Ltd. հրատարակչության հետ համաձայնությամբ: Այս գրքի առաջին՝ անգլերեն տարբերակը 2005 թ. լույս է ընծայել I.B.Tauris and Co. Ltd. հրատարակչությունը՝ My Brother's Road: An American's Fateful Journey to Armenia («Եղբոր ուղին. մի ամերիկացու ճակատագրական ուղևորությունը Հայաստան») վերնագրով:

ISBN 978-99930-4-977-7
© *Մարգար Մելքոնյան, Սեդա Գպրանյան-Մելքոնյան, 2007*

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Այս գիրքը շատերի հուշերի հանրագումար է և բազմաթիվ բարեկամների օժանդակության արդյունք. երախտավորների ցուցակը չափազանց երկար է բոլորին հիշատակելու համար, սակայն ոմանց անհնար է չրջանցել:

Գրքի համար շատ կարևոր են եղել Ալեք Ենիգոմշույանի արժեքավոր վկայությունները: Ալեքը միշտ ժամանակ է տրամադրել այս ծրագրի իրագործմանը, և նրա շնորհիվ գիրքը մեծապես շահել է:

Սյուզի Մելքոնյանին պետք է շնորհակալություն հայտնել ամուսնու յոթնամյա անհատույց ծանր աշխատանքի ընթացքում նրա ցուցաբերած արտակարգ համբերության համար:

Ջոել Քանդլենը միշտ պատրաստ է եղել օժանդակության ձեռք մեկնել հեղինակներին: Նրա վկայությունները հատկապես Մոնթեի մանկության, պատանեկության և համալսարանական տարիների կյանքի վերաբերյալ անգնահատելի են:

Անվերջ հարցազրույցների տոկալուց բացի, Զարլզ Մելքոնյանը շաբաթներով խնամել է իր թոռնուհիներին, երբ Մարգարը բացակա էր՝ իր ուսումնասիրությունները կատարելու համար: Առանց Զապել Մելքոնյանի՝ ընտանիքի «արխիվիստի» բարեխիղճ աշխատանքի, սույն էջերը կլինեին պակաս արժանահավատ և ուշագրավ:

Հետմահու պետք է շնորհակալություն հայտնել Պետրոս Գպրանյանին: Նրա արտասովոր հիշողության ու պատմելու բացառիկ կարողության շնորհիվ մեզ են փոխանցվել այնպիսի տեղեկություններ, առանց որոնց գիրքը թերի կլիներ: Նարդուհի Գպրանյանը տարիներ շարունակ պատրաստակամորեն հանդուրժել է բազմաթիվ հարցազրույցներ. նրա օգնությամբ մենք կարողացել ենք անգնահատելի տեղեկություններ ձեռք բերել 1983-ի հուլիսի դժվար ժամանակահատվածի մասին:

Յոթ տարվա աշխատանքի ընթացքում Մայլզ Մելքոնյանին ու Մարսիա Պետրոսյանին էլ են հարցազրույցներ բաժին ընկել: Բացի այդ, Մարսիան անտրտունջ խնամել է երեխաներին, իսկ Մայլզն գիրքը խմբագրել է:

Հակոբ ու Մանուշակ Ստեփանյանները, ինչպես նաև Ասպետ և Մարալ Ստամբուլյաններն ու Լուսիկ Գպրանյանը սիրով օժանդակել են մեզ գիրքը գրելու տարիներին:

Այս երկը նվազ հետաքրքրությամբ կընթերցվեր, եթե չլիներն Նենսի Գրիգորյանն ու Մարկ Արաքսը: Նրանց քննադատական դիտողությունները դիպուկ էին, իսկ քաջալերանքը՝ էական:

Հետևյալ անձինք ևս արժանի են հատուկ շնորհակալության. Միրիամ Գոմ՝ լրագրողական խորհուրդների, ուսումնասիրությունների ու տևական բարեկամության համար, գեներալ-մայոր Հմայակ Հարոյան՝ նախկինում Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունից, ազնիվ համագործակցության և Երևանում մեզ հյուրընկալելու համար, Պետրոս Պետրոս՝ հմուտ համակարգչային ու գրաֆիկական աշխատանքների համար, Աշոտ Շմավոնյան և Ջեֆ Կոչկարյան՝ Փարիզում մեզ ճիշտ կողմնորոշելու, Էդիկ Բաղդասարյան՝ Երևանում մեզ ցուցաբերած աջակցության, և Լևոն Զորպաճյան՝ տարբեր նյութերի վերաբերյալ արժեքավոր դիտողությունների ու խորհուրդների համար:

Մենք երախտապարտ ենք նաև մեծ թվով մարդկանց Արցախից: Մասնավորապես շնորհակալ ենք Աբո Հայրապետյանին, Կարո Թովմասյանին, Լիլիա Ավանեսյանին և Արարատ Ավանեսյանի ընտանիքին: Արցախի բազմաթիվ բնակիչներ մեծապես օժանդակել են մեզ այլևայլ ձևերով, և այդ ազնիվ մարդկանց մենք մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում:

Մեր ընկեր Նարեկ Հարությունյանն առատաձեռն նյութական օժանդակություն ցուցաբերեց, առանց որի անհնար կլիներ գրքի անգլերեն տարբերակի հրատարակությունը: Նա այդ արեց անաղմուկ ու անշահախնդրորեն:

Որևէ բացթողման կամ վրիպակի համար պատասխանատու են հեղինակները: Գրքի վաճառքից գոյացած հասույթը հատկացվելու է «Մոնթե Մելքոնյան» բարեգործական հասարակական կազմակերպությանը, որն օգնում է Արցախի ու Հայաստանի ամենակարիքավոր խավերին (www.melkonian.org):

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Լոնդոնի I.B.Tauris and Co. Ltd. հրատարակչությունն այս գրքի առաջին՝ անգլերեն տարբերակը լույս է ընծայել 2005 թ. սկզբին՝ My Brother's Road: An American's Fateful Journey to Armenia («Եղբորս ուղին. մի ամերիկացու ճակատագրական ուղևորությունը Հայաստան») վերնագրով: Գիրքը գրվել ու խմբագրվել էր լայն, հիմնականում՝ ոչ հայ ընթերցողի համար: Հայ ընթերցողներին, սակայն, հետաքրքրել են ավելի շատ մանրամասներ Մոնթեի կյանքի, հատկապես՝ պատանեկության, բանտարկության տարիների և Արցախում անցկացրած ժամանակահատվածի մասին: Այդ իսկ պատճառով սույն՝ հայերեն տարբերակը սկզբնական անգլերեն տարբերակի համեմատ ավելի շատ նյութեր է բովանդակում: Որպես անգլերեն տարբերակի հեղինակ նշված է միայն Մարգար Մելքոնյանը՝ «Սեդա Մելքոնյանի հետ»: Թեև այս հրատարակության մեջ պահպանվել է հուշագրային առաջին դեմքով պատումի ձևը, Մարգարը ցանկանում է շեշտել այն անուրանալի փաստը, որ Սեդան գրքի համահեղինակն է:

ՆԱԽԱԲԱՆ. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1993 ԹՎԱԿԱՆ)

Երբ 1993 թ. հունիսի 12-ի առավոտյան լսափողը վերցրի և լսեցի քրոջս ձայնը, հասկացա, որ նրա զանգը վերաբերում է մեր եղբորը՝ Մոնթեին: Նա մեզնից 8000 մղոն հեռավորության վրա էր, նախկին Խորհրդային Միության մի ռազմադաշտում, և մենք փորձում էինք նրան մի տուփ «ուոքի-թոքիներ» ուղարկել:

– «Ուոքի-թոքիները» հավանաբար պետք չեն գա, – ասաց Մայլեն սեղմված կոկորդով: Ապա նա հայտնեց, որ իմ միակ եղբայրն այդ օրը տեղի ունեցած մի փոխհրաձգության ժամանակ զոհվել էր հեռավոր Արցախի լեռների ստորոտին:

Նման տարօրինակ ճակատագիր՝ կարճ անդրադարտիքով այդ տղայի համար... կրտսեր եղբորս՝ տասնութ ամսով ինձնից փոքր, որի հետ ամառային երկար օրեր էինք անցկացրել՝ լողալով մեր ծննդավայր Սան Ուաքին Վելլիի (San Joaquin Valley) ոռոգման ջրանցքներում: Բայց առաջին անգամ չէր, որ ինձ լուր էր հասնում նրա մահվան մասին: Տասնհինգ տարվա ընթացքում լսել էի, որ նրան դիպուկահար է սպանել, որ նա հրանոթային արկի պայթյունի զոհ է դարձել, ռազմական սավառնակների թռիչքից առաջացած օդային հոսանքները նրան թաղել են քարաբեկորների տակ, և նրան գնդակահարել են օդանավակայանի ոստիկանները: Այնուամենայնիվ, այս անգամ գիտեի, որ վատ լուրը ստույգ է: Ես Մայլեին տվեցի միտքս եկած առաջին երկու հարցը. որքա՞ն է տևել նրա մահանալը: Եվ՝ նրան թիկունքի՞ց են սպանել: Քույրս այդ հարցերի պատասխանը չուներ:

Երկու օր անց կանգնած էի Հայաստանի մայրաքաղաք Երևանի փողոցներում՝ Մայլեի, մորս, հորս և եղբորս լավ ընկերոջ հետ. նա Կալիֆոռնիայի Վայսելիա քաղաքից էր, որտեղ մենք ապրում էինք: Մինչ քայլում էինք դեպի կառավարական հուղարկավորության վայրը, թաղմանը եկած մարդիկ սկսեցին ինձ մի կողմ քաշել ու հայտնել իրենց կասկածները. «Քո եղբորը սպանել են դարանակալներ, – ասաց մեկը. – Նրան սպասում էին»: Մեկ ուրիշը պնդում էր, թե մարդասպանն իր արարքի համար վարձատրվել է, իսկ մեկն էլ՝ որ այդտեղ անպայման թուրքերի մատը խառն է: Հետո ներկաներից մեկը շշնջաց, որ իմ եղբայրը թակարդն էր ընկել, իսկ այդ թակարդը լարել էին ոչ թե թշնամու զինվորները, այլ իրեն մոտ մարդիկ:

Դավաճանության մասին նման խոսակցությունն անհիմն չթվաց: Տարիների ընթացքում Մոնթեն հակառակվել էր բազմաթիվ մարդկանց կամքին. ոչ միայն թուրքական, իսրայելյան, ամերիկյան հետախուզական գործակալությունների, այլև ծայրահեղ ազգայնական հայրենակիցների, ինքնակոչ «Գաղտնի բանակի» նախկին խմբավորումների, տեղական գանգստերների ու զորագլուխների, և էլ ո՞վ գիտե, թե ում: Նա թերևս տասնյակ մահացու թակարդներից էր փրկվել: Մոնթեի մահվան «պաշտոնական» վերսիան միայն խորացրեց իմ կասկածները. եղբայրս՝ հարյուրավոր մարտերի փորձառու վետերանը, ինչպես ասում էին, սպանվել էր մի լքված գյուղում՝ գնալով թշնամու տանկի ուղղությամբ ու հակառակորդին իր մարդկանց տեղը դնելով: Իմ կասկածների համար պարարտ հող էր նաև այն, որ Հայաստանում անհասկանալի հանգամանքներում սպանվել էին մի քանի ռազմական ու քաղաքական գործիչներ: Անկախ նրանից՝ այդ մարդիկ դարձել էին իշխանության համար պայքարի թե «ընտանեկան բիզնեսի» վարձած հրազենի զոհեր, պարզ էր մի բան. նրանց սպանողներն ականապատ դաշտերի մյուս կողմում գտնվող թշնամիները չէին: Բայց եթե Մոնթեին դավաճանել էին, ապա հարց էր ծագում. բազմաթիվ թեկնածուներից ո՞վ կարող էր դա արած լինել:

Աչքերիս առջև նորից սկսեցին ուրվագծվել այն պատկերները, որոնք ես տարիներ շարունակ աշխատել էի ինձնից հեռու վանել: Ահա Մոնթեն՝ «Սարո» մականունով, Իրանական Քրդստանում նայում է ավազապարկերի արանքից: Ապա՝ դարձյալ Մոնթեն՝ «Աբու Սինդի» մականունով, Բեյրութում, Ցասիր Արաֆաթի հետ կողք-կողքի, կոտորակառուցվածքների տարափի տակ: Հետո՝ Մոնթեն որպես կալանավոր թիվ 752783, միայնակ՝ Փարիզից դուրս գտնվող մութ բանտախցում: Այնուհետև նորից հայտնվում է Մոնթեն, այս անգամ՝ «Տիմոթի Շոն Մաք-Քորմիք» մականունով. նա գազով ըմպելիքների շշեր է հավաքում փողոցում, Սլոբոդան Միլոշևիչին՝ խելահեղ ուղի բռնած Հարավսլավիայի նոր ղեկավարին զորակից հանրահավաքից հետո: Վերջապես՝ հրամանատար Ավոն՝ Արցախի հեռավոր լեռներում, զրահի ծռմռված բեկորներով ծածկված մարտադաշտում, հեռադիտակով նայելիս:

Թաղման առավոտյան, 1993 թ. հունիսի 19-ին, դիահերձարանի աստիճանների վրա մեզ հանդիպեց արկի պայթյունից ցնցակթված ստացած մի զինվոր: Նա գիշերն այնտեղ էր անցկացրել՝

ինքն իրեն պահակ նշանակելով ու քարե աստիճանների վրա ջղաձգորեն ննջելով: Նա ողբում էր ու շարունակ հայհոյում: Մենք բարձրացանք աստիճաններով ու մտանք սառնություն շնչող կամարի տակ: Մոնթեի մարմինը՝ նոր, քողարկաներկված զինվորական համազգեստով, դրված էր անմշակ տախտակներից պատրաստված մի ոչ խոր դագաղի մեջ, մետաղյա դարակի վրա: Դիահերձող կինը նրա գլուխը, հոնքերից վեր, փաթաթել էր վիրակապով՝ ծածկելու համար աջ քունքի խոր վերքը. այդտեղ էր մեկ շաբաթ առաջ թափանցել արկի բեկորը՝ փշրելով գանգը: Մեկն ասաց, որ գլուխն այդպես փաթաթելուց հետո որպես հարվածի միակ նշան մնացել է դիմացի վերին կոտրված ատամը: Բայց ես գիտեի, որ դա վերքի հետ կապ չուներ. քսան տարի առաջ, Կալիֆոռնիայի Սիերրա Նևադա լեռներում, այն լճակի մոտ, ուր Մոնթեն սիրում էր լողալ, մի ժայռի վրա նա սայթաքել-ընկել էր ու ատամը կոտրել:

Նույն առավոտյան, ավելի ուշ, Մոնթեի ութ զինակից ընկերներ ինքնաձիգներն ուսերից հանեցին՝ դագաղը տանելու համար: Մենք նրանց հետևեցինք դեպի «Սպայի տուն»՝ Երևանի կենտրոնում: Ջորս ժամ շարունակ, մինչ դահլիճում միապաղաղ հնչում էր գուդուկը, հուղարկավորությանը եկած հազարավոր մարդիկ, շատերը՝ ցնցոտիավոր, խմբերով անցնում էին դագաղի մոտով: Մաշված բաճկոններով գործազուրկ բանվորներ, սովահար գյուղացիներ, ռազմահագուստով զինվորականներ՝ բոլորը եկել էին իրենց հարգանքի վերջին տուրքը մատուցելու երեսունհինգամյա զորահրամանատարին, որին իրենք գիտեին որպես Ավո: Եկել էին նաև Հայաստանի նախագահն ու նրա նախարարները, երկրի խոշոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, հյուրեր՝ Իրանից, Լիբանանից, Սիրիայից ու Ֆրանսիայից: Դահլիճ մտնելուց առաջ ռուս սպաներն իրենց գլուխներից զինվորական գլխարկները հանեցին: Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպան Հարրի Գիլմորը եկավ այն ժամանակ, երբ զոհվածի հարազատներին տարել էին մի սենյակում թեյ խմելու: Նա գնացել էր՝ նախքան մենք նորից դահլիճ կմտնեինք:

Համաձայն Los Angeles Times-ի՝ այդ կեսօրին դագաղի հետևից փողոցներով գնացող մարդկանց թիվը եղել էր մոտ 100000: Տեղացի լրագրողները չափազանցեցին՝ մասնակիցների թվաքանակը հասցնելով քառորդ միլիոնի. բայց ո՞վ կարող էր հաշվել, թե Հանրապետության հրապարակում որքան մարդիկ էին ամբոխվել՝ այդ առիթով նորոգված ու լվացված փողոցներով դագաղը տանող զրահամեքենային հետևելու համար: Ո՞վ կարող էր հաշվել բոլոր նրանց, ովքեր շարվել էին դեպի բլրի վրա գտնվող գերեզմանոցը տանող վեց կիլոմետրանոց ճանապարհի եզրերին. այն բլրի, որն ասես կետագծված է Խորհրդային Միության փլատակների վրա պայթած ամենաղաժան պատերազմի զոհերի գերեզմանաքարերով: Իսկ քանի՞ հազար հոգի էին նրանք, ովքեր ժամեր շարունակ արևի տակ կանգնեցին գերեզմանի շուրջը, որի վրա մարդկային կրծքի բարձրությամբ մեխակներ ու կարմիր վարդեր էին դիզվել:

Լրատվական ծառայությունների լուսանկարներն ամերիկացիների աչքին հավանաբար ներկայացան սոսկ որպես կովկասյան հերթական՝ անարտասանելի անունը կրող աշխարհագրական վայրի բազմամարդ տեսարաններից մեկը: Բաց գերեզմանի եզրին կանգնած քահանան թրի նման ճոճում էր իր սրածայր կնգուղը, մինչ սևազգեստ ծեր կանայք ողբում էին, իսկ հազիվ խոսել սկսած փոքր երեխաները գլուխները կախել էին: Ջսափրված հայրերը, որոնք արդեն սգացել էին իրենց սպանված ուղիների համար, սգացին կրկին: Ես պարպեցի Մոնթեի ինքնաձիգի մեջ մնացած քսանմեկ փամփուշտները՝ կրակելով օդ և շիտակցելով, թե եղբայրս որքան դեմ կլիներ նման վատնողական, աննպատակ ու վտանգավոր ցույցին: Խնկի ծուխը դալարաձև բարձրանում էր երկինք...

Մոնթեն Հայաստանում շատ քիչ էր խոսել իր կյանքի մասին: Ուստի զարմանալի չէր, որ նրա շուրջը բազմաթիվ ասեկոսեներ կային. թե նա կռվել է Թեհրանի ու Բեյրութի փողոցներում, Քրդստանի ու Աֆղանստանի լեռներում, խոսակցություններ՝ սրճարաններում ռումբերի, Հունաստանում ու Իտալիայում սպանության դավերի և Ֆրանսիայում բանտարկյալների խռովության մասին: Կար նաև մութ խոսակցություն՝ Աթենքում ավտոմեքենայի հետևի նստարանին սպանված մի դեռահաս աղջկա մասին: Սակայն թվում էր, թե ոչ ոք չի կարող ասեկոսեները վերածել մի կապակցված պատմության: Պատահել էր, որ երբ մի համառ լրագրող փորձել էր խորհրդավոր հրամանատարի մասին իմանալ ճշմարտությունը, Մոնթեն կարճ էր կտրել՝ պատասխանելով. «Իմ մասին շատ բան չունիմ ասելու, օքե՞յ: Ով որ կճանչնա՝ կճանչնա... Կարևորն այն է, որ Արցախի խնդիրը հասկանանք... և բան մը ընենք...»:

Կյանքի վերջին տարիներին, երբ զինվորական պարտականություններն ամբողջովին կլանել էին նրան, նա իրեն նկարագրելը թողել էր ուրիշներին: Նորաթուխ Ադրբեջանի Հանրապետության խոսնակներից մեկը Վաշինգտոնում Մոնթեին ներկայացրել էր որպես «հանցավոր անցյալ ունեցող ահաբեկիչ»: Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտի աշխատակիցները նրան համարել էին ազգային անվտանգության համար սպառնալիք, իսկ FBI-ի մի գործակալ, որի խոսքերը հրապարակել էր Los Angeles Times-ը, Մոնթեին նկարագրել էր իբրև պարզապես մարդկանց սպանել սիրող մի վարձկանի: Հարավային Կովկասի լեռնաբնակները նրան սուրբ էին հայտարարել՝ կոչելով «մեր սուրբ տղա», իսկ New York Times-ի լրագրողը հիշատակել էր մի հայի, որը նրան անվանել էր «մեր երբևէ ունեցած լավագույն աստվածը»:

Հուղարկավորությանը եկած քիչ մարդկանց էր, սակայն, հայտնի, որ «Ավո» մականունով հրամանատարը ժամանակին եղել էր հնագիտության բաժնի՝ բազում լեզուների տիրապետող ուսանող, ով հրաժարվել էր Օքսֆորդի համալսարանում իր կրթությունը շարունակելուց՝ հանուն հեղափոխական Իրանում և պատերազմից բզկտված Լիբանանում իր հայրենակիցների պաշտպանության համար կռվելու: Է՛լ ավելի քչերը գիտեին (և դա նրանց հավանաբար չէր հետաքրքրի), որ իրենց հերոսը նաև, «փոքր քաղաքների» Կալիֆոռնիայում, եղել էր խոստումնալից բեյսբոլիստ (Little League-ի «փիթչեր»), որի նետած գնդակները թռչում էին աներևակայելի արագությամբ:

Վերջին անգամ ես եղբորս ողջ տեսել էի 1991-ի ամռանը, երբ եկել էի Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն՝ հրաբխային ժայռի մեջ փորված մի հին մատուռում նրա ու նրա հարանացուի գլխավերևում խաչ պահելու: Հարսանիքից մի քանի օր հետո Խորհրդային Հայաստանը Խորհրդային Միության հետ անհետացավ քարտեզներից: Այդ այցելության ժամանակ 1981 թվականից հետո եղբորս առաջին անգամ էի տեսնում. տասը տարի շարունակ մեր կապի միակ ձևը եղել էին թղթատարների ու բանտային գրաքննիչների միջոցով փոխանցվող նամակները: Բացառություն էր 1989-ին Ջեորջիա նահանգի Աթենք քաղաքի մի հանրային հեռախոսից Հարավային Եմենում գտնվող՝ «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» (PLO) դրասենյակ տված զանգը: Ես հեռախոսի մեջ գցել էի հարյուրուբ հատ քառորդ դոլլարանոց և այնտեղ կանգնեցի քսան րոպե՝ մինչ ուշացումով տեղ հասնող մեր բառերը մի օվկիանոսի կամ մայրցամաքի ինչ-որ կետում բախվում էին իրար: Հակառակ աղմուկին՝ զվարթ ձայնն այնուամենայնիվ հնչեց սովորականի պես, ասես դա լսել էի նաև նախորդ օրը: «Հե՛յ, ի՞նչ կա», — ծոր տվեց Մոնթեն՝ կարճ անդրադարձիքով նույն տղան:

Իրականում Մոնթեն փոխվում էր՝ վերածվելով տարբեր անձնավորությունների. տարբեր անձնագրերով և բնակության տարբեր վայրերում: Զգիտեմ, թե ինչպես՝ նա հրամանատար էր դարձել չորս հազար մարտիկների, որոնք մաս էին կազմում «նախկին Խորհրդային Միությունում կռվող՝ պատերազմից ամենից շատ դաժանացած ու ամենամոլեռանդ դրդապատճառներով առաջնորդվող ուժի», ինչպես որ Լեռնային Ղարաբաղի բանակը որակել էր անհամակիր մի լրագրող: Եվ այդուհանդերձ, նրա մահվանից մոտ երեք ամիս առաջ, մի ճակատամարտի նախօրյակին, PBS-ի համար Մոնթեի հետ հարցազրույց վարած լրագրողը նրան նկարագրել էր իբրև «բարեկիրթ կալիֆոռնիացի»: Հակառակ բոլոր փոփոխություններին ու եղբորս ինձնից բաժանող օվկիանոսներին, հակառակ լռության տարիներին և մեր տարբեր հետաքրքրություններին ու խառնվածքներին՝ ես հույս ունեի, որ լրագրողը ճիշտ էր ասել:

Այն օրը, գերեզմանի մոտ կանգնած, փորձում էի հիշել, թե ի՞նչն էր խանգարել ինձ՝ իր միակ եղբորը, Մոնթեին այցելել նրա ամենահուսահատ տարիների ընթացքում: Կամ ի՞նչն էր խանգարել՝ գոնե նրան ժամանակ առ ժամանակ մի երկու հարյուր դոլլար ուղարկել, որոնք, իհարկե, նա չէր ակնկալում: Այո՛, ես զբաղված էի եղել. միշտ ստիպված եմ դրամ վաստակել: Եվ, այո՛, Մոնթեի շուրջը տարածված հակաթուրքական աղմուկը, այլև ազերիների ու հայերի գործած փոխադարձ գազանությունների մասին լուրերն իմ մեջ խեղդել էին վերջին հավատն այն ժողովրդի հանդեպ, որին Մոնթեն երդվել էր իր ողջ կյանքում պաշտպանել: Բայց երբ կանգնած էի նրա բաց գերեզմանի եզրին, նման արդարացումներից լավագույնն անգամ ինձ ամոթալի թվաց: Նույն հարցն ինձ ավելի ու ավելի էր տանջում. ինչպե՞ս էի կարողացել եղբորս կյանքի վերջին տասը տարիների ընթացքում ինքս ինձ համոզել, որ, շատ զբաղված լինելով, չեմ կարող հետաքրքրվել, թե նա ով է դարձել:

Հուղարկավորության օրվանից ի վեր հանդիպել եմ տղամարդկանց ու մի քանի կանանց, որոնք իրենց համարում են եղբորս հրամանատարությամբ կռված զինվորներ: Ուրիշներն իրենց փողոցները, դպրոցները կամ երեխաներին կոչել են նրա անունով, կամ այն դաջել են իրենց ձեռքերին ու թևերին: Թվում էր, թե Երևանի չափահաս բնակիչների մոտ կեսը Մոնթեի հետ այս կամ այն կերպ առնչություն է ունեցել: Հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ մի ռուս գեներալ ասաց, առանց որևէ հիմքի, թե առաջին անգամ Մոնթեին հանդիպել էր, երբ նա Աֆղանստանում էր՝ որպես «Սովետներին կոտորող»: Մեկ ոտքը կորցրած մի կին պնդում էր, թե Մոնթեն փրկել է իր կյանքն ականապատ դաշտում: Մի գյուղացու զավակ հիշում էր նրա «զարմանալի պարզությունը»: Եվ այս ամենով հանդերձ՝ շատ բան մութ ու անորոշ էր մնում: Մոնթեին շրջապատում էին հակասական պատմություններ, և այն տպավորությունն էր ստեղծվել, թե ամեն մի պնդում ունի նույնքան համոզիչ թվացող հակառակ պնդում: Որտե՞ղ էր ճշմարտությունը. արդյոք նա զո՞ւսպ մարդ էր, թե՞ օդի չարաշահող: Կոմունի՞ստ էր մինչև մահվան օրը, թե՞ վերածնված ազգայնամոլ: Գերիների պաշտպա՞ն էր, թե՞ կոկորդ կտրող: Պարտաճանաչ որդի և եղբա՞յր էր, թե՞ իր ընտանիքին օտարացած մեկը: Քանի որ տարիների ընթացքում ասեկոսեները բազմապատկվել են, առասպելները վստահելի տվյալներից զատելու անհրաժեշտությունն ինձ համար ավելի ակնհայտ է դարձել:

Որոշ ժամանակ եղբորս ուղին նաև իմ ուղին էր: Ես միացել էի նրան Բեյրութում, ավազապարկերի հետևում, և հարավային Լիբանանում զենք էի վերցրել: Երկար չմնացի. թերևս՝ մեկ տարի, ընդհատումներով: Բայց դա էլ բավական էր, որ գրավեմ FBI-ի և Միացյալ Նահանգների ոստիկանական բաժանմունքների ուշադրությունը: Տարիներ շարունակ լսվող հեռախոսային խոսակցություններից, բացվող նամակներից ու FBI-ի խաբեություններից հետո ես որոշ չափով զաղտնապահ եմ դարձել և իմ ու եղբորս կյանքի մանրամասները հրապարակելու հարցում՝ դժկամ: Այնուամենայնիվ, հանուն սույն պատմության, ստիպված եմ հաղթահարել զաղտնապահությունը, որ իմ երկրորդ էությունն է:

Բայց ինչպե՞ս պետք է պատմեի Մոնթեի պատմությունը, եթե նրա կյանքի վերջին տասը տարիների ընթացքում, չհաշված 1991 թ. կարճատև այցելությունը, բացակա էի եղել: Այս խնդրի լուծումը հնարավոր դարձավ շնորհիվ Մոնթեի այրու՝ Սեդայի: Իմ բացակայության տարիների մեծ մասը Մոնթեն կիսել էր Սեդայի հետ, նրան էր հաղորդակից դարձրել իր մտքերին և մասնակից՝ իր վտանգավոր ճամփորդությանը: Այսպես ես սկսեցի բացահայտել եղբորս պատմությունը:

Մոնթեն վարել էր աստանդական կյանք, ապրել տասնյակ երկրներում, տասնյակ մականուններով ու տասնյակ կեղծ անձնագրերով: Նա իր տարիների կեսն անցկացրել էր փախստականներով բնակեցված ետնախորշերում, պարտիզանական ռազմակայաններում, թաքստոցներում, մեկուսարաններում ու բանտերում, հեռավոր խրամատներում: Նրա ճամփորդությանը մասնակցել էին բազմաթիվ մարդիկ՝ լավ ու վատ, բայց նա շատ վայրեր լքել էր շտապ ու անսպասելի: Ուստի միայն տարիներ անց, ուսումնասիրությունների, հարցուփորձի ու հայտնագործությունների շնորհիվ, ես և Սեդան կարողացանք հետևել այն քայլերին, որոնք ի վերջո նրան հասցրին ժայռոտ բարձունքի գագաթը, որտեղ նա թաղվեց ամառային այդ շոգ օրը:

Սույն գիրքն, այսպիսով, արդյունքն է իմ վեց տարվա որոնումների, երբ փորձում էի գտնել եղբորս հուղարկավորության օրը ծագած հարցի պատասխանը. ինչպե՞ս էր նա մահացել, ո՞վ էր նրան սպանել. թշնամի՞, թե՞ «բարեկամ»: Իսկ իմ ուսումնասիրության մյուս՝ է՛լ ավելի առաջնահերթ նպատակն էր՝ պարզել, թե ի՛նչ մարդ էր դարձել իմ փոքր եղբայր Մոնթեն:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ՆԱԽՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1. Փոքր քաղաքի տղան

Երբ մենք կուչ էինք եկել հրթիռներից այրված բնակելի շենքերից մեկի նախասրահում, ավազապարկերի հետևում, իմ եղբայր Մոնթեն ինձ արագ փողոցային մարտի մի կարճ դաս տվեց.

— «Առաջին համազարկը լսելուն պես թաքնվիր որևէ ծածկի հետևում, — ասաց նա. — դա այն պահն է, երբ ամենաշատ զոհերն են լինում:

Ապա՝

— Շուտ սրտապնդվի՛ր, — շարունակեց Մոնթեն՝ թեթևակի ցատկելով ծնկների վրա և մատները շարժելով կրծքի առջևում՝ կետը ցույց տալու համար. — դու պետք է ողջ ուժերդ կենտրոնացնես և պետք է դա արագ անես:

Արևելյան Բեյրութն էր, 1979-ի գարնանը, երբ Մոնթեն ու ես երիտասարդ էինք և ուժեղ, մարտի նետվելու պատրաստ: Գնացել էինք Լիբանան, որպեսզի օգնենք քաղաքացիական պատերազմից պաշտպանել շրջափակված թաղամասերում բնակվող մեր հայրենակիցներին: Սինն էլ-Ֆիլ մայրուղու մյուս կողմում գնդացրավոր փոքր բեռնատարների շուրջը դիրքեր էին գրավել լիբանանյան աջ՝ «Փաղանգավորներ» կոչվող հրոսակախմբի դիպուկահարները: Ասես Հայտնությունից հետո ավերված քաղաքում այստեղ-այնտեղ ճարճատում էին ինքնաձիգները:

Հաջորդ երկու օրը՝ մայիսի 9-11-ը, մեր աշխարհազորը մասնակից դարձավ այդ շաբաթվա ամենածանր մարտերին, երբ երկու կողմից միմյանց վրա հրազենային կարկուտ էր տեղում: «Փաղանգավորները» գործի էին դրել իրենց գնդացիրներն ու նռնականետները, իսկ մերոնք անվադողերի ներսում պայթուցիկ էին ամրացնում, վառում երկար պատրույգներն ու անվադողերը գլորում փողոցով՝ տեսնելով, թե ինչպես են դրանք պայթում ու հավերի պես ցրիվ տալիս թշնամուն: Մի անգամ, երբ Մոնթեն պատի անցքից հանեց իր «Կալաշնիկովը»՝ լիցքավորելու համար, դիպուկահարի գնդակը սուլելով անցավ անցքի միջով: Մեկ այլ թեժ մարտի ժամանակ նա, կռացած նետվելով մի լքված շինություն, վազեց միջանցքով՝ մեկ քայլ առաջ ընկնելով գնդացրի կրակահերթից, որն այրված պատը ծակեց այնպես, ինչպես կարի մեքենայի ասեղը ծակում է կտորը:

Տասը տարի անց Մոնթեն Բեյրութում անցկացրած իր տարիների մասին գրեց. «Թերևս զարմանալի է, որ ողջ մնացի»: Երբ նայում եմ անցյալին, ինձ հրաշք է թվում, որ փոքր եղբայրս բոլորեց իր երեսունհինգ տարին:

Մենք ծնվել ենք, մեկուկես տարվա տարբերությամբ, Վայսելիայում (Կալիֆոռնիա), որն աշխարհի Ընկույզի մայրաքաղաքն է: Քսաներկու մղոն դեպի հյուսիս Քինգսբուրգն է՝ Ջմերուկի մայրաքաղաքը, իսկ նրանից հինգ մղոն այն կողմ՝ Սելման՝ Ջամիչի մայրաքաղաքը: Մեր տուն տանող ճանապարհի մոտ քաղաքն ավարտվում էր: Դեպի արևելք, մեր ցանկապատից ու առվույտի դաշտից այն կողմ, դեղձի ու ընկույզի այգիներ կային, ապա՝ նարնջի անտառակներ, որ ձգվում էին մինչև Սիերրա Նևադա լեռների ստորոտը: Վայսելիայում կային նաև ուրիշ հայ ընտանիքներ: Նրանք եկել էին Ֆրեզնոյի մոտ գտնվող գերբնակեցված հին «Հայկական գաղութից»: Բայց այդ ընտանիքները ցրված էին քաղաքի ու շրջակա գյուղատնտեսական տարածքների շուրջը, և մենք երբեք չտեսանք, որ նրանք դառնան «ազգային համայնքի» նման մի բան:

Հիսունական թվականների վերջին Վայսելիան որոշ գրավչություն ուներ, երբ բնակչության թիվն այնտեղ 20000-ից քիչ էր, իսկ նոր քայլող երեխային կարող էր թվալ, թե իր տեսած միակ ջրմուղ աշտարակը գտնվում է արեգակնային համակարգության կենտրոնում: Ամիսներ առաջ Սան Ֆրանցիսկոյում ու Լոս Անջելեսում ցուցադրված կինոնկարները բերվում էին նաև Վայսելիայի «Սեքոյա» կինոթատրոն, իսկ «Միրլի ռեստորանը» (Mearle's Drive-in)՝ իր վարդագույն արտաքին մասով ու չեպսիի շշի մեծ նեոնային ցուցանակով, «փոքր քաղաքների» Կալիֆոռնիայի համար մի կատարյալ էմբլեմ էր: Main Street-ի ընտանեկան փոքր խանութների ցուցափեղկերն սկսել էին իրենց տեղը զիջել սուպերմարքեթներին, ոգելից խմիչքների ու ավտոմեքենաների խլացուցիչների խանութներին, որոնք, ասես իրար հրայից ցատկելով, Mooney Boulevard-ով ձգվում էին դեպի հարավ՝ ավելի ու ավելի խորանալով գյուղատնտեսական տարածքների և տապալված կաղնիների անտառակների մեջ:

Զաքել Մելքոնյանն իր երրորդ զավակին ու երկրորդ որդուն ծնեց Վայսելիայի քաղաքային հիվանդանոցում՝ 1957 թ. նոյեմբերի 25-ին, ժամը 4:50: Նրա ամուսինը՝ մեր հայր Ջաուլին, ուզում էր իր՝ 7 ֆունտ և 15 ունցիա կշռող տղային անվանել Մար-

վին, բայց հետո նախընտրեց «Մոնթե» անունը: Նա ուզում էր կարճ անուն, որն, ինչպես ասում էր՝ «լավ կհնչեր բարձրախոսներով», գերադասելի էր՝ բեյսբոլի դաշտի կամ մարզադահլիճի բարձրախոսներով: Համաձայն մեր ընտանեկան սովորույթի՝ Մոնթեն երկրորդ անուն չստացավ:

Մեր մայրն իր «երեխաների մատյանում» նրան նկարագրել է որպես «Շատ քնքուշ ու սիրող, բայց շատ հանդուգն ու ագրեսիվ, երբ նրան նախատում են»: Թեև Մոնթեի մաշկի գույնը նշված է իբրև «բաց», նա հետագայում գրեթե կակաոյի գույն էր ընդունել, այն աստիճանի, որ մի բնակելի շենքի պարետ նրան քշել էր «սպիտակամորթների լողավազանից»՝ համարելով «գունավոր տղա»:

Դոկտոր Հակոբ Ա. Զազմազյանը երեխային մկրտեց Վայսելիայից 20 մղոն հյուսիս-արևելք գտնվող մի փոքր բնակավայրի Հայ Ավետարանական եկեղեցում: «Եդեմ» անունով այդ բնակավայրը, որ սանդղամուտքերի ու տրակտորի կայանատեղերի մի խայտաբղետ շարք է, դարասկզբին հիմնել են «Հին երկրից» եկած երեք Աստծո մարդ: Այդտեղի բնապատկերն, ինչպես ասում են, այնքան նման էր նրանց ծննդավայրի բնապատկերին, որ հիմնադիրները որոշել էին հենց այդ վայրում, Սիերրաների ստորոտին, վերաստեղծել իրենց հայրենիքը: Եդեմը շրջապատող դաշտերն ու բլուրները, կապույտ դագաթների ֆոնի վրա, իրոք հիշեցնում են Արարատյան դաշտավայրը՝ Կովկասյան լեռների ստորոտին:

Մեկուկես սերունդ հետո, սակայն, Մեծ ճգնաժամը (Depression) խորտակեց նոր Եդեմ ստեղծելու երազը: Շրջակա ագարակներում դրամատների գործունեությունը դադարեցվեց, և Եդեմում բնակվող՝ «Հին երկրի» հույսերի հինգ հարյուր ժառանգորդների մեծ մասը հեռացավ՝ Ֆրեզնոյում ու Լոս Անջելեսում աշխատանք փնտրելու: 1971-ին նրանք, ովքեր մնացել էին, իրենց եկեղեցու հոգածությունը հանձնեցին «Ամերիկայի Երեցների խորհրդին» (Presbytery Board of America), որն այն անվանեց La Iglesia Presbiteriana de Yettem: Ապա եկավ ներգաղթածների մեկ այլ սերունդ՝ արարելու ի՛ր պատկերացրած «Հին երկիրն» ու նոր Եդեմը... Մոնթեն երբեք չմոռացավ Եդեմի չիրականացած երազի դասերը: Աշգային մշակույթն ու կյանքը Սփյուռքում հեռանկար չունեն:

Մեր հայրը, նախքան հայր դառնալը, աշխատել էր ագարակում, իսկ հետո դարձել անկախ կահույքագործ, իսկ մեր մայրը՝ նախկինում տարրական դպրոցի ուսուցչուհի, այնուհետև ամբողջովին նվիրվել էր մայրությանը: Նրանք ավելի տարիքով էին, քան մեր ընկերների մեծ մասի ծնողները: Նաև, թվում էր, նրանք տանն ուրիշներից ավելի խիստ կանոններ էին սահմանել, որոնք պարտադիր էին: Մենք ենթարկվում էինք որոշակի ռեժիմի. կային խաղի, ուտելու ու քնելու ժամեր: Զրկված էինք այնպիսի հաճույքներից, ինչպիսիք են պոնիները, երեք արագությամբ հեծանիվները, «գո-քարթերը» և այլ թարկարժեք խաղալիքներ, որքան էլ դրանց համար պայքարեինք: Նույնիսկ պաղպաղակի մեքենան, Մելքոնյանների տան մոտ գալով, մեծ հաջողության չէր հասնում: Այն ժամանակ մենք դրա պատճառ էինք համարում ավելի շուտ պուրիտանիզմը, քան համեստ միջոցները: Եվ այնուամենայնիվ, վատ չէր մեր հոր սղոցի տակից ընկնող փայտի կտորներից նավակներ, սավառնակներ ու ռետինե թելերով հրացաններ պատրաստելը:

Տարիներ շարունակ մեր հայրն իր կնոջը տալիս էր միայն շաբաթական 25 դոլլար՝ սննդի ու հագուստի համար: 1963-ին, սակայն, մեր մայրն այնքան անհարմար զգաց «Մերկուրի» տիեզերագնացության ծրագիրը դիտելու համար անվերջ հարևանի տուն գնալուց, որ պահանջեց հեռուստացույց գնել: Իսկ երբ դրամի սղությունն ավելի զգալի դարձավ, նա խնայեց մի քանի դոլլար՝ բոուլինգից հրաժարվելով: Այդուհանդերձ, մեր ծնողները կարողացան ինչ-որ կերպ մեզ հեռու պահել այդ տարիների նյութական անապահովությունից: Լինում էին ամառային հատուկ երեկոներ, երբ աշխատանքից հետո նրանք մեզ՝ Մոնթեին, մեր քույրեր Մայլեին ու Մարսիային և ինձ, տանում էին գյուղատնտեսական մեքենաների կայանատեղ: Այնտեղ, քամուց ծածանվող եռանկյունաձև պլաստիկ դրոշակների տակ, մենք մագլցում էինք բուլդոզերների անվադողերի վրա, ցատկում էքսկավատորների ու բամբակ հնձող մեքենաների բարձր նստատեղերին, թփթփացնում ղեկին և աղմուկով տարուբերում փոխանցումների լծակը: Եթե մեր բախտը բերում էր, վերջում գնում էինք համբուրգերի տաղավար, որտեղ ծալավոր շրջազգեստով մատուցողուհին մեր կանաչ «Շևրոլեի» պատուհանին էր մոտեցնում սառը զովացուցիչ ըմպելիքով բեռնված սկուտեղը:

Շաբաթը մեկ անգամ մեր մայրը ճանապարհի փոշոտ ակոսներով «Շևրոլեն» քշում էր դեպի ձվի ֆերմա, իսկ «այրելու օրերին» աղբը կրում էր առվույտի դաշտ, մեր ցանկապատից քիչ

այն կողմ, որտեղ 50 գալոնանոց մետաղյա տակառը մեր աղբակիզման վառարանն էր: Մնացած աղբը մեր հայրն իր հին '47 GMC բեռնատարով տանում էր շրջանի աղբանոցը: Մոնթեն, մեր ավագ քույր Մայլեն և ես նստում էինք թափքի մեջ, իսկ Մարսիան՝ խցիկում:

Մեր մայրը ժամանակ առ ժամանակ մեզ հիշեցնում էր, թե որքան երջանիկ ենք մենք Միացյալ Նահանգներում ծնված լինելու համար: Նա մի կողմ էր դրել մեր տատի ծանր վերմակները՝ «Հին երկրից», և օգտագործում էր ամերիկյան ոճի թեթև անկողնային պարագաներ: Մեզ սովորեցնում էր սավանները դոշակի վրա լավ ձգել, թմբուկի կաշվի նման: Այդ դոշակի վրա քնում էինք Մոնթեն ու ես: Մեր մայրը նաև պահանջում էր, որ անկողինը, հատկապես՝ անկյունները, կոկիկ լինեն: Այսպես մենք տարբերվում էինք մեր՝ երկրորդ սերնդի «Օքի» (օքլահոմացի) խաղընկերներից, որոնց մահճակալները նույնիսկ ուշ կեսօրին նման էին սպիտակեղենի անկանոն կույտի:

Հակառակ բծախնդրությանն ու խնամքին, մեր մայրն իր երեխաների պաշտամունք չուներ: Երբեք չէր ստիպում երկրորդ անգամ ճաշ ուտել, մեզ չէր նայում հուզումնալից, արցունքախառն քնքշությամբ, ուրիշների ներկայությամբ չէր շոյում և իրեն չէր կորցնում, երբ մեր կողքին անտեր շներ էին հայտնվում: Նա մեկը չէր «Հին երկրի» այն մայրերից, որոնք իրենց կյանքն անցկացնում են երեխաների վրա դողալով: Օրինակ, երբ Cayucos Beach-ում էինք, նա մեզ միայն խնդրեց զգուշանալ ստորջրյա հոսանքներից և ապա ազատ թողեց՝ ալեկոծության միջից դատարկ հորիզոնին նայելու:

Կիրակի օրերը, որքան էլ մենք ըմբոստանայինք, մեր մայրը մեզ հագցնում էր մատուցողի օգնականի նման՝ կոճակավոր օձիքով վերնաշապիկ, «երկծնկանի» շալվար, թելավոր «օքսֆորդ» կոշիկներ, թիթեռնաձև փողկապ, և տանում մոտակա «Ամերիկյան» Ավետարանական եկեղեցու Կիրակնօրյա դպրոցը: Մենք կարճ կտրած մազերով տղաներ էինք՝ ձեռքներումս 10 ցենտանոց պարունակող՝ տասանորդի կապույտ ծրարներ սեղմած: Կիրակնօրյա դպրոցում լսում էինք աստվածաշնչյան պատմություններ՝ ամեն անգամ հուսալով, որ առաջինը կլինի վերջինը, իսկ վերջինն՝ առաջինը:

Աշխարհի Ընկույզի մայրաքաղաքում մեծացող տղաների համար ոչ-ոքիչ էր լսելը, որ Սիերրայի մոտակա ստորոտները մի ժամանակ եղել էին գնացք թալանողների, անասնագողերի, նորօրյա ռոբին հուդերի թաքստոց: Մենք տեսել էինք մանկական դեմքերով, ատրճանակի պատյանի ճարմանդներ կամ «Վինչեստրներ» բռնած ելուզակների խամրած լուսանկարներ և լսել էինք նրանցից մի քանիսի անունները. Բլեք Բարթ, Ջեսսի Ջեյմս, Դալթոն եղբայրներ և ուրիշներ: Նաև լսել էինք, թե մի անգամ, վաղուց, օրինապահների մի խումբ վերադարձել էր Ցրեզնոյից՝ բերելով ամենամեծ հանցագործի՝ Ուաքին Մուրիետայի գլուխը: Սակայն հույս ունեինք, որ այդ տեղեկությունը սոսկ պարծենկոտություն էր, դրամական պարգև ստանալու համար հորինված սուտ, և որ Մուրիետան իր ավազակախմբի հետ անվնաս փախել էր Մեքսիկա:

Նայելով անցյալին՝ հիշում եմ մեր խաղերը՝ գլուխկոնծի, աթուրմա, տափկոցի, բռնոցի՝ ամառային այրող արևի տակ, ծաղիկներից հյուսված վզնոցներ: Ապա հիշում եմ քարին խփված, ցավող ոտքի մատներ, մաշկային հիվանդություն... Թաքնվելու համար փոսեր փորելն անսահման կարևոր ու լուրջ աշխատանք էր, թեև առաջին իսկ հորդառատ անձրևը քանդում էր մեր չարչարանքի արդյունքը: Ճյուղերն իջեցնելով՝ պոկում էինք «նեկտարին» կոչվող քաղցր դեղձը և կրծում շողացող տերևների ու պարող ստվերների արանքում: Տափակացրած ստվարաթղթե տուփերի վրա մենք խոտավետ լանջերից ցած էինք սահում, ըմբշամարտում հեղեղված այգիներում, բույսերի համար կանգնեցված նեցուկների արանքներով վազում լորերի, նապաստակների, կապտափոր մողեսների հետևից: Ամառային երեկոներին մեկնվում էինք տաք ասֆալտի վրա, նայում աստղերին, շնչում ծաղկող նարնջենիների ու խոտերի բուրմունքը, ականջ դնում հեռավոր գնացքների շչակին:

1965 թ. հունիսի 5-ին մեր կյանքն այլ ընթացք ստացավ: Այդ օրը մի երիտասարդ, կարմիր լույսի տակով անցնելով, իր «Կորվետով» բախվեց մեր հոր «Էքզոլայն» փոքր բեռնատարին: Մեր հայրն ամիսներ շարունակ անկողնում տանջվեց՝ մեջքի ու ողների վնասվածքներից ապաքինվելու համար: Երբ նրա բժիշկը (ինչպես հետո պարզվեց՝ չմտածված կերպով) հայտարարեց, որ նա այլևս երբեք չի կարողանա աշխատել, մեր հայրը դադարեցրեց կահույքի արտադրությունը, որը հիմնելու համար նա և իր եղբայր Սեմն աշխատել էին յոթանասուն ժամանոց շաբաթներով: Երբ նա ոտքի կանգնեց, մեր մայրը պարտաճանաչ կերպով վերա-

դարձավ վեցամյա դպրոցում իր ուսուցչությանը, իսկ մեր հայրը ստանձնեց տնային տնտեսությունն ու կերակուր պատրաստելը:

Նա մեծացել էր որպես Դեմոկրատ, սակայն, Լինդոն Ջոնսոնի վարչակարգի ժամանակից ի վեր, սկսել էր քվեարկել «ոչ թե կուսակցության, այլ մարդու համար»: 1968-ին, Նիքսոնի քարոզարշավի ընթացքում, նա, եթե ոչ քվեացուցակում, ապա առնվազն քվեախցում, Հանրապետական էր: Մի քանի տարի անց նա դարձյալ գրանցվել էր իբրև Հանրապետական: Սովորաբար նրա մահճակալի կողքը դրված էր լինում Reader's Digest ամսագիրը՝ ծալված հերթական բարոյախրատական հրապարակումը բովանդակող մի էջի վրա: Այնտեղ խոսվում էր, օրինակ, որևէ բնական աղետի ժամանակ ցուցաբերված հավատի ու արիության, կամ էլ լիբերալների նոր դավաճանության մասին: Նյութական հարցերում պահպանողական լինելով՝ մեր հայրը երբեք չէր հոգնում «ուելֆեր» թոշակի յուրացումների, նպաստով ապրող անբարոյական մայրերի ու զանազան պորտաբույծների մասին իր պարբերական պատմությունները կրկնելուց: Իսկ երբ խոսք էր գնում քաղաքականությունից, նա կտրուկ շրջվում էր Reader's Digest-ի ձախ կողմը և ասում. «Բաուտիստան դատարկապորտի մեկն էր: Պետք էր Հարավային Աֆրիկայի այդ բոլոր ապիտակամորթներին նստեցնել մի նավի մեջ ու այն խորտակել, որպեսզի լողալով գնային Եվրոպա, որտեղից եկել էին»:

Այդ օրերին մենք ուտում էինք մեծ քանակությամբ բրնձով փլավ, լցոնված խաղողի տերևներ և մի տեսակ՝ հանպատրաստից հորինված ապուր, որը մեր հայրն անվանում էր «չորբահ»: Նա նաև մատուցում էր մանրացված ցորենի փլավ, որից մենք իհարկե կուզեինք ավելի հազվադեպ ուտել: Բայց գիտեինք, որ ափսեի մեջ կերակուր չպետք է մնա. կարիք չկար մեզ նորից հիշեցնելու, որ Հնդկաստանում երեխաները սովահար են, և չի կարելի ուտելիքը վատնել: Մեզ լիովին բավական էին լուռ հիշեցումներն այն մասին, որ «Հին երկրում» նույնպես սով էր: Հնդկաստանի մասին մեր պատկերացումներն ավելի անորոշ չէին, քան այն, ինչ գիտեինք «Հին երկրի» մասին. երկուսն էլ պարզապես տեղեր էին, որտեղ մարդիկ սովահար էին՝ առանց որևէ կոնկրետ պատճառի: Այնուամենայնիվ, մենք մեզ փոքր-ինչ վատ էինք զգում, երբ մեր դասընկերները դպրոցի սրճարանում իրար էին խառնում սիսեռն ու «Սուլթերի» բիֆշտեքսը:

Մոնթեն հետաքրքրասեր տղա էր՝ միշտ պատրաստ նոր բան սովորելու: Չորրորդ դասարանում նրան ու իր ընկեր Ջոելին քննելուց հետո ուսուցիչները եզրակացրել էին, որ նրանք «Մտավորապես օժտված անչափահասներ» (“Mentally Gifted Minors - MGMs”) են: Դրա շնորհիվ իրավունք էին ստացել իրենց սիրելի ուսուցիչ Միսթեր Քլիֆֆորդի ղեկավարությամբ հանգստյան օրերին բրածո կենդանիների որոնման գնալու, աստղադիտման երեկոներ անցկացնելու և սիգարի տուփերի մեջ թիթեռներ հավաքելու: Մոնթեն շատ սիրում էր զարմանալի փաստերի մասին խոսել. օրինակ՝ որ «մոնարխ» թիթեռները թռչում են Խաղաղ օվկիանոսի մի ափից մյուսը, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը ժամում 68310 մղոն միջին արագությամբ, որ Չինաստանում կապիկի ուղեղ են ուտում և այլն: Շատ տարիներ անց նա բանտից իր հարանացուին գրել էր. «Մարդը պետք է անդադար սովորի. դա է հավանաբար կյանքում ամենից շատ հուզում ու բավարարություն պատճառում՝ չհաշված, իհարկե, իրար սիրելը»:

Մի օր եղբայրս եզրակացրեց, որ եթե մարդիկ հոգի ունեն, ապա այն ունեն նաև նապաստակները, կրիաները, պարկավոր առնետները ու աղավնիները. որոնք մեր տան հետևի բակում ու շրջակայքում միշտ զբաղված էին կեր փնտրելով: Նմանապես՝ նաև խեցգետինները, օձերն ու չերեփուկները, որոնց մենք պահում էինք դուլլերի ու հին էմալապատ կաթսաների մեջ: Ուրեմն՝ պատշաճ էր, որ փայտե խաչեր ծլարձակեին այն նարնջենու տակ, որտեղ մենք, շորի մեջ փաթաթելով, թաղում էինք մեր սատկած կենդանիներին: Հետագայում, Մոնթեի ասելով, ինքը տղայության հասակում ոչ թե կաղծում էր, թե մի օր լողալու է գորտի նման կամ թռչելու բազեի նման, այլ՝ որ մեծանալու է որպես գորտ կամ բազե: Իր ողջ կյանքում, ինքն իրեն վերահայտնագործելու պահերին, Մոնթեն պահպանում էր այս հավատը:

Փոքր հասակից նրա կյանքը փոխվեց: Մի առավոտ մեր հայրը, թեև ատում էր հրազենը, մեզ մի-մի բուռ մետաղադրամ տվեց՝ Սիերրաների Tulequoia ճամբարի հրաձգարանում մեկ փամփուշտը մեկ պենիով կրակելու համար: Պարզվեց, որ Մոնթեն 5,5 միլիմետրանոց փոքր հրացանով բավական լավ է կրակում: Հետո նա ապարդյուն խնդրում էր, որ իր համար հրացան գնեն: Երրորդ դասարանում մենք ընդունվեցինք սքաութական Cub («գայլի ձագ») Scouts խումբ, որտեղ սովորեցինք «քայլել հնդկացու նման» անձայն, կրունկներից մատների ծայր շարժու-

մով: Բայց Մոնթեն շուտով ձանձրացավ քաղցր բամբակ վաճառողներից, խցանափայտե հրթիռներից ու դանակով փայտ տաշելուց և լքեց աքաութներին՝ չհասնելով «Գայլից» բարձր աստիճանի: Նա, սակայն, երբեք չմոռացավ իր մարտակոչը. տարիներ հետո, Բեյրութում, վաղ լուսաբացին ժամապահություն անելիս, Մոնթեն այն կրկնում էր իր աշխարհազորային ընկերների համար. «Երկու, չորս, վեց, ինը/Մենք ոհմակ ենք՝ երեք, մեկ, ինը/Երկրորդ ո՛րջ, քեզնից լա՛վ»:

1966-ի գարնանը Մոնթեն ընդունվեց բեյսբոլի «Փոքր լիգա» (Little League): Նա իր թիմի երկրորդ կարճահասակն էր, բայց «փիթչերի» շրջանակի մեջ իրեն շատ վստահ էր զգում: Նորեկ լինելով՝ նետում, վազում, հարվածում էր իր՝ պարտադրանքով փորձ ձեռք բերած ավագ եղբորից շատ ավելի լավ: Որքան էլ ուժգին ես նետեի, հակառակորդից առավել կատաղի պատասխան էի ստանում: Մոնթեի դեպքում այդպես չէր. որպես կանոն՝ նա նետում էր չափազանց ուժգին, սրընթաց ու դիպուկ: Այդ տարիքում որոշ տղաներ ընդօրինակում էին իրենց սիրելի բեյսբոլիստների շարժուձևը. Մարիշալի բարձր հարվածը, Մեյզի՝ գլխարկը նետելը, Կլեմենտեի կոտրատված անգլերենը: Իսկ Մոնթեն շատ ինքնուրույն էր. գործողությունների կանոնավոր շարք՝ անտեղի ու արհեստական ոչինչ: Նա չէր դիմում անապատելի «թույլ գնդակների» և մարզական այլ հնարքների. պարզապես նետում էր ուժգին, երբեմն՝ կորագծով, բայց թռիչքը «կործանիչ» էր լինում: Պատահում էր, որ Մոնթեի նետումից հետո «քեթչերը» ցավից ցատկում էր, ձեռնոցը հանելով գցում փոշու մեջ ու թափահարում ուռած ձեռքը: Թեև Մոնթեն չափահասների հետ խաղալու համար դեռ փոքր էր, բայց մեծերի լիգայի իմ մարզիչ Միթեր Սիմմոնսը նրան ժամանակ առ ժամանակ դաշտ էր մտցնում՝ այս կամ այն խաղակեսին մասնակցելու համար: Իսկ խաղի ավարտից հետո, թաթպանները դնելով մեր թևերի տակ, դաշտը կտրելով հոգնած քարշ էինք գալիս դեպի տուն՝ ձեռքներիս սառցային պաղպաղակներն ուտելով ու մեր մարզակոշիկների սեպերով պարկավոր առնետների թմբաձև բները քանդելով:

Մոնթեն մի անգամ Candlestick Park-ում մինչև վերջ դիտեց San Francisco Giants-ի խաղը, բայց երբեք ռադիոյով չէր հետևում բոլոր խաղերին, չէր հավաքում բեյսբոլային բացիկներ կամ մտապահում Wold Series-ի արդյունքների վերաբերյալ գուշակությունները: «Փոքր լիգայում» հաջողությամբ անցկացրած երկու խաղաշրջանից հետո նա մեր հորն ասաց, որ էլ չի ուզում շարունակել: Հենց այն ժամանակ, երբ սկսվում էին «Փոքր լիգայի» լավագույն տարիները, Մոնթեն, թվում է, կորցրեց խաղի նկատմամբ հետաքրքրությունը: Ուրիշ տղաներ բեյսբոլից հեռացան լավ չխաղալու պատճառով, իսկ նա՝ որովհետև էլ չէր տեսնում հաղթահարելու դժվարություններ: Հետագա տարիներին ես ականատես եղա, թե նա ինչպես տարբեր առիթներով նույն կերպ վարվեց:

Մոնթեն հանդուրժող, ուրախ ու անհոգ երեխա էր: Նրան դժվար էր բարկացնել, բայց երբ հանկարծ ափերից դուրս էր գալիս, անկառավարելի էր դառնում: Նրա հազվադեպ բռնկումներն առավել ևս վտանգավոր էին, որովհետև, թվում էր, զայրույթն ավելացնում էր նրա նպատակասլացությունը, անվրեպությունն ու արագությունը: Ամառային մի կեսօրի մենք «կռվում էինք» ջրով լի փուչիկներով, ինչպես ենթադրվում էր՝ ընկերաբար: Ես մի մեծ փուչիկով խփեցի նրա թիակների մեջտեղը: Մոնթեն իրեն դեսուդեն գցեց՝ համապատասխան առարկա փնտրելով, ու ճանկեց մի մետաղյա փողրակի ծայրակալ: Ես արագ փախչում էի, երբ տեսա, որ նա նետելու դիրք է ընդունել: Վեր ցատկեցի՝ փորձելով այդպես հրթիռից խուսափել, բայց այն ծակեց իմ աջ կողը, և ես ցավից գալարվելով վայր ընկա: Դա, անկասկած, փայլուն նետում էր: Իր ամբողջ ուժով նա քառասուն ոտնաչափ հեռավորությունից կարողացավ հարվածել «շարժվող օբյեկտի» ուղիղ մեջտեղին: Իմ կողի վրա մինչև այսօր մնացել է լուսնաձև սպին: Թեև մենք հարցը կարգավորեցինք առանց մեծերի միջամտության, նա երբեք ինձանից ներողություն չխնդրեց: Բացի այս և մեկ-երկու ուրիշ՝ պակաս լուրջ դրվագներից, Մոնթեն պատճառ չուներ ներողություն խնդրելու, և ես չեմ էլ հիշում նրան՝ մեր մանկության տարիներին որևէ արարքի համար ներողամտություն հայցելիս, նույնիսկ՝ պատժի սպառնալիքի տակ: Ի լրումն իր՝ հազվադեպ բորբոքվող, բայց նման դեպքերում ավերիչ խառնվածքի, նա նաև կամակոր էր: Կար մի սահման, որից այն կողմ նա չէր զիջի՝ անկախ հետևանքներից: Եթե Մոնթեն առհասարակ պետք է սովորի՛ր ներողություն խնդրել, ապա՝ միայն հասուն տարիքում:

Ինչ վերաբերում է համառությանը, ապա Մոնթեի համար մի հրաշալի օրինակ կար՝ մեր ոսկրեղ քեռի Արմեն-«Աղյուս» Քիրամիջյանը (Uncle Brick): Նրա մականունն առաջացել էր ազգանվան հիմքից՝ «քիրամիջի», որ Թուրքերեն նշանակում է՝ «աղյու-

սագործ»: Այն նրա հիմնական անունն էր դարձել դեռ մեր ծնվելուց տասնամյակներ առաջ: Զլուտ, դաշվածքներով այդ ֆերմերը, որ մրգեր էր աճեցնում, օրական ծխում էր Lucky Strikes-ի երեք տուփ՝ մոխիրը շաղ տալով իր ծակծկված փայտե հատակին: «Խեղճ կին...», — հառաչում էր մեր մայրը՝ մտածելով նրա կնոջ մասին: Քեռին մեծ քանակությամբ կոնծում էր իր սարքած գինին: Այն դեղնավուն էր, փոքր-ինչ փրփրախառն և կերոսինի հոտ ուներ: Նա երբեք իրեն նեղություն չէր տալիս իր արտադրանքը շշերի մեջ լցնելուց առաջ քամիչի միջով անցկացնելու ու մոծակներից մաքրելու: Բայց գինին նույն հաջողությունն ուներ նաև նրա ընկերական շրջապատում:

Ալբոմներից մեկի մեջ պահպանվել է մի սև-սպիտակ սիրողական լուսանկար, որտեղ Քեռի Աղյուսը, գլխին թեք դրած ֆետրե գլխարկով, հիշեցնում է Ֆրենկ Սինատրային: Նա ոտքը դրել է իր հին «Կադիլլակի» բամպերին, իսկ կողքին կանգնած է Ուիլյամ Սարոյանը՝ բեղերի միջից լայն ժպտալով: Հետևում, մի բարձունքի վրա, շողում է մեր քեռու սպիտակ ներկված շտեմարանը՝ զարդարված եղջերուների պոզերով ու ավտոմեքենայի հին համարանիշերով: Սարոյանը հիացած էր նախկին դասընկերոջով՝ Hitching Post խորտկարանում տանուլ տված ծեծկռտուքների և իր՝ բաց խցիկով Aeronica Champ սավառնակով սեփական խաղողի այգի ընկնելու համար: Սավառնակը գլխիվայր ցած էր գահավիժել ու ջախջախվել, բայց Քեռի Աղյուսը, ինչ-որ հրաշքով, միայն քիթն էր կոտրել: Մի երկու օր հետո նա պոկել էր վիրաբուժական կարերը՝ բացատրելով, որ դրանք «քոր են առաջացնում»: Սա տեղի էր ունեցել մոտավորապես Մոնթեի ծննդյան օրերին, իսկ այնուհետև, տասնամյակներ շարունակ, Քեռի Աղյուսի Champ-ի կոտրված պրոպելլերը կախված էր նրա օջախի վերևում:

Տարիների ընթացքում բոլոր մյուսներիս համար պարզ դարձավ, որ Քեռի Աղյուսը պարզապես նողկալի մարդ էր: Ավելի, քան շատ աշխատելը, նրա բնորոշ հատկանիշներն էին՝ հարբելը, հայհոյելը և ծեծ ուտելը: Նրանով հիացած զարմիկը, սակայն, դա հասկանալու համար բավականաչափ երկար չվայելեց նրա ներկայությունը: Նա միշտ Քեռի Աղյուսին հիշում էր ոչ թե որպես սոսկ պարծենկոտի մեկը, այլ՝ որպես «Թոկից փախած»: Ոգելից խմիչքի ապօրինի վաճառքը, ծեծկռտուքներ սարքելը, հայհոյանությունը, բժշկի խորհուրդները բանի տեղ չդնելը՝ այս ամենը մեկտեղ և երկար տարիներ շարունակ, որքան էլ որ դրանք առանձին վերցրած դատապարտելի էին, ստեղծել էին մի հանդուգն ու կոմիկական կերպար, որը Մոնթեին զվարճացնում էր: Հասուն տարիքում նա հանկարծ գլուխը հետ էր տանում ու ծիծաղում՝ հիշելով իր կորիճ Քեռի Աղյուսին:

Շաբաթվա վերջում, կեսօրին, մենք հաճախ էինք լինում Քեռի Աղյուսի ագարակում և առհասարակ ամառվա մի մասն այնտեղ էինք անցկացնում, Chestnut ու Jenson փողոցների անկյունում՝ շրջապատված 40 ակր խաղողի վազերով ու ազատ զբոսնող սիրամարգերով: Երբեմն մեր երկրորդ զարմիկ Սթեյսին մեզ էր տալիս իր պոնիի սանձը, և մենք առանց թամբի վարգում էինք շրջակայքում: Իսկ երբ ջերմաչափի սնդիկը շատ էր բարձրանում, բոլոր զարմիկները մտնում էին էվկալիպտի մոտ գտնվող ջրափոսը, որը լցվում էր ոռոգման խողովակից թափվող ջրով: Հենց այդ ծառի մոտ էր կանգնած ժանգոտում հին «Կադիլլակը»: Լողալու համար կար նաև Thompson Ditch-ը՝ մի մոտակա ոռոգման ջրանցք, որը մուտք է գործել Սարոյանի առնվազն չորս պատմվածք:

Վայսելիայում մենք ժամանակ առ ժամանակ հայտնվում էինք ոչ այնքան հաճելի իրավիճակներում: Մի անգամ, երբ ես ու Մոնթեն բռնոցի էինք խաղում դաշտում, մի անգլո-ամերիկացի տղա մեր կողմը քշեց իր գունագեղ «կատվաձուկ» հեծանիվն ու հայտարարեց, որ մեքսիկացիներին չի կարելի այդ դաշտ մտնել: Նա կռիվ էր փնտրում: Բոլորը գիտեին, որ մեքսիկացիներին ավելի քաղաքավարի ձևով կոչում են «իսպանացի»: Թեև նա ակնհայտորեն մեզ ձեռնոց էր նետել, ես տատանվում էի: Մի կողմից՝ ուզում էի կռվից խույս տալ, որովհետև հակառակորդը մեզնից մի քանի տարով մեծ էր (Մոնթեն ու ես այն ժամանակ համապատասխանաբար 10 և 11 տարեկան էինք) և, բնականաբար, ֆիզիկապես ավելի ուժեղ, բայց մյուս կողմից՝ չէի ուզում դաշտից հեռանալ՝ «պոչս ոտքերիս արանքում»: Բարեբախտաբար Մոնթեն չսպասեց իր ավագ եղբորը, այլ հանկարծ այդ «աքլորին» խրոխտ պատասխանեց, որ մենք ոչ թե մեքսիկացիներ ենք, այլ հավայացիներ: Զգիտեմ՝ լո՞ւրջ էր նրա ասածը, թե ոչ: Գուցե նա հիշել էր մեր մոր պատմածն այն մասին, թե ինքն ամուսնանալուց առաջ երրորդ դասարանի ուսուցչուհի էր եղել Գառիլոյի (Big Island-ում) մի շաքարեղեգի պլանտացիայում: Կամ գուցե Մոնթեն տեղում այդ սուտը հորինեց՝ իրեն ու իր եղբորը դժվար կացությու-

նից հանելու համար: Ինչ որ է՝ սպառնալից տեսք ընդունած երկու «հավայացիներին» երես առ երես հանդիպելով՝ օրենքի ինքնակոչ պաշտպանը շփոթված նահանջեց:

Ինչ վերաբերում է մեր ազգային պատկանելությանը՝ մենք անորոշ կերպով գիտեինք, որ հայ ենք, բայց մեզ համար հստակ չէր, թե դա ինչ է նշանակում: Խոհանոցից դուրս մեր ծնողներն այդ մասին առանձնապես չէին խոսում, և մեր տանը չկար տատ կամ պապ, որ մեզ բավարար տեղեկություններ տար: Ողջ էր միայն մեր մոր մայրը՝ Ջեմայման, որը 1964 թվականից ի վեր ապրում էր Ֆրեզնոյից արևելք գտնվող մի ծերանոցում: Այն էվկալիպտների անտառակում էր, մայրու փայտից սարքած մի խարխուլ ամբարի հետևում, որը նման էր կործանված նավաբեկորի: Երեք տարի շարունակ, մինչև մեր տատի մահը, համարյա ամեն շաբաթվա վերջում մեր մայրը մեզ տանում էր նրա սենյակ, և մենք համբուրում էինք նրա՝ շաբաթեշաբաթ ավելի գունատվող ու նիհարող այտը: Ապա վազում էինք դուրս՝ կապտափոր մողեսներ բռնելու:

Ծերանոցը լի էր «Հին երկրի» զառամյալ կերպարներով. տանջահար, ամքած հայեր, որոնց լեզուն ու սրցունքները մենք չէինք հասկանում: Նրանք «փինոքլ» թղթախաղով էին զբաղված, և լավագույն խաղացողը սուր ականջներով, կշռաքարի նման գլխով ու խոժոռ հայացքով մի մարդ էր: Նրան «Փողի պարկ» էին ասում և պատմում, թե այդ մարդն իր գանձերն ինչ-որ տեղ (երևի՝ «Հին երկրում») թաքցրել էր: Սանդղամուտքի մոտ օրորվող պառավների ծնոտներին ու թևերին անհասկանալի կապույտ դաջվածքներ կային: Մեկ ուրիշ սևազգեստ ծեր կին՝ տիկին Քլաուդը, նույնպես դաջվածք ուներ՝ արմունկի ու դաստակի միջև: Նա պնդում էր, թե դա իր ձեռքի գործն է, և ինքն է այդ գրությունը՝ «1915», մեխով ներարկել իր մաշկի տակ՝ մոխրի ու թքի խառնուրդից պատրաստված թանաքով: «Ի՞նչ ունեմ» («Ի՞նչ անեմ»), — ասաց տիկին Քլաուդն իր մայրենի բարբառով: Թվում էր՝ նրա խելքը տեղն է, ուստի Մոնթեն ու ես չգիտեինք՝ ինչ մտածել նման պատմությունների մասին:

Գլուխ 2. Երկիմաստություն

Մեր հայրը ֆերմերությանը վերադառնալու հույս էր փայփայում: 1960-ական թվականների վերջին արժեթղթերի բորսայում մի քիչ փող վաստակելով՝ նա կարծեց, թե եկել է հարմար ժամանակը: 1969-ի սկզբին, երբ ես 12 տարեկան էի, իսկ Մոնթեն՝ 11, մեր հայրը մեզ հարցրեց, թե ինչ կնախընտրեինք՝ մեկ տարի ճամփորդե՞լ Եվրոպայում, թե՞ Սիերրայի ստորոտին «կայսերական» խաղողի 10 ակրանոց այգի ունենալ: Պատկերացնելով խաղողի որթերի նեցուկների արանքով անցնող ձիու արահետներ՝ մենք իսկույն պաշտպանեցինք խաղողի այգու գաղափարը: Բացի այդ՝ չէինք ուզում, հանուն հին, ձանձրալի Եվրոպայում մեկ տարի անցկացնելու, հեռանալ մեր տնային կենդանիներից ու ընկերներից: Մեր քվեն, սակայն, քիչ նշանակություն ունեցավ, քանի որ մեր մայրն ու հայրը, սկսած պատանեկան տարիքից, իրենց տեղում հանգիստ նստող չէին:

Այդ ժամանակ մեր ծնողների ճամփորդելու կիրքն ինձ գրավիչ չթվաց: Երբ վարսավիրներն ու մեր խաղընկերների հայրերը լսեցին նրանց ուղևորության ծրագրի մասին, գլուխներն օրորեցին ու սկսեցին մեզ հարցեր տալ, որոնց պատասխանը չունեինք: «Ինչպե՞ս է Զառլին փող աշխատելու», «Ո՞վ պետք է ձեր տանը հետևի, երբ դուք գնաք», «Ինչո՞վ է նա զբաղվելու, երբ վերադառնաք»: Այսօր այդ ամենը վերհիշելով՝ մտածում եմ, որ նրանց մտքում կար նաև բարձրաձայն չասված հիմնական հարցը. «Ինչո՞ւ է Զառլին իր կյանքի ողջ խնայողություններն ու ավելի քան մեկ տարի նվիրում անորոշ ուղղությամբ մի ճամփորդության: Չէ՞ որ նրան հարկավոր է ագարակի համար սերմեր գնելու փող խնայել»:

Մոնթեն ու ես չգիտեինք՝ ինչպես պատասխանել այդ հարցերին, իսկ մեր հորը դրանք ամենևին չէին հուզում: Նա վերցրեց քոլեջում մեր կրթության համար մի կողմ դրած գումարը, մեզ մտցրեց դեղին «Բյուիք» ավտոմոբիլի մեջ և 10-րդ մայրուղիով շարժվեց դեպի արևելք: Մեր առաջին թռիչքը նախատեսված էր Նյու Յորքից: Նստեցինք «Իսլանդական ավիաուղիների» տուրբինապաուտակավոր օդանավն ու թռանք Կեֆլավիկ: Մի քանի օր անց, Լյուքսեմբուրգում, մեր հայրը գնեց մի օգտագործած «Ֆոլքսվագեն» տուն-մեքենա՝ միջազգային օվալաձև համարանիշով, և հաջորդ տասնհինգ ամիսների ընթացքում մենք ան-

ցանք 41000 մղոն՝ Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի ու Մերձավոր Արևելքի 41 երկրներով: Երբեմն քնում էինք հյուրանոցներում, բայց ավելի հաճախ գիշերում էինք քեմփինգներում կամ ճանապարհից այն կողմ տարածվող դատարկ դաշտերում, իսկ մի առավոտ արթնացանք գնչուների ճամբարում: Մեր ծնողները քնում էին ծալովի մահճակալին, Մայլեն՝ բացվող տանիքի տակ, ճոճքի վրա, Մարսիան՝ դիմացի բաժանմունքում կախված ճոճքի վրա, իսկ Մոնթեն ու ես՝ կտավե նարնջագույն վրանում: Որոշ փորձ ձեռք բերելուց հետո մենք ուղեբեռի դարակից վրանը հանում ու խփում էինք հինգ րոպեի ընթացքում:

Ամստերդամում մեր հայրը ներկայացավ մի մարմնեղ, պատկառելի բեղերով գորգի առևտրականի, որի ազգանունը, խանութի ցուցանակից դատելով, վերջանում էր «յան»-ով, ինչպես մերը: Առևտրականն, օտար քաղաքում հայրենակիցների հանդիպելով, ուրախացավ և մեզ հրավիրեց իր խանութ սուրճի: «Սադիր» կոչվող ցածր թախտին նստած, գորգերով ու նարգիլեներով շրջապատված՝ նա զվարթ գրուցում էր այնքան ժամանակ, մինչև որ խոսք գնաց իր ընտանիքի մասին: Այդ պահին նրա դեմքը հանկարծ մթնեց, և նա պատմեց, թե Թուրքերն ինչպես էին սրերով ու սվիններով խողխողել իր ընտանիքի անդամներին: Նա ձեռքերի ափերը սեղմեց իրար և, աչքերն ուղղելով երկինք, աղոթելու դիրք ընդունեց. «Քահանան նրանց ասել էր, որ կփրկվեն, եթե աղոթեն»: Նա հայացքն ուղղեց Մոնթեին ու ինձ և մի ձեռքով մյուսը սղոցելու շարժում արեց՝ կարծես երշիկ էր կտրատում. «Թուրքերը մտան եկեղեցի և մորթեցին նրանց, երբ նրանք աղոթելու համար ծնկի էին եկել»: Ապա նա առաջ թեքվեց ու չարությամբ ատամների արանքից նետեց. «Աստված սպանեց նրանց, Հիսուսը սպանեց նրանց, խաչը սպանեց մեզ»:

Մոնթեն և ես պապանձվել էինք՝ նման ատելածանարգությունից ցնցված: Նայեցինք մեր հորը: Թեև նա եկեղեցի դնացող չէր, բայց թվում էր, թե «ողորմած Աստծո հետ» սրտագին հարաբերությունների մեջ է: Այդ պահին, սակայն, նա միայն շրթունքները սեղմեց ու տխուր տեսք ընդունեց: Նա նման թեմաներով շատ չէր խոսում, բայց մի անգամ մեզ ասաց, թե մեր «Հին երկրի» նախնիները կոտորվել էին, որովհետև նրանց կրոնն արգելում էր չարին հակառակվել: Մենք պատկերացրինք կացնի շեղբի տակ ծնկի եկած ոչխարների: Պարզ չէր՝ մեր հայրն այդպիսի վարմունքը համարում էր հիացմունքի արժանի՞, թե՞ հիմարություն, թե՞ և՛ մեկը, և՛ մյուսը:

Որքան ավելի հարավ էինք գնում, այնքան սնունդն էժանանում էր: Մենք մի քանի ամիս մնացինք Իսպանիայում, Միջերկրական ծովի ափին, Costa del Azahar-ում գտնվող El Grão de Castellón ձկնորսական քաղաքի մի բնակարանում: Այնտեղ մեր հայրն ընկերացավ սարդինայի ձկնորս Սինյոր Ալվարեսի հետ, որը դեռ չէր բոլորել իր երեսուն տարին և, ինչպես ինքն էր ասում, Ֆրանկոյին ատող սոցիալիստ էր: Մենք այցելում էինք նրան, նրա կնոջն ու փոքրիկ աղջկան՝ առաջին հարկում գտնվող իրենց նեղ բնակարանում: Այնտեղ մութ էր, իսկ տարածությունը՝ սահմանափակ, բայց կային ծովից տարիների ընթացքում ձկնորսական ցանցով դուրս բերված բազմաթիվ՝ միջերկրածովյան մշակույթի գանձերի բեկորներ. հունական մետաղադրամներ, մ.թ.ա. 3-րդ դարի կավանոթների կտորներ, հռոմեական կիսանդրու մաս և Reconquista-ի ժամանակաշրջանի ճաքած կճուճներ: Տարիներ անց Մոնթեն այդ տեսարանը նկարագրեց իր կարճ ակնարկում, որը նա գրել էր որպես մի հնագիտական ուսումնական ծրագրի համար դիմումի մաս: Թեև Սինյոր Ալվարեսն աղքատ էր, բայց նա փայփայում էր այդ հնությունները՝ «բացառելով դրանք վաճառելու հնարավորությունը»: Նա այն մարդկանցից էր, որոնց համար բարձր արժեքները չէին փոխակերպվում դրամի:

Մի կեսօրի, երբ մանր անձրև էր տեղում, Մոնթեն ու ես ցլերի հետ վազեցինք Կաստելլոնից հարավ գտնվող Բուրրիանա քաղաքում: Չգիտեմ, թե ինչու՝ սովորաբար խիստ մեր ծնողները մեզ թույլ տվեցին բարիկադների վրայով մագլցելով հայտնվել նեղ փողոցներում, կատաղի ցլերի առջևում: Նույնիսկ մեր առավել սանձարձակ ընկերների ամենաթող հայրերը նման բան թույլ չէին տա: Բայց մեր հայրը սիրում էր կրկնել «Երբ մարդ Հռոմում է...» արտահայտությամբ սկսվող թևավոր խոսքը, ուստի նա հավանաբար մտածել էր, թե ցլերի հետ վազելն իսպանացի տղաների «հասունության ծեսն» էր: Այսպիսով, 12 և 13 տարեկան լինելով՝ Մոնթեն ու ես այդ վազող տղամարդկանց ամբոխի ամենակրտսեր անդամներն էինք: Հանկարծ, չեմ հիշում ինչպես, մենք մենակ մնացինք՝ նեղ փողոցով փախչելով մի նիհար ջահել ցլից: Մենք վազում էինք ամբողջ ուժով՝ փնտրելով մի հարմար պատնեշ, որի վրա մագլցելով կփրկվեինք ցլի եղջյուրներից: Երբ հասանք մի խաչմերուկի, Մոնթեն վազեց ուղիղ, իսկ ես թեքվեցի

աջ: Անկյունից ոչ հեռու ես սայթաքեցի ու ընկա թաց սալահատակին: Տեսա, թե ինչպես ցուլը նույնպես թեքվեց աջ, կանգ առավ ու եղջյուրներն իջեցրեց: Ձեմ մոռանում այդ կենդանու տխուր, գեղեցիկ աչքերը, թաց մռութը, քթածակերից դուրս եկող գոլորշին ու սալահատակին թափվող անձրևի ձայնը: Հաջորդ վայրկյանին Մոնթեն ձեռքերը թափահարելով վազեց դեպի ցուլը, որը շրջվեց ու վազեց նրա հետևից: Ես Սարագոսայում տեսել էի, թե ինչպես ցուլը մահացու պողպահարեց ցլամարտիկին, ուստի վստահ էի, որ իմ արագ մտածող փոքր եղբայրն ինձ փրկեց առնվազն լուրջ վնասվածքից: Մենք դարձյալ միացանք, մագլցեցինք բարիկադների վրա և այլևս երբեք ցլերի հետ չվազեցինք:

Մեր հայրը մեզ ուղարկեց Կաստելլոնի՝ Academia Almi կոչվող մի փոքր տեխնիկական դպրոցում իսպաներեն սովորելու: Մի անգամ, խոսակցական վարժությունների ժամանակ, մեր ուսուցչուհին՝ քոլեջի մի սիրունիկ ուսանողուհի, որին դիմում էինք «Սինյորիտա Բլանկա», շրջվեց Մոնթեի կողմն ու հարցրեց. De donde vienes? («Դու որտեղացի՞ ես»): Մոնթեն պատասխանեց, որ ինքն, անշուշտ, կալիֆոռնիացի է: Սինյորիտա Բլանկան բազմանշանակ նայեց նրան. մենք նման չէինք ամերիկյան ֆիլմերի խարտյաշ տղաներին: «Ի նկատի ունեմ՝ որտեղի՞ց են քո նախնիները», — հարցրեց ուսուցչուհին: Այդ ժամանակ Մոնթեն ու ես երևի ցույց կտայինք Մերձավոր Արևելքի քարտեզի վրա որևէ կետ՝ իբրև մեր հայրենիք: Բայց ինձ հատկապես չփոթեցրել էր, որ երիտասարդ իսպանուհին, ում մենք ճանաչում էինք ընդամենը մի քանի շաբաթ, հանկարծ մեզ համար բացահայտեց, որ մեր կերպարն իր աչքին ամենևին այն չէր, ինչ մեր: Նրա համար մենք ամերիկացիներ չէինք, ինչպես միշտ ենթադրել էինք: Այդ օրվա մնացած մասի և հետագա ամիսների ընթացքում Մոնթեին հանդիստ չէր տալիս Բլանկայի հարցը՝ «Դու որտեղացի՞ ես»:

Գարնանը մենք նստեցինք մեր տուն-մեքենան ու նորից ճանապարհ ընկանք, այս անգամ՝ դեպի արևելք, Սուրբ Երկիր: Ճանապարհին, Իտալիայի ու Բուլղարիայի միջև, մեր մայրը ցանկություն հայտնեց գնալու իր նախնյաց՝ Թուրքիայում գտնվող քաղաքը: Հնում այն կոչվել էր Մարզվան, բայց քարտեզի վրա կար միայն Մերզիֆոն: Մոնթեն ու ես հետաքրքրություն ցուցաբերեցինք: Այդ ժամանակ արդեն, ամեն մեկս իր չափով, որոշ գաղափար ունեինք մեր «ազգային ժառանգության» մասին և փոքր-ինչ ամաչում էինք դրանից: Մեզ համար «Հին երկիրը» մի

մութ, անհրապույր տեղ էր՝ կապված դառը, սմքած ձիթապտղի, ողբացող ծեր կանանց ու Քեռի Ջեքի ծխախոտի ծխի հետ: Ուստի ուզեցինք մեր նախնիների հայրենիքին ի մոտո ծանոթանալ:

Երբ հայրս Ստամբուլում զբոսաշրջության գրասենյակի մի աշխատակցի բացատրեց, թե մեզ ինչու են հարկավոր արևելյան Անատոլիայի ճանապարհների քարտեզներ, աշխատակիցը գլուխը մոայլ օրորեց և ի պատասխան ասաց մեկ բառ՝ «Քրդերը»: Ոչ վաղուց քրդերը կանգնեցրել էին հերթական ավտոբուսը՝ ուղևորներին հրազենի սպառնալիքով թալանելու համար: Հեռվից հեռախոսազանգերը տեղ չէին հասնում, որովհետև կապի ծառայության համազգեստ հագած քրդերը կտրել էին մի քանի կիլոմետր հեռախոսալար և այն ոլորելով տարել լեռները՝ վերադարձնելու համար փրկագին պահանջելով: Նրանք նաև հարձակվել էին ոստիկանների վրա: Երբ պարզ դարձավ, որ մեր հայրը վճռականորեն է տրամադրված և իր մտադրությունից հետ չի կանգնելու, աշխատակիցը նրան խորհուրդ տվեց գոնե մայրամուտից հետո չճամփորդել:

Մոնթեին զվարճալի թվաց, որ Թուրքերն այդպես վախենում են քրդերից: Քրդերը, ինչպես այնտեղ ասում էին, ծնվել էին որպես վատ մարդիկ և, բացի այդ, շատ ուշ-ուշ էին լողանում: Նրանք Թուրքիայի bandidos-ն էին, կոմանչիները և «անմաքուր խիղճը»: Մենք լսեցինք նրանց մասին զանազան քստմնելի պատմություններ, որոնք հակառակ ազդեցություն ունեցան, և Մոնթեն իսկույն քրդերի նկատմամբ համակրանքով լցվեց: Գուցե Կալիֆոռնիայի «ռոբին հուդերի»՝ Ուլքին Մուրիետայի հրոսակախմբի նման, քրդերի բանդաները նույնպես ավելի վեհ նպատակներ ունեին, քան զուտ կողոպուտը:

Մոնթեին, սակայն, հիասթափություն էր սպասում, որովհետև, հասնելով Ջորում, Քրդստանից հարյուրավոր մղոններ հյուսիս-արևմուտք, մենք ճանապարհին ոչ մի անգամ ելուզակի չհանդիպեցինք: Գիշերն անցկացրինք այդ քաղաքում, որտեղ տղամարդիկ հագած էին պարկանման շալվարներ՝ ոտքերի արանքի ծալքավոր մասում խելացիորեն գետեղված անցքերով: Հաջորդ վաղ առավոտյան, նախաճաշին կաթնապուր ուտելուց հետո, մենք շարժվեցինք հյուսիս-արևելք. Ջորումից մինչև քարտեզի վրա «Մերզիֆոն» անունով նշված վայրն ընդամենը 40 մղոն էր: Արևոտ օր էր, ուրբաթ. ճանապարհն անցնում էր կակաչի դաշտեմուտ, անհրապույր տեղ էր՝ կապված դառը, սմքած ձիթապտղի, ողբացող ծեր կանանց ու Քեռի Ջեքի ծխախոտի ծխի հետ: Ուստի ուզեցինք մեր նախնիների հայրենիքին ի մոտո ծանոթանալ:

Երբ հայրս Ստամբուլում զբոսաշրջության գրասենյակի մի աշխատակցի բացատրեց, թե մեզ ինչու են հարկավոր արևելյան Անատոլիայի ճանապարհների քարտեզներ, աշխատակիցը գլուխը մոայլ օրորեց և ի պատասխան ասաց մեկ բառ՝ «Քրդերը»: Ոչ վաղուց քրդերը կանգնեցրել էին հերթական ավտոբուսը՝ ուղևորներին հրազենի սպառնալիքով թալանելու համար: Հեռվից հեռախոսազանգերը տեղ չէին հասնում, որովհետև կապի ծառայության համազգեստ հագած քրդերը կտրել էին մի քանի կիլոմետր հեռախոսալար և այն ոլորելով տարել լեռները՝ վերադարձնելու համար փրկագին պահանջելով: Նրանք նաև հարձակվել էին ոստիկանների վրա: Երբ պարզ դարձավ, որ մեր հայրը վճռականորեն է տրամադրված և իր մտադրությունից հետ չի կանգնելու, աշխատակիցը նրան խորհուրդ տվեց գոնե մայրամուտից հետո չճամփորդել:

Մոնթեին զվարճալի թվաց, որ Թուրքերն այդպես վախենում են քրդերից: Քրդերը, ինչպես այնտեղ ասում էին, ծնվել էին որպես վատ մարդիկ և, բացի այդ, շատ ուշ-ուշ էին լողանում: Նրանք Թուրքիայի bandidos-ն էին, կոմանչիները և «անմաքուր խիղճը»: Մենք լսեցինք նրանց մասին զանազան քստմնելի պատմություններ, որոնք հակառակ ազդեցություն ունեցան, և Մոնթեն իսկույն քրդերի նկատմամբ համակրանքով լցվեց: Գուցե Կալիֆոռնիայի «ռոբին հուդերի»՝ Ուլքին Մուրիետայի հրոսակախմբի նման, քրդերի բանդաները նույնպես ավելի վեհ նպատակներ ունեին, քան զուտ կողոպուտը:

Մոնթեին, սակայն, հիասթափություն էր սպասում, որովհետև, հասնելով Ջորում, Քրդստանից հարյուրավոր մղոններ հյուսիս-արևմուտք, մենք ճանապարհին ոչ մի անգամ ելուզակի չհանդիպեցինք: Գիշերն անցկացրինք այդ քաղաքում, որտեղ տղամարդիկ հագած էին պարկանման շալվարներ՝ ոտքերի արանքի ծալքավոր մասում խելացիորեն գետեղված անցքերով: Հաջորդ վաղ առավոտյան, նախաճաշին կաթնապուր ուտելուց հետո, մենք շարժվեցինք հյուսիս-արևելք. Ջորումից մինչև քարտեզի վրա «Մերզիֆոն» անունով նշված վայրն ընդամենը 40 մղոն էր: Արևոտ օր էր, ուրբաթ. ճանապարհն անցնում էր կակաչի դաշտե-

րի միջով: Ճամփեզրին գոմեշ արածեցնող տղաներն այնպես էին կակաչի սոխուկներ ծամում, կարծես դրանք ծիրան լինեին:

Մենք դեռ Հայաստանից հարյուրավոր մղոններ արևմուտք էինք, բայց դա Թուրքիայի այն մասն էր, որը մեր մոր կողմի ազգականները կոչում էին «Հին երկիր»: Մենք հենց այնտե՛ղ էինք:

Մինչ մոտենում էինք Մերզիֆոնին՝ կտրելով այն մարգագետինները, որոնք դարեր շարունակ ոչխարների արոտավայր էին եղել, տեսնում էինք բլուրների վրա շարված՝ կղմինդրե կտուրներով կոկիկ տներ: Դրանք հեռվից, կետերի չափ, նման էին կարմիր ու սպիտակ քարաքոսների: Ես չտեսա քաղաքի պարիսպը, որը միանգամից աչքի էր զարնում Մարզվանի՝ դարասկզբի լուսանկարներում:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ Մերզիֆոնի բնակիչների թիվը 23475 էր՝ գրեթե այնքան, որքան Վայսելիայում, երբ մենք այնտեղից մեկ տարի առաջ հեռացանք, և մոտավորապես՝ 80 տարի առաջվա Մարզվանի բնակչության չափ: 19-րդ դարի վերջին այդ քաղաքում բնակվել էին 10000 հայեր, որոնցից մեկն էր մեր մոր հայրը՝ Միսաք Ֆիրամիջյանը: Նրա ապագա կինն ու մեր տատը՝ Ջեմայման, նույնպես ապրել էր այնտեղ, բայց ընդամենը իր կյանքի առաջին 3 տարին, մինչև 1883 թվականը, երբ նրա հայրն իր դստերը տարել էր Ֆրեզնո՝ 8000 մղոն հեռու:

Քաղաքի մի կողմում, բլրի դագաթին, կանգնած էր եվրոպական ոճով կառուցված մեծ շենքերի մի խումբ: Դա մի ժամանակ եղել էր «Անատոլիա» քոլեջը, որը հիմնել էին յանկի միսիոներները: Երեխա ժամանակ Միսաքը երազել էր սովորել այնտեղ, բայց, ըստ տարիներ հետո իր պատմածի՝ այդ երազը խորտակել էր նրա քրոջ ժլատ ամուսինը՝ Միսաքին դպրոցից հանելով ու իր խանութում իբրև մանկահասակ տղայի 8 տարի անվճար աշխատեցնելով: Մեր մայրն ու հայրն ուզեցին մտնել նախկին քոլեջի տարածք, բայց պարզվեց, որ այն դարձել է ռազմական օբյեկտ, որտեղ հյուրերի ամենևին չեն սպասում:

Հասանք Մերզիֆոնի կենտրոնական հրապարակ, և մայրս ճանաչեց ժամացույցի փոքր աշտարակը, որի տակդոցը չէր դադարել այն օրվանից ի վեր, երբ Միսաքը, 74 տարի առաջ, հեռացել էր քաղաքից: Այն ճիշտ նրա պատմածի նման էր: Հայրս տեսախցիկը նկարահանեց «սուպեր 8» տեսաժապավենի վրա: 10 տարի անց այս նկարահանումն օգտագործվեց Ֆրեզնոյի հայ գաղթականների մասին վավերագրական ֆիլմում: Մեր հոր նկարածը 16 միլիմետրանոց ժապավենի վրա տեղափոխելուց և, վավերագրական կինոնկարի համար, գունավորից «հատիկավոր» սև ու սպիտակի փոխակերպելուց հետո թվում է, թե նկարահանումը կատարվել է 60-70 տարի ավելի վաղ: Սակայն, նույնիսկ գունավոր տարբերակը դիտելիս, դժվար է հասկանալ, թե դա որ թվականների տեսարան է. ձիով կառք՝ որպես տաքսի, թամբով ավանակ և կադրի մեջ տրոպիկական ձկների նման հայտնվող ու դուրս եկող՝ «շալվար» կոչվող պարկանման անդրավարտիքով անցորդներ:

Երբ մեր հայրը տեսախցիկը դնում էր իր պատյանի մեջ, մեր շուրջն արդեն տղամարդկանց ու տղաների մի ամբոխ էր հավաքվել և մեծ հետաքրքրությամբ դիտում էր մեր էկզոտիկ տուն-մեքենան: Մենք՝ զբոսաշրջիկներս, ինքներս էինք դարձել «դիտարժան», իսկ նրանք՝ «բնիկները», հետաքրքրասեր դիտորդների դերում էին: Հրապարակն ուսումնասիրելով՝ մեր մայրը նկատեց աղյուսաշեն մի ցածր կառույցի մոտ չորանալու համար կախված մի քանի վարդագույն շոր: Դրանք բաղնիքի խալաթներ էին, այն նույնից, որը մեր տատը՝ Ջեմայման, հատուկ առիթներով օգտագործել էր իբրև սեղանի սփռոց: Մեր մայրը տնտղեց այդ շինությունը, որի մոտ կախված էին խալաթները: Ջեմայման իր ծնողներից լսել էր Մարզվանի գմբեթավոր բաղնիքի կամ «համամի» մասին և իր հերթին այն ամենայն ճշգրտությամբ նկարագրել իր դստերը՝ մեր մորը:

Մի անցորդ, տեսնելով, որ նա հետաքրքրված է բաղնիքով, առաջարկեց փողոցով վար գնալ ու լողանալ ավելի նոր հաստատությունում: Բայց մեր մորը հետաքրքրում էր հին համամը: Նա և մեր քույրերը մտան կանանց մուտքով ու հայտնվեցին նախասենյակում, որը մութ էր, գոլորշիով լի և եկեղեցու հոտ ուներ: Կախված ցանցերի մեջ երեխաներ էին քնած, որոնք նման էին ծխահարվող ապուխտների: Հիմնական սրահում կար մի ծանծաղ ավազան, որտեղ մի գեր կին իր երկու բռունցքներով եռանդով տրորում էր մի ավելի երիտասարդի գանգամաշկը՝ դափնու օճառով նրա մազերը մշակելով, ասես խմոր հունցեր: Կանանց տարբեր սերունդներ էին միշտ հավաքվել այդտեղ՝ հանգստանալու, բամբասելու և ամուսնություններ կազմակերպելու համար: Ավազանի մարմարե ցածր պատնեշի վրայով անթիվ-անհամար աղջիկներ էին սահել՝ այն դարձնելով հարթ ու փայլուն: Մեր մայրը լսել էր, որ ունևոր ընտանիքների կանայք օժտված էին ջրի հո-

սանքին մոտ նստելու մենաշնորհով. այնտեղ ջուրն ավելի մաքուր ու տաք էր:

Մինչ մեր մայրն ու քույրերը բաղնիքում իրենց էքսկուրսիան կավարտեին, մեր հայրը վերհիշում էր իր կիսամոռացած թուրքերենը, որով տղայության հասակում խոսել էր Ցրեզնոյում: Մոնթեն ու ես ամաչկոտ տեսքով մի կողմ էինք քաշվել, իսկ մեր հայրը զրուցում էր տուն-մեքենայի շուրջը հավաքված հետաքրքրասեր քաղաքացիների հետ: Նրա մի զրուցակից, ըստ երևույթին, հասկացավ «Էրմենի» («Հայ») բառը: Ներկաներից մեկը, դիմելով մի ուրիշին, գոռաց. «Գնա՛, Վահրամին կանչի՛ր»: Հիշում եմ՝ ինձ զարմացրեց, որ այնտեղի ժողովուրդը, իմանալով համաքաղաքացիներից մեկի հայ լինելը, նրան լավ էր վերաբերվում: Երկրորդ անձը վերադարձավ Վահրամ Կարապենցի հետ, որը հիսունն անց նիհար մարդ էր: Հայերեն խոսելով՝ նա մեզ հրավիրեց իր տուն:

Կարապենցն ուղղություն ցույց տալու համար նստեց դիմացի նստարանին: Տուն-ավտոմեքենան ցատկոտելով անցնում էր քարահատակած նեղ, կեղտոտ փողոցներով, որոնց երկու կողմերում հին տների պատեր էին: Ժամանակ առ ժամանակ մենք հատվող փողոցների վերջում տեսնում էինք մեծ փայտյա դռներ: Մոնթեն գլուխը հենել էր մեքենայի պատուհանին. դժվար չէր այդ դռների վրա տեսնել դուրով կոպտորեն փորված-հանված խաչերի հետքեր: Նրանք, ովքեր հաստատել էին իրենց կոտորված կամ աքսորված հայ հարևանների տներում, 55 տարվա ընթացքում նեղություն չէին կրել նախկին տերերի մասին վկայող այդ նշանները լրիվ հարթեցնելու կամ, գոնե, ներկով քողարկելու:

Մեր մայրը Կարապենցին ասաց, որ իր երկու ծնողներն էլ Մարզվանից էին, և տվեց նրանց անունները: Կարապենցին դրանցից մի քանիսը ծանոթ էին, և նա գիտեր, թե այդ մարդիկ որտեղ էին ապրել: Նա մեզ տարավ մեր պապի՝ Միսաքի հայրական տունը, և մենք փողոցից այն դիտեցինք: Անկյունային տուն էր՝ ճիշտ մեր լսած նկարագրության նման: Առաջին հարկը քարից ու գաջից էր, երկրորդը՝ փայտից ու գաջից: Փողոցի վրա կախված էր խաղողով ստվերված մի պատշգամբ: Թվում էր՝ հաստ, պարանի նման վազերը, որոնք ոլորվելով բարձրանում էին դեպի պատշգամբի ծածկը, տնկվել էին 60 տարի առաջ, նախկին տանտերերի ձեռքով: Թեև տունը վատ վիճակում էր, այն ակնհայտորեն բնակիչներ ուներ:

Մեր մայրն ու հայրն իհարկե կուզեին տեսնել նաև ներսը, բայց դա անհնար էր: Ավելի քան անհարմար կլիներ դուռը բախել ու նոր բնակիչներին խնդրել տան մեջ էքսկուրսիա, մանավանդ եթե պարզվեր, որ նրանք տանտեր էին դարձել մեր մոր նախնիների աքսորվելուց կամ սպանվելուց հետո:

Ճանապարհը շարունակեցինք փողոցն ի վար, և Կարապենցը ցույց տվեց այն տեղը, ուր այրվելուց առաջ գտնվել էր մեր տատի՝ Ջեմայմայի պապական տունը: Կանգուն էր միայն մի պատ: Երբ խաչմերուկում թեքվեցինք, Մոնթեն մեկ ուրիշ պատի հետևում, որին փակցված էին անճաշակ կինոազդագրեր, նկատեց շատ ծանոթ տեսքով մի շինություն: Դա անկասկած հայկական եկեղեցի էր՝ իր կորուկ թեքությամբ տանիքով, խաչաձև նախագծով ու կամարաձև ապսիդով: Համենայն դեպս, այն նախկինում եկեղեցի էր եղել: Թվում էր՝ հետագայում կառույցը ծառայել էր որպես կինոսրահ, թեև կարծես որոշ ժամանակ չէր օգտագործվել նաև այդ նպատակով: Մոնթեն դեռ չգիտեր և միայն հետո իմացավ, որ մեր պապի՝ Միսաքի երկու ծնողներն էլ թաղվել էին Մարզվանի մի Առաքելական եկեղեցու բակում. նրա հայրն այնտեղ քահանա էր եղել: Ուստի հնարավոր է՝ մեր պապի ծնողները հանգչում են հենց այդ եկեղեցու բակում՝ շրջապատված գունաթափված կինոազդագրերով:

Երբ հասանք Կարապենցի տուն, տանտերը մեզ դարպասից ներս առաջնորդեց: Բակում հավեր էին վազվզում: Կարապենցի կինը՝ Արտեմիսը, և մայրը՝ Հռիփսիմեն, մեզ՝ անսպասելի հյուրերիս, սիրով ընդունեցին իրենց օջախում: Տանը փոշու նշույլ չկար. հատակը մաքրությունից փայլում էր: Տանտերերն անկեղծորեն ուրախ էին մեզ տեսնելու համար: Մենք հյուրեր էինք, այո՛, և միայն դա բավական էր, որ արժանանանք միջինարևելյան ջերմ հյուրասիրության: Նրանք, սակայն, ցուցաբերեցին այն առանձնահատուկ պատրաստակամությունը, որով հայերը հյուրընկալում են իրենց հայրենակիցներին:

Մենք նստեցինք ցածր թախտերին: Անկյունում, հենարանի վրա, լվացարան կար: Կարապենցի կինը կրակարանի մեջ կրակ վառեց և ջրամանից ջուր լցրեց պղնձե կաթսայի մեջ, որը երկար բռնակ ուներ ու կոնաձև վիզ: «Ջազվահ» կոչվող այս ամանը ճիշտ նրանից էր, որ մեր մայրը պահում էր տանը, սալօջախի վերևում: Տանտիրուհին թեյի ջուր եռացրեց և, սովորության համաձայն, մեր հորն ու մորն անմիջապես թեյ տվեց:

Կարապետը տակառագործ էր և ծանր ժամանակներ էր ապրում: Ոչ ոք այլևս փայտե տակառիկներ չէր գնում, և ընտանիքը գոյատևում էր Գերմանիայում աշխատող նրա որդու ուղարկած դրամով: Տանտերերից մեկն ասաց, որ իրենց ճանաչում էին Բեն Օհանյան ազգանունով: Մեր հայրը հարցրեց, և նրանք պատասխանեցին, որ հարևանների կողմից երբեք խորական վերաբերմունք չէին տեսել: Ընդհակառակը՝ հարաբերությունները բարեկամական էին:

Բայց ովքե՞ր էին մեր հյուրընկալները և ովքե՞ր էին իրենք իրենց համարում: Հարևանները նրանց ճանաչում էին որպես «էրմենիլար» («հայեր»), բայց նրանց տանը դրա որևէ ապացույց չկար: Նրանց ծածկոցների վրա չկային Աստվածամոր կամ այլ սրբերի պատկերներ ու խաչելություններ: Մյուս կողմից, սակայն, նրանք իրենց տանը չունեին նաև մահմեդականության նշաններ, ասենք՝ Ղուրանի հատվածներ կամ Մեքքայի լուսանկարներ: Նրանք ունեին միայն մի քանի փոքր գորգ, ժանյակներ ու պղնձե սկուտեղներ: Իհարկե, Կարապետն ու իր ընտանիքը փողոցում հայերեն չէին խոսում, բայց չէր երևում, թե խոսում են տանը: Մենք գիտեինք, որ տարիների ընթացքում նրանք առաջին անգամ էր, որ արտասանում էին հայերեն դժվար բաղաձայները՝ քաղցրահունչ թուրքերենից այնքա՜ն տարբեր:

Մեր հյուրընկալները պնդում էին, որ Մերզիֆոնում հույներ չէին մնացել, և կար միայն երեք հայ ընտանիք: Հետո մեկը՝ մեր մայրը կամ հայրը, հարցրեց, թե հին օրերին ի՞նչ էր պատահել այնտեղ: Կարապետի ծեր ու կքված մայրն անտեղյակի տեսք ընդունեց. «Մի օր բոլոր հայերը գնացին, և մենք մնացինք միայն թուրք հարևանների հետ»: Նա ձեռքերը շփեց, հետո վեր բարձրացրեց, որպեսզի մենք լավ տեսնենք, թիկն տվեց ու ասաց. «Չգիտեմ, թե դա ինչպես եղավ»:

Մեր մայրն ու հայրը գիտեին, թե դա ինչպես է եղել. նրանք Ֆրեզնոյում լսել էին տարեց մարդկանց պատմությունները: Նրանք հասկանում էին, թե ինչու 1970 թվականին Մերզիֆոնն ուներ նույն թվով բնակչություն, ինչ դրանից 80 տարի առաջ: 1894-1918 թվականների միջև այդ քաղաքում պարբերաբար տեղի էր ունեցել կոտորած ու գաղթ: Մեզ հուզում էր այն հարցը, թե ինչպես էին Մարզվանում, երբ այն դարձել էր Մերզիֆոն, մնացել այս մի քանի հայերը: Իսկ սա հանգեցնում էր մեկ ուրիշ՝ ավելի անցանկալի հարցի. ի՞նչ էին նրանք արել փրկվելու համար:

Մեր մայրն ու հայրն իրենց թեյը խմեցին ու հայտարարեցին, որ գնալու ժամանակն է: Մերզիֆոնում վրան խփելու հարմար տեղեր չկային, ուստի մենք պետք է կտրեինք 50 մղոն՝ մայրամուտից առաջ Սև Ծովի Սամսուն նավահանգիստ հասնելու համար:

Մենք վերադարձանք անգործության մատնված տուն-մեքենայի մոտ, և մինչ Կարապետը մեր հորը բացատրում էր, թե ինչպես է պետք գնալ Սամսուն, մեր մայրը «մնաս բարով» էր ասում մեզ հյուրընկալած կանանց: Ապա, երբ մեքենա էինք նստել, մի ծեր կին թեթևակի դիպավ մեր մոր՝ բաց պատուհանին գրված թևին: Նա մեկնել էր իր նիհար ձեռքի ափը և փող էր մուրում: Մեր շողուն տուն-մեքենան ու իսպանական կոշիկները երևի նրան լավ ավարի հույս էին ներշնչել: Ո՞ւմ տեղն էր նա մեզ դրել: Այդ մուրացկանը պարզապես իր ծննդավայրում ապրող մի ցնցոտիավոր ծեր կին էր: Բայց եթե նրա ցեղը կոտորած ու աքսորած չլիներ մեր նախնիներին, մենք այժմ տուն-մեքենայի միջից նրան նայելիս չէինք լինի: Հարկավ, նա կարող էր և անձնապես որևէ օգուտ քաղած լինել բռնություններից: Նրա հայրը, քեռին կամ եղբայրը կարող էին մի լքված տնից ժամացույց, շոր կամ հեծանիվ գողացած լինել: Կամ գուցե, կոտորածի ու աքսորի շնորհիվ, նա մեկ կամ երկու ֆիլմ էր վայելել կինոսրահի վերածված եկեղեցում, իսկ համամում նստել էր ջրի ավելի տաք մասում: Չի բացառվում, որ նա հենց իր ձեռքով...

Հանկարծ մեր հոր աչքերը փայլեցին: Նա սպառնալից շարժում արեց ու գոռաց. «Ցո՛ւխ, չկա՛»: Մեր մայրը զայրացած նայեց նրան. մուրացիկն ընդամենը մի ծեր կին էր, բայց ամուսինը, ոտքը բռունցքների մեջ սեղմելով ու պտտելով, մեքենան արագ հեռացրեց ծեր կնոջից: Քանի՜-քանի՜ հայեր էին 55 տարի առաջ խնդրել խնայել իրենց կյանքը, տները, իրենց երեխաների կյանքը: Եվ այժմ այդ թուրք պառավը փո՞ղ էր ակնկալում մեզնից:

Այդ երեկո մենք մեր վրանը խփեցինք Սամսունից դուրս գտնվող մի դատարկ քեմփինգում: Տաք քամի էր փչում: Մայրամուտին եղբայրս ու ես մեջքի վրա պառկած լսում էինք հեռավոր մի մզկիթից հնչող աղոթքի հրավերը: Ամիսներ հետո, վերադառնալով մեր ծննդավայր, մենք մեզ խորթացած չինք զգալու: Գուցե և դա չափազանցված զգացում էր, բայց անգամ քաղաքի գործարար կենտրոնը մեզ թվալու էր ավելի փոքր ու փոշոտ, քան՝ երբ մենք այնտեղից հեռացանք:

Մերզիֆոն այցելելուց 2 տարի հետո մեր մայրը նամակ ստացավ Նիկոսիայի (Կիպրոս) ծերանոցում ապրող մի միայնակ տարեց տիկնոջից: Սիրուհի Գենլյանը ճանաչում էր Քիրամիջյան ընտանիքին Մարզվանից, որտեղ նա մեծացել էր: Այդ տիկինը մեր հասցեն իմացել էր մեր ավագ քեռուց՝ Լյուդվիգից: 1972 թ. սեպտեմբերի 6-ով թվագրված այդ նամակը հաստատեց մեր վատթար կասկածները: Այնտեղ, մասնավորապես, գրված է. «Դուք հիշատակում եք «Բեն Օհանյան» անունը և գրում, որ Մարզվանում միայն երեք հայ ընտանիք կա: Կարծում եմ, որ չգիտեք, թե ինչու է միայն երեք ընտանիք մնացել այն 17000 հայերից, որոնք ամենադաժան եղանակով կոտորվեցին կամ աքսորվեցին՝ համաձայն Թուրք կառավարության հրամանի: Բեն Օհանյանը լրտես ու դավաճան էր: Թուրք կառավարությունը խոստացել էր խնայել նրա ու իր ընտանիքի կյանքը, եթե նա լրտեսություն աներ: Բեն Օհանյանն առավոտից գիշեր թուրք ոստիկանի հետ անցնում էր փողոցներով ու մատնացույց անում այն տները, որտեղ հայ աղջամարդիկ կային, որպեսզի նրանց արտաքսեն սարեր, հովիտներ ու անապատներ՝ ամենաանողոք ձևով սպանելու համար: Նա մատնեց հայ կանանց՝ ասելով, որ նրանք փող ու ոսկեղեն ունեն, և նրանք մնացին առանց գոյության միջոցների: Նա մատնեց հայ աղջիկների, որոնք բռնաբարվեցին ու հարկադրաբար ամուսնացան թուրքերի հետ»:

Ըստ առակի՝ արծիվն սպանվում է իր իսկ փետուրներով պատրաստված նետով: Սիրուհին շարունակում է, որ մի օր ինքը մի հույնի հետ անցնում էր Մարզվանի փողոցով, երբ մի ժանդարմ, դավաճանի ուղեկցությամբ, իրենց հրամայեց կանգ առնել: «Բեն Օհանյանը, — հավանաբար Բեն Օհանյան ընտանիքի «նահապետը», — անշուշտ ինձ մատնել էր», — պատմում է տիկինը, որովհետև ժանդարմը հայտարարեց, որ իրենք Գենլյան ընտանիքի աղջիկներ են: Սիրուհին, որն այդ ժամանակ հույնի նման էր հագնված, հերքել էր իր հայկական ծագումը և ուղեկցի հետ խոսել հունարեն: «Աստծո օգնությամբ, — ավելացնում է նա, — ես նույնիսկ նախատեցի նրանց»: Այդ պահին այնտեղ հայտնված երկու «լավ հագնված թուրք» ժանդարմին վստահեցրել էին, որ Սիրուհին իրոք հույն է, և Բեն Օհանյանն ու ժանդարմը ներողություն խնդրելով հեռացել էին: «Ինչ վերաբերում է «լավ հագնված թուրքերին», — գրված է նամակում, — նրանք խոսում էին հայերի կոտորածի ու գաղթի մասին, և մեկը մյուսին ասաց, որ այդ քաղաքի աղը հայերն էին»:

Սիրուհիի նամակը ստանալուց տարիներ հետո Մոնթեն մեր այցելությունը Մերզիֆոն նկարագրում էր որպես իր կյանքի առանցքային իրադարձություն: Սեղան՝ նրա կինը, մի օր մի լրագրողի բացատրում էր, որ իր ապագա ամուսինն այդ օրը «տեսել էր, թե ինչ է կորցրել»: Գուցե և Սեղան ճիշտ էր, բայց ես չեմ հիշում այդ օրվա ընթացքում որևէ դեպքի առիթով Մոնթեի բուռն արձագանք: Իսկ հետագայում, երբ ես ու նա համեմատում էինք Մերզիֆոնի հետ կապված մեր հիշողությունները, նա կարապետցի ընտանիքին, նույնիսկ նրանց «նահապետին» «դավաճան Բեն Օհանյանին», երբեք չմեղադրեց:

Ինձ չի թվում, թե Մոնթեի համար Մերզիֆոնը հայտնություն էր: Այն, ինչ նա այդ օրը տեսավ կամ ինչի շուրջը հետագայում խորհրդածեց, քերված փայտե դռան, դատարկ ծածկոցով տան, և ձեռքերն անկեղծ զարմանքով վեր պարզած ծեր կնոջ հակասական երկիմաստությունն էր:

Գլուխ 3. Նախնյաց պատմությունները

Երբ 1970 թ. ամառվա վերջում մենք վերադարձանք Կալիֆոռնիա, Մոնթեն հեռացավ իր հին խաղընկերներից՝ որոնելու Սինյորիտա Բլանկայի հարցի պատասխանը. «Դու որտեղացի՞ ես»: Դեռահասության տարիք նոր մտնելով՝ նա սկսեց կարդալ «Համաշխարհային գրքի հանրագիտարանն» ու Աստվածաշունչը և կամովին հաճախել Ամերիկյան Ավետարանական եկեղեցի: Իր այդ վաղ ուսումնասիրությունների արդյունքում նա, գրքերից սովորածի և մեր այցելած տեղերից ստացած տպավորությունների հիման վրա, գրեց դեռևս դեգերումներով լի, խառնաշփոթ, բայց որոշակիորեն բարոյախոսական մի պատմություն: Ժամանակ առ ժամանակ նա հանկարծ գլուխը բարձրացնում էր իր տեսերից և որևէ հատվածի վերաբերյալ հարցնում իմ կարծիքը: Իսկ ես նրան լուրջ տեսքով խորհուրդ էի տալիս՝ «վատ» գրելու փոխարեն գրել «իմպերիալիստ», «տոտալիտարիստ» կամ նման մի բան: Իր թղթերի կույտի մեջ ընդգրկելով նաև նոր շրջանը՝ Մոնթեն ութերորդ դասարանի իրենց ուսուցչի սեղանին դրեց ահավոր ձեռագրով գրված 100 էջ: Շփոթված ուսուցիչն առաջին էջի վերևում կարմիր գրիչով A+ խզբզեց և, հավանաբար, իրեն երբեք նեղություն չտվեց գրվածքը կարդալու: Ես վերնագիրը չեմ հիշում, բայց իր աշխատության համար եղբայրս «Ամերիկյան լեգեոնի» «Լավ քաղաքացիության պարգևին» (Good Citizenship Award) արժանացավ: Պատվոգիր ստանալիս նրա գլուխն ամբիոնի հետևից հազիվ էր երևում:

Մի պահ Մոնթեն ու ես մտածում էինք կղերական գործունեության մասին: Որպես «առաջին քրիստոնյա ազգի» շառավիղներ՝ մենք մեզ լիովին կոմպետենտ ու պատասխանատու էինք համարում Ավետիսը տարածելու համար: Արդեն համոզված էինք, որ Կոպեռնիկոսը և Դարվինն արգելք էին դրել Աքվինացու՝ առ հավատ տանող բանական ճանապարհին, բայց, Իսպանական գրականության՝ Միսսիս Օրտիզի դասընթացի շնորհիվ կարդալով Միգել դե Ունամունոյի «Քրիստոնեության հոգեվարքը» (La agonia del cristianismo), Մոնթեն պատրաստ էր գնալ Սուրբ Բենեդիկտի կամ Կիերկեգորի ուղիով՝ հանուն փրկության «ինտելեկտուալ ինքնասպանություն» գործելու համար: Այդուհանդերձ, նա դեմ էր, որ իրեն հիմարի տեղ դնեն: Որոշ ժամանակ անց Ավետարանական եկեղեցու գոլֆ խաղացողներն ու Հիսուսի աշխարհիկ ջատագովները միջնակարգ դպրոցում ի չիք դարձրին մեր ելույթը, քանզի, վերջին հաշվով, ի՞նչ առնչություն ունեին նրանց Yankee-Doodle երգն ու սնապարծ հայրենասիրությունը նազովրեցի հյուսնի հետ:

Մոնթեն կենտրոնացավ անցյալի վրա և ջանքերը կրկնապատկեց՝ ուսումնասիրելու համար իր արմատները: Նրա նպատակն էր՝ միահյուսել իրեն, իր պապերին ու նախապապերին հայոց շարունակական պատմության հետ, դարերի խորքից գտնել պատմական կապը Սան Ուաքին Վելլիի և Հայկական սարահարթի միջև: Ըստ Հերոդոտոսի՝ մենք Թրակիայից Փոքր Ասիա գաղթած փոյուգիացիների հետնորդներ ենք: Արժանահավատ է այս տեղեկությունը, թե ոչ՝ որոշ հայերի այն դուր է գալիս, քանզի նրանք գերադասում են համարվել հին եվրոպացիներ, ոչ թե արևմտյան ասիացիներ: Այնուամենայնիվ, Մոնթեին ընդունելի թվաց հայերի ծագման ավելի նոր մի վարկած, համաձայն որի՝ ինքը լեռնցի ցեղերի շառավիղ է: Այդ լեռնցիները բնակվում էին «Նաիրի երկրում», Վանա լճի շրջակայքում, այսօրվա արևելյան Թուրքիայում: Մոտ մ.թ.ա. 870 թ. նրանց առաջնորդները հիմնեցին մի միացյալ պետություն՝ Տուշպա մայրաքաղաքով (այսօրվա Վանում): Ասորեստանցիներն այդ պետությունը կոչում էին Ուրարտու, որը կարող էր հետագայում վերածվել «Արարատի»՝ ընդգրկելով Արարատ լեռը՝ Նոյյան տապանի աստվածաշնչյան հանգրվանը: Մոտ մ.թ.ա. 590 թ. մեդացիների արշավանքը վերջ տվեց Ուրարտուի կենտրոնական իշխանությանը, և, ըստ Մոնթեի համար ընդունելի վարկածի, հայկական հնագույն թագավորությունները հիմնվեցին այդ պետության ավերակների վրա: Իր առաջին տպագիր հոդվածներից մեկը Մոնթեն ամփոփում է այսպես. «Մենք ի սկզբանե Անդրկովկասի ասիական լեռնային ցեղեր էինք, այսինքն՝ մենք արևելյան լեռնցիներ ենք»: Բայի ժամանակի փոփոխությունն անցյալից ներկա («էինք» - «ենք») մի բացահայտ, ճարտասանական պաճուճանքից խպառ զերծ ու պրովոկացիոն փորձ է՝ հերքելու հայերի եվրոպական ծագման վարկածը, որը Մոնթեն համարում էր իր ցեղի պատմությունը «սպիտակեցնելու» նպատակով հորինված անազնիվ ու սնապարծ տեսություն:

Դարեր շարունակ պարսիկները, հռոմայեցիները, բյուզանդացիները, արաբները, սելջուկները, մոնղոլները և օսմանյան Թուրքերը ներխուժել են Հայաստան, այն նվաճել ու մասերի բաժանել:

1375 թ. կործանվեց վերջին անկախ հայկական թագավորությունը, և նվաճողները հայերի հին հայրենիքի մեծ մասում նրանցից ավելի մեծ թիվ կազմեցին: Օտարներն իշխում էին, իսկ հայերի սերունդները դարերի ընթացքում գոյատևեցին մինչև մեր օրերը՝ զբաղվելով իրենց խաղաղ աշխատանքով. հերկելով, ցանելով ու հնձելով:

Վաղ դեռահասության տարիքում Մոնթեն սկսեց մտածել իր ու իր պապերի կյանքի մասին՝ որպես այդ նույն սագայի շարունակություն: Բայց, իհարկե, նրա կապն իր նախնիների հետ չէր կարող համարվել զուտ արյունակցական, քանզի մեր հայրական կողմը լայնագեմ էր ու նեղաչ՝ մոնղոլների նման, մեր մոր զարմիկները պեպենոտ շիկահերներ էին, իսկ Խարբերդ քաղաքի հայերն այնքան թուխ լինելու համբավ ունեին, որ Ֆրեզնոյում մեր հայրենակիցներն իրենց սեամորթ հարևաններին կոչում էին «խարբերդցի մարդիկ»:

Տարիներ անց Մոնթեն եզրակացրեց. «Անցյալ դարերում, ինչպես հիմա, ավելի շուտ ոչ թե գենետիկան, այլ մշակույթն է եղել հայ ժողովրդի, հայ ազգի որոշիչ հատկանիշը»: «Մշակույթի», այլ ոչ թե ծագումնաբանության վրա այսպիսի շեշտադրությամբ հանդերձ, որքան էլ որ տարօրինակ թվա, Մոնթեն գրել է. «Ինչպես շատ հայեր, ես էլ հայերեն չեմ խոսում, բայց ինձ հայ եմ համարում»: Վաղ դեռահասության տարիքում, այնուամենայնիվ, նա որոշել էր լեզուն սովորել: Առավոտյան, դպրոց վազելուց առաջ, նա բացում էր իր տատի՝ թավշյա կազմով Նոր կտակարանը և տող առ տող բարձրաձայն կարդում մեկ-երկու էջ: Նա չէր հասկանում իր կարդացած բառերի իմաստը, բայց գոնե ինքն իրեն սովորեցրել էր հայերեն անկյունավոր գրերը, որոնք օգնել էին իր ցեղին 5-րդ դարից ի վեր պահպանելու ազգային ինքնությունը:

Հույների, բուլղարների ու արաբների նման՝ հայերը նույնպես Օսմանյան տիրապետության հինգ դարերը համարում են իրենց պատմության ամենամութ ժամանակաշրջանը: 19-րդ դարի երկրորդ կեսում Օսմանյան իշխանությունների և կայսրության մեջ ապրող ենթակա ժողովուրդների միջև լարվածությունը սրվել էր: Դրա հետևանքներից մեկը 1895 թ. Մարզվանում տեղի ունեցած դեպքերն էին, երբ թուրքերը հարձակվեցին իրենց հայ հարևանների վրա՝ թալանելով նրանց տներն ու խանութները և սպանելով 109 հոգու: Մարզվանի բռնություններն այդ ժամանակ

ծրագրված ու իրականացված կոտորածների շատ ավելի լայն ծրագրի մի մասն էին միայն, իսկ հիշյալ իրադարձություններն իրենց հերթին նախաբանն էին 20 տարի անց իրագործված նախճիրի եզրափակիչ փուլի: 1915-18 թթ. այդ վերջին կոտորածների առնչությամբ է Սիրուհի Գենչյանն իր նամակում հիշատակել «դավաճան Բեն Օհանյանին»:

Մեր մոր հայրը՝ Միսաք Քիրամիջյանը, Մարզվանի դեպքերի ժամանակ փրկվել էր, բայց երեք ամիս անցկացրել էր բանտում, ինչպես ինքն էր ասում՝ «Հայկական գաղտնի հեղափոխական կազմակերպության» անդամ լինելու համար: Միսաքին բանտարկողները, նրան ազատ արձակելով, պահանջել էին հեռանալ իր հայրենիքից: 1896 թ. մարտի 9-ին, Սև ծովի Սամսուն նավահանգստում ֆրանսիական նավ նստելով, նա հեռանում էր թողել այն, ինչ կոչում էր «Հին երկրի քաղաքականության՝ օձերով լի փոս»: Հետևելով հայկական «Որտեղ հաց՝ այնտեղ կա՛ց» ասացվածքին՝ Միսաքն ի վերջո հաստատվել էր Ֆրեզնոյում, որտեղ գնել էր 10 ակր տարածությամբ մշկախաղողի այգի և «Հին երկրի» իր ընկերների ցուցմունքներով պահեստավորել չամիչի առաջին բերքը: Այնտեղ նա ամուսնացել էր Ջեմայմա Սերոբյանի հետ, որը նրան պարգևել էր երեք որդի ու մեկ դուստր՝ 1920 թ. օգոստոսի 16-ին ծնված մեր մորը:

Ֆրեզնոյի շրջանում (Fresno County) Միսաքի հայտնվելուց տարիներ առաջ նրա ապագա կնոջ ընտանիքն այնտեղ արդեն մի փոքր առևտրական կայսրություն ուներ: Շրջանային վարչության (County Hall) արխիվային փաստաթղթերում գրանցված է, որ մեր տատի՝ Ջեմայմայի քեռի Հակոբ Սերոբյանը շրջանում հողամաս գնած առաջին հայն էր: Մի հին լուսանկարում, որ մեզ ցույց տվեց մեր մայրը, Հակոբը թուխ, հիվանդոտ տեսքով երիտասարդ է՝ բարձր այտոսկրերով ու սև գանգուր մազերով: Նա 1871 թ. բողոքական միսիոներների հետ Մարզվանից հեռացել էր և որոշ ժամանակ հաստատվել Մասաչուսեթսում: Այնտեղ, Վուստեր (Worcester) քաղաքում ու նրա շրջակայքում մի քանի տարի տարօրինակ գործերով զբաղվելուց հետո, նա բժշկի խորհրդով տեղափոխվել էր դեպի արևմուտք: Բժիշկը, հաշվի առնելով նրա շնչառական դժվարությունները, առաջարկել էր ապրել չոր կլիմայական պայմաններում: Երբ նա 1879 կամ 1880 թ. եկավ Ֆրեզնո ու քայլեց փայտյա մայթերով, այդ շոգ ու փոշոտ բնակավայրում ապրում էր ընդամենը 1000 հոգի:

Մեր մայրը պնդում էր, որ Հակոբը Ֆրեզնոյի հայկական համայնքի նահապետն էր: Նա զայրացած նամակներ էր ուղարկում այն լրագրողներին, որոնք որպես Ֆրեզնոյի առաջին հայ բնակիչներ էին հիշատակում ուրիշ կլանների՝ Նիշիկյաններին կամ Նորմարդներին: Մոնթեն, սակայն, երբեք ոգևորված չէր Հակոբին նահապետ համարելու մեր մոր բուռն ձգտումով: Նրա համար մեր տատի քեռին սոսկ գաղթականների երկար շարքում առաջիններից մեկն էր, որոնց հաջողվել էր իրենց ինքնությունից ճողոպրել՝ հանուն այն ոսպնաթանի, որ կոչվում է՝ «ամերիկյան երազ»: Մոնթեի համար անտաշ, «կարմիր» նսավները բարեկիրթ, խելացի Հակոբներից նախընտրելի էին: Ովքեր չէին լքել իրենց երկիրը, մինչև որ նրանց ստիպեցին դա անել, գուցե և պակաս հեռատես էին, քան շուտ հեռացածները, բայց Մոնթեն համառ կապվածությունը հայրենիքին ավելի էր գնահատում, քան այդօրինակ խոհեմությունը:

Հակոբի կերպարը, սակայն, այլ կերպ է ներկայանում նրա նոթատետրում: Սլացիկ ձեռագրով 117 էջ պարունակող այդ հուշեմատյանը մի տեսակ ուղերձ է հետագա սերունդներին՝ գրված օտար երկրում, մի երիտասարդի ձեռքով, ով գիտեր, որ երկար չի ապրելու: Սկսած 1872 թ., երբ նա 24 տարեկան էր, մինչև իր մահը երեսունհինգուկես տարեկանում, նա խորհրդածել է կյանքի մասին, բանաստեղծություններ գրել՝ իր պարտատերերին դատապարտելով դժոխքի, գրանցել իր սիրած աղանդերի բաղադրատոմսեր և հեղհեղուկ անգլերենով հիմներ հորինել: «Շողի պես հապճեպ տարիներն անցան՝ / Երազ թվալով ինձ անիրական, / Բայց դեռ սուզված եմ ես մենության մեջ», – գրում է նա «Ամանորի երգում»: Մոնթեն երբեք չկարդաց իր տատի քեռու նոթատետրը և երկար ժամանակ չգիտեր դրա մասին: Նա մոտ 20 տարեկան էր, երբ ես նրան նամակով հայտնեցի Հակոբի գրառումների մասին:

Հակոբի եղբայրներն ու ծնողներից մեկի գծով եղբայրները՝ չորս հոգի, 1881 թ. Ֆրեզնոյում միացան նրան: Շուտով նրանք սկսեցին Մարզվանում ապրող իրենց ընկերներին ու ազգականներին նամակներ գրել՝ Ֆրեզնոն նկարագրելով իբրև մի դրախտ, որտեղ խաղողն աճում է բռունցքի չափ, սմբուկը կշռում է 10 ֆունտ, իսկ ձմերուկը մեծանում է մակույկի չափ:

Մեր մոր համար Հակոբի «կիսաեղբայրների»՝ Գևորգի ու Հովհաննեսի պատմությունը նույնքան դրամատիկ և ուսանելի էր, որքան Հորացիո Ալջերի գրիչը շարժած թեմաները: Ֆրեզնոյի փողոցներում մրգի վաճառքից գոյացած գումարով եղբայրները սկսեցին չամիչ ու չոր թուզ պահածոյացնել: Թուզը ծծմբով, աղաջրով ու գոլորշիով մշակելուց հետո նրանք կարողանում էին այն, նվազագույն կորստով, ուղարկել հեռավոր շուկաներ: Երբ Southern Pacific Railroad-ն ավելացրեց երկաթգծով բեռնափոխադրումների հարկերը, Հովհաննես Սերոբյանը հաշվարկեց, որ ավելի էժան կլինի իր ապրանքը ջորիներով տեղափոխել Սան Ֆրանցիսկո: Եղբայրները վարձեցին 20 ջորի, որոնց լծեցին երկու սայլի, դրանք բեռնեցին 7 տոննա թզով, չամիչով ու նարնջով և այդ քարավանը Pacheco Pass-ով ուղարկեցին 210 մղոն հեռավորության վրա գտնվող Սան Ֆրանցիսկո: San Francisco Examiner-ը լրագրող ու լուսանկարիչ ուղարկեց՝ Southern Pacific-ի ագահության դեմ այդ «համարձակ բողոքի» մասին հանրությանը տեղյակ պահելու համար: Լուրը լայն տարածում ստացավ, Սերոբյանների օրինակին հետևեցին այլ ֆերմերներ, և շուտով շաքարի բարոն Ջ. Կլաուս Սփրեքելզը 2000000 դոլլար հատկացրեց՝ մրցակից երկաթուղի կառուցելու համար: Նոր San Joaquin Railroad երկաթգիծը Ֆրեզնո հասավ 1896-ին՝ վերջ տալով այդ շրջանում Southern Pacific-ի մենաշնորհին:

Պատահում էր, որ Սերոբյան եղբայրների մոտ մինչև 800 հոգի էին աշխատում՝ պահածոյացնելով և շուկաներ առաքելով օրը 15 վագոն չորացրած դեղձ, ծիրան, սալոր, խաղող ու թուզ: Նրանց ապրանքը վաճառվում էր Չիկագոյում, ուղարկվում դեպի արևելք՝ Անգլիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի քաղաքներ: Այս «կայսրությունը», սակայն, երկար կյանք չունեցավ: Մի շարք դատաքննություններից, առևտրական գործընկերների հետ տարաձայնություններից ու անհասկանալի հրդեհներից հետո, 1904 թ. Սերոբյան եղբայրների ձեռնարկությունը փակվեց:

Իհարկե, բոլորն ունեն երևելի նախնիներ՝ կյանքի ուշագրավ պատմություններով: Մեր մոր կողմի ազգականների կյանքում եղել են այս կամ այն իմաստով հաղթանակներ: Միայնակ ուխտավոր Հակոբ Սերոբյանի հաղթանակը. թեև նա կարճ կյանք ունեցավ, բայց ապրեց այնքան, որ ողջունի «Հին երկրի» իր հարազատներին «Նոր Եդեմում»: Աղքատներից հարուստներ դարձած Սերոբյան եղբայրների պատմությունը, որոնք մարտահրավեր նետեցին Southern Pacific-ի մենաշնորհին և, սկզբում լինելով փոքր-

ցային առևտրականներ, հասան խոշոր ձեռնարկության տնօրենների կարգավիճակին: Մյուսների՝ հրաշքով փրկությունը. Սիբիրի անապատում մեռնելու փոխարեն, նրանք բախտ ունեցան հաստատվելու կանաչապատ Սան Ուաքինում, որտեղ, տքնանքի, խնայողության ու հեռատեսության շնորհիվ, նրանք հաղթահարեցին ազգային նախապաշարումներն ու, չամիչ պահածոյացնելով կամ միրգ աճեցնելով, քաղեցին իրենց աշխատանքի պտուղները:

Այս ամենի մասին ավելի խորը մտածելիս, սակայն, վերն ասվածը սոսկ ունայնություն ու չափից ավելի երկար ապրած կյանքերը քողարկելու շղարշ է թվում: Գեորգ ու Հովհաննես Սերոբյանները կորցրին իրենց ձեռնարկությունը, որից հետո մեկը դարձավ ճգնավոր՝ մրգի մի մրցակից առաքիչի մոտ շարքային աշխատող: Մարզվանից եկած բարեպաշտ «ուխտավորների» բոլոր որդիներն ու դուստրերը մեկտեղ դադարեցին եկեղեցի գնալ, և քրիստոնեական վաղնջական հավատքը, որ հալածվելու գնով պահպանվել էր 16 դար շարունակ, Սան Ուաքինի արևի տակ ցողի նման գոլորշիացավ: Նույնիսկ իր 36-ամյակից առաջ մահացած Հակոբը կյանքի վերջին տարիներն անցկացրել էր՝ կարոտելով «Հին երկիրը» և ինքն իր հանդեպ խղճահարվելով:

Համեմատած մեր մոր կողմի ընտանիքի հետ, մեր հոր ազգականները հեռու էին երևելի լինելուց: Մեր մայրն իր ամուսնու ընտանիքը բնորոշում էր թուրքերեն «էդեփսիս» («անքաղաքակիրթ») բառով: Որքան որ հիշողությունը թույլ է տալիս գնալ անցյալ՝ մեր Մելքոնյան նախնիները գյուղացիներ են եղել: Ուստի երբ մեր հոր ծնողները եկել էին Ամերիկա, նրանք բնականաբար աշխատել էին դաշտերում: Թեև նրանք խոսում էին 2-3 լեզվով և մի քիչ էլ՝ քրդերեն, այնուամենայնիվ երբեք անգլերեն չսովորեցին ու չգիտեին որևէ լեզվով գրել-կարդալ: Երբ պետք էր լինում գրավոր գրել, նրանք ծուռումուռ X-եր էին դնում:

Մեր հոր հայրը՝ Ղազարը, 1875 թ. ծնված որբ էր: Խարբերդ քաղաքի մոտ գտնվող նրա ծննդավայրը՝ Խարասար գյուղը, հին Հայաստանի կենտրոնական դավառներից մեկում էր: Երբ նրա 4 տարին լրացել էր, ավագ եղբայրը նրան որպես ծառա վաճառել էր մի ոչխարապահի: Բալկանյան պատերազմների ժամանակ թուրքական բանակ զորակոչվելուց խուսափելու համար նա իր կնոջ՝ Հայկանուշի և հինգ երեխաներից երկուսի հետ, որոնք չէին մահացել թոքախտից, կարողացել էր Սամսուն նավահանգստային քաղաքում ֆրանսիական նավ նստել: 1913-ին Նյու Յորք գալով, Ղազարը մի մեծ պայուսակ հաց էր գնել՝ նոր մայրցամաքի մի ծայրից մյուսը գնացքով գնալու ընթացքում ուտելու համար: Երբ նրանք հասել էին Կալիֆոռնիա, հացն այնքան չորացած էր եղել, որ այն կոտրելու համար թրջել էին:

Ընտանիքը հաստատվեց Ֆրեզնոյից դուրս գտնվող մի գյուղատնտեսական շրջանում, փայտաշեն ջրմուղ աշտարակից ոչ հեռու: Հայկանուշի ութերորդ և վերջին երեխան ծնվեց ավելի շուտ, քան մանկաբարձուհին կհասցներ գալ: Նա ծննդաբերեց մենակ, խոհանոցի հատակին. իր ձեռքով կտրեց պորտալարը, երեխային լվաց ու կերակրեց, ընկերքը թաղեց, հատակը մաքրեց և հասցրեց տաք կերակուր պատրաստել՝ նախքան իր ամուսինն այդ երեկո դաշտից տուն կվերադառնար: Նորածնին անվանեցին Կարապետ՝ այն երեք երեխաներից մեկի անունով, որոնք «Հին երկրում» մահացել էին թոքախտից: Այդ օրը 1919 թ. ապրիլի 27-ն էր:

Որպես ընտանիքի փոքրի՝ մեր հորը երես էին տալիս: Նա սկսեց թուղ հավաքել միայն 4 տարեկան դառնալուց հետո: Դպրոցի առաջին օրը դասատուն բոբիկ ոտքերով տղային հարցրեց նրա անունը: Նրա ավագ քույրերից մեկը, որ արդեն մի քիչ խոսում էր անգլերեն, եղբոր փոխարեն պատասխանեց. «Զաուլի»: Այդ օրվանից ի վեր, մեր հայրը պատասխանում էր միայն երբ իրեն կոչում էին «Զաուլի» և ոչ՝ «Կարապետ»:

Մելքոնյանները կտրում, քաղում ու պահածոյացնում էին իրենց բերքի բոլոր տեսակները. խաղող, ծիրան, թուզ, լոլիկ և, որ ամենավատն էր, բամիա. այն քաղելիս մատները ծակվում ու արյունոտվում էին: Եղեկոյան մեր հոր մայրը վայելում էր թուրք երգիչների ձայնագրությունն ու հառաչում. «Ինչպե՞ս է կարողանում այդ դաժան ժողովուրդն այսքան քաղցր երգել»:

Ղազարի սիրած բառն էր՝ «համբերություն»: Նա մահացավ 1948 թ. սեպտեմբերի 1-ին, իր դստեր «Շևրոլե 38»-ի հետևի նստարանին: Նրա դեմքին խաղաղ ժպիտ էր, ծնկներին՝ գետնընկույզով լի պայուսակ:

Մոնթեն սիրում էր ծերուկ Ղազարի մասին մեր հորից լսել, թե նա ինչպես էր երեկոյան պպզում, ֆխախոտ փաթաթում ու քթի տակ լուռ ծիծաղում՝ նայելով Մելլին՝ իր սիրելի գերնզիին (guernsey) արածելիս: Եղբայրս երբեք չէր տեսել Ղազարի որևէ

լուսանկար, բայց իր ողջ կյանքում մտովի պատկերացնում էր նրան:

Որքան էլ Մոնթեն սիրեր մեր ընտանեկան կյանքի տարբեր դրվագներ, նրա երևակայությունն առավել բորբոքում էին համազգային նշանակություն ունեցող պատմությունները: Նա պրպտում էր դարակները՝ նոր տեղեկություններ գտնելու համար, և սկսել էր մեր ծնողների գրադարանից: «Ռոբինզոն Կրուզոյի» ու «Մարդկային կատակերգության» արանքում նա գտավ մի փոշոտ գիրք՝ «Հայաստանը և իր ժողովուրդը, կամ Հայաստանի պատմություն՝ գրված հայի ձեռքով» (Armenia and Her People, or the Story of Armenia by an Armenian) վերնագրով: Հեղինակը՝ Պատվելի Գևորգ Հ. Ֆիլյանը, մեր մոր կողմից պապի՝ Միսաքի հին ընկերն էր եղել: Գիրքը տպվել էր 1896 թ., երբ Սուլթան Աբդուլ Համիդի նախաձեռնած կոտորածները նոր էին դադարել: Գրքում նկարագրված սահմռկեցուցիչ տեսարաններից մեկն է Սասուն լեռնային քաղաքի բնակիչների նախճիրը: «Նրանք իրենց զոհերին տանջում էին հնդկացիների կամ ինկվիզիտորների նման՝ մահը դանդաղեցնելով ու այնպիսի կատանքների ենթարկելով, որոնց մասին կարդալիս սիրտը նվաղում է, և արյունը՝ սառում: Գլխիվայր խաչում էին, եռման կամ սառցե ջուր լցնում զոհերի մարմիններին ու թողնում մինչև մեռնեն: Կենդանի մորթազերծ էին անում, կորում զոհերի թևերը, ոտքերը, քիթը, ականջները ու այլ անդամներ և այդպես թողնում մեռնելու: Շիկացած լարեր էին խրում կամ դրանցով միջաթափանց խոցում նրանց մարմինները: Հանեցին մի քանի քրիստոնյա հոգևորականների աչքերն ու ասացին. «Գա՛ր եկեք մեզ համար», ապա նրանց վրա նավթ լցրին ու այրեցին»:

Տասնչորսամյա Մոնթեն, մի մութ սենյակում նստած, գիրքը ծայրից ծայր կարդաց: Թուրքական սադիզմի կրքոտ նկարագրություններն այնքան նրա վրա չէին ազդել, որքան զոհերի «խղճալի», «հիստերիկ» պասիվությունը: Ֆիլյանի ներկայացրած հայերն անասուններ, ոչխարներ ու հավեր էին: Իսկ երբ ընտանի կենդանիների հետ զուգահեռներն սպառվեցին, նա սկսեց փորփրել բանջարեղենի թագավորությունը: Հայերն «անանանակեր» էին. Թուրքերը սոխերի նման կտրում էին նրանց գլուխները, նրանց «արմատախիլ անում», «խաղողի նման ճզմում»:

Հայերի բոլոր հատկանիշները, որոնցով հիանում էր Ֆիլյանը՝ այն, որ նրանք «սրել էին իրենց միտքը, ոչ թե սուրը», որ նրանք «սովորել էին՝ ինչպես փող աշխատել» և չէին ուզում «վարժվել զենք գործածելու մեջ», որ ողջունել էին միսիոներներին ու եվրոպական հագուստ էին կրում, որ թաքնվել էին «քրիստոնյա մեծ տերությունների» հովանու տակ և հրճվում էին «բարձր ճաշակով» ու «նուրբ զգացողությամբ», այդ ամենը Մոնթեն համարեց նվաստ ու արգահատելի: Ֆիլյանի նկարագրած կոտորածներին զոհ էին գնացել քառորդ միլիոն հայեր, և չորս անգամ ավելի թվով զոհեր պետք է լինեին քիչ ժամանակ անց Թուրքական մեկ ուրիշ վարչակարգի իրականացրած նախճիրի ժամանակ: 1915-ին՝ այն թվականին, որ ծերանոցի բնակիչուհի տիկին Քլաուդը դաջել էր իր թևին, սկսվել էր կոտորածների այդ երկրորդ փուլը: Դա այն տարին էր, երբ տիկին Քլաուդի աչքի առաջ կացնահարել էին նրա հորը, եղբորը, ամուսնուն ու որդուն, և իրեն, ուրիշ կանանց հետ, ռազմական ոստիկանությունը քշել էր Սիրիայի անապատ՝ մեռնելու: Իսկ կապույտ դաջվածքներով ծեր կանա՞յք: Նրանք նույնպես մահվան թափորներից փրկվածներ էին: Նրանց անապատում գտել էին քրդեր, չերքեզներ կամ բեդուիններ և որդեգրել՝ իրենց ցեղերի կապույտ դաջվածքներով պիտակավորելով: Հետագայում այդ կանայք փախել էին իրենց որդեգրած ցեղերից ու հայտնվել Ֆրեզնոյում, յուրաքանչյուրը՝ իր անպատմելի պատմությամբ:

Մեր մոր նախնիները «Հին երկիրը» լքել էին 1890-ականներին տեղի ունեցած՝ կոտորածների առաջին փուլից առաջ, իսկ մեր հոր նախնիները՝ 1915-18 թվականներից՝ կոտորածների երկրորդ փուլից առաջ: Տարիներ շարունակ մենք կարծել էինք, թե մեր ընտանիքի երկու կողմն էլ փրկվել էր հրից ու սրից և, քիչ թե շատ անվնաս, անցել արյան գետերով: Ժամանակի ընթացքում, սակայն, Մոնթեի համար պարզ դարձավ, որ այդպես չէր եղել: Մեր պապ Ղազարի գյուղը՝ Խարսարը, քարտեզներից անհետացել էր, ինչպես որ Դերսիմի շրջանի տասնյակ ուրիշ հայկական գյուղեր և Խարբերդի ողջ հայկական թաղամասը: Մեր մոր կողմում նույնպես, էթնիկ զտումների այդ դարում, զոհեր եղել էին: 1972 թ. նոյեմբերի 10-ով թվագրված մի նամակում Սիրուհի Պենլյանը՝ ծեր կինը Կիպրոսից, նկարագրել է, թե ինչպես մեր մոր քաջքյուրներից մեկը «չատ հիվանդ պառկած էր անկողնում, և սատանա Թուրքերը, դայլ Թուրքերը տան դուռը կոտրեցին ու նրա մարմինը կտոր-կտոր արեցին»: Մորաքրոջ ամուսինն ու

նրանց միակ երեխան նույնպես ապանվել էին, իսկ նրա եղբայրներից մեկն ու ընտանիքի ուրիշ անդամներ անհետ կորել էին:

— Գիտե՞ք, — մի անգամ ասաց մեր մայրը՝ ձայնը գրեթե շշուկի աստիճանի ցածրացնելով, — եթե այդ սարսափելի կոտորածները չլինեին, դուք, տղանե՛ր, այս հրաշալի երկրում չէիք ծնվի:

Իսկ ընդհանրապես՝ մեր մայրն ու հայրը գրեթե երբեք չէին խոսում այդ թեմայով: Ես ցնցվեցի նրա խոսքերից և, հավանաբար, Մոնթեի վրա դրանք նույնպիսի ազդեցություն գործեցին: Ուրեմն, դուրս էր գալիս, մենք մեր նախնիներին պետք է շնորհակալությո՞ւն հայտնենք հանուն մեզ զոհաբերվելու համար: Եվ արդյո՞ք մեր մոր խոսքերն ինչ-որ տարօրինակ ձևով «դայլ թուրքերին» չէին դարձնում Ամերիկայում մեր պայծառ ապագայի ակամա նախաձեռնողներ: Իսկ եթե այդպես էր, գոնե ինչ-որ չափով չէ՞ր մեղմանում արդյոք նրանց ոճիրը: Նման մտքերն ոնտանելի էին...

Կյանքն աշխարհի Ընկույզի մայրաքաղաքում, սակայն, Մոնթեին բնավ պատճառված վնասի բավարար փոխհատուցում չէր թվում: Նա ապշած էր, որ մի վարչակարգի իրագործած՝ ավելի քան մեկ միլիոն մարդկանց կոտորածից ու իրենց հայրենիքից աքսորից հետո չէր եղել հանցագործ երկրի համար որևէ լուրջ հետևանք, հատուցման որևէ փորձ և գողացված տարածքները վերադարձնելու որևէ պահանջ:

Մոնթեն, իհարկե, նման զգացմունքներ ունեցող միակ մարդը չէր: Մի առավոտ ես նրան ցույց տվեցի տեղական թերթերից մեկում տպված տեղեկություն այն մասին, որ 1973 թ. հունվարի 27-ին մի տարեց մարդ զանգել էր Սանտա Բարբարայի «Բալթիմոր» հյուրանոցի հեռախոսավարին ու հայտնել, թե ինքը քիչ առաջ սպանել է երկու մարդու. Լոս Անջելեսում Թուրքիայի Հանրապետության գլխավոր հյուպատոս Մեհմետ Բայդարին ու փոխհյուպատոս Բահադիր Դեմիրին՝ թողնելով նրանց պառկած իրենց արյան լճակներում, «38» ատրճանակով զենդակահարված գլխից: Դա տեղի էր ունեցել արևմտյան Կալիֆոռնիայում, Ֆրեզնոյից 3-4 ժամվա հեռավորության վրա: Մարդասպանը՝ յոթանասունն անց մի մարդ, ինչպես ասվում էր հաղորդագրության մեջ, երբեք չէր կարողացել մոռանալ, թե ինչպես թուրքերը գլխատեցին իր եղբորը և սպանեցին իր ընտանիքի 23 անդամի:

Մոնթեն աչքի անցկացրեց հաղորդագրությունը՝ յուրաքանչյուր հաջորդ տողը կարդալիս ավելի խոժոռվելով, և ապա թերթը լուռ մի կողմ դրեց:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Գլուխ 4. Բաց ճանապարհը

1972 թ. աշնանը, երբ ես տասնվեց տարեկան էի, իմ ընկեր Ֆրենկի հետ մասնակցում էի «Ագարակների աշխատավորների միության» (United Farm Workers Union - UFWA) գործունեությանը: Մենք պայմանագրերի նորոգման համար գործադուլներ էինք կազմակերպում: Մեր ծննդավայր Թուլերի շրջանը (Tulare County) Սան Ուաքին Վելլիում ամենահարուստներից մեկն էր՝ ֆերմաների արտադրանքի առումով, և Կալիֆոռնիայում ամենաաղքատներից մեկը՝ շարունակական կարիքավորության առումով: Եվ շրջանի ամենաաղքատ բնակիչներն, իհարկե, ագարակների աշխատավորներն էին (և ե՛ն)՝ շրջանի հարստության ստեղծողները: Ֆիկտաների շաբաթի անմիջական տպավորության տակ ու միամտորեն՝ ես իմ եղբորը պատմում էի գործադուլավորներին ռետինե մահակներով հարվածող՝ կապիտալիստական վերնաշապիկներով շերիֆների ու մեր միության գնդակոծված պատուհանների մասին: Մոնթեն լսում էր՝ գրեթե առանց հոնքը շարժելու: Տասնչորս տարեկանում նա արդեն խորասուզված էր հանրագիտարանի մեջ, և նրա միտքն ուրիշ բաներով էր զբաղված:

Մոնթեն մազերը կարճ էր կտրում և աշխատում էր աղմուկից ու նեղությունից հեռու մնալ: Ի պատիվ իրեն՝ նա երբեք լայն փողքերով մոդայիկ շալվար չհագավ: Նա միշտ, իր ողջ կյանքի ընթացքում, սթափ լինելու համբավ ուներ. հարբել էր միայն մեկ անգամ, Իսպանիայում՝ մի երկարատև կերուխումի ժամանակ «սանգրիա» խմելով: Նա չգիտեր ծխախոտի համը, եթե չհաշվենք այն մեկ անգամը, երբ մարիխուանա էր փորձել՝ հետևելով դասընկերների օրինակին, որոնցից շատերն այն ունեին իրենց վերնաշապիկների գրպաններում: Զուսպ հագնված՝ սպորտային կոշիկներով, ջինսով ու T-shirt-ով, նա մեծ, աշխույժ քայլերով առաջ էր գնում՝ ուսումնասիրելով Ֆրանսերեն, եռանկյունաչափություն, Հոբբս, Լոկկ ու Գասկալ: Տասներորդ դասարանում նա արդեն մաթեմատիկայի մասնավոր դասեր էր տալիս՝ մեկ ժամի համար ստանալով ամսական՝ 12 դոլար, և երկու երեկոյի ընթացքում վաստակում այնքան, որքան ես մեկ շաբաթում՝ դասերից առաջ ու հետո եղանով բեռնատար մեքենաներ բեռնելով:

Երբ Մոնթեն բարձրագույն դպրոցի երկրորդ կուրսում էր, տարեվերջին նրա ուսուցիչներն ասացին, որ նա ձանձրացել է: Ողջ դասընթացը տարվա կեսին յուրացնելով, նա նստում էր հետևի նստարաններից մեկին ու չչուկով իսպաներեն կամ ֆրանսերեն զրուցում փոխանակությամբ իրենց մոտ եկած օտարերկրացի ուսանողների հետ: Դպրոցի տնօրենն առաջարկեց նրան ժամանակից շուտ քոլեջ տեղափոխել, բայց մեր հայրը համեստորեն հրաժարվեց. նրա երկրորդ որդին արդեն դասարանում ամենակրտսերներից մեկն էր. կարիք չկար դեպքերն արագացնելու: Այդ ժամանակ էր, երբ մեր հոր ընկերը՝ Ռոյ Սումիդան, հղացավ ուշիմ տղային որպես «դեսպան» ճապոնիա՝ Վայսելիայի քույր քաղաք ուղարկելու գաղափարը: Դա Օսակայից ոչ հեռու գտնվող՝ աշխատանքային գործիքների արտադրության մի կենտրոն էր՝ Միկի Սիթի անունով: Մոնթեն, իր հերթին, ոգևորվել էր մի քանի ամիս ուրիշ երկրում ինքնուրույն ապրելու հեռանկարից: Ուստի պարոն Սումիդան ռադիոկապով գործը կարգադրեց, և 1973 թ. ամռանը տասնհինգամյա Մոնթեն նստեց «Ճապոնական ավիաուղիների»՝ Տոկիո թռչող ինքնաթիռը:

Հաջորդ ամիսների ընթացքում նա երեկոյան ժամերին Միկի Սիթիի ուսումնական բաժանմունքում կարատեի դասեր էր առնում: Սովորել էր, որ երբ հայացքը կենտրոնանում է մի հեռու կետի, բուունցքի հարվածը կարող է ավելի ուժգին լինել: Նա նաև մարզվել էր ավանդական սուսերամարտում («կենդո») և իր մարզիչներից նվեր էր ստացել մի զրահահագուստ՝ լաքապատ կրծքատախտակի վրա romanji գրով գրված՝ «Մելքոնյան»: Իսկ «բուշիդո» (մարտիկի վարքականոնը) ուսումնասիրելով՝ նա ավելի էր համոզվել, որ առաջին հերթին կարգապահությունն ու ջանադիր աշխատանքն են մշակում անհատական ոճ ու շարժումների ինքնաբերականություն, և ոչ թե՝ լավ ցատկելն ու հոխորտալը:

Քույր քաղաքում մնալու ժամկետի ավարտին մեր մայրն ու հայրը Մոնթեից նամակ ստացան. նա հայտնում էր, որ գալիք տարին անցկացնելու է իր ընկերոջ ընտանիքի հետ Օսակայում: Մի քանի ամիս մնալով այնտեղ ու անգլերենի մասնավոր դասեր տալով՝ Մոնթեն բավարար դրամ էր վաստակել՝ հարավ-արևելյան Ասիայում ճամփորդելու համար: Մարտի սկզբին ուղարկած մի շնչակտուր նամակում նա գրում էր, որ Սինգապուրում «Հնի ու նորի, չինականի ու հնդկականի, աղքատի ու հարուստի միջև

հակադրությունն անհավատալի չափերի է հասնում»: Նրա հաջորդ կանգառները Մալայզիայում ու Թաիլանդում էին, իսկ ապա՝ «տարածաշրջանի ամենազզվելի ու ամենագարշահոտ վայրում»՝ Վիետնամում: Տասնվեց տարին հազիվ բոլորած Մոնթեն թափառում էր Սայգոնի շրջակայքում այն ժամանակ, երբ հեռվում թնդում էր հրետանին, իսկ «Ազգային ազատագրական բանակը» քաղաքն օղակի մեջ էր առնում: Երբ Մոնթեն հեռացավ Վիետնամից, հետևում թողեց հերթական կեղծիքը. նա չէր հանդիպել մեկին, որը նույնիսկ ձևացներ, թե յանկիներն այնտեղ էին եկել հանուն ժողովրդի ազատագրման:

Հոնգ Կոնգում ու Թայվանում Մոնթեն «դժի նման ուտում էր կրիայի ապուր և խորոված օձ», ինչպես որ նկարագրում է մի նամակում: Ապա նա գնաց Կորեա: Այնտեղ նա մի քանի օր մնաց Սեուլի մոտ գտնվող՝ Սունգ Կվանգ Սա կոչվող մի բուդդայական վանքում, ուր վանականներն իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում էին սուտրաներ կարդալով, մեդիտացիայով ու երգելով: Հետագայում Մոնթեն չարաճճիորեն պատմում էր իր ականջ դրած մի խոսակցության մասին, որ տեղի էր ունեցել Արևմուտքից եկած մի սկսնակի ու տեղացի մի վանականի միջև: Այդ օրերի դեպքերի հուսահատական քննարկումից հետո նորադարձը հառաչել էր. «Կարևոր չէ. այս ամենը երազ է»: Նրա խոսքերից տեղացի վանականի աչքերը դուրս էին պրծել, և նա ծիծաղել էր. «Երազ. դժվե՞լ ես»: Կորեական արտասանությամբ crazy բառն, ըստ Մոնթեի, հնչել էր որպես KLAYjee!: Մոնթեի հեգնական վերաբերմունքն այս դեպքում նույնպես արտահայտում էր նրա մերժողական դատավճիռը սոլիպսիզմի ու սուբյեկտիվ փիլիսոփայության հանդեպ: Նա իրեն միշտ մաս էր համարում իրենից դուրս գտնվող մի բանի՝ ավելի մեծ, անվերջ փոփոխվող ու շատ ավելի հեռուն տարածվող, քան իր դատողությունների սահմանները:

Վանքի աբբահայրը՝ մի նիհարավուն, ակնոցավոր վանական, որ փետրանման սպիտակ այծամորուք ուներ, իր հյուրին թիկնոց նվիրեց ու անվանեց «Կոմա Հենջի» («Վանականի Ձու»): Սա առաջինն էր մականունների այն երկար շարքում, որ Մոնթեն ստանալու էր հետագա տարիներին: Աբբահորը Ձուն դուր էր եկել. ըստ նրա՝ վանքում քչերն էին պատրաստ, այդ օտարական տղայի նման, բարձրանալ 100 ոտնաչափ բարձրությամբ ճողոփայան ի վեր և ապա քայլ անել ցցափանցիկ օդի մեջ: Հավանաբար նրա հիասթափությունը մեծ էր, երբ Մոնթեն մերժեց Սունգ Կվանգ Սայում մնալու և լիարժեք վանական դառնալու նրա հրավերը: Մեկնումից առաջ ծեր վանահայրն իր վրձինը թաթախեց թանաքի մեջ, մի մեծ մետաքսե փաթույթի վրա համարձակ վրձնահարվածներով նկարեց չինարեն «Բուդդա» նշանագիրն ու հրաժեշտի այդ նվերը Մոնթեին տվեց:

Շուտով, 1974 թ. հունիսին վերջին անգամ Ճապոնիա վերադառնալուց հետո, Միկի Սիթիի մի թերթի լրագրողներ Մոնթեի հետ հարցազրույց վարեցին ու գրեցին. «Մեր առաջին տպավորությամբ՝ Մոնթեն պատկանում է բարեկիրթ, ատլետիկ մարդկային տեսակին: Հումորի իր զգացումով ու հեշտ շփվելու կարողությամբ Մոնթեն շատ ընկերուհիներ ունի, բայց, երևում է, չկա մեկը, որ կարող է «մշտական» կոչվել»: Նրանց կարծիքով՝ լավ կլիներ, եթե Միացյալ Նահանգների բոլոր ուսանողները Մոնթեի չափ լավը լինեին, «մինչդեռ եղել են դեպքեր, երբ որոշ ուսանողներ սպանել են իրենց ուսուցիչներին»:

Քիչ ավելի, քան ամիս անց Եղբայրս Բեյքերզֆիլդ օդակայանում իջնում էր օդանավասանդուղքով: Նրա հագին նկարագարդ վերնաշապիկ էր, ուսին՝ ճամփորդական պայուսակ: Ես նկատեցի, որ բեռոնե գետնին հասնելով՝ նա քայլեց ոտնաթաթերի վրա, մեծ, ցատկի նման քայլերով: Նա այլևս չէր կարող հաշտվել իրենց դաբարանի երկրորդ կարճահասակը, այլ յանկիների ամբոխի մեջ դիտվում էր իբրև միջահասակ:

Հետագա ամիսներին նա A աստիճանով ավարտեց բարձրագույն դպրոցը, քոլեջում սովորեց մաթեմատիկա, հոգեբանություն ու ամերիկյան կառավարության պատմություն, քերականության մի մասնավոր դպրոցում իսպաներեն դասավանդեց և Cal State Fresno-ում հաճախեց դոկտոր Սիդնի Զանգի՝ Չինաստանի պատմության դասընթացը: Նրա գլխավորությամբ Mt. Whitney High School-ի թիմը վիկտորինայում 22-12 հաշվով հաղթեց մերձակա քաղաքի Redwood High մրցակցին՝ դառնալով գավաթակիր, և տարեվերջին Մոնթեն ստացավ «Ամերիկայի բանկի» առաջադիմության մրցանակը (Bank of America Achievement Award)՝ «աչքի ընկնելու, խոստումնալից ապագա ունենալու և հասարակությանը ծառայելու համար»:

Մոնթեն ու իր ընկեր Ջոելը շաբաթվա վերջերին, տաք եղանակին, ժայռեր էին մագլցում Mineral King-ում ու Sequoia National

Parks-ում և լողում Kaweah River-ում: 1975 թ. ամառային մի օր գետի հոսանքը նրան գցել էր ժայռից, և նա երեսնիվայր բախվել էր մի քարի՝ կոտրելով քիթն ու դիմացի վերին ատամը: Այդ օրվանից ի վեր նրա՝ ականջից-ականջ, փոսիկներով փակագծված ու առջևի կենտրոնական մեծ ու եռանկյունի սպիտակ ատամը ցուցադրող ժպիտը տեսնելու բան էր:

Նախքան Մոնթեն բարձրագույն դպրոցը կավարտեր, մեր մայրը նամակ գրեց 18-րդ տարածքի կոնգրեսմեն Բոբ Մաթիասին՝ խնդրելով, որ իր տղաներից մեկն ընդունվի West Point-ի «Նավագնացության ակադեմիա»: Չգիտեմ, թե նա ինչ պատասխան ստացավ տասնամարտի նախկին չեմպիոն ու հոլլիվուդյան Տարզան Մաթիասից (և ստացա՞վ արդյոք), բայց Մոնթեն իր հետագա կրթության ուրիշ ծրագրեր ուներ:

Այդ ամառվա վերջին օրերին Մոնթեն երկու շրջանավարտների հետ տեղափոխվեց ապրելու Բերկլիի People's Park-ի դիմաց գտնվող մի բնակարանում և ընդունվեց Կալիֆոռնիայի համալսարան՝ որպես Regents' Scholar: Նա իր ուսումնառությունն այնտեղ սկսեց մաթեմատիկա և պատմություն երկու մասնագիտությամբ, բայց, մաթեմատիկայի չորս դասընթացներում մեծ առաջադիմություն ցուցաբերելուց հետո, հանկարծ որոշեց կրթությունը շարունակել մեկ մասնագիտությամբ՝ Հին Ասիայի պատմություն ու հնագիտություն: Նա ինձ ասաց, որ այդպես էր վարվել՝ շուտ ավարտելու ու «կյանքի դպրոց հաճախելու» անհամբերությունից դրդված: Այն ժամանակ, երբ Bay Area-ի մի քանի տասնյակ ուրիշ՝ մաթեմատիկայում աչքի ընկնող ուսանողներ դնում էին համակարգչային հեղափոխության և իրենց ապագա բազմամիլիոն եկամուտների հիմքերը, Մոնթեն գնաց այլ ուղղությամբ՝ հանուն մեկ ուրիշ՝ բառիս ավելի պակաս փոխաբերական իմաստով հեղափոխության: Այնուհետև նա չապրեց այնքան, որ հետաղարձ հայացք գցեր այդ տարիներին ու զղջար:

Մոնթեն շարունակ դիմում էր համալսարանին՝ ուսումնաշրջանները շուտ ավարտելու ու քննությունները նախապես հանձնելու համար: Նա դուրս էր սողոսկում իր դրադարան-կարուսելի պատուհանից ու ժամերով կարդում կտուրի վրա: Ուսումնասիրում էր Սանսկրիտ և երրորդ դարի բուդդայական տրամաբան Նագարջունային՝ ժխտման իր 12 ստորոգություններով: Նա Միջագետքի, Հնդկաստանի ու Չինաստանի պատմության վերաբերյալ հարյուրավոր էջեր նշումներ էր արել՝ կոկիկ, թեք, անփութությունից բոլորովին զերծ ձեռագրով՝ խառնված չինական նշանագրերի հետ: Այդ ժամանակ նա 5,8 ոտնաչափ հասակ ուներ, լայն թիկունք, երկար ոտքեր ու ձիգ որովայն: Նրա ճակատն ուռուցիկ էր, քիթը՝ կլորավուն (որ Քիրամիջյան գենների հետևանք էր և գետափի ժայռին բախվելուց ավելի էր ընդգծվել), աչքերը՝ խորունկ, շուրթերը՝ լիքը, իսկ գեղեցիկ ծնոտը ժամանակ առ ժամանակ շրջանակվում էր անխնամ բեղ-մորուքով: Նա հագնում էր ջինս, որ սովորաբար ազդրերի մեջտեղից կտրված էր, կիսաթև շապիկ (tee shirt) և ռետինե էժանագին չստեր: Երբ որևէ ծանոթ նրան նկարագրում էր որպես «ավտոբալացի աբորիգեն», Մոնթեն դա հաճոյախոսություն էր համարում:

Նա ժպտադեմ էր և թնդացող ծիծաղ ուներ, բայց ավելի շուտ համեստ էր, քան խրոխտ: Երբ մեկի հետ ծանոթանում էր, գրեթե հեզաբար բարձրացնում էր հոնքերը և գլուխը մինչև վերջ խոնարհում. մի սովորույթ, որ նա ձեռք էր բերել Ճապոնիայում: Երբ նա լսում էր, նրա վերին շրթունքը հաստանում էր՝ առաջ ընկած վերին ծնոտն ավելի շեշտելով: Հեռանալիս նա ծոր էր տալիս՝ «Լավ եղեք...», և իր զրուցակցին, զսպված ամաչկոտ ժպիտով ու ձեռքը թեթևակի բարձրացնելով, հրաժեշտ տալիս:

Մոնթեն սիրում էր ուտել և վարպետացել էր տարբեր եղանակներով ուտելիք ձեռք գցելու մեջ: Նա ու իր ընկեր Ջոելը «տակնուվրա էին անում» Haste Street-ում, համալսարանի իրենց մասնաբաժնի արևելյան կողմում գտնվող կանանց բաժանմունքի խոհանոցը և հերթապահության վերջում հեռանում՝ գրպանները դողացված զանազան բարիքներով լի: Երեկոյան զբոսանքների ժամանակ Մոնթեն հանկարծ որոշում էր ինքն իրեն հրավիրել կրիշնայականների մենաստան՝ սնվելու: Մի անգամ նույնիսկ նա ու Մայլեն ընդունեցին Unification Church-ի հավատորսների հրավերը, բայց հետո այլևս նրանց մոտ չգնացին, որովհետև ուտելիքն ու զրույցն անտանելի էին եղել: Շաբաթվա վերջում նա մեկ էլ հագնում էր իր լավագույն ջինսն ու «պատահաբար» դառնում չինացիների հարսանիքների մասնակից: Զինարենի «կանտոնյան բարբառով» մի քանի բառ էր մրմնջում և ուղիղ գնում դեպի ճաշասեղանը: Այդպիսի մի ընդունելության ժամանակ հյուրանոցի տնօրենը նկատել էր սեղանի տակ թաքնված Մոնթեին, բայց, ստահակին վռնդելու փոխարեն, նրան տարել էր խոհանոց՝ թողնելով հանգիստ ուտել: «Լավ տղա էր», — տարիներ անց նրան հիշում էր եղբայրս: Իսկ դեսերտի համար նա մտնում

էր բուսաբանական այգի ու պոկում Կոլումբիական կակտուսի՝ խնձորի չափ պտուղները:

Որոշ ժամանակ Մոնթեն գիշերային ժամերին աշխատեց փքաբլիթների խանութում: Նա մինչև լուսաբաց կարդում էր վաճառասեղանի մոտ և ապա վազում առավոտյան դասերին: Նա նաև ուրիշ տարօրինակ գործեր էր անում, բայց ձգտում էր իր ուսման վարձը չվատակել մտավոր աշխատանքով: Կեսլուրջ-կեսկատակ՝ նա մտադրվել էր գյուտարարությամբ միլիոն վաստակել, ուստի հորինեց փոխանցումների տուփի մի յուրօրինակ լծակ՝ բաղկացած հարթ գետաքարից ու մետաղալարից: Նա այն անվանեց «Արտասովոր քար» (Odd Rock՝ ակնարկելով այն ժամանակ մոդայիկ Pet Rock կատակ-նվերը) և փորձում էր իր հայտնագործության համար պատենտ ձեռք բերել. բայց քանի որ ոչ մի ընկերություն դրանով չհետաքրքրվեց, Մոնթեն հրաժարվեց այդ գաղափարից: Գործարքը չկայացավ, և նա փնտրում էր «բաքս» վաստակելու այլ ճանապարհներ:

Թանկագին քարերի մշակման մասին մի քանի գիրք կարդալուց ու ակնագործական խոշորացույց գնելուց հետո, նա իր ընկերներից կանխավճարներ ու սուտակի պատվերներ վերցրեց և Թուիլանդ թռչելու տոմս գնեց: Ապա նորաթուխ գործարարը մեկնեց արևելք, դեպի սուտակի հանքերը, որոնք լքվել էին մի քանի կիլոմետր այն կողմ՝ Կամբոջայում ընթացող կռիվների պատճառով: Նա հանքերում անմշակ քարեր ընտրեց ու դրանք կտրելու համար տարավ Բանգկոկ:

Երբ Մոնթեն իր գործնական ճամփորդությունից վերադարձավ, ես նրա հետ գնացի Լոս Անջելեսի Hill Street-ում գտնվող Թանկագին քարերի շուկա (Jewelry Mart)՝ քարերը գնահատելու: Առաջին ակնագործը, որին այցելեցինք, արևելցի ազահ վաճառականի մի կենդանի ծաղրանկար էր: Նա իր խոշորացույցով մի խեթ հայացք գցեց քարերին, ապա հեգնական ժպիտով դրանք գնահատեց Մոնթեի վճարածից շատ ավելի ցածր: Նա ասաց, որ «որպես լավություն» քարերն իսկույն կարող է գնել՝ միայն նման անորակ ապրանքն ուրիշներին ցույց տալու գլխացավանքից մեզ ազատելու համար:

Ես խոժոռվեցի: Մոնթեին փոլ տվողներից մեկը՝ մի նյարդային երիտասարդ, որի մասին եղբայրս ասում էր՝ «չավ տղա», արդեն նրան մեղադրել էր քարերի համար չափից ավելի վճարելու համար: Այժմ ոսկու շուկայի գնահատողը հաստատում էր իմ

կասկածը, թե՝ Թաիլանդում մի ակնավաճառ ստահակ խաբել էր իմ փոքր, միամիտ եղբորը՝ նրանից կորզելով իրեն չպատկանող գումարը:

Կողքից Մոնթեին նայելով, սակայն, զարմանքով տեսա նրա դեմքի անվրդով արտահայտությունը: Նա ոչինչ չասաց, այլ մարմնի թեթև շարժումով կարատեի մարտական կեցվածք ընդունեց՝ մկանները պրկելով: Երբ ոսկերիչը խոշորացույցն աչքից հեռացրեց ու նայեց Մոնթեին, նրա ինքնավստահության հետքն անգամ չէր մնացել: Նա հետ գնաց ու ծղրտաց. «Դու կարատե՞ ես պարապել»: Մոնթեն աչքերը նեղացրեց. նա ամենևին պատրաստ չէր այդ խաբեբա ծաղրածուի զոհը դառնալու: Ոսկերիչը հեզաբար քարերը հետ տվեց, և ես Մոնթեին ուղեկցեցի դեպի դուռը: Իսկ քիչ անց մեծ թեթևություն զգացի, երբ մեկ ուրիշ ակնագործ քարերը գնահատեց Մոնթեի սպասածի չափ:

Սուտակ ձեռք բերելու համար 1975 թ. դեկտեմբերին մեկ ուրիշ ճամփորդության գնալով՝ Մոնթեն ու իր ուղեկից Մայքլ Բրրլինգեմը վերադարձան աղիքային հիվանդությամբ: Նրանք վարակվել էին Բանգկոկի ու Մանդալայի միջև գտնվող մի տեղում՝ փողոցում հյութ խմելով: Երբ ես գնացի օդանավակայան նրան դիմավորելու, Մոնթեն այնքան էր հյուծվել, որ հեռվից չճանաչեցի: Ապաքինվելուց առաջ, այնուամենայնիվ, նա հասցրեց ուսման համար ստացած դրամաշնորհը Ռիո դը Ժանեյրոյի օդանավի տոմսի վերածել: Ուսումնաշրջանի առաջի օրերը նա այնտեղ անցկացրեց՝ Կառնավալի ընթացքում տեղացի ընկերների հետ պարի դպրոցում զվարճանալով:

«Կան մարդիկ, — գրում էր Մոնթեն տասը տարի անց, — ովքեր իրենք իրենց համոզել են, թե որոշ պայմաններում չեն կարող որոշ բաներ անել: Ինչո՞ւ են, օրինակ, նրանք իրենց զրկում անձրևոտ օրերին լողալու հաճույքից: Նման մարդիկ չեն կարողանում լիովին վայելել աշխարհն ու իրենց գոյությունը: Կյանքը շատ ավելի հետաքրքիր ու հաճելի է, երբ մարդ լայնախոհ է ու նախաձեռնող»:

Առաջին իսկ հարմար առիթով նա իր ճամփորդական պայուսակի մեջ մի ատամի խոզանակ ու մի քանի պատմության գիրք էր դնում, կախում այն ուսից ու հայտնվում մայրուղու վրա: Մինչ մյուս ուսանողները, դասագրքերի վրա հակված, ժամեր էին անցկացնում գրադարաններում, Մոնթեն Սան Ֆրանցիսկոյի ու Մեքսիկայի միջև ընկած ճանապարհներով շարժվում էր դեպի

հյուսիս կամ հարավ՝ հետևելով «Ամեն տեղ՝ բացի այստեղից» իմաստությանը: Ինչպես Բաշոյի, Ուիթմենի, Ջեք Լոնդոնի և մեծ ճանապարհների ուրիշ պոետների համար, որոնց Մոնթեն կարդում էր, այնպես էլ նրա համար ազատությունը նախ նշանակում էր ճամփորդելու ազատություն, և դրա լավագույն խորհրդանիշը բաց ճանապարհն էր:

Մի անգամ Մոնթեն ու Ջոելն Օքլենդի մի կայարանում ցատկել էին բեռնատար բաց վագոնի մեջ և 18 ժամ անց հայտնվել Լոս Անջելեսում՝ ոտքից գլուխ մրոտված ու մազերը փչերի նման ցցված: Այդ ճամփորդությունից հետո Մոնթեն պատմում էր, որ հանկարծ քնից զարթնել էր շչակի ուժեղ ձայնից ու մեջքի վրա պառկած հայտնվել անթափանց խավարում: Գնացքը հոնդյունով մտել էր թունել: Մոնթեն ձեռքերը մոտեցրել էր դեմքին, բայց դրանք չէր տեսել: «Մի պահ, — ասում էր նա դեռ վախեցած, — ինձ թվաց, թե մեռած եմ: Ուրեմն մահն այդպես է լինում»:

Մոնթեն սկսեց իր երկրորդ տարին Բերկլիում՝ ապրելով համալսարանի մասնաշենքից փոքր-ինչ հյուսիս գտնվող մի վարձու բնակարանում: Նրա հետ բնակվում էին իր զարմիկ Դեյվիդը, մի ճապոնացի ընկեր ու տանտեր Բարնին՝ «ամերիկացի» մի տղա: Մոնթեն շուտով հոգնեց Բարնիի՝ սեռական ուղղվածությամբ կատակներից, իսկ նա էլ, իր հերթին, վարձակալին համարեց անպատասխանատու, անկառավարելի ու մի քիչ «մոլագար»: Մոնթեն առավոտյան աղբը դուրս չէր տանում. նա ելումուտ էր անում օրվա ու գիշերվա բոլոր ժամերին և հանկարծ, առանց զգուշացնելու, օրերով կորում էր: Իսկ ամենասարսափելին այն էր, որ Մոնթեն միշտ տարօրինակ, անհանգստացնող ծրագրեր էր կազմում, որոնց մասին Բարնին իմանում էր՝ պատի հետևից իր տնվորների խոսակցությանն ականջ դնելով: Օրինակ՝ Մոնթեն պատրաստվում էր գնալ Կամբոջա՝ սուտակ բերելու, ուզում էր Ֆիլիպիններում դիվահարին բժշկելու մասին ֆիլմ նկարել կամ Գերուում մասնակցել հնագիտական պեղումների:

Մոտավորապես այդ օրերին Մոնթեն մեկնեց Կարմել Վելլի, որտեղ Սանգ Կվանգ Սայի ծեր վանահայրը Կորեայից եկել էր՝ բուդդայական նոր տաճարն օծելու: Տաճարն ու կացարանը գտնվում էին բլուրների ստորոտին, գետի հունի մոտ, և շրջապատված էին եղեսպակի թփերով, նոճիներով ու գայլերով: Այնտեղ նոր տաճարի վանահայրը՝ Գատվելի Հան Սանգ Լիին, Մոնթեին՝ նախկին «Զվին», նոր անուն տվեց՝ «Բոպ Սան Գոր Սա» կամ «Դհարմայի լեռ»: Այնտեղ նույնպես Մոնթեն հանդիպեց Սուն Սունիմին՝ կորեացի մի վանականի, որը քնում էր «լոտոս» կոչվող ուղղաձիգ դիրքով, սոճու տակ: Մոնթեն ու ես ժամանակառ ժամանակ մի քանի օրով գնում էինք այդ տաճարը: Մի օր ես մոտեցա Սունին իր սոճու տակ և տվեցի ինձ տանջող հարցը. ի՞նչ պետք է անի նա, ով ատրճանակը ձեռքին հայտնվել է անմեղ զոհերի սպանող մարդասպանի մոտ: Սունը ձեռքը բարձրացրեց՝ ատրճանակ բռնած լինելու դիրքով, և ասաց.

— Իհարկե, դու պետք է կրակես մարդասպանի վրա:

Ինձ բացատրություն էր պետք.

— Պետք է նշան բռնեմ նրա ձեռքի՞ն:

— Ոչ, — պատասխանեց Սունը, — այդպես կարող ես վրիպել. դու պետք է սպանես նրան:

Այդ պահին վանականը, որի սովորական զբաղմունքը հաց թխելն էր, հավանաբար նկատեց զարմանքից կախված իմ ծնոտը:

— Բայց զգո՛ւյշ եղիր, — ասաց նա, — դու պետք է վստահ լինես, որ նա իրոք մարդասպան է:

Երբ ես Մոնթեին պատմեցի այս խոսակցությունը, վանականի պատասխանը նրան չզարմացրեց: Իսկ ես զարմացա, երբ, իմիջիայլոց ասելով, թե լավ է Սուն Սունիմի նման մտահայեցությամբ ապրելը, լսեցի Մոնթեի հետևյալ պատասխանը. «Ես չափից ավելի հայ եմ՝ այդպես վարվելու համար»:

Ե՞րբ էր նրա գլխում այդ միտքը ծագել: Ես դա չգիտեի և խոժոռ նայեցի նրան՝ սպասելով, թե կասի. «Կատակ արեցի»: Բայց նա ոչինչ չասաց: Ինձ թվում էր, թե, հակառակ Սունի՝ չարագործի վրա կրակելու տրամաբանական խորհրդին, Մոնթեն դեռ կենդանիներին չսպանելու բուդդայական պատգամի հետևորդ էր և դեմ էր կացինը ձեռքին հոմո սապիենսի կերպարին: Բայց Մոնթեն չէր պատրաստվում ապրել ու մեռնել այն կրավորական ձևով, որի մասին հիշողությունն Ամստերդամում գորգի առևտրականին կատաղության հացրեց: Նա չէր պատրաստվում թույլ տալ, որ իրեն սոխի նման պոկեն, ճզմեն կամ կտոր-կտոր անեն, ինչպես որ նկարագրել էր Գատվելի Ֆիլյանն իր գրքում: Երևի նա հենց դա կամ նման մի բան ի նկատի ուներ, երբ ասաց. «Ես չափից ավելի հայ եմ՝ այդպես վարվելու համար»:

Մինչ ես նման դատողություններով փորձում էի քանդել իմ չփոթության կծիկը, գլխումս մեկ այլ միտք ծագեց: Ինչպե՞ս կարող էր Մոնթեն պնդել, թե ինքը չափից ավելի հայ է: Հարկավ,

ի՞նչ առումով էր երրորդ սերնդի այդ շառավիղը՝ սանուաքինցի տղան, որ խոսում էր ծոր տալով, իրեն առհասարակ հայ համարում:

Իրականում Մոնթեն այդ հարցին դեռ տարիներ առաջ էր պատասխանել՝ պարզապես ինքն իրեն կոչելով «սփյուռքահայ». հայ, որ ապրում է իր պատմական հայրենիքից դուրս: Նա իր տրամաբանական փաստարկն անվիճելի էր համարում: Ինչ էլ որևէ անհատ փորձի դառնալ, նա նախ պետք է սկսի նրանից, ինչ որ ինքը է՛: Եվ ինչ որ յուրաքանչյուր անհատ է՝ մեծապես նրա անցյալի հետևանք է:

Մոնթեն, իր մեջքի պայուսակի մեջ պատմության գրքերով, ճամփորդել էր հազարավոր կիլոմետրեր: Իր ուսերի վրա զգալով անցյալի բեռը՝ նա եզրակացրել էր, որ Հայկական սարահարթում անցկացրած 25 դարերը գերակշռում են Սան Ռաֆայել Վելլիի 100 տարվան: Հետևաբար՝ նա ինքն իրեն չէր կոչում սովորականի նման «հայ-ամերիկացի», այլ՝ «ամերիկահայ»: Այն ժամանակ դա բանալ էր թվում, բայց տարիների հեռավորությունից հստակ է դառնում, որ Մոնթեի համար իր ինքնության մեջ տիրապետողը «հայն» էր: Ամերիկացի դառնալը զուտ դեպքերի բերման, պատահարների արդյունք էր՝ ինչպես «հին», այնպես էլ «նոր» աշխարհներում. դա սոսկ փակուղու շրջանցում էր և նույնիսկ՝ «կեղծ ինքնություն», ինչպես որ Մոնթեն միշտ ասում էր:

Մոնթեն միշտ դժվարություններ էր ունենում, երբ փորձում էր ծայրահեղ ազգայնական հայերին համոզել, որ իր հայրենասիրությունը կապ չունի «Ընտրյալ ժողովրդի» ներկայացուցիչ լինելու գաղափարախոսության հետ: Նա դրան հակառակ հայացքներ ուներ: Մինչև 20 տարին բոլորելը Մոնթեն արդեն բավական ճամփորդել ու գրքեր էր կարդացել, որպեսզի համոզվեր, որ երկրագնդի վրա ապրող մարդկանց մեծ մասն աղքատ է, ճայնազուրկ և, այս կամ այն առումով, ճնշված: Հարստահարումն ու շահագործումը սովորական երևույթներ էին Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում ու Իռլանդիայում: «Մենք նորմալ ժողովուրդ ենք», — ասում էր նա իր փոքրաթիվ ունկնդիրներին, որոնք հաճախում էին Օքլենդի Սբ. Վարդան եկեղեցում նրա կարդացած՝ հայոց պատմության վերաբերյալ դասախոսություններին: Մոնթեն այդ ժամանակ Բերկլիում սովորում էր վերջին կուրսում: Ոչ նորմալները, իր կարծիքով, իշխողներն էին կամ նրանք, որ արժանացել էին երբևէ գոյություն ունեցած ամենահարուստ ու հզոր կայսրության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների բարեհաճությանը: Այսպիսով, Մոնթեն իր ցեղը՝ հայերին, դասում էր «Ընտրյալ ժողովրդի» և «Աստծո կողմից օծյալների», այսինքն՝ Ամերիկյան կայսրության զոհերի երկար շարքը: Նախընտրելով հայկական ինքնությունը, ուրեմն, նա ինքն իրեն կապում էր ժողովուրդների շատ ավելի մեծ մի հանրության հետ, քան իր ծնված ու քաղաքացիություն ստացած երկրի տերերը՝ յանկիներն էին:

Որքան էլ սա պարադոքս թվա, Մոնթեն չէր հանդիպել ազգային որևէ պատկանելության մարդկանց, որոնք կալիֆոռնիացի իրենց նախնիներին կարողանային հացնել մինչև 1880-ականներ, ինչպես ինքը: Ո՛չ մեր օքլահոմացի և ո՛չ էլ ծագումով մեքսիկացի հարևանների մեծ մասը դա չէին կարող անել: Եթե չհաշվենք մեր մի քանի հնդկացի դասընկերներին և Կալիֆոռնիայի առաջին բնակիչների հատ ու կենտ հետնորդներին, ապա մեզ հայտնի էին միայն շատ քչերը, որոնց ընտանիքի արմատները կենտրոնական Կալիֆոռնիայում գնային այնքան խորը, որքան մերը: Բայց երբ ես Մոնթեին սա հիշեցրի, նա սոսկ ուսերը թոթվեց: Այդ ժամանակ նա արդեն իր հայացքը հառել էր արևելքում գտնվող հորիզոնին:

Հանդուգն և ուշիմ պատանու համար ժամանակը ոգևորիչ էր: Վիետնամի օրինակը միշտ Մոնթեի մտքում էր, և թվում էր, թե, Անգոլայից մինչև Նիկարագուա, ազատության քամիները կարմիր սուրգաստներ էին ուռեցնում: Թուրքիայում տեղի ունեցող գործադուլները, զինված ընդհարումները և մասսայական ցույցերը, մասնավորապես՝ 1977 թ. մայիսյան մեծ ցույցը Ստամբուլի Տաքսիմ հրապարակում, թվում էր, այդ երկրի հեղափոխական ուժերի աճող ակտիվության վկայությունն էին: Միաժամանակ՝ իրավիճակն անհանգիստ էր Հայաստանից արևելք. իրանցի ուսանողները Բերկլիում փսփսում էին այն մասին, որ շահի «Սիրամարգ գահը» սասանվում է: Եթե տեղի էր ունենալու անհավատալին, եթե առաջիկա տարիներին ամերիկյան դրածո շահ Ռեզա Պահլավիի իշխանությանը Թեհրանում վերջ էր տրվելու, ապա դա ոչ այնքան որոշակի, բայց բոլոր դեպքերում հակայական ազդեցություն պետք է ունենար ամբողջ տարածաշրջանի վրա՝ ներառյալ Թուրքիան:

Փոփոխությունն ասես «կախված էր» օդում, և Մոնթեն, նախապատրաստվելու համար, սկսեց հաճախել Թուրքերենի դասերի:

Առոգանությունը, հոլովումն ու բառապաշարը նա սովորում էր հեշտությամբ, իսկ շուտով զարմանքով իմացավ, որ մեր տանը կամ ծերանոցում օգտագործվող շատ բառեր իրականում ոչ թե հայերեն էին, այլ թուրքերեն: Ոչ միայն մեր ծնողների խոհանոցային բառապաշարի մի զգալի մասն էր թուրքերեն (օրինակ՝ «քյուֆթեհ», «դոլմա», «յալանչի», «փիլաֆ», «քեբաբ» ուտեստների անունները), այլ նաև մեր հոր՝ հաճախ օգտագործած շատ բառեր ու արտահայտություններ. «Զըխըմ», «Մաշալլահ», «էֆենդիմ», կամ՝ այնպիսի արտահայտություններ, որոնք թարգմանվում են՝ «կե՛ր քոնի նման», «դժոխքի մեջտեղում» և այլն:

Մոնթեն դասերի ընթացքում հանդիպում էր թուրք ուսանողների, բայց իրեն հեռու էր պահում նրանցից: Նա կասկածում էր, որ այդ ուսանողների՝ ժողովուրդների եղբայրության կոչերի դիմակի տակ թաքնված է թուրքական ազգայնականության «ձախ» մի տարբերակ, կամ՝ ավելի վատ: Նա չէր մոռանում անցյալի դավաճանությունները և հատկապես այն փաստը, որ 1915-ի ցեղասպանությունն իրականացրած «Երիտթուրքերն» իշխանության էին եկել՝ խոստանալով բարեփոխումներ ու բարեկամություն հայերի հետ: Իսկ նախքան յոթ տարի առաջ Մերսիֆոնից Անատոլիայով մեր ճամփորդությունը վաղուց ապստամբած քրդերի հանդեպ Մոնթեն համակրանք ուներ, թեև նրան նաև հայտնի էր, որ որոշ քրդեր մասնակցել էին հայերի կոտորածներին: Ամեն դեպքում նա գիտակցում էր, որ թուրք և քուրդ հեղափոխականներն իրենց կամքով հայերին բացի սուտ խոստումներից ուրիշ ոչինչ չէին տա:

Մոնթեի անվստահությունը թուրք ու քուրդ հեղափոխականների հանդեպ և կանխազգացումը, որ Իրանի ու Թուրքիայի վրա ամպեր էին կուտակվում, նրան համակեց այն մտքով, թե «ժամանակը մեր օգտին չէ»: Մոնթեին ու մեզնից շատերին թվում էր, թե Թուրքիան հայտնվել է անդունդի եզրին, և «վաղ թե ուշ, — ինչպես գրում էր նա, — Թուրքիայում սոցիալիստական հեղափոխություն կլինի»: Մոնթեն անհանգստացած էր, թե հեղափոխությունը կարող է շատ շուտ տեղի ունենալ, և հայերը չեն հասցնի իրենց պահանջատիրության համար ուժերը համախմբել: Թե պահանջներն ինչպիսին էին լինելու, հստակ չէր, բայց նա չէր կասկածում, որ դրանք պետք է ներկայացվեն: Հետագա տարիների ընթացքում Մոնթեն ինքն իր համար պարզեց, թե ինչ է պետք պահանջել, և 1987-ին նա բանտից իր ընկերներին ափսոսանքով գրում էր. «Ցուրաքանչյուր անպտուղ օր, երբ մենք ոչինչ չենք անում մեր առաջապահներին կազմակերպելու համար, ավելի հավանական է դարձնում մեր ազգային հարցի հետ կապված միայն նվազագույն պահանջների բավարարումը: Բայց եթե մեզ շատ արագ չհաջողվի կրկնապատկել մեր ջանքերը, ապա նույնիսկ այդ նվազագույն պահանջների բավարարումը չենք կարողանա ապահովել: Մենք պետք է համախմբվենք հիմա՛»:

Քանի որ 1977 թվականին ժամանակի դործոնը չափազանց կենսական էր թվում, Մոնթեն սկսեց ավելի ու ավելի հետաքրքրվել թուրք պաշտոնյաների, թուրքական դեսպանատների ու ավիագործակալությունների վրա հարձակումներով: Դրանք կատարում էին իրենք իրենց «Հայկական նոր դիմադրություն», «Հայկական գաղտնի բանակ», «Արդարության մարտիկներ» կազմակերպությունների անդամներ կոչող անհատներ: Թերթերն այդ հարձակումները ներկայացնում էին իբրև ահաբեկչություն, բայց Մոնթեն նախընտրում էր «զինված քարոզչություն» արտահայտությունը: Խաղաղության կողմնակից հայերի հետ Բերկլիում կեսշշուկ ընթացող քննարկումների ժամանակ նա պաշտպանում էր այն տեսակետը, թե թուրք դիվանագետների վրա նման հարձակումներն արդարացված էին: Ի վերջո, նրանք թուրքական կառավարության ներկայացուցիչներ էին, հայերի կոտորածներից օգուտ քաղած մարդիկ, որոնք շարունակում էին ուրանալ ցեղասպանության փաստը: Ավելին՝ նրանց ներկայացրած վարչակարգը սպանել էր հազարավոր քրդերի, ավերել նրանց գյուղերը, արգելել նրանց լեզուն ու մշակույթը, բանտ նետել ու կոտանքների ենթարկել հազարավոր այլախոհների՝ և՛ քուրդ, և՛ թուրք: Այդ դիվանագետներն ի ծնե չէին զբաղեցրել իրենց պաշտոնները, այլ ինչ-որ պահի կամովին որոշել էին պաշտոնյաներ դառնալ ու համապատասխան դիրքորոշում ունենալ: Հետևաբար՝ նրանք պատասխանատու էին իրենց որոշումների և գործողությունների համար: Հարկավ, նրանք բավական երկար ժամանակ խուսափել էին արժանի պատժից:

Երբ հայ պացիֆիստները պնդում էին, թե նման հարձակումներն անխուսափելի էին, Մոնթեն առարկում էր, որ դրանք օգտակար էին «երիտասարդությանն արթնացնելու համար»: Իսկ երբ խաղաղության կողմնակիցները մտահոգություն էին հայտնում, թե այդ գործողությունները հասարակական կարծիքը հայերի դեմ կուղղեն, նա իր հանդարտ ձայնով պատասխանում էր, որ

միջազգային հանրության դատապարտումը Թուրքերին երբեք առանձնապես չի հուզել: Նրանք որևէ մեկի կարծիքը հաշվի չառան, երբ կազմակերպեցին հայերի նախճիրն ու տիրացան նրանց երկրին, երբ կոտորեցին բազմաթիվ քրդերի, բռնազավթեցին արաբական Իսքյանդարունն ու ներխուժեցին հյուսիսային Կիպրոս, կամ երբ էգեյան ծովում ոտնձգություններ արեցին հույների դեմ: Նրանք պարզապես անպատիժ գործեցին այդ հանցանքներն ու շարունակում են նույն կերպ վարվել: Հետևաբար՝ հասարակական կարծիքն արժեք չունի. «Մենք պետք է այն արհամարհենք ու մեր գործն առաջ տանենք», — եզրակացնում էր Մոնթեն:

Այս լսելով՝ խաղաղության կողմնակիցներից մեկը կխոժռվեր ու մատով ժխտական շարժում կաներ. «Թուրքերը մեզնից հենց դա են սպասում. նրանք ուզում են մեզ ներկայացնել որպես ահաբեկիչներ»: «Իսկ դա ո՞ւմ է հուզում», — կպատասխաներ Մոնթեն: Նույնիսկ այն ժամանակ, երբ Թուրքերը մեր նախնիներին անկողնու մեջ կտոր-կտոր էին անում կամ նրանց գլուխները գազարի նման կտրում, նրանք իրենց զոհերին մեղադրում էին իբրև ահաբեկիչների: «Ինչ էլ անենք, — ասում էր Մոնթեն, — նրանք մեզ ահաբեկիչներ են կոչելու. ուրեմն ինչո՞ւ իրոք չդիմենք ահաբեկչության»:

Հակառակ ինձ՝ Մոնթեն գտնում էր, թե կյանքը «կատարյալ խառնաշփոթ» է: Մարդն, ըստ նրա, կամ պետք է պայքարի կյանքի բարդությունների դեմ կամ արհամարհի դրանք. երկու դեպքում էլ հաջողության երաշխիք չկա:

1977-ի աշնանը Բերկլիի մի քանի ուսանող, որոնց թվում՝ Մոնթեի ընկերներից Արմեն Ս.-ը, նամակներով հայտարարեցին անգործության մատնված «Հայ ուսանողների միությունը» (ՀՈՒՄ) ակտիվացնելու իրենց մտադրության մասին: Օրեր անց, երբ մոտ 30 ուսանողներ եկան համալսարանի Tan Oak Room կոչվող սենյակը, ուր առաջին ժողովը պետք է տեղի ունենար, ուտելիք չտեսեր հագած անխնամ տեսքով մի երիտասարդ միջանցքում յուրաքանչյուրին տվեց պայթուցիկների բաղադրատոմսերի մի փաթեթ, որ պատճենահանել էր «Անարխիստի ձեռնարկից»: ՀՈՒՄ-ի տեղեկատուի երկրորդ համարում ներկաներից Զուդի Սանոյանը նկարագրել է այդ տեսարանը. «Ոչ ոք չի մոռանա, թե առաջին անգամ ինչպիսի տպավորություն թողեց մեզ վրա Մոնթեն՝ ՀՈՒՄ-ի ժողովի մասնակիցներին ռումբերի մասին պատճենահանված գրականություն բաժանելիս: Պետք է խոստովանեմ՝ դա տպավորիչ էր»:

Իսկ այն, ինչից տպավորված էր Մոնթեն, իր ասելով՝ շփոթված ուսանողների բթամտությունն էր: Նրանցից շատերը ՀՈՒՄ-ի երկրորդ ժողովին չհայտնվեցին: «Անհավատալի է», — բարկանում էր նա՝ չեշտելով առաջին վանկն ու գլուխը թափահարելով՝ ասես քնից նոր էր արթնանում: Մոտ տասը տարի անց, համենայն դեպս, իր ինքնաքննադատական կենսագրության մեջ, Մոնթեն արդեն այդքան զարմացած չէր հայ ուսանողների վարմունքից. «Այս ընթացքին թեև շատ լուրջ ու անկեղծ էի, հետադարձ հայացքով կրնամ ըսել, որ շատ անփորձ, անհամբեր ու որոշ չափով արկածախնդիր էի»:

«Արկածախնդիրը» Tan Oak Room-ում հայտնված պամֆլետիստի համեմատաբար մեղմ մակդիրներից էր: Նրա ուսանող ընկերներն օգտագործում էին նաև «բռնկուն» բառը, և ես անգամ լսել եմ «դիժ» բնորոշումը: Այդ երեկոյից առաջ Մոնթեն երբեք ընկերներ ձեռք բերելու և մարդկանց վրա ազդելու հետ կապված բարդություններ չէր ունեցել: Տարրական դպրոցի վեցերորդ դասարանում նա տնօրենին համոզել էր ստեղծել նոր ընտրովի պաշտոն՝ Ուսանողական խորհրդի նախագահ, իսկ հետո նա մյուս թեկնածուների հանդեպ մեծ առավելությամբ ընտրվել էր այդ պաշտոնում: Այն ժամանակ, իհարկե, պայթուցիկ պատրաստելու վերաբերյալ գրականությունը նրա ընտրարշավի քարոզչամիջոցներից չէր եղել:

Tan Oak Room-ում հրավառության ուսուցիչը չկարողացավ ՀՈՒՄ-ի գործադիր խորհրդի անդամ դառնալ, թեև նա իր թեկնածությունն առաջադրեց տարբեր տեղերի համար: Ի վերջո մեկը, ափսոսելով ճշմարիտ ուղուց շեղված պատանու եռանդը, առաջարկեց նրան վստահել հասարակական կապերի համար պատասխանատուի՝ թափուր մնացած աթոռը: Մոնթեին մեկուսացրին մի անվնաս թվացող անկյունում, որպեսզի նա զանազան խմբագիրների նամակներ գրելու վարժանքներ անի:

Օրեր անց, սակայն, ՀՈՒՄ-ը ստիպված էր զղջալ նույնիսկ այդ փոքր զիջման համար: 1977 թ. հոկտեմբերի 3-ին, ժամը 3:50-ին, պայթյունի հետևանքով կտոր-կտոր եղավ Կալիֆոռնիայի համալսարանում (Լոս Անջելես) պատմության պրոֆեսոր Սթենֆորդ Ջ. Շոուի՝ Բրենթվուդի տան դուռը: Ինքնաշեն ռումբը դուռը ցրիվ տվեց, պատի մեջ երեք ոտնաչափանոց մի անցք բացեց,

ջարդեց պատուհանները, դիմացի բակն աղյուսներ ու գաջի սվաղի կտորներ նետեց և տանը եղած գրքերը ցրեց հյուրասենյակով մեկ: Բարեբախտաբար մարդկային զոհ չեղավ: «Երևի ուսանողներին շատ եմ ցածր գնահատականներ դրել», — լրագրողների առաջ սրախոսեց Շոուն, որից հետո արձակուրդ վերցրեց ու համալսարանից հեռացավ: Բայց պայթյունի պատճառն, իհարկե, ցածր գնահատականները չէին: Շոուն ու իր կինը հրատարակել էին երկհատորանոց «Օսմանյան կայսրության ու ժամանակակից Թուրքիայի պատմությունը», որտեղ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի ցեղասպանությունը որակել էին որպես «դաշնակից պետությունների պրոպագանդիստների ու հայ ազգայնականների հորինած մի առասպել»:

«Հետախուզության դաշնային բյուրոյի» (FBI) գործակալներն ու ոստիկանությունը գործի անցան: Նրանք Լոս Անջելեսում և Bay Area-ում հարցաքննեցին մի քանի տասնյակ հույների ու հայերի, հեռախոսային խոսակցություններ լսեցին, կարդացին փոստով ուղարկված նամակներ, լրտեսեցին ՀՈՒՄ-ի ժողովները և ոչ-քաղաքացիներին սպառնացին երկրից վտարմամբ: Ավելորդ է ասել՝ Մոնթեն առաջին կասկածյալն էր: Նախապես պայթուցիկների մասին գլուխկանություն բաժանելով՝ նա անշուշտ կասկած էր հարուցել: Բայց ոստիկանության ուշադրությունը նա գրավել էր դեռ ամիսներ առաջ՝ կապվելով կիպրոսցի, իրանցի ու պաղեստինցի ակտիվիստների հետ:

Պայթյունից շատ ժամանակ չէր անցել, երբ Մոնթեի «արարքը բացահայտվեց» մեկ այլ «հանցանշանով»: ՀՈՒՄ-ի Hye Times տեղեկատուում նա հանդես եկավ Շոուի «Պատմության» մասին մի կարճ գրախոսությամբ՝ գրելով. «Առանց անձամբ կարդալու դժվար է լիովին պատկերացնել փաստերի այն խեղաթյուրումները, բամբասանքներն ու կեղծիքները, որոնք առկա են գիտնականին ոչ վայել այս աշխատության մեջ»: Այսպիսով, ժողովում ռումբ պատրաստելու բաղադրատոմսեր բաժանելուց հետո, Մոնթեն հրապարակում էր իր զայրալից վերաբերմունքն այն մարդու հանդեպ, որի տունը պայթյունի թիրախ էր դարձել: Հազիվ թե նրան հաջողվեր իր հանդեպ ավելի հիմնավոր կասկած հարուցել, եթե նա այդպիսի հատուկ նպատակ ունենար:

FBI-ը և LAPD-ի «Կարմիր ջոկատի» հետախույզները բախում էին Մոնթեի բազմաթիվ ընկերների, ազգականների ու ծանոթների դռները և շատերի վրա խիստ հսկողություն էին սահմանել:

Զարմանալիորեն, սակայն, գլխավոր կասկածյալին առժամանակ հանգիստ թողեցին: Թերևս նրանց այդ վարմունքը միտումնավոր էր, որպեսզի Մոնթեն, իրեն ապահով զգալով, ավելի բացահայտորեն գործեր ու հնարավորություն տար ձերբակալելու իր գործունեության մեջ ներգրավված այլ անձանց ևս: Ինչպիսի բացատրություն էլ տանք, փաստն այն է, որ հետախույզները ձեռնունայն մնացին՝ հասկանալի պատճառով, քանզի, որքան ինձ հայտնի է, Մոնթեն Բրենթվուդի պայթյունի հետ կապ չուներ:

Թեև ոստիկանությունն ու FBI-ը մարդկանց վախեցնելով ու վատ քողարկված սպառնալիքներով ձգտում էին Մոնթեի նման արմատականներին մեկուսացնել, դեպքերի ընթացքը զայրացրեց ու վճռականությամբ լցրեց նրա տարեկիցներին: Այդ օրերին ՀՈՒՄ-ի հիմնական խնդիրներից մեկը «Միավորված ազգերի՝ մարդու իրավունքների խորհրդին» կից «Խտրականության կանխման ու ազգային փոքրամասնությունների պաշտպանության» հանձնախմբի պատրաստած՝ առեղծվածային «Ցեղասպանությունների ուսումնասիրությունն» էր: Այդ փաստաթղթի 30-րդ պարբերությունում հիշատակված էին հայերը որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհեր: Թուրքիայի կառավարությունը պահանջեց այդ պարբերությունը հանել ուսումնասիրությունից: ՀՈՒՄ-ի շատ անդամներ սկզբում տարակուսած էին, իսկ հետո ցասումով ընդունեցին այն լուրը, թե Միացյալ Նահանգների կառավարությունը, Անկարային միանալով, հակադրվել է 30-րդ պարբերությանը:

Մոնթեն, սակայն, միայն ժպտաց՝ դեմքի «Ասում էի, չէ՞» արտահայտությամբ: Նրա համար 30-րդ պարբերության մերժումը սոսկ մի ավելորդ հաստատում էր այն փաստի, որ հայերը երբեք համապատասխան հետևություններ չեն անում. Նրանք պետք է դաս առած լինեին դեռ 100 տարի առաջ: 1878 թ., ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Խրիմյան Հայրիկը որպես ոչ լիազոր պատգամավոր գնացել էր Բեռլին՝ մասնակցելու խաղաղության բանակցություններին: Ինչպես նա պատմում էր, եվրոպացիները, ձեռքներին երկաթե շերեփներ, կռացել էին հարիսայի մի մեծ կաթսայի վրա: Իսկ իր հովված հոտը՝ խեղճ հայերը, Բեռլին էին եկել թղթյա շերեփով՝ աղերսելով մեծ տերությունների օգնությունն իրենց հավատակիցներին: Մեծ տերություններին պարտված թուրքերից բաժին ընկան խոշոր պատառներ, մինչդեռ հայերն իրենց թղթյա

շերեփով Բեռլինից հեռացան քաղցած: Քանի դեռ հայերը մետաղյա շերեփ չեն վերցրել, եզրակացրել էր Խրիմյանը, խաչած մսից նրանց բաժին չի հասնի:

Իբրև Խրիմյան Հայրիկի ճշմարիտ հետևորդ, Մոնթեն սկսեց ավելի մոտիկից ծանոթանալ «մետաղյա շերեփին»: 10 տարի էր անցել այն օրվանից, երբ մենք գնացինք Camp Tulequoia-ի հրաձգարան: ՀՈՒՄ-ի անդամ մի քանի այլ ուսանողների հետ որոշեցինք այս անգամ կրակել սովորել Լոս Անջելեսի անտառում (Angeles National Forest): Շրջակայքում փամփուշտների բազմաթիվ պարկուճներ ցրիվ տալուց հետո հոգնեցինք ու կրակ արեցինք՝ խորոված պատրաստելու համար:

Մոնթեն սակայն, դեռ պետք է այլ կրակներ բորբոքեր: 1978 թ. հունվարի 16-ին, ՀՈՒՄ-ի գործադիրների հերթական նիստի ժամանակ, նա առաջարկեց Բերկլիի գրադարանում (Doe Library) կազմակերպել գրքերի, լուսանկարների ու մշակութային նմուշների մի փոքր ցուցադրություն: Ինչպես Զուդի Սանոյանն է հիշում, ներկաները ողջունեցին առաջարկը «չափավոր ոգևորությամբ»: Հավանաբար, Մոնթեի ավելի կոնստրուկտիվ ու պակաս վտանգավոր նախաձեռնությունը նրանց որոշ թերևությամբ էր համակել: Հենց որ գրադարանն ընդունեց առաջարկությունը, Մոնթեն ու ՀՈՒՄ-ի նախագահ Զեք Զաքարյանն սկսեցին ցուցահանդեսի համար նյութ հավաքել:

Մարտի 17-ին բացված ցուցահանդեսը բաղկացած էր դեղնած գրքերով, հին լուսանկարներով ու ցուցադրության համար բերված մի քանի այլ առարկաներով բեռնված գրադարակներից: Դրանք հիմնականում վերաբերում էին արհեստին, ճարտարապետությանն ու եկեղեցու պատմությանը: Ցուցահանդեսն առանձնապես ուշադրության չէր արժանանում, մինչև որ մի թուրք ուսանող այն տեսավ ու ահազանգեց Սան Ֆրանցիսկոյում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Մուստաֆա Ասուլային: Հյուպատոսն իսկույն հեռաձայնեց գրադարանավար Ռիչարդ Դոուգըրթիին և խնդրեց ցեղասպանությանը վերաբերող բոլոր նյութերը հանել ցուցադրությունից: Երկու օր անց նախաբրահով անցնելով՝ Մոնթեն նկատեց, որ ներկայացված նյութի մի մասն անհետացել է, իսկ դատարկված դարակների վրա ուրիշ դարակներից կամայականորեն տեղափոխվել են այլ առարկաներ: «Ի՞նչ է կատարվել այստեղ», – հարցրեց Մոնթեն գրադարանի աշխատողներին: Համալսարանի խոսնակ Ռեյ Քոլվիգը պաշտպանեց գրադարանավարին՝ ցուցադրությունը կոչելով «սադրիչ»: Մոնթեն ասաց, որ գրադարանի աշխատակիցները նախապես նայել էին ամբողջ նյութը և թույլ տվել այն ցուցադրել՝ ներառյալ հետո հանված ցուցանմուշները: Երբ պարզ դարձավ, որ համալսարանի աշխատակիցները հանվածը հետ չեն բերելու, Զաքարյանը, Մոնթեն ու ՀՈՒՄ-ի այլ անդամներ Sproul Hall-ի դիմաց լուսանկարներով ու արգելված նյութի լուսապատճեններով մի ցուցափեղկ դրեցին:

Սա Մոնթեի առաջին բախումը չէր հյուպատոս Ասուլայի հետ: Այդ տարի, ցուցահանդեսից առաջ, Մոնթեն մի նամակ էր ուղարկել San Francisco Chronicle and Examiner-ի խմբագրին՝ ի պատասխան Ասուլայի մի հոդվածի, որ տպագրվել էր թերթի 1978 թ. հունվարի 8-ի համարում: Կտրուկ, բայց ոչ անքաղաքավարի տոնով Մոնթեն առարկել էր հյուպատոսի այն կեղծ հայտարարությանը, թե՝ «Թուրքիան այսօր իր բոլոր հարևանների հետ հրաշալի հարաբերություններ մեջ է և նրանց հետ նոր մակարդակներում համագործակցելու ճանապարհին»: 1938-ից ի վեր, նշում էր Մոնթեն, Թուրքիան Սիրիայից բռնազավթել էր Իսքանդարուն կոչվող շրջանը, Էգեյան ծովում հույների դեմ բազմիցս ոտնձգություններ էր արել, ներխուժել Կիպրոս՝ շարունակելով գրավել կղզու հյուսիսային մասը: Հյուպատոսն, այնուամենայնիվ, այդ անգամ հաղթել էր, քանզի լրագիրը չէր տպել Մոնթեի նամակը:

Sproul Hall-ի դիմաց դրված ցուցափեղկը գրավում էր անցորդների ուշադրությունը, և շուտով այդ բողոքին միացան համալսարանական այլ խմբեր: Ի վերջո համալսարանի՝ խոսքի ազատության հարցերով զբաղվող կոմիտեն (Academic Senate's Committee on Academic Freedom) ստիպված էր խոստովանել, որ «արտաքին քաղաքական ճնշում» էր գործադրվել գրադարանի աշխատակազմի վրա, ինչը խոսքի ազատության սկզբունքի խախտում էր: Ցուցահանդեսը փակվելուց մի քանի օր առաջ գրադարանի տնօրինությունը վերականգնեց հանված ցուցանմուշները, իսկ աղմուկը հանդարտվելուց հետո Դոուգըրթիին հրաժարական տվեց, և Ասուլան տեղափոխվեց Լիբիա:

ՀՈՒՄ-ի որոշ անդամներ գրադարանի հետ հակամարտությունը համարում էին շատ նշանակալից մի իրադարձություն՝ բարոյական ու լրատվական մեծ պայքար: Իսկ Մոնթեի համար դա սոսկ մի պահ դիպլոմային աշխատանքից ու ավարտական քննություններից իր ուշադրությունը շեղող դրվագ էր: Համալսարանն ավարտելու կապակցությամբ զբաղված լինելով՝ մարտի

կեսին նա հրաժարվել էր ՀՈՒՄ-ում հասարակական կապերի պատասխանատուի պաշտոնից, որպեսզի կարողանա կենտրոնանալ: Բնիկ կալիֆոռնիացի մեկ այլ ուսանող՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը, ստանձնեց Մոնթեի պարտականությունները:

Բերկլիից հեռանալուց առաջ, սակայն, Մոնթեն ներգրավվեց ևս մեկ հիշարժան իրադարձության մեջ: Նա իբրև ուսանող պատգամավոր հանդես եկավ այն կոմիտեի ժողովում, որը պետք է նախապատրաստեր 1978 թ. ապրիլի 24-ի միջոցառումները: 63 տարի էր անցել այն օրվանից, երբ «Երիտթուրքերն» սկսեցին հայերի բնաջնջման ծրագրի իրականացումը:

Շատ տարիներ անց կոմիտեի մեկ այլ անդամ՝ Սարգիս Լևոնյանը, իր տպագիր հարցազրույցում նկարագրեց Մոնթեի հետ առաջին հանդիպումից ստացած տպավորությունները. Ջինս հագած երիտասարդը, գրում է Լևոնյանը, «հանգիստ տեսք ուներ. անտարբեր էր նյութական արժեքների հանդեպ ու արհամարհում էր իր հագուստը»: Բայց երբ Մոնթեն խոսում էր, նա սրամիտ էր ու հավասարակշիռ: Նա մասնակցում էր քննարկումներին, կարճ ու հստակորեն հայտնում իր կարծիքը և ապա ուրիշներին հնարավորություն տալիս արտահայտվելու: Նա քիչ էր խոսում, սակայն բոլորը նրան լսում էին, և ոչ այն պատճառով, որ սուր ձայն ուներ, այլ որովհետև նրա ձայներանգում կար վստահություն, որոշակիություն, նվիրվածություն ու ներքին ուժ, որ նպատակալից էր, բայց վերահսկելի:

Լևոնյանը նկարագրում է այդ ժողովի մի դրամատիկ պահ: Նոսք էր գնում Քաղաքապետարանից ու Դաշնային շենքից (Federal Building) Սան Ֆրանցիսկոյի գործարար կենտրոն երթ կազմակերպելու մասին, որպեսզի ժողովուրդն ու պաշտոնյաներն իմանային հայերի ցեղասպանության ու պահանջատիրության մասին: Մոնթեն առաջարկեց, որ երթի մասնակիցները ձեռքներին հրազեն ունենան: Նա այդ ասաց իր սովորական փափուկ, անկիրք ու հանդարտ ձայնով, ինչպես որ, օրինակ, կասեր՝ եկե՛ք սուրճ խմենք, իսկ հետո թռուցիկներ տպենք:

Մոնթեն նստած էր՝ «ոտքերը սեղանին, հանդարտ ու ինքնավստահ, կանխավ գիտակցելով, թե ինչ արձագանք կարող է լինել, ու հաշտվելով այդ մտքի հետ»: Որքան էլ առաջարկն անհեթեթ թվար, այն աննախադեպ չէր. նրա ընկեր Դոն Հյուսթոնը՝ մի վետերան «Սև ընձառյուծ» (Black Panther), Մոնթեին պատմել էր մի քանի տարի առաջ Սակրամենտոյում իրենց կազմակերպած

զինված ցույցի մասին: «Բայց, — հիշում է Լևոնյանը, — Մոնթեի առաջարկից հետո ճնշող լռություն տիրեց»: Ի վերջո մեկը խախտեց լռությունը՝ հարցնելով, թե արդյո՞ք ինքնաձիգները պետք է լիցքավորված լինեն: Մի ուրիշն ասաց՝ «Ոչ», իսկ մի երրորդն էլ եզրափակեց. «Եթե ինքնաձիգները լիցքավորված չեն լինելու, ուրեմն իմաստ չունի դրանք կրել»: Մոնթեն բավական խելք ուներ՝ հասկանալու համար, որ իր առաջարկը խմբի համար անընդունելի էր, ուստի այլևս չպնդեց:

Բայց եթե նա այդքան խելացի էր, ինչո՞ւ արեց մի առաջարկ, որն անկասկած չէր ընդունվելու: Լևոնյանը ենթադրում է, որ Մոնթեն փորձում էր հասկանալ կոմիտեի անդամների դիրքորոշումը, պարզել, թե ովքեր կարող են համակիրներ լինել, ստիպել ներկաներին մտածել ու ավելի հեռուն նայել: Թերևս Լևոնյանը ճիշտ է, բայց, այդուհանդերձ, նա ժողովից հեռացել էր այն տպավորությամբ, որ ակտիվ երիտասարդը «բոլոր միջոցներով կպաշտպաներ իր ինքնությունը չկորցնելու, ազատ մտածելու ու արտահայտվելու իրավունքը և երբեք չէր համաձայնի զիջել այն, ինչ իրեն էր պատկանում: Բայց նա երբեք չէր գոռա, չէր ճռռամաքանի ու չէր փորձի խաբուսիկ փաստարկներով մյուսներին պարտադրել իր կարծիքը»:

Մոնթեի ընկերներից ՀՈՒՄ-ի մեկ-երկու անդամ ևս նրա՝ անհեթեթ թվացող պահվածքի տակ լրջություն էին տեսնում: «Ոմանք կարող են կարծել, թե Մոնթեն փոքր-ինչ չափն անցնում է, բայց ոչ ոք չի կարող կասկածի ենթարկել նրա նվիրվածությունն իր նպատակին», — գրում է Ջուդի Սանոյանը ՀՈՒՄ-ի տեղեկատուի երկրորդ համարում: Մեղմ է ասված: Ես նկատել էի, որ գործարարություն ու ճարտարապետություն մասնագիտությամբ տարբեր ուսանողներ, որոնք Մոնթեի հետ գործ էին ունենում, ի վերջո խույս էին տալիս նրանից՝ համարելով կամ անուղղելի ու անկառավարելի մեկը, որի վերջը լավ չի լինելու, կամ էլ՝ ապագա լուրջ ու հաջողակ գործարար, որի կյանքում, սակայն, դեռևս պատանեկան արմատական հայացքների շրջան է:

Ինչ վերաբերում է Մոնթեին, ապա նա չէր պատրաստվում այնտեղ երկար մնալ՝ նրանց սպասումներն արդարացնելու կամ չարդարացնելու համար: Հազիվ 20 տարեկան՝ նա հաջողությամբ ավարտեց իր դիպլոմային աշխատանքը և պատրաստվում էր գործել «ավելի բարձր մակարդակներում»՝ իբրև հնագետ կամ էլ

իբրև «զինված պայքարի» մարտիկ: Իսկ թե ինչ պայքարի մասին էր խոսքը, դեռ որոշակի չէր:

Մի պահ ես դեռ չգիտեի, թե որ ուղին է նա ընտրելու՝ հնագիտությա՞ն, թե՞ զինված պայքարի: Պարզ էր, սակայն, որ երկու տարբերակն էլ պահանջում էին աշխատանք տեղում: Ինչպես 10 տարի անց նա գրում էր իր սիրելիին ուղղված նամակում, ինքը հենց այդ էր ուզում. «Կան մարդիկ, որ կը կարծեն, որ կրնան վիճակ մը հասկնալ հեռուէն: Ես իրենցմէ չեմ: Ճիշդ է, որ կարդալով և ուրիշներուն մտիկ ընելով կրնաս շատ բաներ հասկնալ և որոշ գաղափար մը կազմել, բայց չի բաւեր: Որպէս զի իսկապէս հասկնաս, պէտք է փորձառութիւնը ունենաս, պէտք է մէջէն ապրիս»:

Երբ Օքսֆորդի համալսարանը Մոնթեին ընդունեց իբրև դիսերտանտ, թվում էր, թե հնագիտության ու զինված պայքարի հակամարտությունը լուծվեց հօգուտ հնագիտության: Բայց վաղ էր այդպես կարծելը: Ինչպես Մոնթեն ինձ այն ժամանակ բացատրեց, հնագիտական աշխատանքը լավագույն միջոցը կլիներ արևելյան Անատոլիայի տեղագրագիտական ուսումնասիրության համար: Այդպես նա նաև մանրամասն գիտելիքներ ձեռք կբերեր տեղանքի, այնտեղի լեզուների, պատմության ու հնարավոր ռեսուրսների վերաբերյալ՝ զինված պայքարին նախապատրաստվելու համար, ինչ էլ որ դա նշանակեր: Հետևաբար, եզրակացրի ես, Մոնթեն ուզում էր գնալ երկու ուղիով էլ. հնագիտություն և զինված պայքար՝ առաջինն իբրև երկրորդն իրականացնելու միջոց: Այդպես նա կնմանվեր Թ. Է. Լաուրենսին, որն Օքսֆորդի ուսանող էր եղել, իսկ հետո դարձել Թուրքիայի Թշնամի:

Իմ մտքում անմիջապես բազմաթիվ առարկություններ ծագեցին: Ինչպե՞ս Թուրքիայի Հանրապետությունը թույլ կտար, որ Բերլինում ՀՈՒՄ-ի՝ հասարակական կապերի նախկին պատասխանատուն ուրարտագիտական ուսումնասիրություն կատարի իր տարածքում: Բայց Մոնթեին այդ «մանրուքները» չէին հետաքրքրում, և նա արդեն կազմել էր իր գործողությունների ծրագիրը: 10 տարի անց նա գրում է. «Ինձի համար ամեն ինչը այնքան պարզ ու տրամաբանական էր, որ նույնիսկ թվաբանական էր: Սփյուռքահայությունը Հայաստանեն դուրս կապրի, քանի որ ցեղասպանություն եղավ, և անիկա պարտավոր եղավ երկիրը ձգելու: Այսօր չի կրնար վերադառնալ, քանի որ Թուրքիո պետությունը գաղութատիրական, շահագործող, այլատեր և ուղղակի

ֆաշական բնույթ ունի: Ուրեմն մեր ժողովուրդը պետք է հոն զինյալ պայքար մը տանի որևէ շոշափելի իրավունք ունենալու համար: Իսկ ամեն մեկ հայ հայրենասեր (անշուշտ ներառյալ նաև ես) պետք է երթա և մասնակցի այդ պայքարին: Այո, – ավելացնում է նա, – ինձի համար այսքան պարզ էր»:

Պարզ էր թե ոչ՝ ուշադրության արժանի է եղբորս վճռականությունը: Նա արդեն, որոշակի հաշվարկներով, գծել էր իր ճանապարհը: Կարծես թե ոչ մի կասկած չուներ. կազմված էր գործողությունների ծրագիր, որին պետք էր հետևել՝ ինչ էլ այդ ծրագիրը լիներ: Տվյալ դեպքում, իհարկե, շատ ավելի հեշտ էր անելիքը որոշելը, քան այդ որոշումն իրականացնելը, քանզի Մոնթեն՝ կալիֆոռնիացի Դոն Կիխոտը, պատանեկան տարիքից նոր դուրս եկած երիտասարդը, վճռել էր միանալ գոյություն չունեցող ռազմաջոկատների՝ կռվելու համար աշխարհի ամենամեծ ու հզոր բանակներից մեկի դեմ:

Գլուխ 5. Ուխտագնացություն

1978 թ. ապրիլի սկզբին, առավոտյան, Bromley-By-Bow-ում (արևելյան Լոնդոն) ապրող՝ ինժեներական ֆակուլտետի մի ուսանող, լսելով երրորդ հարկում գտնվող իր բնակարանի դռան բախոց, բացեց այն ու տեսավ, ինչպես ինքն է հետագայում պատմում, «մի տեսակ մեքսիկական վերնաշապիկ» հագած մի երիտասարդի: «Բարև, — ծոր տվեց եկվորը, — ես Մոնթե Մելքոնյանն եմ Ամերիկայից՝ Վահե Բերբերյանի երկրորդ զարմիկը. նա ասաց, որ դուք ուրախ կլինեք ինձ տեսնել»: Նժդեհ Մելքոնյանը դուռն ավելի լայն բացեց ու պատասխանեց, որ այո՛, հաճելի է եկվորին տեսնելը: Ինքնակոչ հյուրը, սակայն, ամեն բան անժամանակ անելու սովորություն ուներ. նա, առանց զգուշացնելու, ժամանել էր Նժդեհի՝ առաջին տարվա ավարտական քննություններից մի քանի օր առաջ: Այնուամենայնիվ, երկուսն էլ Մելքոնյան էին, և դա ստիպում էր հյուրասեր լինել, թեև նրանց միջև անդամ հեռավոր ազգակցության որևէ ապացույց չկար:

Երբ Նժդեհը նրան ողջունեց հայերեն, Մոնթեն միայն բռնաբռսիկ ժպիտով պատասխանեց: Նժդեհն աչքերը նեղացրեց. այդ ի՞նչ հայրենակից էր, որ չկարողացավ մայրենի լեզվով նույնիսկ պարզ ողջույնին պատասխանել: Մոնթեի կարմրատակած տեսքը, սակայն, վկայեց, որ եկվորը սարսափելի ամաչում էր հայերեն չխոսելու համար: Մոնթեն իսպաներեն ու ճապոներեն գրեթե ազատ էր խոսում: Նա ֆրանսերեն կարդում էր և մի քիչ էլ թուրքերեն խոսում, բայց մայրենի լեզվով դեռ միայն մի քանի բառ գիտեր: Նա Նժդեհին բացատրեց, որ իր առաջնահերթ խնդիրը հայերեն արագ սովորելն էր:

Նժդեհը եկվորին ներս հրավիրեց, և Մոնթեն սկսեց ծրագրել իր հետագա երթուղին: Իսպանիայում ու Ճապոնիայում գտնվելիս նա համոզվել էր, որ լեզու սովորելու լավագույն միջոցը տվյալ մշակույթի հետ ի մոտո շփվելն է: Ուստի նրա առաջին նպատակակետը պետք է լիներ Խորհրդային Հայաստանը՝ Խորհրդային Միությունը կազմող 15 հանրապետություններից ամենափոքրը: Խորհրդային Միություն մտնելու արտոնագիր ստանալու նրա փորձերը, սակայն, հաջողությամբ չէին պսակվել, և նա մտածել էր այլընտրանքային տարբերակ. նույնընթաց տրանսպորտային միջոցներով անվճար հասնել Աթենք, իսկ հետո օդանավով թռչել Թեհրան կամ Բեյրութ (ընտրությունը կախված էր

օդանավի տոմսի արժեքից): Ապա Մոնթեն այդ քաղաքներում պետք է ուսումնասիրեր հայկական մեծ, պատերազմից պաշտպանվելու պատրաստվող թաղամասերն ու որոշեր, թե որտեղ կմնա ավելի երկար՝ իր մայրենի լեզուն սովորելու համար:

Այնուամենայնիվ, լեզուն սովորելը Մերձավոր Արևելք գնալու միակ պատճառը չէր: «Ես ձգտում եմ ընտրել մեր պայքարին մասնակցելու հնարավորին չափ տրամաբանական ձև, — տարիներ անց բացատրում էր Մոնթեն մի ընկերոջ: — Պարզապես նայեցի աշխարհի քարտեզին. Թուրքիան Միացյալ Նահանգների հետ ընդհանուր սահման չունի, իսկ մոտակա 2 երկրներում (Լիբանան ու Իրան) հայկական մեծ համայնքներ կան, որոնք արդեն ինքնապաշտպանությամբ են զբաղված ու ներգրավված մեր հայրենասիրական պայքարի մեջ: Հետևաբար, ես տրամաբանորեն վճռեցի, մեր պայքարին առավելագույն արդյունավետությամբ մասնակցելու համար, գնալ այդ տարածաշրջան»:

Այդ համայնքները «ներգրավված էին» ենթադրվող պայքարի մեջ, որովհետև Թուրքիայի զավթած հայկական տարածքներին մոտ գտնվելով, կարող էին լավագույնս համախմբել իրենց ուժերը և, թերևս, նույնիսկ ռազմակայաններ ստեղծել՝ Մոնթեի ենթադրած ապագա կռվի համար:

Հաջորդ 4 օրերի ու 3 գիշերների ընթացքում Նժդեհը մոռացավ իր քննությունների մասին, իսկ Մոնթեն չգնաց Օքսֆորդի համալսարան, քանի որ նրանք քննարկում էին կենսական հարցեր ու սպասվող «հայրենասիրական պայքարը»: Ի վերջո, Նժդեհն իր նոր ընկերոջն ուղեկցեց Դովեր, որտեղ Մոնթեն կալե գնացող լաստանավ նստեց:

Մեկ շաբաթ անց նա հասավ Լիբանան: 1978-ի ապրիլի 15-ին գալով Բեյրութ՝ Մոնթեն իր ճամպրուկը քարշ տվեց կիսավեր տերմինալի նախասրահով և կանաչ ու կարմիր դրոշակների հետևում ռումբերից առաջացած փոսերը զիգզագաձև շրջանցող մի տաքսի կանգնեցրեց: Հսկիչ կետում կանգնած զինվորականները վարորդին ցույց տվեցին թույլատրելի ուղղությունը՝ ավազապարկերով շրջապատված Ազգային թանգարանի մոտով դեպի պատերազմող կողմերի միջև ձգվող կանաչ գոտի: Շուտով կանաչ ու կարմիր դրոշակները հանկարծ անհետացան՝ փոխարինվելով սպիտակ դրոշակներով, որոնց վրա գրված էր. «Սիրիացի զավթիչնե՛ր, դո՛ւրս Լիբանանից» և՝ «Ո՛չ դեստրուկիվ ձախերին»: Այդտեղով էր անցնում սահմանը՝ միմյանց դեմ քաղաքացիական

պատերազմ վարող կողմերի միջև. արևմտյան Բեյրութում ձախերի, մահմեդականների ու պաղեստինցիների հեղհեղուկ կոալիցիան էր, իսկ ֆրանսացված աջ «քրիստոնյաներն» արևելյան կողմում էին: Քիչ ժամանակ անց, սակայն, Մոնթեի համար պարզ դարձավ, որ քաղաքացիական պատերազմի մասնակից կուսակցությունների պատկերն ավելի բարդ էր, քան այդ պիտակները նշանակում էին:

Գետի վրայի կամրջով անցնելով՝ տաքսին տրանսպորտի հոսքի հետ շարժվեց նեղ Մար Ցուսեֆ փողոցով ու կանգնեց մի անշուք խանութի մոտ, որը, բառիս բուն իմաստով, նման էր պատի մեջ բացված անցքի: Մոնթեն մեքենայի միջից իր պայուսակները դուրս քաշեց ու մեծ քայլերով ներս մտավ բաց դռնով: Նա ներկայացավ նարնջագույն վաճառասեղանի հետևում կանգնած մի ծխող ու ժպտացող մարդու: Երեսունն անց Դանիել Մ.-ը՝ Pholidisc կոչվող այդ խանութի տերը, զբաղվում էր պոպուլյար երաժշտության վերաձայնագրությունների վաճառքով: Լոսանջելեսցի մի ընկերոջ ընկերը Մոնթեին տվել էր այդ խանութի հասցեն՝ արևելյան Բեյրութի հայաբնակ Բուրջ Համուդ թաղամասի հետ կապ հաստատելու համար:

Դանիելը հյուրին երկու-երեք գիշեր պահեց՝ իր ծանոթների հետ պայմանավորվելով, թե որտեղ պետք է Մոնթեն այնուհետև մնար: Շուտով նորեկն սկսեց գիշերներ անցկացնել մոտակա հայկական պահակակետում՝ «Նիկոլ Դուման» ակումբում, որ գտնվում էր Բուրջ Համուդի արևելյան սահմանին: Այնտեղ նա աչքերը կապած «Կալաշնիկով» էր քանդում (մի բան, որ լիբանանցի դպրոցականներն անում էին մի քանի վայրկյանում) և ծանոթանում տեղանքին: Երկու շաբաթ անց «Նիկոլ Դումանի» ավելի երիտասարդ զինյալները Մոնթեին ընդունեցին իրենց ջոկատ, իբրև մարտակից ընկեր:

Բուրջ Համուդում ու շրջակայքում ապրում էին 150000 հայեր (մեկ քառակուսի մղոնի վրա՝ 60000 բնակիչ), որոնք կազմում էին ընդհանուր բնակչության մոտ 80 տոկոսը: Երեք գլխավոր կուսակցությունները՝ «Սոցիալ-դեմոկրատ հնչակյանները», «Ռամկավար ազատականները» և ազգայնական «Դաշնակցականները» պաշտոնապես իրենց չեզոք էին հայտարարել Լիբանանի քաղաքացիական պատերազմում: Հակառակ այդ պաշտոնական չեզոքությանը (կամ, ավելի ճիշտ, դրա պատճառով)՝ Բուրջ Համուդի բնակիչների ապահովությունը կախված էր հայ զինյալների զգոնությունից: Նրանք պետք է պաշտպանեին բնակչությանն «աջերից», որոնք բոլոր կողմերից, չհաշված ծովը, շրջապատել էին թաղամասը:

Հայկական աշխարհազորը փոքրաթիվ էր և չուներ հակառակորդի ծանր սպառազինությունը: Հայերը ճանապարհներին ուրիշների նման ուղեկալներ չէին դրել: Ցերեկվա ընթացքում նրանք իրենց զենքը չէին ցուցադրում, և նրանց ժամապահները ռազմական համազգեստի փոխարեն կրում էին «դիսկո» շալվարներ ու նեղ վերնաշապիկներ: Սպառազինության պակասը, սակայն, հավասարակշռվում էր քաջարի մարտիկների նրանց համբավով, ինչում Մոնթեն շուտով համոզվեց:

Այդուհանդերձ, ուրիշ դեպքերում Բուրջ Համուդի հայերը չարդարացրին Մոնթեի հույսերը: Իրենց իրավունքների համար պայքարող անգիլում նվիրյալների փոխարեն (այդպես էին նրանց նկարագրում Կալիֆոռնիայի մեծ-մեծ խոսող հայերը)՝ Մոնթեն տեսավ անքուն մարդկանց, որոնք օրերն անցկացնում էին մանր վիճաբանություններով, Ամերիկայի մասին երազելով և իրենց երեխաներին շոկոլադապատ նուշով ու էժանագին western-ներով երես տալով:

Իրենց հերթին՝ «Նիկոլ Դուման» ակումբի ավելի տարիքավոր անդամները նորեկին կասկածանքով էին վերաբերվում: Նրանց համար Մոնթեն մի արկածախնդիր էր, որ հեռվից եկել էր ամենօրյա վտանգների «փորձառություն» ձեռք բերելու. մի բան, որից տեղաբնակները վաղուց հոգնել ու ձանձրացել էին: Կամ գուցե ուրի՞շ պատճառ կար, որ, լիբանանցիների մեծ մասի երազած Կալիֆոռնիան լքելով, նա եկել էր այդ ետնախորշը: Ասում էին, թե նա փախուստի մեջ է, խուսափում է օրենքից, CIA-ի, ՊԱԿ-ի կամ մեկ ուրիշ վատահամբավ կազմակերպության գործակալ է: Պահակակետի դռնապանը նույնիսկ շշնջում էր, թե Մոնթեն «BBC-ից է»: Իսկ ուրիշները՝ թերևս իր հանդիպած չափահասների մեծ մասը, եզրակացրին, որ Մոնթեն ավելի շուտ հիմար է, քան ստահակ: Տասնյակ տարիներ անց, իր ինքնաքննադատական կենսագրության մեջ պատմելով այս մասին, Մոնթեն մեղմացրած գրում է. «Լիբանանի մեջ որոշ հայերու վստահությունը շահիլը քիչ մը դժվար էր»:

Հիասթափությունները միայն ավելի էին զրգռում Մոնթեի անհամբերությունը: Նա դեռ քնում էր ուրիշի բազմոցին, երբ սկսեց ծրագրեր կազմել իր պատկերացրած անորոշ, բայց անխու-

սափելի հայրենասիրական պայքարի համար: Նրան թվաց, թե Այնճարը՝ հայկական մի գյուղ Լիբանանի Բեքաա հովտում, շատ հարմար տեղ է ռազմական ճամբար հիմնելու ու հայ մարտիկներին «հայրենասիրական պայքարի» նպատակով զորակոչելու համար: Առաջին իսկ հնարավորությունը ստանալուն պես նա մի ընկերոջ հետ գնաց Այնճար: Զորամարզումների ճամբար հիմնելու իր գաղափարը նա հայտնեց հերթապահ Վահե Աշքարյանին: Գյուղի խորհուրդը, առաջարկեց՝ Մոնթեն, պետք է առանձնացնի մի քանի ակր կոլտնտեսական հողատարածք, որը հետո կօգտագործվի գյուղատնտեսական նպատակներով: Իսկ մինչ այդ Բեյրութից ու ողջ սփյուռքից այնտեղ պատանիներ և երիտասարդներ կգան՝ մարզվելու ու հայրենասիրական դաստիարակություն ստանալու:

Աշքարյանը լսեց քաղաքավարությամբ, իսկ ապա խելառ տղային ուղարկեց Բեյրութում դաշնակցական առաջնորդներից մեկի՝ Սարգիս Զեյթլյանի մոտ: Երբ մի քանի օր անց Մոնթեն հանդիպեց Զեյթլյանին, դաշնակցական առաջնորդն ամեն կերպ ջանում էր ժպիտը զսպել, իսկ վերջում անորոշ կերպով հավաստիացրեց իր պատրաստակամությունը, ինչից Մոնթեն է՛լ ավելի անհամբեր դարձավ: Զեյթլյանի ներողամիտ ժպիտի տակ նա, այնուամենայնիվ, վախ նկատեց:

Դաշնակցական առաջնորդների համար վտանգավոր ժամանակներ էին: Տասնամյակներ շարունակ նրանց կուսակցությունը Բուրջ Համուդում եղել էր հիմնական քաղաքական ուժը, բայց հիմա Լիբանանի ազդեցիկ «աչքը»՝ Պիեռ Ժեմայելի «Փաղանգավորները», հայերից դրամ էին պահանջում և ուզում էին հայաբնակ թաղամասի վրա իրենց գերիշխանությունը հաստատել: Միաժամանակ «զինված քարոզչությունը»՝ առեղծվածային հարձակումները թուրք դիվանագետների վրա, խռովում էին դաշնակցական ընտանիքների ամենանվիրյալ որդիների ու դուստրերի զգացմունքները: Անցած տասնամյակների ընթացքում դաշնակցական բանահյուսությունը փառաբանել էր Արշավիր Շիրակյանի ու Սողոմոն Թեհլերյանի նման երիտասարդ վրիժառուներին, որոնք կես դար առաջ սպանել էին հայերի ցեղասպանության համար պատասխանատու թուրք բարձրաստիճան պաշտոնյաների: Այժմ, դարձյալ. հանկարծակի ի հայտ եկած զինյալները (մասնավորապես՝ «Գաղտնի բանակը») լիցքավորում էին ատրճանակները՝ հին բալլադներին նոր տողեր ավելացնելով և, Փայդ Փայփերի նման, երեխաներին դաշնակցականներից հեռացնելով:

Այս անկայուն իրավիճակում դաշնակցական առաջնորդներն ամենևին էլ չուրախացան, երբ անխնամ տեսքով անգլախոս մեկն առաջարկեց իրենց կալվածքների կենտրոնում՝ Այնճարում ռազմական հիմնել: Այդպիսին էին ժամանակները, և դաշնակցականները նաև չէին կարող Մոնթեի գաղափարի վրա սոսկ ծիծաղելով՝ այն անուշադրության մատնել: Կուսակցության հենակետերն Իրանի, Սիրիայի ու Լիբանանի մեծաթիվ հայկական համայնքներում, քաղաքական ցնցումների և դեպի արևմուտք արտագաղթի հետևանքով, քայքայվում էին: Իսկ այդ լարված մթնոլորտում կուսակցության մաս կազմող «Պատանեկան ու երիտասարդական միությունների» կամակոր անդամներին զորամարզումների ճամբար հիմնելու Մոնթեի առաջարկը դուր էր եկել: Ուստի, այս ամենը գիտակցելով, Զեյթլյանն ակնհայտորեն որոշել էր հստակ պատասխան չտալ, մինչև որ ժամանակի ընթացքում տաքգլուխ երիտասարդը սթափվեր կամ ապարեցից հեռանար, ինչպես որ նման դեպքերում հաճախ լինում էր:

Եվ, հարկավ, Մոնթեն հեռացավ: Լիբանանում 7 անպտուղ շաբաթ անցկացնելուց հետո նա մեկնեց Իրան: Հույս ուներ այնտեղ Խորհրդային Միության մուտքի արտոնագիր ստանալ, ի՛նչը նրան չէր հաջողվել Բեյրութում՝ վատ հեռախոսակապի և մարտերի պատճառով, քանի որ քաղաքի արևմտյան կողմում գտնվող Խորհրդային դեսպանատան ճանապարհը փակ էր:

Առաջին անգամ Թեհրան ժամանելով՝ նա տեսավ, որ այնտեղի մթնոլորտը Լիբանանի քառսից շատ տարբեր է: Թեհրանում չարագուշակ հանդարտություն և կարգուկանոն էր տիրում: Continental Hotel-ի աշխատողը նորեկին ցույց տվեց դաշնակցականների «Սիփան» միության ճանապարհը: Այնտեղ նրա նոր ընկերները նրան կոչեցին «Սարո»: Նրանք այդպիսով «հայացրին» Մոնթեի անունը, որովհետև mountain-ին համապատասխանող հայերեն բառը «սարն» է. «Սարոն» ու «Մոնթեն» նրանց համար գրեթե նույն բանն էին:

Շուտով Մոնթեն նկատեց, որ Թեհրանի հայկական համայնքը բաղկացած է երկու տարբեր շերտերից. մանր բուրժուաների խավը, որ կենտրոնացած էր Վիլա, Ֆիրդուսի հարուստ թաղամասերում ու քաղաքի հյուսիսային հատվածներում, և աշխատավորների դասը, որ բնակվում էր Զուրքեշ, Հեշմաթիե ու Մաջիդիե ա-

վազող, մարդաշատ թաղամասերում: Աշխատավոր հայերն ապրում էին մահմեդականների մեջ և պարսկերեն բառերը խառնում իրենց մայրենի լեզվին, իսկ նրանց մանր բուրժուա հայրենակիցներն, ընդհակառակը, իրենք իրենց ավելի եվրոպացի, քան իրանցի էին համարում, թեև նրանց ընտանիքներն Իրանում ապրել էին դարեր շարունակ: Նրանց հարսանիքների ժամանակ սմոքինգներ հագած բարիտոնները հովվի երգերը վերածում էին թնդացող արիաների:

Քանի որ Մոնթեն սկզբում գժի կամ անհաջողակի տպավորություն չթողեց, լուրեր տարածվեցին, թե նա իր ծննդավայրից հեռացել է՝ փախչելով ձերբակալությունից, կամ՝ որ նա «մաքուր» հայ աղջիկ է փնտրում՝ Միացյալ Նահանգներ տանելու ու ամուսնանալու համար: Ուրիշները կասկածում էին, թե նա սադրիչ է կամ լրտես: Այդուհանդերձ, աշխատավոր տղաների միջավայրում նրան այլ կերպ վերաբերվեցին: Ամերիկյան կրթություն ստացած, քոլեջ ավարտած Մոնթեն լքել էր այն երկիրը, ուր շատ իրանցիներ երազում էին ընկնել, որպեսզի ապրի Հայաստանին մոտ, իր հայրենակիցների մեջ: Նրա ներկայությունն ազնվացնում էր իրենց տներն ու բնակավայրերը և հաստատում իրենց ամենօրյա կյանքի կարևորությունը:

Մոնթեի առաջնահերթ խնդիրը, նույնիսկ ավելի հրատապ, քան մայրենի լեզուն սովորելը, իր ուսման համար վերցրած վարկը՝ 2000 դոլլար, վերադարձնելն էր: Պարտք լինելը կախյալ վիճակ է, իսկ նա ատում էր ամեն կախվածություն: Մոնթեն անգլերենի դասեր վերցրեց Թեհրանի գործարար կենտրոնի՝ Լոս Անջելեսի փողոցի վրա գտնվող իրանական-ամերիկյան լեզվի դպրոցում: Դպրոցի տնօրենը տեղացի ուսուցիչներին քիչ էր վճարում, բայց Մոնթեի նման օտարերկրացիներն ստանում էին մեկ ժամի համար 7 դոլլար, որ համարվում էր բարձր աշխատավարձ:

Ամառն անցնում էր, և Մոնթեն իր նամակներում արտահայտում էր հետագա ուսման վերաբերյալ այլ մտքեր: 1978 թ. հուլիսի 29-ին գրած մի նամակում նա ծնողներին տեղեկացրեց. «Եկող տարվա համար իմ պլաններն էապես փոխվել են»: Մեր մայրն սկսեց անհանգստանալ: Մոտավորապես այդ ժամանակ Մոնթեն որոշեց նորոգել իր իրանյան վիզան՝ երկրից դուրս գալով և ապա մուտքի նոր արտոնությամբ վերադառնալով: Բայց Իրանի ո՞ր - մասից էր կարելի դուրս գալ: Հյուսիսային սահմանը Խորհրդային Միությանը հետ փակ էր, իսկ արևմտյան սահմանն Իրաքի հետ

դառնալու էր պատերազմի թատերաբեմ: Հյուպատոս Ասուլայի հետ բախումից հետո նա հազիվ թե կարողանար անցնել թուրքիա: Հետևաբար Մոնթեն իր ուշադրությունը կենտրոնացրեց մյուս՝ Աֆղանստանի հետ սահմանի վրա:

Ռամադան ամսվա սկզբին նա նստեց մի երերուն ավտոբուս, որ լցված էր դեպի արևելք ուղևորվող ուխտագնացներով: Ուղևորների մեծ մասը 500 մղոն ճանապարհ պետք է անցներ՝ հասնելու համար շիա մահմեդականների՝ նշանակությամբ երրորդ սրբավայրը՝ Իմամ Ռեզայի գերեզմանը Մաշադ քաղաքում, աֆղանական սահմանի մոտ: Նրանք երևի կարծեցին, թե իրենց միացած ուղևորը՝ մորուքով ու կոտրատված պարսկերենով, նույնպես ուխտավոր էր, հեռավոր մի գյուղից: Մոնթեն հաստատում էր այս տպավորությունը՝ կանգառներում իջնելով ու ճամփեզրին ուրիշների հետ աղոթելով: Երբ փարանջայավոր մի կին փսխեց, ու ավտոբուսի մեջ օդը հեղձուցիչ դարձավ, Մոնթեն պատուհանից բարձրացավ կտուրի վրա և, արևի ու քամու տակ, մեկնվեց բեռների ճաղավանդակին: Այդ տեսնելով՝ ուրիշ ուղևորներ հետևեցին նրա օրինակին:

Մաշադում նա դարձյալ ավտոբուս նստեց ու աֆղանական ժայռոտ տեղանքով գնաց ևս 200 մղոն, դեպի Հերաթ: Այնտեղից էլ՝ 600 մղոն, մինչև որ հասավ Քաբուլ ու ստացավ Իրանի մուտքի արտոնությունը: Իրան վերադառնալուց առաջ նա այցելեց Բամյան, որը ծնողներին ուղղված մի նամակում նկարագրեց իբրև իր տեսած «ամենատպավորիչ հնավայրերից մեկը»: «Երկու հսկայական (44 մ) ժայռափոր Բուդդաներ, — գրում է նա, — և որմնանկարներով քարանձավներ նայում են ձյունածածկ լեռներին ու մի հողմահար մոնղոլական ամրոցի: Այս ամենը հիշեցնում է Դիսնեյլենդը»:

Նա շատ կվրդովվեր, եթե իմանար, որ 23 տարի անց Ռոնալդ Ռեյգանի «ազատության մարտիկները»՝ թալիբները, քերելու են Բամյանի որմնանկարները և ավերելու հինգերորդ դարի հոյակապ քանդակները:

Մոնթեն Աֆղանստանում եղավ մեկ շաբաթից պակաս, բայց այդ ճամփորդությունն ու երկիրը նրա վրա ուժեղ տպավորություն թողեցին: «Ես մահմեդականների մասին շատ բան իմացա», — գրեց նա ինձ Թեհրան վերադառնալուց հետո: Իսկ կարճ ժամանակ անց, մեկ այլ նամակում, նա նկարագրեց այն «ապշեցուցիչ դեպքերը», որոնց ականատես եղավ Թեհրանում: Այնտեղ գույցե-

ին մասնակցում էր մոտ կես միլիոն մարդ, որոնք քայլում էին փողոցներով՝ ոստիկանների վրա ծաղիկներ նետելով, նրանց երկու այտերը համբուրելով ու ասելով. «Եղբայրնե՛ր, մի՛ սպանեք ձեր եղբայրներին»: «Ես 3 ժամ շարունակ դիտում էի այդ ցույցը: Ոստիկանները լալիս էին. նրանցից երկուսն այնպես լաց եղան, որ ստիպված էին նստել իրենց մոտոցիկլետներն ու դիրքերը լքել»:

Երկիրը ոտքի էր կանգնել անհաղթ շահի դեմ: 1978 թ. սեպտեմբերի 8-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 8-ից փոքր-ինչ անց, Մոնթեն ու երկու ընկեր վերադառնում էին Զարքեշ, երբ մարդկանց մի ալիք հանկարծ վազեց նրանց կողմը: Մոնթեն ու իր ընկերները նետվեցին հոսանքին հակառակ, մինչև որ, հևալով, լայն բացված աչքերով, հասան Ջալեհ հրապարակ՝ Թեհրանի հարավ-արևելքում: Հրապարակից բենզոլի հոտ էր գալիս, և այն ծածկված էր թափով: «Ամենուրեք դիակներ էին», — գրում էր Մոնթեն մի ուրիշ շնչակտուր նամակում: Հետո նա իմացել էր, որ այդ օրը շահի զինվորները հրապարակում հազարավոր ցուցարարների վրա ռրակ էին բացել, իսկ նրանց գլխավերևում հայտնվել էին ուղղաթիռներ: Սովորական մեղադրանքները խառնելով ականատեսի վկայությունների հետ՝ Մոնթեն նամակը շարունակում էր այսպես. «Հրապարակում հայտնված բուլդոզերները դիակները լցնում էին բեռնատարների վրա, որոնք այդ բեռը տանում ու դատարկում էին մի մեծ փոսի մեջ: Ոմանք մարդիկ միայն վիրավոր էին և. ողջ-ողջ թաղվեցին: Դիակները հեռացնելուց հետո ջրի մեքենաներով փողոցները մաքրվեցին, և հաջորդ օրը կատարվածի հետքեր չէին մնացել՝ բացի կոտրված պատուհաններից»:

Երբ Ջալեհ հրապարակում շահի հրամանով տեղի ունեցած նախճիրի լուրը տարածվեց, հազարավոր նավթային բանվորներ գործադուլ արեցին: Կոտրածը Մոնթեի մեջ կլուկ էր բորբոքել, և աներևակայելին հանկարծ դարձել էր երևակայելի: Հենց որ նա բավարար դրամ վաստակեց՝ ուսանողական պարտքը վերադարձնելու համար, եկավ իրանական-ամերիկյան դպրոցի բռնակալ տնօրենի հետ հաշիվները մաքրելու ժամանակը: Նա կաշառակեր էր և տեղացի ուսուցիչներին քիչ էր վճարում: Մոնթեն մոտեցավ ուրիշ ուսուցիչների ու նրանց խորհուրդ տվեց համատեղ պահանջել ամսական նվազագույն աշխատավարձ: Տնօրենն, այս մասին լսելով, փորձեց Մոնթեին կաշառքով լռեցնել, բայց դա միայն կրկնապատկեց նորաթուխ խռովարարի ջանքերը: Ի վերջո, Մոնթեն դպրոցի 28 ուսուցիչներից 24-ին համոզեց աշխատանքից ազատվելու դիմում գրել: «Բոլորը դպրոցում հանդուրժում էին անարդարությունը, մինչև որ ես նրանց խելքի բերեցի», — գրում էր նա հրճվանքով:

Մոնթեն կուզեր այնտեղ ավելի երկար մնալ՝ շահի գահընկեցությունը տեսնելու համար (մի նամակում նա շահին կոչում էր «աշխարհի մեծագույն հանցագործներից մեկը և անշուշտ մեծագույնն Իրանում»): Սեպտեմբերի կեսին, սակայն, նրան լուր հասավ, որ Լիբանանում իրավիճակը սրվել է, և որ «Փաղանգավորները» սեղմում են օղակը Բուրջ Համուդի շուրջը: Մոնթեն Լիբանան վերադառնալու ուրիշ պատճառներ էլ ուներ: Նախ, Թեհրանը բազմամարդ էր ու թանկ: Բացի այդ, իրանահայերի երգեցիկ ու միապաղաղ բարբառը հարազատ չէր նրան. նա գերադասում էր իր նախնիների արևմտահայերենը: Իսկ որ ամենակարևորն էր՝ նա որոշել էր կապ հաստատել «Գաղտնի բանակի» հետ, որ թուրք դիվանագետների վրա հարձակումների ամենաակտիվ կազմակերպիչն էր: Իր մի քանի տարվա գոյության ընթացքում «Գաղտնի բանակը» ողջ Մերձավոր Արևելքում բորբոքել էր երիտասարդ հայերի երևակայությունը՝ սիյուռքի քաղաքական ուժերին արթնացնելով 50 տարվա լեթարգիական քնից: Ժամանակն էր՝ նրանց հետ կապվելու:

Լիբանան մեկնելուց անմիջապես առաջ Մոնթեն բանկում երկար հելթ կանգնեց՝ 1800 դոլար հանելու և իր վերջին պարտքերը վճարելու համար: Զայրացած ու աղմկող հաճախորդների ամբոխը, որ ձգտում էր իրանական դրամը փոխարկել ամերիկյան դոլլարների, առաջիկա մեծ փոփոխությունների նշան էր: Մոնթեն կապեց իր պայուսակները, Թեհրանից ավտոբուսով 19 ժամ գնաց Աբադան և ապա նստեց «ջուր թողող մի փոքր, 60 ոտնաչափանոց նավակ»՝ 37 ժամում Քուվեյթ հասնելու համար: Այնուհետև Քուվեյթ քաղաքից 2 ժամ թռիչքից հետո նա սեպտեմբերի 17-ին, իր վերադարձի տոմսով ուրախացած, ժամանեց Բեյրութ:

«Կանաչ գոտին» անցնելուց ու Դանիել Մ.-ի բնակարանում պայուսակները դնելուց քիչ հետո, սակայն, «Փաղանգավորներն» ու նրանց նախկին դաշնակիցները՝ սիրիական բանակը, միմյանց վրա հրետանային կրակ բացեցին, և ռումբերը երկու կողմերից անձրևի նման տեղացին Բուրջ Համուդի վրա: Երբ հրետանային

արկերն ու կատյուշայի հրթիռները Մոնթեի շուրջն ավերում էին պատերը, նա միացավ մի խումբ քաղաքացիների՝ մտնելով «Օդանավի շենքի» նկուղ: Դա Սինն էլ-Ֆիլ մայրուղու արևելյան կողմում գտնվող մի բազմահարկ բնակելի շենք էր, որն այդպես էին կոչում մուտքի վերևում կոպտորեն քանդակված օդանավի պատճառով: 8 օր շարունակ, հոկտեմբերի 1-8-ը, հրթիռներն ու արկերը թունել մտնող շոգեքարշերի նման ոռնալով երկու ուղղությամբ թռչում էին նրանց գլխավերևում: Երբ դրանք գետնին ընկնելով պայթում էին, բարձրահարկ շենքերը, մեծ խանութներն ու գործարանները փլուզվում էին՝ թաց սովարաթղթի նման ծալվելով: Հրետանային կրակի ընդմիջումների ընթացքում Մոնթեն ու իր ընկերները բահերով դուրս էին սողում նկուղից՝ ավտոկանգառներում ու փողոցներում զոհվածներին թաղողներին օգնելու համար:

Վերջին պայթյունի արձագանքից հետո Մոնթեն նկուղից դարձյալ դուրս եկավ՝ շրջակայքն ուսումնասիրելու: Դժվար էր հավատալ, որ ութօրյա ռմբակոծությունն ընդամենը 300 կյանք էր խլել: Մոնթեն միացավ մի մաքրող խմբի, և երբ վերջին դիակը դրեցին աղբի պարկերի մեջ ու քարշ տալով հեռացրին, նա գործի անցավ որպես ամեն ինչի վարպետ: Մոնթեն փոխում էր պատուհանների ցրիվ եկած ապակիները, ցեմենտի պարկեր կրելով՝ մուտքերի աստիճաններ էր նորոգում ու տանիքներ վերականգնում: Այստեղ պետք եկավ ժայռեր մագլցելու նրա կարողությունը, որպեսզի բարձրանա ամենաբերբուն ու վտանգավոր տեղերը՝ ներառյալ Կաթողիկե եկեղեցու զանգակատան կտուրը:

1978 թ. վերջին Մոնթեն սկսեց անգլերեն սովորեցնել ու բասկետբոլի թիմ մարզել «Թրոսյան երկրորդական վարժարանում» (Ավետարանական դպրոց Բուրջ Համուդի մոտ): Այդ ժամանակ նա դաշնակցականների հետ տարբական մարտական պատրաստվածություն էր անցել: Երբեմն Մոնթեն գնում էր «Նիկոլ Դուման» ակումբ, բայց դերադասում էր ժամապահություն անել «Օդանավի շենքի» առաջ, որը «Փաղանգավորների» դիմացի առաջին գծում էր: Նոյեմբերի սկզբին նա Ստեփանյանների ընտանիքի հետ արդեն բնակվում էր «Օդանավի շենքում»: Մոտ 30 մետր անդին, Սինն էլ-Ֆիլ մայրուղու մյուս կողմում, «Փաղանգավորների» ռազմական հենակետ կար: Գիշերային ժամապահության ընթացքում Մոնթեն ու իր ընկերները «Կալաշնիկովները» հենում էին պատին ու ատրճանակով առնետների վրա կրակում: Ամենամեծ առնետին սպանողն արևածագին մյուսներին ոչխարի գլխով ապուր էր հյուրասիրում: 1978 թ. վերջին օրը Մոնթեն ժամապահությունից ազատ էր, ուստի նրա ընկեր Հակոբ Ստեփանյանն ու իր կինը՝ Մանուշակը, Նոր տարվա նախօրեին նրան հրավիրեցին Այնճար:

Երբ շքախումբը հասավ Մանուշակենց տուն, նրա երկրորդ կրտսեր քույրը՝ Սեդան, դուռը բացեց ու տեսավ կապույտ բաճկոն հագած, վայրի տեսքով մի երիտասարդի, որը ելակով լի մի տուփ էր բռնել: Սեդայի ուշադրությունն ամենից շատ գրավեցին նրա փայլող աչքերը: Երբ Մոնթեն նայում էր նրան, դեմքն իրենից անկախ պայծառանում էր: Նրանք ներկայացան միմյանց, և Սեդան հյուրին ներս հրավիրեց:

Սեդայի հասակը մինչև Մոնթեի քիթն էր, և նա եղնիկի նման հեզաճկուն էր: Նրա մաշկի բաց գույնը հակադրվում էր սաթի նման սև մազերին և մուգ խոշոր աչքերին: Նա նիկար, ուղիղ քիթ ուներ և ուժեղ՝ գրեթե տղամարդու ձեռքեր: Մոնթեին դուր եկավ, որ նրա եղունգները կարճ էին, և որ նա Նոր տարվա նախօրեին ոչ թե շրջազգեստ էր հագել, այլ պարզ, պրակտիկ շալվար:

— Քանի՞ տարեկան ես, — հարցրեց Մոնթեն:

— Տասնհինգ:

Մոնթեն զարմացավ, թե որքան լավ է այդ գյուղացի աղջիկն անգլերեն խոսում: Սեդան նաև ասաց, որ երգել է եկեղեցական երգչախմբում և պալային խմբակում պարել ազգային պարեր: Մոնթեն մտքերի մեջ ընկավ.

— Ասում ես՝ քանի՞ տարեկան ես. — նա վստահ չէր, որ առաջին անգամ ճիշտ է լսել:

— Տասնհինգ:

Նա շատ բան էր հասցրել անել:

Այնճարում երկու գիշեր մնալուց հետո Բեյրութ վերադառնալով՝ Մանուշակը ճաշի համար սպաս պատրաստեց: Նա գիտեր, որ Մոնթեն սպաս սիրում է, բայց ինչո՞ւ շատ քիչ կերավ:

— Ախորժակ չունե՞ս, — նրա հոգու հետ խաղաց Մանուշակը, — հո սիրահարված չե՞ս:

Հարցը Մոնթեին շփոթեցրեց. մի՞թե իր պահվածքը մատնել էր իրեն: Նրա ծրագրերի մեջ սիրահարվելը երբեք չէր մտել: Նա հիշեց, որ պարտավորվել էր ամուրի մնալ, ազատ լինել ու նվիրվել

միայն «հայրենասիրական պայքարին». մի պայքար, որն, ի դեպ, դեռ գոյություն չուներ:

Մոնթեի ընկերներից մեկն այդ ժամանակ քունգ-ֆուի մասին ֆիլմեր սիրող մի նիհարավուն մեխանիկ էր: Նա Բուրջ Համուդի փողոցներով քայլում էր լուրջ տեսքով, շալվարի վրա չինական նռնակ կախած: Ես նրան կկոչեմ «Բասել», թեև իրականում նա ուրիշ անուն ուներ: Բասելը մարմնավորում էր Լիբանանի աշխատավոր դասը: Դպրոց գնալու փոխարեն խառատի հաստոցի վրա աշխատելու հետևանքով նրա ձեռքերն ամբողջովին ծածկված էին սպիներով: Թեպետ Բասելը մոլեռանդորեն հավատարիմ էր իր էթնիկ համայնքին, տվյալ դեպքում՝ հայերին, նա նաև շատ ցինիկ վերաբերմունք ուներ այդ համայնքի ինքնահավան, կլոր դեմքերով ղեկավարների հանդեպ:

1978 թ. վերջն էր: Մի երեկո, ավտոմատ խաղերի սրահում, Բասելը Մոնթեին ծանոթացրեց Ալեք Յենիգոմշյան անունով մի կիրթ, կոկիկ տեսքով երիտասարդի հետ: Տարօրինակ եռյակ էր. դպրոցը թողած, փնթի արտաքինով Բասելը՝ շալվարից նռնակ կախած, ակտիվ գործողությունների ծարավ, հնագիտության բնագավառում աստիճան ստացած Մոնթեն՝ կալիֆոռնիացի տղան, և հեղինակավոր բժշկի որդի, բարեխնամ կերպարանքով Ալեքը:

Չնայած իր արիստոկրատական կեցվածքին՝ Ալեքն ուրիշներին լսել գիտեր և հումորի զգացում ուներ: Բեյրութի Ամերիկյան համալսարանի տնտեսագիտության բաժնի ուսանող լինելով՝ նա հրապուրիչ ուսանողուհիներին ողջունում էր՝ գլուխը քաղաքավարի խոնարհելով ու կեսկատակ ֆրանսերեն հարցնելով. Comment allez vous, mademoiselle? («Ինչպե՞ս եք, օրիորդ»): Այս հարցը տալիս նա փոքր-ինչ «շչախոս» էր: Դեռահասության տարիներին նա սիրում էր դաշնակցականների «Զավարյան աշակերտական միությանն» ուրիշ անդամների հետ զրուցել հայկական և այլ թեմաների շուրջը: Դա չէր խանգարում, սակայն, որ նա ընկերների հետ երբեմն ավտոմատ խաղերի սրահներ այցելեր կամ սեռական թեմաներով կատակներ աներ: Իսկ երբ Ալեքը հանկարծ սկսեց խոսել պաղեստինյան դիմադրության ու Թուրքիայում հեղափոխության մասին, նրա ընկերական շրջապատը մեծացավ: 20 տարին հազիվ բոլորած՝ նա արդեն կապեր ուներ Դաշնակցական կուսակցության, «Պաղեստինի ազատագրման կազմակերպության», Քամալ Ջումբլաթի «Առաջադիմական սոցիալիստական

կուսակցության», և Աստված գիտե՝ թե էլ ում հետ: Թվում էր՝ նա միշտ տեղյակ է «վերևներում» տեղի ունեցող բոլոր ինտրիգներին, որոնց, սակայն, արտաքուստ անտարբերությամբ էր վերաբերվում:

Հակառակ տարբեր խավերի ներկայացուցիչներ լինելուն, Բասելն, Ալեքն ու Մոնթեն նույն կերպ էին գնահատում այդ օրերի քաղաքական իրավիճակը: Երբ Ալեքը հայտարարեց, թե՝ «գալիք տարիները լինելու են ցեղասպանությունից ի վեր Հայաստանի պատմության մեջ ամենավճռորոշը», Մոնթեն գլխի դրական շարժումով համաձայնեց նրա հետ: Հեղափոխությունն Իրանում խախտում էր ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում, և «Սառը պատերազմը» դանդաղ եռման էր վերածվել Թուրքիայի արևելյան սահմանում, ուր փոքրիկ Խորհրդային Հայաստանն էր՝ հին հայրենիքի վերջին հետքը, որտեղ հայերը դեռ իրենց ճակատագրի տերն էին: Թուրքիայի ներսում մառիստները հայտարարել էին արևելյան Անատոլիայում «ազատագրված գոտիներ», գործադուլավորներն ու ցուցարարները կաթվածահար էին արել քաղաքները, իսկ լեռներում սփռված էին քուրդ պարտիզանները: Հնարավորություն էր առաջացել՝ միակ ու անկրկնելի հնարավորություն, միանալու Անկարայի դեմ ապստամբությանը և հետ նվաճելու թեկուզ մի մաս այն հին հայրենիքից, որ հայերը կորցրել էին 65 տարի առաջ:

Առանց Թուրքիայի Հանրապետությունում կուլտներ ունենալու, սակայն, հայերը երբեք չէին կարողանա իրենց պահանջատիրությունն իրականացնել, երբ ըմբոստության ալիքը բարձրանար: Իսկ որտեղի՞ց պետք է Թուրքիայում հայտնվեին այդ մարտիկները: Բռնաղավթված հայկական տարածքներում մնացած հատուկենտ հայերը երբեք չէին կարողանա գլուխ բարձրացնել, առավել ևս՝ կռվել Թուրքական հզոր բանակի դեմ: Ստամբուլում, իրենց կորցրած հայրենիքից 600 մղոն արևմուտք, մի քանի տասնյակ հազար հայեր էին ապրում, բայց նրանք անհուսալիորեն հնազանդ էին: Ուրեմն, պայքարի համար զինվորագրվողները կամ պետք է Խորհրդային Հայաստանից լինեին, կամ սփյուռքից: Խորհրդային Հայաստանը հազիվ թե բացահայտորեն աջակցեր այդ կռվին, հատկապես՝ կարևորագույն սկզբնական փուլում: Խորհրդային առաջնորդներին թերևս դուր կգար Թուրքիայի հետ «սահմանները ճշտելու» հեռանկարը, և նրանք երևի կուզեին Թուրքիան առանձնացնել NATO-ից, բայց համատարած պա-

տերազմի և Թուրքիայի հետ խիստ ռազմականացված սահմանի երկայնքով միջուկային փոխադարձ հարվածների վտանգը բացառում էր Հայաստանի և, հետևաբար, նաև Խորհրդային Միության կողմից օգնության հնարավորությունը:

Մնում էր սփյուռքը, հատկապես՝ մոտակա Իրանի, Սիրիայի և Լիբանանի հայերը, որոնք կարող էին կազմել Թուրքիայի դեմ պայքարի համար զինվորագրվող ուժերի հիմնական մասը: Բայց այդ համայնքներում միայն երիտասարդներն էին հայրենասիրական հոգերով տարված, և միայն նրանք կարող էին խմբերով ներգրավվել պայքարի մեջ: Իսկ այդ երիտասարդները, պատերազմի, տնտեսական խնդիրների ու ապաշնորհ ղեկավարների պատճառով, մեծ բազմությամբ հեռանում էին դեպի Փարիզ ու Լոս Անջելես:

Արտագաղթը կանգնեցնելու և հայրենասիրական պայքարի համար ուժերի հավաքագրումն ապահովելու համար պատանիներին և երիտասարդներին պետք էր ոգեշնչել ու առաջնորդել: Հարկավոր էր մի «զինված առաջապահ խումբ», մի ռազմական կազմակերպություն, որն իր ուշադրությունը բևեռեր զոլֆված հայկական տարածքների վրա: Ավելին՝ քանի որ Թուրքիայում իրավիճակն օրեցօր բարդանում էր, այդ առաջապահ խումբն անհրաժեշտ էր արագ ստեղծել: Եթե ընձեռված այդ բացառիկ հնարավորությունը չօգտագործվեր, ապա ամբողջ հայ ժողովուրդը՝ ոչ միայն սփյուռքը, այլ նաև Խորհրդային Հայաստանը, կդատապարտվեին խորացող բարոյալքման, արտագաղթի ու ձուլման: «Իսկ եթե դա տեղի ունենա, — հզրակացրեց Մոնթեն, — մեր ազգի սպիտակ կոտորածը հաջողված կլինի» (նա օգտագործեց «սպիտակ ջարդ» արտահայտությունը, որպեսզի այն հատակորեն տարբերակվի 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում տեղի ունեցած՝ մեկ միլիոն զոհերի արյունալի կոտորածներից):

Այսպիսով, տարբերակները շատ չէին. հայերի՝ ոչ միայն սփյուռքի, այլև ամբողջ վեց միլիոնանոց ժողովրդի ապագան կախված էր գալիք մի քանի տարիների ընթացքում Իրանի, Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում դեպքերի զարգացումից:

Որքան էլ այժմ նման դատողությունները վիճելի թվան, Ալենը ու Մոնթեն այն ժամանակ, իրարից անկախ, հանգել էին նույն եզրակացություններին: Հետևաբար, առաջնահերթ խնդիր էր անհապաղ զինված առաջապահ խումբ ստեղծելը, որը կոգևորեր և ուղղություն ցույց կտար երիտասարդներին:

1979 թ. գարնանն իմ քույր Մարսիան ու ես կենտրոնական Կալիֆոռնիայում կանգնած էինք մայրուղու մոտ և փորձում էինք նույնընթաց մեքենա կանգնեցնել՝ 200 մղոն դեպի հարավ գտնվող՝ Լոս Անջելեսի Միջազգային օդանավակայան հասնելու համար: Մենք պետք է Բեյրութ թռչեինք՝ մեր եղբայր Մոնթեին տեսնելու: Մեկ տարի շարունակ զանազան լուրեր լսելուց հետո, թե՝ Մոնթեն ներկա է եղել հեղափոխական Իրանում տեղի ունեցած կոտորածին, ապրել է Բեյրութի նկուղներում և այլն, Մարսիան ուզում էր համոզվել, որ իր եղբայրը լավ է: Բայց ո՞րն էր իմ նպատակը: Դա այնքան էլ հստակ չէր: Արդյո՞ք ես Բեյրութ էի գնում՝ եղբորս քաղաքակիրթ աշխարհ վերադարձնելու նպատակով, թե՞ որպեսզի այնտեղ միանամ նրան:

Մարսիան ու ես Լոս Անջելեսից թռանք Լոնդոն, ապա տոմսեր գնեցինք՝ Լոնդոնից Բեյրութ 5 ժամ տևողությամբ թռիչքի համար: Մարտի 24-ին մեր օդանավն անիվները բացեց՝ իջնելով Բեյրութի օդանավակայանի խորդուբորդ վայրէջքագոտի: Մենք մեր պայուսակներն ու ճամպրուկները քարշ տվեցինք դատարկ, քարանձավակերպ սրահով և էլի որոշ ժամանակ քայլեցինք՝ մինչև որ հաջողվեց տաքսի գտնել: Առաջին վարորդը կոկիկ բաճկոն հագած, չսափրված մեկն էր: Երբ նա իմացավ, որ ուզում ենք Բուրջ Համուդ գնալ, շփոթվեց ու գլուխը բացասաբար օրորեց: Նա բացատրեց, որ իր երկրում ինքը չէր կարող քաղաքի միջով 11 կիլոմետր քշել, քանի որ մահմեդական էր, և իրեն կսպաննեին: Նա մեզ տարավ հին «Մերսեդեսի» վրա հենված մի ուրիշ չսափրված վարորդի մոտ, որ քրիստոնյա էր, և նրան խնդրեց մեզ տանել արևելյան Բեյրութ:

Մինչ մենք շարժվում էինք դեպի հյուսիս, քաղաքի ուղղությամբ, ես պատուհանից ուշադիր դիտում էի շրջակայքը: 9 տարի առաջ «Ֆոլքսվագեն» տուն-մեքենայով մեր այցելությունից հետո Բեյրութը փոխվել էր: Ես չէի տեսնում Բուրջ ալ Բրաջնեի թիթեղյա կտուրները: Նախկինում չիաների այդ լայնարձակ ճանապարհը դուրս էր գալիս ու տարածվում օդանավակայանի ճանապարհը եզերող սոճիների միջից: Այժմ Holiday Inn-ը դիպուկահարի որջ էր դարձել, իսկ Colonel Sanders-ի ճակատային մասում հրթիռն անցք էր բացել: Նույնիսկ ճանապարհային ոստիկաններն էին մարտական հրացաններ կրում: Գետնի տակով անցնող

պայթած խողովակներից մաքուր ջուր էր ցայտում, իսկ քամին քշում էր դեպի ծովափ հոսող կոյաջրի գարշահոտությունը: Արևից ցոլացող Բեյրութն, ինչպես միշտ, գեղեցիկ էր և, թերևս, է՛լ ավելի գեղեցիկ էր դարձել՝ իր խոցելիության ու կրած տառապանքի շնորհիվ:

Մենք հետևում թողեցինք հսկիչ կետի մոայլ զինվորականներին, անցանք թանգարանը, և տաքսին, տրանսպորտային հոսքի հետ խառնված, իջավ Մար Ցուսեֆ փողոցով, դեպի Բուրջ Համուդի կենտրոն: Երբ հասանք Pholidisc խանութին, Մոնթեի ընկեր Դանիելը բերանից ծխախոտի գլանակը դուրս քաշեց ու ժպտալով ելավ իր նարնջագույն վաճառասեղանի հետևից: Իրար ողջունելուց հետո ես հարցրի, թե ուր է Մոնթեն: Դանիելն աչքերը ճպճպացնելով պատասխանեց, որ ոչ ոք երբեք չգիտի Մոնթեի տեղը, քանզի նա ամենուրեք է: Ես մի քիչ շփոթվեցի, բայց ջանացի քաղաքավարի ժպիտս պահել: Նա մարդ ուղարկեց Մոնթեին գտնելու և մեզ հրավիրեց ճաշի: Դանիելի կինը սուրճ պատրաստեց, իսկ նա մի հարևանի խնդրեց նախապես պատվիրված հավը բերել:

Երբ մենք վերջացրել էինք սուրճն ու հավի կեսը, Մոնթեն վերջապես դռնից ներս խուժեց: Նա բեղ-մորուքով էր, վայրի տեսքով, բայց մեզ տեսնելու համար՝ սրտանց ուրախ: Մենք գրկախառնվեցինք և լիբանանյան օղի խմեցինք, ապա Մոնթեն Մարսիային ու ինձ ծանոթացրեց իր ընկերների հետ, որոնք ներս ու դուրս էին անում ողջ երեկոյի ընթացքում:

Ուշ երեկոյան մենք շնորհակալություն հայտնեցինք Դանիելին և Մոնթեի հետ տաք մթության միջով գնացինք մեկ-երկու շենք այն կողմ, դեպի այն վեցհարկանի շենքը, ուր նա բնակվում էր: Այդ տարի, մեր այցելությունից առաջ, նա դուրս էր եկել Ստեփանյանների բնակարանից ու ապրում էր իր աշխատած դպրոցի մոտ գտնվող մի հարմարավետ բնակարանում: Հենց որ նա մեր հետևից դուռը փակեց, նրա զվարթ տրամադրությունը փոխվեց լրջության: Իսկ երբ Մարսիան շտապ անկողին մտավ ու քնեց, Մոնթեն դարձավ մոայլ: Գահարանից մի տուփ հանելով՝ նա ինձ ցույց տվեց խանութպանների հասցեագրված նամակների պատճենները: Նա այդ նամակները, սպառնալիքներով դրամ կորզելու համար, նրանց էր ուղարկել «Գաղտնի բանակի» անունից:

— Ի՞նչ, — համարյա զոռացի ես՝ որպես նախաբան այն հիշեցման, որ «Գաղտնի բանակին» հազիվ թե Մոնթեի արարքը դուր

գար: Փաստորեն, նա «ռեկետի» նպատակով օգտագործել էր նրանց անունը:

Ապա Մոնթեն մանրագնդակի մի հրացան հանեց պահարանից ու բացատրեց, որ կորզված դրամով զենք է ձեռք բերել՝ «Գաղտնի բանակի» հրապարակած նպատակներն իրագործելու համար: Նրա խոնավացած աչքերը փայլեցին առկայծող ածուխների նման, և նա շշնջաց.

— Մենք ծրագիր ունենք:

Ես ցնցված նայում էի նրան: «Մե՞նք». ո՞վ էր այդ «մենքը»: Անկասկած՝ «լավ տղաներ»: Նույն ձևով Մոնթեն ինձ էր ներկայացրել Բերկլիի իր ընկերներին, իսկ ինձ՝ նրանց: Նա իր ընկերների արժանիքները չափազանցելու սովորություն ուներ: Նրա խոսքերով՝ նույնիսկ ես էի «քաջ ու երևելի»: Սա պարզ էր, բայց այդ պահին ինձ ուրիշ բան անհանգստացրեց. թվաց, թե Մոնթեն ուզում է մասնակցել «կամիկաձեների» մի հուսահատ գործողության:

Նա ինձ երբեք մինչև վերջ չէր հայտնում իր մտադրությունները: Հնարավոր է, որ այդ պահին դեռ ոչ մի գործողություն էլ ծրագրված չէր: Միգուցե նա պարզապես մի խելահեղ բան էր ուզում անել, ասենք՝ դեսպանատուն պայթեցնել կամ դիվանագետ սպանել, այնպիսի մի բան, որից մեծ աղմուկ կլիներ: Բոլոր դեպքերում, ես չպետք է զարմանայի Մոնթեի նման մտքերից: Նույնիսկ Բերկլիից հեռանալուց առաջ նա հայտնել էր իր հստակ դիրքորոշումը: Երկարամյա մի խաղաղասերի հետ վիճելիս Մոնթեն ասել էր. «Դուք երբեք չեք հասկանա հանուն մեր ժողովրդի մեռնելու մեր պատրաստակամությունը»: Այն ժամանակ սա թերևս զուտ ճարտասանություն էր թվացել, բայց Մոնթեն անշուշտ լուրջ էր եղել:

Ես աչքերս տրորեցի ու աշխատեցի սառնասիրտ երևալ: Որպես ավագ եղբոր հեղինակավոր խոսք՝ նրան ասացի, որ իր հայրենակիցների մեծ մասը երազում են ոչ թե Հայաստանի, այլ Ամերիկայի մասին, և եթե նա զոհ գնա, իրեն ավելի շուտ «էշ նահատակ» կհամարեն, այլ ոչ թե կհետևեն:

Հաջորդ առավոտյան Մոնթեն, պատշգամբում իր կրիային ձմերուկի կլեպներով կերակրելուց և մեզ զգուշացնելուց հետո, թե՝ «Կրակոց լսելու դեպքում պետք է հանգիստ մնալ», Մարսիային ու ինձ տարավ Բուրջ Համուդը ցույց տալու: Երբ քայլում էինք մի փողոցով, նա ասաց, որ, շենքերի երկրորդ հարկերից վեր

շարժում նկատելու դեպքում, ուշադիր լինենք: Նա նաև ինձ խորհուրդ տվեց, ուշադրություն չգրավելու համար, քայլել ձեռքերս կախած: Ես շուրջս նայեցի և իրոք տեսա, որ լիբանանցիները չէին քայլում ինձ նման, ամերիկյան ոճով, ձեռքերը գրպաններում, մեծ քայլերով ու պարապ տեսքով:

Մենք պտտվում էինք Բուրջ Համուդի շուրջը, և մեր եղբայրը մեզ ցույց տվեց «Սիրիական բանակի» ուղեկալներ, «Փաղանգավորների» պահակակետեր, սաուդյան զինվորների խմբեր «Արաբական լիգայից» և «Լիբանանյան բանակի» մի պահակակետ: Մոնթեն խստիվ պատվիրեց հիշել բոլորի համազգեստները. «Փաղանգավորներին» «Սիրիական բանակի» հետ չփոթելը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ: Ամենից հեշտ հիշվողը Լիբանանի նախկին նախագահ Կամիլ Շամունի՝ Իսրայելում մարզված «Վագրերն» էին՝ իրենց ձիգ, գծավոր ֆրանսիական համազգեստով: Մոնթեն մատնացույց արեց Սինն էլ-Ֆիլի մոտ մի խաչմերուկ, որտեղ այդ պճնասեր դենդիները մի ժամանակ կիտել էին իրենց սպանած կանանց ու երեխաների մարմինները:

Պտույտից հետո «Թորոսյան վարժարանում» Մոնթեի վերադասներից մեկը՝ Խալիլ Ք. անունով մի մարոնիտ բյուրոկրատ, մեզ հյուրասիրեց ոչխարի հում լյարդից պատրաստված նախաճաշով՝ այն համեմելով պաղեստինցիների ոչնչացումից քաղելիք օգուտների մասին մի դասախոսությամբ: Ըստ այս ուսուցչի՝ Լիբանանի խնդիրները սկիզբ առան այն օրվանից, երբ պաղեստինցիների վնասակար ցեղն ինքնակոչ հյուր դարձավ իր երկրում: Խալիլն, անշուշտ, չէր սիրում իր տերերին՝ «Հրեաներին», բայց թվարկում էր, իր կարծիքով, առաջնահերթ հարցերը՝ շեշտելու համար ցուցամատը բարձրացնելով: Նա հայտարարեց, որ ավելի շուտ խելացի մարդու ստրուկ կդառնար, քան էշերի ցեղի տեր: Մոնթեն ու ես համաձայնեցինք, որ դա լևանտյան իմաստության հանրագումարն էր. մարդ պետք է կամ ստրուկ լինի, կամ տեր. երրորդ տարբերակ չկա:

«Այս պատերազմը խելագարություն է, — ասել էր ինձ Մոնթեն Բուրջ Համուդ մեր գալու գիշերը. — եղբայրը սպանում է եղբորը. առանց պատճառի»: Շուտով, սակայն, նա եզրակացնելու էր, որ, թեև այդ պատերազմի համար հիմնավոր պատճառներ չկային, բացատրություններ կարելի էր գտնել: Իսկ բացատրություններից մեկն այն էր, որ մի քանի հարուստներ փորձում էին երկիրը շարունակել ղեկավարել իրենց մասնավոր խանութի

նման, աղքատների և մահմեդականների ու քրիստոնյաների ճայնաղուրկ մեծամասնության հաշվին:

Մենք Բեյրութում մի ամսից պակաս էինք մնացել, երբ Շամունի «Վագրերից» մեկը գնդակահարեց հերթական հայ պատանուն ու «նրա մորը լացացրեց», ինչպես տեղացիներն էին ասում: Բուրջ Համուդ մեր գալու օրվանից ի վեր Դանիելը գովաբանում էր հայերի չեզոք քաղաքականությունը Լիբանանի քաղաքացիական պատերազմում: Բայց, «Վագրի» զոհի հուղարկավորության ժամանակ միանալով հարյուրավոր ուրիշների, մենք սկսեցինք հասկանալ, որ չեզոքությունը նույնպես գին ուներ: Երբ սգո թափորը երկու շենք անցել էր, զինյալների մի շարասյուն կանանց հեռացրեց, իսկ տղամարդիկ, ուս-ուսի տված շարք կազմելով, ճանապարհը շարունակեցին մինչև «Վագրերի» պահակակետ: Այնտեղ հասնելով՝ տղամարդկանց այդ փաղանգն ատրճանակներով, ասես կանոնավոր հերթականությամբ, վեր կրակեց, և բազմաթիվ ճարճատող փամփուշտներ օդում աղմկեցին: Իսկ պահակակետի ճիշտ վերևի պատշգամբում մի մկանուտ հայրենակից լիցքավորեց իր գնդացիրն ու սկսեց երկար, թմբուկի մանրահարված ների նման կրակահերթեր արձակել օդ:

Թափորը Բուրջ Համուդի միջով ուղղվեց դեպի գերեզմանոց, որ գտնվում էր նախկին՝ Նաբաա կոչվող շիա թաղամասի ավերակների մեջ: Այնտեղ մի քահանա իր ձեռքի խաչելությունը սրի նման դեպի երկինք պարզեց ու մեզ հիշեցրեց, որ թաղվող երիտասարդը նահատակ էր: «Մահ իմացյալ՝ անմահություն է», — երգեց նա՝ կրկնելով 5-րդ դարի պատմիչ Եղիշեի խոսքերը:

Հուղարկավորությունը շատ լուրջ մի ներկայացում էր, բայց թվում էր, թե այն իր հասցեատիրոջը չէր հասել: Գերեզմանոցից վերադառնալով՝ Մոնթեն ու ես տեսանք թշնամու մի Land Rover, որը ցուցադրաբար հետ ու առաջ էր սլանում հողե փողոցում, Բուրջ Համուդի հենց կենտրոնում: Մոնթեն մի արաբերեն հայհոյանք մրմնջաց: Այլ պայմաններում նա անշուշտ Շամունի հրոսակախմբին ավելի բարձրաձայն ուղերձ կուղարկեր:

Երբ Մարսիան ու ես ժամանեցինք Բուրջ Համուդ, շատ զարմացանք՝ իմանալով, որ մեր եղբայրը դեր ուներ նաև բոլորովին այլ բնույթի թատրոնում: Զոհրապ Յ. անունով մի բեմադրիչ «Բուրջ Համուդ 78» վերնագրով ներկայացման մեջ նրան դեր էր տվել: Թեև սա պակաս տագնապալի էր, քան Մոնթեի կամիկաձեական հակումների ի հայտ գալը, լուրը մեզ ապշեցրեց: Մոն-

թեն վերջին անգամ բեմի վրա էր եղել 1957 թ., երբ Վայսելիայում «Մեթոդիստների» եկեղեցու կազմակերպած՝ Սուրբ Ծննդյան մի ներկայացման մեջ հանդես եկավ մեկ ամսական Հիսուսի դերում: Իր մանկանը «Մեթոդիստներին» տալուց առաջ մեր մայրը նրան կուրծք էր տվել ու տաք ջրով երկար լողացրել, այնպես որ վարագույրը բացվելու պահին Մոնթեի արյան շաքարը բավարար չափով բարձր էր, որպեսզի ամբողջ ներկայացման ընթացքում նա հանդիստ մնար: «Ոչ մի ծպտուն», — ներկայացումից հետո զեկուցեց մեր մայրը: Մոնթեն անհրաժեշտ պահերին նույնիսկ ժպտացել էր «Մարիամի» գրկում: Այդ օրվանից ի վեր, սակայն, նա թատրոն գնալու, առավել ևս՝ բեմ դուրս գալու որևէ հակում չէր ցուցաբերել: Ուրեմն ինչո՞վ բացատրել նման փոփոխությունը: Այս հարցի պատասխանը ես բավական ուշ իմացա, երբ հայտնի դարձավ, որ Զոհրապի թատերախմբի մեջ ընդգրկվելը սոսկ այնճարցի արվեստասեր աղջկա՝ Սեդայի ուշադրությունը գրավելու ձև էր:

Սիրո թեմայով Մոնթեն չէր խոսում ոչ ինձ, ոչ էլ ուրիշների հետ: Մի խոնավ երեկո, սակայն, ես իմ եղբայրական պարտքը համարեցի այդ հարցին անդրադառնալ (Սեդային տեսել էի Ստեփանյանների բնակարանում): Մոնթեն ու ես մեջքի վրա պառկած էինք պահակակետի գետնին, փրփրանյութից պատրաստված բարձերի վրա, և փորձում էինք ժամապահությունից առաջ մի քիչ ննջել: Հեռվում, այրվող չոր փայտի նման, ճարճատում էին գնդացիրների կրակահերթերը, վերևում պտտվում էր մի լրտես սավառնակ, իսկ կանաչ «մոծակի դեղից» անուշահոտ ծուխ էր բարձրանում:

— Այդ Սեդան լավ աղջիկ է, չէ՞, — բարձրաձայն մտածեցի ես:

Մոնթեն չպատասխանեց, բայց ես գիտեի, որ նա արթուն է, ուստի խորամանկորեն շարունակեցի.

— Ինձ թվում է՝ դու էլ իրեն ես դուր գալիս:

— Չէ՛է, — քթի մեջ փնթփնթաց Մոնթեն, — նման բաները միայն ժամանակի կորուստ են:

Ես խոսակցությունը չշարունակեցի, բայց գիտեի, որ այդ թեմային նորից անդրադարձ կլինի:

Եղբորս թատերական դեբյուտը 1979 թ. ապրիլի 1-ին էր, Բուրջ Համուդի «Տեր-Մելքոնյան դահլիճում»: Ավազապարկերով շրջապատված մուտքի երկու կողմերում զինված հսկիչներ էին կանգնած: 500 տեղանոց դահլիճը լիքն էր: Մոնթեն խաղում էր Բուրջ

Համուդում ծնված Աստուրի դերը: Նրա հերոսն ապրում էր Լոս Անջելեսում, բայց այցելել էր իր հարազատ վայրերը: Երբ մի ընկեր Աստուրին հարցնում է Ամերիկայի մասին, նա սկզբում այն նկարագրում է պայծառ գույներով և ամերիկահայի շեշտված առոգանությամբ: Հավանաբար նաև Մոնթեի այդ առոգանության շնորհիվ էր բեմադրիչ Զոհրապը նրան տվել Աստուրի դերը: Ի վերջո Մոնթեի հերոսը խոստովանում է, որ Ամերիկայում ինքը գործազուրկ է ու միայնակ, որ կուզեր Լիբանան վերադառնալ, բայց ամաչում է: Ուզերձն այն էր, թե, հակառակ պատերազմին, պետք է գոյատևել Լիբանանում, և Մոնթեն լիովին նույն կարծիքին էր:

Նա ճկուն չէր բեմի վրա, հակում ուներ իր տողերը գոռալու, բայց հանդիսականները սիրեցին նրա կերպարը: Բուրջ Համուդի փողոցներում հայերը հաճախ կրկնում էին Աստուրի՝ անգլերեն բայի խոնարհման վարժությունը. "I go, You go, Go-go!" («Ես գնում եմ, դու գնում ես. գնում եմ-գնում ես»): Ներկայացումը մնաց 2 ամիս՝ շաբաթը 3-4 անգամ, լիքը կամ համարյա լիքը դահլիճներում: Որոշ մարդիկ այն տեսել էին 4-5 անգամ: Մոնթեն, այդուհանդերձ, խոստովանում էր, որ ինքը դերասան չէ: 1979 թ. ապրիլի 29-ին հարազատներին ուղղված մի նամակում նա գրել է. «Այս ներկայացումը մեծ հաջողություն ունեցավ, բայց ինձնից շատ ժամանակ է խլում: Նման բաներից ես հաճույք չեմ ստանում. կարծում եմ՝ դուք դա արդեն գիտեք»: Նա որոշեց «Բուրջ Համուդ 78»-ից հետո այլևս բեմ չբարձրանալ:

Այդ ժամանակ փողոցներում այլ բնույթի դրամատիկ իրավիճակ էր ստեղծվել: «Փաղանգավորներն» իրենց ուղեկալների մոտ հայերին կանգնեցնում էին, ոմանց ծեծում, ուրիշների համար փրկագին պահանջում կամ մեքենաներ բռնագրավում: Նրանց ակնարկը պարզ էր. կամ մեր գանձատուփի մեջ փող դրեք, կամ Լիբանանից հեռացեք: Մի օր, երբ Մոնթեն քայլում էր մարոնիտների մի թաղամասում, «Փաղանգավոր» զինյալները նրան բռնեցին ու տարան «Քաթայիբների ռազմական խորհրդի» կենտրոնատեղի՝ ծովափին գտնվող մի լքված շրջան, որ կոչվում էր Քարանթինա: Մոնթեին ձերբակալողները նրան հրեցին մի խուց, որը միայն մեկ փոքրիկ պատուհան ուներ առաստաղի տակ: Այդ պատուհանից Մոնթեն լսում էր ալիքների աղմուկը և զգում ծովափնյա տաք օդը: «Փաղանգավորներից» մեկը նրան մեղադրեց ամերիկյան կեղծ անձնագրով պաղեստինցի լինելու մեջ: Ապա նա

իր ատրճանակը լիցքավորեց, այն դրեց Մոնթեի գլխին ու ձգանը քաշեց. «չը՛խկ»:

— Մեջը փամփուշտ չկա, հա՛, հա՛, հա՛:

Այնուհետև նրան տարան անվտանգության մի սպայի մոտ, որը Մոնթեի ամերիկյան անձնագիրն արագ թերթեց ու հարցրեց, թե, գրո՛ղը տանի, ի՞նչ էր նա անում Լիբանանում: Մոնթեն ֆրանսերեն բացատրեց, որ եկել է՝ ընկերներին տեսնելու, դպրոցում աշխատելու և իրեն հետաքրքրող հնագիտական թեմայով ուսումնասիրություն կատարելու: Սպան հետ նստեց իր աթոռի մեջ ու ժպտաց:

— Այդ դեպքում ինձ մի բան պատմիր հնագիտության մասին, — պահանջեց նա:

Մոնթեն անմիջապես մի դասախոսություն սկսեց պարսկա-մաքրական հնագիտության մասին: «Փաղանգավորը» զարմանքով աչքերը ոլորեց:

— Լավ, լավ, — ասաց նա՝ ամերիկյան անձնագիրը Մոնթեին վերադարձնելով:

Նրան խիստ զգուշացումով ազատ արձակեցին: Մայիսի 9-ին լարվածությունը Սինն էլ-Ֆիլ մայրուղու վրա գագաթնակետին հասավ, երբ մի հսկա «Փաղանգավոր», «Ֆիատից» դուրս թռչելով, կրակ բացեց հայ երիտասարդների մի խմբի վրա՝ մեկին սպանելով և մյուսին մահացու վիրավորելով: Մայրուղու երկու կողմերում զինվորները ճանկեցին իրենց ինքնաձիգներն ու թաքնվեցին բարիկադների հետևում: Երբ Մոնթեն այդ օրը դպրոցից տուն էր վերադառնում, նրան լուր հասավ, որ «Օդանավի շենքի» մեր պահակակետում արտակարգ իրավիճակ է հայտարարված: Մեզ պետք էր, հրահանգներ ստանալու համար, գնալ Նաբաա, մոտ մեկ կիլոմետր այն կողմ՝ աննկատ անցնելով «Վագրերի» պահակակետի մոտով ու վագքով կտրելով դիպուկահարներով չրջապատված մի բաց տարածություն: Բարեբախտաբար, կամ այդ կեսօրից հետո դիպուկահարները տեղում չէին, կամ էլ արթուն չէին, և մենք անվնաս մոտեցանք «Օդանավի շենքին»:

Այնտեղ «Սալոր» մականունով մի զինվոր մեզ ողջունեց: Նա իր դեմքին, ծաղրածուի նման, սպիտակ ու կարմիր ներկ էր քսել՝ երևի թշնամուց քողարկվելու համար (անգամ նրա հարևանները կարող էին թշնամի լինել): Նա ցնցված էր, իսկ նրա շալվարին մուգ հեղուկի հետքեր կային: Մի ուրիշ զինվոր շշուկով բացատրեց, որ դիպուկահարը քիչ առաջ կրակել էր նրա լավագույն ընկերոջ գլխին, և նա ընկել էր Սալորի ոտքերին: Հաջորդ երկու օրվա ընթացքում Մոնթեն ու իր ընկերներն արճիճի տարափի տակ էին և, հնարավորության դեպքում, պատասխան կրակ էին բացում դեպի թշնամու կողմը: Մայիսի 14-ին թերթերը գրեցին, որ Կամիլ Շամունը՝ արծաթագույն մազերով ու անթափանց սև ակնոցով հրամանատարը, միջնորդել էր՝ հայերի ու «Փաղանգավորների» միջև կրակը դադարեցնելու համար, և վեճը հարթվել էր: Մոնթեն, այդուհանդերձ, շարունակում էր կասկածամիտ մնալ: Եվ, հարկավ, մեկ ամիս էլ չէր անցել, երբ «Փաղանգավորներն» ու Շամունի հրոսակախումբը սպանեցին ևս չորս անզեն հայերի:

Այս դեպքերից դեռ շատ առաջ Մոնթեն որոշել էր զինվել: «Լիբանանում ամեն ինչ կարելի է գտնել, նույնիսկ թռչնի կաթ». Մոնթեն համոզվեց, որ Դանիելի այս թևավոր խոսքը ճշմարիտ է, երբ թերթեց զենքի տեղական առևտրականների ապրանքացուցակները: Նա գնեց 2 չեխական ինքնաձիգ ատրճանակ ու 2-3 F-1 նռնակ: «Հրազենը գործիք է, — ասում էր նա. — հրազենի տարբեր տեսակներ օգտակար են տարբեր նպատակների համար»: Նա նորոգել տվեց իր 7 միլիմետրանոց Unique ատրճանակը և ապա գնեց անհայտ արտադրության մի քանի այլ միավոր, որոնց տրված «Լուեցնոզ» անունն այնքան էլ տեղին չէր թվում: Երբ մենք առաջին անգամ Մոնթեի պատշգամբում փորձարկեցինք դրանցից մեկը, հարևանները վախեցած դուրս ցատկեցին՝ կարծելով, թե մեզ հետ մի սարսափելի բան է պատահել:

«Օդանավի շենքում» պահակություն անողներից ոմանց դուր էր գալիս Մոնթեի ոգեշունչ կերպարը: Նա միշտ հայտնվում էր ժամանակին ու առույգ տեսքով, պատրաստակամությամբ փոխարինում նրանց, ովքեր խուսափում էին ժամապահությունից՝ պատճառ բերելով ստամոքսի ցավը կամ ընտանեկան պարտականությունները: Ուրիշների համար, սակայն, Մոնթեի ներկայությունն ուրախալի չէր: Մի երեկո, երբ մենք մի փոքր ռեստորանում բակլա էինք ուտում, օրորվելով ներս ընկավ հայ զինյալներից մեկն ու կանգնեց մեր առջև: Նա հարբած էր և սկսեց մրթմրթալ, թե մենք միայն անախորժությունների պատճառ ենք. անիսելք տղաներ, որոնք մի գեղեցիկ օր հայտնվեցին այնտեղ՝ կռվի համար կազմ ու պատրաստ: Բայց Բուրջ Համուդն իր (և ոչ թե մեր) տունն էր. իր ընտանիքն ու աշխատանքն այնտեղ էին, և նա փորձում էր հոգալ իր երեխաների ապագան: Նա ուզում էր,

որ մենք դա հասկանանք. ինքը չէր կարող մեզ նման ամբողջ գիշեր նստել ու զենքն օգտագործելու առիթ փնտրել:

Հաջորդ ամիս Մարսիան, Մոնթեն և ես աշխատում էինք՝ օդանավի տոմսերի համար դրամ վաստակելու նպատակով: Ուզում էինք Ֆրեզնոյում ներկա լինել մեր ծնողների ամուսնության 25-ամյակին: Օրվա ընթացքում Մարսիան մի նկուղ-խանութում ջինս էր կարում և երեկոյան Մոնթեի ճաշասենյակը դարձնում ժամանակակից պարերի դպրոց: Ուսուցչությունը խլում էր Մոնթեի ժամանակի մեծ մասը, իսկ ես առավոտյան օգնում էի մի թխվածքագործի, կեսօրին բիզնես քոլեջում անգլերեն էի սովորեցնում, իսկ երեկոյան մասնավոր դասեր տալիս: Հունիսի վերջին տոմսերի համար անհրաժեշտ գումարը հավաքվեց: Մոնթեն իր կրթային ազատ արձակեց, և մենք երեքով վերադարձանք Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու 25-ամյակի միջոցառմանը:

Այդ օրը ես 3 կտորից բաղկացած կոստյում էի հագել, Մոնթեն՝ իր լավագույն, կոճակավոր օձիքով վերնաշապիկն ու վելվետե շալվարը: Երբ մեր ծնողները մտան Ֆրեզնոյում վարձված սրահը և տեսան իրենց 4 երեխաներին՝ որդիներին ու դուստրերին, նրանք մեզ հերթով փաղաքշեցին ու մեր ճակատները համբուրեցին:

Քիչ հետո մեր հայրը Մոնթեին հարցրեց կրթությունը շարունակելու նրա ծրագրերի մասին:

— Ես արդեն չափից ավելի շատ եմ կրթված իմ նպատակների համար, — պատասխանեց Մոնթեն. նա արդեն վերջնական որոշում էր ընդունել՝ հնագիտությունը թողնել և անցյալն ուսումնասիրելու փոխարեն կենտրոնանալ ապագան փոխելու վրա:

Հուլիսի ընթացքում Մոնթեն Սան Ֆրանցիսկոյում ու Լոս Անջելեսում այցելեց իր ընկերներին ու փակեց իր բանկային հաշիվը: Նրան Լոս Անջելեսի միջազգային օդանավակայան տանելիս ես մեքենան կանգնեցրի մի՝ զեղչված գներով խանութի մոտ, որպեսզի նա իրանաբնակ իր ընկերների համար նվերներ գնի: Զոր ուտելիքով լի ուսապարկը մեջքին՝ Մոնթեն նստեց Լոնդոն թռչող օդանավ և մեկընդմիշտ հրաժեշտ տվեց իր ծննդավայր երկրին:

Գլուխ 6. Անհանգիստ ժամանակներ

1979 թ. օգոստոսի 8-ի գիշերը Մոնթեն ժամանեց Թեհրան: Նրա բացակայության ընթացքում Իրանում հեղափոխություն էր եղել: Մեկ տարուց պակաս ժամանակ էր անցել այն օրվանից, երբ նա «ջուր թողող» նավակով Իրանից գնացել էր Քուվեյթ: Այժմ Թեհրանը նրան նոր քաղաք թվաց. «Այստեղ շատ ազատ մթնոլորտ է տիրում. փողոցներում զինվորներ բոլորովին չկան, — գրում է նա օգոստոսի 15-ի նամակում. — ժողովուրդը հիմա շատ ավելի երջանիկ է»: Մոնթեի ընկերները «Սիփան» միությունում նրան ժպիտով ողջունեցին և աղմուկով թոթվեցին նրա ձեռքը:

«Սիփան» միությունում ջերմություն ու իդեալիզմ էր տիրում: Նրանք լսել էին Իրանի արևմուտքում, հենց Թուրքիայի գրաված հայկական տարածքների հետ սահմանի մոտ, քրդերի ապստամբության մասին: Բերկլիից հեռանալուց ի վեր Մոնթեն ձգտում էր ձերբազատվել քրդերի հանդեպ իր անվստահությունից: Նա մի տեղ կարդացել էր, որ հայերի ցեղասպանությանը մասնակցած քրդերն այն կլաններից էին, որոնք հավատարիմ էին ոչ թե իրենց ժողովրդին, այլ Ստամբուլում գործող թուրք ղեկավարներին: Իրենց հայ զարմիկներին դավաճանելուց հետո նրանք դավաճանել էին նաև իրենց եղբայրներին ու քույրերին՝ թուրքական բանակի հետ 1920-ական ու 30-ական թվականներին մասնակցելով քրդերի կոտորածներին ու տեղահանությանը: Հետագայում, սակայն, նույնիսկ հիշյալ կլանների քրդերը հայերին, իրենց նման, համարում էին ընդհանուր թուրք թշնամու զոհեր:

Եթե քրդերի ապստամբության մասին ասեկոսեները ճիշտ էին, ուրեմն հետաքրքիր հարցեր էին ծագում: Կարողացե՞լ էին արդյոք Իրանի քրդերն իրենց սեփական կառավարությունն ստեղծել: Եթե այո, հնարավո՞ր էր, որ նրանց խռովությանը սահմանի այն կողմում միանային նաև Թուրքիայի 12 միլիոն քրդերը: Իսկ կարո՞ղ էին նաև հայերը ջոկատներ կազմել ու մասնակից դառնալ այդ ապստամբությանը... Քրդստան այցելելու ժամանակն էր:

Թեհրան գալուց երկու օր անց Մոնթեն, նրա նոր ընկեր Վահիկը և 18-20 տարեկան ուրիշ ընկերներ՝ թվով 10 հոգի, երկու մեքենա վարձեցին ու Թեհրանից շարժվեցին դեպի Իրանական Քրդստան՝ Մահաբադ քաղաք: Երբ նրանք անցնում էին Թավրիզով, լսեցին մի հայկական կամավորական կազմակերպության մասին, որը կոչվում էր «Երկիր և մշակույթ»: Սալմաստի դաշտի

Հաֆթվանի շրջանում նրանք մի ծրագիր էին նախաձեռնել: «Երկիր և մշակույթի» ճամբարը Մահաբադի ճանապարհին էր, ուստի Մոնթեն ու իր ընկերները որոշեցին այնտեղ կանգ առնել ու նրանց այցելել:

Երբ նրանք, մոտավորապես օգոստոսի 11-ին, ճամբար եկան, կամավորների ղեկավարը՝ Ռայմոնդ Գևորգյան անունով, կազմակերպում էր 30 կամավոր երիտասարդների աշխատանքը: Նրանք՝ մեծ մասը Ֆրանսիայից, մի հին եկեղեցու շուրջն ամրացնում էին քարից ու սամանից շինված մի պատ: Առաջադրանքը համեստ, բայց օգտակար էր, հետևաբար, Գևորգյանի հետ մի քանի բառ փոխանակելուց հետո, Մոնթեն քշեց իր վելվետե շալվարի փողքերն ու սկսեց սայլակով շինանյութ տեղափոխել:

Հաջորդ չորս օրերին նա և Գևորգյանը վաղ էին արթնանում, որպեսզի խառնեին շինանյութը՝ նախքան մյուսները դուրս կգային իրենց վրաններից: Նրանք մի փոսի մեջ ջրիկ ցեխի վրա դարման էին ավելացնում ու մերկ ոտքերով այդ զանգվածը խառնում՝ միաժամանակ գրուցելով: Երբ Մոնթեն նկարագրեց իր՝ կոլտնտեսություն-զորավարժությունների ճամբար ծրագիրը, Գևորգյանին թվաց, թե նա նախապատրաստվում է մի ապագա դերի:

Հաֆթվանի եկեղեցու մոտ ապրում էին մեկ տասնյակից պակաս հայ ընտանիքներ: Նրանք, ինչպես դարեր շարունակ իրենց նախնիները, հող էին մշակում՝ շերտավոր բրդյա շալվար, ոչխարի մորթուց գլխարկ ու երկար փեշ հագած: Մոնթեն այցելեց Իրանի՝ հիմնականում հայաբնակ 20 գյուղ՝ ներառյալ Գյարդաբադը՝ Ուրմիա լճի մոտ, և Փերիան՝ Իսֆահանի մոտ: Նամակներում նա նկարագրում է այդ գյուղերը՝ չթրծված աղյուսից տներով և խոշոր եղջերավոր անասուններով ու ոչխարներով լի բակերով: Պատմում է հայ գյուղացիների հացի փուռերի ու կարագի խնոցիների մասին, և թե ինչպես էին նրանք բուրդ ներկում և գորգ հյուսում: Նա նաև նկարագրում է գյուղական կյանքի անհույս թշվառությունը՝ շրջապատված բնական գեղեցկությամբ, և միապաղաղությունը՝ իբրև աղքատության հետևանք, որ փոշիացնում էր ամեն երևակայություն: «24 գյուղերից միայն երկուսը դպրոց ունեին, — գրում է Մոնթեն, — և միայն ութը՝ էլեկտրականություն»: Նրա համար ցավալի էր իմանալ, որ Փերիայում ու շրջակայքում նախկինում ապրած 20000 հայ գյուղացիներից 12000-ը տեղափոխվել էին Խորհրդային Միություն, իսկ շատ ուրիշները լքել էին իրենց նախնյաց գյուղերը և աշխատանք փնտրելու համար գնացել Իսֆահան ու Թեհրան:

4-5 օր Հաֆթվանում մնալուց հետո ժամանակն էր ճանապարհը շարունակել դեպի հարավ՝ Մահաբադ: Շքախումբն իր գալստյան մասին հայտնեց ապստամբների առաջնորդ Ղանի Բուլուրյանին, որը նոր էր ասպարեզում հայտնվել՝ 28 տարի շահի բանտերից մեկում մնալուց հետո: Այցելուները ներկայացան նաև դոկտոր Աբդուլ Ռահման Ղասեմլուին՝ Իրանում «Քրդական դեմոկրատական կուսակցության» առաջնորդին: Այդ կուսակցությունն ուներ 15000 մարդ ու 11 տանկ. այն Իրանական Քրդստանում ամենահզոր կազմակերպությունն էր: Ղասեմլուի փողկապն ու կոստյումը Մոնթեի վրա տպավորություն չգործեցին, ոչ էլ նրա այն պնդումը, թե քրդերն ասիացիներով շրջապատված «ճշմարիտ եվրոպացիներ» են: Դա նույն՝ վաղուց մոռացված պատմությունն էր, այն պատմությունը, որ Մոնթեն արդեն լսել էր հայերից ու լիբանանցի մարոնիտներից: Վահիկը Ղասեմլուին ասաց, թե իրենք ուզում են մասնակցել կռիվներին, բայց երբ նա ավելացրեց, որ իր ընկերներից մեկը Միացյալ Նահանգներից է, քուրդ առաջնորդի ժպիտն անհետացավ, և նա կարճ կտրեց. «Մենք նոր զինվորների կարիք չունենք»:

Մոնթեին ու իր խմբին ավելի լավ ընդունեց «Քոմալա» կոչվող կազմակերպությունը, որի նպատակն ինքնավարությունն էր Իրանական Քրդստանում: «Քոմալա»-ի առաջնորդը՝ 57-ամյա սունների կրոնագետ շեյխ Եզեդին Հոսեինին, երիտասարդներին հրավիրեց իր հետ նստել գետնին՝ թեյի սկուտեղի շուրջը: Շեյխը ճիշտ ընդհանրացումներ արեց հայ-քրդական հարաբերությունների մասին և առաջարկեց իր հայ եղբայրներին զենք մատակարարել ու մարզել: Մոնթեին դուր եկավ սպիտակ փաթթոցով, եղջյուրե շրջանակով ակնոցով, կանաչ թիկնոցով ու սպիտակող մորուքով այդ շեյխը: Նրան հանդիպելուց հետո տարինոր շարունակ Մոնթեն իր ընկերներին ողջունում էր «թեմմենահ» կոչվող ձևով՝ աջ ձեռքի մատները դիպցնելով ճակատին և ապա ձեռքի բաց ափը դնելով սրտին:

Երկու գիշեր հետո լուր հասավ Քրդստան, որ կռիվ է բռնկվել Թեհրանում: Մոնթեն ու ընկերներն շտապեցին Իրանի մայրաքաղաք՝ միանալու մարտնչող այն կողմին, որն իրենց ավելի «առաջադիմական» կթվար: Երբ նրանք, սակայն, օգոստոսի 17-ին կամ 18-ին Թեհրան հասան, հիասթափությամբ իմացան, որ կռվի մա-

սին լուրերը չափազանցված էին: Իսլամական վարչակարգի «Հեղափոխական պահակազնդի» զինյալներն արդեն ճնշել էին «ձախերի» ցույցերը, և փողոցներում տագնապալի խաղաղություն էր տիրում:

Թեհրան վերադառնալուց քիչ ժամանակ անց «Սիփան» միությունում սկսեցին խոսել ուրիշ կռիվների մասին. Լիբանանում «Փաղանգավորները» նորից իրենց զենքերն ուղղել էին Բուրջ Համուդի դեմ: «Ճանչնալով թե՛ Գուրճ Համուտի պահակները, թե՛ Լիբանանի վիճակը, – հետագայում գրում է Մոնթեն իր «Ինքնաքննադատության» մեջ, – գիտեի, որ բարոյական և քաղաքական թիկունքի պետք ունեին»: Նա որոշեց հնարավորին չափ արագ Բեյրութ վերադառնալ, բայց մինչ այդ իր ընկերների հետ համերաշխության ցույց կազմակերպեց Թեհրանում Լիբանանի հյուպատոսության առջև: Իրանի մայրաքաղաքի դաշնակցական առաջնորդները չողջունեցին ծրագրված ցույցի մասին լուրը: Նրանց բնավ էլ հաճելի չէր, որ մի խելահեղ ամերիկացի տղա հետհեղափոխական Իրանում գրգռում է հայ տաքգլուխ երիտասարդներին: Ցույցի նախորդ գիշերը հայաբնակ թաղամասերում թռուցիկներ տարածվեցին, որոնք մեղադրում էին «արկածախնդիրներին» և զգուշացնում, որ հայերի մեջ ամերիկացի լրտես է հայտնվել: Հաջորդ առավոտյան Մոնթեն վերցրեց մեգաֆոնն ու բարձրացավ փոքր բեռնատարի վրա՝ հյուպատոսության առաջ հավաքված մի քանի հարյուր պատանիների ու երիտասարդների դիմելու համար: Թեև իրանական չափանիշներով դա փոքր ցույց էր, բայց ոգեշունչ էր և հակառակ Իրանի ու Լիբանանի դաշնակցականների կամքին:

Հարավատներին ուղղված մի նամակում Մոնթեն հպանցիկ անդրադարձավ դեպի Քրդստան իր ճամփորդությանն ու Թեհրանում Լիբանանի հյուպատոսության առջև տեղի ունեցած ցույցին: Այդ նամակը վերջնականապես խորտակեց մեր մոր հետևողական հավատը (հակառակ այն հերքող նորանոր փաստերի), թե Մոնթեն շարունակելու է իր կրթությունն ու երևելի գիտնական դառնալու: Նա եզրակացրեց, թե իր շնորհալի, բայց միամիտ տղան ներգրավվել էր մի գործունեության մեջ, որը նրան խաղալիք կդարձներ մոլեռանդների ձեռքին. Նա գլխիվայր ընկել էր «Հայոց քաղաքականության՝ օձերով լի փոսը»: Ուստի մեր մայրն սկսեց նրան աղերսալի նամակներ գրել՝ համոզելով տուն վերադառնալ:

Մոնթեի համար, սակայն, տուն վերադարձ գոյություն չուներ: Նախ, նրա տունը Հայաստանն էր (որտեղ նա երբեք չէր եղել), բացի այդ՝ նրա տունն ամենուրեք էր:

Սեպտեմբերի 16-ին Մոնթեն Թեհրանից մեկնեց Բեյրութ: «Փաղանգավորների» ու հայերի միջև վերջին կռվի հրադադարից 2 օր էր անցել: Օդանավակայանն ու արևմտյան Բեյրութն արևելյան մասից բաժանող «Կանաչ գծի» ուղեկալները նոր էին բացվել: Երբ նա հասավ Բուրջ Համուդ և ճամփորդական պայուսակն ուսից վայր դրեց, զարմանքով իմացավ, որ իր զարմիկ Դավիթն իրենից 2 օր առաջ եկել է Լիբանան: Քաղաքագիտության բնագավառում նոր ստացած աստիճանով և քաղաքացիական պատերազմին անձամբ ականատես լինելու նպատակով գալով Բեյրութ՝ Դավիթն իսկույն, դեռ իր ճամպրուկը չբացած, ստացել էր առաջին դասը: Պնդելով, թե հայերն օգնում են պաղեստինցիներին՝ «Փաղանգավոր» զինյալներն սպանել էին Բուրջ Համուդի հայկական աշխարհազորի 4 անդամների, առևանգել հայ ընտանիքների, խանութներ պայթեցրել և կանանց իրենց մեքենաներից դուրս քաշել՝ ճամփեզրին գնդակահարելու համար: Դարձյալ հայ ղեկավարները «Փաղանգավորների» հետ բանակցություններ էին սկսել՝ նորանոր զիջումներ անելով: Բանակցությունների ավարտին 25 հայ սպանված էին, իսկ նրանց սպանողներն՝ անպատիժ, և Դավիթը զայրույթից վառվում էր:

Հաջորդող դեպքերը միայն հաստատեցին, որ զիջումներն անօգուտ էին: Մի կեսօրի, հրադադարից ոչ շատ անց, հակայամարմին «Փաղանգավոր» Էլիաս Ֆրենսիսը խոշոր քայլերով հասավ Սինն էլ-Ֆիլ մայրուղու մեջտեղը և սկսեց հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղալ «Օդանավի շենքի» բնակիչների հասցեին: Շենքում բնակվող տղամարդիկ աշխատանքի էին, և այնտեղ մնացել էին միայն կանայք երեխաների հետ: Պատշգամբից նայելով՝ 8 ամսական հղի Մանուշակ Ստեփանյանը նկատեց դեպի շենքը շարժվող մի քանի «Փաղանգավորների»: Նա ճանկեց իր ամուսնու «ուզի-Թոքին» և օգնության կանչեց «Արագած ակումբի» աշխարհազորայիններին: Նրանք ուղարկեցին երկու անզեն երիտասարդների, որոնք, գալով ու տեսնելով, որ «Փաղանգավորներն» օդ են կրակում, չգիտեին՝ ինչ անել:

Նրանք թեթևություն զգացին, երբ հայտնվեց շատ գործնականորեն տրամադրված Մոնթեն: Մի ինքնաձիգ լիցքավորելով՝ նա նետվեց դեպի «Օդանավի շենքի» նախասրահում կիսված ավա-

զապարկերի բարիկադը և կրակ բացեց Սինն էլ-Ֆիլ մայրուղու կողմը: Երբ «Փաղանգավորները» նահանջեցին մայրուղու հեռավոր հատվածը՝ պատսպարվելու, Մոնթեն կռացած վազեց դեպի բարիկադի մյուս ծայրն ու նորից կրակեց: Ապա նա նետվեց բարիկադի կենտրոնական մասն ու երկու կարճ կրակահերթ արձակեց այնտեղից: Մայրուղու մյուս կողմում գտնվող «Փաղանգավորների» դիրքից պետք է որ թվար, թե շենքը պաշտպանում է մի ամբողջ պահակախումբ: Մոնթեն մոտ մեկ ժամ շարունակեց իր խորամանկությունը՝ «կապիկի նման աջ ու ձախ ցատկելով», ինչպես հետո պատմում էր Մանուշակը, և «Փաղանգավորներին» հեռու պահելով, մինչև որ եկան շենքի տղամարդիկ ու օգնական ուժեր «Ակումբից»:

Այդ օրվանից «Օդանավի շենքի» կանայք՝ Ղոնուշու Արշոն ու տիկին Մարին՝ հինգերորդ հարկից, Ֆաթթա Մարին՝ վեցերորդ հարկից, և տիկին Ալիսը՝ չորրորդ հարկից, իրենց խելահեղ հայրենակցին վերաբերվում էին երախտագիտությամբ ու մայրական խնամքով: Նա գործել էր վճռականորեն ու սթափ գլխով՝ նրանց պաշտպանելով այն պահին, երբ «Ակումբի» գործիչները, հակառակ թաղամասի պաշտպանները լինելու իրենց մշտական դավազդին, անօգնական էին գտնվել:

Հոկտեմբերի սկզբին Մոնթեն ու նրա զարմիկ Դավիթը «Թրոսյան երկրորդական վարժարանի» մոտ գտնվող հարմարավետ բնակարանից հանեցին իրենց պայուսակներն ու դրանք դրեցին «Օդանավի շենքի» ոնկյունում գտնվող մի կիսաքանդ 6 հարկանի բնակելի կառույցի կեղտոտ հատակին: Հրետանին մեկ տարի առաջ ավերել էր այդ շենքի հարավային կողմը՝ այնտեղ թողնելով միայն բետոնե պատերի, առաստաղների ու հատակների կտորներ, որոնք մետաղյա ծռմռված հիմնակմախքներից կախված էին օդում: Բնակարանի նախկին բնակիչ չիա լիբանանցու անունով դեռ օգտագործված էլեկտրականության հաշիվ էր գալիս (նա այդտեղից վտարվել էր 3 տարի առաջ): Բնակարանում ոչ հոսող ջուր կար, ոչ էլ պատուհաններին՝ ապակիներ: Կոյուղու խողովակները խցանված էին և չբացվեցին նույնիսկ երբ Մոնթեն դինու շշով անխառն քլորաջրածնային թթու լցրեց դրանց մեջ: Ուստի Դավիթն ու նա ստիպված էին միզել շենքի քանդված մասի քարաբեկորների մեջ՝ քայլելով շատ զգույշ, որպեսզի մի երեսուն ելուստից կամ արկի բացած անցքից 6 հարկ վայր չընկնեին:

Շաբաթ և կիրակի օրերին Մոնթեն ու Դավիթն սկսեցին բարձունքից Բեյրութին նայող Ալեյ գյուղի մի ամառանոցում հանդիպել ընկերների մի փոքր խմբի: Նրանք այնտեղ ամենօրյա լարվածությունից հանգստանում էին՝ դիզելային վառարանում շամանակներ բովելով և խոհուն հայրենակիցների հետ քաղաքական հարցեր քննարկելով:

Այնտեղ Մոնթեն ավելի շատ լսում, քան խոսում էր, բայց այդ հանդիպումներն օգնեցին, որ նա ավելի հստակ պատկերացնի առաջիկա պայքարի «նվազագույն նպատակը»: Այժմ Մոնթեն դա կոչում էր «հայրենասիրական ազատագրական պայքար»: Նա երբեք իրականանալի չէր համարում դաշնակցականների «Ազատ, միացյալ և անկախ Հայաստան» կարգախոսը, ինչպես նաև՝ Սևրի պայմանագրի (1920 թ.) երևակայական տողերը, բայց նրա հայացքը միշտ ուղղված էր Թուրքիայի զավթած Արևմտյան Հայաստանին: 1984 թվականի հայտարարությունը կազմվեց նրա մասնակցությամբ, և այն արտացոլում էր Մոնթեի՝ 5 տարի առաջ Ալեյում ձևավորված գաղափարները:

«Որպես նվազագույն պահանջ, մենք հայտարարում ենք, որ յուրաքանչյուր սփյուռքահայ պետք է իրավունք ունենա ազատորեն վերադառնալու Արևմտյան Հայաստան (այսինքն՝ հայերի հայրենիքի այն հատվածները, որոնք հիմա գտնվում են Թուրքական պետության ուղղակի իրավասության ներքո) և այնտեղ հաստատվելու որպես տեղաբնակ՝ լիարժեք, մյուս բնակիչների հետ հավասար քաղաքական, տնտեսական, ազգային ու մարդու իրավունքներով»:

Նույնիսկ այս նվազագույն նպատակին հասնելու միակ հույսը հայերի համար Արևմտյան Հայաստանում իբրև մարտնչող ուժ հանդես գալն էր: Բայց ինչպե՞ս էր հնարավոր մուտք գործել այդ տարածքներ, երբ դրանք վերահսկում էր NATO-ի երկրորդ մեծագույն բանակը: Մինչ Մոնթեն մտածում էր այս բարդ հարցի շուրջը, նա ամեն օր վտանգի էր ենթարկվում՝ նույնիսկ Լիբանանում մի կետից մյուսը հասնելու համար: Ամեն անգամ դեպի Ալեյ կամ արևմտյան Բեյրութ գնալիս «Փաղանգավորների» պահակետն անցնելը կարող էր անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Մոնթեի անձնագրում Իրանի արտոնագրեր կային, իսկ «Փաղանգավորներն» արգահատանքով էին վերաբերվում Թեհրանում Խոմեյնիի վարչակարգին: Անցյալ սեպտեմբերին «Փաղանգավորների» դեմ ցույցին ակտիվորեն մասնակցե-

լուց հետո Մոնթեն վաստակել էր նաև դաշնակցականների թշնամանքը: Նրան «Ակումբում» չէին սպասում. երբ նա այնտեղ որևէ սենյակ էր մտնում, խոսակցությունները դադարում էին, իսկ նախկին ընկերները նրանից հեռու էին մնում: Մի օր, երբ Մոնթեն անցնում էր մարոնիտներով բնակեցված Աշրաֆիե թաղամասով, դիպուկահարի գնդակը սուլելով անցավ նրա կողքով:

Հաջորդ շաբաթների ընթացքում Մոնթեի և տեղական պարագլուխների միջև լարված հարաբերություններն ավելի սրվեցին: 1980 թ. սկզբներին, մի առավոտյան, Բուրջ Համուդի շրջակա՝ արկերի բեկորներից ծակծկված պատերին «Գաղտնի բանակի» գրություններ ու պաստառներ հայտնվեցին: Իսկ մյուս օրը «Թորոսյան երկրորդական վարժարանում», որտեղ Մոնթեն ուսուցիչ էր, ուսանողների նստարաններին մեկը դրել էր «Գաղտնի բանակի» թռուցիկներ: Դրանց հայտնվելն այնտեղ, ուր աշխատում էր Մոնթեն, հաստատեց Բուրջ Համուդի բնակիչների կասկածները, թե նա այդ անդեմ խմբի անդամ է: Մյուս կողմից՝ Մոնթեն հասկացավ, որ «Գաղտնի բանակը» մոտ է գտնվում, և հույս ուներ, թե նրանք շուտով իր հետ կկապվեն:

Տեղացի դաշնակցականների հետ հարաբերությունների վատթարացման հետ փոխվում էր նաև Այնճարի պատկերը: Բնության հովվերգական տեսարանի հետևում թաքնված էր կուսակցական առաջնորդներին ենթակա մի գյուղական գետտո: Այնուամենայնիվ, Մոնթեն շարունակում էր այցելել այդ գյուղում իր ընկերներին՝ անսպասելի հյուր լինելով ու մնալով իրեն ընդունելու պատրաստակամություն հայտնած մարդկանց տանը: Նա այցելում էր նաև Գալրանյանների տունը, թեև այդ ժամանակ Սեղան բացակա էր (նա հաճախում էր Բեյրութի մոտ գտնվող՝ «Աղկանց երկրորդական վարժարան»):

1980 թ. փետրվարի 12-ին Մոնթեն ու Դավիթն Այնճարում, իրենց ընկեր Նազոյի տանը, գարեջուր էին վայելում, երբ 3 դաշնակցական աշխարհազորայիններ ներս մտան: Նրանք մուայլ տեսք ունեին: Մոնթեն հանգիստ լսեց, թե ինչպես նրանցից մեկը՝ Վարդգես անունով մի երիտասարդ, իրեն հրամայեց գյուղից գնալ ու այլևս չվերադառնալ: Դավիթը հենվեց սեղանին ու գոռաց.

. — Գրողի տարած դաշնակներ (Fucking Dashnaks!):

Վարդգեսի ընկերներից մեկը սեղանը հրեց, բայց Մոնթեն, Դավիթին ետ պահելով ու Վարդգեսի աչքերի մեջ նայելով, խաղաղ ձայնով ասաց, որ առավոտյան կհեռանա: Վարդգեսը պնդեց, թե նա պետք է գնա անհապաղ, սակայն Մոնթեն կրկնեց՝ առավոտյան: Վարդգեսը մի պահ հապաղեց, ապա իր զինակիցների հետ գնաց դեպի դուռը: Դրսում գտնվող մյուս զինյալներից մեկն առաջարկեց վերադառնալ Նազոյի տուն և Մոնթեին ու Դավթին հենց այդ երեկոյան Այնճարից վտարել: Վարդգեսը գլուխն օրորեց. դրա կարիքը չկար, որովհետև Մոնթեն խոստացել էր առավոտյան հեռանալ: Թեպետ Մոնթեին համարում էին անախորժությունների պատճառ, գիտեին, որ նա իր խոսքի տերն է լինում:

Փետրվարի 18-ին, Այնճարից վտարվելուց մոտ մեկ շաբաթ անց, Մոնթեն աշխարհազորայինների մի ժողովից վերադարձավ և իր բնակարանի դուռը տեսավ կոտրված ու բաց: Նրա ունեցած քիչ իրերը ցրիվ էին եկած հատակին, և որոշ թղթեր էին բացակայում՝ ներառյալ «Գաղտնի բանակի» համակիրների կողմից Փարիզում հրատարակվող «Հայ պայքար» թերթի մի քանի համար: Բայց ավելի զայրացուցիչ էր այն գրքի ձեռագրի ու նկարազարդումների անհետացումը, որի վրա Մոնթեն ամիսներ շարունակ աշխատել էր: Դա «Թորոսյան վարժարանում» Մոնթեի սաների պատմություններով ու նկարներով մի գիրք էր՝ Բուրջ Համուդում պատերազմի ժամանակ ընթացող կյանքի մասին: Այդ ձեռագիրն այլևս չգտնվեց:

Երբ ես 1980 թ. ապրիլի 4-ին վերադարձա Բեյրութ և ճամպրուկս քարշ տվեցի ջարդված դոնիջ ներս, մտածեցի, թե անապակի պատուհաններից ներս լցվող փոշու հետ, որ ծածկում էր բնակարանի բոլոր մակերեսները, մարդ երբեք չի կարող հաշտվել: Ահա ես դարձյալ այնտեղ էի՝ հերթական փրկիչ առաքելությամբ: Հույս ուներ, որ եթե անդամ չհաջողվի Մոնթեին համոզել Լիբանանից հեռանալ, գոնե կկարողանամ նրան տեղափոխել արևմտյան Բեյրութ՝ «Փաղանգավորներից» ու դաշնակցական պարագլուխներից հեռու:

Երբ պայուսակներս ցած դրեցի, առաջին բաներից մեկը, որ Մոնթեն ինձ ցույց տվեց, խոհանոցն էր: «Մենք վազող ջուր ունենք, — ասաց նա՝ բարձրացնելով մի կապույտ դույլ. — վերցնում ես սա, 6 հարկ ցած վազում, ցիստեռնի մոտ, դույլը լցնում և ապա 6 հարկ վեր վազում: Հասկացա՞ր. «վազող» ջուր»: Հաջորդ լուրը, որ ինձ լրջորեն տագնապ պատճառեց, Մոնթեի ծրագիրն էր՝ ծածուկ լուսանկարել աշխարհազորի պահակակետերը

Բուրջ Համուդում: Այդ նպատակով էր նա ինձ խնդրել բերել 35 միլիմետրանոց ապարատը: Իրեն և որոշ «լավ տղաների» այդ լուսանկարները պետք էին՝ համայնքի դաշնակցական ղեկավարության դեմ հեղաշրջո՛ւմ կազմակերպելու համար:

Հետո մեր զարմիկ Դավիթի ձեռքին մի նիկելապատ .357 Python ատրճանակ նկատեցի: Մոնթեն նույնպես նոր գնումներ էր արել՝ ներառյալ մի «Աֆարով» թեթև գնդացիր, որ Հայրենական մեծ պատերազմի մնացուկ էր: Նա այն պահում էր իր բացվող բազմոցի տակ: Ուներ նաև մի G-3 կիսաավտոմատ հրացան՝ սվինով ու բոցավառվող նռնակներով: Այն կրակում էր .308 NATO թանկարժեք փամփուշտներ, հետևաբար ես կարծիք հայտնեցի, որ գնումը պրակտիկ չէր: Երբ հարցրի, թե ինչո՞ւ էր այդքան փող վատնել հրացանի համար, Մոնթեն բացատրեց, որ G-3-ը թուրքական բանակի սովորական զենքն էր. այն գործածել սովորելը կնշանակեր թշնամուն ավելի լավ ճանաչել: Ես զարմացած նայեցի նրան ու մտքումս ասացի. «Տե՛ր Աստված, այս տղան կարծում է, թե թուրքական բանակի դեմ կռվելու է՝ նախքան նրանք կսկսեն նոր տեսակի հրացան գործածել»:

10 տարի անց գրած «Ինքնաքննադատության» մեջ Մոնթեն Բուրջ Համուդում իր անցկացրած օրերը համարում է «շատ տագնապալի ժամանակաշրջան» և իր համար «հասուննալու կարևոր շրջան»: Որոշ մեկնաբաններ նշել են, թե մարքսիզմը, որի հետևորդ էր Մոնթեն այդ շրջանում դարձել, պարզապես մի «մոդայիկ ժարգոն» էր, որով նա համեմել էր իր ազգայնական հայացքները: Սա իրականությանը չի համապատասխանում: Թեև նա երբեք մարքսիզմը սիստեմատիկ ձևով չուսումնասիրեց, այդ ժամանակ արդեն կարդացել ու գնահատում էր առանձին աշխատություններ. մասնավորապես՝ նա ծանոթ էր Էնգելսի՝ ուտոպիական ու գիտական սոցիալիզմի մասին և Լենինի՝ իմպերիալիզմի մասին ուսմունքներին: Որպես հայոց պատմության ուսանող՝ նա քաջատեղյակ էր բոլոր դարերի ընթացքում դասակարգային պայքարի առանցքային դերին՝ սկսած մ.թ.ա. 590 թ. Ուրարտական թագավորության անկումից մինչև միջին դարերի գյուղացիական ապստամբությունները և ապա՝ Խորհրդային շրջանը: Դիալեկտիկայի տեսությունը նույնպես նրան շատ համոզիչ էր թվում. չէ՞ որ Մոնթեն, ի վերջո, հիացած էր չինական բնափիլիսոփայությամբ և հնդիկ տրամաբան Նագարջունայով: Այս ամենը՝ գումարած նաև նրա որոշ անհանդուրժողականությունը անոտի «Մեծ

Ճշմարտության» հանդեպ, նրան գրավում ու ավելի էին մոտեցնում մարքսիզմին: Մոնթեն այն կարծիքին էր, թե դասակարգային պայքարի առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ ժողովրդի պատմությամբ ու մշակույթով: Հայերի դեպքում խոսք էր գնում ոչ միայն 2000 տարվա պատմության մասին, այլև այն՝ հազարավոր մղոններ ձգվող աշխարհագրական տարածքների, որոնք դարձել էին հայկական սփյուռքի բնակավայրերը: Այսպիսով, Մոնթեն Բուրջ Համուդի հայերին նախ նկարագրում էր իբրև հայ ժողովրդի մաս և հետո միայն՝ իբրև Լիբանանի տասնյակ դավանանքներից ու էթնիկ համայնքներից մեկը:

Այս հարցում մենք տարակարծիք էինք: Մի օր վիճում էինք «Վագրերի» առաջնորդ Դեննի Շամունի մի հայտարարության շուրջը. զայրացած այն բանից, որ հայերը չէին ուզում վճարել «Վագրերին» հասանելիք «հարկերը», նախկին նախագահի որդին բողոքում էր, որ հայերը Լիբանանին ավելի շատ վերաբերվում էին որպես հյուրանոցի, քան իրենց տան: Մոնթեն ու ես այս պնդումը չվիճարկեցինք, բայց դրան տարբեր գնահատականներ տվեցինք: Ես գտնում էի, թե Բուրջ Համուդի խնդիրները ողջ Լիբանանի խնդիրների մաս էին, և թե դրանք պետք է լուծվեին Լիբանանում՝ բոլոր լիբանանաբնակների մասնակցությամբ: Մոնթեն ինձ հետ համամիտ չէր. նրա կարծիքով՝ լիբանանահայերը նախ և առաջ հայեր էին: Նա գովասանքի արժանի էր համարում հայերի ազգային կամակորությունը, որ նրանց համար Լիբանանն առաջնահերթություն չէր:

Այս թեմային տարիներ անց անդրադառնալով՝ Մոնթեն գրեց, որ սփյուռքի հայերը (ներառյալ՝ լիբանանահայերը) պետք է պատրաստ լինեն ի վերջո իրենց հայցեն փոխելու: Նա, չհարկե, ի նկատի ուներ հայերի ապագա վերադարձը Թուրքիայի գրաված հայկական տարածքներ, թեև ես նրան գրգռված հիշեցնում էի, որ լիբանանահայերը կնախընտրեն գնալ ոչ թե իրենց նախնյաց հայրենիքը, այլ Լոս Անջելես: Նրա վրա նման հիշեցումները երբեք չէին ներգործում. նա ինքն իրեն համոզել էր, թե հնարավորության դեպքում շատ սփյուռքահայեր կփոխեն իրենց արևմտյան կողմնորոշումը և կվերադառնան Հայաստան:

Ի լրումն «հայցեն փոխելու» և պատմական Հայաստան վերադառնալու գաղափարին, ես շուտով նաև պարզեցի, որ Մոնթեն ներգրավվել է լիբանանյան քաղաքականության մեջ, այն էլ՝ խիստ անհանգստացնող եղանակով: Սկզբում ինձ թվում էր, թե

նրա սառնարանում կանաչ լոբու և ոչխարի պանրի հետևում թաքցված տարատեսակ պայթուցիկները (անծուխ վառոդ, տասնյակ պատիճ-դետոնատորներ, 15 կիլոգրամ «ցեխանման» դինամիտ) նախատեսված են ապագա անիրական պայքարի համար: Շուտով, սակայն, սկսեցի կասկածել, թե ապագայի պայքարի վերաբերյալ խոսակցությունը միաժամանակ ռազմական խորամանկություն էր՝ քողարկելու համար ավելի մութ ծրագրեր: Երբ հետաքրքրասիրությունը հաղթեց զգուշավորությանը, ես Մոնթեին հայտնեցի իմ կասկածներն ու զղջացի դրա համար: Նա անփութորեն բացատրեց, թե ինքն ու մի քանի «լավ տղաներ» հանդիպում էին մի պաղեստինցու հետ, որը նրանց պայթուցիկ օգտագործելու խորհուրդներ էր տալիս և առաջարկում նաև այլ օգնություն՝ թիկունքում «աջ» աշխարհազորայինների դեմ կռվելու համար: Աբու Նաբիլ անունով այդ պաղեստինցին՝ «Ֆաթահի» մի ցածրաստիճան անդամ, նաև փող էր առաջարկել, ինչից Մոնթեն հրաժարվել էր՝ շեշտելով, թե ինքն ուներ զուտ հայրենասիրական մղումներ. Թել Ավիվն Անկարայի ստրատեգիական դաշնակիցն էր, իսկ Կամիլ Շամունը՝ Թել Ավիվի գործակիցը Լիբանանում, հայտնի էր իբրև պաղեստինցիների ու հայերի թշնամի:

Մոնթեն և իր նոր կողմնակիցներից մեկը Մարտի 12-ի գիշերն անցկացրին Բուրջ Համուդից ոչ հեռու գտնվող մի ավտոկանգառում՝ պայթուցիկներով մի «Ֆոլքսվագեն» բեռնելով: Հաջորդ օրը Մոնթեն մեքենան կանգնեցրեց Դորա-Ջունիե մայրուղու ճամփեզրին: Հեռակառավարվող պայթուցիչով պառկած սպասելով մինչև որ Շամունի ավտոշարասյունը մոտենա, նա ռումբը պայթեցրեց: Պայթյունից ճանապարհի վրա մի մեծ փոս գոյացավ, Range Rover-ներն այս ու այն կողմ թռան, և սպանվեց Շամունի թիկնապահներից մեկը: Մոնթեն հույս ուներ վերացնել Շամունին ու «Վագրերին» ներքաշել նրանց ենթադրյալ թշնամիների՝ «Փաղանգավորների» դեմ կռվի մեջ: Այդպես «աջերը» մեր համակրած «հայրենասիրական ուժերի»՝ «ձախերի» համեմատ կթուլանային: Շամունը, սակայն, ծխի միջից դուրս եկավ միայն թեթև վնասվածքներով: Թեև նա պայթյունի համար հրապարակավ մեղադրեց պաղեստինցիներին, իրականում, հավանաբար, կասկածեց իր մրցակիցների՝ «Փաղանգավորների» վրա: Եթե այդպես է, ուրեմն այդ կասկածը բոլորովին անհիմն չէր. հաջորդ տարվա ընթացքում «Փաղանգավորները» հարյուրավոր «Վագրերի» սպանեցին

և այդպիսով բացահայտորեն հանդես եկան որպես Շամունի բազմաթիվ թշնամիներից վատթարագույնը:

— Ի՞նչ, — սարսափեցի ես, երբ Մոնթեն ինձ տեղեկացրեց իր վերջին արարքի մասին:

Ես նրան ասացի, որ նման գործունեությանը պետք է իսկույն վերջ տալ: Խանութպաններից անցյալ տարի դրամ կորզելը մի բան էր, իսկ անողոք հրամանատարի վրա պայթուցիկով բեռնված մեքենայով մահափորձ անելը՝ բոլորովին ուրիշ: Այդ մարդն ամենուրեք լրտեսներ ուներ, և վտանգի էր ենթարկվում ոչ միայն Մոնթեն, այլև նրա հետ շփվող յուրաքանչյուր ոք:

Ես աչքերս փակեցի ու պատկերացրի, թե ինչ ահավոր կլիներ իմ սիրելի հորաքույր Վիկիին հայտնել, թե իր որդի Դավիթը մահացել է՝ լիբանանյան բանտում՝ կոտանքների ենթարկվելով: «Փաղանգավորների» ու Շամունի հրոսակախմբի սպառնալիքի տակ ապրելն այդ երկու տղաներին խելագար էր դարձրել: Հաջորդ օրերին ես վաղ էի արթնանում ու տաքսիով գնում արևմտյան Բեյրութ՝ հարմար աշխատանքներ ու բնակարան փնտրելու: Իմ ծրագիրն էր՝ որևէ կերպ նրանց տեղափոխել այնտեղ:

Ես նաև ուզեցի ավելի ուշադիր լինել ու աչքս իմ եղբոր վրա պահել: Մի օր, մայիսի սկզբին, Դավիթն ու ես հետևում էինք Մոնթեին դեպի մի ընկերոջ տուն Նաբաայում: Ճանապարհին Մոնթեն բացատրեց, թե հանդիպելու էինք մեկին, ով ուզում էր մեզ հետ «հեղափոխական գաղափարներ» քննարկել: Երբ տեղ հասանք, մեր ընկերոջ մայրը մեզ ներկայացրեց մի ջղուտ մարդու, որը, հյուրասենյակում նստած, Winston էր ծխում: Նա մուգ լայն շալվար էր հագել և երկար թևքերով մի տեսակ վերնաշապիկ, որի վերևի կոճակներն արձակված չին: Նա ընդմիջման դուրս եկած բանուորական տեսք ուներ: Տանտիրուհին ասաց, թե նրա անունը Մինաս Օհանյան է: Երբ այդ մարդը վեր կացավ ու մեր ձեռքը սեղմելու համար ընդառաջ եկավ, նրա գագաթը գրեթե իմ ուսից էր, իսկ երբ նստեց ու ժպտաց, երևացին նրա վատ ատամները: Դժվար էր դուշակել Օհանյանի տարիքը. նա հիվանդոտ, ջրծաղիկի հետքերով ծածկված դեմք ուներ, ցածր, ճղճղան ձայն և մի սև մազափունջ: Նա իրեն ներկայացրեց որպես ոդանավի մեխանիկ ու «գիժ հեղափոխական»:

— Գի՞ժ, — մեկը հարցրեց:

— Բոլոր հեղափոխականները գժեր են, — պատասխանեց նա՝ որպես արևելյան տիպի մի ընդհանրացում՝ «սև կինոյի» թոկից փախած հերոսի ոճով:

— Ես այդ կարծիքին չեմ, — պատասխանեց Մոնթեն, — հեղափոխականներն ամենևին էլ գժեր չեն:

Մենք սկսեցինք դղումի կորիզ ծամել, իսկ Մոնթեն, ասես հիշողության մեջ պահած մի հարցացուցակից, սկսեց Օհանյանին հարցեր տալ: Նա ուզում էր քննարկել ազգային հարցը, Խորհրդային Հայաստանի ու Իրանի հետ կապված խնդիրներ: Նա նաև անդրադարձավ 1980 թ. ապրիլի 6-ի մամլո ասուլիսին՝ Սիդոնում, որի ժամանակ «Գաղտնի բանակի» և Աբդուլլահ Օջալանի նորաստեղծ «Քրդստանի աշխատավորների կուսակցության» դիմակավորված ներկայացուցիչները խոստացել էին համատեղ կռվել Անկարայի դեմ: Մեր նոր ծանոթին, սակայն, նման գեոպոլիտիկ հարցեր ու հայ-քրդական համագործակցությունը քիչ էին հետաքրքրում, և ես նրանից նաև չլսեցի «հեղափոխական գաղափարներ»:

Մոտ մեկ ժամ հետո, երբ մոխրամանները լցված էին դղմի կորիզի կճեպներով, և Մոնթեն ավարտել էր իր հարցերը, Օհանյանը հետ ընկավ աթոռի թիկնակին ու ասաց, որ կուզեր խոսակցությունը շարունակել այլ տեղում: Մենք վեր կացանք՝ գնալու, իսկ նա մի սրախոսություն արեց, որը չեմ հիշում, և ծուռ ժպտաց՝ ատամները նորից ցուցադրելով: Թվում էր՝ դրանց երկարության կեսը տաշվել էր, և ապա մնացած կտորներն իրար էին ձուլվել դարչնագույն զանգվածով: Դժվար էր որոշել՝ որտեղ էին լնդերն ավարտվում և ատամներն սկսվում:

Բնակարան վերադառնալիս Մոնթեն լուռ էր: Նա հավանաբար կասկածել էր, որ այդ տարօրինակ մարդը «Գաղտնի բանակի» անդամներ հավաքագրող էր, և որ տեղի ունեցած խոսակցությունն «աշխատանքի ընդունվելու» հարցազրույցի նման մի բան էր: Ես այդ պահին դեռ չգիտեի, բայց հետո իմացա, որ Մոնթեն և Օհանյանն արդեն պայմանավորվել էին հաջորդ հանդիպման համար:

Երկու օր անց մենք Օհանյանի կանաչադեղնավուն BMW-ով գնում էինք դեպի ծովափ՝ Բուրջ Համուդի մոտ գտնվող մի կիսավեր գազակայան: Մենք նստել էինք խողովակներին, գազի մի կլորավուն բաքի կողքը, որը տարիներ առաջ արկի հարվածից գետին էր ընկել հսկայական դղումի նման: Խողովակների ու կափույրների այդ կծիկը, ճզմված բաքի հետ, ալեկոծ ծովի ափին, հիշեցնում էր Հիերոնիմոս Բոսխի «Դժոխքի» նման մի տեսարան, իսկ մեր հյուրընկալ Մինաս Օհանյանը՝ թևքերը քշտած «սաֆարի» բաճկոնով, այդ դժոխքի բնակիչներից էր: Ցերեկային լույսի տակ նրա ատամներն ավելի զարհուրելի էին թվում:

Այժմ հարցեր տալու նրա հերթն էր:

— Մրն է քո կյանքի նպատակը, — հարցրեց Օհանյանը:

Մոնթեն հանգիստ, ցածր ձայնով պատասխանեց, որ ուզում էր ամեն ինչ անել՝ Թուրքիայի գրված հայկական տարածքներն ազատագրելու համար: Նրանք այս թեմայով մի քիչ էլ խոսեցին, ապա մեր հյուրընկալը հարցազրույցը եզրափակեց մեկ ուրիշ սրախոսությամբ, որը նույնպես չեմ հիշում: Նա իր մեքենայով մեզ հետ տարավ դեպի Նաբաա և իջեցրեց Սինն էլ-Ֆիլ մայրուղու մոտ:

Մի քանի օր հետո Մոնթեն շտապեց մեկ ուրիշ հանդիպման, այս անգամ՝ առանց Դավիթի ու ինձ: Երբ Օհանյանն ու Մոնթեն մյմյանց ողջունեցին արևմտյան Բեյրութում, փարոսի մոտ, մի լիբիացի երիտասարդ նրանց ձերբակալեց ու տարավ այդ շրջանի՝ Պաղեստինի անվտանգության ծառայողի մոտ: Հազիվ թե այդ լիբիացու մտքով անցներ, որ կալանավորել է գնդապետ Կադաֆիի ընկերոջը: Հայտնաբերելով Մոնթեի ամերիկյան անձնագիրը՝ անվտանգության ծառայողը հաղթական տեսքով հեռաձայնեց Ալրաֆաթին ու հայտնեց, որ ամերիկյան լրտեսի է ձերբակալել: Ալրաֆաթը կարճ կտրեց.

— Ինչո՞ւ, երբ դու ինձ ամեն անգամ զանգում ես, հերթական պատմությունն ես պատմում ինչ-որ լրտեսի մասին:

Մինչ Օհանյանը շփոթված ժպիտով լսում էր, Ալրաֆաթը ապային հրամայեց կասկածյալներին անհապաղ ազատ արձակել:

Հանդիպումն այդ օրը հաջող չէր, բայց, այնուամենայնիվ, Մոնթեն հասցրել էր Օհանյանին ասել, թե ուզում է միանալ «Գաղտնի բանակին» և պատրաստ է իր ողջ ժամանակը նվիրել այդ գործին:

Ալեքն արդեն Օհանյանին հանդիպել էր ամիսներ առաջ, և նա նույնպես մտածում էր «Գաղտնի բանակին» միանալու մասին: Թեև նրան հայտնի չէին Մոնթեի կապերն Աբու Նաբիլի հետ և նրա մասնակցությունը Շամունի մահափորձին, Ալեքը եզրակացրել էր, թե Մոնթեի կյանքը Բուրջ Համուդում մեծ վտանգի տակ է: Նա գիտեր, որ դաշնակցականները մտել էին Մոնթեի բնակա-

րան ու նրան վտարել Այնճարից, և նա լսել էր Աշրաֆիեում Մոնթեի կողքով անցած՝ դիպուկահարի գնդակի մասին:

Օհանյանի հետ արևմտյան Բեյրութում չարաբաստիկ հանդիպումից երկու երեկո անց մեր դռան առջև հայտնվեց միջնակարգ դպրոցի բարձր դասարանի մի աշակերտուհի՝ շնչակտուր և աչքերը լայն բացած: Մենք պետք է շուտ հեռանանք Բուրջ Համուդից, ասաց նա, որովհետև իրենց լուր է հասել, թե դաշնակցական զինյալները կոտրելու են մեր դուռը, հավանաբար՝ հենց այդ երեկո, որպեսզի մեզ սպանեն: Երբ նա հեռացավ, Մոնթեն իր ատրճանակը լիցքավորեց:

Դրանից մեկ շաբաթ առաջ, ինչպես պարզվեց, նա վերջապես համարձակություն էր ունեցել Սեդայի հետ հանդիպելու համար պայմանավորվել՝ հենց այդ երեկո: Առաջարկը Սեդային զարմացրել էր. մինչ այդ նա Մոնթեին համարել էր միայն ընկեր և ուսուցիչ՝ առանց ռոմանտիկ նկրտումների: Մոնթեն պետք է նրա հետևից գնար «Օդանավի շենք»՝ Ստեփանյանների բնակարան: Երբ պայմանավորված ժամն անցավ, Սեդան սկսեց անհանգստանալ: Նրա ավագ քույրերից մեկն իրեն զգուշացրել էր, թե ամերիկացիները նույնքան փոփոխական են, որքան ամերիկուհիները՝ թեթևամիտ: Բայց Սեդան չէր ուզում հավատալ, որ իր հանդեպ Ն՝ոնթեի ուշադրությունն անցողիկ էր...

Այդ երեկո Մոնթեն, Դավիթը և ես մեր իրերը կապեցինք: Դավիթը գիշերեց ներքևի հարկի մի բնակարանում, իսկ ես ու եղբայրս տեղից չշարժվեցինք, որպեսզի ավելորդ կասկածների առիթ չտանք: Մոնթեն միջանցքում անքուն գիշեր անցկացրեց՝ ձեռքում ատրճանակը սեղմած, իսկ ես պառկած էի նրանից մի քանի ոտնաչափ այն կողմ՝ բարձիս տակ ատրճանակ և վերմակիս տակ նռնակ թաքցրած: Այդուհանդերձ, որոշ թեթևություն էի զգում, որ եղբորս՝ մեքենա պայթեցնողի գործունեությունն այդպիսով ավարտվում էր, և մենք շուտով գնալու էինք արևմտյան Բեյրութ:

1980 թ. մայիսի 25-ին, առավոտյան ժամը 6-ին, ես ու Մոնթեն, իրարից երկու շենք հեռավորությամբ, քայլում էինք սալաքարերի վրայով, փակ խանութների կողքով՝ դեպի Բուրջ Համուդը Բեյրութի մնացած մասին կապող կամուրջը: Իրար հանդիպելով գետի արևմտյան ափին, տաքսու կանգառում, մենք քաղաքի և հյուրընկալ Բուրջ Համուդին հրաժեշտ տվեցինք: Մի քանի ր-

պեից Ալեքն իր սպիտակ «Գեժո»-ով մեզ վերցրեց, և մենք շարժվեցինք դեպի արևմտյան Բեյրութ:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ. «ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԸ»

Գլուխ 7. Ընդհատակում

Երբ մենք խցկվեցինք «Ֆեժո»-ի մեջ, ես կողքից նայեցի Ալեքին: Նա հաճելի տեսքով երիտասարդ էր՝ ճակատի վրա լուսնաձև մազափնջով: Նա ժպտալով նայեց ինձ, և աչքերն ըմբռնումով փայլեցին: Բոլորս լուռ էինք: Ալեքը մեքենան վարեց արկերի բեկորներով ծածկված Կորնիշ-էլ-Նահրով՝ անցնելով ավազապարկերով շրջապատված թանգարանի, «Կանաչ դոտու» և Աբդուլ Նասեր մզկիթի մինարեթի վրա ծածանվող սև դրոշի մոտով: Մի նեղ փողոց մեզ տարավ Բեյրութի Ֆախանի թշվառ ետնախորշը՝ խարամաբետոնե մի լաբիրինթոս: Մոտենալով «Փաղանգավորների» խորհրդանիշով մի պատի, որի վրա ներկ փչելով արաբերեն գրել էին՝ «Միզել այստեղ», մենք մեր պայուսակները դուրս քաշեցինք ու հատեցինք հրշեջ կայանի դիմաց գտնվող փողոցը: Ալեքը խոնավ նախասրահի մուտքի մոտ կանգնած պահակներին գլխով արեց, և մենք 6 հարկ վեր վազեցինք՝ երկուական աստիճան ցատկելով, և շնչակտուր հայտնվեցինք մի դռան առաջ, որի բարավորին կապույտ աչքով 2 պիտակ էր սոսնձված՝ «չար աչքը» տնից հեռու վանելու համար: Դռան հետևի նեղ միջանցքը տանում էր դրեթե դատարկ մի սենյակ, որի մեջ միայն մի քանի կտոր կահույք կար, այստեղ-այնտեղ դրված հրազեն և պատին՝ «Գաղտնի բանակի» նահատակների շրջանակված նկարներ: Դրանցից մեկից ռետինե կմախք էր կախված: Մի ծանր կապույտ դուռ տանում էր խոհանոցից այն կողմ գտնվող մի ուրիշ սենյակ: Այս բնակարանը մենք կոչեցինք «Ցոթերորդ հարկ»:

Մի քանի բոպեից դռան մեջ հայտնվեց Մինաս Օհանյանը՝ թեի տակ պայուսակ և ծուռ ժպիտի մեջտեղում՝ Winston գլանակ: Նա մեզ ողջունեց առանց գլանակը հանելու, կատակեց, բացեց խոհանոցից այն կողմ գտնվող կապույտ դուռը և անհետացավ մի գրասեղանի հետևում, որի վրա կային տարբեր գույների անձնագրեր, կնիքներ և պաշտոնական թվացող փաստաթղթեր՝ դասավորված ըստ լեզուների: Գրասենյակն ուշադիր տնտղելուց հետո Օհանյանը հեռացավ:

Երբ նրա Winston-ի ծուխը բարձրանալով կորացավ, հարցական նշան դարձավ ու անհետացավ, ես հանկարծ գլխի ընկա, որ «Ցոթերորդ հարկը» սոսկ ապահով տեղ չէր, ինչպես մենք սկզբում

1. 1966 թ. հունիս. Մոնթեն հանդես է գալիս բեյսբոլի «Փոքր լիգայի» «Արջեր» թիմում (Մելքոնյան ընտանիքի լուսանկարներից):

2. 1969 թ. դեկտեմբեր. ձախից աջ՝ Մարգարը (13 տարեկան), Մոնթեն (12 տարեկան), մի սայլապան իր իշուկով, Մայլեն (14 տարեկան) և Մարսիան (10 տարեկան) (Կաստելիոն, Իսպանիա. Մելքոնյան ընտանիքի լուսանկարներից):



3. 1978 թ. աշուն. հայ աշխարհազորայիններն «Օդանավի շենքի» առաջ: Նրանց գլխավերևում օդանավի ոճավոր քանդակն է: Մոնթեն վերևի շարքում է, ձախում՝ «մեքսիկական» վերնաշապիկով (Բեյրութ, Լիբանան. լուսանկարը տրամադրել է Խաժակ Հակոբյանը):

4. 1978 թ. աշուն. Բուրջ Համուդի բարիկադների հետևում (Բեյրութ, Լիբանան. լուսանկարը տրամադրել է Խաժակ Հակոբյանը):

5. 24 մարտի, 1979 թ. ձախից աջ՝ Մարգարն ու Մոնթեն մի ընկերոջ տանը Բուրջ Համուդում: Մոնթեի վայրի տեսքը և դատարկ շշերը կարող են տպավորություն ստեղծել, թե նա չափից ավելի օղի է խմել: Իրականում Մոնթեն նոր էր եկել ճաշելու, երբ տանտերը նրանց լուսանկարեց (Բեյրութ, Լիբանան. լուսանկարիչ՝ Դանիել Մածունյան):

6. 1979 թ. օգոստոս. Մոնթեն՝ աջում, սայլակ շինանյութ է տեղափոխ «Երկիր և մշակույթ» կազմակերպության ճամբարում (Հաֆթվան, Իրան. Մելքոնյան ընտանիքի լուսանկարներից):

7. 13 սեպտեմբերի, 1991 թ.. Մոնթեն՝ վերևի շարքի մեջտեղում, իր զինակիցների հետ (Կարաչինար գյուղ, Շահումյանի շրջան. լուսանկարիչ՝ Միրիամ Գոմ):

8. 14 սեպտեմբերի, 1991 թ.. «Ավոն» մարտից հետո ննջում է (Բուգլուխ գյուղ, Շահումյանի շրջան. լուսանկարիչ՝ Միրիամ Գոմ):

9. 1992 թ. հոկտեմբեր. գնդապետ Հարությանը և Մոնթեն (Մուշկապատ գյուղ, Արցախ. լուսանկարիչ՝ Սեդա Գալստյան-Մելքոնյան):

10. 1992 թ. հոկտեմբեր. Սեդան և Մոնթեն (Մուշկապատ գյուղ, Արցախ. լուսանկարը տրամադրել է Սեդա Գալստյան-Մելքոնյանը):

11. 1992 թ. նոյեմբեր. Մոնթեն Մաշտոցի պողոտայի վրա գտնվող հանրակացարանում տաքացնում է ձեռքերը (Երևան, Հայաստան. լուսանկարիչ՝ Սեդա Գպրանյան-Մելքոնյան):

12. 1993 թ. հունվար. ձախից աջ՝ հրամանատար Ավոն, Սարիբեկ Մարտիրոսյանը և Կոմիտաս Ավանեսյանը դիպուկահարի հրացան են փորձարկում (լուսանկարիչ՝ Մաքս Սվազլյան):

13. 19 հունիսի, 1993 թ.. Մոնթեի հուղարկավորության թափորը Հանրապետության հրապարակում (Երևան, Հայաստան. «Մոնթե Մելքոնյան հիմնադրամի» լուսանկարներից):

ենթադրում էինք, այլ՝ «Գաղտնի բանակի» շտաբի նման մի բան: Իսկ առավել հիասթափեցնող էր, որ Օհանյանը՝ այդ կատակասեր մարդը, որն, անկասկած, ռետինե կմախքը լուսանկարից կախելու հեղինակն էր, պարզապես ցածրաստիճան ծառայող չէր. նա մեկ ամիս առաջ Սիդոնում տեղի ունեցած՝ «Գաղտնի բանակի» և «Քրդստանի աշխատավորների կուսակցության» համատեղ մամլո ասուլիսի ժամանակ հանդես եկած դիմակավորներից մեկն էր՝ նիհարավունը, որն ինքն իրեն ներկայացրել էր որպես Հակոբ Հակոբյան: Նա էր «Գաղտնի բանակը»:

Հակոբյանի իսկական անունը, ավելի ճիշտ՝ առաջին անունը Հարությունն Թագուշյան էր: Նա ծնվել էր 1940-ական թվականների վերջին Իրաքի Մոսուլ քաղաքում և Մկրտիչ ու Սիրանուշ Թագուշյանների՝ առնվազն երեք երեխաներից մեկն էր: Ըստ «Գաղտնի բանակի» վարքագիրների՝ 15 տարեկանում տղան փախել էր տնից և 16 տարեկանում միացել պաղեստինյան՝ «Աբթալ ալ-Աուդա» («Վերադարձի հերոսներ») կոչվող փոքր խմբին: Այն շուտով միացել էր դոկտոր Ջորջ Հաբաշի «Արաբների ազգայնական շարժմանն» ու մեկ-երկու ավելի փոքր խմբերի և կազմել «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատը» (ՊԱԺՃ - PFLP):

Այդ կազմակերպության հետ կապվելով՝ պատանի Հարությունը դասեր էր առել իր համար ամենակարևոր ուսուցչից՝ Վադի Հադդադից: «Ահաբեկչության հանճար» Հադդադը 1968 թ. հունիսին հիմնեց ՊԱԺՃ-ի մի «Արտասահմանում գործող ենթախումբ»՝ իր առաջնորդությամբ: Պատերին օդանավերի չվացուցակներ կպցրած՝ արտաքնոցի չափ իր գրասենյակից նա ամենայն մանրակրկիտությամբ կազմակերպեց 1969 թ. հարձակումը Ցյուրիխի օդանավակայանի վրա, ապա՝ 1970 թ. սեպտեմբերին, օդանավի առևանգումը Հորդանանի՝ «Դոուսոնի օդանավակայանից» (Dawson's Airfield) և այլ համանման գործողություններ: Հարությունը միշտ նրա կողքին էր՝ սիֆոնի նման բոլոր դասերը կլանելով:

Երբ 1970 թ. Հուսեյն թագավորը պաղեստինցիներին կոտորեց ու վտարեց Հորդանանից, Հադդադն ու իր աշակերտը տեղափոխվեցին Լիբանան: Շուտով աշակերտը դարձավ Հադդադի «աջ ձեռքերից» մեկը և մասնակցեց մի քանի զինյալ գործողությունների՝ ներառյալ օդանավի առևանգումն Աթենքի օդանավակայանից և 1974 թ. փետրվարի 6-ին Ճապոնիայի դեսպանատան

գրավումը Քուվեյթում: Այդ ժամանակ նրան ճանաչում էին «Մոջահեդ» («Սրբազան զինվոր») անունով: Նրա նոր ծանոթների շարքում էին «Ժողովրդական ճակատի» գրոհային Լեյլա Խալեդը, ճապոնական «Կարմիր բանակի» առաջնորդ Ֆուրայա Ցուկատան և կլոր դեմքով երիտասարդ վենեսուելացի Իլյիչ Սանչես Ռամիրեսը, որն ավելի հայտնի էր «Կարլոս» մականունով:

1970-ական թվականների սկզբին ՊԱԺԾ-ը դատապարտեց օդանավերի առևանգումը և Հաղդադի «Արտասահմանում գործող ենթախումբն» ապօրինի հայտարարեց: Հաղդադի խումբն իր գործունեությունն անկախորեն շարունակեց մինչև 1974 թ., երբ ներքին տարաձայնությունների պատճառով այն ի վերջո քայքայվեց:

Մոտավորապես այդ ժամանակ տարիքն առած Ցանիգյանը Սանտա Բարբարայում սպանեց երկու թուրքի: Աբու Իյադը՝ «Ֆաթահ» պարտիզանական շարժման հիմնադիրներից մեկը, Հակոբյանին հարցրեց, թե ինչո՞ւ դեռևս ոչ ոք չէր հիմնել հայերի մի խմբավորում, որը նման կլիներ իր պաղեստինյան «Սև սեպտեմբերին»:

Պաղեստինցիները Լիբանանում դաշնակիցներ էին փնտրում, սակայն, բայց այս անձնական հետաքրքրությունից, Աբու Իյադը և ուրիշ պաղեստինյան առաջնորդներ անկեղծորեն իրենց հայերի բարեկամ էին համարում. երկու ժողովուրդներն էլ տուժել էին օսմանյան Թուրքերից, և երկուսն էլ 20-րդ դարում տեղահանվել էին իրենց հայրենիքներից:

Մոնթեն հետագայում ասում էր, թե Հակոբյանն Աբու Իյադի առաջարկն ընդունել էր՝ փողի և իշխանության իր մարմաջը բավարարելու համար: Քանի որ Հակոբյանը կրթություն ու մասնագիտական կարողություններ գրեթե չուներ, Բեյրութում իր անձնական «հեղափոխական շարժման» գրասենյակն ունենալը նրան հարստության ու բարձր դիրքի հասնելու լավագույն ճանապարհը թվաց: Այս բացատրությունն, այնուամենայնիվ, հաշվի չի առնում հետևյալ հանգամանքը. Հակոբյանի՝ նույնքան չկրթված ու պակաս ճարպիկ չատ ժամանակակիցներ հաջողության հասան այնպիսի բնագավառներում, որոնք անհամեմատ ավելի հեշտ էին, ապահով ու շահութաբեր, քան նրա ընտրած ուղին:

Հակոբյանի առաջին խնդիրը սփյուռքահայության հետ կապեր հաստատելն էր, որպեսզի հովանավորներ գտնի՝ իր խմբավորման «զինված քարոզչությունն» իրականացնելու համար: Նա աջակցություն խնդրեց Լիբանանի դաշնակցական առաջնորդներից՝ իրաքյան արաբերենի, պաղեստինյան խոսվածքի ու կոտրատված հայերենի մի խառնուրդով նրանց ներկայացնելով իր նպատակը (նա Մոսուլում տարրական հայկական դպրոց էր հաճախել, բայց չօգտագործելու հետևանքով լեզուն բավական մոռացել էր): Առաջնորդները նրա առաջարկն ընդունել էին նույնպիսի զուսպ ոգևորությամբ, ինչպես որ վերաբերվեցին Մոնթեի «կոլտնտեսության» գաղափարին, և Հակոբյանն իսկույն հասկացավ իր՝ նման փորձերի ունայնությունը:

Միջնակարգ դպրոցը թողած Հակոբյանը խորապես հարգում էր «մտավորականներին», բայց այդ զգացումը նաև ճնշում էր նրան: Երբ նա հայտնվեց կրթված ու իրենց մտքերը հստակ արտահայտող արաբ աշխարհազորայինների շրջապատում, այդ ճնշվածությունը աստիճանաբար: Միգուցե դա էր պատճառը, այլև՝ հովանավորների հետ կապվելու անհրաժեշտությունը, որ նա մոտեցավ միջին տարիքի արձակագիր, գրախանութի տեր և խիստ ազգայնական Գևորգ Աճեմյանին: Մարդկանց արագ ճանաչելու խորհրդավոր կարողությամբ օժտված Հակոբյանն անմիջապես զգաց, որ Գևորգ Աճեմյանը հուշակի էր ձգտում: Աճեմյանն, իր հերթին, Հակոբյանի մեջ տեսավ գործի մարդու, որ կարող էր գաղափարներ (տվյալ դեպքում՝ Աճեմյանի գաղափարները) իրագործել:

Նրանք տեղացի մեկ-երկու գործարարի համոզեցին խմբավորման համար նախնական գումարներ հատկացնել: Այժմ, երբ «գործի մարդն» ու «մտավորականը» հովանավորներ ունեին, մնում էր շարքային զինվորներ գտնել: Աճեմյանը Հակոբյանին ծանոթացրեց մի քանի պատանիների հետ, որոնցից մեկն էր տասնվեցամյա բարձրահասակ, համակրելի, բայց գունատ Հակոբ Դարակճյանը: Իրենց առաջին հանդիպումից կարճ ժամանակ անց Հակոբյանն ու Դարակճյանը կատարեցին խմբավորման «հիմնադիր» զինյալ գործողությունը՝ 1975 թ. հունվարի 20-ին Բեյրութում պայթեցնելով «եկեղեցիների համաշխարհային խորհրդի» գրասենյակները: Նրանք փորձեցին մի հաղորդագրությամբ արդարացնել այդ տարօրինակ հարձակումը. նպաստելով Մերձավոր Արևելքից հայերի արտագաղթին, իսկ Արևմուտքում՝ նրանց ձուլմանը՝ «խորհուրդը» մասնակցում էր այն «սպիտակ ցեղասպանությանը», որը կործանելու էր սփյուռքի ամենահին և ուժեղ հայկական համայնքները:

Սկզբում Հակոբյանը մտածում էր ահաբեկչության համար պատասխանատու խմբավորումը կոչել «Գուրգեն Յանիգյան», բայց հետո նախընտրեց ավելի հնչեղ ու առեղծվածային «Գաղտնի բանակը»: Հաջորդ չորս հարձակումները՝ բոլորը Բեյրութում, Թուրքական պետական ու մասնավոր շահերի դեմ, իրականացվեցին «Հայկական գաղտնի բանակ» (ՀԳԲ - ASA) անվան տակ: Շուտով, սակայն, Աճեմյանը Հակոբյանին համոզեց խմբավորման անվան մեջ լրացում անել՝ Թուրքիայի հայկական տարածքներն ազատագրելու նպատակը շեշտելու համար: Հետևաբար, 1975 թ. օգոստոսի 7-ի պայթյունից ի վեր (Բեյրութում պայթեցվեց Թուրքիայի դեսպանատան երկրորդ քարտուղարի մեքենան), հաղորդագրությունների տակ ստորագրվում էր «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» (ASALA). այսպես Աճեմյանն ու Հակոբյանը կարողացան մեկ վերնագրի մեջ զուգակցել ճոռոմությունն ու ավելորդաբանությունը:

«Գաղտնի բանակի» գինյալ գործողությունների մասին լուրերը հուզմունքով լցրին Բուրջ Համուդի պատանիների ու երիտասարդների որտերը: Օրորոցից սկսած՝ նրանք հայրենասիրական բալլադներ էին լսել, մինչդեռ Լիբանանի պատերազմի ընթացքում միայն տեսել էին, թե ինչպես են իրենց ծնողները հրանոթային հրաձգությունից հետո մկների նման նկուղներից դուրս գալիս՝ խանութպանի իրենց կործանված երազների մոխիրների միջով քայլելով: Այժմ, 50 տարի անց այն օրերից, երբ Թեհլերյանը, Շիրակյանն ու անցյալի մյուս վրիժառուներն իրենց ատրճանակները վար էին դրել, դաշնակցական պարագլուխները սկսեցին անհանգստանալ, թե հեղափոխական հին բալլադների վերակենդանացումը կցուցադրի իրենց կուսակցության անկարողությունը:

Փորձելով կանխել իրենց «Պատանեկան ու երիտասարդական միությունների» անդամների հավանական արտահոսքը դեպի «Գաղտնի բանակ», Դաշնակցության բյուրոն ծածուկ հիմնեց վրիժառուների մի մրցակից ջոկատ: Այնուհետև, 1975 թ. հոկտեմբերին, «Գաղտնի բանակի» առաջին գործողությունից մեկուկես ամիս անց, դաշնակցական «Արդարության մարտիկները» Վիեննայում գնդակահարեցին Թուրքիայի դեսպանին և այդ առթիվ հրապարակեցին իրենց խմբավորման հաղորդագրությունը: Մի քանի ամիս հետո, 1976-ի փետրվարի 16-ին, Հակոբ Դարակճյանը խլացուցիչով ատրճանակով Բեյրութում սպանեց Թուրքիայի

դեսպանատան առաջին քարտուղար Օքթար Զիրիթին: Այսպես «Գաղտնի բանակի» և «Արդարության մարտիկների» միջև սկսվեց մի եռանդուն մրցակցություն՝ թե ում ցուցակում ավելի շատ մեռած դիվանագետներ կլինեն:

Շուտով «Արդարության մարտիկները» պայթյուններ և սպանություններ գործեցին Փարիզում, Վատիկանում ու Մադրիդում՝ խլելով երկու դեսպանների, նրանց ընտանիքների երկու անդամների և երկու վարորդների կյանքը: Այս հարձակումները տեղի ունեցան կուսակցության՝ «սառը պատերազմի» արևմտյան հովանավորներին հակադրվելու գնով, բայց ավելի ու ավելի կամակոր դարձող «Պատանեկան ու երիտասարդական միություններին» ապացուցեցին, որ Դաշնակցությունը լիովին չէր մոռացել իր նախնական՝ պարտիզանական կազմակերպություն լինելու բնույթը: Ինչ վերաբերում է Հակոբյանին, ապա նա սկսեց իր մրցակցի հաջողությունները վերագրել «Գաղտնի բանակին»: Հենց որ նա լուր էր ստանում «Արդարության մարտիկների» հերթական հարձակման մասին, հեռաձայնում էր լրատվական գործակալություններ և ահաբեկչության հեղինակ հայտարարում «Գաղտնի բանակին»:

Մինչ երկու խմբավորումների միջև մրցակցությունը սաստկանում էր, Հակոբյանը, իր ինքնությունը թաքցրած, 1 տարի ապրեց Այնճարում, մի վարձու տանը՝ դաշնակցական տիրույթների հենց մեջտեղում: Նրա խաղաղ կյանքը, սակայն, խոովվեց 1976 թ. վերջին, երբ ՊԱԿ-ի մի հանձնակատար ինքնաձիգ ատրճանակով կրակ բացեց նրա «Ֆիատի» վրա: 12 փամփուշտ դիպել էին Հակոբյանի վզին և ուսերին: Այդ հարձակումը, թվում էր, պաղեստինյան մի խմբավորման պատակտման հետևանքներից էր: Հակոբյանն այդ խմբավորումից վաղուց էր հեռացել: Նրան հաջողվեց ողջ մնալ, իսկ Աբու Իյադը կազմակերպեց նրա բուժումը Հարավսլավիայում:

Նրա բացակայության ընթացքում «Գաղտնի բանակի» ղեկավարությունն ստանձնեց Դարակճյանը: Մոտ 10 նորակոչիկներ «կես դրույքով» ընդգրկվեցին խմբավորման մեջ: «Թղուկը» տնային պայմաններում պայթուցիչներ սարքելու մասնագետն էր, իսկ մեկ ուրիշը՝ Ռաֆֆի անունով, գրում էր հաղորդագրությունները, քանի որ մի կարճ ժամանակ քոլեջ էր հաճախել: Աբու Իյադի ջանքերով «Գաղտնի բանակին» հատկացվեց «Ցոթերորդ

հարկը»՝ «Գաղեստինցիների պայքարի ժողովրդական ճակատի» շտաբում, Ֆախանի հրշեջ կայանի փողոցի դիմացի մայթին:

Վադի Հադդադը, 1977 թ. հոկտեմբերին Սոմալիի Մոգադիշու օդանավակայան թռչող՝ Lufthansa-ի ինքնաթիռի առևանգումը կազմակերպելուց մի քանի ամիս հետո, Արևելյան Գերմանիայի մի հիվանդանոցում մեռավ քաղցկեղից: Այդ ժամանակ Հակոբյանը Հարավսլավիայի հիվանդանոցում հանդիպեց մի սերբուհի բուժքրոջ՝ Մարիա Օդակին, Զագրեբից, որը դարձավ նրա կինը: Մարիան մի դուստր ուներ՝ Տոանին, որի հայրը, ինչպես նա պնդում էր, մի ճապոնացի բարեկիրթ օդաչու էր: 6 ամիս բուժվելուց հետո Հակոբյանը մոր ու դստեր հետ գնաց արևմտյան Բեյրութ:

«Գաղտնի բանակը», մեծապես շնորհիվ Հակոբ Դարակճյանի, շարունակում էր մնալ լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: 1978 թ. օգոստոսից հոկտեմբեր ամիսների ընթացքում Դարակճյանը ճամփորդեց Թուրքիայում՝ իր հետևից թողնելով 6-7 պայթյունափոսեր, որոնցից մեկը՝ Անկարայում, Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի մի հուշարձանի մոտ:

1979 թ. Հակոբյանը Փարիզի հայերի հետ կարևոր կապեր հաստատեց: Այդ հայերից էր Արա Թորանյանը՝ «Հայ պայքար» լրաբերի հիմնադիրներից ու հրատարակիչներից մեկը: Այս սկզբում լույս էր տեսնում Ժան Պոլ Սարտրի օգնությամբ՝ Փարիզի Temps Modernes հրատարակչությունում: Հակոբյանը Ֆրանսիայում նաև կապվել էր մի բուռ ինքնակոչ մատիստների հետ, որոնք, մի քանի պայթյուններ անելուց հետո, դրանց համար պատասխանատու էին հայտարարում «Հայ նոր դիմադրությանը» (ՀՆԴ): Այդ պայթյուններից մեկն ուղղված էր Փարիզում «Խորհրդային տեղեկատվական գրասենյակի», իսկ մեկ ուրիշը՝ Բրյուսելում «Աերոֆլոտի» գրասենյակի դեմ:

1980 թ. ապրիլի 6-ին Սիդոնում տեղի ունեցած՝ «Գաղտնի բանակի» և «Քրդստանի աշխատավորների կուսակցության» համատեղ մամլո ասուլիսն ավելի բորբոքեց հայ պատանիների ու երիտասարդների երևակայությունը. նրանք ձանձրացել էին իրենց ավագների մեծախոսությունից ու անգործությունից: 1980 թ. կեսերին Հակոբյանը պատրաստ էր իր գործունեության ասպարեզն ընդլայնելու: Այդ նպատակով, սակայն, նա պետք է հավաքագրեր «լրիվ դրույքով» անդամների: Քանի որ Մոնթեն չուներ մերձավոր կապեր ո՛չ «Փաղանգավորական», ո՛չ էլ դաշնակցական շրջանակներում և արդեն աչքի էր ընկել որպես ընդունակ մարտիկ, նա Հակոբյանի համար հարմար թեկնածու էր:

«Գաղտնի բանակի» մեջ ներգրավվելուց ամիսներ առաջ Մոնթեն արդեն որոշ կապածներ ուներ, թե իր հաղորդագրություններում ու այլ հրապարակումներում այդ խումբը «շատ սուտ կխոսեր», ինչպես որ նա 1990 թ. գրում է իր «Ինքնաքննադատության» մեջ: «Սակայն, — նշում է նա, — կուզեի ձևով մը ես դիս խաբել կամ համոզել, որ արարքներուն ետև իսկական հայ հեղափոխականներ կային»:

Իրականում, եթե անգամ այդպիսիք կային, ապա ոչ ավելի, քան 10 հոգի, և դա հեռու էր բանակ լինելուց՝ գաղտնի թե ոչ գաղտնի: Այս «ստորակարգ գործունեությունը» շարժման վերածելը, եզրակացնում է Մոնթեն հետագայում, նման կլիներ «զրոյից սկսելուն»:

Մոնթեի կարճատև անդամագրումը «Գաղտնի բանակին» նույնքան հիասթափեցնող էր, որքան որ ռետինե կմախքն՝ անհեթեթ: Այդ խաղալիքը, «չար աչքը» խափանող պիտակները դուռն բարավորի վրա և մի քանի այլ մանրամասներ «Յոթերորդ հարկը» դարձնում էին պատանեկան ակումբի նման մի բան: Իսկ հենց որ Հակոբյանը խոսում էր, այդ տպավորությունն ավելի էր խորանում: Երբ Մոնթեն նրան հարցրեց, թե ինչու էր ռետինե կմախքը կախել նկարի շրջանակից, Հակոբյանն իր ծուռ ժպիտի միջից գոմռաց. «Դա բոլորիս վերջն է»: Սա էժանագին western-ի մի ստահակ հերոսի վայել նախադասություն էր: Որոշ ժամանականց Հակոբյանն ընդունելու էր, որ իր նպատակը ոչ թե Հայաստանն ազատագրելն էր, այլ աղմուկ առաջացնելը՝ «ձայն հանելը»:

Այդուհանդերձ, Մոնթեն առավելություն էր տեսնում «Գաղտնի բանակի»՝ հստակ քաղաքական ծրագրի բացակայության մեջ: Քանի որ խմբավորումը սաղմնային վիճակում էր, իր ու իր նման մտածողների համար հեշտ կլիներ այն դարձնել իսկական հեղափոխական կազմակերպություն: Նույնիսկ Հակոբյանի ու Աճեմյանի դրած հիմար անվանումը նրան չէր անհանգստացնում. «Խնդիր չկա, — ուսերը թոթվելով ասում էր նա, — այդ անունը հետո կարող ենք փոխել»:

Երերուն գետնի վրա քայլ կատարելով՝ նա իր անձնագիրն ու զենքերը հանձնեց Հակոբյանին և ունեցած ողջ դրամարը՝ 800

դոլլար, նվիրեց «Գաղտնի բանակին»: Երբ Հակոբյանն անձնագիրն ու դրամը կողպեց իր գրասենյակի չհրկիզվող մեծ կանաչ պահարանում, Մոնթեն հրաժարվեց հունիսի կեսին Խորհրդային Հայաստան այցելելու իր ծրագրից: Ավելի քան 10 տարի պիտի անցներ, մինչև որ նա առաջին անգամ ոտք կդներ Հայաստան:

Մոնթեն տնտղեց իր հացեագիրքը՝ փնտրելով մարդկանց, որոնք կարող էին օգտակար լինել իր ստանձնած նոր աշխատանքի համար: Դրանցից մեկն էր ոմն Սինդի Ա.՝ Ֆրեզնոյում ծնված մի «լավ անձնավորություն», որին Մոնթեն հանդիպել էր Բերկլիում: Կասկածելով, թե այդ աղջկա հանդեպ Մոնթեի վերաբերմունքի հիմքում ռոմանտիկ զգացմունքն էր, Ալեքն սկսեց նրան կատակով կոչել «Աբու Սինդի» («Սինդիի հայր»): Հակոբյանին մականունը դուր եկավ, և նա նույնպես սկսեց Մոնթեին այդպես դիմել: Շուտով, թեև Մոնթեն ըմբոստանում էր, նա բոլորի համար դարձավ «Աբու Սինդի». այդ անունը հայտնվեց նրա ինքնությունը հաստատող փաստաթղթերում, ոստիկանական զեկույցներում ու լրագրային հոդվածներում:

Դավիթը եզրակացրեց, որ ժամանակն էր ավարտելու իր ութամսյա այցելությունը Լիբանան, և վերադարձավ Միացյալ Նահանգներ: Մոնթեի համար, սակայն, վերադարձ չկար: Հակոբյանը, հանձինս Մոնթեի ու Ալեքի, տեսնում էր իր հնարավոր մահվան դեպքում իրեն փոխարինողների, ուստի նախապատրաստական աշխատանք էր տանում: Նա Մոնթեին ու Ալեքին գրասենյակից գրասենյակ տարավ՝ նրանց ներկայացնելով իր ծանոթներին, որոնց թվում՝ «Գաղեստինի ազատագրման կազմակերպության» նախագահ Յասիր Արաֆաթին և «Գաղեստինի ժողովրդական ճակատի» գլխավոր քարտուղար Ջորջ Հաբաշին: Դոկտոր Հաբաշի հետ հանդիպումը հաստատեց նրա հանդեպ Մոնթեի վաղեմի հիացմունքը: Գաղեստինցիները Մոնթեի, Ալեքի ու «Գաղտնի բանակի» այլ նորակոչիկների հետ հատուկ ռազմական մարզումներ անցկացրին: Մի անգամ Հակոբյանը նրանց ուղեկցեց հրաձգարան՝ զինավարժություններին անձամբ ներկա լինելու համար: Նա պահանջեց, որ Մոնթեն ու Ալեքն իրար դեմ-դիմաց, մոտ մեկ ոտնաչափ հեռավորությամբ ծնկի գան: Ապա իր «38» տարողությամբ նրանց քթերի արանքով կրակոցներ արձակեց այնքան ժամանակ, մինչև որ նրանք դադարեցին աչքերը թարթել:

Մեկ ուրիշ մարզման ժամանակ, փախստականների Շատիլա ճամբարի մոտ գտնվող՝ «Ֆաթահի» մի հրաձգարանում, նրանք

զարմացան, երբ իրենց միացավ մի բարձրահասակ տեւտոնացի՝ զինված դիպուկահարի ավստրիական հրացանով, որի վրա հեռադիտակի օգնությամբ լուսանկարող Polaroid խցիկ կար: Գաղեստինյան ճամբարում խարտյաշ մազերով մեկին տեսնելն արտասովոր էր, մանավանդ՝ զինված: Մոնթեն ենթադրեց, թե նա «Կարմիր բանակի ենթաջոկատի», Revolutionarer Zellen-ի կամ գերմանական մի այլ «առաջավոր խմբավորման» անդամ էր: Տեւտոնացին անգլերեն իրեն ներկայացրեց իբրև "Hell" («Դժոխք»): Դա տարօրինակ հնչեց, որովհետև պաղեստինցիները սովորաբար իբրև զինվորական մականուններ գործածում էին «Ազատություն», «Գայքար», «Վերադարձ» և այլ նման վերացական գոյականներ. Մոնթեին նախկինում «Դժոխք» չէր հանդիպել:

Մոնթեն ու Ալեքը նրա հրացանից մի քանի փամփուշտ արձակեցին: Նույնիսկ անփորձ ձեռքերում այն անվրեպ էր մի քանի հարյուր մետրի վրա: Մոնթեն բարձրաձայն արտահայտեց իր զարմանքը, թե ինչ բախտավոր էր եղել ինքը՝ դիպուկահարների թիրախ դառնալով ու փրկվելով:

Հաջորդ շաբաթների ընթացքում «Դժոխքը» ժամանակ առ ժամանակ «Յոթերորդ հարկում» այցելում էր Հակոբյանին: Նրանք նստում էին միջանցքի բազմոցին ու տանտիկինների նման բամբասում: Թեև գերմանացին քաղաքական թեմաներով չէր խոսում, մի անգամ Հակոբյանը նրան իր կոտրատված անգլերենով ասաց.

— Մաո Ցզեդունի կարծիքով՝ պարտիզանները մասսաների մեջ պիտի լողան՝ ինչպես ձուկը ջրում: Իսկ մեզ պետք է փոքի մեջ լողալ:

Նրանք ցածրաձայն ծիծաղեցին, բայց երբ Մոնթեն սա լսեց, նրա ստամոքսը կծկվեց: «Դժոխքն» ու Հակոբյանը նաև մի մշտական կատակ ունեին, որը Հակոբյանը կարճ հիշում էր «խանզիր» (արաբերեն՝ «խոզ») բառով: Նա արտաբերում էր այդ բառն ու սովորականի պես ծուռ ժպտում: Ամիսներ անցան, մինչև որ Մոնթեն «կատակը» հասկացավ: 1980 թ. սեպտեմբերի 26-ին Մյունխենի Oktoberfest-ում պայթյուն եղավ՝ սպանելով 13 և վիրավորելով 72 հոգու: Ենթադրյալ ահաբեկիչը՝ Գունդոլֆ Կոլեր անունով, նույնպես այդ պայթյունի զոհ դարձավ: Նա հայտնի էր իբրև «բավարացի նեոնացիստ, որ չէր պատկանում որևէ կազմակերպության» կամ՝ «միայնակ գայլ՝ առանց կազմակերպության»: Մոնթեն պարզեց, որ Կոլերը «Դժոխքի» գործակիցն էր. վերջինս պայթուցիկ էր բերել Oktoberfest, որը գործի էր դրվել

դեպքի վայրից նրա հեռանալուց առաջ: Կոլերն այդպիսով, բանից անտեղյակ, դարձել էր, ինչպես ընդունված էր ասել՝ «խոզ», «խոզի ռումբը» պայթեցնելու միջոց: Նա «Դժոխքի» «խանգիրն» էր: Ուրեմն, գերմանական որևէ «առաջավոր խմբավորման» մասին խոսք չէր կարող լինել. բարձրահասակ, համակրելի, հեքիաթային հրացանով տեւտոնացին իրականում Ուդո Ալբրեխտն էր՝ Freikorps Adolf Hitler կոչվող փոքր խմբավորման հիմնադիրը և Կարլ Հայնց Անդրեաս Հոֆֆմանի՝ Բավարիայում հիմնված, 400 հոգիանոց Wehrsportgruppe Hoffman ստահակների կազմակերպության գործակիցը: «Դժոխքը», ինչպես Ալեքն էր ասում, «շատ վտանգավոր մարդ էր»:

Նեոնացիստի ներկայությունը «Ֆաթահի» ճամբարում զայրացրեց Մոնթեին. նրա ընկերներն արևելյան Բեյրութում զոհվել էին հենց «Դժոխքի» զինակից ֆաշիստների դեմ կռվելիս: Ավելին՝ «Դժոխքը» գերմանացի ֆաշիստ էր, այն տեսակից, որի պատճառով մեր հայրն ու քեռիներն իրենց երիտասարդ տարիներն անցկացրել էին պատերազմի դաշտում: «Դժոխքի» նմաններին հետ խոսելու լավագույն միջոցը հրազենն էր:

«Դժոխքի» բախտը բերեց. Մյունխենի արյունահեղությունից հետո նրա դիմակը պատռվեց, և նա անհետացավ՝ նախքան Մոնթեն կամ մի ուրիշը նրա դեմ քայլեր կձեռնարկեին: Նա դարձյալ ջրի երես դուրս եկավ Արևմտյան Գերմանիայում, որտեղ ոստիկանության ձեռքն ընկավ: Շուտով, սակայն, իբր ոստիկաններին առաջնորդելով դեպի մի գաղտնի զինապահեստ, Արևելյան Գերմանիայի սահմանի մոտ նա կայծակնային արագությամբ դեպի ու հայտնվեց մյուս կողմում: Այս անգամ նրան բռնեց արևելա-գերմանական ոստիկանությունը, բայց, նրանց անփութության պատճառով կամ թաքուն համաձայնությամբ, «Դժոխքն» այս անգամ էլ դուրս պրծավ ու անցավ խոր ընդհատակ:

Հայոբյանի ընկերությունը նեոնացիստի հետ «Գաղտնի բանակի» առաջնորդի ազնվությունը դարձյալ կասկածի ենթարկեց: Մոնթեն, այնուամենայնիվ, աշխատում էր այդ կասկածներն իրենից վանել: Հուսահատ ժամանակներ էին, և նա նույնիսկ պատրաստ էր բրազիլացի պարտիզան Կարլոս Մարիգելլայի թեւավոր խոսքն է՛լ ավելի ծայրահեղության հասցնել. «Նախ բռնություն, հետո՝ քաղաքականություն»: Մյուսները նրա հետ համաձայն էին: «Մենք սիրում ենք այս պայթուցիկների ձայնը», -- Մոնթեին ասել էր ռումբեր ստեղծող «Թզուկը» նրան ցույց տալով, թե ինչպես է պետք շառաչող սնդիկը լցնել պայթուցիչների արույրե խողովակների մեջ:

Երբ ես իմացա «Դժոխքի» մասին, արդեն իսկ եղբորս հետ քննարկելու մի շարք հարցեր էին կուտակվել: Հեշտ չէր այդ անելը, որովհետև մենք տարբեր տեղերում էինք ապրում: Մինչ Մոնթեն տքնում էր Ֆախանի ետնախորշում, ես անգլերեն էի սովորեցնում՝ քնելով շողշողուն Համրա թաղամասի մի վերնահարկում, հսկայական մահճակալի վրա: Մենք ժամանակ առ ժամանակ հանդիպում էինք Ֆախանիում կամ Ամերիկյան համալսարանի մոտ՝ մի քանի բառ փոխանակելու համար, բայց երբեք հնարավոր չէր լինում հանգիստ նստել ու խոսել:

Հետո Մոնթեն սկսեց շաբաթներով անհետանալ: Հուլիսի կեսին, «Գաղտնի բանակին» անդամագրվելուց մոտ 2 ամիս անց, Հակոբյանը նրան մի կեղծ իրանական անձնագիր տվեց տոմս դեպի Աթենք և անպատկառ կեցվածքով հրահանգ տվեց այնտեղ գտնել Թուրքական որևէ թիրախ ու հարվածել: Սա Մոնթեի «արտասահմանյան գործերից» առաջինը պիտի լիներ: Մի քանի օր տարբեր վերնաշապիկներով Աթենքի Թուրքական դեսպանատան կողքով անցնելուց հետո Մոնթեն վերադարձավ Բեյրութ՝ Հակոբյանին դժվարությունների մասին տեղեկացնելու և հարցնելու., թե որն է լինելու հաջորդ հանձնարարությունը: Ձեռքն օդում պարզելով՝ Հակոբյանը նրան հրամայեց «Թուրքական ավիաուղիների» գրասենյակ նռնակ նետել ու սպասել հաջորդ հրահանգին: Մոնթեն գլուխն օրորեց. նա չէր ուզում «զինյալ քարոզչության» իր կարիերան սկսել նման անպատշաճ ճարդարդակով: «Ցոթերորդ հարկում» 2 հիասթափեցնող օր անցկացնելուց հետո Մոնթեն դարձյալ Աթենք թռչող օդանավ նստեց: Նա համոզվել էր, որ այնուհետև ստիպված է լինելու պատասխաններ գտնել իր իսկ հարցերին:

Ճակատագրի բերումով՝ Բեյրութից Աթենք թռչող օդանավի մեջ Մոնթեն հանդիպեց բաց գույների շորեր հագած զբոսաշրջիկների մի խմբի՝ աշխարհի Ընկույզի մայրաքաղաքից, մեր ծննդավայրից: Վայսելիացիներից մեկը՝ տիկին Սմիթը, Մոնթեի սովորած տարրական դպրոցում 15 տարի առաջ լոգոպեդ էր եղել և անարդյունք փորձել նրան բուժել շշախոսությունից: Ճանաչելով իր նախկին աշակերտին՝ նա բղավեց.

— Հե՛յ, այստե՛ղ նայեք. Մոնթեն է:

Երկրորդ կարգի բաժանմունքում մեծ աշխուժություն տիրեց. մարդիկ թփթփացնում էին Մոնթեի մեջքին ու հարցնում, թե նա ինչպես է, և իրանական անձնագիր կրող քաղաքական վրիժառուն ստիպված էր լարել երևակայությունը՝ իր ծանոթ կալիֆոռնիացիներին բացատրելու համար, թե ինչ գործ ուներ ինքն այդ օդանավում:

Հուլիսի 31-ի երեկոյան դիվանագիտական համարանիշով մի մեքենա կանգ առավ Աթենքի բնակելի թաղամասերից մեկի մի փողոցում, որտեղ Մոնթեն սպասում էր: Հունաստանի մայրաքաղաք վերադառնալուց հետո նա շրջել էր փողոցներով՝ փնտրելով ճամփեզրին կանգնած՝ թուրքական դեսպանատան մեքենաներ: Նախորդ երեկո այդ նույն փողոցում նա տեսել էր նման համարանիշով մի մեքենա և եզրակացրել, որ դա պատկանում է այնտեղ բնակվող դիվանագետի: Մուգ ապակիների միջից նա նշմարեց, որ մեքենայի մեջ 4 հոգի կան՝ երկուսն առջևում և երկուսը հետևում: Երկու շաբաթ էր անցել այն օրվանից, երբ Մոնթեն առաջին անգամ եկել էր Աթենք, և նա դեռ ոչինչ չէր արել: Մոնթեն քայլեց դեպի մեքենան, բարձրացրեց իր 7.32 մմ ատրճանակը և կրակեց վարորդի ու դիմացը նստած մյուս ուղևորի վրա: Ապա շրջվեց՝ գնդակահարելու նաև հետևի ուղևորներին: Երբ նա այնուհետև շուռ եկավ փախչելու, մի պատանի դուրս նետվեց մեքենայի հետևի նստարանից և, իր հրազենային վերքը բռնած, վազեց կրակողի հետևից: Նրան միացան մի քանի ականատեսներ:

Երթևեկությամբ ծանրաբեռնված փողոցը հատելիս Մոնթեն ապտակեց, և նրա ձեռքի ժամացույցը շրխկաց ասֆալտին: Դա ճապոնացի մի ընկերոջ նվեր էր. նա ժամացույցի հետևի մասում փորագրել էր Մոնթեի անունը: Մեքենաների ձայնային ազդանշանների ու դատարկապորտների հայացքի տակ Մոնթեն պտույտ եկավ երթևեկության մեջտեղում՝ ժամացույցը փնտրելով: Նա այն գտավ, ճանկեց ու շարունակեց սլանալ՝ անցորդներին մայթի վրա մի կողմ հրելով. բորբոքված հետապնդողներից նա շատ քիչ էր առաջ: Ի վերջո Մոնթեն շնչակտուր բարձրացավ մի բլրակի վրա, իսկ հետապնդողները շեղվեցին ու մտան բլրակից այն կողմ գտնվող այգին:

Հաջորդ օրը նա թերթերից իմացավ, որ իր սպանած վարորդն Աթենքում Թուրքիայի դեսպանատան՝ վարչական հարցերով կցորդ էր և թուրքական հետախուզության (MIT-ի) գործակալ՝

Գալիփ Օսման անունով: «Լավ է, — մտածեց Մոնթեն, — մի թուրք լրտես պակասեց»: Այնուամենայնիվ, նա բնավ չուրախացավ՝ տեղեկանալով, որ դիմացի նստարանի մյուս՝ վիրավորված ուղևորն Օսմանի կինն էր՝ Սևիլը: Ապա Մոնթեն ցնցվեց՝ կարդալով, թե հետևում նստածներն Օսմանի երեխաներն էին՝ տասնվեցամյա որդին ու տասնչորսամյա դուստրը: Աղջիկը՝ Նեսլիհան անունով, մահացել էր վերքերից, իսկ հորից ու քրոջից զրկված տղան լրագրողների ներկայությամբ երդվել էր հետևել իր հոր օրինակին ու դառնալ MIT-ի գործակալ:

Երբ մի օր Ալեքը Մոնթեին հարցրեց, թե ի՞նչն այս աշխարհում նրան ստիպեց կրակել հետևում նստած տղայի ու աղջկա վրա, նրա ընկերը կտրուկ պատասխանեց.

— Ես չէի կարող վկաներ թողնել, որոնք հետո ինձ կճանաչեին:

«Ամեն դեպքում, — գրում է նա մի տարօրինակ հատվածում, — մուգ ապակիները խանգարեցին կրակողին տեսնել, թե ով ով էր մեքենայի մեջ: Եթե նրան ավելի հստակ տեսադաշտ առաջարկվեր (և նա չկարծեր, որ հետևի նստարանին ուրիշ դիվանագետներ էին նստած), ապա աղջկա կյանքը հավանաբար կխնայվեր»:

Ինչ վերաբերում է աղջկա հորը՝ վարչական հարցերով կցորդին, ապա Մոնթեն երբեք կասկած չուներ, որ նա արժանի պատիժ ստացավ. Օսմանը կամովին անդամագրվել էր մի վարչակարգի, որը զավթել էր հյուսիսային Կիպրոսը, արաբական Իսքենդերունը, Քրդստանը և հայերի հայրենիքի մեծ մասը, կոտորում էր հազարավոր քրդերի, ավերում նրանց հարյուրավոր գյուղեր, բանտարկում ու կտտանքների ենթարկում հարյուրավոր մարդկանց՝ տարբեր միությունների առաջնորդների, ուսանողների և Թուրքիայի այլ քաղաքացիների: Իսկ ի լրումն այդ ամենի, նա նաև մեղավոր էր, որ մուգ ապակիներով մեքենա էր քշում՝ վտանգի ենթարկելով իր երեխաներին և իր սպանողին «չառաջարկելով» ավելի հստակ թիրախ:

Երբ ես իմացա, թե եղբայրս ատրճանակ է ուղղել մեքենայի հետևում նստած անհայտ ուղևորի վրա և սպանել տասնչորսամյա մի աղջկա, ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, որ նրանից անասելի ջանքեր կպահանջվեն՝ մեղքի զգացումը երբևէ հաղթահարելու համար: Ժամանակի ընթացքում զղջումն ավելի նկատելի էր դառնում: Սպանությունից 5 տարի անց նա իր արարքը կոչում էր հակաարդյունավետ և արդարացում չունեցող հանցանք, որի նմանը երբեք չպետք է կրկնվի: Հետագա 13 տարիների ըն-

թացքում նա ջանում էր ուրիշներին թույլ չտալ այդպիսի դաժան գործողություններ: Դա կարելի է դիտել իբրև նրա կողմից հատուցման նման մի բան, բայց այդ հատուցումը երբեք արարքին համարժեք չէր լինելու:

Երբ Մոնթեն Հունաստանից Լիբանան վերադարձավ, նրա ժպիտն անհետացել էր: Նա մարզվում էր «Պաղեստինյան ժողովրդական պայքարի ճակատի» մի ճամբարում՝ Բեքաա հովտից հարավ, Ցանթա գյուղի մոտ: Ժամապահության առաջին գիշերը նա հորիզոնում տեսավ հազարավոր պայծառ աստղեր: Վերջին ամիսների ընթացքում սա միակ դեպքն էր, երբ նա ժամեր շարունակ լուռ խորհելու հնարավորություն ստացավ: Այդ խոհերն ընդհատում էր միայն ջերտավոր բորենին՝ անապատում մանկան նման կաղկանձելով: Արևածագին տենդագին ֆիզիկական վարժություններ անելուց հետո Մոնթեն օրվա մնացած մասն անցկացրեց խորդուբորդ գետնին ծնկների վրա շարժվելով, հրաձգարանում կրակելով, փշալարերի ու հրազենային կրակի տակ սողալով և, առանց վերնաշապիկի, զառիվայրներով՝ սուր քարերի, տատասկի ու ականթի փշերի վրայով թավալգլոր լինելով:

Ճամբարում մարզվողներից շատերը դեռահասներ էին՝ «գայլի ձագեր»: Ոմանք բառացիորեն վազելով կտրել էին անապատը և հատել ճամբարից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող սիրիական սահմանը՝ փախչելով նախագահ Հաֆեզ ալ-Ասադի հաշվեհարդարից, որն այդ ամառ հալածանք էր սկսել Սիրիայի «Մահմեդական եղբայրների» դեմ: Ավելի տարիքոտներն արաբներ կամ հայեր էին՝ հիմնականում Սիրիայից, Լիբանանից ու Պաղեստինից: Կային նաև 6 քրդեր՝ Արդուլլահ Օջալանի «Քրդստանի աշխատավորների կուսակցությունից»:

Նրանք շատ սկզբունքային էին ու գաղափարական (դժվար է ասել՝ Օջալանի կուսակցության բոլոր անդամնե՞րն էին այդպիսին, թե ոչ): Գիշերներն այդ քուրդ տղաները երգներ էին տեսնում իրենց տառապյալ հայրենիքի մասին, իսկ արթնանալուն պես սկսում էին զորավարժությունները: Նրանք հաճույքով խրամատներ էին փորում և հարձակվել սովորելիս գոռում էին «Թաուրա» («Հեղափոխություն»)՝ սովորական «Ալլահու աքբար»-ի («Աստված մեծ է») փոխարեն: Երբ ծառին մնացած սերկևիլ էին քաղում, ֆերմերի համար ծառի տակ մետաղադրամ էին թողնում, իսկ երբ մոտակա որևէ այգում ձիթապտղի բերքահավաք էր լինում, նրանք գույլերով ծառ էին բարձրանում և օգնում: Մի անգամ, երբ քուրդ Սուլեյմանը մի բանան կիսեց ու իր ընկեր Հասանին անգիտակցաբար տվեց փոքր կեսը, «Քրդստանի աշխատավորների կուսակցությունից» նրա զինակից Թերջումանը պահանջեց «քննադատություն ու ինքնաքննադատություն»: Սուլեյմանը մաքրագործվեց ինքնաքննադատությամբ և երդվեց այլևս նման անվայել ձևով չվարվել:

Երբ սկզբնական ոգևորությունն անցավ, անլվա, հայհոյախոս և ծխող արաբներն ու հայերը ճամբարում սկսեցին ժուժկալ քրդերի ներկայությամբ իրենց անհարմար զգալ: Քրդերը ժողովուրդների բարեկամության մասին երգեր էին երգում, մեջբերումներ անում գերմանական դասական փիլիսոփայությունից և մշտապես կենտրոնացած էին հեղափոխության վրա: Մոնթեին դուր էր գալիս նրանց ապրելակերպը. «Այս տղաները ոսկի են», — աչքերը փայլեցնելով ասում էր նա:

Նրանց ոգևորությունը վարակիչ էր: Մխողները հերթով սկսեցին հրաժարվել այդ սովորությունից, և առավոտյան թեթև վազքից հետո աշխատում էին չծխել: Բոլորը մռայլ տեսքով հավաքվում էին ռադիոընդունիչի շուրջը՝ 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման մասին լուրեր լսելու համար: Արաբ նորակոչիկները թուրք դիվանագետներ սպանելու պատրաստակամություն էին հայտնում: Հետո բոլորն, ուս-ուսի տված, կիզիչ արևի տակ արաբերեն, քրդերեն ու հայերեն գոռում էին. «Վերադա՛րձ հայրենիք», «Պայքա՛ր մինչև հաղթանակ» և՝ «Մենք ֆիդայիներ ենք»:

Ցանթայի մոտ Մոնթեն ունեցավ այն զորեղ ջերմ զգացումը, որն առաջանում է միասին ապրելու և հանուն ընդհանուր նպատակի համատեղ պայքարելու դեպքում: Դա մի զգացում է, որի համար «համերաշխություն» բառը սառն է հնչում: Կենցաղի այնպիսի պարզ մանրամասներ, ինչպիսիք են միասին ոտով սկուտեղի շուրջը պպզելը, հացը պոկելն ու ընկերներին բաժանելը, արյուն տալը և վերարկուն միշտ ժամապահին զիջելն ամենօրյա մի այնպիսի «ծեսի» տարրեր էին, որը հեռու էր էգոիզմից կամ ալտրուիզմից: Անկախ այն բանից՝ նրանց նպատակներն իրագործելի էին, թե ոչ, ռազմական ճամբարում հաստատված բարեկամությունն իսպառ հաղթահարել էր, թեկուզ՝ մի քանի օրով կամ շաբաթով, Բեյրութում տիրող՝ միջակ խանութպանի ճղճիմ հոգեբանությունն ու ցինիզմը: «Այսպիսին պետք է լինի հեղափոխական շարժումը՝ պայքարը», — ինչպես կասեր Մոնթեն:

Նորակոչիկների համբարում, անապատի լայնարձակ երկնքի տակ տիրող ոգեշունչ մթնոլորտից հետո նեղ ու հեղձուցիչ «Ցոթերորդ հարկը» (որտեղ կարծես միայն Հակոբյանն էր քիչ թե շատ տեղյակ տարածաշրջանի անցուդարձից) ճնշող տպավորություն էր թողնում: Ամառվա վերջին «Ժողովրդական պայքարի ճակատի» տպարանում, փայլուն թղթի վրա ու մեծ ֆորմատով, լույս տեսավ «Գաղտնի բանակի» պարբերականի առաջին համարը: Հակոբյանը միշտ կարծում էր, թե իր խմբին հարկավոր է մի ամսագիր հրատարակել, որն «ինտելեկտուալ» ուղերձ կլիներ հնարավոր հետևորդներին: Վերնագրի կողքի էմբլեմն ինքնաձիգ սեղմած ձեռք էր՝ աղոտ կերպով Հայաստանի՝ Վուդրոու Ուիլսոնի երևակայական սահմանները հիշեցնող մի քարտեզի ֆոնի վրա: Սա մի ավելորդ վկայություն էր այն փաստի, որ «Ցոթերորդ հարկում» բռնության քարոզչությունը դուրս էր մղել որևէ սթափ քննարկում:

Ալեքը պարբերականի առաջին համարը կոչեց «աղբ», բայց Մոնթեի համար այն գաղափարներ փոխանակելու և քննարկումների մակարդակը բարձրացնելու լավ հնարավորություն էր: Հակոբյանը սովորություն ուներ քաղաքական թեմաներով խոսակցություններն ընդհատել թունոտ կատակներով: Նրա համար դա զուտ «բամբասանք» էր: Իսկ այժմ, շնորհիվ այդ հրատարակության, հնարավորություն էր ստեղծվում պայքարի նպատակները, ռազմավարությունը և անձնական փորձառությունները քննարկելու: Թեև «Հայաստան» պարբերականի տպաքանակը չէր կարող մի քանի հարյուր օրինակից ավելի լինել, Մոնթեն գիտեր, որ այն զգալիորեն ավելի շատ մարդիկ կկարդան: «Գաղտնի բանակի» համակիրները Լիբանանում, Ֆրանսիայում և Իրանում պարբերականը ձեռքից ձեռք կփոխանցեին՝ նկատելով դրա ակնհայտ թերությունները և առավել հստակություն պահանջելով: Դա կուժեղացներ «Գաղտնի բանակի» այն անդամների (Մոնթեի, Ալեքի և ուրիշների) դիրքերը, որոնք կարող էին կազմակերպության գործունեության մեջ որոշակիություն մտցնել:

Սկսած երկրորդ համարից և հետագա բոլոր 21 համարների պատրաստման ընթացքում Մոնթեն քնելու հաշվին ուշ ժամերին աշխատում էր պարբերականի վրա: Նա իր՝ անգլերեն գրած բոլոր նյութերը տպագրում էր ծածկանունով, և դրանց մի մասում միտումնավոր ոճական ու քերականական անճշտություններ էր ա-

նում՝ իբր դրանք անհաջող թարգմանություններ էին ուրիշ լեզվից:

Թեև Մոնթեն պարբերականի մեջ մեծ ներուժ էր տեսնում, կային ավելի կարևոր պարտականություններ: Հակոբյանը նրան դարձյալ Եվրոպա ուղարկեց՝ կարգադրելով պայթեցնել Թուրքիայի հյուպատոսարանը Ժնևում և այնտեղ «օգնություն» պահանջել մի հարուստ իրաքցի ասորուց: Վիկտոր Շայտոն անունով այդ մարդը Ժնևում ոսկեղենի եկամտաբեր խանութ ուներ: Զենքի լիբանանահայ առևտրականն և CIA-ի («Կենտրոնական հետախուզական վարչության») հետ համագործակցող Սարգիս Սողանալյանը նրա անունը գրել էր Իրանի դեմ կռվում Սադամ Հուսեյնին զենք մատակարարողների ցուցակում: Մոնթեն հանձնարարությունն ընդունեց մեծ պատրաստակամությամբ: Նա ատում էր զենքի առևտրականներին, գարշում էր Սադամ Հուսեյնից և համակրում Իրաքի հարձակումից պաշտպանվող իրանցիներին: Բացի այդ՝ Աթենքում ունեցած անհաջողությունից հետո նա ավելի լավ գործ անելու վճռականությամբ էր լցված:

Մոնթեն Ժնևում հանդիպեց Ալեքին, և նրանք հետևում էին Շայտոյին այնքան մոտիկից, որ նույնիսկ իմացան, թե նա քաղաքում ինչ երգեր է երգում: Մի օր, սակայն, փողոցն անցնելիս Մոնթեն հանկարծ բառացիորեն բախվեց Բուրջ Համուդից մի հին ծանոթի՝ Ժիրայրին, որը, ինչպես պարզվեց, Շայտոյի թիկնապահներից էր: Լայն ժպտալով՝ նա «պատռեց Մոնթեի դիմակը».

— Հե՛յ, Մոնթե՛, — զարմանքով բացականչեց Ժիրայրը. երկուսն էլ, մի քայլ անելով, ապշահար հետ նայեցին՝ կանգնելով փողոցի մեջտեղում:

Nyon կայարանում գնացք նստելով՝ Մոնթեն շարժվեց դեպի Իտալիա: Այդ օրվանից կարճ ժամանակ անց, հոկտեմբերի 3-ի գիշերը, Միլանում երկու ռումբ պայթեցին. մեկը՝ Թուրքի պատկանող մի խանութում, իսկ մյուսը՝ Mondadori հրատարակչության գրասենյակում: Երկու պայթյունն էլ, իհարկե, Մոնթեի ձեռքի գործն էին: Երկրորդը զգուշացում էր Panorama շաբաթաթերթի խմբագիրներին, որոնք խախտել էին իրենց լրագրողներից մեկի՝ Ռիտա Գորենայի հետ կնքած պայմանագիրը՝ կապված Հակոբյանի հարցազրույցը տպագրելու հետ: Մոնթեն հետագայում այս պատժիչ գործողությունը բնորոշեց որպես «անարխիկ և մաֆիային վայել»:

Միլանի պայթյուններից տուժածներ չկային, բայց Մոնթեն չգիտեր, որ նույն գիշեր Ժնևում մեկ այլ ռումբ էր պայթել՝ ծանր հետևանքներով: Հոկտեմբերի 3-ի երեկոյան ժամը 9:30, երբ Ալեքը Hôtel Beau-Site հյուրանոցում հենվեց իր սենյակի սեղանին, հանկարծ մի սպիտակ բոց փայլատակեց:

— Ես չեմ տեսնում, — գոռաց Ալեքը Սյուզիին՝ մի ընկերուհու, որը նրա հետ սենյակում էր: Մթի ու այրված մարմնի հոտի մեջ Սյուզին նշմարեց Ալեքի արյունոտ դեմքը, իսկ սեղանի վրա՝ նրա ձեռքի մասը: Բեկորներից վիրավորվել ու արյունահոսում էր նաև Սյուզին, բայց Ալեքի մարմինը նրան պաշտպանել էր հիմնական հարվածից. բռնկվել էր այն Semtex պայթուցիկը, որից Ալեքը փորձում էր փոքր ռումբ սարքել:

Պայթյունից հետո սկսվեց Մոնթեի հետապնդումը, քանի որ օրեր առաջ նրան տեսել էին Ալեքի հետ: Վախենալով, որ Լիբանանի գաղտնի ոստիկանությունը կարող է Մոնթեի եղբորը տանել հարցաքննության՝ Հակոբյանն իր եղբայր Օհանին կարգադրեց ինձ տեղափոխել արևմտյան Բեյրութի իմ բնակարանից: Երբ Օհանը հոկտեմբերի 9-ի գիշերը հայտնվեց իմ դուռն մոտ, ես դեռ չէի լսել 6 օր առաջ Ժնևում տեղի ունեցած պայթյունի մասին: Օհանն ինձ ասաց, որ 5 րոպե ունեմ իրերս հավաքելու համար, և ես հասկացա, որ հարցեր տալու ժամանակը չէր: Իրերս խոթեցի մի տնկողնային սավանի մեջ և այդ կապոցն աստիճաններով քարշ տվեցի ներքև՝ Օհանի «Պոնտիակ» մեքենայի մեջ դնելու համար:

Ես եղբորս շաբաթներով չէի տեսել, ուստի տարօրինակ էր, որ նա ինձ չողջունեց ժպիտով, երբ եկա «Յոթերորդ հարկ»:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի՝ պատասխանից վախենալով:

— Նստի՛ր, — ասաց Հակոբյանը:

Նայեցի եղբորս, որը գլխով հաստատական նշան արեց:

— Ժնևում պայթյուն է եղել, — գոռաց Հակոբյանը. — Ալեքը զրկվել է աչքերից ու մի ձեռքից, և նրան բանտարկել են:

Ամիսներ առաջ Ալեքն ու Մոնթեն պայմանավորվել էին, որ եթե իրենցից մեկը բանտ ընկներ, մյուսը պետք է փորձեր նրան ազատել: Մոնթեն արդեն արել էր առաջին քայլը՝ իբրև Շվեյցարիայի իշխանությունների վրա ճնշում, որպեսզի իր ընկերոջն ազատ արձակեն: Հոկտեմբերի 8-ի գիշերը, գրեթե անմիջապես Լիբանան նրա վերադարձից հետո, պայթյուններ էին եղել Բեյրութում Շվեյցարիայի դեսպանատանն ու դեսպանի տանը: Պայթել էր նաև առաջին քարտուղարի ավտոմեքենան: Ինձ, Համրա փողոցի մոտ գտնվող իմ բնակարանում, հասել էին այդ պայթյունների ձայները: Իսկ երբ «Ռադիո Մոնտե Կառլո»-ով հաջորդ առավոտյան լսեցի առաջին կարճ հաղորդագրությունը, զարմացա, թե ինչո՞ւ, հանուն երկնքի, Բեյրութում գործող տասնյակ զինյալ խմբավորումներից որևէ մեկին պիտի հարկավոր լիներ պայթեցնել Շվեյցարիայի դեսպանատունը:

Եղբայրս դարձյալ պատրաստվում էր Եվրոպա գնալ՝ Ալեքի հետ իր պայմանավորվածության համաձայն հաջորդ քայլն անելու նպատակով: Հակոբյանն ինձ ասաց, և Մոնթեն նրա հետ համաձայն էր, որ ես պետք է մնայի «Յոթերորդ հարկում»՝ հիշյալ դեպքերի հետ կապված հարցաքննությունից խուսափելու համար:

Քանի որ ես որոշ ժամանակ նրանց հյուրը պիտի լինեի, Հակոբյանն ինձ հրավիրեց միանալ «Գաղտնի բանակին»: Երբ ես մերժեցի, նա եղբորս և մի քանի ուրիշ ընկերների ներկայությամբ սկսեց ինձ պարսավել՝ իմ պասիվության պատճառ համարելով ծուլությունը: Ես շրջվեցի ու գնացի պատշգամբ, իսկ Մոնթեն հետևեց ինձ.

— Երբե՛ք որևէ մեկին թույլ մի տուր քեզ հետ այդպես խոսել, — ասաց նա՝ աչքերը փայլեցնելով. — երբե՛ք:

Մեր դիրքերն այժմ փոխվել էին. նա էր ավագ եղբայրը և խստորեն խրատում էր ինձ: Ես ինձ շատ մեղավոր զգացի, որ Մոնթեի համար գլխացավանք եմ դարձել, հատկապես այն պահին, երբ նա պետք է ընկերոջը բանտից ազատի: Քանի որ «Յոթերորդ հարկում» անելիք չունեի և պետք է անգործության ու ձանձրույթի մատնվեի, որոշեցի այնտեղ քիչ լինել: Պաղեստինյան մի ճամբարում ես արդեն նախնական մարզումներ էի անցել, ուստի ինձ թվաց, թե ժամանակն է իրագործել իմ վաղեմի ցանկությունն ու որպես կամավոր գնալ հարավ: Ուզում էի մասնակցել Իսրայելի ներխուժումներից Լիբանանի պաշտպանությանը (իսրայելցիները կանոնավոր կերպով ռմբակոծում էին փախստականների ճամբարները): Ես Հակոբյանին համոզեցի ինձ ուղարկել «Ժողովրդական պայքարի ճակատի» զորավարժությունների ճամբար: Հետո հարմարվում տեղափոխվեցի առաջին գիծ, Հերմոն լեռան մոտ:

Այդ ընթացքում Մոնթեն գնացել էր Եվրոպա՝ Շվեյցարիայի իշխանությունների վրա «ճնշում գործադրելու»: Ալեքին պետք

էր ազատել անհապաղ. Արա Թորանյանն այցելել էր նրան ոստիկանական բաժանմունքում և ապա հայտնել, թե նրա մի աչքի տեսողությունը մասամբ վերականգնելու հույս կար: Շվեյցարիայի իշխանություններն այդ ուղղությամբ ոչինչ չէին անում, և Մոնթեն եզրակացրեց, ինչպես տեղեկանում ենք Հայաստանում նրա գրած մի անստորագիր հոդվածից, թե Ալեքին բուժումից զրկելը միտումնավոր էր, «որպեսզի նա այլևս չկարողանար պայքարել իր ժողովրդի համար»: Մոնթեն հավատում էր, թե որքան ինքը շուտ ազատի Ալեքին, այնքան նրա տեսողությունը, գոնե մասամբ, վերականգնելու հնարավորությունը մեծ կլինի:

Հակոբյանն, իր հերթին, Ալեքի բանտարկությունը համարում էր մարտահրավեր, որով պիտի ստուգվեր «Գաղտնի բանակի» հուսալիությունն ու վճռականությունը: Հաջորդ մի քանի օրերին Լոնդոնում, Փարիզում, Մարսելում, Ժնևում ու Մադրիդում տեղի ունեցած պայթյուններից փշրվեցին ու անձրևի նման թափվեցին «Շվեյցարական ավիաուղիների» գրասենյակների ու շվեյցարական այլ հաստատությունների բազմաթիվ պատուհանների ապակիներ: «Հայերի զինյալ գործունեության քննադատություն» գրքում Մոնթեն խոսում է 18 հաջողված ու չհաջողված պայթյունների մասին, որոնք 1980 թ. հոկտեմբերի 12-ի և 1981 թ. փետրվարի 5-ի միջև իրականացրել էր երևակայական «Հոկտեմբերի 3» խմբավորումը: Վնասվածքներ էին ստացել 21 անցորդներ, 4-ը՝ ծանր, ասկայն, զարմանալիորեն, մահ չէր եղել:

Քանի որ Մոնթեին արդեն տեսել էին Շվեյցարիայում, նրա համար շատ վտանգավոր կլիներ նորից այդ երկիրը գնալ և այնտեղ գործունեություն ծավալել: Եթե նրան ձերբակալեին, Ալեքը կզրկվեր իր ազատության համար պայքարող մի ընկերոջից, և առավել դժվար կլիներ նրան բանտից հանելը: Իտալիայում ունեցած կապերի շնորհիվ Մոնթեն Հռոմում իջևանեց «Կարմիր բրիգադների» մի թաքստոցում՝ պատրաստվելով շվեյցարական դիվանագիտական ու առևտրական կազմակերպությունների դեմ հերթական գործողությունների: Միաժամանակ նա իր հյուրընկալների օգնությամբ իտալերեն էր սովորում: Շուտով Անկարայի դեմ հայերի բողոքները տեղ գտան նաև «Կարմիր բրիգադների» հաղորդագրություններում:

Եվրոպայից վերադառնալուց հետո Մոնթեն մի քանի նորակոչիկների օգնեց՝ պատրաստելու իրենց կտակները և նոր եռանդով նվիրվեց այն խմբավորմանը, հանուն որի իր ամենամոտ ընկերը

զրկվել էր տեսողությունից: Նրա հայտնվում էր ճիշտ պայմանավորված ժամերին ու լծվում գործի: Այլևս չէր ձայնակցում հեղափոխական երգեր երգողներին, իսկ երբ նրա արաբ ընկերները, թեյ լցնելով, հարցնում էին, թե նա որքան շաքար է ուզում, Մոնթեն պատասխանում էր՝ «Կարևոր չէ»: Երբ նա հեռանում էր՝ առանց հրաժեշտի սովորական խոսքերի, նրա նախկին ընկերները գլուխներն օրորում էին. նրանց սիրելի Մոնթեն դարձել էր Հակոբյանի՝ հումորից զուրկ հանձնակատարը:

Այդ փոփոխություններն ինձ նույնպես դուր չէին գալիս: Մի գիշեր եղբայրս եկավ «Ժողովրդական պայքարի ճակատի» հենակետ և ուզեց ինձ տեսնել: Ես պահակության էի և չգնացի հանդիպման վրան: Նա մի արաբ ընկերոջ ուղարկեց ինձ փոխարինելու, բայց ես դարձյալ չուզեցի գնալ: Այլևս չէի ցանկանում գործ ունենալ Հակոբյանի ու «Ցոթերորդ հարկի» հետ: Բացի այդ, մասնակցությունը հարավային Լիբանանում պարտիզանական շարժմանն ինձ ճիշտ էր թվում. այնտեղի ժողովրդին Իսրայելի ներխուժումներից պաշտպանելը կամ մեռնելը ես համարում էի պատվաբեր ու միանգամայն իրագործելի:

Մի քանի րոպեից եղբայրս լապտերով մոտեցավ պահակակետին: Նրան մթության մեջ մենակ տեսնելով՝ ես հուսահատվեցի: Այդ օրերին ինձ հանգիստ չէր տալիս գիշերային մի մղձավանջ, որ շատ իրական էր թվում: Ես կոտրում եմ Հակոբյանի գրասենյակ տանող կապույտ դուռը: Շեմին կանգնած է Մոնթեն, և ես տեսնում եմ նրա աջ ձեռքի կտորը: «Նրանք ձեռքս կտրեցին», — ասում է նա՝ արդարանալով ու ամաչելով: Հստակ չէ, թե «նրանք» ովքեր են: Միջանցքից մեզ վրա կրակոցներ են տեղում. ես ընկնում եմ գետնին, մի քանի անգամ կրակում իմ ատրճանակով և հետո շրջվում Մոնթեի կողմը: Նա դեռ ողջ է, բայց դանդաղ է շարժվում, և նրա ճակատի աջ կողմը չկա: Մինչ մենք տանջվում ենք մեր արյան մեջ, փամփուշտները շարունակում են մեզ խոցել: Երազն ավարտվում է հետևյալ հստակ մտքով. «Մենք մեռնում ենք շների նման»: Հետագա 13 տարիների ընթացքում ինձ հալածում էր այն սարսափը, թե եղբայրս մեռնելու է դանդաղ, ահավոր մահով:

Երբ հարավային Լիբանանում իմ առաքելության ժամկետը լրացավ, ես հույս ունեի կամ նոր հանձնարարությամբ վերադառնալ այնտեղ, կամ աշխատել Մահմուդ Լաբադիի՝ «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» տեղեկատվական գրասենյա-

կի տնօրենի մոտ Բեյրութում: Հակոբյանը, սակայն, պահանջեց կամ միանալ «Գաղտնի բանակին», կամ Լիբանանից հեռանալ: Մոնթեն միջնորդեց ինձ համար, բայց ապարդյուն:

1981 թ. սկզբին ես վերադարձա Միացյալ Նահանգներ և իմ բարեհաջող ժամանման մասին Հակոբյանին մի ծանոթի միջոցով լուր ուղարկեցի: Ուզում էի, որ Մոնթեն գոնե իմ վերադարձի համար չտագնապի, սակայն Հակոբյանը նեղություն չէր քաշել նրան տեղյակ պահելու: Մի քանի օր ինձնից տեղեկություն չունենալով՝ Մոնթեն անհանգստացավ, թե Հակոբյանը կարող էր ինձ սպանած լինել: Նա լսել էր հեռախոսային մի խոսակցություն, որի ընթացքում Հակոբյանը ոպառնացել էր սպանել Ալեքի դաշնակցական եղբորը. ուրեմն նա ինչո՞ւ չպետք է նաև ինձ սպաներ: Ի վերջո իմանալով իմ ապահով վերադարձի մասին՝ Մոնթեն թեթևություն զգաց, բայց կասկածը շարունակում էր նրան կրծել՝ ինչպես որդն՝ ընկույզը: Նա մինչ այդ Հակոբյանին համարում էր մոլորյալ, բայց ուղղելի «հեղափոխական ընկեր»: Այժմ նրա մտքով հանկարծ անցավ, որ շատ հեշտ էր «էշ նահատակ» դառնալը: Մոնթեն սկսեց ատրճանակով քնել:

Այդ օրերին Հակոբյանն ամեն օր կես շիշ վիսկի էր կոնծում, սովորաբար՝ ուշ ժամերին: Զցանկանալով մահմեդական ծանոթների աչքին երևալ՝ նա ոգելից խմիչքների խանութ իր համար վիսկի դնելու էր ուղարկում որևէ նորակոչիկի: Մոնթեին դուր չեկավ, որ այդ նորակոչիկներից երկուսը՝ Թիամաշկ ու Նիհար Աբու Մահմուդը և սպիտակամորթ ու մկանուտ Լուլուն, Հակոբյանին դիմում էին «մուալլեմ» («առաջնորդ») բառով:

Շուտափույթ դատավարությունից հետո Շվեյցարիայի իշխանություններն Ալեքին վտարեցին իրենց երկրից: Լիբանանցի երիտասարդ եռանդուն խորհրդարանական Զահեր ալ-Խաթիբը, որ «Աշխատավորների լիգա» կոչվող փոքր ընկերակցության ղեկավարն էր, կազմակերպեց 1981 թ. փետրվարի 12-ին Ալեքի վերադարձը Բեյրութի օդանավակայան: Նրան տարան «Աշխատավորների լիգայի» շենքի երկրորդ հարկում գտնվող մի գրասենյակ, և սփյուռքի թերթերը, Թեհրանից մինչև Լոս Անջելես, հայտարարեցին. «Ալեքն ազա՛տ է»: Երբ լուրը տարածվեց, նորակոչիկների մեծ հոսք եղավ դեպի «Յոթերորդ հարկ»: «Գաղտնի բանակն» արագ ձեռք բերեց բազմաթիվ ակտիվ անդամներ ու հազարավոր համակիրներ տասնյակ երկրներում՝ Կանադայից մինչև Հնդկաստան:

Այդուհանդերձ, ինչպես նորեկների համար շուտով պարզ դարձավ, «Գաղտնի բանակը» շարունակում էր մնալ մեկ հոգու «ձեռնարկություն»: Լրագրողները հարցազրույցներ էին անցկացնում «Կենտրոնական կոմիտեի» կնգուղավոր անդամների հետ՝ Միհրան Միհրանյան, Վահրամ Վահրամյան կամ Մուրադ Արմենյան անուններով: Բայց կնգուղի ու այդ անունների հետևում մեկ մարդ էր՝ Հակոբյանը: Ալեքն ու Մոնթեն նրան խնդրում էին իրոք ստեղծել կենտրոնական կոմիտե, բայց նա չէր ուզում հրաժարվել միայնակ որոշումներ ընդունելու իր մենաշնորհից: «Այս կազմակերպությունը պոռնիկի նման է, — մի անգամ իր ծուռ ժպիտով ասել էր նա ինձ. — բազմաթիվ տղամարդիկ են գալիս ու գնում, իսկ մենք մնում ենք նույն տեղում»: Նա իր մասին խոսում էր թագավորական հոգնակիով՝ «մենք»:

1981 թ. հունվարի կեսին Իտալիայի իշխանությունները դիմել էին «Ֆաթահի» մի ներկայացուցչի՝ Հաել Աբդուլ-Համիդ անունով, որ նա իրենց օգնի «Գաղտնի բանակի» հետ բանակցել «Հրադադարի» համար: Իտալացիները խոստացել էին նպաստել Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ճանաչմանը, եթե «Գաղտնի բանակը» հրաժարվեր Իտալիայում պայթյուններ անելուց: Մոնթեն ներկա էր առաջին բանակցություններին, որոնք տեղի ունեցան «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» մի այլ անդամի՝ Աբու Հիշամի տանը: Պաղեստինցի միջնորդների օգնությամբ իտալացիները մի շարք «գործնական» առաջարկներ արեցին, որոնց թվում՝ փակել տրանզիտային կենտրոնները, որպեսզի Խորհրդային Միությունից արտագաղթը դադարի: Մոնթեին նման միջոցառումները ոգևորիչ չթվացին: Փոխարենը նա առաջ քաշեց մեկ այլ պայման. «փոխադարձ վստահության հասնելու համար» թող դեսպանատունը կազմակերպի Ալեքի աչքի բուժումն Իտալիայում: Երբ Յասիր Արաֆաթը Մոնթեի խնդրանքը հայտնեց Իտալիայի դեսպանատանը, հաջորդ օրը «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» նախագահի քարտուղարը Հակոբյանին տեղեկացրեց, որ իտալացիները համաձայն են: Մեկ շաբաթ չանցած Ալեքն, ընտանիքի անդամների ուղեկցությամբ, մեկնեց Իտալիա: Այնտեղի ամենաժամանակակից հիվանդանոցներից մեկում 10 օր բուժում անցկացնելուց հետո, սակայն, բժիշկները եզրակացրին, որ ցանցաթաղանթի նյարդն անդառնալիորեն վնասված էր: Ալեքը վերադարձավ Բեյրութ՝ կուրության դատապարտված:

Մոնթեն Շվեյցարիայի իշխանություններին մեղադրում էր չարամիտ անտարբերության համար, ինչի պատճառով Ալեքը զրկվեց տեսողությունը գոնե մասամբ վերականգնելու հնարավորությունից: Բայց Մոնթեն ավելի շատ մեղադրում էր Հակոբյանին: Նա էր Ալեքին ուղարկել Շվեյցարիա՝ «Գաղտնի բանակի» լավագույն անդամին վտանգի ենթարկելով հանուն մանր դրամաշորթության: Ալեքն այն ամենն էր, ինչ Հակոբյանը չէր. նա կրթված էր, հստակ միտք ուներ, հայերեն լավ գիտեր, նրան հարգում էին և՛ հայերը, և՛ արաբները: Այժմ, Hôtel Beau-Site-ում տեղի ունեցած պայթյունի պատճառով, Հակոբյանի հիմնական մրցակիցը կույր էր ու միաժամանակ ակնառու: Ալեքը «Գաղտնի բանակի» համար գովազդի լավ միջոց էր դարձել. նա ուղեկցի օգնությամբ գնում էր մամլո ասուլիսների, մասնակցում հուղարկավորությունների, բայց վնասվածքները նրան երբեք թույլ չէին տա Հակոբյանին մրցակից լինել, իսկ նորից ձերբակալվելու մշտական վտանգը լավ հիմք էր՝ Ալեքին մեկուսացնելու համար:

Հակառակ Մոնթեի խորացող կասկածներին, «Գաղտնի բանակն» այդ օրերին Մերձավոր Արևելքի հայկական համայնքներում մեծ ժողովրդականություն էր վայելում: 1981 թ. ապրիլի 24-ին Մոնթեի ընկերները Թեհրանում ապշած նայում էին հազարավոր տղամարդկանց, կանանց, ծերերի, ուսանողների և նույնիսկ երեխաների, որոնք, «Գաղտնի բանակի» խորհրդանիշով դրոշներ, ցուցապաստառներ ու թռուցիկներ բռնած, խցանել էին Թուրքիայի դեսպանատան դիմացի փողոցը: Քանի որ դեսպանատան շուրջն այն պաշտպանելու նպատակով հավաքված ոստիկանները (Իրանի «Հեղափոխական պահակախումբը») ցուցարարներին չէին խանգարում, նրանք մագլցեցին ցանկապատի վրայով ու պատուհաններ կոտրեցին: Շփոթված ոստիկանները կրակեցին օդ, բայց դա միայն զայրացած մարդկանց ավելի բորբոքեց: Գործի դրվեց արցունքաբեր գազը, սակայն ցուցարարներն, իրենց ձեռքի թռուցիկները կրակ տալով, գազն օդի մեջ այրում էին: Նրանք մերկ ձեռքերով ցանկապատը պոկեցին, ներխուժեցին դեսպանատան տարածք, իջեցրին Թուրքիայի դրոշն ու վառեցին: Դեսպանատան աշխատողները ներսում վախից դողում էին:

Երբ Մոնթեն լսեց Թեհրանում տեղի ունեցածի մասին, ճանկեց հեռախոսի լսափողն ու զանգահարեց այնտեղի իր ընկերներին.

— Շնորհավորում եմ, — բացականչեց նա լսափողի մեջ:

Թեհրանի ինքնաբուխ ցույցն արդարացրեց տարիների նրա սպասելիքը. ցեղասպանության 65-ամյակին իր հայրենակիցներն օգտագործել էին առաջին իսկ հնարավորությունը՝ Թուրքիայի կառավարության դեմ հուժկու բողոք արտահայտելու համար: Է՛լ ավելի ոգևորիչ էր այն հանգամանքը, որ ամբոխը, թեկուզ մի քանի ժամով, հրաժարվել էր 6 տասնամյակ շարունակ սփյուռքահայության ղեկավարությունն իր մենաշնորհը համարած Դաշնակցությունից և համերաշխություն հայտնել անհայտ «Գաղտնի բանակին»: Այդ օրվանից ի վեր, «սփյուռքի ներուժը» ոգեկոչելիս, Մոնթեն հիշում էր արցունքաբեր գազի միջով Թուրքիայի դեսպանատան ցանկապատը խորտակելու գնացող զայրացած ցուցարարների լուսանկարները:

Ամիսներ շարունակ Մոնթեին հակասական մտքեր էին տանջում. «Գաղտնի բանակի» հետ կապված նրա հույսերին հակադրվում էին սաստկացող կասկածները Հակոբյանի հանդեպ: Նույնիսկ այն ժամանակ, երբ Թեհրանի ցուցարարները Մոնթեին անսահման ոգեշնչել էին, Հակոբյանի պահվածքը նրան ավելի ու ավելի էր զայրացնում: 1981 թ. մայիսի 28-ին պայթյուն եղավ Փարիզի հայկական համայնքի մի կենտրոնում՝ սպանելով հարևան շենքի պահակին: Հունիսի 4-ին ոստիկանությունը ռումբ հայտնաբերեց Jean-Goujon փողոցի վրա գտնվող հայկական եկեղեցու մուտքի մոտ, իսկ հաջորդ օրը պայթյուն եղավ մի ուրիշ հայկական եկեղեցու դիմաց՝ Փարիզի Issy-Les-Molineaux արվարձանում: Մոնթեն սկսել էր կասկածել, թե այդ պայթյուններն իրականում «Թուրք ֆաշիստների» գործը չէին, որոնք, իբր, դրանց համար պատասխանատվություն էին ստանձնել, այլ՝ Հակոբյանի ու իր սադրիչների:

1981 թ. հունիսի 20-ին Ալեքը ժամանեց Ցանթայի մոտ գտնվող անապատի ճամբարը, ինչպես ենթադրվում էր՝ նորակոչիկներին բարոյական լիցք հաղորդելու: Իրականում, սակայն, նրա գլխավոր նպատակն այնտեղ գտնվող Մոնթեի հետ Հակոբյանի դեմ իր կասկածները քննարկելն էր: Երկու ընկերները նստեցին ճամբարի հետևում գտնվող մի կրաքարե ժայռի: Մինչ Մոնթեն նայում էր անապատին, Ալեքն սկսեց պատմել Հակոբյանի ստերի, դաժանության ու անհաշտվողականության մասին. նա անհաջող զինյալ գործողություններ էր կազմակերպում, հարձակումների թիրախ դարձնում Փարիզի հայկական համայնքը, խախտում պայմանագրերն իր դաշնակիցների հետ, ռումբեր պայ-

թեցնում սրճարաններում ու մետրոյի կայարաններում՝ պատճառ դառնալով անիմաստ մարդկային զոհերի:

Ալեքը դադար տվեց՝ սպասելով Մոնթեի արձագանքին, բայց լսեց միայն չոր տատասկափշերի միջով փչող քամու ձայնը: Նա տեղյակ մարդու համոզվածությամբ շարունակեց նկարագրել, թե ինչպես էր Հակոբյանը ստորացնում կամավորներին, «Գաղտնի բանակի» շարքերում անվստահություն սերմանում, եղբայրություն անում «Դժոխքի» ու նրա նման նեոնացիստների հետ: Հակոբյանը չէր ուզում մեկ ուրիշին ներգրավել «Գաղտնի բանակի» գործունեության կարևոր ոլորտների հսկողության մեջ. նա դեմ էր, որ խմբավորումը դառնա իսկական հեղափոխական կազմակերպություն՝ հստակ նպատակներով ու հաշվետու, կոլեկտիվ ղեկավարությամբ: Իսկ ժամանակն անցնում էր, և հայերը բաց կթողնեին Թուրքիայում հասունացող հեղափոխությանը միանալու հնարավորությունը...

Մոնթեն շուռ եկավ իր կույր ընկերոջ կողմը, որի դեմքի վրա դեռ թարմ էին Ժնևի պայթյունից մնացած՝ կանաչ մանրաբեկորների հետքերը: Հաջորդ պահին Ալեքը խուլ հեկեկոց լսեց.

— Ի՞նչ է կատարվում, — հարցրեց նա:

Ես անցյալում տեսել էի եղբորս արցունքները, բայց միասին անցկացրած բոլոր տարիների ընթացքում չէի լսել, որ նա բարձրաձայն լաց լիներ: Այդ օրը, Ցանթայի ժայռի վրա, Ալեքը լսեց նրա հեկեկոցը: Մոնթեին ինքնատիրապետման համար մի ակնթարթ էր պետք.

— Հայ ժողովուրդը կորցրեց իր վերջին հույսը, — ասաց նա:

Գլուխ 8. Կասկածյալ ահաբեկիչը

Ցանթայի ժայռի վրա Մոնթեն ողբաց ավելի մեծ կորստի համար, քան անմեղ մարդկանց մահը: Նա, հատկապես այդ օրերին, համոզված էր, որ Հայաստանի ապագայի հիմքում իր հայրենակիցների կարողությունն էր՝ սեփական բանակով մարտնչելու հանուն 1915 թ. ցեղասպանության հետևանքով կորցրած իրենց հայրենիքի մեծ մասում ապրելու իրավունքի: Անկարայի վարչակարգը զավթել էր հայերի հայրենիքի երեք-քառորդը և շարունակում էր խոչընդոտել, Մոնթեի բառերով ասած՝ «հայերի պատմական ու մշակութային կապվածությանն» իրենց հայրենիքի՝ իբրև մեկ ամբողջության հետ: Եթե այդ բռնազավթման դեմ դիմադրություն չլիներ, ապա ոչ միայն սփյուռքահայերը կենթարկվեին ձուլման վտանգին, այլև բարոյալքումը պատճառ կդառնար փոքրիկ Խորհրդային Հայաստանից արտագաղթի, և «սպիտակ ցեղասպանությունն» այդպիսով կհաջողվեր:

1981 թ. հունիսյան այդ օրը ժայռից իջնելուց հետո Մոնթեն վճռեց «Հակոբյանի հարցը լուծել», այսինքն՝ հրեշին սպանել: Մոնթեն խորասուզվել էր Միսաք պապի ասած՝ «հայոց քաղաքականության՝ օձերով լի փոսի» հատակը, և այնտեղ բույն էր դրել թեփուկավոր կծիկ դարձած սևերես Հակոբյանը:

Մոնթեի ծրագիրը, սակայն, շուտով ընդհատվեց: Հուլիսի 11-ից սկսած՝ իսրայելական F-15-երը վերադարձան Լիբանան՝ Սիդոնի, Նաբաթիե քաղաք-շուկայի, ինչպես նաև Էյն էլ-Հիլուեի ու Ռաշիդիեի՝ փախստականներով խիտ բնակեցված ճամբարների վրա ռումբեր գցելու համար: Մոնթեն և, երևի, «Գաղտնի բանակի» 8 ուրիշ մարտիկներ «Ժողովրդական պայքարի ճակատի» երեք պաշտպանական դիրքերում ուժեր էին հավաքագրում (մեկը Համրա գյուղի մոտ էր, իսկ մյուս երկուսը՝ Քֆար Թիբնիթում ու շրջակայքում, Նաբաթիեից ոչ հեռու): Իսրայելական տանկերը միջին հեռավորության վրա հոնդյունով բլուրներն էին բարձրանում, իսկ վերևում պտտվում էին ուղղաթիռները՝ գցելով բռնկվող ֆոսֆոր, որի առկայծուն կապույտ ստվերները տարածվում էին Մոնթեի հողե բունկերի մոտակա քարերի ու թփերի վրա:

Քարտեզով, հեռադիտակով և ռադիոկապով զինված՝ Մոնթեն ու իր ընկերները հայտնվեցին աշխարհի ամենաուժեղ բանակներից մեկի դիմաց: Իր մաթեմատիկական գիտելիքները զուգակցե-

լով զորավարժությունների ընթացքում ձեռք բերած հմտությունների հետ՝ Մոնթեն ռադիոկապով թշնամու կոորդինատները հայտնեց հրթիռարձակների ու 130 միլիմետրանոց հրանոթների մոտ՝ հարավային առաջագծից մի քանի կիլոմետր հետ գտնվող պաղեստինցի հրետանավորներին: Ապա, ինչպես վկայեց Washington Post-ի լրագրող Ջոնաթան Ռանդալը, պաղեստինցիներն անվրեպ ու կործանարար կրակ բացեցին թշնամու կողմը: Նրանք ռմբակոծեցին իսրայելցիների՝ Կիրյաթ Շեմոնայի և Նահարիյայի (Գալիլեայում) ռազմական հենակետերը, իսկ հուլիսի 22-ին Խարդալի կամրջի մոտ, Մոնթեի դիրքից ոչ հեռու, թշնամու 2 տանկ խփեցին:

Հուլիսի 24-ին, Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ հաստատված հրադադարից հետո, սավառնակները երկնքից անհետացան, և Քֆար Թիբնիթի առաջավոր հսկիչ ջոկատը դուրս եկավ խրամատներից: Մոնթեն, արևը դեմքին, աչքերը հառեց Գալիլեայի կողմը: Հրետանային կրակի և օդային ռմբակոծության՝ անցած 14 օրերի ու գիշերների ընթացքում իսրայելցիները, իրենց ամերիկյան F-15-երով, F-4 Phantom ռմբակոծիչներով ու ֆրանսիական Mirage-ներով, խլել էին առնվազն 450 հոգու կյանք և վիրավորել մոտ 1000-ին: Այդ զոհերից շատերը լիբանանցիներ էին, ոչ պաղեստինցիներ, և նրանց մեծ մասը՝ խաղաղ բնակիչներ: Մարտերից հետո նույնիսկ New York Times-ը խոստովանեց, որ «Իսրայելի ավերիչ հարձակումները պաղեստինցի պարտիզաններին վնաս չէին (կամ գրեթե չէին) պատճառել»: Մոնթեի համար սա հաստատումն էր այն դասի, որ նա առել և որի շուրջը երկար մտածել էր տարիներ առաջ Վիետնամում, այն է՝ վճռական մարտիկները կարող են պահել իրենց դիրքերը, թշնամու անհամեմատ գերակշռող ուժերին հետ մղել և կռվից դուրս գալ անվնաս:

Իսրայելի նահանջից հետո Հակոբյանն իր կնոջ ու նրա աղջկա՝ Տոանիի հետ տեղափոխվեց արևելյան Բեյրութում գտնվող «Օդանավի շենքի» մի բնակարան, Սինն էլ-Ֆիլ մայրուղու վրա տեղակայված՝ «Փաղանգավորների» կենտրոնից ոչ հեռու: Օրվա աշխատանքն ավարտելուց հետո «Գաղտնի բանակի» պարագլուխն իր մեքենան քշում էր տուն՝ անցնելով Թանգարանի կողքի «փաղանգավորական» պահակակետերով: Բնակարան մտնելով՝ նա իր վերանորոգված բաղնիքում տաք ցնցուղ էր ընդունում, սև կեղծ մետաքսից կիմոնո հագնում, փովում Gallerie Khabbaz-ի

արտադրած փափուկ երեսածածկոցին ու Winston վառում: Մարիան նրա համար վիսկի էր լցնում, իսկ հետզհետե ավելի խորթացող Տոանին, մուճակներ հագած, դժգոհ տեսքով պտտվում էր բնակարանում: Այս տեսարանը Մոնթեին նողկանք էր պատճառում: Հակոբյանի կենցաղը նման էր այն անդուր գործարարների ապրելակերպին, որոնցից նա չէր տարբերվում նաև այլ առումներով: Բացի այդ, նրա նոր բնակարանը Մոնթեի առաջ լուրջ խնդիր դրեց. քանի որ այժմ «Գաղտնի բանակի» առաջնորդը գիշերները «Յոթերորդ հարկում» հազվադեպ էր մնում, նրան վերացնելը շատ դժվար էր լինելու:

Ի լրումն մյուս բարդությունների, Մոնթեն շուտով ստիպված եղավ նորից շեղվել իր նպատակից: Հակոբյանը նրան հանձնարարեց մարզել 4 կամավորների՝ եվրոպական որևէ մայրաքաղաքում «զինյալ քարոզչության» մի դիտարժան առաքելությամբ հանդես գալու համար: Օպերացիան, Թուրքիայում ավերակների տեսքով պահպանված հին հայկական միջնաբերդի անունով, պետք է կոչվեր «Վան»: Մտածելով, թե այդ գործողությունը «Գաղտնի բանակի» ներքում «կուժեղացներ առաջադիմական միտումները», Մոնթեն դարձյալ հետաձգեց Հակոբյանի դեմ իր դավադրությունը և անողոք վճռականությամբ կենտրոնացավ առաջադրանքի իրագործման վրա: Ողջ օգոստոսի ու սեպտեմբերի ընթացքում Վազգեն Սիսլյանը, Գևորգ Գուզելյանը, Արամ («Անդո») Բասմաջյանը և մի նորակոչիկ՝ Հակոբ Ջուլֆայանը, մարզվեցին հարավային Լիբանանի ծովափից ոչ հեռու՝ Թելլեթ էլ-Ուարդեի («Վարդերի բլրի») վրա գտնվող մի սոր ճամբարում: Զորանոցը հին քարե տուն էր կարմիր սայլուղու վերջում, որն անցնում էր ձիթենիների ու թզենիների և խաղողի վազերով քարե սանդղավանդների միջով: Ամառվա վերջում չորս կամավորներն արդեն որպես կոմանդոներ բավական մարզվել էին, երբ Մոնթեն զորավարժություններին գումարեց օլիմպիական մրցումների որոշ տարրեր. վազք, ռիթմիկ մարմնամարզություն, խմբային զորաշարժեր, կարատե, ատրճանակներ, ապա՝ հատուկ զենքեր ու պայթուցիկներ:

1981 թ. սեպտեմբերի 24-ին մարզումները տվեցին իրենց արդյունքը: Վազգենը, Գևորգը, Արամը և Հակոբը Փարիզում, Boulevard Haussman 170 հասցեով, Opéra Garnier-ի մոտ, մտան Թուրքիայի հյուպատոսարանի նախասրահ: Այնուհետև նրանք մեջքի պայուսակից հանեցին մի «Կալաշնիկով» ու ատրճանակներ,

նռնակների ապահովիչները հանեցին և, դրանք իրենց գլխավերևում բռնած, առաջացան ներս՝ սենյակ-սենյակի հետևից հյուպատոսարանը գրավելու համար: Մի թուրք պահակ կրակեց Վազգենի փորին, բայց իսկույն պատասխան կրակոցով սպանվեց: Հակոբ Ջուլֆայանին նույնպես փամփուշտ դիպավ, սակայն պաշարման ողջ ընթացքում վիրավորներն արյունահոսությունն ու ցավն արհամարհեցին:

Շուտով դեպքի վայր եկան ոստիկաններ ու հեռուստատեսության աշխատակիցներ, ինչպես նաև՝ զայրացած թուրք ներգաղթյալներ: Ոստիկանության բարիկադների հետևում մոտ 500 թուրքեր էին հավաքվել՝ ի պաշտպանություն պատանդների, բայց հայտնվեցին նաև հայեր՝ 150 հոգի՝ իրենց աջակցությունը հայտնելու կոմանդոներին: Իրար հրելը շուտով վերածվեց բռնցքամարտի, և ոստիկանները ջանում էին միմյանցից բաժանել երկու բարկացած խմբերին:

Հյուպատոսարանի ներսում հարձակվողներն ազատ արձակեցին մի մոր՝ իր երեխայի հետ, և երբ նրանք նկատեցին, որ փոխհյուպատոսի ստացած հրազենային վնասվածքից շատ արյուն է հոսում, ազատեցին նաև նրան: Հյուպատոսարանը 15 ժամ գրաված պահելուց և իրենց նպատակն իրագործված համարելուց հետո չորս տղաները զենքերը վայր դրին: Պատանդներից մի քանիսն ուղեցին դեսպանատնից դուրս գալուց առաջ անպայման սեղմել նրանց ձեռքը, իսկ մի վիրավոր ոստիկաններին ասել էր. «Ես վստահ եմ, որ ինձ վրա կրակոցը միտումնավոր չէր, այլ սոսկ պատահականություն»: Տեսաժապավենի միջազգային հեռարձակման ժամանակ կադրի մեջ երևաց դեսպանատնից դուրս եկող Վազգեն Սիսլյանը՝ մի ձեռքով վիրավոր փորը բռնած, բայց խրոխտ, և մյուս ձեռքը, V-աձև մատներով, վեր պարզած՝ որպես հաղթանակի նշան: Ֆրանսիացի ոստիկանները, նրանց ձեռնակապանքներ հագցնելով, տարան Փարիզից 20 կմ հեռու՝ Վիշի քաղաքում գտնվող, Maison de Correction de Fresnes անունով մի նախկին համակենտրոնացման ճամբար:

Մոնթեն «Վան» օպերացիան համարեց «Գաղտնի բանակի»՝ երբևէ իրականացրած գործողություններից ամենահաջողվածը: Այն պահանջել էր պլանավորում, մարտական հմտություն, քաջություն ու արագ կողմնորոշում: Սպանվել էր մի հոգի՝ այն պահակը, որն առաջինն էր կրակել, բայց ուրիշ լրջորեն տուժածներ, բացի հարձակվողներից ու փոխհյուպատոսից, չկային: Խիզախ

Վազգենը, Գևորգը, Հակոբն ու Արամը ոգեշնչեցին ֆրանսահայերին, այլև սփյուռքի հազարավոր ուրիշ հայրենակիցների, որոնց մտքով բնավ չէր անցնի, թե իրենք մի օր կարող են «ահաբեկիչների համակիր» լինել:

Մինչ այդ Մոնթեն ստացավ մեկ այլ «արտասահմանյան օպերացիայի» հրահանգ: Հոկտեմբերի 13-ին նա գնացքով ժամանեց Հռոմ, իրերը դրեց Թուրքիայի դեսպանատնից ոչ հեռու գտնվող մի հյուրանոցում և վարձու մեքենան քշեց պայմանավորված վայրը՝ քաղաքից դուրս, որպեսզի իտալացի ծանոթներից ատրճանակ վերցնի: Երբ նա, սակայն, տեսավ 7 միլիմետրանոց ավտոմատ ատրճանակը, բողոքեց, որ դա խաղալիք է: Թուրքիայի դեսպանատան աշխատողները վարում էին «զրահապատ» մեքենաներ՝ հակափամփուշտային ապակիներով, և նրանց վրա հարձակվելու համար պետք էր առնվազն 9 միլիմետրանոց ատրճանակ՝ մարմնի մեջ մասերի բաժանվող փամփուշտներով: Փոխարենը՝ Հակոբյանը Մոնթեին տվել էր փոքր տրամաչափի զենք:

— Սրա տեղը կարող էին ինձ նիզակ տալ, — մրթմրթաց Մոնթեն:

Հոկտեմբերի 25-ին նա ճաշեց «Իսպանիայի հրապարակից» ոչ հեռու գտնվող՝ գետի վրայի մի փոքր կղզու դատարկ արճարանում: Ապա քայլեց դեպի Կոլիզեումի մերձակա մի այգի՝ խորասուզված ճարտարապետության ու տարբեր ժողովուրդների բարքերի մասին մտքերի մեջ: Նա իջնում էր այգի տանող աստիճաններով, երբ հանկարծ կանգ առավ. նրա դիմաց Թուրքիայի հյուպատոսարանի պաշտոնյայի մեքենան էր՝ մեկն այն մեքենաներից, որոնք նա 2 շաբաթ շարունակ լրտեսել էր:

Մոնթեն շտապեց հյուրանոցի իր սենյակն՝ ատրճանակը վերցնելու, և խլացուցիչը հագցնելիս փորձեց կենտրոնանալ. այս անգամ ինքը կսպանի միայն դիմացի նստարանին նստած չափահաս տղամարդու: Ատրճանակն իր կապույտ բաճկոնի տակ թաքցրած վերադառնալիս՝ նա կազմեց արագ հարձակման ու փախուստի մի պլան: Փողոցն անցավ՝ մոտենալով դեսպանատան մեքենային: Երկրորդ քարտուղար Գոկբերկ Էրգենիկոնը նկատեց նրան, երբ հասել էր անիվին: Թուրքն սկսեց բարձրացնել պատուհանն ու փնտրել իր 9 միլիմետրանոց ատրճանակը: Մոնթեն հանեց իր 7 միլիմետրանոցը և խլացուցիչը մտցրեց պատուհանի՝ փոքրացող 3-4 մատնաչափ արանքից: Էրգենիկոնը կրակեց՝ վիրավորելով Մոնթեի ձախ բազուկն ու նրա առաջին կրակոցը չնդելով: Երբ

պատուհանը փակ էր, Մոնթեն մի քանի անգամ էլ կրակեց, բայց 7 միլիմետրանոց փամփուշտները ապակին չծակեցին: Նա գիտեր, որ իր առաջին կրակոցը միայն քերծել էր պաշտոնյային, բայց իմաստ չուներ փորձել գործն ավարտել: Զախողակ վրիժառուն արյունահոսող ձեռքը խորը մտցրեց բաճկոնի գրպանի մեջ և արագ հեռացավ դեպքի վայրից:

Մի քանի օր անց, երբ նա արդեն Միլանի մի թաքստոցում էր, իտալացի ընկերներից մեկը նրան բուժման համար մեքենայով տարավ Փարիզ: Բժիշկն արձակեց ձեռքին փաթաթված սրբիչը. փամփուշտը 5 օր Մոնթեի բազուկի մեջ էր մնացել:

Հակոբյանը նույնպես Ֆրանսիայում էր: «Գաղտնի բանակի» համար նվիրատվություններ հավաքելուց հետո նա իր մի դժկամ հովանավորյալի համոզեց նոյեմբերի 11-ին միասին վերադառնալ Բեյրութ: «Մերձավոր արևելյան ավիաուղիների» օդանավի ուղևորների ցուցակում այդ ուղեկցի անունը Դիմիտրիու Զորջիու էր, բայց իրականում, իհարկե, դա Մոնթե Մելքոնյանն էր: Հակառակ իր սովորական խոհեմությանը, նա ստիպված էր ճամփորդել կիպրոսյան այն կեղծ անձնագրով, որը հայթայթել էր պաղեստինցի խռովարար Աբու Նիդալը:

Օդանավը մեկ ժամ դանդաղեց Օռլիի օդանավակայանի թռիչքագոտում, իսկ հետո ուղևորներին խնդրեցին օդանավից դուրս գալ՝ մինչև որ պատուհաններից մեկի վնասված ապակին կփոխարինվեր նորով: Հակոբյանն ու Մոնթեն կլուխները կախ շտապեցին օդանավակայանի նախասրահի ռեստորանը: Հանկարծ բարձրախոսներով հնչեց «Դիմիտրիու Զորջիու» անունը: Հակոբյանը հեռացավ օդանավակայանից, բայց նրա ուղեկիցը հանգիստ տեսքով մնաց նստած ու վերջացրեց իր պատվիրած նախաճաշը: Մի քանի րոպե անց, 10:45, օդանավակայանի անվտանգության մի ծառայող, քաղաքացիական հագուստով, մոտեցավ նրան՝ հարցնելով նրա անունն ու պահանջելով անձնագիրը: Մոնթեի կեղծ անձնագրի համարը, ինչպես թվացել էր ոստիկաններին, նման էր լիբիացի երկու կասկածյալների անձնագրերի համարներին: Վերջիններս ձերբակալվել էին Փարիզի՝ Կոպենհիկոսի փողոցի վրա գտնվող սինագոգի մոտ տեղի ունեցած պայթյունի համար: Մոնթեի անձնագրի համարն էր՝ A328140, իսկ կասկածյալներինը (որոնք մոտոցիկլետ էին վարձել՝ պայթուցիկը տեղափոխելու համար)՝ A308747 և A303139: Պայթյունը խլել էր 4 հոգու կյանք, որոնց թվում՝ մի փոքր երեխայի, և վիրավորել 22 հոգու:

Օդանավակայանի ոստիկանությունը կարծում էր, թե բռնել է միջազգային ահաբեկչության մի «մեծ ձկան», և կասկածյալի պայուսակների ստուգումը դա հաստատեց: Պայուսակներում կային «Գաղտնի բանակի» հրապարակումներ, թերթերից կտրված հաղորդագրություններ «Վան» օպերացիայի մասին, 10.200 ֆրանկ և 1-2 անլար խոսափող: Մոտ 17:30, մի քանի ժամ տևած անպտուղ հարցաքննությունից հետո, կասկածյալին պաշտոնապես ձերբակալեցին ու տարան «Արդարադատության պալատ» (Palais de Justice): Այնտեղ նրա ձախ բազուկին նկատեցին փամփուշտի թարմ հետքը, որ համապատասխանում էր Էրգենիկոնի նկարագրությանը, թե ինչպես էր նա վիրավորել իր վրա հարձակված մեկին Հռոմում: Մոնթեն այդ գիշերն անցկացրեց «Արդարադատության պալատի» ներքին բակում գտնվող՝ 36-րդ կալանախցում:

Հաջորդ օրը երկու պայթյուն վնասեցին Air France-ի գրասենյակն ու «Ֆրանսիական մշակութային կենտրոնը» Բեյրութում: Հարձակումների համար իրեն պատասխանատու հայտարարեց մինչ այդ անհայտ «Օռլիի խմբավորումը»: Ձերբակալության երրորդ օրը Փարիզ ժամանեց Էրգենիկոնը՝ փորձելու համար ճանաչել իր վրա մահափորձ կատարած անձին: Մոնթեն որոշեց, որ սափրվելու ժամանակն է: Քանի որ սրիչ չկար, նա կալանախցի պատերի վրա սրեց կարագ կտրելու մի դանակ և այն տարավ-բերեց իր այտերի ու դնչի վրայով: Սափրվելուց հետո նա կարծես ձեռնամարտի բռնված լիներ մի վայրի կատվի հետ: Երկկողմանի հայելու դիմաց կանգնելուց առաջ նա իր կոշիկների մեջ ճմրթած թղթեր խոթեց՝ ավելի բարձրահասակ երևալու համար, իսկ ապա ինչ-որ բաներ դրեց իր ատամների ու այտերի արանքը, որպեսզի դեմքն ավելի այտեղ դառնա: Էրգենիկոնը հայելու հետևից հայացքով տնտղեց նրան և շարքում կանգնած 5 մյուս անձանց: 40 րոպե անց նա մատնացույց արեց Fresnes քանտի մի բանտապահի, որը Մոնթեին ամենևին նման չէր:

Ոստիկանությունը, որոնց Մոնթեն անվանում էր les flics, չէր կարող կասկածյալին երկար պահել՝ միայն կեղծ անձնագրի համար, և իմաստ չուներ նոր պայթյունների առիթ տալ: Ուստի, երբ լրացավ նախնական հետախուզության 48 ժամը, դատախազությունից կասկածյալին ազատելու հրահանգ եկավ: Ոստիկանությունը կատաղած էր, իսկ Մոնթեն հանգիստ, թեև հսկողության տակ, իր հաշվին մի գիշեր անցկացրեց Orly Hilton հյուրանոցում:

Եթե ամեն ինչ հարթ ընթանար, նա կարող էր հաջորդ առավոտյան նստել 11:00-ին Բեյրութ թռչող օդանավը:

Այդ ընթացքում, սակայն, «Ֆիգարո»-ի շաբաթ օրվա համարում տպվեց հաղորդագրություն մի կասկածյալ ահաբեկչի ձերբակալության մասին՝ գրգռելով հասարակության «ցավոտ տեղը» և Մոնթեին կապելով Կոպեռնիկոսի փողոցի վրա տեղի ունեցած պայթյունի հետ: Վստահ լինելով, որ հասարակական կարծիքն իր օգտին է, ոստիկանությունը նորից կալանեց Մոնթեին ու նրա դաստակներին ձեռնակապանքներ հագցրեց: Այնուհետև նրան վիճակված էր 25 գիշեր անցկացնել Fresnes բանտի 2-րդ բաժանմունքի 88-րդ բանտախցում: Այդ նույն բանտում էին գտնվում «Վան» օպերացիայի մասնակիցները:

Արա Թորանյանն իբրև Մոնթեի դատապաշտպան վարձեց Փարիզի Antony արվարձանի թաղապետ, «գոլլիստական» հայացքների տեր Պատրիկ Դևեճյանին: Միաժամանակ «Օուլիի խմբավորման» հարձակումները շարունակվում էին. Հակոբյանը Մոնթեի ազատ արձակման համար ճնշում էր գործադրում: 1981 թ. նոյեմբերի 13-ին պայթած մի նռնակ վիրավորեց Porte de Charenton-ի մոտ գտնվող Boulevard Périphérique-ով իր մեքենան վարող մի ոստիկանի: Հաջորդ օրը La Bourdonnais-ի մի կայանատեղում, Les Vedettes de Paris-ի մոտ, հերթական պայթյունից ծումվեց մետաղյա ցուցանակը: Այնուհետև, մեկ օր անց, Բեյրութի արևելյան արվարձաններում չորս ռումբեր հրդեհեցին Air France-ի գրասենյակը, Banque Libano-Français-ի, Union des Assurances de Paris-ի և Fransabank-ի մասնաճյուղերը: Նույն օրն «Օուլիի խմբավորման» մեկ այլ ռումբ պայթեց Փարիզի Boulevard Saint Michel-ի վրա գտնվող McDonald's-ի մոտ՝ առանց վնաս հասցնելու, իսկ նոյեմբերի 16-ին հերթական պայթյունը Gare de l'Est կայարանում վիրավորեց երկու անցորդի: Նոյեմբերի 19-ին Ֆրանսիայի՝ օդանավակայանների անվտանգության ծառայությունը, տագնապ հայտարարելով, փակեց Օուլիի օդանավակայանը, որովհետև անհայտ մեկը հեռախոսով սպառնացել էր պայթեցնել թռիչքների հսկողության աշտարակը: Իսկ «Օուլիի խմբավորում» ստորագրությամբ մի հաղորդագրության մեջ ասվում էր, թե ֆրանսիացի դիվանագետներ են սպանվելու, և օդում Air France-ի ինքնաթիռ է կործանվելու: 1981 թ. դեկտեմբերի 3-ին Հակոբյանը ֆրանսիական մի շաբաթաթերթի լրագրողներին ասել էր, թե

իրենք պատրաստ են Ֆրանսիայի իշխանություններին շատ լուրջ հարված հասցնել:

1981 թ. դեկտեմբերի 7-ին, դատավարության նախորդ օրը, Մոնթեին հանձնվեց դատարանի մի որոշում, համաձայն որի նրան արգելվում էր երբևէ Ֆրանսիա վերադառնալ: Կեղծ փաստաթուղթ կրելու մեղադրանքով դատվող Ջորջիուն դեկտեմբերի 8-ին կայացած կարճ դատավարության ինքնապաշտպանական ճառում հայտարարեց. «Բոլոր հայերը կեղծ փաստաթղթեր են կրում. բրազիլական, ֆրանսիական, լիբանանյան և այլն: Դա ոչինչ չի նշանակում. այդ փաստաթղթերը կեղծ կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ հայկական չեն»: Նա դատապարտվեց 4 ամսով պայմանական ազատազրկման, իսկ հաջորդ օրը, ավելի շուտ 2, քան 20 րոպե տևած մի խորհրդակցությունից հետո, դատավորը կարգադրեց կասկածյալ ահաբեկիչին Ֆրանսիայից վտարել: Ոստիկանները նրան նստեցրին Բեյրութ թռչող ինքնաթիռ:

Դեկտեմբերի 10-ին Հակոբյանը նոր ժամանած Մոնթեին օդանավակայանից տարավ «Աշխատավորների ձայն» ռադիոկայան՝ մամլո ասուլիսի: «Գաղտնի բանակի» ներկայացուցիչների կողքը նստած էր աչքերի տեղում դիվային կտրվածքներով սև կնգուղ հագած մի ֆիգուր, որին ներկայացրին իբրև Դիմիտրիու Ջորջիու: Հետո Հակոբյանն ճապարարի նման կնգուղը բացեց՝ նապաստակի փոխարեն ներկաներին ցուցադրելով Մոնթեի խուզած գլուխը: «Թեև Ջորջիուն մի քանի հարցի պատասխանեց, նրա ինքնությունն անհայտ է մնում: Երևաց, սակայն, որ այդ խոսնակն էապես վերահսկում է գործընթացները», — ասվում էր 1981 թ. դեկտեմբերի 16-ով թվագրված՝ Բեյրութում Միացյալ Նահանգների դեսպանատան զեկուցման մեջ:

Մոնթեի դեմքը նիհարած էր և շատ գունատ: Մոտ մեկ ամիս նա միայնակ անցկացրել էր ջանտախցում՝ ենթարկվելով հարցաքննությունների ու սպառնալիքների, որպեսզի բացահայտի իր ինքնությունն ու մայրենի լեզուն: Բայց նա կարողացել էր դիմանալ և ֆրանսիական ոստիկանությանը համոզել, թե իր իսկական անունը Խաչիկ Ավետիսյան է, և ինքը Թուրքիայում ծնված հայ է, որն ապրում է Լիբանանում: Իսկ այժմ, ազատ արձակվելուց ընդամենը մի քանի ժամ անց, Հակոբյանը ճիշտ էր համարել Բեյրութի միջազգային լրատվամիջոցներին հայտնելու Մոնթեի իսկական անունը, և մի քանի ոստիկանական գործակալություններ, որոնց թվում՝ «Ինտերպոլն» ու Թուրքական MIT-ը, արդեն սկսել

էին նրա հետապնդումը: Մոնթե Մելքոնյանը փնտրված հանցագործ էր՝ հրապարակավ բացահայտված ինքնությամբ, և ստիպված էր, «անվտանգության նկատառումներով», այս անգամ բանտարկվել «Յոթերորդ հարկում»՝ Հակոբյանի «աջ ձեռքերի»՝ Աբու Մահմուդի ու Լուլուի հսկողության տակ: Ինչպես իրենից առաջ Ալեքը, նա հայտնվել էր ճարպիկ մարդու ստրուկի վիճակում, և այդ ճարպիկ մարդը պատրաստ էր Մոնթեի պարանոցին գցված կարճ օղափոկով նրան ղեկավարել:

Ամիսներ էին անցել այն օրվանից, երբ Մոնթեն վճռել էր, որ Հակոբյանը պետք է «հեռանա»: Նա ստիպված էր եղել ամիսներով հետաձգել «վճռական քայլերը»՝ մի շարք իրադարձությունների պատճառով. Իսրայելի ներխուժումը հարավային Լիբանան 1981 թ. հուլիսին, «Վան» օպերացիայի նախապատրաստական մարզումները, մահափորձը Հռոմում և ձերբակալությունը Փարիզում. այս դեպքերը տևել էին 6 ամիս: Եվ հիմա, երբ Մոնթեն կալանված էր «Յոթերորդ հարկում», իսկ Հակոբյանն արևելյան Բեյրութից միայն «աշխատանքի էր գալիս», նրան վերացնելը շատ դժվար էր լինելու: Ի լրումն այս ամենի, «Գաղտնի բանակի» առաջնորդն, ասես «Յոթերորդ հարկում» վտանգ կանխազգալով, օրերով անհետանալու սովորություն էր ձեռք բերել. նա առանց զգուշացնելու հանկարծ «գործուղումների» էր գնում Միջերկրական ծովի շրջակա երկրներ և վերադառնում նույնքան անսպասելիորեն:

Մոնթեն դարձյալ ստիպված էր դանդաղել՝ կատարելով իր պարտականություններն ու սպասելով հարմարավետ առիթի: Բայց նրա անցկացրած յուրաքանչյուր մարզում, նրա գրած յուրաքանչյուր հաղորդագրություն և նրա կորզած յուրաքանչյուր «նվիրատվություն» միայն ամրապնդում էին Հակոբյանի դիրքերը, նոր պատանիների ու երիտասարդների շեղում ճշմարիտ ուղուց ու վտանգի ենթարկում հերթական անմեղ կյանքեր:

Մոտ 4 ամիս էր անցել Փարիզից Բեյրութ Մոնթեի վերադարձից ու այն օրվանից, երբ նա երդվել էր արագ «լուծել Հակոբյանի հարցը»: Շուտով, սակայն, նա հարկադրված էր գործը նորից հետաձգել: Մարտի 31-ին մեր մայրը, հայրը, Մարսիան ու Մայլեն մի արծաթագույն ուղևորատար ինքնաթիռից իջան Բեյրութի օդանավակայանում: Կահիրեից թռիչքը տևել էր 45 րոպե: Լուլուն նրանց դիմավորեց և մեքենայով զարտուղի ճանապարհով տարավ Ֆախանի: Երբ նրանք իրենց պայուսակները վայր դրին

«Յոթերորդ հարկում», Մոնթեն նրանց ողջունեց լայն ժպիտով ու արջի գրկախառնություններով: Նա լավ տեսք ուներ՝ լողացած, արևից թխացած. ջինսով, կիսաթև վերնաշապիկով և ռետինե չստերով:

Իրենց մեկշաբաթյա այցելության մեծ մասը հյուրերն անցկացրին նույն սենյակում՝ ազգականների ու ընկերների մասին հին ու նոր լուրեր հաղորդելով: Հևալով, շնչակտուր, զենքերի ծանրությունից հոգնած, ներս ու դուրս էին անում երիտասարդ տղամարդիկ ու կանայք: Մեր մայրն ու հայրը քնում էին բազմոցին, մյուսները՝ թախտերին ու գետնին: Մեր մայրը չէր կարողանում հասկանալ, թե ինչու էր իր որդին որոշել ապրել այդպիսի նեղ, անհրապույր պայմաններում: Նա հիշեցրեց, որ մինչ Մոնթեն «իր գործն էր անում», ինքն անթիվ անքուն գիշերներ էր անցկացրել: Մոնթեն խոժոռվելով պատասխանեց, որ դա ոչ թե «իր գործն» էր, այլ ողջ ազգի պարտականությունը:

— Սա 50 տարվա պայքար է. եթե ձեր սերունդն այն սկսեր տարիներ առաջ, հիմա մենք բավական բանի հասած կլինեինք, — ասաց նա:

— Պայքա՞ր, — ընդդիմացավ մեր հայրը. — ի՞նչ պայքար, երբ մենք հացի խնդիր էինք լուծում:

Սա թերևս մեր հոր ու Մոնթեի միջև երբևէ տեղի ունեցած ամենաանկեղծ, մտերիմ խոսակցությունն էր: Մոնթեի ծրագրերի մասին շատ չխոսվեց: Երբ պարզ դարձավ, որ նա իր բռնած ուղուց հետ չի կանգնելու, փաստարկները դադարեցին, և զրույցը հաճելի դարձավ: Մոնթեն ծիծաղում էր կատակների վրա, բայց Մայլեն նկատեց, որ նա կորցրել էր իր նախկին բարձր, որովայնային ծիծաղը: Մոնթեն մտազբաղ էր դարձել:

Այդ օրերին Հակոբյանը վերադարձավ իր վերջին գործուղումից: Երբ ավագ պսրոն Մելքոնյանն առաջին անգամ տեսավ «Գաղտնի բանակի» պսրագլխին՝ իր դունեղ թեթև բաճկոնով, շուռ եկավ դեպի իր որդին և, գլխով Հակոբյանի կողմը ցույց տալով, ասաց.

— Այս մարդը մի փոքրիկ Նապոլեոն է:

Ծիծաղի պոռթկումը զսպելու համար կուչ գալով՝ Մոնթեն մատը տարավ շուրթերին.

— Շշշշ:

Հակոբյանը հյուրերին ընդունեց քաղաքավարի, բայց ոչ ջերմ: Երկար բանակցելուց հետո նա Մոնթեին ու իր հարազատներին

թույլ տվեց բաժանվելուց առաջ Բեյրութում մի քանի ժամ պտտվել: Զրուցելով ու կանաչ նուշ ծամելով՝ ընտանիքը զբոսնեց աղջամուղջի միջով դեպի Միջերկրական ծով նայող ցանկապատնեշի երկայնքով: Հաջորդ առավոտյան Մոնթեն նրանց ճանապարհ դրեց՝ դարձյալ Կահիրե թռչելու համար:

— Նա պնդում էր, որ հետևում է իր սկզբունքներին, — 10 տարի անց ասաց մեր հայրը մի լրագրողի. — մենք ի՞նչ կարող էինք անել:

Մի անգամ, երբ խոսք գնաց այն մասին, թե Մոնթեի համար ընդհանուր նպատակին նվիրվելը վեր էր իր անձնական ապահովությունից, մեր հայրը հառաչեց.

— Այո՛, դա իմ խելքի բանը չէ:

Երբ ծնողներն ու քույրերը մեկնել էին և արդեն դուրս էին Հակոբյանի «աջ ձեռքերի» հասանելիության սահմաններից, Մոնթեն բռունցքները սեղմեց ու վերստին նվիրվեց «Հակոբյանի հարցի լուծմանը»: Նա այժմ պատրաստ էր Հակոբյանից ազատվելու համար ավելի բարձր գին վճարել: Այդ բարձր գինը կարող էր նշանակել ոչ սոսկ հիմնական թիրախին վերացնել, այլ, անհրաժեշտության դեպքում, նաև Լուլուին, Աբու Մահմուդին ու բոլոր նրանց, ովքեր կհայտնվեին նրա ճանապարհին:

1982 թ. մայիսի վերջին նա աճապարանքով պայթուցիկ դրեց «Վարդերի բլրի» մոտ գտնվող զորանոցի մի սենյակում, Հակոբյանի այցելությունից անմիջապես առաջ: Ապա նա հարևան սենյակում մի շորի տակ թաքցրեց պայթուցիչը: Երբ Հակոբյանը մտավ ակնապատ սենյակը, գործելու ժամանակն էր: Մոնթեն սեղմեց կոճակը, բայց պայթուցիչը չաշխատեց: Նա նորից հարվածեց կոճակին և կրկին՝ անհետևանք: Շտապելու պատճառով նա չէր միացրել լարերից մեկը:

Մոնթեն արագ ու ծածուկ հավաքեց պայթուցիկը, ապա մտավ արտաքնոց և բռունցքով հուսահատորեն խփեց ճակատին: Աթենք, Հռոմ, հիմա էլ՝ սա. նա արդեն սպանության երեք (չորս, եթե հաշվենք 1980 թ. սկզբի պայթյունը, որը սպանել էր Կամիլ Շամունի թիկնապահին, բայց ոչ իրեն՝ հրոսակապետին) անհաջող փորձ էր արել: Մարտկոցի լարերից մեկը պայթուցիչին չմիացնելու պատճառով Հակոբյանը ողջ էր մնացել՝ առանց նույնիսկ կասկածելու, թե մեկն իրեն փորձել էր սպանել: Մոնթեն արդեն հրաժարվել էր առաջին պայմանից՝ սպանել միայն Հակոբյանին և վնաս չտալ մեկ ուրիշին: Հիմա նա հրաժարվեց նաև

գաղտնիությունից՝ պատրաստ լինելով Հակոբյանին սպանել «ամենուն դիմաց, եթե պետք էր»:

«Շատ, շատ դժբախտաբար», — ողբում է Մոնթեն իր «Ինքնաքննադատության» մեջ, նույնիսկ այդ վերջին հուսահատ ծրագիրն արդյունք չէր տալու: Հերթական փոթորիկն էր մոտենում, որը, ինչպես Մոնթեն հետագայում նկարագրեց, պետք է «Լիբանանը գլխիվայր շուռ տար»: Տագնապալի նշաններն ակնհայտ էին՝ նույնիսկ Մոնթեի մթագնած մտքի համար: Արևմտյան Ափին պաղեստինցիների բազմամարդ բողոքներ էին տեղի ունենում. Միացյալ Նահանգների ռազմական օգնությունն Իսրայելին 1982 թ. առաջին եռամսյակում հասել էր մի քանի հարյուր միլիոն դոլլարի: Արիել Շարոնը, պետական քարտուղար Ալեքսանդր Հեյգի հետ հինգօրյա քննարկումներից հետո, վերադարձել էր Վաշինգտոնից: Պարզ էր, որ իսրայելցիների նոր ներխուժում է լինելու:

Հակոբյանն անհետացել էր: Մոնթեն գնաց դեպի հարավ՝ «Վարդերի բլրի» ճամբարը: Հունիսի 1-ին USS Kennedy սավառնակակիր նավը Լիբանանի ափից հեռացավ: Այնուհետև, հունիսի 3-ի լուսաբացից առաջ, Մոնթեն խրամատից տեսավ, թե ինչպես է Huey ուղղաթիռների մի շարք, արջերի նման ոռնալով, մոտենում իր բլրին: Ներխուժումն սկսվել էր:

Մինչ հալավային Լիբանանը երկու օր շարունակ ենթարկվում էր սահմռկեցուցիչ ռմբակոծության, Մոնթեն և «Գաղտնի բանակի» մի բուռ ընկերներ ծվարեցին անտառակներում ու խաղողի այգիներում: Ապա, հունիսի 6-ի առավոտյան ժամը 11-ին, իսրայելական բանակը՝ սավառնակներով, տանկերով, նավերի ու ծանր հրետանու համազարկերով, սկսեց Գալիլեայի կողմից հատել սահմանը՝ ծովափնյա ճանապարհը պարուրելով մոտորացված զրահների շարասյան հոնդալից աղմուկով: Սիրիական բանակը նահանջեց դեպի Բեյրութ-Դամասկոս մայրուղուց հյուսիս ընկած դիրքերը, իսկ արաբ դիվանագետները, ինչպես միշտ, Միավորյալ ազգերի Գլխավոր խորհրդաժողովում զբաղված էին իրենց ծնողների մկաններն անօգուտ մարզելով, երբ Միացյալ Նահանգներն արգելք (վետո) էր դնում Անվտանգության խորհրդի՝ Իսրայելի ներխուժման դեմ նույնիսկ ամենաանհամ առարկությունների վրա:

Մի քանի հազար լիբանանցի ու պաղեստինցի՝ վատ մարզված, հրացաններով ու նռնակներով զինված մարտիկներ հայտնվեցին

90 հազարանոց բանակի, 1300 տանկերի, 1300 զրահամեքենաների և 12000՝ զորք ու զինամթերք մատակարարող բեռնատարների առջև: Գրոհին մասնակցում էին նաև 600 մարտական ինքնաթիռներ՝ ներառյալ Phantom-ներ և 120 նորագույն F-15 ու F-16 ինքնաթիռներ: Լիբանանի երկինքը դարձել էր իսրայելցիների մենաշնորհը, իսկ իրենց նավերի և Միացյալ Նահանգների 6-րդ - նավատորմի շնորհիվ՝ նրանք «կալանել էին» նաև ողջ ծովափը:

Պաշտպանվողների համար Բեյրութը երկար դիմադրության միակ հույսն էր: Մոնթեն ու իր ընկերները ծանր բեռներով քարշ եկան դեպի հյուսիս՝ թաքնվելով ուղղաթիռներից և սավառնակներից: Հունիսի 9-ին նրանք հասան Զահեր ալ-Խաթիբի տոհմական կալվածքը լեռներում, Սիդոնից հյուսիս-արևելք: Պետք էր վերախմբավորվել: Հաջորդ օրը «Գաղտնի բանակի» 9 զորակոչիկներ, «Աշխատավորների լիգայի» ընկերների և 2-3 պաղեստինցիների հետ, շարունակեցին իրենց ճանապարհը դեպի հյուսիս: Երբ հասան մի լեռնային լքված գյուղ, Մոնթեն առաջարկեց մոտեցող իսրայելցիների դեմ այնտեղ դարանակալել: Անցյալ ամառ Քֆար Թիրնիթում ձեռք բերած՝ հրետանու նշանառության փորձառությունը դեռ թարմ էր նրա հիշողության մեջ: Հետագայում նա ամփոփեց, կռվելու օրենքը նման դեպքերում «հարձակվելն է, թշնամուն վնաս հասցնելը և առանց կորուստների նահանջելը»:

Պաղեստինցիներից մեկը դայրացած նայեց Մոնթեին.

— Դու խելագար ես և բոլորիս կզոհես, — գոռաց նա:

Ամենքը գիտեին, որ իրենց կողմից կրակոցներ լինելուն պես թշնամու սավառնակները ողջ տարածությունը բռնկվող ռումբերով կհրկիզեին: Պաղեստինցու բողոքն արհամարհելով՝ «Գաղտնի բանակի» և «Աշխատավորների լիգայի» մարտիկներն սկսեցին ճանապարհի երկայնքով դիրքավորվել: Կատաղած պաղեստինցին ճանկեց Մոնթեի «Կալաշնիկովն» ու փորձեց խլել: Մոնթեն դիմադրեց, և երկուսի միջև ձեռնամարտ սկսվեց: Հանկարծ, անհայտ տեղից, հայտնվեց հսկա սարդի նման մի իսրայելական ուղղաթիռ՝ փոշու ամպ բարձրացնելով: Ազատամարտիկները կուչ եկան մի պատի հետևում: Ատամները կրճատացնելով՝ Մոնթեն ու պաղեստինցին դեռ որոշ ժամանակ շարունակում էին իրար քաշքշել: Թեև ուղղաթիռից խույս էին տվել, բայց այն խափանել էր դարանակալման ծրագիրը՝ վեճը լուծելով պաղեստինցու օգտին: Նրանք պետք է շտապ գյուղը լքեին, քանի որ ուղղաթիռի

օդաչուն արդեն ռադիոկապով հայտնել էր իրենց մասին, և ինքնաթիռները ճանապարհին էին:

Երբ Մոնթեն ու իր ընկերներն ավարտեցին 27 ժամ տևած իրենց տեղաշարժը դեպի Բեյրութ, էյն էլ-Հիլվեի, Ռաշիդիեի ու ալ-Բասսի փախստականների ճամբարները վերածվել էին ծումված մետաղով, փշրված բետոնով ու դիակներով ծածկված դաշտերի: Այնուամենայնիվ, հասնելով Բեյրութի հարավային սահմաններին, ներխուժողները կանգ առան: Չնայած անհամեմատ լավ զինվածությանը, նրանք չուզեցին ցամաքով մտնել արևմտյան Բեյրութ, քանի որ այնտեղ թեթև զինված մի քանի հազար պաղեստինցիներ պատրաստ էին քաղաքը պաշտպանել: Դրա փոխարեն Մենախեմ Բեգինը դիմադրողներին զրկեց մթերքից, ջրից, էլեկտրականությունից՝ փակելով արևմտյան Բեյրութ տանող ճանապարհները: Ապա «Խաղաղության Նոբելյան մրցանակի» դափնեկրի հրամանով սկսվեց քաղաքի համատարած ռմբակոծությունն՝ օդից, ցամաքից ու ծովից: 400 տանկեր, 100 ծանր հրանոթներ, ռազմանավեր և աշխարհի ամենահզոր օդուժերից մեկը սկսեցին արևմտյան Բեյրութի 500000 քաղաքացիների վրա տեղալ հազարավոր տոննաներով ռումբեր՝ ներառյալ սպիտակ ֆոսֆորի, կասետային և օդում պայթող:

Հուլիս ամսվա ընթացքում Մենախեմ Բեգինն արևմտյան Բեյրութը դարձրեց գերեզմանատուն: Ըստ Արևմուտքում հրապարակված հաշվարկների, սպանվածների թիվը 17825 էր: Լիբանանի հարավի կես միլիոն բնակիչներ թողել էին իրենց տներն ու հեռացել: 30000 խեղանդամվածներ կային, և երկիրը միլիարդավոր դոլարների նյութական վնաս էր կրել: Համաձայն «Միջազգային կարմիր խաչի» զեկույցի, զոհերի ճնշող մեծամասնությունը խաղաղ բնակիչներ էին, որոնց թվում՝ բազմաթիվ երեխաներ:

Ինչ վերաբերում է հակառակ կողմի կորուստների վերաբերյալ տվյալներին, ապա Մոնթեի զինակիցներին այդ ամառ ինչ-որ կերպ հաջողվել էր մի քանի հարյուր իսրայելցի զինվոր սպանել, և ներխուժողների զոհերի թիվն աճում էր նույնիսկ այն բանից հետո, երբ Բեգինն իր ուժերը տեղաբաշխեց պակաս վտանգավոր դիրքերում:

Ռեյգանն այնտեղ էր ուղարկել ամերիկյան ծովային հետևակայիններին: Նրա հատուկ դեսպանորդ Ֆիլիպ Հաբիբը խոստացավ, որ ԱՄՆ-ը կօգնի պաղեստինցի փախստականներին (այն նույն մարդկանց, որոնք սարսափելի տուժել էին ԱՄՆ-ի դաշնա-

կիցների հարձակումից), եթե «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» մարտիկները հեռանան Բեյրութից: Երբ Արաֆաթն այդ առաջարկն ընդունեց, Իսրայելի Պաշտպանության նախարար Արիել Շարոնը հայտարարեց, որ իրենք աշխարհին ծառայություն են մատուցել՝ միջազգային ահաբեկչությունից Լիբանանը մաքրելով:

Մինչ իսրայելցիների կողմից պաշարումը շարունակվում էր, Մոնթեն գլխավորում էր Cadmus հյուրանոցի մոտ գտնվող մի կրակակետ: Նա և «Գաղտնի բանակի» մի բուռ մարտիկներ հավաքված էին 120 միլիմետրանոց մի հրանոթի շուրջը, որպեսզի պաշտպանեն ծովափի իրենց հատվածը հնարավոր դեսանտային հարձակումից: Ներխուժման առաջին օրերից ի վեր «Ցոթերորդ հարկը» դատարկ էր: Շաբաթներ շարունակ «Գաղտնի բանակը» նախապատրաստվել էր Բեյրութից անխուսափելիորեն հեռանալուն: Զենքերը թաքցվել էին, փաստաթղթերը (որոնց թվում՝ Թուրքիայի պատմության վերաբերյալ Մոնթեի հատ տեղերը)՝ պատշգամբում այրվել: Պայթուցիկներն ու հրազենը բաժանվել էր մարտիկներին և, իսրայելցիների ու «Փաղանգավորների» հսկողությունից գաղտնի, թաքցվել արևելյան Բեյրութի տներում: Օգոստոսի վերջին, իրենց զինանոցի վերջին մասը տեղափոխելուց հետո, Հակոբյանն ու «Գաղտնի բանակի» այլ անդամներ, իսրայելյան ու «Փաղանգավորական» պահակակետերով անցնելով, դուրս եկան արևմտյան Բեյրութից, ինչպես Մոնթեն էր նշում՝ «շատ հեշտությամբ, իսրայելցիների ու «Փաղանգավորների» անկոմպետենտության շնորհիվ»:

Իսրայելի ներխուժումը դրդեց Հակոբյանի ատելությունն ու մոլագարությունը. ստեղծված խառը իրավիճակն այն շղարշն էր, որի տակ նա կարող էր ամրապնդել «Գաղտնի բանակի» միանձնյա պարագլխի իր դիրքերը: Հուլիսի կեսին նա Լուլուին և մի նոր «աջ ձեռքի» Ռամեզին հրամայեց սպանել Նշան Տատուրյանին՝ մի կույր մարդու, որին Հակոբյանն առևանգել ու կապված պահում էր մի փոքր սենյակում: Միակ պատճառը, հավանաբար, այն էր, որ Տատուրյանը եղել էր Համո Մ.-ի ընկերը, իսկ Համո Մ.-ն՝ իրաքյան «Բաաթ» կուսակցության և «Ֆաթահի» հետ սերտ հարաբերություններ ունեցող մի մարդ, Հակոբյանի հնարավոր մրցակիցն էր:

Ռամեզն ու Լուլուն չեխական 7.65 միլիմետրանոց մի ինքնաձիգ ատրճանակից հերթով ընդդիմահար կրակեցին կույր մարդու գլխին, պարանոցին ու մեջքին: Քանի որ զենքը հզոր չէր, իսկ Տատուրյանը դիմացկուն մարդ էր, նրանք ստիպված եղան կրակել 35 անգամ, մինչև համոզվեցին, որ նա մեռած է: Ապա դահիճները մարմինը դրին մեքենայի մեջ, տարան ու շպրտեցին ռմբակոծությունից ավերված մի տեղում:

Տատուրյանի սպանությունից քիչ անց «Գաղտնի բանակի» առաջնորդը հրամայեց վերացնել մեկ ուրիշ զորակոչիկի՝ Սարգիս Կյուլխանջյանին, որին Հակոբյանը չէր սիրում: Այս անգամ Ռամեզն այդ արեց մենակ՝ գլխին արձակած մեկ՝ 9 միլիմետրանոց փամփուշտով: Ի լրումն այդ հանցագործության, Հակոբյանը մի հաղորդագրություն տարածեց, թե Կյուլխանջյանն իր թիկնապահն էր, որը գողացել էր, իր հետ միասին, մի ռմբակոծության ժամանակ: «Հակոբյանը մեռա՜ծ է. բոլորս հակոբյա՜ն ենք», — հայտարարեցին հայերը ոգեշունչ նամակներով: «Գաղտնի բանակի» համակիրները Լոս Անջելեսից մինչև Թեհրան խնդրեցին, որ եկեղեցիներում պատարագ մատուցվի «նահատակ առաջնորդի» պատվին: Իր հաղողված կեղծ նահատակությունից ոգևորված՝ Հակոբյանն արևելյան Բեյրութում հիմնավորապես թաքնվեց, մինչդեռ Մոնթեն և «Գաղտնի բանակի» մոտ 5 ուրիշ անդամներ արևմտյան Բեյրութում մնացին իրենց դիրքերում, մինչև որ Ցասիր Արաֆաթը նրանց հրամայեց քաղաքից հեռանալ՝ «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» 7550 մարտիկների և սիրիացի 1000 զինվորների հետ:

Նրանց առաջին խումբը, որպես պաղեստինյան բանակի մաս, շաբաթ օրը, օգոստոսի 28-ին, Բեյրութի նավահանգստում նավ նստեց: Երբ նրանք հասան Լաթաքիա, Սիրիայի իշխանությունները ոչ-պաղեստինցիներին, որոնց թվում՝ նաև փոքրաքանակ քրդերի, բենգալացիների ու էրիտրեացիների, տեղափոխեցին կալանավայր հիշեցնող Համուրիահ ռազմական ճամբար, Դամասկոսի մոտ: Հաֆեզ Ալ-Ասադը միշտ կողմ չէր եղել Սիրիայի տարածքում աշխարհազորայինների (նույնիսկ անգեն) ներկայությանը: Իսկ երկու տարի առաջ «Մահմեդական եղբայրների» դեմ նրա բիրտ հակամարտության հետ կապված հիշողություններն առավել ևս ստիպում էին Լիբանանից եկածներին խիստ հսկողության տակ պահել:

Համուրիահում Մոնթեն միացավ մի փոքր ռադիոընդունիչի շուրջը հավաքվածներին՝ լսելու համար Սաբրա ու Շատիլլա ճամբարներում տեղի ունեցած կոտորածի մասին առաջին հաղորդագ-

բությունը: Տեղեկությունը նրան տխրեցրեց ու զայրացրեց, բայց անսպասելի չէր: Նա ի սկզբանե ենթադրում էր, որ փախստականներին պաշտպանելու Ռեյդանի խոստումն արժեք չունի, և Բուրջ Համուդում ունեցած անձնական փորձառությունից նրան հայտնի էր, որ Իսրայելի կացնակիր «Փաղանգավոր» զինակիցներն ընդունակ էին սոսկալի դաժանության: Այժմ ավելի քան 1000 դիակները՝ մեծ մասը կանայք ու երեխաներ, հաստատեցին նրա ենթադրությունները:

Մոնթեի հետ բանտարկվածների մեծ մասն ամիս ու կես Համուրիահում տանջվեցին շոգից, մինչև որ նրանց վտարեցին Սիբիրայից: Բայց հայերը, շնորհիվ Սիբիրայի օդուժի մի «կապավոր սպայի» միջամտության, այնտեղ միայն մեկ շաբաթ անցկացրին, որից հետո տեղափոխվեցին Դամասկոսի «Ռամսիս» հյուրանոցը: 10 օր հետո Մոնթեն, Ռամեզը և առաջնորդող մի խմբի 3-4 անդամ ճանապարհ ընկան դեպի Լիբանանի Բեքաա հովիտ: Սեպտեմբերի 26-ին (Լիբանանից հեռանալուց մեկ ամիս չանցած) նրանք իրենց իրերը վայր դրին Բեքաայի Ալ Մարջ գյուղի մի տանը, որտեղ ապրում էին նաև Աբու Նիդալի խմբի՝ «Ֆաթահ հեղափոխական խորհրդի» անդամներ: Տպագիր մի հարցազրույցում Հայոբյանը, հանդես գալով հերթական ծածկանվամբ, նշեց, որ այնուհետև «Գաղտնի բանակը» և Աբու Նիդալի խումբը պետք է համարվեին մեկ կազմակերպություն: Մոնթեն, սակայն, «Աբու Նիդալի տղաներին» երբեք չկոչեց «ընկեր»: Նա տանել չէր կարողանում նրանց գլխավոր հովանավորին՝ Սադամ Հուսեյնին: Բացի այդ, նրանք բերանբաց էին և չէին ենթարկվում անվտանգության նույնիսկ ամենատարրական պահանջներին: Իսկ որ ամենավատն էր, նրանք հիմարներ ու հանցագործներ էին, ինչը հաստատվել էր Փարիզում Կոպենհիկոսի փողոցի սինագոգի պայթեցմամբ:

Մոնթեն Բեքաա հովտում մնաց 2-3 ամիս, որից հետո նոյեմբերի 26-ին Հակոբյանը նրան կանչեց Դամասկոս: Նախորդ օրը լրացել էր նրա 25 տարին: Այդ ժամանակ Մոնթեի մեկուսացման ու «Հակոբյանի հարցը լուծելու» անկարողության հետևանքներն իրենց զգալ տվեցին: Դեկտեմբեր ամսվա մի առավոտյան զարթնելով՝ նա զորակոչիկներից մեկից տեղեկացավ, որ գիշերը քնի մեջ մոտ մեկ ժամ խոսել էր: Մոնթեն ցնցվեց ու անհանգստացավ. մի՞թե ինքն անգիտակցաբար բացահայտել էր Հակոբյանին սպանելու իր մտադրությունը: Նա փոքր-ինչ հանդարտվեց, երբ իմացավ, որ խոսել էր անհոդաբաշխ անգլերենով. ո՞վ գիտե՝ ինչ կաներ Աբու Մահմուդը, եթե Մոնթեն քնի մեջ խոսեր հասկանալի հայերենով: Բայց արդյո՞ք դա առաջին նման դեպքն էր և արդյո՞ք չէր կրկնվելու:

Քնի մեջ խոսելու գրվագից հետո Մոնթեն ուրախ էր, որ վերադարձավ Ցանթայի մոտ գտնվող ճամբարը, որը «Պաղեստինյան ժողովրդական պայքարի ճակատը» լքել էր 1981 թ.: Այնտեղ մնացել էին մի բուռ մարդիկ միայն, որոնց թվում՝ բարձրահասակ իրանահայ, դեռ 20 տարին չբոլորած Դավիթ Դավիթյանը և պայթուցիկների մասնագետ Խալիլը: Մոնթեն այդ ճամբարում, ձյունով շրջապատված խարամաբետոնե մի զորանոցում, մնաց 2 ամիս: Նա, բացի մտորելուց, առանձնապես ուրիշ անելիք չուներ: 1983 թ. փետրվարյան մի օր, Բեյրութ-Դամասկոս մայրուղին Դեիր Զանունի մոտ անցնելիս, նա նկատեց մի մոտեցող սպիտակ «Վոլվո»: Այն նման էր Սեդայի հոր մեքենային: Ցուրտ էր, և Մոնթեն դեմքը ծածկել էր «քեֆֆիեհով»: Նա ճանապարհի մեջտեղում կանգնեց և, երբ մեքենան անցնում էր, մի պահ նկատեց Սեդային: Ինչպես հետո պարզվեց, Սեդան, որ արդեն Երևանում բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի էր, ամառային արձակուրդին տուն էր եկել, և նրա ընտանիքն այցելության էր գնում մոտակա Զահլե քաղաքում բնակվող իրենց բարեկամներին: Անցնելիս մեքենան գրեթե դիպավ Մոնթեին, և մինչ նա նայում էր, թե ինչպես այն հեռանալով անհետացավ սառած ճանապարհի վրա, մի ուրիշ մեքենա համարյա հարվածեց նրան:

Մոնթեն սահելով անցավ ճանապարհը և, մտքերի մեջ, քարշ եկավ դեպի զորանոցը: Մոտ մեկ տարի առաջ, «Աշխատավորների լիգայի» արևմտյան Բեյրութում գտնվող նկուղային ռադիոկայանում տեղի ունեցած գաղտնի հանդիպման ժամանակ, Սեդան և նա կրքոտ համբուրվել էին: Կարճ հանդիպումն այդ համբույրով ավարտվել էր, բայց Սեդան մեծ վտանգի էր ենթարկվել՝ Հակոբյանից ծածուկ գնալով ռադիոկայան ու Մոնթեին փնտրելով: Համբույրը Մոնթեին սպասելու Սեդայի խոստումն էր: Բայց որքա՞ն կարող էր նա սպասել: 20 թանկագին ամիսներ էին անցել՝ համարյա 2 տարի, ինչ Մոնթեն որոշել էր Հակոբյանին սպանել: Այդ ուղղությամբ նրա ծրագրերն ու փորձերն անպտուղ էին եղել, և Հակոբյանը գնալով ուժեղացել էր: Պետք էր նոր բան փորձել, ուստի, նույնիսկ մատնվելու վտանգն անտեսելով, Մոնթեն որոշեց սպանության իր ծրագրի մեջ ուրիշներին էլ ներգրավել:

Զյունառատ օրերի ու գիշերների ընթացքում Մոնթեն նկատել էր, որ Դավթյանն ու Խալիլը փնթփնթում են Հակոբյանի դեմ: Երբ Մոնթեն զգուշորեն մոտեցավ նրանց՝ առաջարկելով Հակոբյանին վերացնել, նրանք գլխով համաձայնության նշան արեցին: Երեք դավադիրներն այնուհետև կազմեցին «բավական լուրջ ծրագիր մը» (ինչպես Մոնթեն գրում է իր «Ինքնաքննադատության» մեջ): Նրանք վճռեցին, որ Հակոբյանը պետք է մի «պատահական պայթյունի» զոհ դառնա, քանզի կարող էին շաբաթներ ու ամիսներ անցնել, մինչև նա կհայտնվեր ճամբարում, «իսկ մինչև այն ատեն, – գրում է Մոնթեն, – ինչեր կրնար պատահիլ»:

Այդ ժամանակ Հակոբյանը Մոնթեին մեկուսացված ու իր հսկողության տակ պահելու համար քայլեր էր ձեռնարկում: Լավ իմանալով, որ ոստիկանական գործակալությունները հայկական թերթերին հետևում էին, նա հրապարակեց մի հաղորդագրություն, որտեղ պնդում էր, թե Մոնթեն եղել էր «Գաղտնի բանակի» այն խմբի մեջ, որ 1982 թ. օգոստոսի 7-ին Անկարայի Էսենբոգա օդանավակայանի վրա արյունալի հարձակում էր գործել: Սա սուտ տեղեկություն էր, որը տարածելով՝ Հակոբյանն է՛լ ավելի էր ոստիկանության ուշադրությունը կենտրոնացնում Մոնթեի վրա: Այդպիսով նա ուզում էր վստահ լինել, որ իր մրցակիցը կմնա մեկուսի, ընդհատակում ու իր կրնկի տակ:

Միաժամանակ, Հակոբյանն ինքն իրեն հեռացնում էր նախկին համախոհներից: Տարիներ շարունակ Արա Թորոսյանի «Հայ պայքար» խումբը Փարիզում գովաբանել էր «Գաղտնի բանակին» ու նրա առաջնորդ Հակոբ Հակոբյանին՝ որպես հայ ժողովրդի փրկիչների: Սրճարաններում ու օդանավակայանների սրահներում տեղի ունեցած յուրաքանչյուր պայթյունից հետո, սակայն, փարիզեցիների կասկածները խորանում էին: Մարտի 21-ին Թորոսյանն իր «Ռենո» ավտոմեքենայի հետևի տակ մի չպայթած ռումբ հայտնաբերեց: Նա այդ մահափորձի համար մեղադրեց Հակոբյանի սադրիչներին, և «Հայ պայքարը» դադարեցրեց իր «քննադատական աջակցությունը» «Գաղտնի բանակին»:

Տրամադրությունները փոխվում էին նաև Թեհրանում: Ապրիլի 24-ի բազմամարդ ցույցի ժամանակ այնտեղ «Գաղտնի բանակի» ու դաշնակցականների համակիրների միջև ձեռնամարտեր տեղի ունեցան: Հակոբյանի հանդեպ իրենց վերաբերմունքն սկսեցին փոխել նաև նրա ոչ հայ դաշնակիցները: «Քրդստանի աշխատավորների կուսակցությունը» դատապարտեց «Գաղտնի բանակի» անխոհեմ հարձակումն Անկարայի օդանավակայանի վրա և պայթյունները Եվրոպայում, իսկ «Ժողովրդական պայքարի ճակատն» ու պաղեստինյան առավել խոշոր կազմակերպությունները ընդդիմացան Հակոբյանի՝ չափից ավելի սերտ հարաբերություններին պաղեստինցի ռեներգատ Աբու Նիդալի հետ:

Այդուհանդերձ, սփյուռքի մի քանի քաղաքներում «Գաղտնի բանակը» հաջողություն ուներ: Այդպիսի քաղաք էր Աթենքը: «Գաղտնի բանակը» Հունաստանի մայրաքաղաքում վայելում էր բազմաթիվ հայերի համակրանքը, իսկ վարչապետ Անդրեաս Պապանդրեուի «Համահունական սոցիալիստական» կառավարությունը (PASOK), որ ներքաշված էր Թուրքիայի հետ Էգեյան ծովի կղզիների համար մի երկարատև վեճի մեջ, դեմ չէր այդ համակրանքին: 1983 թ. ապրիլից հունիս ամիսների ընթացքում «Գաղտնի բանակի» մոտ 5 անդամներ Դամասկոսից տեղափոխվեցին Աթենք: Ասում էին, թե Հակոբյանն Իրանում «Գաղտնի բանակի» հովանավորներից հավաքած 11 ֆունտ ոսկու ձուլակտոր էր տվել իբրև կանխավճար՝ Աթենքի մոտ գտնվող մի հյուրանոց գնելու համար: Իսկ քուվեյթցի մի հարուստ գործարար առաջարկեց Աթենքում բացել մի սուպերմարկետ, որը «Գաղտնի բանակին» կանոնավոր եկամուտ կբերեր: 1983 թ. հունիսի 15-ին Հակոբյանը, հիմա՝ սննդամթերքի ոգեշունչ առևտրական, մյուս անդամների նման հաստատվեց Աթենքում՝ Մոնթեին, սպանությանը իր ձախողված ծրագրով հանդերձ, թողնելով Ցանթայի փոշիների մեջ:

Մոնթեն ինքն իրեն հայհոյում էր, որ չէր կարողացել «ավելի արագ մտածել» և վճռական քայլերի դիմել: Մոտ մեկ տարի շարունակ նա պատրաստ էր Հակոբյանին սպանել տասնյակ վկաների աչքի առաջ և չխնայել նաև բոլոր նրանց, ովքեր խոչընդոտ կլինեին իր ճանապարհին: Հետո նա, օգնականներ ձեռք բերելու նպատակով, ռիսկի էր դիմել՝ իր ծրագիրը հայտնելով Դավթյանին ու Խալիլին: Մնացել էր մի վերջին վերապահում, բայց նույնիսկ դա նրա համար այլևս արժեք չուներ. նախկինում նա մտածել էր, թե կարող է Հակոբյանին սպանել և ինքը ողջ մնալ: Այժմ ափսոսում էր, որ այդ «անիրատեսական» սահմանափակումն իրեն խանգարել էր:

Գլուխ 9. Նահատակություն

Թեև «Գաղտնի բանակի» վետերաններն սկսել էին իրենց հեռու պահել Հակոբյանից, Դամասկոսում երիտասարդները շարունակում էին խմբավորման հավաքատեղի գալ ու իրենց կտակները թելադրել: «Գաղտնի բանակն» իր թաքստոցներում, կացարաններում ու զինավարժությունների ճամբարներում երբեք չուներ հարյուրից ավելի «լրիվ դրույքով» անդամ: Նրանցից բացի, սակայն, հայկական տարբեր համայնքներում՝ Մոսկվայից մինչև Մադրաս և Տորոնտոյից մինչև Կահիրե, կային ևս մի քանի հարյուր «կես դրույքով» անդամներ: Նրանք դրամ էին հավաքում, տեղեկատուներ տպագրում, ծածուկ ճանապարհներով զենք ու պայթուցիկներ փոխադրում և աշխարհազորայինների համար ապրելու տեղեր ապահովում: Իսկ ի լրումն «լրիվ ու կես դրույքով անդամների», վեց մայրցամաքներում կային նաև հազարավոր համախոհներ, որոնք բաժանորդագրվում էին «Գաղտնի բանակի» տեղեկատուներին և նվիրատվություններ անում:

«Գաղտնի բանակի» աջակիցների մի խումբ Թեհրանում դիմում էր գողության ու կողոպուտի, իսկ գողոնն ուղարկվում էր Հակոբյանին՝ «Գաղտնի բանակի» գործունեությանը նպաստ բերելու համար: 1982 թ. ամռանը, սակայն, այդ աջակիցները, ինչխանատենչ մղումների և անձնական հակամարտության հողի վրա, բաժանվել էին երկու ենթախմբի: Քիչ էր մնում՝ բանը հասնի ձեռնամարտի, ուստի նրանք, «Գաղտնի բանակի» ղեկավարության միջնորդությամբ վեճերը կարգավորելու նպատակով, որոշեցին իրենց պատվիրակին ուղարկել Դամասկոս:

1982 թ. նոյեմբերին այդ պատվիրակը՝ գեռահասության տարիքից նոր դուրս եկած, շիկակարմիր մազերով մի տղա, հագավ իր հոր վերարկուն և արևմտյան Իրանի Ուրմիա քաղաքում գտնվող՝ «Քրդստանի աշխատավորների կուսակցության» հենակետից շարժվեց դեպի հարավ: Կառլեն Անանյանի ծնողները փրկել էին մի քուրդ մարտիկի կյանքը, որը վիրավորվել էր ականից, և երախտապարտ քուրդը՝ Սամիր անունով, առաջարկել էր Կառլենին ոտքով ուղեկցել մինչև Դամասկոս: Կառլենն ու Սամիրը ճանապարհ ընկան լեռների, սառնամանիքի, մարտադաշտերի, ականների ու անապատների միջով: Նրանք փրկվեցին իրաքցի զինվորների գնդակոծությունից և, 20 մետր հեռավորության վրա անցնելով, Իրաքի սահմանի մոտ խույս տվեցին դարանակալած թուրքերից: Սամիրը նկատեց, որ իր ընկերը, ամբողջ օրը ծանր բեռով քայլելուց հետո, ուտում էր ընդամենը մի կտոր հաց ու մի քանի խուրմա: Կառլենի ստամոքսային քրոնիկական հիվանդությունը վատթարացել էր, և նա սկսել էր արյուն թքել: 1983 թ. հունվարի կեսին, մոտ երկու ամիս քայլելուց հետո, նրանք ուժասպառ, հիվանդ ու քաղցած հասան «Գաղտնի բանակի» հավաքատեղին Դամասկոսում:

Կառլենը միայն դպրոցական կրթություն ուներ, բայց Հայաստանի պատմության ու լենինիզմի վերաբերյալ գրքեր էր կլանել՝ լուրջ թեմաներով լուրջ խոսելու համար: Այժմ, երկամսյա ճամփորդական մտորումներից հետո, նա անհամբերությամբ ուզում էր քննարկել ու լուծել Իրանում իր ընկերներին միմյանցից բաժանող հակասությունները: Մի կտոր հաց ծամելով՝ նա խոսակցություն սկսեց իր նոր ծանոթներից մեկի հետ, որ «Գաղտնի բանակի» անդամ էր և մտավորականի այծամորուք ուներ: Զրուցակիցը ծանրակշիռ տեսքով իր այծամորուքը շոյեց և Կառլենին հետաքրքրող թեմային կատարյալ անտեղյակություն ցուցաբերեց:

Կառլենը խոժոռվեց: «Երևի այս բթամիտը նորակոչիկ է», – մտածեց նա: Բայց ինչպե՞ս կարող էին «Գաղտնի բանակի» ընկերները թույլ տալ, որ անդամ «Գաղտնի բանակի» նոր կամ ցածրաստիճան անդամն այդքան անգրագետ մնա: Նրա մտքով չէր կարող անցնել, որ այծամորուքով մարդն ինքը՝ Հակոբ Հակոբյանն էր, «Գաղտնի բանակի» առաջնորդը: Հակոբյանը գուցե և նկատեց Կառլենի դեմքի թերահավատ արտահայտությունը: Նա խոսակցությունը կարճ կտրեց ու, դառնալով Լուլուի կողմը, ասաց.

– Տա՛ր մեր հյուրին Աբու Սինդիի մոտ. նա է Իրանի հարցերով պատասխանատուն:

Լուլուն Կառլենին մեքենայով տարավ Ցանթա՝ Մոնթեի կամ Աբու Սինդիի հետ խորհրդակցելու: Կառլենը նրան հիշեց. երեք տարի առաջ մի ընդհանուր ծանոթ Մոնթեին, որպես «Սարո», ներկայացրել էր արևմտյան Իրանի Ուրմիա քաղաքի եկեղեցու բակում բասկետբոլ խաղացող նիհար տղաների մի խմբի: Գլխով Դամասկոսի կողմը ցույց տալով՝ Կառլենն անժպիտ հեգնանքով հարցրեց, թե ո՞վ էր այն «պրոֆեսորը»: Մոնթեն հարցական նայեց նրան, բայց հանկարծ, կռահելով, սկսեց քահ-քահ ծիծաղել: Այծամորուքով «պրոֆեսորը», բացատրեց նա, ցածրաստիճան մեկը չէր, այլ՝ «Գաղտնի բանակի» միանձնյա ղեկավարը: Կառլենն

այնպես հևաց, կարծես կրծքին բռունցքի հարված էր ստացել: Նա ստամոքսի խոցով երկու ամիս ճանապարհ էր անցել՝ մոտ հազար կիլոմետր. սարերի, սառնամանիքի ու ականապատ դաշտերի միջով, որպեսզի խորհուրդ հարցնի մի տխմարից: Իսկ այդ տխմարին, ինչպես պարզվեց, խնդիրն ամենևին էլ չէր հետաքրքրում: Այդ գիշեր Մոնթեն ու Դավթյանը բաժակը բաժակի հետևից թեյ էին լցնում, մինչ Կառլենը մանրամասնորեն նկարագրում էր Իրանում ընթացող հակամարտությունը, որ բևեռացրել էր «Գաղտնի բանակի» աջակիցներին: Նա մեկ շաբաթ շարունակ դատարկում էր իր սիրտը՝ սկսած առավոտվա առաջին բաժակ թեյից, վերջացրած գիշերային այն ժամով, երբ նրանք պառկում էին մեջքի վրա ու նայում կտուրի փայտերին:

Մոնթեն հանգիստ լսեց այնքան ժամանակ, որքան կարող էր: Ի վերջո նա չշնչաց, որ ուզում է Հակոբյանին սպանել: Կառլենը ցնցվեց: Նա համաձայն էր «Գաղտնի բանակի» առաջնորդին Մոնթեի տված գնահատականին, բայց եթե Մոնթեն խիստ անհամաձայնություն ուներ նրա հետ, ինչո՞ւ չէր պարզապես հեռանում «Գաղտնի բանակից» ու ստեղծում իր խմբավորումը: Մոնթեն գլուխն օրորեց. քանի դեռ Հակոբյանը շարունակում էր շնչել, «Գաղտնի բանակը» հարձակվելու էր մրցակից խմբերի վրա ու խանգարելու «հայրենասիրական ազատագրական շարժմանը»:

Այդ ժամանակ Հակոբյանի գլխավոր հանձնակատարները՝ Աբու Մահմուդն ու Լուլուն, գործում էին ավելի շատ որպես բանտապահներ, քան զինակից ընկերներ: Երբ 1983 թ. մարտի վերջին Մոնթեն ու Կառլենը վերադարձան «Գաղտնի բանակի» թաքստոցը Դամասկոսում, նրանք Մոնթեին փակեցին զուգարանի կողքը գտնվող մի շատ փոքր սենյակում, իսկ Կառլենին հատկացրին բաղնիքի վերևի մի նեղ տարածություն, որտեղ նա սողալով էր մտնում: Կառլենն այնտեղ մնաց 2 ամիս: Երբ նա սկսեց արյուն փսխել ու կղկղել, Լուլուն նրան տարավ բժշկի, որը հայտնաբերեց շտապ միջամտություն պահանջող 3 մեծ խոց: Թաքստոց վերադառնալուց հետո, սակայն, Աբու Մահմուդը դարձյալ, առանց բուժման, Կառլենին ստիպեց մտնել նույն նեղ տեղը:

Գատերի միջով Մոնթեն լսում էր, թե ինչպես է Կառլենն աղաչում իրեն աղատել, իսկ հետո Աբու Մահմուդի հարվածների տակ ցավից ոռնում: Մոնթեն ատամները սեղմած լռում էր, որովհետև բողոքը հակառակ արդյունք կունենար: Երկու շաբաթ անց Հակոբյանի հանձնակատարները Կառլենին հանեցին նեղ տեղից ու փակեցին սենյակում Մոնթեի հետ, որն այդ օրերին հիվանդ էր միաժամանակ դեղնախտով ու որովայնային տիֆով: Մոնթեն հազիվ էր շարժվում, բայց Հակոբյանը նրան թույլ չէր տալիս բժշկի դիմել: Ամեն օր ու գիշեր Կառլենը նրան թեյ և հաց էր բերում, օգնում բաղնիքում, անկողինը կարգի բերում և անում ամեն ինչ՝ իր ընկերոջ ցավերը մեղմելու համար:

Այդ ժամանակ Թեհրանում «Գաղտնի բանակի» աջակիցների միջև հակամարտությունը նրանց բաժանեց երկու թշնամական ճամբարի: Երբ Կառլենը լուրը լսեց, գլուխը խոնարհեց ափերի մեջ. իր առաքելությունը Դամասկոս ժամանակի անիմաստ կորուստ էր եղել: Կառլենն այլևս, բացի Իրան վերադառնալուց, ուրիշ անելիք չուներ: Նա խնդրեց, որ Հակոբյանն իրեն թույլ տա շտապ մեկնել, և նույնիսկ առաջարկեց, փող խնայելու համար, նորից ոտքով գնալ: Հակոբյանը, սակայն, նրան մերժեց և ազատ չարձակեց:

Այս անգամ, երբ Մոնթեն չշնչաց, որ մեկ ելք է մնում՝ կրակոց Հակոբյանի գլխին, Կառլենը գլխով համաձայնության նշան արեց: Նա առաջարկեց Հակոբյանին համոզել, որ գնա Իրան. այնտեղ ավելի հեշտ կլիներ նրան սպանել: Գաղափարը Մոնթեին դուր եկավ, բայց պետք էր այն իրագործել: Իմանալով կանանց ու փողի հանդեպ Հակոբյանի թուլության մասին՝ Մոնթեն նրան իմիջիայլոց ասաց, որ Թեհրանի հայկական համայնքը պարարտ հող է՝ դրամ հավաքելու և աղջիկների խումբ կազմակերպելու համար: Երբ Հակոբյանն արդեն համոզվել էր, Կառլենը խորամանկորեն ավելացրեց, որ, ի դեպ, կարիք չկար Մոնթեին Իրան տանել: Գործեց հակառակ հոգեբանությունը. Հակոբյանը վերցրեց Մոնթեի անձնագրային նկարներից մեկը, որպեսզի նրա համար Իրանի մուտքի արտոնագիր պատրաստի:

Այդ ընթացքում «Գաղտնի բանակի» զոհերի թիվն ավելանում էր: 1983 թ. հունիսի 16-ին Մկո Մատարյան անունով մի հավատացյալ երիտասարդ Chtair ավտոմատ ատրճանակով ու նռնակներով հարձակվեց Ստամբուլի շուկայի վրա՝ սպանելով 2 և վիրավորելով 27 հոգու, իսկ ինքն՝ «իմացյալ մահով» նահատակվելով: Հրապարակված լուսանկարներում նրա մարմինը մեջքի վրա ընկած է, արյան լճակի մեջ՝ աչքերը բաց և ձախ ձեռքը դեռ V-աձև պահած, իբրև հաղթանակի նշան:

Ստամբուլի շուկայի արյունահեղությունը միայն սրեց Հակոբյանի կամակատարների և Ցանթայի զորակոչիկների միջև լարվածությունը: Երբ Դավթյանը վեճի մեջ մտավ Լուլուի հետ, թե ինչու էր Հակոբյանը բռնագրավել իր ընտանիքին ուղղված նամակները, «Գաղտնի բանակի» պարագլուխը Լուլուին թույլ տվեց սպանել Դավթյանին, եթե նա շարունակեր գլխացավանք պատճառել: Զգալով, որ իրեն վտանգ է սպառնում, Դավթյանը 2-3 զորակոչիկների համոզեց իր հետ դավ նյութել Լուլուի դեմ: Նրանցից մեկն էր Արամ Վարդանյանը՝ մի սլացիկ, մաքրասեր երիտասարդ Ամմանից (Հորդանան): Առաջին իսկ հնարավորությունն ստանալով՝ Վարդանյանը կտրեց 24 մղոն՝ ճամբարից գնալով Դամասկոս, որպեսզի Մոնթեին տեղեկացնի Դավթյանի դավադրության մասին: Մրագիրը պարզ էր. Վարդանյանն այս կամ այն պատրվակով Լուլուին պետք է ուղարկեր ճամբարի հրետանային զինապահեստ, և ապա այնտեղ պիտի պայթյուն լիներ, իբր՝ պատահական: Եթե Հակոբյանի ամենավստահելի կամակատարներից մեկն այդպես վերացվեր, կհեշտանար Աբու Մահմուդի և իր՝ «Գաղտնի բանակի» առաջնորդի սպանությունը:

Այդ ծրագիրը Մոնթեին թվաց «շատ-շատ վտանգավոր»: «Շատ քիչ հավանականություն ուներ հաջողելու, իր վերջին նպատակին հասնելու», — ինչպես նա հետագայում պատմում էր: Թեև Հակոբյանն այդ ժամանակ հեռու էր՝ Հունաստանում, Մոնթեն գիտեր, որ Ցանթայի «պատահարի» մասին իմանալուն պես նա իսկույն հետ կգար և, իր անվտանգությունն ապահովելով, հատուկ հետաքննություն կվարեր:

Բացի այն, որ Վարդանյանի բերած լուրը տագնապալից էր, նաև Մոնթեն պետք է շատ զգույշ արձագանքեր դրան: Նա գիտեր, որ ամիսներ շարունակ կոնկրետ գործողության չդիմելով՝ նա Դավթյանի ու իր գործակիցների աչքում վստահությունը կորցրել էր: Ինչպես նա ասում էր, նրանք «կմտածեին. եթե [Մոնթեն] բան մը գիտնար ընել, ինչո՞ւ մինչև հիմա ոչինչ կրցած է ընել»: Դավթյանի դավադրությանը խիստ դեմ արտահայտվելով՝ նա կարող էր զրկվել դավադիրների վրա դեռ որոշ ազդեցություն ունենալու վերջին հույսից, և արդյունքում Դավթյանը «կրնար ալ ավելի վտանգավոր, խենթ և վերջին հաշվով չափազանց ճակատագրական բաներ ընել», նույնիսկ իր զայրույթն ուղղել Մոնթեի դեմ: Այս հանգամանքներում Մոնթեն չէր կարող կտրականապես չընդունել Դավթյանի ծրագիրը, ուստի նա Վարդանյանին խնդրեց Դավթյանին հայտնել, որ դավադրությունը կարելի է իրագործել, եթե այն «ամբողջովին ապահով, լավ պատրաստված և անհայտ ըլլար»:

Շուտով, սակայն, նա զղջալու էր ծրագիրն իսկույն չարգելելու համար: Երբ Վարդանյանը վերադարձավ Ցանթա ու Դավթյանին հաղորդեց Մոնթեի պատասխանը, վերջինս այն ընկալեց որպես անվերապահորեն կանաչ լույս: Հուլիսի 15-ին, ժամը 6:30, մինչ զինակոչիկները շրջանաձև պպզած թեյ էին խմում, Դավթյանը քայլեց Լուլուի հետևը և իր «Տոգարյով» ատրճանակն ուղղեց նրա գլխին: Ներկաները լուռ մնացին՝ ցնցումից լայն բացված աչքերով: Դավթյանը ձգանը քաշեց, բայց տխրահռչակ զենքը չկրակեց: Բոլորը լսեցին ձգանի ձայնը բացի թիրախից՝ Լուլուից: Լարվածությունը ցրելու համար մեկը կատակեց, Լուլուն շարունակեց ֆութացնելով խմել իր թեյը, իսկ Դավթյանը հեռացավ: Դուրս կանչելով Վարդանյանին՝ նա ճանկեց հորդանանցու 9 միլիմետրանոց ավտոմատ ատրճանակը, այն լիցքավորեց, դարձյալ մեջքից մոտեցավ Լուլուին, զենքն ուղղեց նրա ծոծրակից քիչ վեր ու ձգանը քաշեց:

Մոնթեն ու Կաուլենը Դամասկոսի թաքստոցում մենակ էին, երբ ինչակուր հայտնվեց Վարդանյանը՝ նորությունը հայտնելու: Մոնթեն դեռ դեղնախտից չէր լավացել, ուստի, լուրը լսելով, նարնջագույն դարձավ: Դավթյանը Լուլուին սպանել էր 6-7 վկաների աչքի առջև, առանց փախուստի որևէ ծրագրի և այնպիսի պահի, երբ անհնար էր Հակոբյանին հարվածել:

Երբ դռնից ներս մտավ Աբու Մահմուդը, Մոնթեն ու Վարդանյանը նրան ասացին, որ Լուլուն պայթուցիկների հետ անզգուշորեն վարվելու հետևանքով ինքն իրեն պայթեցրել էր: Գլուխն օրորելով՝ Աբու Մահմուդը մրթմրթաց, թե սպասում էր, որ Լուլուի վերջն այդ է լինելու. նա պայթուցիկներից շատ չէր հասկանում և միշտ անզգույշ էր: Հակոբյանը, սակայն, Հունաստանում հեռախոսով նրանից լուրն իմանալով, կասկածներ ունեցավ: Նա իր կամակատարին կարգադրեց ֆոտոխցիկով գնալ Ցանթայի ճամբար ու այնտեղ ամեն ինչ լուսանկարել: Աբու Մահմուդը պատրաստվեց հաջորդ առավոտյան Ցանթա մեկնել:

Մոնթեն ու Վարդանյանը որոշ դումար գտան և դարակներից մեկում հայտնաբերեցին Կաուլենի անձնագիրը: Վարդանյանն ու Կաուլենը փախչելու համար դրամը բաժանեցին: Հենց որ Աբու Մահմուդը հեռանար, նրանք պետք է իրենց իրերը կապեին ու

փախուստի դիմեին: Իսկ Մոնթեին հարկավոր էր Ցանթա հասնել Աբու Մահմուդից առաջ, որպեսզի համոզվի, որ ճամբարում գտնվողները Լուլուի մահը նույն կերպ կնկարագրեն, և որ նրա մարմինը պայթեցված է, իսկ փամփուշտի հետքը՝ վերացված: Դավթյանն անկառավարելի էր, իսկ մյուսները հավանաբար այնքան էին զբաղված սեփական փախուստի հարցերով, որ Մոնթեին չէր կարող բացի իրենից ուրիշ մեկին վստահել Աբու Մահմուդի ժամանումից առաջ հանցանշանների քողարկումը: Քանի որ Մոնթեն Լիբանան մտնելու համար անձնագիր չուներ, նա պայմանավորվեց «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» մի պաշտոնատարի հետ, որ նրանց ներկայացուցիչներն իրեն սահմանի սիրիական կողմում հաջորդ օրը վաղ առավոտյան կհանդիպեն ու կմիջնորդեն, որ նա հատուկ արտոնագրով մուտք գործի Լիբանան:

Լուսաբացին, նախքան Աբու Մահմուդը կմեկներ Ցանթա՝ Հակոբյանի համար Լուլուի մահվան հանգամանքները պարզելու, Մոնթեն տաքսի նստեց և ուղղվեց դեպի Լիբանանի սահման: Երբ նա մոտեցավ սահմանապահներին, սակայն, ոչ մի դիմավորող չկար: Նա մենակ չէր կարող մուտքի արտոնագիր ստանալ, և առանց այդ թղթի անհնար կլիներ Ցանթա հասնել: 3 ժամ նյարդային սպասումից հետո Մոնթեն անօգնական հայացքով նայեց, թե ինչպես շտապ օգնության մի մեքենա, որի առջևի նստարանին նստած էր Աբու Մահմուդը, անցավ սահմանապահ կետը և անհետացավ Ցանթա տանող անապատային ճանապարհի վրա: Աբու Մահմուդն իրենից շուտ էր ճամբար հասնելու: Վերջապես, մի քանի րոպե անց Մոնթեին դիմավորողները հայտնվեցին, և նա վարորդից պահանջեց, որ սլանա ամբողջ արագությամբ: Եթե հաջողվեր ճամբար հասնել՝ նախքան շտապ օգնության մեքենան այնտեղից Լուլուի մարմինը կտաներ, գոնե հնարավոր կլիներ զոհվածի վերքերը գտնել և տեղում համապատասխան մի պատմություն հորինել: Բայց երբ Ցանթան նոր պիտի երևար հորիզոնում, Մոնթեն սարսափով տեսավ ճամբարի վրա բարձրացած սև ծխի մի ամպ: Դավթյանը քիչ առաջ պայթեցրել էր հրետանային զինապահեստը. մի ամբողջ օր անց այն բանից հետո, երբ Մոնթեն Աբու Մահմուդին հայտնել էր պայթյունի մասին: Հանցանշանը, ի տես բոլորի, դրոշի նման կախված էր անապատի վրա: Մի քանի րոպեից Մոնթեի Land Cruiser-ը, ճանապարհի խորդուբորդությունների վրայով ցատկոտելով, կանգ առավ ճամբարի մեջտեղում:

Բացի Դավթյանից այնտեղ ոչ ոք չկար: Նա տարօրինակ ժպիտով մոտեցավ մեքենային: Երբ վարորդին անհասկանալի լեզվով Մոնթեն հարցրեց, թե ուր է Աբու Մահմուդը, նա չարագուշակ անտարբերությամբ պատասխանեց.

— Այն նույն փոսում, որտեղ Լուլուն էր:

Նա բացատրեց, որ Լուլուի՝ մարմինը շտապ օգնության մեքենայի մեջ դնելուց հետո վարորդը մեկնել էր՝ Աբու Մահմուդին թողնելով ճամբարում: Վարորդը պատճառաբանել էր, որ իրավունք ուներ Դամասկոս տանել միայն Լուլուի մարմինը, առանց որևէ ուղևորի: Ապա, նրա հեռանալուց հետո, Դավթյանը կրակել էր Աբու Մահմուդի գլխին:

Մոնթեն այնքան ցնցված էր, որ Դավթյանին բան չասաց: Բոլորը ճամբարը լքել էին. ոմանք գնացել էին պաղեստինյան կազմակերպություններ, ոմանք՝ Սիրիա, ոմանք՝ Բեյրութ, ուրիշներն էլ՝ այլուր: Մնացածներին նույնպես մնում էր փախչել: Վարդանյանը ճամփորդելու փաստաթուղթ չուներ, և երբ նա փորձեց ուրիշի անձնագրով Հորդանան մտնել, սահմանապահներն արտոնագիր պահանջեցին: Նա շտապ վերադարձավ Դամասկոս, գտավ անձնագրի տիրոջն ու նրան խնդրեց Հորդանանի մուտքի արտոնություն ստանալ: Վարդանյանն ստիպված էր մի շաբաթ թաքնվել Դամասկոսում, մինչև որ Հորդանանի դեսպանատունն արտոնագիրը կպատրաստեր:

Այդ ընթացքում Կառլենը խոսեց մի ծանոթի հետ, որը Սիրիայից Իրան ավտոբուս էր վարում: Վարորդը համաձայն էր նրան Իրան տանել, բայց շարժվելու էր մի քանի օր հետո: Կառլենը նրան մի նամակ տվեց՝ ուղղված Իրանի «բոլոր ընկերներին»: Նա նամակում գրել էր, որ հավանաբար շուտով մեռնելու է: Ընկերներին խնդրում էր ներել իր սխալները և իրեն թաղել Հայաստանում, եթե իր աճյունը հայտնաբերվի:

Մոնթեն գիտեր, որ Հակոբյանը Հունաստանից վերադարձի ճանապարհին է: Ժամանակը կարճ էր, և նա պետք է հասցներ ամեն ինչ կարգավորել: Դավթյանն ու Մոնթեն հավաքեցին ճամբարում եղած զենքերը և դրանք քարշ տվեցին մի քանի հարյուր մետր. այն կողմ գտնվող՝ «անկախ ձախ» թուրքերի՝ «Գուրթուլուշ» կոչվող խմբին պատկանող ճամբարը: Մինչ այդ հարևանները միմյանցից հեռու էին մնում. «Պաղեստի բանակի» զինակո-

չիկները Թուրքերին չէին սիրում, իսկ Թուրքերն, իրենց հերթին, Հակոբյանի հետևորդներին համարում էին մի խումբ գժեր: Մոնթեն չփոթված Թուրքերին բացատրեց, որ «Գաղտնի բանակը» պատակտվել էր՝ քանզի ոմանք դեմ էին կույր ահաբեկչությանը, որի օրինակ էին «Էսեմբոդա» օգանավակայանի և Ստամբուլի շուկայի վրա հարձակումները:

Քուրթուլուշ ճամբարում զենքերը Թաքցնելուց հետո, հետևում Թողնելով տարակուսանքից գլուխները քորող Թուրքերին, Մոնթեն ու Դավթյանը շարժվեցին Դամասկոսի ուղղությամբ: Եթե երկու փախստականներին հաջողվեր Սիրիայի սահմանն անցնել, նրանք գուցե և կարողանային Կաուլենի հետ գնալ Իրան: Մոտենալով Սիրիայի ու Լիբանանի սահմանին, սակայն, նրանք հայտնաբերեցին, որ լիբանանյան Տրիպոլի նավահանգստի մոտ գտնվող՝ փախստականների պաղեստինյան ճամբարում երկպառակություն էր սկսվել, և Մոնթեն չէր կարող իր ծանոթներին դիմել՝ Սիրիա անցնելու թույլտվություն ստանալու համար: Իրավիճակն է՛լ ավելի բարդացավ, երբ մի արաբ, սահմանի մոտ լսած լինելով հայկական ճամբարում տեղի ունեցած ապանությունների մասին, Մոնթեին հայտնեց, թե սիրիամետ պաղեստինցիներն արդեն փնտրում են մարդասպաններին: Դարձյալ գործում էին Հակոբյանի կապերը սիրիական օդուժի հետ:

Մոնթեն ու Դավթյանն ստիպված էին մնալ Լիբանանում, և միայն հիմարը կմտածեր, թե նրանք այնտեղ չեն բռնվի ու սպանվի: Դա էր, ուրեմն, նրանց «ճակատի գիրը»: Մոնթեն իրեն մխիթարում էր այն մտքով, որ գոնե Կաուլենն ու Վարդանյանը դրամ ու ճանապարհ ընկնելու հնարավորություն ունեին և շուտով հասնելու էին անվտանգ տեղ: Ենթադրությունը, սակայն, սխալ էր: Կաուլենն ու Վարդանյանը հարկադրաբար մնացել էին Դամասկոսում: Ավելի լավ լուծում չգտնելով՝ նրանք հայկական եկեղեցու քահանայից ապաստան խնդրեցին: Վերջինս նրանց ներս տարավ ու մի ծխականի խնդրեց «տղաներին ուտելիք տալ»: Շուտով լուր տարածվեց, թե երկու տղա թաքնված են եկեղեցում: Մոտավորապես հուլիսի 26-ին Հակոբյանն ու մի քանի զինյալներ ներխուժեցին եկեղեցու հետևում գտնվող փոքր սենյակը և, Կաուլենին ու Վարդանյանին բռնելով, իրենց հետ տարան:

Հուլիսի 15-ին Ցանթան ապանությունների միակ տեղը չէր: Նույն օրը Փարիզի մոտ, Օրլի օդանավակայանում, ուղևորների դրանցման մարդաշատ կետի մոտ պայթեց ռումբով ու 10 պրոպան գազի թիթեղներով լի մի ճամպրուկ՝ մահացու վիրավորելով յոթ հոգու և լուրջ վնասվածքներ հասցնելով մի քանի տասնյակ ուրիշների: Երբ հեռախոսազանգով պայթյունի պատասխանատվությունն իր վրա վերցրեց «Գաղտնի բանակը», խմբավորման նախկին համակիրները Փարիզում զզվանք զգացին: Թեև Հակոբյանի աջակիցների թիվն արագ նվազում էր, պայթյունը ծառայեց իր անմիջական նպատակին, որ այդ պահին դեռ պարզ չէր: «Գաղտնի բանակի» առաջնորդը համակված էր ամառը Լոզանում (Շվեյցարիա) տեղի ունենալիք մի կոնֆերանսի խափանման գաղափարով: Նա սկզբում խրախուսել էր «Համահայկական երկրորդ համագումարի» կազմակերպումը, բայց վերջին րոպեին նրան թվացել էր, թե Արա Թորանյանի՝ մրցակից «Հայ պայքար» խումբն ավելի շատ է օգուտ քաղելու այդ միջոցառումից: Հակոբյանը վեհաժողովի կազմակերպչին՝ ոմն Գատվելի Զեյմս Գառնուզյանի, կարգադրեց միջոցառումը չեղյալ հայտարարել, բայց Գատվելին մերժեց: «Գաղտնի բանակի» կատաղած առաջնորդը հեռաձայնեց Փարիզում իր մի կամակատարի ու հրամայեց նրան պայթյուն անել այնպիսի տեղում, ուր զոհերը հնարավորին չափ շատ կլինեն: Թվում էր՝ կամակատարի նպատակն օդում ինքնաթիռ պայթեցնելն էր, բայց ռումբը գործեց ժամանակից շուտ, ուղևորների դրանցման կետի մոտ:

Հակոբյանի հույսերն իրականացան. պայթյունի հարուցած վախն ու նողկանքն արդելակեցին Գառնուզյանի կազմակերպչական գործունեությունը: Օրլիի արյունալի միջադեպի արդյունքում վեհաժողովին մասնակցեցին ոչ ավելի, քան 90 հոգի, մինչդեռ առաջին հավաքին ներկա էին եղել 400-ը:

1983 թ. հուլիսի 15-ի փոթորկից մի քանի օր անց երկու անծանոթ մոտեցան Սեդայի հորը՝ Պետրոս Գպրանյանին, երբ նա Այնճարի իրենց տան առջև լվանում էր իր «Վոլվո» մեքենան: Անծանոթներից մեկը կրում էր սիրիական բանակի սպայի համազգեստ: Մյուսը պարոն Գպրանյանին սիրիացի սպային անծանոթ մի լեզվով ողջունեց ու ասաց, որ իրեն Մոնթեն էր ուղարկել: Բարձրահասակ երիտասարդն այդ ասելիս լայն ժպտաց և խնդրեց պարոն Գպրանյանին ձևացնել, որ իրեն ճանաչում է ու հրավիրել է թեյի: Պարոն Գպրանյանը պատասխանեց նույնպիսի ժպիտով և եկվորներին հրավիրեց իր հետ նստել հյուրասենյակում: Շարունակելով զինվորի ներկայությամբ բռնազբոսիկ ժպտալ և խոսելով սիրիացուն անհասկանալի լեզվով՝ Դավթյանը պարոն Գպրանյա-

նին ասաց, թե Մոնթեն իրեն ուղարկել էր հանդիպման համար պայմանավորվելու նպատակով: Այնճար գալու ճանապարհին, սակայն, սիրիական բանակի պահակակետի զինվորները կասկածներ էին ունեցել՝ հայտնաբերելով, որ նա պաղեստինյան անձնագիր ունի, արաբի անունով, բայց արաբերեն չի խոսում: Զինվորները Դավթյանին պահել էին ու կապվել սիրիական գաղտնի ոստիկանության՝ «Մուխաբարաթի» հետ: Գործակալների ժամանմանն սպասելու ընթացքում Դավթյանը սիրիացի սպային ասել էր, թե ուզում է շրջակայքում զբոսնել, և նրանք միասին քայլել էին դեպի Գպրանյանների տուն:

— Հիմա Մոնթեն ինձ կսպանի, — քթի տակ փնթփնթաց Դավթյանը:

Նա մի ծրագիր էր հղացել՝ շեղել սիրիական բանակի ու գաղտնի ոստիկանության ուշադրությունը և դրա մեջ ներգրավել Գպրանյան ընտանիքին: Շուտով այնտեղ հայտնվեցին «Մուխաբարաթի» մի քանի գործակալ, և տանտերը նրանց էլ ուրախ ներս հրավիրեց: Մտածելով, որ մեկ-երկու բաժակից հետո բանակի սպան ու սիրիացի գործակալներն ավելի լավ տրամադրության մեջ կընկնեն, պարոն Գպրանյանը բերեց իր լավագույն վիսկին ու նրանց համար լիքը լցրեց: Երբ նրանք բաժակները պարպել էին, պարոն Գպրանյանը հայտարարեց, թե, այդ օրն ավելի վաղ, ճանապարհին մեքենայով վերցրել էր մի երիտասարդի և հիմա ուզում էր գնալ ու տեսնել, թե նա ինչպես է: Եվս մի քանի բաժակից հետո պարոն ու տիկին Գպրանյանները, իրենց փոքր աղջկա և Դավթյանի հետ, մտան «Վոլվոյի» մեջ ու շարժվեցին: Սիրիացիները մեկ ուրիշ մեքենայով հետևեցին նրանց:

Մի քանի կիլոմետր անցնելուց հետո Դավթյանը պարոն Գպրանյանին խնդրեց մայրուղուց դուրս գալ ու կանգնել: Հենց որ «Վոլվոն» կանգ առավ Մեջդալ Այնճար գյուղի մոտ, այնտեղ կայանած մի մեքենայից դուրս եկավ Մոնթեն, որ երկար սպասել էր նրանց: Նա նիհար ու դեղնած տեսք ուներ, սակայն այդ օրերի ընթացքում առաջին անգամ ժպտաց: Մոնթեն մոտակա մի տաղավարից բանաններ գնեց և հյուրասիրեց պարոն Գպրանյանին ու նրա անսպասելի հյուրերին՝ սիրիացիներին: Սպան ու գործակալները, խմիչքի ազդեցության տակ, չափազանց բարձր տրամադրության մեջ էին, որպեսզի անհարմար զգային: Համաձայնելով հաջորդ առավոտյան Մոնթեի հետ այնտեղ հանդիպել «ձևականությունների համար»՝ նրանք հեռացան: Երբ նրանց մեքենան մեծ արագությամբ անհետացավ մայրուղու վրա, Մոնթեն թեթևացած շունչ քաշեց ու դիմեց պարոն Գպրանյանին.

— Ես ձեզ ասելիք ունեմ, բայց նախ պետք է Սեդայի հետ խոսեմ:

Պարոն Գպրանյանը վատ կանխազգացում ունեցավ, որ այդ տարօրինակ երիտասարդն իր դստեր հետ կապված լուրջ նպատակներ ունի: Մոնթեն հազիվ թե իր ուզած փեսան լիներ. ի՞նչ կարող էր նա իր աղջկան տալ բացի վտանգներից: Ինչո՞վ էր նա առհասարակ զբաղվում: Իհարկե, Մոնթեն տրամաբանող էր ու սկզբունքային, բայց հենց նման մարդն էր ընդունակ ամենամեծ գժությունների: Թեև, մյուս կողմից, նա խելացի երիտասարդ էր, գործունյա և իր ուղղախոսությամբ մարդկանց զինաթափ անող: Նաև՝ քոլեջ ավարտած ամերիկյան քաղաքացի...

Պարոն Գպրանյանը հառաչեց: Այնուամենայնիվ նա՝ վեց դուստրերի հայրը, դեմ չէր նման լուրջ փեսացուին: Մոնթեն առնվազն նվիրված ամուսին կլիներ և մի օր էլ, գուցե, դուրս կգար այն անհատակ անդունդից, որի մեջ հայտնվել էր: Նա ձեռքը դրեց Մոնթեի ուսին: Սեդան, ասաց պարոն Գպրանյանը, իր ամառային արձակուրդի մի մասն անց էր կացնում Բեյրութում՝ այցելելով ընկերների ու ազգականների: Մոնթեն կարող էր նրան գտնել քրոջ՝ Մանուշակի միջոցով, որը Բեյրութում նոր հեռախոսահամար ուներ:

Նրանք ճամփեզրին Մոնթեին հրաժեշտ տվեցին:

Մոնթեն ու Դավթյանը հավանաբար այդ գիշերն անցկացրին դաշտում կուչ եկած: Հաջորդ առավոտյան սիրիացի գործակալները չհայտնվեցին: Երևի պարոն Գպրանյանի վիսկին նրանց վրա այնքան լավ էր ազդել, որ մոռացել էին պայմանավորվածության մասին: Մոնթեն կրկին թեթևացած շունչ քաշեց և ապա գնաց մոտակա փոստատուն՝ վճարովի հեռախոսից օգտվելու համար: Մոտ ժամը 9-ին Սեդան վերցրեց Մանուշակի բնակարանում զնգացող հեռախոսի լսափողը: Հենց որ Մոնթեն լսեց նրա «ալո»-ն, հուզմունքով բացականչեց.

— Դո՞ւ ես... վերջապե՜ս...

Սեդան լայն ժպտաց և լսափողը սեղմեց ականջին: Նա զարմացած էր, երջանիկ և միաժամանակ անհանգիստ՝ թե ինչ կասի Մոնթեն:

— Գոռթկում է եղել, — սկսեց Մոնթեն:

Նա ուզում էր լրացուցիչ բացատրություն տալ, բայց դա մնաց հետո, դեմ առ դեմ հանդիպման ժամանակ: Իսկ մինչ այդ բավական էր լսել Սեդայի ձայնը և նրան սեր խոստովանել: Սեդան այնքան երջանիկ էր՝ նրա «Ես քեզ սիրում եմ»-ը լսելով, որ ուշադրություն չդարձրեց «պոռթկումի» չարագուշակ հիշատակման վրա:

Մոնթեին հաջորդ օրերին մահացու վտանգ էր սպառնում, բայց նա գոնե հասցրեց Սեդային խոստովանել իր սերը: Նա լսափողը կախեց և տաքսիով ուղղվեց պարոն Գպրանյանի աշխատավայրը՝ Park Hotel, մոտակա Շթորա քաղաքում: Նրանք երկար նստեցին լողավազանի մոտ, և Մոնթեն պատմեց նախորդ օրերի դեպքերը: Լսելուց հետո պարոն Գպրանյանը համաձայնեց նրան իր մեքենայով տանել Այնճար՝ հերթապահի հետ խոսելու համար. վերջինս տեղի դաշնակցական առաջնորդն էր: Նրանք Այնճար մտան մայրամուտին, և պարոն Գպրանյանը մեքենան կանգնեցրեց մի մթերային խանութի մոտ, որի տերը Զավեն Թաշճյանն էր՝ Վահե Աշքարյանի հաջորդը որպես հերթապահ: Մոնթեն պարոն Գպրանյանին շնորհակալություն հայտնեց ու անհետացավ մթության մեջ: Նրանց վիճակված էր նորից հանդիպել տարիներ անց միայն:

Մոնթեն ու Դավթյանը Թաշճյանի մոտ մնացին երկու օր՝ հուլիսի 20-22-ը, մինչ գյուղի խորհուրդը նրանց ճակատագիրը որոշելու համար բանակցում էր Բեյրութում գտնվող ղեկավարության հետ: Փախստականներին ապաստան տալու որոշումը կայացրեց Դաշնակցական բյուրոյի՝ բարձրագույն մարմնի անդամ Հրայր Մարուխյանը: Հետագա ամիսներին Մոնթեն ու Դավթյանն ապրում էին փոքր, մութ սենյակներում, ուրիշներին գրեթե չհանդիպելով: Ժամանակ առ ժամանակ նրանք գիշերով փոխում էին իրենց բնակության վայրը, և նրանց ուղեկից աշխարհազորայինները հրահանգ էին ստանում շատ ուշադիր լինել, եթե գյուղի որևէ մասում կասկածելի շարժում նկատվի: Նրանցից մեկն էր Վարդգեսը՝ այն երիտասարդը, որը 3 տարի առաջ Մոնթեին ու նրա զարմիկ Դավիթին վտարել էր Այնճարից:

Դեռ Հունաստանից Սիրիա վերադառնալուց առաջ Հակոբյանը կասկած ուներ, որ «Գաղտնի բանակի» ներսում պառակտում կա, և որ դրա հետևում չանգնած է Մոնթեն: Նա Մոնթեին լավ էր ճանաչում և գիտեր, որ նա չի կարող երկար ժամանակ «մթության մեջ թաքնվել» (ինչպես գրվեց «Գաղտնի բանակի» պարբերակում): Հակոբյանը Կաուլենին ու Վարդանյանին օգտագործեց իբրև խայծ, որպեսզի Մոնթեին ստիպի անխոհեմաբար նետվել իր ընկերներին ազատելու: «Գաղտնի բանակի» պարբերակում տպվեցին երկու ծեծված ու սովահար գերիների լուսանկարներ: Սիրողական մի լուսանկարում Կաուլենը կեղտոտ շալվարով նստած է՝ հենված մի պատի: Ձեռքերը լարով կապված են մեջքի հետևում, արմունկներից վեր, դեմքն ուռած է ու կապտած: Նրա կողքին բետոնի վրա մի արյունոտ շորի կտոր է, իսկ լուսանկարի ձախ եզրին երևում է մի անվադող: Մոնթեն գիտեր, թե դա ինչի համար է, և չէր կարողանում իրենից վանել մղձավանջային պատկերը. Կաուլենը կապված է անվադողին, նրան այդպես բարձրացնում են և ապա դցում բետոնե գետնին, կրկին ու կրկին: Նրա կաղկանձն ու ճիչերն արձագանքում էին Մոնթեի գլխում, և նա նման էր վանդակաճաղերին խփվող կենդանու:

Մոնթեն հուսահատաբար փորձում էր դիմել «Գաղտնի բանակի» իր նախկին ընկերներին, որոնք դեռ խմբավորման ներսում էին, որպեսզի նրանք քայլեր անեն Կաուլենին ու Վարդանյանին փրկելու համար: Երբ ոչ ոք չարձագանքեց, Մոնթեն փորձեց դաշնակցական առաջնորդներին համոզել, որ իրեն օգնեն հարձակում կազմակերպել ու ընկերներին իրենց ընդհանուր թշնամուց ազատել: Նա վիճում ու փաստարկներ էր բերում ձայնը խոպոտելու չափ, բայց այս առաջարկն արհամարհվեց ավելի հեշտ, քան նույնիսկ կոլտնտեսության գաղափարը 5 տարի առաջ: Ի վերջո, ուրիշ ճար չունենալով, նա պատրաստ էր Հակոբյանի դեմ միայնակ անձնասպան գործողություն կատարել: Եթե ընկերներին ազատեր ու Հակոբյանին սպաներ, ապա իր մահը վեհ նպատակի կծառայեր: Մոնթեից բացի, սակայն, ոչ ոք չէր հավատում, թե նման գործողությունը կարող է, լրացուցիչ սադրանք լինելուց բացի, ուրիշ արդյունքի հասցնել, ուստի դաշնակցականներն արգելեցին այն: Ի վերջո Մոնթեն, գլուխը կախ, մնաց իր սենյակի հատակին նստած: Շատ ուշ էր:

Լուլուի և Ալբու Մահմուդի սպանությունը գրգռեցին Հակոբյանի գազանային էությունը: Եթե մինչ այդ «Գաղտնի բանակի» առաջնորդն ստիպված էր իրեն մասամբ զսպել, ապա այժմ արգելակներ չկային, և նա վիսկիի շշի միջով գահավիժեց մոլագարության գիրկը: Որպես իր սադիզմի փառապանծ վկայություն, նա նկարահանեց Կաուլենի և Վարդանյանի հարցաքննությունն

ու մահապատիժը և տեսաժապավենն ուղարկեց բազմաթիվ մարդկանց:

Մոնթեն ու Դավթյանը դեռ թաքնված էին Այնճարում, երբ 1983 թ. ամռանը լսեցին իրենց ընկերների սպանության լուրը: Մոնթեի ստամոքսը կծկվեց. նա Կուլենին սիրում էր փոքր եղբոր պես, որ երբեք չէր ունեցել, իսկ Վարդանյանին գովում էր այնպես, ինչպես ոչ մեկի. «Արամ Վարդանյանն, — ասում էր նա, — կատարյալ զինվոր է»: Հետագայում Մոնթեն նշում է, որ Լիբանանի ու Սիրիայի Առողջապահության նախարարությունների փաստաթղթերում Ուրմիայում ծնված Կուլեն-Յուսուֆ Անանյանը՝ «Պաղեստինյան ժողովրդական պայքարի ճակատի» մի մարտիկ, հիշատակվում է իբրև «նահատակ»:

Օրեր շարունակ Մոնթեն չէր կարողանում իր փոքր, մութ սենյակի մյուս բնակչին որևէ բառ ասել: Հենց նա՝ Դավիթ Դավթյանն էր Լուլուի ու Աբու Մահմուդի վրա քաշել ատրճանակի ձգանը՝ այդպես Կուլենին ու Վարդանյանին՝ իր ամենասիրելի ընկերներից երկուսին Գողգոթա ուղարկելով: Դավթյանն սկսել էր ուտել ծածուկ, իր ափսեի վրա կռացած, ասես այն հարձակումից պաշտպանելով:

— Գիտեմ, որ ես խառնեցի ամեն ինչ, — խոստովանում էր նա իր՝ գնալով ավելի ծակող դարձող ձայնով:

Մոնթեն նողկանքով դեմքը շրջում էր: Նա, ինչպես հետագայում ասաց Սեղային, մտածում էր միայն նրա հետ ամուսնանալու, երկու տղա ունենալու և նրանց անունը Կուլեն ու Արամ դնելու մասին:

Որքան էլ նա զայրացած էր Դավթյանի վրա, երբեք նրան հրապարակավ չմեղադրեց Լուլուին հուլիսի 15-ին սպանելու և հետագա ճակատագրակրոն դեպքերի պատճառ դառնալու համար: Ե՛վ արտաքուստ, և՛ իր սրտի խորքում նա իրեն պատասխանատու էր զգում աղետի համար: Իր հանցանքը՝ ծանր հանցանքը, շատ երկար սպասած լինելն էր: «Ինքնաքննադատության» մեջ նա նշում է, որ եթե 1982 թ. մայիսին իր ծրագրերն իրականացրած լիներ, ապա կփրկվեին «Խեմբրոդա» օդանավակայանի, Ստամբուլի շուկայի և Օուլիի անմեղ զոհերի կյանքերը:

Հակոբյանն իր հերթին ուզում էր վստահ լինել, որ Մոնթեն երկար չի ապրի և չի կարողանա վերածնվել ու որևէ գործողության դիմել: «Հայաստան»-ում՝ «Գաղտնի բանակի» այն նույն պարբերականում, որի վրա Մոնթեն 3 տարի չարչարվել էր, տպվեց ատրճանակի մեջ փամփուշտ մտցնող մի ձեռքի պատկեր՝ «Դավաճանները պետք է պատժվեն» գրությամբ: Այդ ժամանակ Հակոբյանի կազմած «դավաճանների» ցուցակը բավական մեծացել էր. այն ներառում էր Արա Թորանյանին ու իր ընկերներին, Լիբանանի դաշնակցական առաջնորդներին, Յասիր Արաֆաթին ու Աբու Իյադին, «Պայքարի ժողովրդական ճակատի» ու «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» անդամներին և, բոլորից առաջ, Մոնթե Մելքոնյանին:

Մի ձայնագրության մեջ, որը Հակոբյանն ուղարկել էր «Գաղտնի բանակի» համակիրներին, նա, հայերեն խոսելով, ծաղրում էր Մոնթեին՝ «հակամարդկային գործողությունները» (օրինակ՝ Օուլիի օդանավակայանի պայթյունը) դատապարտելու համար: Եթե Մոնթեն այդքան փափկասիրտ է, զարմանում էր Հակոբյանը, ապա ինչո՞ւ Աթենքում «փամփուշտներ պարպեց» մեքենայի հետևում նստած 14-ամյա աղջկա վրա: «Գաղտնի բանակից» ոչ ոք նրան չէր կարգադրել աղջկան սպանել, և ոչ էլ որևէ մեկը նրան ստիպել էր Եվրոպայում մինչ այդ պայթյուններ անել: Կեղծավորություն չէ՞ր արդյոք, երբ նման դաժանություններ գործած մեկը, որպես մարդասեր ներկայանալով, հանդես էր գալիս Օուլիի օդանավակայանի վրա հարձակման դեմ:

Հակոբյանի հարվածը դարձյալ դիպուկ էր, և Մոնթեն պատասխան չուներ: Նա կարող էր միայն զղջալ ու դատապարտել անցյալի իր սխալները և, հրապարակավ ներում հայցելով, եզրակացնել, որ ինքը մեղավոր է: «Եվ եթե հանցավորները պետք է պատժվին, — գրում է նա, — ինձի համար ո՛չ մեկ պատիժ բավական խիստ կլլա: Ես նույնիսկ անկեղծորեն պատրաստ եմ մահապատիժի, բայց այն պայմանով, որ զիս պատժողը, զիս գնդակահարողը ինձի չափ փորձեր ըրած ըլլա խնդիրներ լուծելու, պայքարելու և ինձմե ավելի քիչ հանցանքներ գործած ըլլա»:

Նախքան 1983 թ. ամառվա վերջը ես նույնիսկ աղոտ կերպով չգիտեի, թե ինչ վիճակում է եղբայրս, երբ «Գաղտնի բանակի» մի համախոհ Նյու Յորքում, ուր այդ ժամանակ բնակվում էի, ինձ տվեց մի ձայներիզ՝ Կուլենի ու Վարդանյանի «խոստովանություններով»: Այդ երեկո ես իմ մահճակալին պառկած լսում էի Կուլենի տանջահար խոսքերն ու Հակոբյանի ցածր զումոցը: Ձայները խառնվում էին իրար ու դառնում անհասկանալի, իսկ վերջում հնչեցին Լուլուի և Աբու Մահմուդի հիշատակին նվիրված մի ողբաձայն բալլադի ելևէջները:

Այդ օրվանից շատ չէր անցել, երբ, աշխատանքից տուն վերադառնալով, տեսա, որ չորրորդ հարկի իմ բնակարանը գողեր էին մտել: Թանկարժեք տեսախցիկին ձեռք չէին տվել, բայց իմ անձնական թղթերը թափված էին գետնին, և դրանցից մի քանիսը բացակայում էին: Կոլոլված անկողնային ծածկոցի մեջտեղում հայտնաբերելով իմ ձայներիզների նվագարկիչը՝ ես այն ավելի պոչով փոքր-ինչ հրեցի՝ համոզվելու համար, որ նրա մեջ պայթուցիկ չկա: Նյու Յորքի ոստիկանության աշխատակիցները, որոնք հանցագործության մասին զեկույց գրեցին, նշել էին, թե գողերն իջել են կտուրից ու բնակարան մտել պատուհանից: Դրանից հետո ես աշխատանքի էի գնում ու այնտեղից գալիս տարբեր ճանապարհներով և քայլում էի, ինչպես Բեյրութում, ուշադիր շուրջս նայելով:

Վերադառնանք Այնճար: Մոնթեն բանտարկված էր տախտակապատ պատուհաններով մի լքված տան փոքր սենյակում, գյուղ տանող հիմնական ճանապարհից մի քանի տասնյակ մետր հյուսիս: Մի օր, ճիշտ իր սենյակի պատերի հետևում... Ո՞չ, դա չէր կարող պատահել... բայց պատահեց. Սեդայի ձայնն էր: Նա Մոնթեի թաքստոցի կողքով անցնում էր մի ընկերուհու հետ՝ խոսելով երաժշտության մասին: Նրան ողջունելը բացառված էր. Մոնթեն չէր կարող ռիսկի դիմել՝ ցույց տալով իր տեղը Սեդային ու նրա ընկերուհուն: Փորձելով գոնե մի պահ Սեդային տեսնել, Մոնթեն դեմքը սեղմեց պատուհանը ծածկող տախտակի ու շրջանակի միջև եղած ճեղքին, բայց անօգուտ: Նա ճեղքին մոտեցրեց ականջը, և թեպետ Սեդայի ձայնն արդեն մարում էր հեռվում, այն բավական էր անհուսության մութ թունելից Մոնթեին հանելու համար:

Օգոստոսի վերջին Սեդան վերադարձավ Խորհրդային Հայաստան՝ ուսումը շարունակելու Երևանի Պետական համալսարանում: Նա միայն անորոշ զգացում ուներ, թե Մոնթեն ներքաշվել է ինչ-որ աղետալի դեպքերի հորձանուտը: Կես տարի անց, 1984 թ. մարտի 3-ին կամ 4-ին, 20-ամյա ուսանողուհին Երևանի Հանրակացարանի իր սենյակի դռան տակ մի նամակ գտավ: 1983 թ. դեկտեմբերի 11-ին գրված այդ նամակը սիրո խոստովանություն էր: «Ես չեմ հավատում 16-րդ դարի սիրային պատմություններին, — գրում էր Մոնթեն, — պատմություններ, որոնցում սերը միշտ ցավ է պատճառում, որովհետև այդ զգացմունքն ինձ միայն երջանկացնում է»:

Երջանիկ զգալու ուրիշ հիմքեր նա շատ չուներ. 26 տարեկանում ստիպված էր «թաքնվել մթության մեջ», նրա ամենամտերիմ ընկերները կտտանքների էին ենթարկվել ու սպանվել: Եթե «Գաղտնի բանակում» նույնիսկ դեռ մնացել էին այլախոհներ, ապա նրանք այնքան վախեցած էին, որ ծպտուն չէին հանում: Հակոբյանն ազատորեն կարող էր հրահանգել նոր պայթյուններ սրճարաններում և օդանավակայաններում:

Երբ Մոնթեն նոր էր եկել Այնճար, նա կարծում էր, թե իր օրերը հաշված են: Նա գիտեր, որ Հակոբյանն այդ գյուղում աչքեր ու ականջներ ուներ, և վստահ էր, որ շուտով մեկը կիմանար Դավթյանի ու իր տեղը, և կսկսվեին այն ասեկոսեները, որոնք Հակոբյանին տարան Կաուլենի ու Վարդանյանի թաքստոցը՝ Դամասկոսի եկեղեցին: Բայց ամիսներ անցան՝ թանկագին ամիսներ, և թեպետ Մոնթեն ու Դավթյանը Հակոբյանի «քթի տակ» էին, թվում էր, թե «Գաղտնի բանակի» առաջնորդը նրանց հետքը կորցրել է:

Այդ ընթացքում Արա Թորանյանը Փարիզում փող էր հավաքում՝ Մոնթեին ու Դավթյանին Լիբանանից Եվրոպա տանելու համար: Երբ բավարար դրամ կուտակվեց, Դավթյանը կապեց իր պայուսակները: Նրա մեկնելու պահին Մոնթեն հազիվ գլխով հրաժեշտի նշան արեց. նրա միակ ցանկությունն այդ պահին Դավթյանին այլևս երբեք չհանդիպելն էր:

Մոնթեն գնեց 1941 թ. փետրվարի 10-ին Փարիզում ծնված Գի Ժան-Կլոդ Վ.-Դ.-ի անունով մի գողացված ֆրանսիական անձնագիր և համապատասխան էջին կպցրեց իր լուսանկարը: 1985 թ. մայիսի 4-ին նա իր թղթերն ու մի քանի շոր խցկեց գնումների 2-3 պայուսակի մեջ և նստեց Դամասկոսի օդանավակայան գնացող մեքենան: Մթության մեջ ավելի քան 21 ամիս (1983 թ. հուլիսի վերջից մինչև 1985 թ. մայիսի սկիզբը) անցկացնելուց հետո նա վերջապես արև տեսավ: Մինչ մեքենան հանդարտ անցնում էր Լիբանանի ու Սիրիայի միջև տարածվող լեռնաշղթայի ստորոտով, Մոնթեն շրջվեց ու հայացքն ուղղեց ասես կարկատաններից կազմված Բեքաա հովտին: Երբ նա 15 տարի առաջ Լիբանան էր եկել, նրա առջև, հակառակ ուղղությամբ գնալիս, բացվել էր նույն տեսարանը: Իսկ այժմ Մոնթեն իր կյանքում վերջին անգամ էր տեսնում այդ գեղեցիկ, տառապյալ երկիրը:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ. «ԱՄԷՆ ԿՈՂՄ՝ ՊԱՏ»

Գլուխ 10. Բարեգործներ

Մոնթեն Դամասկոսից թռավ Ամման և հետո՝ Մադրիդ: 1985 թ. մայիսի 20-ին կամ 21-ին մի ընկեր նրան մեքենայով տարավ Ֆրանսիա, և նա օթևանեց մի տարիքով մարդու տանը, ալպիական Վուարոն քաղաքում, Իտալիայի սահմանից ոչ հեռու: Մոնթեն անհամբերությամբ ուզում էր ուղիղ Փարիզ գնալ, որպեսզի հանդիպի ընկերներին և իրենց հետագա ռազմավարության հարցերը քննարկի, բայց Փարիզից նրան խորհուրդ տվեցին առժամանակ սպասել: Սրճարաններում ու մետրոյում վերջին պայթյուններից հետո Փարիզի ոստիկանությունը ծայրահեղ զգոն էր, ուստի հարմար ժամանակ չէր, որ դատապարտված մի ահաբեկիչ հայտնվեր բուլվարներում, թեկուզ՝ ծպտված: Իրավիճակն ավելի էր բարդացել նրանով, որ այդ օրերին Արա Թորանյանի մեքենան պայթեցնելու երկրորդ փորձն էր արվել: Հակոբյանի թշնամիները՝ ներառյալ Մոնթեն, պետք է Ֆրանսիայում չափազանց զգույշ լինեին:

Երկու ամիս անց, սակայն, Մոնթեին այլևս հնարավոր չէր պահել Վուարոնում: Հուլիսին նա տեղափոխվեց Փարիզի Մոնպառնաս թաղամասը: Նրան հատկացրին մի փոքրիկ բնակարան (chambre de borne)՝ բաղնիքն ու զուգարանը սենյակի մեջ: Մոնթեն երկար մարզանք էր անում, պպզում-բարձրանում մի քանի հարյուր անգամ, ապա ոտքով կամ մետրոյով գնում Թորանյանի ընկերների հետ հանդիպման: Այնտեղ նա բոլորի գլուխները տանում էր «Գաղտնի բանակի» պառակտման վերաբերյալ մանրամասներով: Տեղացի ծանոթների միջոցով հանդիպում էր նաև «Քրդստանի աշխատավորների կուսակցության» անդամների և կորսիկացի ու բասկ անջատողականների ներկայացուցիչների հետ:

Այդ ժամանակ Մոնթեն իտալական անձնագիր ուներ՝ Ֆրեդերիկո Վելլա անունով: Նա նաև ամերիկյան անձնագիր ուներ՝ Ինդիանայի ոմն բնակչի՝ Ջեք Դենիել Մ.-ի անունով: Թորանյանի որոշ ընկերներ նրան կոչում էին «Ժակո»: Մոնթեն բուլվարներում քայլում էր «աչքերը չորս արած», իսկ գրպանում պահում էր մի հին ավտոմատ «Բերետտա» ատրճանակ: Նա այլևս չէր կրկնի 5 տարի առաջ գործած սխալը, երբ, «Գաղտնի բանակին» միանալով, իր զենքերը հանձնեց Հակոբյանին: Նախապես Մոնթեն «Բերետտա»-ի վրայից խնամքով խարտել էր բոլոր սերիական համարները: Եթե նա երբևէ Հակոբյանի վրա նշան բռնելու հնարավորություն ստանար, ապա չէր վարանի կրակել՝ անկախ հետևանքներից:

Մոնթեն այժմ, 1980 թ. մայիսից ի վեր (երբ մտավ Հակոբյանի ստվերի տակ), վայելում էր, իր խոսքերով ասած՝ «ազատ գործունեության համար ամենանպաստավոր պայմանները»: Այնուամենայնիվ, նա Փարիզում կատարելապես ազատ մարդ չէր: Ամեն անգամ, երբ իր ջինսով ու սպորտային կոշիկներով անցնում էր որևէ մարդաշատ բուլվարով, ենթարկվում էր այս կամ այն անցորդի հիշողությունն արթնացնելու վտանգին. չէ՞ որ 1981 թ. ձմռանը մամուլում հրապարակվել էր ահաբեկիչ «Դիմիտրիու Ջորջիուի» լուսանկարը: Ծպտվելու առումով վատ չէր, որ երեքուկես տարվա ընթացքում նրա դագաթի ճաղատը մեծացել էր: Բացի այդ, նա հիմա թավ բեղեր ուներ: Մոնթեն ենթադրում էր, որ Ֆրանսիայի իշխանությունները գիտեն իր գալստյան մասին, բայց չեն ուզում իրեն անհանգստացնել. նույնիսկ ոստիկանները, հակառակ իրենց բթամտությանը, չեն ձգտի ձերբակալել մեկին, ով իրենց ընդհանուր թշնամու՝ Հակոբյանի ներկայությունը կարող է լավագույնս զգալ:

Մոնթեն ուրիշի անունով վարորդական իրավունք ձեռք բերեց և գնում էր Լիոն ու Մարսել՝ ուսումնասիրելու թուրքական թիրախների վրա հարձակումների հնարավորությունը: Մարսելում նրա ընկերներից մեկը՝ Լևոն Մինասյանը, հասարակագիտության դծով տաղանդավոր շրջանավարտ էր, ակտիվ, փոքր-ինչ անտաշ մի երիտասարդ, որ ղեկավարում էր կոմունիստ ուսանողներին և Թորանյանի կազմակերպության այնտեղի ենթախմբի ամենից աչքի ընկնող անդամն էր: Նրա մականունը «Շիշկո» (թուրքերեն՝ «Զաղլիկ») էր, և նա իսկական մարսելցի էր՝ պարծենկոտ, հոխորտացող ու կենսախինդ: Շիշկոյին ազատել էին դրավով այն բանից հետո, երբ նա ձերբակալվել էր զինված թալանի համար: Համաձայն ոստիկանության տվյալների, 1984 թ. հուլիսի 27-ի գիշերը նա և 5 ուրիշ տեղացի ստահակներ Պեն-Միրաբո ճանապարհի վրա, Մարսելի մոտ, դարանակալել էին մի զրահապատ փոստային մեքենա և ապա դեպքի վայրից հեռացել՝ տանելով մեկ միլիոն դոլար:

Շիշկոն մեղադրանքը հերքում էր՝ պնդելով, թե թալանի գիշերն ինքը մի գաղտնի «քաղաքական ժողովի» էր, որի մասին մանրամասներ հայտնելու իրավունք չունի: Մոնթեն Լիբանանում թաքնված էր, երբ իմացավ, որ իր կուվարար ընկերը նստած է Ավինյոնի բանտում: Նա արագ մեկէջանոց նամակ գրեց՝ հասցեագրված «պարոն դատավորին»՝ Շիշկոյի գործը հետաքննող մագիստրատին: Նամակը Շիշկոյի ալիբին հաստատելու հավակնություն ուներ. «...Մենք ինքներս 1984 թ. հուլիսի 27-ի երեկոյից մինչև հուլիսի 28-ի երեկոն Էքս-ան-Պրովանսում էինք, որտեղ երկար ժողով ունեցանք»: Դատավորին վստահեցնելով, որ պատրաստ է դատարանում վկայություն տալ, Մոնթեն էջը «կնքել» էր իր թանաքոտ բութ մատով՝ ավելացնելով նաև իր նախկին մականունների ստորագրությունները՝ «Խաչիկ Ավետիսյան» ու «Ջ. Դիմիտրիու»: Մոնթեն պնդել էր, որ նամակի վրա Դավթյանն էլ դնի իր թանաքոտած բութ մատն ու ստորագրությունը:

Լուրը որոշ ժամանակից տարածվեց, և իր սենսացիոն հրապարակումներով հայտնի Le Quotidien de Paris թերթը 1984 թ. վերջին տպագրեց «Ամառային ահաբեկչական ժողովներ» վերնագրով մի նյութ: Ըստ լրագրի՝ Մոնթեն եղել էր Ֆրանսիայի հարավում և գաղտնի հանդիպումներ ունեցել տարբեր մութ անձանց հետ, որոնց թվում՝ կորսիկացի անջատողականների: Դեպքերին անդրադարձան նաև այլ լրատվամիջոցներ, և շուտով խոսակցությանը խառնվեց Հայոբյանի «Հայաստանը»՝ «Միտերանի խարեբա սոցիալիստներին» մեղադրելով Մոնթեին ապաստան տալու մեջ: Դա դիտվում էր որպես դավադրություն՝ «Գաղտնի բանակի» «տակը փորելու» նպատակով: Մեղադրանքները DST-ի (Direction de la Surveillance du Territoire) ոստիկաններին դրդեցին արագ գործողությունների, քանի որ հենց նրանց պարտականությունն էր՝ կանխել Մոնթեի նմանների մուտքը Հինգերորդ Հանրապետության տարածք:

Մոնթեն ու Շիշկոն ընդհանուր մտավոր հակումներ ունեին, երկուսն էլ գործունյա էին ու համառ: Այնուամենայնիվ, այլ հարցերում կալիֆոռնիացին ու մարսելցին հակապատկերներ էին: Մարսելցու իր բնավորության համաձայն՝ Շիշկոն հաճույքներ սիրող ու փող շռայլող էր: Գրավով ազատ արձակված լինելն ու սպասվող դատավարությունը նրան հետ չէին պահում գինի կոնծելուց, թմբկաբարո կանանցից ու կաբարեներում պարելուց:

Նրա սիրած խոսքն էր՝ «Մարդ մեկ անգամ է ապրում. ես պիտի ապրեմ այնքան, որքան կարող եմ»: Շիշկոն երեկույթներ էր կազմակերպում՝ դրանք համեմելով «աղջիկներով», բայց Մոնթեն երբեք անգամ հրաժարվեց մասնակցելուց՝ իր սովորական «Չէչ՝»-ով և պնդելով, թե զբաղված է: Շիշկոն չգիտեր՝ ինչ մտածել նրա մասին. անցած 5 տարիների ընթացքում Մոնթեն ապրում էր ընդհատակում՝ առանց կնոջ երես տեսնելու, բայց երբեք չէր խոսում սեքսից: Նա նաև դմբոյի տպավորություն չէր թողնում. ուրեմն՝ հեռու մի տեղ սիրած կի՞ն ուներ, թե՞ ցուցաբերում էր ամերիկյան ինչ-որ խելահեղ պուրիտանիզմ:

Սեպտեմբերի կեսին Մոնթեն և 5-6 ընկերներ՝ ներառյալ Շիշկոն ու Թորանյանը, Մոնթեի փոքր սենյակում խցկված, քննարկում էին մշտական հարցը՝ ի՞նչ անել: Հարկավոր էր հող նախապատրաստել «Գաղտնի բանակի» փոխարեն մի նոր, առավել տրամաբանական կազմակերպության ստեղծման համար, բայց ինչպե՞ս էր պետք դա անել: Սենյակում հավաքվածները գիտակցում էին, որ իրենք կաչկանդված են: Մի կողմից նրանց խաղաղ ժամանակ էր հարկավոր՝ վերախմբավորման, իրենց նպատակներն առավել իրատեսորեն պատկերացնելու և «առաջապահ» խմբի կազմավորման հող նախապատրաստելու համար: Այդ խումբը պետք է ընդգրկեր «լրիվ դրույթով» մարտիկների, որոնք իրենց օրինակով սփյուռքը կառաջնորդեին: Մյուս կողմից, սակայն, նրանց անհրաժեշտ էր արագ «աղմուկ հանել»՝ ցույց տալու համար, որ իրենք ու նախկին «գաղտնիքանակային» իրենց ընկերները միայն խանգարողներ չէին, այլ կարող էին հարվածել Թուրքական թիրախների: Անցած տարվա ընթացքում «Հայ պայքարը» գրեթե ոչինչ չէր արել՝ բացի Հակոբյանի սխալները քննադատելուց. այն Հակոբյանի, որին Թորանյանն ու իր ընկերները 2 տարի առաջ փառաբանել էին իբրև փրկչի: Այժմ հիասթափված աջակիցները հեռանում էին, և Թորանյանն ու իր ընկերները, ինչպես նրանց դաշնակցական մրցակիցները նախկինում, եզրակացրել էին, որ ընտրովի Թուրքական թիրախների վրա տպավորիչ հարձակումներ էին պետք, որպեսզի վերականգնվեր դադարած օգնությունը, և նորից բռնկվեր ոգևորությունը:

Այդ ժողովի ժամանակ Մոնթեն մյուսներից առավել զուսպ էր: Նա իր դառը փորձով համոզվել էր, որ զուտ «մի բան անելու» համար առաջ նետվելը կարող էր ոչինչ չանելուց վատթար լինել: Նրա համար ամենահրատապ խնդիրը վերակազմավորվելն էր՝

հնարավորին չափ իրատեսական հիմքի վրա: Մարող ոգևորությունը վերականգնելու համար Մոնթեն դեմ չէր, որ արտասահմանում իրականացվեր ևս մի քանի զինյալ գործողություն, բայց գտնում էր, որ նման քարոզչության փուլն արդեն ավարտված էր. ժամանակն էր՝ արևմտյան Հայաստանում պայքար ծավալելու նպատակով ուժերը կենտրոնացնելու: Ավելի քան մեկ տարի հետո, մի ընկերոջ գրած նամակում, Մոնթեն ստիպված էր «խիստ անհավանական» համարել, որ հայերը երբևէ կկարողանան Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորել Թուրքիայի գրաված տարածքների գոնե մի փոքր մասը: Այնուամենայնիվ, գրում է նա, ցեղասպանությունից փրկվածների ժառանգները գոնե պետք է նվաճեն այն, ինչ թուրքական պետությունը նրանց տասնամյակներ շարունակ մերժել է, այն է՝ իրենց նախնիների հողում ապրելու հնարավորություն, «որպեսզի վայելեն կոլեկտիվ մշակութային կյանք և, տարածաշրջանում բնակվող մյուս ժողովուրդների նման, ունենան բոլոր անհրաժեշտ քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ իրավունքներ»: Սա Մոնթեի «նվազագույն նպատակն» էր: Եվ այդուհանդերձ, «խիստ անհավանական» սցենարին վերադառնալուց խպատ հրաժարվելը դժվար էր, ուստի նա ավելացնում է, որ «որոշ տարածքների հնարավոր վերամիավորման տարբերակը պետք է բաց մնա»:

Մոնթեի զրուցակիցները սենյակում համաձայն էին նրա հետ, և ընդունեցին, որ առաջապահ ջոկատը պետք էր ստեղծել: Բայց երբ խոսք գնաց այն մասին, թե ինչպիսին պիտի լինեն հարաբերություններն առաջապահ և օժանդակ խմբերի միջև, լուրջ տարաձայնություններ ծագեցին: Թորանյանն ու նրա ընկերները գտնում էին, որ ամբողջ սփյուռքում ինքնավար օժանդակ խմբերի կոնֆեդերացիա պիտի լիներ: Մոնթեի կարծիքով՝ ընդհակառակը, պետք էր հիմնել մի համասփյուռքական կազմակերպություն, որը բոլոր տեղական խմբերին կմիավորեր մեկ ծրագրի և մեկ «գերագույն մարմնի» ներքո: Այս լսելով՝ Թորանյանը թերահավատորեն նայեց Մոնթեին. մի՞թե բավական չէր Հակոբյանի միանձնյա իշխանության օրինակը: Պարզ չէ՞ր արդյոք, որ սփյուռքում տիրող պայմաններն այդ գերագույն ղեկավարությունն ի վերջո կվերածեին մեկ մարդու բռնակալության:

Մոնթեն պատասխանեց, որ խմբի անդամները պետք է տեղերում ընտրեն հավաքական ղեկավարության իրենց ներկայացուցիչներին: Ամեն դեպքում, շարունակեց նա, քանի որ սփյուռքը

ցրված է աշխարհով մեկ, պետք է բոլոր ռեսուրսները միավորել մեկ կազմակերպության մեջ: Այն պետք է Արևմտյան Հայաստանում զինված ներկայություն ապահովելու համար հիմքեր ստեղծի. չի կարելի հրամանատարության կազմը մասնատել և այդպես վատնել իրենց սակավ միջոցները՝ թույլ տալով, որ իրարից հեռու գործեն 20-30 խմբեր՝ յուրաքանչյուրն իր ղեկավարությամբ ու ծրագրով: Շիշկոն փորձում էր վեճը հարթել ընդհանուր ճշմարտություններով և ուսերը թոթվելով, բայց կողմերը գնալով ավելի անզիջում էին դառնում: Մի քանի ժամ անց նրանք իրարից բաժանվեցին գլխացավով:

Մոնթեն գիտեր, որ միշտ պրագմատիկ Թորանյանն իր առարկություններից կհրաժարվեր և կպաշտպաներ մեկ համասփյուռքական կազմակերպության գաղափարը, եթե տպավորիչ մի օպերացիա իրականացվեր՝ նորից ոգեշնչելով «Հայ պայքարի» աջակիցներին: Մոնթեն անշուշտ դեմ չէր պայթյուններին: Նա տեսել էր, թե ինչպես «Գաղտնի բանակը» 10 տարի առաջ հայտնվեց ասպարեզում՝ երիտասարդական ոգևորությունը վերածելով սփյուռքով մեկ տարածվող բոցավառության, և նա վստահ էր, որ վերակազմավորված մի խմբավորման առաջին իսկ գործողություններից հետո դադարած օգնությունը կնորոգվեր: Նա արդեն ծրագրել էր մի այդպիսի հարձակում՝ հետևելով Թուրք դեսպան Ադնան Բուլաքին. վճռել էր նրան ժամանակից շուտ «պաշտոնից ազատել»: Երբ մի քանի ամիս անց, 1985 թ. դեկտեմբերի 30-ին, Բուլաքը 58 տարեկանում մեռավ սրտի նոպայից, Մոնթեն հեգնանքով գլուխն օրորեց. ճակատագիրն իրենից առաջ էր անցել: Նա մտածում էր նաև Մարսելում «նշանակալից մի բան» ձեռնարկել. եթե Փարիզից իրեն գոնե մեկ արհեստավարժ օգնական տային, ապա ինքը կարող էր Մարսելում «հրավառություն» անել: Նա շարունակում էր թուրքական թիրախ փնտրել, բայց միաժամանակ մտածում էր «առաջապահ ջոկատի» համար նոր ծրագիր մշակելու դժվարին առաջադրանքի շուրջը: Ընդհատակում գտնվելիս, հատկապես վերջին 2 տարում Հակոբյանից թաքնվելու ընթացքում, Մոնթեն որոշել էր Հայաստանի և հայկական սփյուռքի անցյալի ու ապագայի սպառիչ ուսումնասիրություն կատարել: Դրա հիման վրա պետք է գրվեր առաջապահ խմբի մանիֆեստը:. Մոնթեն կեղծ քարտով հաճախեց Sainte-Geneviève գրադարան, որտեղ կարդաց Խորհրդային Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակած 8 հատորանոց «Հայ ժո-

ղովրդի պատմությունը»: Նա պատրաստեց նաև իր ապագա պատմագիտական աշխատության մի թեմատիկ կոնսպեկտ և այն ընկերների ցուցակը (Փարիզում, Լոնդոնում, Բեյրութում ու Տորոնտոյում), որոնք կարող էին որոշակի գլուխներ գրել: Ես այդ աշնանն ապրում էի Սան Ֆրանցիսկոյում, երբ սկսեցի գրել փիլիսոփայության ու հայերի՝ Ամերիկա արտագաղթի մասին բաժինները:

Շաբաթներ շարունակ Մոնթեն ծանրությերև էր անում Շիշկոյի առաջիկա դատավարության ընթացքում իր տալիք վկայությունը: Նա չէր ուզում Շիշկոյին տեսնել ճաղերի հետևում, բայց հասկանում էր, որ Ֆրանսիայում որպես վկա հանդես գալն իր համար շատ վտանգավոր էր: Նա հույս ուներ, թե Ֆրանսիայի կառավարությունն իրականում չի ցանկանա իրեն բանտարկել. չէ՞ որ ինքը նրանց թշնամի Հակոբյանի թշնամին էր: Բայց 4 տարի առաջ Մոնթեն վտարվել էր Ֆրանսիայից և չէր ուզում բախտի հետ խաղալ՝ երկրում իր ապօրինի ներկայությունն ի ցույց դնելով: Այդուհանդերձ, երբ Շիշկոն պնդեց, որ վկայությունն անհրաժեշտ է, Մոնթեն զգուշավորությունը մի կողմ թողեց:

Գործը հետաքննող մագիստրատը՝ Ժան-Ժակ Բագյուր անունով մի համակրելի ջենտլմեն, համոզվեցնեց գաղտնի հանդիպման՝ սղագրելու համար Մոնթեի ցուցմունքները կողոպուտի ենթակոյան Շիշկոյի գտնվելու վայրի մասին: Գաղտնիության անհրաժեշտությունը Մոնթեի վկայությունը դարձրեց, իր խոսքերով՝ «փոքր-ինչ բարդ պրոցես»: Հոկտեմբերի 28-ին Շիշկոյի ընկերներից երկուսը՝ Գզտիկն ու Շեյթանը, վերցրին Բագյուրին, նրա քարտուղարին և մի սղագրուհու, որոնք սպասում էին Էքս-ան-Պրովանսի պայմանավորված տեղում: Կենդուղավոր «առևանգողները» քաղաքավարությամբ կապեցին Բագյուրի ու իր ուղեկիցների աչքերը, և մեքենան սլացավ սարերի միջով, ոլորապտույտ ճանապարհներով: Նրանք մեքենան փոխեցին, ևս որոշ հեռավորություն անցան ու վերջապես կանգ առան Վուարոնի մոտ գտնվող մի տան առջև, որտեղ նրանց սպասում էին Մոնթեն ու Շիշկոն: Սղագրուհին պատրաստեց իր սղագրության մեքենան, և հաջորդ 10 ժամվա ընթացքում Մոնթեն իր կալիֆոռնիական ֆրանսերենով պատասխանեց հարցերի մի երկար շարքի: Այնուհետև Բագյուրի և իր ուղեկիցների աչքերը դարձյալ կապեցին ու նրանց, զլխապտույտով, հասցրին Էքս-ան-Պրովանսի նույն տեղը: Վերադառնալով Վուարոն՝ Մոնթեն թեթևություն զգաց՝ Բագյուրի հետ ջենտլմենական պայմանագիրը կնքած և գործն ավարտած լինելու համար:

«Առևանգումն» ընթացել էր առանց խոչընդոտի. միայն հարց ու պատասխանն էր նախատեսվածից երկար տևել: Բայց երբ սղագրուհին ուշ երեկոյան, ճամփորդությունից ուժասպառ, տուն վերադարձավ, ամուսինը նրան ստիպեց հայտնել, թե ուր էր եղել: Նրան երդվեցնելով, որ տեղեկությունը գաղտնի կպահի, կինը պատմեց եղելությունը: Ամուսինը, որն, ինչպես պարզվեց, Ֆրանսիայի հետախուզական գործակալության՝ DGSE-ի (Direction Générale de la Sécurité Extérieure) աշխատակից էր, իսկույն տեղյակ պահեց իր վերադասներին: Ուրախանալով, որ իրենց մրցակից DST-ին անվանարկելու առիթ կա, DGSE-ի պաշտոնյաները տեղեկությունը հաղորդեցին առնվազն մեկ պահպանողական լրագրի, և շատ շուտով Ֆրանսիայի հասարակությունն իմացավ, որ ֆրանսիացի դատավորը, Հինգերորդ Հանրապետության տարածքում առևանգվելով, թույլ էր տվել մի փնտրվող ահաբեկչի վկայության ներթափանցումը դատական արձանագրությունների մեջ: Մարդկանց թվաց, թե այդ տեղեկությունը հաստատում էր նախկին (սխալ) լուրերն այն մասին, թե Մոնթեն Ֆրանսիայում էր եղել առնվազն 1984 թ. վերջից: Սա մի հերթական ապտակ էր DST-ին, իսկ որպես նրանց համար լրացուցիչ անախորժություն, Հակոբյանի «Հայաստան» պարբերականը պախարակեց Միտերանի կառավարությանը՝ Ֆրանսիան «մարդասպանների ու դավաճանների օթևանի» վերածելու համար: DST-ն այժմ հարկադրված էր Մոնթեին բռնել:

Իսկ փնտրվող ահաբեկիչը պատրաստվում էր շուտով «կրակի վրա յուղ լցնել»: Մի անգամ Մարսելում զբոսնելիս՝ նա կասկած ունեցավ, թե նավահանգստում կանգնած Թուրքական առևտրական նավը՝ «Յաքդենիզ» կամ «Մոհակ» անունով, բեռնված էր հրանոթներով ու զինամթերքով, և այդ բեռը պետք է Թուրքիա առաքվեր: Նա ստուգեց ժամանման ու մեկնման ժամերը և սկսեց թաքցված տեսախցիկով պտտվել նավահանգստում: Մոնթեն լավ լողորդ էր և արագաշարժ. եթե նույնիսկ իրեն օգնող չլիներ, նա պատրաստ էր ռումբով, բերանին ջրասուզակի խողովակ, մենակ լողալ նավթախառն ջրի մեջ և պայթուցիկներն ամրացնել նավին:

Սպառազինությամբ բեռնված ոչ մարդատար Թուրքական նավը պայթեցնելը չշմեցուցիչ, անարյուն և աղմկալի իրադարձություն կլիներ: Մոնթեն գործի անցնելու սաստիկ ցանկություն ու-

նեցավ, բայց հնարավոր չէր նավը ջրասույզ անել անհապաղ: Ոստիկանությունը ծայրահեղ զգոն էր. նախապատրաստվում էր Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի՝ 1985 թ. նոյեմբերի 14-ի այցելությունը Փարիզ: Մոնթեն ատում էր Օզալին՝ այդ հաստամարմին առևտրականին, որը, 1980 թ. խռովությունից հետո, իշխանության էր հասել արյան ալիքի վրա բազմած: Վարչապետը տարփողում էր իր քրդական արմատները, բայց ղեկավարում մի վարչակարգ, որը տեղահանում ու ահաբեկում էր քրդերին: Ուստի Մոնթեն նրան ոչ միայն բռնակալ, այլև դավաճան էր համարում: Նա շատ կուզեր վարչապետին խայտառակված տեսնել, բայց հասկանում էր, որ հիմարություն կլիներ Օզալի այցելության ժամանակ թուրքական նավ պայթեցնելու փորձ անել: Ոստիկաններն աչալուրջ հետևում էին Թորանյանին ու նրա ընկերներին, և նրանց դեմ դաժան հալածանք կսկսվեր, եթե պայթյունը տեղի ունենար հենց այդ լարված օրերին:

Մոնթեն ևս մեկ ամիս սպասեց Վուարոնում՝ հեռու մնալով Île-de-France-ում սահմանված ոստիկանական խիստ հսկողությունից: Նոյեմբերի վերջին, երբ Օզալը Ֆրանսիայից մեկնել էր, Մոնթեն գնումների պլաստիկ պայուսակների մեջ հավաքեց իր իրերը՝ ատամի խոզանակը, մի ատրճանակ, 2-3 վերնաշապիկ, նամակների ու գրառումների մի կույտ, 2-3 գիրք, մի խուրձ լարեր ու թայմերներ, և վերադարձավ Փարիզ:

Նա ուզում էր գնալ Մոնպառնասի իր փոքր բնակարանը, բայց ճանապարհին իմացավ, որ ոստիկանությունն այնտեղ նոր էր ձերբակալել իրենից հետո բնակվողին՝ հաշիշի գաղտնի առևտրի մեղադրանքով: Թմրանյութերի հետ կապված պատմությունից պետք էր հեռու մնալ, և Մոնթեն մտածեց, թե ավելի ճիշտ կլիներ իր պայուսակները թողնել մետրոյի որևէ կայարանի պահասենյակում ու կուչ եկած գիշերել պլատֆորմի մի անկյունում: Բայց դա նույնպես վտանգավոր էր. մետրոյի վրա կատարված բազմաթիվ հարձակումներից հետո ոստիկանները կասկածանքով էին նայում թխամաշկ թափառաշրջիկներին:

Մեկ այլ ընկեր, Մոնթեի ճակատագրով անհանգստացած, խնդրեց իր մի ընկերուհուն մի քանի օրով հյուրընկալել «հայրենասեր հային», մինչև որ ուրիշ ընկերներ կարողանային նրա համար ավելի երկար բնակվելու տեղ գտնել: Սիրիայում ծնված, 24-ամյա Զեփյուռ Գասպարյանը՝ միջնակարգ դպրոցի ասիստենտ, չգիտեր Մոնթեի ողջ պատմությունը, բայց թույլ չէր տա, որ

հայրենասերը կլոշարի նման ապրեր Փարիզի փողոցներում: Նոյեմբերի 24-ին Մոնթեն իր պայուսակները բարձրացրեց 6 հարկ և դրանք ցած դրեց Զեփյուռի նեղլիկ բնակարանում, հասցեն՝ Մոնպառնասի Saint Mandé փողոց, 51:

Այդ տարօրինակ երիտասարդին տալով իր «սպասուհու սենյակի» բանալիների միակ խուրձը՝ Զեփյուռը, լինելով էմիգրանտ Ֆրանսիայում, ենթարկվում էր երկրից վտարվելու վտանգին, եթե հանկարծ Մոնթեն բռնվեր: Կար նաև մեկ ուրիշ հնարավոր վտանգ. բացի հայրենասեր հայուհի լինելուց, Զեփյուռը նաև համեստ միջինարևելյան կին էր և՝ գեղեցկատես: Այդուհանդերձ, թեև իր 12 քառակուսի մետրանոց սենյակը 2 տարի մութ թաքստոցներում անցկացրած երիտասարդի հետ կիսելիս Զեփյուռը վատ կանխազգացում էր ունեցել, նա թեթևացած շունչ քաշեց՝ նկատելով, որ Մոնթեն իր հանդեպ, իբրև կնոջ, անտարբեր էր: Հյուրն իր ջինսն ու վերնաշապիկը հանեց, մեկնվեց սենյակի երկայնքով, աշխույժ ձայնով «բարի գիշեր» մաղթեց ու քուն մտավ: Մոնթեի համար Զեփյուռը սոսկ ընկեր էր և, բացի այդ, նա «աչք էր դրել» ուրիշ կնոջ վրա:

— Աշխարհում երեք միլիարդ կին կա, — մի անգամ նա ասաց Սեդային, — բայց ինձ չեն հետաքրքրում մնացած 2.999.999.999-ը:

Մոնթեի նվիրվածությունը Սեդային նույնպես խնդիրներ էր հարուցում: Իր 28-ամյակին՝ 1985 թ. նոյեմբերի 25-ին, նա փողոցում անարդյունք փորձում էր հեռախոսախցիկից հեռաձայնել Երևան՝ Սեդային: Ի վերջո, խոհեմությունը մի կողմ թողնելով, նա առաջին ու վերջին անգամ Սեդայի հայաստանյան համարը հավաքեց Զեփյուռի սենյակից: Զանգը կդրանցվեր Զեփյուռի հեռախոսահամարի վրա, և ինքը վճարվելիք գումարը նրան կտար կանխիկ: Երբ Սեդան լսափողը վերցրեց, նրանք ուղիղ մեկ ժամ խոսեցին՝ Երևանի ժամանակով վաղ առավոտյան ժամը 2-3-ը: Վերջում Սեդան շնորհավորեց Մոնթեի ծննդյան օրը, նրանք զրույցն ավարտեցին և, բավարարված ու երջանիկ, քնեցին:

Եթե այդ գիշեր հեռախոսային խոսակցությունը լսվել էր, ապա դա միակ դեպքը չէր: DST-ի գործակալները հսկողության տակ էին պահում Թորանյանի «Հայ պայքարի» գրասենյակը: Երբ նրանք նկատեցին, որ Թորանյանի աշխատակիցներից մեկը՝ մի երիտասարդ շիկահեր էմիգրանտ Խորհրդային Հայաստանից, զանգահարում էր փողոցում, գրասենյակի դիմաց գտնվող վճարովի

հեռախոսից, նրանք սկսեցին այդ խոսակցությունները լսել: Երիտասարդը՝ Բենիամին Քեշիշյան անունով, ուզում էր «Հայ պայքարի» համար Մոնթեից հարցազրույց վերցնել: Նոյեմբերի 28-ի առավոտյան, հինգշաբթի, Օգալի այցելությունից մոտ 2 շաբաթ անց, Քեշիշյանը հեռաձայնեց Մոնթեին մի ուրիշ վճարովի հեռախոսից ու պայմանավորվեց հանդիպել այդ առավոտյան, ժամը 11-ին՝ հանվանե նշելով հանդիպման վայրը:

Մոնթեն Rue d'Alésia-ի վրա գտնվող Le Zeyer ռեստորանի մոտ ժամանեց մի քանի րոպե շուտ և նստեց դրսում, ծածկի տակ: Նա հաստ շրջանակով Lozza ակնոց էր կրում և հագել էր կարմրաշագանակագույն շերտերով փուլլովեր: Մի քանի րոպեից Քեշիշյանը նրան ողջունեց ու նստեց Մոնթեի դիմաց՝ մեջքով դեպի մուտքը: Նա 5 րոպե էլ չէր նստել, երբ, խոսքը բերանին, Մոնթեն ձեռքերը վեր բարձրացրեց: Քեշիշյանը գլուխը զարմանքով առաջ մեկնեց. մի պահ նրան թվաց, թե կատակ էր, բայց շրջվելով՝ դեմ առավ ատրճանակի փողի: Երբ ներսում արդեն հայտնվել էին 7 գործակալ, հաճախորդները տեղերից ելան ու ցրվեցին: Քեշիշյանը վեր թռավ ու աթոռը վերցրեց՝ հետախուզության ոստիկաններին հարվածելու համար, իսկ նրանք պատրաստ էին կրակել:

— Հանգստացի՛ր, — խաղաղ ձայնով ասաց Մոնթեն Քեշիշյանին, — աթոռը ցա՛ծ դիր:

Գործակալները երկու կասկածյալներին ձեռնակապանքներ հագցրին և, առանց տարբերանշանների առանձին մեքենաներով, ձայնային ազդանշանները միացրած, տարան դեպի Avenue du Maine-ի վրա գտնվող ոստիկանական կոմիսարիատ, որ ամրոցի էր նման: Նրանց հարցաքննում էին տարբեր խցերում: Հարցաքննողը միջին տարիքի, միջին կազմվածքով ու միջահասակ մի մարդ էր, որի աջ դաստակին արծաթե մեծ ապարանջան կար՝ վրան գրված «Ֆիլիպ»: Թորանյանն ու իր ընկերները հաճախ էին հարցաքննությունների ժամանակ նստել ոստիկանության ավագ քննիչ Ֆիլիպ Շիշելի սենյակում՝ հիանալով նրա պատին փակցված մի գծապատկերով, որի վրա, ուղեղաբանական «ստուգ» տվյալների հիման վրա, ցուցադրված էր հայկական գանգի նեգրոիդ ծագումը: Երևում է՝ հենց շնորհիվ նման «մասնագիտական իմացության» էին Շիշելին վստահել DST-ի՝ հայերի հարցերով զբաղվող բաժանմունքի ղեկավարությունը:

Ուշ կեսօրին Շիշելն ու երկու օգնական տեսուչներ Մոնթեին մոցրին մեքենան և, ցոլարձակ լապտերները միացրած, սլացան

դեպի Saint Mandé փողոց 51, որպեսզի նա վկա լինի Զեփյուռի տան խուզարկությանը: Նրանք տեղ հասան մոտավորապես 18:15 և դուռը բացեցին Մոնթեի գրպանում գտած դեղին բանալիով: Սենյակ մտնելով՝ նրանք կասկածյալին հրեցին մահճակալի վրա, և նա փորի վրա պառկեց այնտեղ՝ ձեռքերը մեջքին, ձեռնակապանքների մեջ, իսկ դեմքին՝ տարակուսանքի կիսաժպիտ: Մինչ տեսուչները բնակարանը տակնուվրա էին անում, Մոնթեն մտքերի մեջ էր. DST-ի գործակալները հավանաբար հետևել էին Քեշիշյանին մինչև Le Zeyer, իսկ Զեփյուռի տան տեղը երևի իմացել էին՝ 3 օր առաջ Սեղայի հետ հեռախոսային խոսակցությունը լսելով: Մոնթեն հույս ուներ, թե որևէ մեկը Զեփյուռին զգուշացրած կլինի, բայց, ցավոք, այդպես չէր: Կես ժամ հետո տեսուչները ներքևում, շենքի մուտքի մոտ, բռնեցին ու ձեռնակապանքներ հագցրին աշխատանքից վերադարձող Զեփյուռին: Նրան պահեցին այնտեղ, մինչև որ վերևում սենյակի խուզարկությունն ավարտվեց:

Շիշելի գործակալները գտան Մոնթեի գրառումներով հարյուրավոր էջեր՝ ներառյալ Փարիզի ու Լիոնի թուրքական հյուպատոսությունների աշխատակիցների անուններ ու հասցեներ, գնումների մի երկար ցուցակ՝ 4 լեզուներով ու 3 գրերով, որի մեջ նշված էին հետևյալ առարկաները. 100 կիլոգրամ պայթուցիկներ, թեթև նռնականետներ և Sagger, TOW, Red-Eye, Stinger ու S-7 հրթիռարձակներ: Նրանք նաև բռնագրավեցին Մոնթեի Berretta-ն, մի էլեկտրական զոդիչ, ամպերաչափ, «չատ բարձրորակ», լուցկու տուփի նման թայմերներ, տպագիր սխեմաներ, այլ էլեկտրոնային պարագաներ, 3000 ֆրանկ (մոտ 450 դոլար), ինչպես նաև՝ ինքնությունը հաստատող կեղծ կամ գողացված փաստաթղթեր, որոնց թվում՝ ֆրանսիական, իտալական ու ամերիկյան անձնագրեր:

Երբ նրան հարց տրվեց այդ իրերի մասին, կասկածյալը պատասխանեց, որ ասելիք չունի: Նա նաև շատ բան չասաց բռնագրավված մյուս առարկաների մասին, որոնց թվում՝ Մարսելի նավահանգստի մի քարտեզ՝ վրան x-երով նշումներ և թուրքական նավի՝ «Մոհակ»-ի 11 սիրողական լուսանկար (իր պաշտոնական մեղադրանքում դատախազը հաստատեց, որ այդ նավը պարբերաբար վառոդ, պայթուցիկներ ու բռնկվող նյութեր էր տեղափոխում. այդպիսով՝ Մոնթեն մի մեծ ձուկ էր ձեռքից բաց թողել): Ապա ոստիկանության «Կենտրոնական լաբորատորիայի» դատա-

կան քիմիկոսները պնդեցին, թե Մոնթեի իրերի մեջ գտնվել էին պլաստիլինե գնդիկներ, որոնց վրա «պենթրիտ» կոչվող պայթուցիկի հետքեր կային: Մոնթեն ընդունեց, որ ընկերներին ռումբ պատրաստելու դասեր տալիս՝ Semtex-ի նմանակությամբ պլաստիլին է օգտագործել, բայց նշեց, որ այդ նյութի ու պենթրիտի միջև անմիջական կապ չի եղել:

— Մեր մեջ օրենք է գործում՝ պայթուցիկների հետ խաղ չանել, — ասաց նա, — որովհետև դրա հետևանքով կյանքեր ենք կորցրել:

Շիշելն ու իր տեսուչները փնտրուքն ավարտեցին 20:45: Մոնթեն հրաժարվեց զեկույցը ստորագրելուց և ունքն էլ չշարժեց Զեփյուռի կողմը, երբ ոստիկանները միջանցքով նրան հրելով տարան դեպի մեքենան: Կոմիսարիատ վերադառնալուց հետո Զեփյուռը սպասասրահի դիմացի խցից լսում էր Մոնթեին հարցաքննողների խուլ ձայները և, ժամանակ առ ժամանակ, նրա ծիծաղի արձագանքը: Այդպես նա հրաժարվում էր որևէ հարցի պատասխանելուց: Նա պնդում էր, որ ինքն ու իր պայուսակները Զեփյուռի տանն էին հայտնվել առանց նրա համաձայնության ու գիտության: Երբ DST-ի քննիչները Զեփյուռին ցույց տվեցին մի քանի տարի առաջվա Մոնթեի մի լուսանկար, նա ասաց, թե դա իրեն անծանոթ մարդ է. լուսանկարից նրան նայող թավ մազերով մորուքավոր երիտասարդը քիչ էր հիշեցնում իր դռան առջև հայտնված ճաղատացող մարդուն:

Հարցաքննությունը շարունակվեց մինչև նոյեմբերի 30-ի կեսօր, երբ նախաքննության փուլն ավարտվեց, ու կալանքի ժամկետը լրացավ: Ապա ձերբակալվածներին տարան Փարիզի Դատախազության 14-րդ բաժանմունք: DST-ի հաշվետվության մեջ նշված էր, որ Զեփյուռի, Քեշիշյանի ու Մոնթեի ձերբակալության շնորհիվ «կանխվել է ահաբեկչական գործողություն»:

«Հայ քաղաքական բանտարկյալների պաշտպան կոմիտեի» (ՀՔԲԱԿ) անունից Թորանյանը գործի մեջ ներգրավեց Ֆրանսիայի ամենահայտնի իրավաբաններից մեկին: Անրի Լը Կլերը բարձրահասակ, տպավորիչ տեսքով, միշտ անբասիր հագուստով ու գործնական կեցվածքով մարդ էր: Նախկինում սոցիալիստ լինելով՝ 1968 թ. դեպքերից հետո նա արմատական էր դարձել, պաշտպանել «առաջադեմ ազգայնական» կորսիկացիներին, ալժիրցիներին ու Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների բնակիչներին, ինչպես նաև՝ «Վան» օպերացիայի տղաներին: Լը Կլերի վրա Մոնթեն թողեց խոհեմ ու կշռադատող մարտիկի տպավորություն, որը գիտեր, թե Ֆրանսիայի նման երկրներում «զինված քարոզչության» համար ինչ սահմանափակումներ կարող են լինել:

Երբ Մոնթեի փաստաբաններն իրենց պաշտպանյալին ներկայացրին դատարանում, գործը հետաքննող մագիստրատ Ժիլ Բուլուքն անողոք տեսք ուներ: Փայտե մուրճի հարվածների արանքներում նա Մոնթեին մեղադրեց կեղծ անձնագրեր ունենալու և Ֆրանսիա մտնելու համար դրանք օգտագործելու, անօրինական վարչական փաստաթղթեր թաքցնելու, ինչպես նաև՝ ապօրինաբար պայթուցիկներ ու հրազեն պահելու մեջ: Բուլուքը բնավ չտպավորվեց Մոնթեի այն արդարացումից, թե ատրճանակն ինքնապաշտպանության համար էր, քանի որ Հակոբյանի կողմից իր հանդեպ մահվան սպառնալիք կար: Ինչպես Զեփյուռն ու Քեշիշյանը, Մոնթեն նույնպես մեղադրվում էր հանցավոր խմբավորման գործունեությանը մասնակցելու համար: Մոնթեն այս մեղադրանքը բնորոշել է որպես «Ֆրանսիական քրեական օրենսգրքի խաղաթղթերի կապուկի ջոկեր»: Ամերիկյան քրեական օրենսգրքում դրան ամենից շատ համապատասխանում է «հանցավոր դավադրությունը»: Այն ստեղծվել էր 19-րդ դարում, անարխիստներին բանտարկելու համար, և նախատեսում էր մինչև 10 տարվա ազատազրկում:

Երեք մեղադրյալներին մերժեցին գրավով ազատ արձակել, ու Մոնթեն ընկավ այն նույն բանտապահների ձեռքը, որոնք, ինչպես նա պատմում էր Դիմիտրիու Ջորջիուի փորձառությունից, իրենով «տիզերին էին կերակրում»: Նոյեմբերի 30-ին նա, ոստիկանական ֆուրգոնից դուրս գալով, հայտնվեց 5 մետր չարձրությամբ բետոնե, վերևում փշալարեր քաշած պատի ստվերում: Շատ ծանոթ տեսարան էր. նույն Fresnes բանտը, որտեղ 4 տարի առաջ Մոնթեն՝ Ջորջիու մականունով, մեկ ամիս տանջվել էր: Կառուցված լինելով 1881 թվականին՝ բանտը նման էր նացիստական համակենտրոնացման ճամբարի: Պատահական չէր, որ 1940-44 թվականներին այն իրոք համակենտրոնացման ճամբար էր եղել և «առաքման կետ», որտեղից հազարավոր կալանավորներ էին ուղարկվել Հյուսիս ու արևելք՝ նացիստների մահվան ճամբարները: Այդ ժամանակներից ի վեր բանտը՝ իր չներկված պատերով, փշալարերով ու փոքր պատուհաններով, գրեթե բարեփոխման չէր ենթարկվել:

Առաջին բանտարկությունը Մոնթեին անվերջանալի էր թվացել, իսկ հիմա նա գիտեր, որ Fresnes-ում ավելի երկար է մնալու: Նա վերադարձել էր «փոսը» և այնտեղ էր լինելու առնվազն մինչև դատավարությունը: Պահակներն աղմուկով փակվող դռներով մի միջանցքով նրան տարան դեպի իր փոքր, կեղտոտ խուցը: Միայն արևի շատ թույլ մի ճառագայթ էր թափանցում պատուհանի հաստ ապակու, երկաթե ցանցի ու ճաղերի միջով: 1981 թ. նա 4 շաբաթ էր անցկացրել հենց այսպիսի՝ կատարյալ մեկուսացման խցում: Այժմ Մոնթեն մեկն էր Fresnes-ի 4300 բնակիչների մեջ այն 40-ից, որոնք համարվում էին «Հատուկ հսկողության տակ պահվող կալանավորներ» (détenus particulièrement surveillés կամ DPS բանտարկյալներ): Նրան վիճակված էր ևս 7 շաբաթ անցկացնել այդ «բանտի մեջ բանտում»:

Որոշ մարդիկ գտնում էին, թե նրա բանտարկությունը Ֆրանսիայի շահերից չէր բխում: VSD շաբաթաթերթի դեկտեմբերի երկրորդ համարում լրագրող Ֆիլիպ Բեռնեն տպագրեց մի հոդված, ուր նշում էր, որ Մոնթեն դատապարտել էր Օուլիի պայթյուններն ու հակառակվել խաղաղ բնակչության դեմ հարձակումներին, և որ Ֆրանսիայի համար նա վտանգավոր չէր: Liberation-ն, այնուամենայնիվ, մեջբերեց DST-ի մի խոսնակի զգուշացումը, թե՝ «Այդ մարդն այնքան էլ անվնաս չէ»:

Անվնաս թե ոչ՝ Ֆրանսիայում դեպքեր էին ծավալվում, որոնք հրաշխավորեցին Մոնթեի երկարատև կալանքը: Դեկտեմբերի 7-ին, շաբաթ օրը, տանը պատրաստված մի բռնկվող ռումբ պայթեց մարդաշատ Boulevard Haussmann-ի վրայի Galerie Lafayette-ում, և 15 րոպե անց մեկ ուրիշ պայթյուն եղավ Printemps-ում՝ Haussmann-ի վրա գտնվող մի մեծ ու հաճախորդներով լի խանութում: Վնասվածքներ ստացան 41 հոգի, 12-ը՝ ծանր, հիմնականում՝ ծուխ շնչելու և այրվածքների պատճառով: Ըստ լրատվամիջոցների՝ Ֆրանսիայի ոստիկանությունը կարծում էր, թե պայթյունները Մոնթեին սատարողների ձեռքի գործն էին, որոնք դարձյալ ճնշում էին գործադրում իշխանությունների վրա՝ նրան ազատ արձակելու համար: Նրանք շուտով պետք է հանդեին այլ եզրակացության, բայց այդ պահին հասարակության զայրույթը բացառում էր միջինարևելցի ահաբեկիչների հանդեպ որևէ գթասրտություն:

Մոնթեի ձերբակալության լուրը հրապարակվեց և՛ Ֆրանսիական, և՛ հայալեզու թերթերում: 1-2 տող նույնիսկ սպրդեցին Ֆրեզնոյի շրջանի լրագրեր՝ մեր մորն անսահման տագնապ պատճառելով: Նրա նախկին ընկերները Lions Club-ի և Sons of Italy Dances-ի ճաշկերույթներում հեռու էին մնում նրանից: «Մոնթեն իր սերն է հայտնում բոլոր հարազատներին ու ընկերներին». ահա այն ամենը, ինչ մեր մայրը գրեց իր բանտարկված որդու մասին 1985 թ. Սուրբ Ծննդյան բացիկում:

Հունվարի 19-ին Մոնթեին Առաջին բաժանմունքի լիակատար մեկուսացման խցից (92S) տեղափոխեցին Երրորդ բաժանմունքի 79S մենախուցը, որը նույնպես DPS բանտարկյալների համար էր: Դա պայմանների զգալի բարելավում էր: Նրա նոր խցի հատակը սալիկապատ էր՝ ի տարբերություն նախորդի բետոնե գետնի: Զբոսանքի բակը 6x20 մետր էր՝ ի տարբերություն նախորդի 3x10 մետր մեծության: Իսկ ամենակարևոր առավելությունն ուրիշ կալանավորների հետ շփվելու հնարավորությունն էր: Թեև նա դեռ մենակ էր իր խցում, բայց մարզանքի ընդմիջումն անցկացնում էր ուրիշ DPS բանտարկյալների հետ: Նա մյուսներից երիտասարդ էր. նրանց մեծ մասն ահաբեկիչներ էին, գանգստերներ, ցմահ բանտարկվածներ և փախուստի փորձեր կատարածներ, որոնք դատապարտվել էին երկարատև ազատազրկման: «Նրանցից շատերը բավական ուսյալ են, կիրթ ու հաճելի, – գրում էր նա իր կասկածամիտ ծնողներին՝ լիակատար մեկուսացումից ազատվելուց հետո. – Նրանք կարող են շատ բան սովորեցնել և լավ խորհուրդներ տալ»:

Հունվարի 25-ին, կիրակի, մի պահակ Մոնթեին հայտնեց, որ իրեն սպասող այցելու կար: Այցելությունների օր էր, և հարյուրավոր մարդիկ էին ելումուտ անում սրահում: Մոնթեի համար, սակայն, դժվար չէր նկատել իր հորը՝ կովբոյական կոշիկներով ու լայնեզր գլխարկով: Մեր հայրը նույնպես իսկույն տեսավ իր սովորական ջինսով ու ռետինե չստերով Մոնթեին: Կալանավորն անսպասելի հյուրին ողջունեց ականջից-ականջ ժպիտով, բայց կրկնեց իր նամակներից մեկում գրած հորդորը. կարիք չկար այդքան ժամանակ ու փող ծախսել՝ բանտ գալու համար, քանի որ նա չէր կարող իրեն օգնել:

– Այո՛, իմ խելքի բանը չէ... – պատասխանեց այցելուն:

Նրանք հանդիպման ողջ ընթացքում կանգնած մնացին՝ խոսելով ընտանիքից, ընկերներից ու Մոնթեի վիճակից, բայց ոչ այն

դեպքերից, որոնք հասցրին նրա ձերբակալությանը: 30 րոպե անց մի պահակ մոտեցավ Մոնթեին՝ նրան իր խուց տանելու:

Խոսակցության ժամանակ Մոնթեն մեր հորը հայտնել էր, որ օրինական ամերիկյան անձնագիր չունի: Հակոբյանը տարիներ առաջ անձնագիրը բռնագրավել էր, և ապա այն կորել կամ ոչնչացել էր իսրայելցիների ռմբակոծության ընթացքում: Առանց վավերական անձնագրի կամ ճամփորդելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթի, որևէ երկիր նրան չէր ընդունի ազատվելուց հետո, երբ էլ դա լիներ: Իսկ եթե Մոնթեն գնալու ուրիշ տեղ չունենար, Ֆրանսիայի իշխանությունները նրան տարիներով կալանքի տակ կպահեին՝ նույնիսկ բանտից դուրս:

Հաջողության քիչ հույսով՝ Մոնթեն 1986 թ. փետրվարի 19-ին անձնագրի դիմումով ներկայացրեց Փարիզում Միացյալ Նահանգների հյուպատոսարան՝ Մարվին Գրյոնևեգին: 1987 թ. հունվարի 13-ին նա վերջապես պատասխան ստացավ, թե Պետական դեպարտամենտը «ժամանակավորապես սառեցրել է» անձնագրի համար Մոնթեի դիմումը՝ համաձայն Ֆեդերալ օրենսգրքի (Code of Federal Regulations) 51.70-րդ բաժնի 22-րդ կետի, որտեղ գրված է. «(Ա) անձնագիր, եթե դա Միացյալ Նահանգներ ուղիղ վերադարձի համար չէ, չի թողարկվում հետևյալ դեպքերում. (1) դիմողը, հանցանքի համար, ձերբակալության է ենթակա՝ ըստ ֆեդերալ հրամանագրի»: 1986 թ. նոյեմբերի 6-ին, թվում է, Միացյալ Նահանգների Ֆրեզնոյի շրջանի դատարանում հենց ձերբակալության այդպիսի հրամանագիր էր ստորագրվել: Մեղադրանքն այն էր, որ Ֆրանսիայում կալանավորվելիս Մոնթեն գողացված ամերիկյան անձնագիր էր ունեցել: Նման հանցանքի համար, որը 18 USC 1543-ի խախտում էր, նախատեսված էր մինչև 5 տարի ազատազրկում և 2000 դոլար տուգանք:

Մոնթեի դատապաշտպաններից մեկը՝ պարոն Բոշեն, փորձեց վիճարկել նրան անձնագիր չտալու որոշումը, բայց՝ անարդյունք (գործի լսումը տեղի ունեցավ ԱՄՆ-ի դեսպանատանը 1987 թ. հոկտեմբերի 27-ին): 1988 թ. փետրվարի 11-ին Մոնթեն դեսպանատնից մի նամակ ստացավ: Այնտեղ նշված էր, որ, ձերբակալության հրամանագրի հիման վրա, նրան անձնագիր չտալու որոշումը հաստատվել է: Տնեցիներին գրած մի նամակում նա իրավիճակն ամփոփեց հետևյալ կերպ. «Այս ամենը նշանակում է, որ եթե ես վերադառնամ Միացյալ Նահանգներ, ինձ կձերբակալեն երկիր մտնելիս, և դատավարություն կսկսվի»:

Մոնթեն մտադիր չէր Միացյալ Նահանգներ վերադառնալ՝ անկախ ձերբակալման հրամանագրից, և նա անշուշտ չէր պատրաստվում Fresnes-ից դուրս պրծնել՝ ամերիկյան բանտ ընկնելու համար: «Միացյալ Նահանգների լավագույն բանը, — ասում էր նա, — մեքսիկական կերակուրն է»: Մեքսիկական թամալին, սակայն, հազիվ թե բանտի սրճարանում հաճելի համ ունենար: Նա պետք է պայքարեր Միացյալ Նահանգներ իրեն վտարելու դեմ, բայց առանց վավերական անձնագրի դա դժվար կլիներ:

Մեր քույր Մայլեն և «Հայ քաղաքական բանտարկյալների պաշտպան կոմիտեի» մի ներկայացուցիչ դիմեցին Bay Area-ի մի հայտնի փաստաբանի՝ Զարլզ Գարրիին, որպեսզի նա կանխի Մոնթեի արտաքսումը Միացյալ Նահանգներ: Մնված լինելով Ֆրեզնոյում, Կարապետյան ազգանունով՝ Գարրին «Փաստաբանների ազգային միության» (National Lawyers' Guild) և «Սև ընձառյուծների» պաշտպանների խորհրդի հիմնադիր անդամ էր: Գարրին հաստատեց մեր կասկածը. հայտնի չէր՝ ինչ կլիներ Մոնթեի հետ, եթե նրան վերադարձնեին Միացյալ Նահանգներ: Նրան իրենց ձեռքը դցելով՝ ամերիկյան գործակալները կարող էին նրա վրա լրացուցիչ, ավելի լուրջ մեղադրանքներ բարդել: Որքան Մայլեն ու ես շատ էինք մտածում այդ հնարավոր մեղադրանքների մասին, այնքան դրանք ավելի չարագուշակ էին թվում: Մոնթեն, ի վերջո, «ահաբեկիչների խմբավորման»՝ «Գաղտնի բանակի» ակտիվ անդամ էր, իսկ այդ կազմակերպությունը 1981 թ. հուլիսին և ապա 1982 թ. հուլիսին փորձել էր հրթիռներ արձակել Բեյրութում Ամերիկյան դեսպանատան վրա: Երկու փորձերն էլ ձախողվել էին, և Մոնթեն հավանաբար չէր մասնակցել դրանց (առաջին փորձի ժամանակ նա հարավային Լիբանանում կռվում էր իսրայելական բանակի դեմ, իսկ երկրորդի ժամանակ Բեյրութում այս կամ այն պաշտպանական դիրքն էր ղեկավարում): Այդուհանդերձ, նա երբեք չէր քննադատել այդ ձախողված հարձակումները, նույնիսկ՝ պառակտումից հետո, երբ նա դատապարտեց «Գաղտնի բանակի» ուրիշ շատ օպերացիաներ:

Այդ ընթացքում Ֆրանսիայի քաղաքական գործիչները նախընտրական քարոզարշավ էին սկսել: Քանի որ 1986 թ. մարտի 16-ին տեղական ինքնակառավարման մարմինների և երկրի նախագահի ընտրություններ պիտի լինեին, մրցակից թեկնածուները ձգտում էին «հակաահաբեկչական» տպավորիչ կեցվածք ընդունել: Ի լրումն, նախագահ Միտերանի կառավարությունը ներքաշ-

ված էր հենց այնպիսի գործունեության մեջ, որի համար մեղադրվում էր Մոնթեն: 1985 թ. հուլիսի 10-ին սպանվեց պորտուգալացի լրագրող Ֆերնանդո Պերեյրան, երբ Օքլենդի նավահանգստում (Նոր Զելանդիա) պայթեցվեց շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարող Greenpeace կազմակերպության դրոշակակիր նավը՝ Rainbow Warrior-ը: Նոր Զելանդիայի ոստիկանությունն այդ պայթյունի համար ձերբակալեց երկու ֆրանսիացիների՝ Դոմինիկ Պրիորին (36 տարեկան) և Ալեն Մաֆարին (35 տարեկան): Երկուսն էլ Ֆրանսիայի արտաքին հետախուզական ծառայության (Direction Générale de la Sécurité Extérieure – DGSE) գործակալներ էին: Պրիորը նաև ֆրանսիական բանակի մայոր էր: 1985 թ. սեպտեմբերին Le Monde թերթը հաստատեց, որ օպերացիան կատարվել էր Ֆրանսիայի բարձր պաշտոնյաների կարգադրությամբ, որպես Greenpeace-ի դեմ քարոզարշավի մաս, քանի որ վերջինս գլխավորել էր Մուրուրոա Ատոլլում (Խաղաղ օվկիանոսի հարավում) Ֆրանսիայի միջուկային փորձարկումների դեմ բողոքները:

Նոր Զելանդիայի դատարանը որոշեց, որ Մաֆարն ու Պրիորը մտել էին օտար երկիր ապօրինաբար, կեղծ անձնագրերով՝ նավահանգստում նավ խորտակելու նպատակով: Մինչ միջազգային մամուլում բացահայտվում էին դավադրության մանրամասները, Ֆրանսիայի իշխանությունները Մոնթեին մեղադրում էին հենց այնպիսի գործողությունների համար, որ Նոր Զելանդիայում կատարել էին իրենց գործակալները:

Հակառակ ոստիկանության և քաղաքական գործիչների խստությանը, ահաբեկչական պայթյունները Փարիզում շարունակվեցին: Փետրվարի 3-ին Champs Elysées-ի մի առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունը վիրավորեց 7 անցորդների: Մեկ այլ ռումբ վնասազերծվեց Էյֆելյան աշտարակի դագաթին: Փետրվարի 4-ին Place St. Michel-ի վրա գտնվող Gilbert Jeune գրախանութում պայթած ռումբը վիրավորեց 3 հաճախորդների, իսկ հաջորդ օրը FNAC սպորտային խանութների համալիրում տեղի ունեցած պայթյունը վիրավորեց ևս 10 հոգու: Ինքնակոչ «Արաբ և մերձավորարևելցի քաղբանտարկյալների հետ համերաշխության կոմիտեն» իր վրա վերցրեց այդ պայթյունների պատասխանատվությունը և պահանջեց Ֆրանսիայի բանտերից ազատել 3 կալանավորների. Ալիս Նակկաշին, Ջորջ Իբրահիմ Աբդալլահին և Վարուժան Կարպիճյանին: Նակկաշը՝ լիբանանցի մի

արաբ, փորձել էր սպանել Իրանցի դիսիդենտ Շապուր Բախտիարին: Աբդալլահը «Լիբանանյան զինյալ հեղափոխական խմբավորում» կոչվող մի փոքր հակամերիկյան կազմակերպության անդամ էր, իսկ «Գաղտնի բանակի» մարտիկ Վարուժան Կարպիճյանը մեղադրվում էր 1983 թ. հուլիսի 15-ին Օռլիում տեղի ունեցած արյունալի պայթյունի համար:

«Ես վստահ էի, որ այսպիսի դեպքեր լինելու են, – գրեց Մոնթեն զինյալ գործողությունների մասին, – իսկ ավելի տխուր է այն, որ վատթարը դեռ առջևում է»: Եվ իրոք, 1986 թ. մարտի 17-ին պայթեց ֆրանսիական արագընթաց գնացքը (TGV): Վնասվածքներ ստացան 10 մարդ, և դա նշան էր, որ պայթյունների նոր շրջան է լինելու: 3 օր անց մեկ այլ ռումբ Champs Elysées-ում խլեց 2 կյանք և վիրավորեց 28 հոգու: Այդ գիշեր մետրոյում վնասազերծվեց ավերիչ ուժ ունեցող մի ուրիշ պայթուցիկ: Ի պատասխան այս հարձակումների, DST-ն ձերբակալեց 64 կասկածյալների, հիմնականում՝ արաբների ու հայերի:

Ապրիլի կեսին, Մոնթեի ձերբակալությունից 5 ամիս անց, դատավորն ի վերջո Արա Թորանյանի ընկերուհի Վալերիին թույլ տվեց իբրև ՀԲԱԿ-ի (Թորանյանի ու իր ընկերների հիմնած իրավապաշտպան կոմիտեի) ներկայացուցիչ այցելել բանտարկյալին: Հաջորդ 3 տարիների ընթացքում Վալերին դարձավ Մոնթեի միակ կանոնավոր այցելուն, որ հավատարմորեն գալիս էր նրա մոտ շաբաթը մեկ անգամ՝ երկուշաբթի, չորեքշաբթի ու շաբաթ օրերին, կեսժամյա այցելություններով:

Մոնթեն կապոցներով նամակներ էր ստանում իր համակիրներից, որոնց թվում՝ Ֆիլիպ-Լևոնիկ անունով մի 6 տարեկան տղայից: Նա գլխին երկու մազափունջ ունեցող մի ձողանման ֆիգուր էր նկարել՝ կանգնած դատարկ, ճաղավանդակը ջարդած բանտախցի մոտ, և գրել. «Քեռի Մոնթեն շուտով կազատվի»: 1986 թ. Զատիկին, սակայն, կալանավորը շուտ ազատվելու հույսը կորցրել էր: Նրա հետ ձերբակալված Բենիամին Քեշիշյանը 4 ամիս անց ազատ էր արձակվել La Santé բանտից, երբ դատախազը բավարար հանցանշաններ չէր գտել նրան դատելու համար: Ի տարբերություն Քեշիշյանի, սակայն, Մոնթեն ու Զեփյուռը Ֆրանսիայի քաղաքացիներ չէին: Իրավիճակն ավելի էր բարդացել, քանի որ ֆրանսիացի պաշտոնյաները Մոնթեի դեմ անձնական ոխ ունեին՝ կապված 1981 թ. Դիմիտրիու Ջորջիուի գործի հետ, և ուզում էին նրան հնարավորին չափ շատ պահել բանտում: Այդ

պատճառով էլ, կարծում էր Մոնթեն, նրանք հնարել էին «պայթուցիկներով պլաստիլինի» հանցանշանը:

Օրեր ու շաբաթներ էին անցնում, և Մոնթեի նամակները գնալով ավելի խոհական էին դառնում: 1986 թ. հոկտեմբերի 12-ի մի նամակում նա հետևյալ կերպ է պատասխանում քոլեջի իր դասընկեր Արմեն Ս.-ի այն ակնարկին, թե նախկին ծանոթները Միացյալ Նահանգներում հրաժարվել են Մոնթեից. «Հավատա՛, որ ես քիչ եմ մտահոգված՝ մարդիկ ինձ հարգո՞ւմ են, թե ոչ: Կարևորն այն է, որ ինքս ինձ հարգեմ, և առանց դրա թշվառական կդառնայի: Ես աշխատում ու ապրում եմ՝ ինքս ինձ հարգելու համար և չեմ ուզում մրցակցել ուրիշների հետ. լինի դա ֆիզիկական, մտավոր, թե որևէ այլ մրցակցություն: Ես մրցակցում եմ ինքս ինձ հետ, իսկ դա ամենադժվար ու հուսահատական մրցակցությունն է, քանզի մարդ չի կարող ինքն իրեն գերազանցել, թեև նրան միշտ թվում է, թե կարող է, և պետք է գերազանցի: Չեմ պնդում, թե սա լիովին առաջ մոտեցում է կյանքին, բայց իմ հոգեվիճակն այժմ այդպիսին է»: Ապա նույն պարբերության վերջում նա ավելացնում է. «Թող չստեղծվի այն տպավորությունը, թե ես ինձ անվերապահորեն հարգում եմ. բնավ ո՛չ, որովհետև ես չափից ավելի շատ սխալներ եմ գործել ու չլուծված խնդիրներ թողել, որպեսզի իրոք ինձ հարգեմ»:

Նոյեմբերի սկզբին Մոնթեն ծանուցում ստացավ, որ իր դատավարությունը տեղի է ունենալու նոյեմբերի 28-ին՝ ձերբակալությունից 1 տարի անց: Ինչպես Ֆրանսիայում շատ ուրիշ մեղադրյալների, Մոնթեին դատում էր ոչ թե ատենակալների խորհուրդ, այլ 3 դատավորից բաղկացած մի ատյան՝ ընտրված Արդարադատության նախարարության կողմից: Դատավարության օրը, ժամը 1:30, ոստիկանները նրան կապանքների մեջ տարան 14-րդ «Մեղադրանքի պալատ» (Chambre d'Accusation): Նրանք անցան ստորգետնյա թունելով, որը ոստիկանական բաժանմունքը կապում էր Île de la Cité-ի վրա գտնվող Արդարադատության պալատի հետ: Երբ նա մտավ դատարանի դահլիճ, ուր ասեղ գցելու տեղ չկար, նրա համակիրները կանգնեցին ու սկսեցին ծափահարել: Թիկնոցավոր դատավորներից մեկը հարվածեց իր մուրճով ու պահանջեց հանդարտվել կամ դահլիճից դուրս գալ:

Մոնթեն նստեց իր տեղը՝ դատավորներից ձախ, երկու ժանդարմների մեջտեղում, հակափամփուշտային ապակու հետևում: Նրա դատապաշտպաններ Լը Կլերկն ու Ֆրանսուա Սերրը խոսեցին մոտ 20 րոպե: Ապա Մոնթեն մանրամասնորեն պատասխանեց մեղադրող ու պաշտպանող կողմերի հարցերին: Նա իրեն վստահ էր զգում և լուրջ ու հստակ կեցվածք ուներ: Դիմելով դատավորներին՝ նա ասաց.

– *Nous ne sommes pas des malfaiteurs, nous sommes des bienfaiteurs* (Մենք չարագործներ չենք, մենք բարեգործներ ենք):

Հետագայում, իր ծնողներին գրած մի նամակում, Մոնթեն ափսոսանք էր հայտնում, որ իր խոսքը դատարանում «փոքր-ինչ թույլ էր»: Ներկաները, սակայն, դահլիճից հեռացան բոլորովին այլ տպավորությամբ: Մի երիտասարդ ոստիկանական լրագրող, որը մինչ այդ արգահատել էր բոլոր «ահաբեկիչներից», Մոնթեի մասին գրեց, թե նա ներկայացավ իբրև ազնիվ մարդ, որի նպատակներն ու գործողությունները ներդաշնակ էին, և որը պատրաստ էր գնալ «մինչև վերջ»:

6 ժամ հետո դատական նիստի շարունակությունը հետաձգվեց, և Մոնթեին տեղեկացրին, որ դատավճիռը կհրապարակվի 15 օրվա ընթացքում: *Liberation* թերթը դատավարությունը բնորոշեց որպես «խուլերի երկխոսություն»: Մեղադրողի հարցերը Մոնթեին զարմացրել էին իրենց անհետևողականությամբ ու անտեղյակությամբ, իսկ դատավոր Բուլուքի «ծայրահեղ բթությունն ու տխմարությունը» նրան ստիպել էին գլուխը թերահավատորեն օրորել:

Երկու շաբաթ անց, 1986 թ. դեկտեմբերի 12-ին, իշխանությունները Զեփյուռին ու Մոնթեին տարան Փարիզ՝ դատավճիռը հայտնելու: Զեփյուռը, դատապարտվելով 2 տարի պայմանական և 1 տարի «խոստումով» ազատազրկման՝ այդ գիշեր ազատ արձակվեց: Նա *Fleury-Mérogis* բանտում 54 շաբաթ էր անցկացրել, ընդ որում՝ 1 ամիս լիակատար մեկուսացմամբ:

Թեև մեղադրող կողմն ամեն ջանք գործադրեց, բայց չկարողացավ Մոնթեին դատապարտել թուրքական նավը խորտակելու դավադրության համար: Փոխարենը նա դատապարտվեց Ֆրանսիա ապօրինաբար մուտք գործելու, ամերիկյան կեղծ անձնագիր ունենալու և առանց համապատասխան թույլտվության ատրճանակ կրելու համար: 1986 թ. դեկտեմբերի 12-ի իր զեկույցում դատախազը պահանջում էր «Մոնթեին խստորեն պատժել», բայց ավելացնում, որ կային նաև որոշ մեղմացուցիչ հանգամանքներ, քանի որ մեղադրյալի «գործունեությունը ոգեշնչվել էր գաղափարական որոշ հիմնավորումներով, և նա բացահայտորեն դա-

տապարտել էր Հակոբյանի ASALA-ի կույր ահաբեկչությունը»: Արդյունքում Մոնթեն ստացավ 6 տարվա ազատազրկում. 4 տարի բանտում և 2 տարի պայմանական, իսկ այնուհետև՝ մշտական արտաքսում Ֆրանսիայից: Դատախազի զեկույցը Մոնթեի և Զեփյուռի համար նախատեսում էր նաև դատական ծախսերի կեսի փոխհատուցում (17,998,50 ֆրանկ): Մոնթեի փաստաբաններն առկա հանգամանքներում նման դատավճիռը հաջողություն համարեցին, բայց Մոնթեի համար այն «ամեն ինչից ավելի վիրավորական էր»:

Դատավարությունից հետո իր բանտախուց վերադառնալով՝ Մոնթեն բարձրացավ պատուհանին՝ նայելու առջևի բակին: Եթե անձրև չգար, գետինը չոր կմնար, և առավոտյան կարելի կլիներ հանդբոլ խաղալ:

Հաջորդ օրը, հանդբոլից հետո, նա ծնողներին գրեց. «Ես շատ եմ զարմացած բանտում չդիմացող անձանց մասին պատմությունների վրա: Ինձ թվում է՝ որքան պայմանները վատ են, այնքան մարդու բարոյական նկարագիրը բարձր է մնում»:

«Ինչպես ասացի, — ավելացնում է նա, — պայքարը դեռ ավարտված չէ»:

Գլուխ 11. Բանտում

Մոնթեն Fresnes բանտում իր ժամանակի մեծ մասն անցկացրեց միայնակ՝ 3x5 մետրանոց խցերի շարքում: Դրանցից յուրաքանչյուրն ուներ զուգարանակոնք ու սառը ջրով լվացարան, մահճակալ, փոքր լույս ու սեղան, ճաղավանդակով պատուհան և դիտանցքով պողպատե դուռ: Ամեն առավոտ ժամը 7-ին մի պահակ նրան զանգով արթնացնում էր, շերեփով սուրճ կամ կաթ լցնում բաժակի մեջ: Ապա Մոնթեն իր մահճակալի ու պատի միջև եղած նեղ տարածությունում պառկում էր, ճկումներ անում և պպզում-բարձրանում 75 րոպե: 8:30 նա հերթ էր կանգնում՝ բետոնե պատերով շրջապատված 5x8 մետրանոց բակում քայլելու համար: Ժամը 10:00-ին վերադառնալով իր խուց՝ նա մինչև կեսօր շարունակում էր մարզանք անել: DPS-ի այլ բանտարկյալների նման՝ Մոնթեն ուտում էր մենակ, սրճարանի հեռավոր մի սեղանի մոտ, պահակների խիստ հսկողության տակ: Ուտելուց հետո նա կարդում էր, գրում և իր ռադիոընդունիչով լուրեր լսում՝ մինչև հետկեսօրյա զբոսանքը (2:30-4:00): Ժամը 18:00-ին ճաշելուց հետո նա կրկին գալիս էր իր խուցը, կարդում ու գրում: Երբ նա նոր էր եկել բանտ, նրան թույլ էին տալիս ցնցուղ ընդունել շաբաթը մեկ անգամ: 1986 թ. մարտից նա անցավ շաբաթը երկու անգամ ռեժիմի: Քանի որ Մոնթեն ամեն օր առավոտից քրտնում էր, լրացուցիչ ցնցուղը որոշ թեթևություն բերեց և՛ իրեն, և՛ շրջապատի մարդկանց:

Fresnes-ում կային 3500 կալանավոր և 1200 պահակ: «Պահակների մեծ մասը լավ մարդիկ են», — գրում էր նա 1986 թ. Նոր տարվա օրը: Հաջորդ ամառ, սակայն, նա պահակների մասին իր կարծիքը փոխեց: Fresnes-ի պահակները պատկանում էին «աջ» Forces Ouvrières («Աշխատավոր ուժեր») միության կորիզը կազմող անդամների թվին: Նրանց մեծ մասը ոստիկաններ էին, անվտանգության ծառայողներ ու բանտապահներ: «Շատ պահակներ ծայրահեղ ռասիստներ են, — բացատրեց Մոնթեն վավերագրական ֆիլմեր նկարահանող մի այցելուի, — և նրանք ամենանշան պատրվակն օգտագործում են՝ ոչ ֆրանսիացի բանտարկյալներին՝ հատկապես սեմամորթներին ու արաբներին, ծեծելու համար»: «Իբրև հայ, — ավելացրեց նա, — ես նույնպես ենթակա եմ նրանց ռասիստական թշնամանքին»: Սա հատկապես վերաբերում էր Առաջին շաժանմունքին, որտեղ «մտավոր խանգարում

ունեցող պահակների» թիվն ամենամեծն էր: Առաջին իսկ հնարավորության դեպքում, գրում էր Մոնթեն, այդ պահակները չէին տատանվի որևէ կալանավորի սպանել:

Այդուհանդերձ, անգամ ամենակատաղի բանտապահները խուսափում էին Մոնթեի հետ բախվելուց: Նախ, նրանք ենթադրում էին, և Մոնթեի դեպքում՝ միանգամայն իրավացիորեն, որ DPS-ի կալանավորները զինված ընկերներ ունեն բանտի պատերից դուրս: Բացի այդ, պահակները վախենում էին Մոնթեի պես բանտարկյալներից, որոնք իրենց օրերն անցկացնում էին ծանրություններ բարձրացնելով ու մկաններ զարգացնելով: Ի լրումն, Մոնթեն հրաժարվում էր «դեղ» ընդունելուց: Կալանավորներով գերծանրաբեռնված բանտում բժիշկները կանոնավոր կերպով «հանգստացնում» էին նրանց, իսկ Մոնթեն, դեղամիջոցները մերժելով, ավելի անկառավարելի էր դարձել:

Կեսօրյա զբոսանքը Մոնթեն անցկացնում էր «տարբեր, հիմնականում՝ քաղաքական քննարկումների» մասնակցելով, ինչպես նա նշում է նկարահանողին ուղղված նամակում: Իսկ երբ կալանավորները շրջանաձև հավաքվում էին՝ խոսելու իրենց կանանց կամ սիրուհիների մասին, Մոնթեն լռում էր ու մտաբերում Սեդային: Նա հիշում էր 1979 թ. գարնանն Այնճարում՝ Սեդայի ընտանիքի տան պատշգամբում անցկացրած մի գիշեր: Երկինքը լի էր աստղերով, և Մոնթեն չկարողացավ քնել: Նայելով առկայծող աստղերին՝ նա որոշեց առավոտյան Սեդային խոստովանել իր սերը: Արևածագին, սակայն, նրա քաջությունը կորել էր: Իսկ Fresnes-ում ոչ Սեդան կար, ոչ էլ գիշերային երկինքը, և թվում էր, թե այն օրվանից դարեր էին անցել:

Fresnes-ի բանտարկյալների՝ հատկապես DPS-ի կալանավորների համերաշխության շնորհիվ Մոնթեն շուտով իր հաշվին դրանցեց առաջին խռովությունը: 1986 թ. հունվարի 22-ին, լիակատար մեկուսացումից ազատվելուց ընդամենը 4 օր անց, պահակներից մեկն այցելությունների ժամին DPS-ի մի կալանավորի կնոջ գրկում դտնվող երեխայի բերանից խլեց կծելու օղակը՝ լացացնելով և՛ նրան, և՛ մորը: Զբոսանքից հետո Մոնթեն ու DPS-ի 5 ուրիշ կալանավոր հրաժարվեցին խցերը վերադառնալուց և հայտարարեցին, որ կհրաժարվեն նաև ուտելուց, եթե բաժանմունքի ղեկավար պարոն Մարշանն աշխատանքից չհեռացնի բռի պահակին: Հացադուլի մասին լուրը տարածվեց բանտում, և երբ ևս մի քանի DPS-ի կալանավոր միացան բողոքին, տագնապած

ղեկավարությունը խոստացավ պահակին բաժանմունքից հեռացնել:

Կարճ ժամանակից առաջին խռովությանը հաջորդեց երկրորդը: Մի ձմեռային օր, 0-ից ցածր ջերմաստիճանում, պահակներից մեկը, վատ տրամադրության մեջ լինելով, շնչափողի վիրահատություն տարած մի տարիքով կալանավորի քարշ տվեց դեպի պատժախուց, որ խոնավ, մութ «բանտի մեջ բանտ» էր՝ ասես Ալեքսանդր Դյումայի վեպերից: Թեև պատժախցում հաճույքով՝ առնետներ էին բնակվում, այն չէր տաքացվում, զուրկ էր պատուհանից, հոսող ջրից ու ներքնակից: Մոնթեն և ուրիշ կալանավորներ պահանջեցին բանտարկյալին այնտեղից հանել: Վախենալով հակառակությունից, որ կարող էր վերաճել ապստամբության, բանտի ղեկավարությունը դարձյալ զիջեց՝ կալանավորին պատժախցում պահելով նախատեսված 8-ի փոխարեն 2 օր:

Անհնազանդության նման ցույցերը բանտապահներին ամենևին Մոնթեի կողմը չէին տրամադրում: Շուտով նրանց համբերությունն սկսեց սպառվել, և վախն ապստամբությունից դարձավ երկրորդական գործոն: Երկու կողմերը գոտեպնդվում էին՝ պատրաստվելով ավելի վատթար բախումների: Մոնթեն ու DPS-ի ուրիշ կալանավորներ բողոքում էին իրենց մարմնի խուզարկությունների դեմ, բայց ոչ միշտ էին հաջողության հասնում: «Հաճախ ամենացած ու անմարդկային ձևով մարմինս կխուզարկեին», — նշում է Մոնթեն իր «Ինքնաքննադատության» մեջ: Սան Ֆրանցիսկոյի իր ընկերներին ուղղված մի նամակում նա գրում է. «Ես միշտ էլ գիտեի, որ մեր պայքարին ակտիվորեն մասնակցելու մտադրություն ունեցողները պետք է ակնկալեն միայն դժվարություններ՝ մեծագույն դժվարություններ»:

Մեկ այլ նամակում՝ հասցեագրված «սիրելիներին», Մոնթեն ասում է, որ Fresnes-ի 5 նախկին կալանավորներ դարձել էին պետությունների ղեկավարներ (հիմնականում աֆրիկյան երկրներում), և որ ավելի քան 40 տարի առաջ իր սիրելի հերոսներից մեկը՝ Միսաք Մանուշյանը, կյանքի վերջին օրերն անցկացրել էր Մոնթեի խցին շատ մոտ գտնվող թիվ 354 խցում: Ծեղասպանությունից փրկված Մանուշյանը 1934 թ. անդամագրվել էր Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցությանը և հետագայում, նացիստների օկուպացիայի ժամանակ, դարձել 150 պարտիզանների առաջնորդ: 1943 թ. նոյեմբերին Մանուշյանի ու իր 22 ընկերների դերի ընկնելուց առաջ խմբավորումը գնացքներ էր կործանել

և սպանել 50 նացիստների ու գերմանացիների հետ համագործակցող՝ Ֆրանսիական Վիշի քաղաքի ղեկավարության գործակալների:

«Այստեղ գտնվելը, – գրեց Մոնթեն Երկրորդ բաժանմունքի իր բանտախցից, – գրեթե պատիվ է»: Բայց ոչ միշտ էր այդպես: Հուլիսի սկզբին Մոնթեն և DPS-ի ուրիշ կալանավորներ կազմել էին իրենց արժանապատվության ոտնահարումների մի երկար ցուցակ, որ ներառում էր մարմնի մանրակրկիտ խուզարկություն, բժշկական օգնության մերժում, ցնցուղ ընդունելու սահմանափակումներ, անձնական իրերի բռնագրավում և գիշերային հերթափոխի հարբած պահակների կողմից վիրավորանքներ: Հուլիսի 8-ին, երբ մի պահակ բանտարկյալներից մեկին թույլ չտվեց իր ընկերոջը գիրք փոխանցել, Մոնթեն ու Առաջին բաժանմունքի 3 այլ՝ DPS-ի կալանավոր հանդիպում պահանջեցին բանտապետի՝ մայոր Կանի (Camps) հետ: Պարզվեց, որ նա արձակուրդում էր, և նրան փոխարինել էր Օրոն անունով մի սադիստ: Երբ վերջինս իր մոտ եկած պատգամավորներին վիրավորեց, Մոնթեն ու 3 այլ պատգամավոր հացադուլ հայտարարեցին՝ մինչև որ Օրոնն իրենց պահանջները կբավարարեր: Հացադուլի մասին լուրն արագ տարածվեց բանտում, և 48 ժամվա ընթացքում Երկրորդ բաժանմունքի ևս 25՝ DPS-ի կալանավոր պատրաստ էին միանալ բողոքին: Խռովությունից վախենալով՝ Օրոնը նահանջեց, և հուլիսի 10-ի երեկոյան հացադուլավորներն սկսեցին ուտել:

1986 թ. հուլիսի 12-ի մի նամակում Մոնթեն բացատրում է, որ կալանավորները բանտապահների հանդեպ միշտ պետք է մարտական լինեն, որովհետև, «երբ նրանք բանտարկյալի մեջ նույնիսկ աննշան թուլություն են նկատում, խիստ չարաշահումներ են թույլ տալիս»: Իսկ մի հետագա նամակում նա խորհրդածում է այսպես. «Իմ կարծիքով՝ բոլոր դատավորներն աշխատանքի անցնելուց առաջ պետք է առնվազն 1 տարի անցկացնեին բանտում: Դա նրանց ավելի իրատես կդարձներ: Շատ առումներով ես չափազանց ուրախ եմ, որ նման փորձառություն ունեցա: Իհարկե, կնախընտրեի ամառ չընկնել, բայց քանի որ այստեղ եմ, աշխատում եմ շատ բան սովորել»:

Ավելի ուշ, երբ նա իմացավ, որ իր հորն ընդգրկել են Tulare County-ի ատենակալների խորհրդում, նրան հորդորեց «հասկանալ, որ մարդուն երկար ժամանակով բանտ ուղարկելը միայն վնաս է հասցնում»:

Իր որդուն՝ թիվ 752783 կալանավորին ուղարկած նամակներում մեր մայրը նկարագրում էր, թե ինչպես նրա ձերբակալությունից ի վեր ինքը վերջապես կարողացել էր մի քանի գիշեր հանգիստ քնել: «Բանտում դու գոնե ապահով ես», – գրել էր նա՝ ի թիվս կալանքի այլ «առավելությունների»:

«Էլ երբեք նման բան չասե՛ս, – վրդովված պատասխանեց Մոնթեն. – ես շատ լավ գիտեմ՝ ինչպես ողջ մնալ, և կարիք չունեմ հետադիմական պայծառ մտքերի, որոնք կհուշեն, թե ինչն է ինձ համար լավ կամ վատ»:

1987 թ. փետրվարի 9-ին մի պահակ Սեդային ուղեկցեց դեպի այցելուների դահլիճ, որտեղ խցիկներից մեկում կանգնած էր Մոնթեն: Սեդան օդանավով ժամանել էր Մոսկվայից: Երկուսն էլ լայն ժպտացին: Մոնթեն երկար նամակներ էր ուղարկել Երևան՝ հասցեագրելով դրանք «անուշիկ ու սիրելի Սեդային» և ստորագրելով՝ «քեզ պաշտող»: Իրար ճանաչելու ողջ ընթացքում նրանք միայն մեկ անգամ գրկախառնվել էին և 2-3 անգամ համբուրվել: Բայց Մոնթեի նամակները հավատալ էին նրա սերը, և Սեդան դրանք գանձի նման պահել էր: Այնուամենայնիվ, նա չէր պատկերացնում բանտարկությունից հետո իրենց համատեղ ապագան: Ինչ որ կերպ, պնդում էր Մոնթեն, իրենք պետք է հաստատվեին իրենց նախնյաց հայրենիքում, Թուրքիայի սահմաններից ներս, որտեղ պետք է միասին աշխատեին, կռվեին ու մեծացնեին իրենց երեխաներին՝ ռազմաճակատային ճամբարներում, մարտնչող ընկերների կողքին: Սա մի խելահեղ առաջարկ էր: Սեդայի հոր մոտ նրա ձեռքը խնդրելու էին եկել այլ երկրպագուներ՝ խոստանալով աղջկան խաղաղ ու ապահով կյանք: Սեդան, սակայն, գիտեր, որ իրեն ավելի ապահով կզգա պարտիզանական ճամբարում՝ Մոնթեի հետ, քան մի խաղաղ արվարձանում՝ մեկ ուրիշի կողքին: Նա բանտ էր եկել՝ Մոնթեին հայտնելու, որ կսպասի նրան, և նմանվել էր մանուկ հասակում իր լսած հեքիաթների հերոսուհիներին, որոնք տարիներ շարունակ սպասել էին լեռներում կռվող իրենց սիրեցյալների վերադարձին:

1987 թ. փետրվարի 14-ին Մոնթեն գրեց իր ծնողներին. «Թեև ես դեռ վստահ չեմ, թե ուր եմ գնալու ազատվելուց հետո, բայց գիտեմ, որ իմ ընկերուհին (որին այսուհետև ավելի ճիշտ կլինի «հարսնացու» կոչել) ինձ հետ կլինի»: Ապա, երբ մեր մայրը Մոնթեին հորդորեց հանուն Սեդայի մի տեղ հաստատվել ու հանգիստ ապրել, նա պատասխանեց. «Մի՛ անհանգստացիր. մենք իհարկե

շատ-շատ դժվար կյանք կունենանք, բայց երջանիկ կլինենք: Այդքանը բավական է»:

Սեդայի վերջին այցելության առավոտյան Մոնթեն նրան հանդիպելու գնաց՝ մի շարք հրատապ հարցեր քննարկելու վճռականությամբ: Բայց երբ նա մտավ խցիկն ու հայացքն ուղղեց Սեդային, չկարողացավ զսպել արգելքի վրայով ձգվելու ու նրան համբուրելու ցանկությունը: Մի պահակ բախեց խցիկը.

— Մելքոնյա՛ն:

Դա այցելության կարգի խախտում էր: Համբույրը շարունակվեց, և այս անգամ պահակը բախեց ավելի ուժգին.

— Մելքոնյա՛ն:

Սեդան նրա բերանի մեջ շշնջաց, որ պետք է նստել, բայց նա շուրթերն ավելի ամուր սեղմեց Սեդայի շուրթերին՝ ասելով, որ վատթարագույն դեպքում իրեն պատժախուց կուղարկեն:

— Ես չեմ ուզում, որ դու այնտեղ գնաս, — տնքաց Սեդան:

— Ոչինչ, — շշնջաց Մոնթեն համբույրների արանքում, — սրա համար արժե պատժախցում նստել:

1987 թ. փետրվարի 20-ին, ուրբաթ, երբ Սեդան պետք է թռչեր Փարիզից, Շառլ դը Գոլ օդանավակայանի անվտանգության ծառայողներից մեկը նրան ուղեկցեց թռիչքագոտուն նայող ապակեպատ մի շինության դրասենյակ: Դրասեղանին դրված դրամեքենայի ու առնվազն 3 հատոր գործ պարունակող մի հաստ թղթապանակի առջև նստած էր տեսուչ Շիշելը: Նա փայլուն լուսանկարների մի կույտ նետեց Սեդայի առջև՝ ասելով.

— Ահա թե ինչով է զբաղվում ձեր փեսացուն:

Լուսանկարներում պատկերված էին օդանավակայանների արնաշաղախ սրահներ և ապակու փշուրների մեջ ընկած խեղված մարմիններ: Սեդան լուսանկարները մի կողմ հրեց.

— Մոնթեն նման բան չի կարող անել:

Շիշելը գլուխն օրորեց.

— Դուք նրան չեք ճանաչում:

— Դո՛ւք չեք ճանաչում նրան, — պատասխանեց Սեդան:

Հաջորդ առավոտյան ոստիկանները Սեդային նստեցրին «Աերոֆլոտի»՝ Մոսկվա թռչող ինքնաթիռ: Մի քանի շաբաթ անց Ժան-Մարի Լը Պենի օտարատյաց «Ազգային ճակատի» (Front National) Présent թերթում տպվեց մի հոդված, որում Սեդայի այցելությունը Ֆրանսիա որակվեց իբրև ահաբեկիչների հանդեպ Միտերանի հանդուրժողականության օրինակ: «Ես այնքան զայրացած եմ...», — գրում էր Մոնթեն 1987 թ. մայիսի 2-ի մի նամակում՝ այդ հրապարակման մասին իմանալուց հետո: Սեդայի այցելության վերաբերյալ պատմությունն անշուշտ հասնելու էր Հակոբյանի ականջին, և վտանգը, որին ենթարկվում էր Գպրանյանների ընտանիքը, մեծանալու էր:

Երկար ու ցուրտ ձմեռվա վերջում Մոնթեն տեղեկացնում էր, որ միայն 1987 թ. փետրվարի ընթացքում Ֆրանսիայի բանտերի բնակիչների թիվն աճել էր 1400-ով կամ 3%-ով: Որոշ կալանավայրերի խցեր ապաստան էին տվել նախատեսվածից չորս անգամ ավելի բանտարկյալների: «Այս իրավիճակում բանտերում լուրջ խնդիրներ են ծագելու», — զգուշացնում էր Մոնթեն:

Հարկավ, 1987 թ. հուլիսի 11-ին Fleury-Merogis բանտում կանայք հրաժարվեցին զբոսանքից հետո իրենց խցերը վերադառնալ: Հուլիսի 14-ին, «Բաստիլի օրը», բողոքին միացան տղամարդիկ, և խռովությունը տարածվեց բանտերով: Մի բանտարկյալ մահացավ, երբ փորձում էին նրան բռնի իր խուց վերադարձնել: Մարսելի մոտի բանտի կալանավորները հրկիզեցին ու ավերեցին շենքի մեկ-երրորդը:

Հուլիսի 20-ին ըմբոստացան նաև Fresnes-ի կալանավորները, և Մոնթեն այդ «շարժման» կազմակերպիչներից էր: Բանտին մոտեցան հակախռովարարական ոստիկանության մեքենաներ, բայց արյունահեղությունից, բարեբախտաբար, հնարավոր եղավ խուսափել: Լարվածությունը, սակայն, առանձին բռնկումներով շարունակվում էր նաև հաջորդ տարվա ընթացքում:

Օգոստոսի 7-ին, խռովության մեջ Մոնթեի դերը հայտնի դառնալուց հետո, իշխանությունները նրան, առանց նախօրոք զգուշացնելու, տեղափոխեցին Փարիզից 40 կիլոմետր հյուսիս-արևմուտք գտնվող Poissy բանտը, որ նախկինում վանք էր եղել: Նոր կալանավայրում Մոնթեն ստացավ բանտարկյալի նոր համար՝ 9111, բայց պահպանեց DPS կալանավորի կարգավիճակը: Poissy-ում ընդամենը 400 բանտարկյալ կար, Fresnes-ի կալանավորների թվի մեկ-տասներորդը, և պայմաններն այնտեղ համեմատաբար լավ էին նաև ուրիշ առումներով: Երկու շաբաթը մեկ անգամ փոխվում էր անկողնային սպիտակեղենը, և ամիսը մեկ անգամ կարելի էր օգտվել հեռախոսից: Մոնթեն նույնիսկ մուտք ուներ մարզասենյակ և վայելում էր ամեն օր ցնցուղ ընդունելու անհավատալի շքեղությունը: Իսկ ամենաուրախալին այն էր, որ նա հիմա ճաշարանում ուտում էր 3 սեղանի շուրջը նստած տասնյակ

ուրիշ կալանավորների հետ: 20 ամիս շարունակ Fresnes-ում Մոնթեն սնվել էր միայնակ, առանձին սեղանի մոտ: «Այդքան երկար ժամանակ մենակ ուտելուց հետո մարդ հասկանում է, թե ընկերական շփման ինչպիսի լավ առիթ է միասին սնվելը», – գրում է նա 1987 թ. օգոստոսի 7-ի՝ իր ընտանիքին ուղղված նամակում:

Երբ Մոնթեն Միացյալ Նահանգներում էր վերջին անգամ՝ 1979 թ. հուլիսին, կշռում էր 54 կգ: Բայց 2 տարի բանտում անցկացնելուց հետո նա գրեթե 61 կգ էր դարձել: Դա ավելին էր, քան Մոնթեն երբևէ կշռել էր, և լրացուցիչ քաշը միայն մկանների հաշվին էր: Poissy բանտ եկած մի լուսանկարիչ, որի նպատակը վոլեյբոլ խաղացող կալանավորներին լուսանկարելն էր, մարզահրապարակում երկու կադր հատկացրել էր Մոնթեին ու իր ընկերոջը: Մեկում նա կանգնած է՝ հագին կարճ շալվար. հուժկու թևերով, կրծքով, ազդրերով և ծիծաղելիորեն բարակ գոտկատեղով: Նրա կողքը կռացած է ընկերը՝ Մեհմեդը, մի բարձրահասակ բեղավոր քուրդ Բինգյոլից (Թուրքիա):

Հակառակ կենցաղային պայմանների բարելավմանը, Մոնթեն գոհ չէր իր տեղափոխությունից: Նախ, Poissy-ին կալանավայր էր «պրոֆեսիոնալ դատապարտյալների» ու երկարատև բանտարկության համար, իսկ դա հակասում էր շուտ ազատվելու Մոնթեի հույսին: Բացի այդ, Poissy-ին Փարիզից ավելի հեռու էր, քան Fresnes-ը, ուստի՝ ավելի մեկուսի: Այդ մեկուսիությունը, կալանավորների փոքր թվի հետ, դժվարացնում էր Մոնթեի նման ագիտատորի գործը:

Այդուհանդերձ, եթե Մոնթեին Poissy տեղափոխելով՝ իշխանությունները հույս ունեին, թե այդպես նրան հեռու կպահեն խռովություններից, ապա շուտով նրանք հիասթափվեցին: 1987 թ. նոյեմբերի առաջին կեսին Ֆրանսիայի բանտերում մեկ շաբաթ շարունակ նոր ապստամբություններ եղան: Խորացող դժգոհությունների հետևանքով՝ Ֆրանսիայի ամենաժամանակակից բանտերից մեկում 400 կալանավորներ մի տասնյակ պատանդներ վերցրին՝ ներառյալ բանտապետին, և կալանավայրը հրդեհեցին: Իսկ Poissy-ում Մոնթեն և 350 ուրիշ կալանավոր բարձրացան գլխավոր շենքի կտուրն ու հրաժարվում էին այնտեղից իջնել: Ոստիկանությունն, արցունքաբեր գազի հրացաններով զինված, բանտը շրջապատեց, բայց բողոքը խաղաղ ավարտ ունեցավ, քանի որ բանտարկյալներին խոստացան պայմանների շուտափույթ

բարելավում: Մի քանի օր անց գրած նամակում Մոնթեն պատմում էր, որ երբ գիշերը 1:40 պահակներն իրեն վերադարձրին բանտախուց, ինքը «տարօրինակ ու տարբեր» մի զգացում ուներ. կարծես այդ օրը «շատ արտասովոր դեպք էր տեղի ունեցել»: Նա հանկարծ հասկացել էր, որ վերջին 2 տարվա ընթացքում առաջին անգամ գիշերը դրսում էր գտնվել: «Դա անհավատալի զգացողություն էր, – գրում էր նա. – ցուրտ էր, բայց կարելի էր տեսնել՝ աստղերը և ուրիշ ամեն ինչ»:

Մոնթեի երրորդ ձմեռը բանտում եկավ ու անցավ: 1988 թ. ապրիլի 28-ին նրան հասավ ամենաուրախալի լուրն իր կյանքում: Հավանաբար առաջին անգամ նա այն լսեց լուսադեմին, ռադիոյով, բայց կասկածում էր, մինչև որ ուշադիր կնայեր թերթերում հրապարակված լուսանկարներն ու Վալերիից կիմանար, որ տեղեկությունը ստույգ է: Առավոտյան վաղ, 4:30, երկու երիտասարդ կին և մուգ բաճկոնով մի ջղուտ մարդ դուրս էին եկել Աթենքից հարավ գտնվող Ֆալիրոն հարուստ արվարձանի մի բնակարանից և մթության մեջ ուղղվել դեպի իրենց սպասող մեքենան: Նրանք պետք է գնային օդանավակայան՝ Աթենքից Բելգրադ թռչելու: Կողք նայելով՝ մարդը տեսավ մայթով իրեն մոտեցող երկու դիմակավոր կերպարանք: Ճամպրուկը ձեռքին նա շրջվեց ու փախավ, իսկ դիմակավորները հրացաններն ուղղեցին նրա կողմը: Առաջին կրակոցը դիպավ ստամոքսին, և ապա պայթեցին ևս 3 կրակոց. վարազ որսալու գնդակներից մեկը խոցեց նրա ուսը, երկրորդը՝ փորը, իսկ երրորդը դիպավ գլխի ձախ կեսին՝ պոկելով դեմքի մի մասը՝ ունքից ներքև: Մարդը երերալով քայլեց 15 մետր ու ընկավ մայթին՝ աղբամանի կողքը: Սպանողները փոքր մեքենայով հեռացան՝ իրենց զոհին թողնելով մայթին փռված և ձեռքը, ասես իբրև հրաժեշտի նշան, գլխից այն կողմ մեկնած:

Զոհն, իհարկե, Հակոբ Հակոբյանն էր, իսկ մութ մայթին վախից դողացող կանանցից մեկը՝ դեռահասության տարիքից նոր դուրս եկած Ժանետ Հակոբյանը (օրիորդական ազգանունը՝ Մինասյան): Հակոբյանն ամուսնացել էր նրա հետ իր առաջին կնոջ՝ Մարիայի անհետանալուց հետո: 1986 թ. «Գաղտնի բանակի» զինակոչիկներից մեկը Հակոբյանի թղթերի մեջ տեսել էր մի սիրողական լուսանկար՝ Մարիան մեկնված արնաշաղախ անկողնու մեջ: Հնարավոր է, որ Հակոբյանը նրան Բուրջ Համուդում տեսել էր ուրիշ տղամարդկանց հետ և խանդի մոլուցքի պահին սպանել:

կամ գուցե նա վերացրել էր Մարիային՝ Մինասյանի հետ ամուսնանալու համար: Ինչ էլ որ եղած լիներ, նրա նոր, երիտասարդ կինն այժմ այրի էր:

Արդ, Հակոբյանը մեռած էր: Բայց ովքե՞ր էին քաշել ձգանները: Թուրքերը հազիվ թե կարողանային նրա տեղն իմանալ: Դա կամ դաշնակցականների, կամ հենց «Գաղտնի բանակի» նրա հակառակորդների ձեռքի գործն էր: Շիշկոյի տղաների վրա նույնպես կարող էր կասկած ընկնել, քանի որ նրանք ամիսներ շարունակ հետևել էին Հակոբյանին: Անկախ նրանից, թե ովքեր էին դիմակավոր մարդիկ, մի բան հստակ էր. վարազ սպանելու 4 գնդակները փակել էին Մոնթեի կյանքի մի երկար ու տխուր գլուխ: Նա 3 տարի ապրել էր Հակոբյանի կրնկի տակ ու ևս 5 տարի՝ նրա ստվերում: Այժմ, հանկարծ, Մոնթեի բանտախցում ազատության քամի փչեց: Ինչպես ասում է Թուրքական առածը, երբ Աստված ուզում է մի խեղճ մարդու երջանկացնել, նրան կորցնել և ապա գտնել է տալիս իր ավանակը:

Մոնթեի լուսավոր տրամադրությունը, սակայն, մթագնվեց, երբ նրա վաղեմի ընկեր Արա Թորանյանն այցելության եկավ Poissy ու հայտնեց, թե «Հայ պայքարն» այլևս չէր հրատարակվելու: Մի քանի տարի առաջ այդ թերթի շուրջը համախմբված մարդկանց դրոշի տակ հազարավոր ցուցարարներ էին քայլել: Օուլիի պայթյունից հետո, սակայն, խմբավորումը կորցրել էր անդամներ և համայնքի աջակցությունը: Նյութական օգնությունը բավարար չէր եղել նույնիսկ Մոնթեի ու ձերբակալված ուրիշ անդամների փաստաբաններին վճարելու համար: Գանձատուփերը դատարկ էին, և Հակոբյանի մահը հարմար պատճառաբանություն էր՝ թերթի տպագրությունը դադարեցնելու համար:

Լուրը Մոնթեին տխրեցրեց, բայց նա չէր կարող հակառակվել Թորանյանի որոշմանը: Հակոբյանը մեռած էր, սակայն այլևս չկար նաև «Հայ պայքարը»՝ այն «առաջադեմ շարժման» դրոշակակիրը, որի հետ Մոնթեն մեծ հույսեր էր կապում: Բանտի պատերը ճնշող թվացին ավելի քան երբևէ, և կալանավոր թիվ 9111-ը դարձավ ինքնամփոփ: Նա գիշերներն արթուն պառկում էր ու ականջ դնում հեռավոր գնացքների չչկներին:

Ինչպես իր հայրենիքի լեռները, Սեդան նույնպես նրան սպասում էր բանտի պատերից շատ հեռու: 1988 թ. օգոստոսի 23-ին, Սեդային ուղղված նամակում, նա գրեց սիրային մի ոտանավոր՝ վերնագրելով այն «Ցիշատակդ»: Որքան ինձ հայտնի է, դա տարբերական դպրոցից ի վեր Մոնթեի գրած երկու ոտանավորներից մեկն էր, և պիտի լիներ վերջինը.

Ամէն կողմ՝ պատ ու արգելք,
Ամէն կողմ՝ տխուր ու մութ,
Ամէն կողմ՝ պաղ ու թշնամի,

Բայց գտած եմ բացութիւն ու լոյս,
Գտած եմ ուրախութիւն ու յոյս,
Գտած եմ՝ քու յիշատակիդ մէջ:

Այդ օրերին նույնիսկ Մոնթեի կամքն ունեցող լավատեսի համար դժվար էր հույս փնտրել որևէ ուրիշ տեղ, քան միայն հուշերում: Բայց մինչ «առաջադեմ շարժման» հետ կապված հույսերը խորտակվում էին, իր մտապատկերների մի հեռավոր անկյունում Մոնթեն լույսի թույլ շող նկատեց: Ամիսներ առաջ, 1987 թ. վերջին, նա կարդացել էր լրագրերից մեկում տպված կարճ տեղեկություն՝ մի քանի հազար հայերի ստորագրած դիմումի մասին, որ վերաբերում էր Խորհրդային Միության մի ծայրամասային տարածքի: Դիմումը ստորագրողները պահանջում էին Հայաստանի հետ վերամիավորել 1700 քառակուսի մղոնանոց, հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որն Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կազմում էր, Խորհրդային Հայաստանից արևելք: Մոնթեն միացել էր այդ պահանջին, սակայն, Թուրքիայի սահմաններից ներս գտնվող հայրենիքի շատ ավելի մեծ հատվածի հետ կապված նրա գլխավոր նպատակների համեմատ, Լեռնային Ղարաբաղի խնդիրն սկզբում նրան երկրորդական էր թվացել: Այժմ, երբ գլխավոր նպատակի անիրագործելիությունն է՛լ ավելի ակներև դարձավ, նա նորից կենտրոնացավ Լեռնային Ղարաբաղի վրա:

Մոնթեն տնտղում էր իր բանտախուց եկող բոլոր թերթերը և, չհրկիզվող պահարան բացողի նման իր ռադիոյի պտուտակի վրա կռացած, այն վեր ու վար պտտելով որոնումներ անում կարճ ալիքների հատվածում: Խշշոցի և այլ աղմուկի մեջ լուրեր փնտրելով՝ նա մանր ձեռագրով իր գրպանի օրացույցում գրի էր առնում հեռու ու մոտիկ ռադիոկայանների հաղորդագրությունները Լեռնային Ղարաբաղում ծավալվող իրադարձությունների մասին: Նա նշեց, որ 1938 թ. փետրվարի 20-ին 40000 ցուցարարներ՝

Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերի մեկ-երրորդը, հավաքվել էին Ինքնավար Մարզի մայրաքաղաք Ստեփանակերտում՝ պահանջելու անջատում Խորհրդային Ադրբեջանից ու միացում Խորհրդային Հայաստանի հետ: Միաժամանակ, Հայաստանի մայրաքաղաք Երևանում հազարավոր ցուցարարներ, ոգևորված Խորհրդային առաջնորդ Միխայիլ Գորբաչովի гласность-ի քաղաքականությամբ, դուրս էին եկել փողոց՝ ի պաշտպանություն Ղարաբաղի իրենց հայրենակիցների: Շուտով հազարները դարձան տասնյակ հազարներ, հետո՝ հարյուր հազարներ, և բոլորը միաձայն գոչում էին. «Ղարաբաղը մե՛րն է, Ղարաբաղը մե՛րն է»:

Մոնթեն Լեռնային Ղարաբաղում երբեք չէր եղել, բայց անգիր գիտեր մարզի պատմությունն ու ազգագրությունը: 22 դար շարունակ հայերը, զանազան դժվարություններ հաղթահարելով, դոյատևել էին այդ լեռնային շրջանի հրաբխային հողի վրա: 1920 թ. նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունը՝ թրքախոս մի երկիր, հավակնել էր իր կազմում ներառել Լեռնային Ղարաբաղը, թեև այնտեղի բնակչության ավելի քան 95 տոկոսը հայեր էին: Երբ 1920-ական թվականների սկզբին հարավային Կովկասում Խորհրդային իշխանություն հաստատվեց, Ստալինը, Քեմալ Աթաթուրքի ազգայնամոլ Թուրքիային հաճոյանալու համար, Լեռնային Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին՝ փոխանակ այն միացնելու Խորհրդային Հայաստանին: Հետագա տասնամյակների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայերը բազմիցս անարդյունք դիմեցին Մոսկվա՝ ուշադրություն հրավիրելով իրենց կարիքների ու իրենց հանդեպ գործվող անարդարությունների վրա: Մարզի մի քանի ասֆալտապատ ճանապարհները շրջանցում էին հայկական գյուղերը, աշխատատեղերը շատ քիչ էին, էլեկտրականությունն ու հեռախոսակապը վատ էին աշխատում, իսկ հայերեն թերթերն ու դպրոցական դասագրքերը խիստ անբավարար էին: 1980-ականների վերջին արդեն Լեռնային Ղարաբաղի 160000 բնակիչների միայն 75 տոկոսն էր հայ. մնացյալը հիմնականում այնտեղ ոչ վաղուց վերաբնակված ազերիներ էին: Իր շատ հայրենակիցների նման, Մոնթեն հայ բնակչության համեմատական նվազումը մարզում համարում էր Ադրբեջանի վարած քաղաքականության հետևանք: Ազերիների նպատակը բնիկ հայերին այդ տարածքից դուրս մղելն էր:

Ցուցարարները Ստեփանակերտում ու Երևանում պահանջում էին Լեռնային Ղարաբաղն անջատել Խորհրդային Ադրբեջանից ու ընդգրկել Խորհրդային Հայաստանի կազմում: Նրանք իրենց պահանջը հիմնավորում էին ԽՍՀՄ Սահմանադրության՝ ազգային ինքնորոշման իրավունքին վերաբերող 70-րդ հոդվածով, մինչդեռ նրանց հակառակորդ ադրբեջանցի ցուցարարները վկայակոչում էին ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը, ըստ որի՝ որևէ Խորհրդային Հանրապետության տարածք չէր կարող փոփոխության ենթարկվել առանց այդ Հանրապետության համաձայնության: Այսպիսով, թշնամի կողմերը հիմնվում էին երկու անհաշտելի ու հավասարազոր՝ ազգային ինքնորոշման իրավունքի և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության սկզբունքների վրա:

Սեդան Երևանի իր հանրակացարանից միանում էր փողոցով անցնող ցուցարարներին, իսկ սենյակ վերադառնալուց հետո խուրձերով նամակներ էր գրում իր փեսացուին՝ նկարագրելով քաղաքի հրապարակներում տեղի ունեցող դեպքերը, և դրանք ուղարկում Poissy քանտ: Փետրվարի 26-ին նա զեկուցեց, որ Երևանի Օպերայի ցուրտ հրապարակում համարյա մեկ միլիոն հոգի էր հավաքվել՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին: Կրեմլը պատասխանում էր կլիշեներով՝ վկայակոչելով Կովկասի ժողովուրդների եղբայրությունը, իսկ հետո փողոցներ ուղարկեց խռովարարներից պաշտպանվելու համար վահաններ բռնած ու վախեցած երիտասարդ զինվորների: Խորհրդային իշխանությունների այդ քայլերը միայն ավելի էին գրգռում մարդկանց և փողոցներ բերում ավելի շատ ցուցարարների:

«Դեպքերը զարգանում են շատ ավելի արագ, քան ես կարող էի պատկերացնել», — գրում էր Մոնթեն 1988 թ. փետրվարի 27-ին՝ ասես վատ կանխազգացումով: Հաջորդ օրը, Երևանից 260 մղոն դեպի արևելք գտնվող ադրբեջանական Սումգայիթ թշվառ նավթային քաղաքում, ազերի կողոպտիչ ելուզակների ամբոխն սկսեց ծխնելույզների ստվերում պատուհանների ապակիներ կոտրել: 3 օր շարունակ նրանք թալանում էին հայերի բնակարանները, բռունցքներով ու մետաղյա ձողերով ծեծում կանանց: Ըստ պաշտոնական տվյալների՝ այդ օրերին Սումգայիթում սպանվեցին 28 հայեր:

Թեև ամբոխը Սումգայիթում հարձակվել էր նաև միլիցիայի վրա, Հայաստանում խոսում էին ոստիկանության ու ազերի ապատամբների միջև գործող գաղտնի համաձայնության մասին: Հայերն այժմ ազերիներին կոչում էին «թուրքեր»: Փետրվարի 29-ին Սումգայիթում պարետային ժամ էր հայտարարված, բայց անկարգությունները շարունակվում էին ուրիշ քաղաքներում: Ամբոխն Ադրբեջանում ապրող հազարավոր հայերի դուրս էր քշում իրենց տներից: Հեռուստաընկերությունները ցույց էին տալիս Երևանի օդանավակայանում ինքնաթիռից իջնող երերուն տատիկների՝ ծեծից կապտած, ուռած դեմքերով: Զարագործ թուրքի կերպարը դարձյալ ահագնանում էր: Իսկ ազերի խոսնակները Բաքվում հայտարարեցին, թե հայերը՝ «մի անբարոյական ու մազոխիստ» ժողովուրդ, իրենք էին իրենց դեմ վայրագություններ հարուցել, որպեսզի շահեին Մոսկվայի համակրանքը:

1988 թ. հուլիսին համընդհանուր գործադուլը Հայաստանը կաթվածահար էր արել, և Գորբաչովը ներքին զորքեր ուղարկեց Երևանի փողոցները: Տանկերը փակեցին Օպերայի հրապարակը, և քաղաքը ցնցվում էր երկնքում հայտնված ուղղաթիռների ձայնից: Ինչպես որ սպասվում էր, սակայն, Գորբաչովի՝ մաղդկանց ահաբեկելու փորձը հակառակ արդյունք ունեցավ: Հուլիսի 12-ին Լեռնային Ղարաբաղի Մարզի կառավարությունը հայտարարեց Խորհրդային Ադրբեջանից անջատվելու և Խորհրդային Հայաստանին միանալու իր որոշումը, իսկ ամառվա վերջին Սեղան տեղեկացրեց, որ ցուցարարներն Օպերայի հրապարակում, ձեռքներին հակախորհրդային լոզունգներ, տենդագին պահանջում էին Հայաստանի անկախացում ԽՍՀՄ-ից:

Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի ու Ադրբեջանի «եղբայրական» հանրապետությունների միջև ձգվող սահմանի երկայնքով փոխհրաձգություններ սկսվեցին: 1988 թ. վերջին Ադրբեջանից, հիմնականում Բաքվից, արդեն արտաքսվել էին 260000 հայեր: Եթե հաշվի առնենք կովկասյան ժողովուրդների թվաքանակների չարագուշակ հարաբերակցությունը, ապա կարող ենք նշել, որ մոտավորապես համարժեք քանակությամբ ադրբեջանցիներ էլ վտարվեցին Հայաստանից: Իր օրացույցի՝ սեպտեմբերի 2-ի էջում Մոնթեն մանր, կանոնավոր ձեռագրով գրեց, որ այլևս չէր կարելի հավատալ Հայաստանում гласность-ի առկայությանը, իսկ նոյեմբեր-դեկտեմբերի ընթացքում Սեղայի համար ձայնագրած նամակներից մեկում նա ցավով ասում է. «Իրոք, շատ վատ բաներ են կատարվում»:

Երբ թվում էր, թե ավելի վատ ոչինչ էլ չի կարող լինել, ողբերգությունը համալրվեց անասելի մի աղետով: 1988 թ. դեկտեմբերի 7-ին, 11:41, Հայաստանի գետինը բառիս բուն իմաստով բարձրացավ, և 90 վայրկյանի ընթացքում փուլ եկող պատերն իրենց տակ թաղեցին 25000 դիակներ: Երկրաշարժը հողին հավասարեցրեց Սպիտակը, իսկ Հայաստանի երկրորդ ամենամեծ քաղաքը՝ Լենինականը, գերեզմանոց դարձրեց: Կես միլիոն փրկվածներ, անապաստան, ձյան մեջ հավաքվեցին իրար գլխի: Իսկ Երևանում լուր տարածվեց, թե երկրաշարժի առիթով Ադրբեջանից չնորհավորական հեռագրեր են եկել:

Դրանից ավելի քան 1 տարի առաջ, 1987 թ. հոկտեմբերի 4-ի մի նամակում, Մոնթեն գրել էր. «Բանտում ամենքը երազում են երկրաշարժի մասին, որովհետև միայն այդպես կալանավայրի բոլոր պատերը միանգամից փուլ կգան»: Ավելի ուշ, 1988 թ. փետրվարի 13-ի մի նամակում, նա գրել էր. «Մենք այստեղ կարող էինք օգտվել մի գեղեցիկ, ուժեղ երկրաշարժից: Այն կլուծեր բանտի բոլոր պատերի հարցը: Տարօրինակ է, որ երկրաշարժի ենթակա տեղերում միջուկային էլեկտրակայաններ կառուցում են, բայց բանտեր՝ ոչ»: 1988-ի դեկտեմբերի 7-ին, սակայն, նա փոխեց իր կարծիքը երկրաշարժերի մասին: Կարծես թե կյանքերի, գույքյան միջոցների և ունեցվածքի կորուստը բավական չէր, Մոնթեն նաև մի լրացուցիչ սպառնալիք էր տեսնում: Երկրաշարժից 3 օր հետո գրած նամակում նա զգուշացնում էր, թե «վտանգ կա, որ մարդիկ կմոռանան Լեռնային Ղարաբաղի մասին»:

Սակայն, ինչպես պարզվեց, նույնիսկ երկրաշարժից փրկվածները Լեռնային Ղարաբաղը մոռանալու վտանգին ենթակա չէին: Երբ Գորբաչովը 3 օր անց հասավ աղետի գոտի, անտուն ու մրսած վերապրողները շրջապատեցին նրան: Նրանք բաց երկնքի տակ 3 սառնամանիքային գիշեր էին անցկացրել, նրանց կանայք, հայրերը, երեխաները դեռ թաղված չէին, և նրանք դեռ տնտղում էին իրենց քանդված տների աղբակույտերը: Բայց, Գորբաչովից օգնություն խնդրելու փոխարեն, մարդիկ նրան մեղադրում էին՝ Լեռնային Ղարաբաղի հարցում ճիշտ կողմնորոշում չունենալու համար:

— Ի՞նչ, — շնչահեղձ եղավ Գորբաչովը, — բոլորը սգի մեջ են, և ինձ տրված առաջին հարցը Նորից Ղարաբաղի մասի՞ն է:

Այնտեղ, երկրաշարժի գոտու ավերակների մեջ, բազմազգ երկրի գլխավոր քարտուղարը համոզվեց, թե որքան էր ինքը հեռացած իր իսկ ղեկավարած երկրի քաղաքացիներից և որքան քիչ էր տեղյակ նրանց հուզող հարցերին:

Այդ ժամանակ, հեռավոր Poissy բանտում, Մոնթեն իր փոքր խցում տենդագին հետ ու առաջ էր քայլում: Նա երազում էր մի բահ վերցնել ու աղետի գոտում միանալ փրկարարական որևէ ջոկատի: «Չեմ կարողանում հավատալ, որ այնքան ուժ ունեմ, այնքա՜ն բան կարող եմ անել և փակված եմ այս չորս պատի մեջ», — բողոքում էր նա Սեդային գրած մի նամակում: Մոնթեն չգիտեր, թե Poissy-ից երբ է ազատվելու և ուր է գնալու այնտեղից: Նա միայն գիտեր, որ, թեև իր ազատության օրն անպայման գալու էր, բայց դա շատ ուշ էր լինելու:

Համաձայն ֆրանսիական օրենքի, 4 տարի կամ դրանից պակաս բանտարկության դատապարտված կալանավորներին յուրաքանչյուր տարի շնորհվում է ազատազրկման կրճատում 3 ամսով: Ավելին՝ առնվազն 1 տարի արդեն բանտում անցկացրած բանտարկյալները կարող են վերջին տարվա կրճատման համար նախապես դիմել իշխանություններին: Այսպիսով, 4 տարով ազատազրկվածները, որպես օրենք, բանտում մնում են 3 տարի: Իմանալով այս օրենքը՝ Մոնթեն հաշվարկել էր, որ ինքն ապատ է արձակվելու ամենաուշը 1988 թ. դեկտեմբերին:

Բայց ո՞ւր էր նա գնալու բանտից ազատվելուց հետո: Ֆրանսիական օրենքն արգելում էր Մոնթեին վտարել այն երկրները, որոնք չէին ընդունի նրան, կամ որոնք ինքը կհրաժարվեր գնալ: Միացյալ Նահանգներն, իհարկե, ավելի քան պատրաստ էր նրան ընդունել: 2 տարի առաջ Մոնթեն Փարիզի Ամերիկյան դեսպանատնից նամակ էր ստացել, որով նրան, Ֆրանսիայի բանտից դուրս գալուց հետո, երաշխավորվում էր Միացյալ Նահանգներ մուտքի թույլտվություն (laissez-passer): Իսկ հետո, Մոնթեին ներկայացված մեղադրանքների հիման վրա, նրան նորից բանտ կնստեցնեին, այս անգամ՝ Միացյալ Նահանգներում: Եվ, որ առավել սպառնալից էր, ամերիկյան դատախազները նրան անպայման շատ ավելի լուրջ հանցանքների մեջ կմեղադրեին՝ ներառյալ ահաբեկչության ու սպանության:

Մոնթեն ու «Պաշտպանության կոմիտեն» պատրաստվում էին պայքարել Միացյալ Նահանգներ արտաքսման դեմ և փնտրում էին մի երկիր, որը կուզեր նրան ընդունել Ֆրանսիան լքելուց հետո: Թուրքիայի իշխանությունները հասկացրել էին, որ երջանիկ կլինեին նրան հյուրընկալել իրենց երկրում, բայց Մոնթեն պատրաստ չէր ընդունել այդ հրավերը՝ կախաղան բարձրանալու համար: Խոստումնալից ապաստան էր թերևս Հունաստանը: «Համահունական սոցիալիստական» կառավարության ներկայացուցիչներից մեկը Փարիզի մի ծանոթի ականջին շշնջացել էր, որ եթե Մոնթեն հայտնվեր Հունաստանում, ոստիկանությունը նրան չէր հետապնդի: Հակառակ այդ համերաշխությանը, սակայն, Աթենքը պատրաստ չէր նրան երկիր մտնելու թույլտվություն տալ: Ֆրանսիայի իշխանությունները, որոնց իղձը Մոնթեին իրենց «գլխից ռադ անելն» էր, չգիտեին՝ ինչպես վարվել:

Պարզվեց, որ Մոնթեի՝ դեկտեմբերին ազատվելու հույսը չափից ավելի լավատեսական էր: 1989-ի հունվարի սկզբին նա դեռ Poissy-ում էր, երբ այցելուների սրահում նրան հանդիպեց մի տարօրինակ պատգամաբեր: Այցելուն հայտնեց, որ եկել էր ուղիղ Միացյալ Նահանգների 41-րդ նախագահ Ջորջ Հ. Վ. Բուշի գրասենյակից, և որ վերադարձից հետո իրենց հանդիպման արդյունքի մասին դարձյալ զեկուցելու էր նախագահին: Ապա նա բացատրեց, որ հարցեր ուներ՝ կապված 1988 թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցած օդային աղետի հետ. Շոտլանդիայի Լոքըրբի քաղաքի վրա պայթել էր Pan Am 103 երթուղիով թռչող Boeing 747 ինքնաթիռը: Զոհվել էին բոլոր 259 ուղևորները, որոնցից 189-ը Միացյալ Նահանգների քաղաքացիներ էին: Ի լրումն, օդանավի անկման հետևանքով 11 հոգի զոհվել էին գետնին: Ամերիկյան իշխանությունները ձեռնամուխ էին եղել, «Միջազգային օդային տրանսպորտի անվտանգության կազմակերպության» տնօրեն Ռոդնի Ուալլիսի խոսքերով ասած՝ «պատմության ընթացքում տեղի ունեցած ամենամեծ մարդասպանության հեղինակների հետապնդմանը»: Այցելուն ուզում էր իմանալ, թե ովքեր էին պայթեցնողները և, մասնավորապես, ի՞նչ կապ ունեին նրանց հետ Աբու Նիդալի պաղեստինցի ռենեգատները: Եթե Մոնթեն իրենց հետ համագործակցեր, բացատրեց եկվորը, ապա ԱՄՆ-ի կառավարությունը նրան այլևս որևէ մեղադրանք չէր ներկայացնի, անմիջապես անձնագիր կտար ու Միացյալ Նահանգներ մուտք գործելու թույլտվություն: Մոնթեն դեռևս ԱՄՆ վերադառնալու ցանկություն չուներ, բայց առաջարկը գայթակղիչ էր: Միացյալ Նահանգների վավերական անձնագրով նա կարող էր Ֆրանսիայից ուղիղ Խորհրդային Հայաստան մեկնել՝ այնտեղ Սեդային

միանալու համար: Թերևս Մոնթեին հայտնի էին որոշ տեղեկություններ, որոնք այցելուն օգտակար կհամարեր. հետագայում նա Սեդային ասել էր, որ Լոքերբիի պայթյունը նման էր Աբու Նիդալի ձեռագրին: Բայց Մոնթեն չէր պատրաստվում օգնել Բուշի վարչակարգին և ոչ էլ անգամ խոստովանել, որ ինքը պայթյունից բոլորովին անտեղյակ էր: Նրան ատելի էին Լոքերբիի ահաբեկիչները, ինչպես որ՝ Օուլիի ահաբեկիչները, որովհետև նրանք անմեղ մարդկանց էին սպանել: Նույն պատճառով, սակայն, նա խորշում էր ամերիկյան բանակի գլխավոր հրամանատարից: 1981-82 թվականներին Լիբանանում Մոնթեն իր ձեռքերով օգնել էր փոսեր փորել՝ մեռած երեխաների խեղված մարմինները թաղելու համար, և դա հետևանքն էր այն ավերածության, որ գործել էին ամերիկյան արկերն ու սավառնակները: Նա շնչել էր այրվող մարմինների կույտի հոտը, և դա նույնպես ամերիկացիների ու նրանց իսրայելցի դաշնակիցների ձեռքի գործն էր: Նա իր կյանքի տարիներ էր նվիրել Հակոբյանի «մանրածախ» մսագործության դեմ պայքարին և այժմ պատրաստ չէր դառնալ Սպիտակ տան «մեծածախ» մսագործի համախոհը: Մոնթեն քար դեմքով նստեց, մինչև որ այցելուն խոսքը կավարտեր, ապա պատասխանեց, որ նրան ասելիք չունի, ոտքի կանգնեց ու գնաց դեպի իր խուցը:

1989 թ. հունվարի 10-ին Մոնթեին տեղեկացրին, որ 3 օրվա ընթացքում իրեն Փարիզից վտարելու են Նյու Յորք: Արտաքսման համար նախատեսված օրը նա «սիրելիներին» ուղղված մի նամակում գրեց. «Ես, որքան որ ուժերս ներեն, կընդդիմանամ ինձ Միացյալ Նահանգներ ուղարկելու փորձին»: Ապա նամակի տակ ավելացրեց. «Զգիտեմ, թե ինձ ինչ է սպասում, և չեմ կարող ասել, թե երբ կկարողանամ նորից գրել: Մինչ այդ բոլորին հաղորդեցե՛ք իմ լավագույն ցանկություններն ու սերը»:

Փարիզից մի ծանոթ, հույս ունեինք՝ ապահով հեռախոսագծով, ինձ տեղեկացրել էր, որ Մոնթեին ԱՄՆ արտաքսելու վտանգ էր սպառնում: Գլուխս կորցրած և այդ պահին ավելի լավ գաղափար չունենալով՝ ես քայլեցի դեպի Նիկարագուայի՝ անկարգ տեսքով ու աղմկոտ դեսպանատուն՝ Վաշինգտոնի New Hampshire փողոցի վրա: Նախնական պայմանավորվածություն չկար. գնում էի այնտեղ՝ եղբորս համար երկիր մտնելու թույլտվություն ու ապաստան խնդրելու: Մի երիտասարդ աշխատակից ինձ չփոթված լսեց այնքան, մինչև որ տվեցի 1-2 համակիր

Սանդինիստա պաշտոնյաների անունները, որոնց հետ տարիներ առաջ հարցը քննարկել էի Մանագուայում: Ապա աշխատակիցը գլուխն օրորեց. պատերազմի մեջ գտնվող իր ժողովուրդը չէր կարող ռիսկի դիմել՝ ապաստան տալով ամերիկյան մի քաղաքացու, որի դեմ պաշտոնապես մեղադրանքներ էին հարուցված: Հետո ես իմացա ԱՄՆ նախագահի խոսնակների տարածած այն լուրը, թե Սանդինիստաները, ի լրումն այլ հանցանքների, Նիկարագուան վերածել են ահաբեկիչ հայերի հենակետի: Նրանց դեմ ներկայացված այլ մեղադրանքների նման, սա նույնպես ակնհայտ սուտ էր:

Բարեբախտաբար, ես եղբորս համար միակ պայքարողը չէի. նրա կորած ընկեր Շիշկոն արդեն մի քանի ամիս գործի էր անցել: Մեկուկես տարի առաջ մարսելցին, գրավով ազատված լինելով, դատին չէր ներկայացել ու կեղծ փաստաթղթերով փախել էր Հունաստան, իսկ հետո՝ Հարավսլավիա (տարիների ընթացքում Շիշկոն առնվազն 47 անձնագիր էր ունեցել՝ մեծ մասը կեղծ): Էքս ան Պրովանսի մի դատարան Շիշկոյին, նրա բացակայությամբ, դատապարտել էր ցմահ բանտարկության: Մինչ Մոնթեի փաստաբաններն իրենց պաշտպանյալի՝ ԱՄՆ արտաքսման դեմ պայքարում էին օրինական ճանապարհով, Շիշկոն գտել էր պայքարի ավելի արդյունավետ ձև: 1984 թ. իր ժերբակալությունից ի վեր նա փորձել էր ֆրանսիացի պաշտոնյաներին բացատրել, որ ինքը, Մոնթեն ու իրենց ընկերները Հակոբյանին հակառակվել էին, որովհետև դեմ էին անմեղ մարդկանց դեմ ահաբեկչական հարձակումներին: Շիշելն ու իր ոստիկանները, սակայն, կառչած էին մնում այն կարծիքից, թե յուրաքանչյուր հայ մարտիկ ի բնե նույնքան արյունռուշտ ու դաժան էր, որքան Հակոբյանը, և՝ թե Շիշկոն ու Մոնթեն իրականում ոչ թե դեմ էին կույր ահաբեկչությանը, այլ փորձում էին այդ պատրվակով Հակոբյանից խլել «Գաղտնի բանակի» իշխանությունը: Այժմ մարսելցին որոշեց ոստիկանների ցինիզմն օգտագործել հօգուտ Մոնթեի:

Գործի դնելով իր ողջ դերասանական ձիրքը՝ Շիշկոն Հարավսլավիայի մի վճարովի հեռախոսից սկսեց մոնչալ ֆրանսիացի պաշտոնյաների վրա. եթե Մոնթեին ուղարկեն Միացյալ Նահանգներ, ապա փարիզեցիները «կլողան ֆրանսիական արյան մեջ»: Իսկ քանի որ ինքը՝ Շիշկոն, դատապարտված է ցմահ բանտարկության, իր համար միևնույն է՝ ահաբեկչության ժամանակ կմեռնի՞, թե՞ ողջ կմնա: Իրականում, անշուշտ, Շիշկոն ո՛չ այդպիսի գործողության մտադրություն ուներ, ո՛չ էլ միջոցներ: Բո-

լոր նրան ճանաչողները գիտեին, որ նա խառնվածքով հեռու է ահաբեկիչ լինելուց: Նրա ստի համոզչությունը հիմնված էր Ֆրանսիացի պաշտոնյաների բթամտության վրա, քանզի նրանք չէին կարողանում իրարից տարբերել «Գաղտնի բանակի»՝ Շիշկոյի ու Մոնթեի նման «հերձվածողների» և Հակոբյանի կամակատարների գործունեության դրդապատճառները: Նա, փաստորեն, իշխանություններին ասում էր հետևյալը. «Այո՛, դուք միշտ ճիշտ էիք. ես ու իմ ընկերներն անխիղճ ահաբեկիչներ ենք. հետևաբար, եթե մեր ընկերոջը չազատեք, արյունահեղություն կլինի»:

Այս ներկայացումից հետո Շիշկոն հեռախոսի մեջ դարձյալ մետաղդրամներ գցեց ու հավաքեց մի քանի համար, որոնք, ինչպես նա հույս ուներ, ոստիկանությունը լսում էր: Դրանցից մեկը պատկանում էր «Հայ պայքարի» մի ընկերոջ՝ պարոն Աբիկ Զ.-ին: Շինծու հրճվանքով Շիշկոն հայտարարեց, որ «բանակցությունները» հաջող էին ընթացել, և Մոնթեն շուտով պետք է գնար «մի տեղ, ուր ուղտերը փոքր են» (նա ակնհայտորեն ի նկատի ուներ Եմենը): Իրականում, իհարկե, Եմենի պաշտոնյաների հետ ոչ ոք չէր խոսել, և նրանք բանից անտեղյակ էին: Ապա նա նույնպիսի մութ ու կարճ տեղեկություններ տվեց Թունիսում «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» շտաբին և «Պաղեստինի ազատագրման դեմոկրատական ճակատի» գրասենյակներից մեկին (վերջին կազմակերպությունը Հարավային Եմենի կառավարության հետ սերտ կապերի մեջ էր): Կարելի է հեռախոսագծի մյուս ծայրին պատկերացնել այդ զանգերին պատասխանած քարտուղարների տարակուսած հայացքները: Պետք է ենթադրել, որ ոստիկանությունն այս զանգերից առնվազն մեկը լսել էր, որովհետև Ֆրանսիայի իշխանությունները եկան այն եզրակացության, թե Շիշկոն իրոք գաղտնի պայմանավորվել էր Եմենի պաշտոնյաների հետ, որ նրանք Մոնթեին, Ֆրանսիայից արտաքսվելուց հետո, ընդունեն:

Մոնթեն Poissy բանտից դուրս եկավ 1989 թ. հունվարի 16-ին, բայց քանի որ Ֆրանսիայից նրան վտարելու փաստաթղթերը դեռ լրացված չէին, և դեռ որոշված չէր, թե նա ուր պիտի գնար, նրան տարան արդեն ծանոթ՝ «Արդարադատության պալատի» մոտ գտնվող ոստիկանական բաժանմունք: Մոնթեի ազատ արձակման լուրն արագ տարածվեց, և «Պաշտպանության կոմիտեից» նրա ընկերները, ինչպես նաև՝ լրագրողներ ու համակիրներ, հավաքվեցին Île de la Cité-ում: Շատերը, շարք կանգնած, սկսեցին միաձայն երգել Շարլ Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան» (Pour toi Arménie) երգը:

Ոստիկանությունում Մոնթեի անցկացրած երկրորդ օրվա վերջում այցելությունների սենյակը վերածվել էր հավաքատեղիի: Սթափ կեցվածք ընդունելու ձգտումով՝ իշխանությունները որոշեցին նրան մեկուսացնել: Մոնթեին տեղափոխեցին Փարիզից դուրս գտնվող՝ վարազներով ու աղվեսներով բնակեցված Forêt St. Germain en Laye անտառապատ վայրում կառուցված Etape Coqvert շքեղ հյուրանոցը: Շնորհիվ Coqvert-ի մեկուսի դիրքի՝ Ֆրանսիայի իշխանություններն այն օգտագործում էին որպես տարանցիկ բնակատեղ՝ քաղաքական խոշոր դեմքերի համար (Ռիչարդ Նիքսոնից մինչև Այաթոլլա Խոմեյնի): Մոնթեն հաջորդ ութ օրերն անցկացրեց այնտեղ՝ սպասելով անհայտ ուղղությամբ իր մեկնումին:

Հյուրանոցում խիստ հսկողություն էր սահմանված: Ամեն անգամ, երբ Մոնթեն դուրս էր գալիս անտառում վազելու, դա վերածվում էր շքերթի: Առջևից գնում էր ոստիկանական մեքենան, հետո՝ ժանդարմներն ու մոտոցիկլետները, հետո՝ Մոնթեից 10 քայլ առաջ վազող ոստիկաններ, հետո՝ Մոնթեն՝ իր անքուղ կոշիկներով, և վերջում՝ վազող ուրիշ ոստիկաններ ու մոտոցիկլետներ: Այսպես ախորժակը բացելով՝ նախկին դատապարտյալն իր թիկնախմբով ուղղվում էր դեպի ռեստորան: Քանի որ վճարողը Հինգերորդ Հանրապետությունն էր, Մոնթեն պատվիրում էր ամենաթանկ խորտիկները և՝ մեծ քանակությամբ: Նա իր օմարը, forêt noir-ը և ընտիր գինին կիսում էր սեղանի սպիտակ սփռոցի շուրջը նստած ժանդարմների հետ:

Այդ ընթացքում Շիշկոն վճարովի հեռախոսներով շարունակում էր իր խառնակիչ գործունեությունը: Ֆրանսիայի իշխանությունների տակ իր վառած կրակը բորբոքելու նպատակով՝ նա զանգեց Փարիզ, 1-2 «Ճախ» լրագրողի, ու նրանց տեղյակ պահեց, որ Մոնթեն Coqvert-ում չվայտ կյանք էր վարում: «Ճախ» լրագրողներն իսկույն այցելեցին Փարիզի այն սրճարանը, որի մշտական հաճախորդներն էին Le Figaro, Parisienne Libre և Le Quotidienne de Paris թերթերի աշխատակիցները: Սպանիչ հեգնանքով նրանք իրենց «աջ» կոլեգաներին հայտնեցին սենսացիոն լուրը. մերձավորարևելցի հայտնի ահաբեկիչ Մոնթե Մելքոնյանը Ֆրանսիացի հարկատուի հաշվին ցոփության մեջ ապրում էր

Forêt St. Germain-ում գտնվող շքեղ հյուրանոցում: Լրագրողներից մեկը սրճարանից դուրս եկավ ու շտապեց դեպի Coqvert՝ ջանալով հյուրանոց թափանցել: Երբ մի ժանդարմ նրան ապտակեց, թերթերն այդ միջադեպի շուրջը չլսված աղմուկ բարձրացրին. ոստիկաններն ուտում-խմում են դատապարտյալ ահաբեկիչի հետ, իսկ հետո ապտակում այն ազնիվ լրագրողին, որն իր համաքաղաքացիներին ուզում է տեղեկացնել, թե ինչպես են մսխվում իրենց վճարած հարկերը: Ահազնացող սկանդալից անհանգստացած՝ Ֆրանսիայի իշխանությունները պատրաստ էին անտեսել բոլոր ձևականությունները: Նրանք միայն մեկ փափագ ունեին՝ բոպե առաջ գլուխներն ազատել Մոնթեից:

Այսպիսով, Շիշկոն, հեռու տեղում վճարովի հեռախոսների մեջ մեռաղադրամներ հուպ տալով՝ հնարամտությամբ գերազանցեց DST-ին ու Ֆրանսիայի իշխանություններին: 1989 թ. փետրվարի 5-ին Մոնթեն նստեց Փարիզից, Ջիդդայով ու Ադենով (Հարավային Եմեն), Ջիբութի թռչող օդանավը (այդ թռիչքը՝ Air France, 491, տեղի էր ունենում շաբաթը մեկ անգամ): Աստծո օգնությամբ նա պետք է ինքնաթիռից իջներ Եմենում: Եթե դա հաջողվեր, Մոնթեն պիտի կապվեր «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» դեսպանատան մի ներկայացուցչի՝ Մոհամմեդ Ալի Մոհամմեդի հետ, որից հետո մի ձև կգտներ՝ որևէ ճանապարհով Հայաստան հասնելու:

Երբ օդանավը վեր բարձրացավ Ֆրանսիայի թռիչքագոտուց, կարելի էր գուշակել դժպքերի հետագա ընթացքը: Վստահ լինելու համար, որ արտաքսյալը կժամանի Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Շիշկոն իր «տղաներից» մեկին հանձնարարել էր նրա կողքին լինել: Ուստի Մոնթեն, մտնելով ուշացող ինքնաթիռը, նստեց DST-ի ներկայացուցչի ու մի հին ծանոթի մեջտեղում: Պտիկն էր՝ նա, ով երեքուկես տարի առաջ ուղեկցել էր աչքերը կապած դատավոր Բագուրին դեպի ալպիական քաղաք Վուարոն՝ Մոնթեի վկայությունն արձանագրելու համար:

Երեք տարի ու երկու ամիս Ֆրանսիայի բանտերում անցկացնելուց հետո արտաքսյալը հաճույքով հրաժեշտ տվեց Հինգերորդ Հանրապետությանը: Նա միայն ափսոսում էր, որ DST-ն մերժեց վերադարձնել Հայաստանի ու Քրդստանի պատմության մասին իր գրառումները, որոնք բռնագրավվել էին ձերբակալության ժամանակ: Շուտով չարժիչների ձայնը մեկ օկտավ բարձրացավ, և

ինքնաթիռն օդի մեջ տարուբերվելով ուղղվեց դեպի մառախլապատ հորիզոնը:

Գլուխ 12. Դեգերումներ ավերակների մեջ

1988-ի սեպտեմբերին, երբ Poissy բանտում զգացվում էր աշնան զով շունչը, Մոնթեն գրել է. «Սա իմ վերջին ձմեռն է լինելու այստեղ: Ինձ պետք է գնալ մի ավելի տաք տեղ»: Հինգ ամիս հետո նրա ցանկությունն իրականանալու էր:

Մոնթեին ուղեկցող Գլտիկն ինքնաթիռում մռայլ նստեց նրա կողքը: Արթուր Դ.-ն բարձրահասակ էր, բայց «Գլտիկ» մականունը ստացել էր Շիշկոյի ամենաերիտասարդ «տղաներից» մեկը լինելու պատճառով: Սպիտակամաշկ, նիհար, երերուն մարմինը պսակող սև թավ մազերով, Ստամբուլում ծնված քաղաքաբնակ Գլտիկն այնքան էլ ոգևորված չէր իրեն տրված հանձնարարությամբ: Նրան չէր ուրախացնում տաղտկալի, տոթակեզ եմենում ժամանակ անցկացնելու հեռանկարը: Բայց հրամանը մնում էր հրաման:

Երբ օդանավը վերալիցքավորման համար վայրէջք կատարեց Ջիդդայում, Մոնթեն ու Գլտիկը զգաստ դիրք ընդունեցին: Համազգեստով մարդիկ էին մտել օդանավ և հայացքները հառել Մոնթեին: Նրանցից առնվազն մեկը եվրոպացի կամ ամերիկացի էր: Նրանք շարքով անցան նստարանների արանքով ու Մոնթեի DST ուղեկիցներին ներկայացան որպես Սաուդյան Արաբիայի ոստիկաններ, որոնց հրամայված էր նրան ձերբակալել: Ուղեկիցները գլխի հաստատակամ շարժումով մերժեցին: Նրանք էլ իրենց հրամաններն ունեին. պետք է Մոնթեին ուղեկցեին մինչև Ադեն ու թողնեին նրան այնտեղ, ոչ այլուր: Մինչ ֆրանսիացի ու սաուդյան պաշտոնյաները վիճում էին, Մոնթեն լուռ էր, քար դեմքով: Օդանավը Ջիդդայից մեկնեց մեծ ուշացումով՝ տանելով նաև Մոնթեին:

Ադենում վայրէջք կատարելուց քիչ անց տեղի ունեցավ հերթական խառնաշփոթը: Եմենի մաքսատան ծառայողները գլխարկների տակից գլուխներն էին քորում: Նրանց չէին զգուշացրել մուտքի արտոնագրից և անգամ անձնագրից զուրկ մի արտասահմանցու՝ «աջնաբիի» ժամանման մասին: Մոնթեի ունեցած՝ անձը հաստատող միակ փաստաթուղթը նրա ծննդյան վկայականի լուսապատճենն էր՝ անընթեռնելի գրություններով, որ նա շարունակ օդանավակայանի աշխատողների աչքն էր խոթում: Գլտիկը ճակատը տրորեց՝ զղջալով այն պահի համար, երբ ընդունել էր հանձնարարությունը: DST-ի ուղեկիցները վճռական էին. նրանք պետք է Ադենից մեկնեին նույն օրը, նույն օդանավով և առանց Մոնթեի: Օդանավակայանի ղեկավարությունը նույնպես ուզում էր գլուխն ազատել «աջնաբիից», և որքան շուտ՝ այնքան լավ: Այդ ընթացքում Air France-ի ինքնաթիռի օդաչուն թռիչքագոտու վրա անգործության էր մատնված, քանի որ հրաման էր ստացել հետաձգել թռիչքը, մինչև որ եմենցիներն ընդունեին կամ մերժեին Մոնթեին: Ներսում գտնվող ուղևորների համար օդանավը մի չիկացած կաթսա էր դարձել:

Բանակցությունները ձգձգվեցին. կեսօրից արդեն մի քանի ժամ անցել էր: Վերջապես դեսպանատնից պաղեստինցիներ եկան օդանավակայան և եմենցիներին բացատրեցին, որ նրանց անկոչ հյուրն՝ իր կոտրատված արաբերենով, պաղեստինյան դիմադրության մարտիկ էր: Եմենցիները կասկածանքով զննեցին Մոնթեին և հանձնեցին նրան պաղեստինյան պահակախմբին:

DST-ի ներկայացուցիչները շարժվեցին դեպի օդանավը, իսկ Մոնթեն ու Գլտիկը խցկվեցին Պաղեստինի դեսպանատան մեքենայի մեջ: Երբ Մոնթեն լսեց, թե ինչպես Ջիբութի թռչող օդանավը գետնից պոկվեց, նա հենվեց նստարանի թիկնակին, աչքերը փակեց ու թեթևացած շունչ քաշեց: Մեքենան սլացավ Ադենի միջով և ապա մոտ կես ժամ՝ անապատով: Մի կամարակապ մետաղյա դարպասի մոտ վարորդն ընթացքը դանդաղեցրեց: Պահակները նշաններով մեքենան հրավիրեցին ներս՝ ավազի վրա կառուցված ցածր բետոնե շինությունների մեջտեղում գտնվող մի քառակուսի տարածք: Մոնթեն դարձյալ զորամարզումների մի ճամբարում էր, այս անգամ՝ «Պաղեստինի ազատագրման դեմոկրատական ճակատին» պատկանող:

Այդ երեկո Մոնթեն ու Գլտիկը միացան ճամբարի մյուս բնակիչներին, որ խմբվել էին «մուլուխիեի» (քացախով ու սոխով եփած՝ հավով և փիփերթով փլավ) ծխացող սկուտեղի շուրջը: Գլտիկը հրաժարվեց ուտել այդ կպչուն զանգվածից և քիթը ծռմռեց Մոնթեի աչքի առաջ, որ ագահորեն բռներով կլանում էր կերակուրը:

Ցերեկային կիզիչ արևը, գիշերային մոծակներին ու «մուլուխիեն» մեկ շաբաթ վայելելուց հետո Գլտիկն ուրախ էր հաջորդ ետադարձ թռիչքով Փարիզ վերադառնալու համար: Փարիզում նա զանգահարեց Սեդային. Լոնդոն, ուր նա եկել էր՝ Մոնթեից լուրերի սպասելու: Մի քանի օր անց, փետրվարի 18-ին, շաբաթ, Սեդան առանց մուտքի արտոնագրի ժամանեց Ադենի օդանավա-

կայան: Ուղիղ սև մազերով, կարճահասակ ու ամրակազմ մի մարդ մոտեցավ Սեդային և ներկայացավ որպես Աբու Մահեր՝ Պաղեստինի հյուպատոս: Նա խոստացավ կազմակերպել Սեդայի հանդիպումն այն անձնավորության հետ, որին նա եկել էր տեսնելու: Նրանք մեքենայով գնացին Խոր Մաքսար շրջանում գտնվող՝ Պաղեստինի դեսպանատուն, որտեղ Աբու Մահերը Սեդային ներկայացրեց Պաղեստինի դեսպան Աբու Հանիին: Դեսպանը բացատրեց, որ Մոնթեն քաղաքից դուրս էր և Սեդային տանելու համար գալու էր առավոտյան: Սեդայի ժպիտն անհետացավ: Աստիճաններով իջնելիս նա դարձավ Աբու Մահերին. «Նա այստեղ է, ես այստեղ եմ, և չպիտի՞ նրան այսօր տեսնեմ»: Աբու Մահերը ժպտաց. «Ոչ ոքի չասես: Ես քեզ կտանեմ»:

Նրանք ուղևորվեցին անապատի միջով և Միր Կաթինի շողացող կամարի տակով երեկոյան ժամը 10-ի մոտ հասան ճամբարի դարպասին: Հաջորդ պահին նրանք լուսնի լույսի տակ ստվերներ նկատեցին՝ մի խումբ մարդկանց, որոնց մեծ մասը ծածանվող սպիտակ «աբայյե»-ներով էր: Հանկարծ Սեդան նկատեց լայն կանաչ շալվարով մեկին: Առանց մտածելու, նա մեքենայից դուրս ցատկեց աստղալից գիշերվա մեջ: Երբ Մոնթեն տեսավ նրան, նրանք իրար ընդառաջ վազեցին ու գրկախառնվեցին:

Անխոս ու ժպտադեմ, Աբու Մահերը զույգին տարավ Ադեն: Նա մեքենան ուղղեց դեպի մի ծովածոց, իսկ հետո հայտնվեց մի նեղ սալահատակ ճանապարհի վրա՝ շարժվելով դեպի «Տնակների կղզի» (Island of Chalets): Դա կրեմագույն տնակներով մի փոքր թերակղզի է՝ երեք կողմից շրջապատված Ադենի Մոցի կաթնանման կանաչ ջրով: Հաջորդ պահին Մոնթեն բացեց տնակի դուռը և ցած դրեց պայուսակները:

Մյուս առավոտ նախաճաշից հետո Մոնթեն ցատկեց պսպղացող ավազից և սուզվեց ջրի մեջ՝ երեքուկես տարվա մեջ առաջին անգամ:

— Գրո՛ղը տանի, — բացականչեց նա, — հրաշալի՛ է:

Նա գլխով հրավիրեց Սեդային միանալ իրեն, բայց ավազների միջի կատվաձկներն ու ալիքների վրա օրորվող մեդուզաները նրան վանեցին: Մոնթեն զարմացած նայեց. ափսոս, որ իր հարանացուն՝ Բեքաա հովտի այդ գյուղացի աղջիկը, երբեք լողալ չէր սովորել: Ինքը շուտով կսովորեցնի նրան, բայց երևի այս լողափը, իր ծովային անհրապույրը բնակիչներով, լավագույն տեղը չէ...

12 օր միասին անցկացնելուց հետո, Մոնթեն ստուգեց տնակի համար վճարվելիք գումարն ու ցնցվեց. հաշիվը կազմում էր 1200 դոլլար: Շփոթված՝ նա և Սեդան տեղափոխվեցին պաղեստինյան դեսպանատանն աշխատող մի երիտասարդ ռադիոլրագրողի բնակարանի դատարկ ննջարանը: Զույգը երեք սպունգի դոշակից մահճակալ պատրաստեց գետնին, և հաջորդ ամիս նրանք քնում էին այդ բնակարանում, լողանում փողոցի մյուս կողմում գտնվող լողափին, ճուկ պատրաստում և պապայայի հյութ խմում: Մոնթեի կյանքի վերջին 10 տարիների ընթացքում Եմենն արձակուրդ հիշեցնող միակ ժամանակահատվածն էր:

Այդ օրերից մեկն էր. ես 108 հատ 25 ցենտանոց մետաղադրամ գցեցի ԱՄՆ-ի մի համալսարանի գրադարանի հանրային հեռախոսի մեջ և Ադենի մի համար հավաքեցի: Հաջորդ պահին գծի մյուս ծայրում լսեցի լսափողին մոտեցող թփթփոցը և անմիջապես ճանաչեցի Մոնթեի ոտնաձայները:

— Քո հայերենը շատ լավացել է, — ասաց նա անկեղծ գոհունակությամբ:

Նրա ձայնն ավելի երիտասարդ ու խանդավառ էր հնչում, քան 8 տարի առաջ, երբ վերջին անգամ ես այն լսել էի: Խոսելու շատ բան կար, և ես վախենում էի կորցնել անկայուն հեռախոսակապը, ուստի արագ էի խոսում և աշխատում կենտրոնանալ տմեռնահրատապ հարցի վրա, այն է՝ ճամփորդելու համար անհրաժեշտ գումարն ու այն իրեն հասցնելու հնարավորությունները:

Մոնթեն անհամբերությամբ նորից ակտիվ մարտիկ էր ուզում դառնալ, բայց Եմենը շատ հեռու էր Թորանյանի ընկերներից, Շիշկոյի տղաներից և Ֆրանսիայի մյուս բարեկամներից: Մոնթեն հստակ գաղափար չուներ հետագա քայլերի մասին, բայց առնվազն գիտեր, որ պետք էր հնարավորին չափ շուտ հին ընկերների հետ կրկին համախմբվել: Հարկավոր էր, Խորհրդային Հայաստանում Ղարաբաղյան շարժման արագընթաց վերելքի պայմաններում, հանդիպել, վերանայել իրենց նպատակներն ու մարտավարությունը: Թերևս պետք էր մի նոր պարբերական հիմնել կամ ստեղծել մի նոր կազմակերպություն:

Մոնթեն ու Սեդան իրենց ունեցած-չունեցածը տեղավորեցին երկու մեծ ճամպրուկի և երկու պայուսակի մեջ, և Աբու Մահերը նրանց օդանավի տոմսերի համար 300 դոլլար պարտք տվեց: Եմեն գալուց երկու ամիս անց Մոնթեն ու իր հարանացուն մեկնեցին Զեխոսլովակիա: Սեդան ճամփորդում էր իր լիբանանյան

անձնագրով, իսկ Մոնթեի հարցը շատ լուրջ էր. միակ անձնագիրը, որ նրան հաջողվել էր ձեռք գցել, իտալական կանաչ մի կեղծիք էր՝ այնքան անփութորեն ձևափոխված, որ անօգտագործելի էր: Նա նաև ուներ անգլերեն մի ֆաքս՝ Եմենում Պաղեստինի ներկայացուցչությունից, որի մեջ խնդրվում էր այն կրող անձին հնարավորին չափ արագ հասցնել Չեխոսլովակիայի մայրաքաղաքում գտնվող «Պաղեստինի ազատագրման կազմակերպության» գրասենյակ:

Երբ «Մալև ավիաուղիների» օդանավը վայրէջք կատարեց Պրագայում, Պաղեստինյան ներկայացուցչության մի աշխատակից ողջունեց նրանց օդանավակայանում և տարավ քաղաքի կենտրոնում գտնվող մի փոքր բնակարան: Մյուս օրը նրանք Մուստեկ հրապարակի մետրոյի կայարանից քայլելով գնացին «Ամբասադոր» հյուրանոց՝ մի հին ընկերոջ հանդիպելու: Մոնելով նախասրահ՝ Մոնթեն մի ծանոթ ձայն լսեց. «Աբու Սինդի՛»: Նա գրկախառնվեց Շիշկոյի հետ, և մարսելցին սեղմեց Սեդայի ձեռքը:

Մյուս օրը երեք փախստականները զբոսնելով գնացին մի այգի՝ քննարկելու իրենց հաջորդ քայլը: Շիշկոն փորձել էր գաղտնի համաձայնության գալ Հունաստանի՝ իրեն հակաիմպերիալիստական հայտարարող «Համահունական սոցիալիստական շարժման» (PASOK) կառավարության հետ: Նա խնդրել էր PASOK-ի մի պաշտոնյայի՝ մի կարճ ժամանակով իրենց քաղաքական ապաստան տալ Հունաստանում, որպեսզի ինքն ու Մոնթեն կարողանային շունչ քաշել և կազմակերպել իրենց մեկնումը հաջորդ նպատակակետ, ինչպես իրենք հույս ունեին՝ Երևան:

— Մենք պետք է կրկին գործի անցնենք, — շարունակ կրկնում էր Մոնթեն, — մենք պետք է առաջ գնանք:

Նախքան հույների հետ բանակցություններն ավարտելու համար Աթենք վերադառնալը՝ Շիշկոն Մոնթեին ցույց տվեց հարավսլավական Դուբրովնիկի տուրիստական մի գրքույկ: Այնտեղ ընդհատակ անցնելու գաղափարը ճիշտ էր թվում. ապրուստը Հարավսլավիայում էժան էր, և նրանք կասկածելի չէին թվա զբոսաշրջիկներով լի Դուբրովնիկում: Հարավսլավիա մեկնելուց առաջ Մոնթեն իր իտալական խոտանը հանձնեց մի արաբ ընկերոջ՝ փոխանակելով այն խնամքով կեղծված իրլանդական անձնագրի հետ: Հաջորդ մեկուկես տարվա ընթացքում նա ճամփորդելու էր

մի անհավանական անունով՝ Տիմոթի Շոն Մաք-Քորմիք, ծնված 1954 թ. փետրվարի 8-ին, Դուբլինում:

1989 թ. մայիսի 20-ին Մոնթեն ու Սեդան Թուան Բելգրադ և, եբիտասարդական հանրակացարանում 1-2 գիշեր մնալուց հետո, ավտոբուսով գնացին Դուբրովնիկ՝ դարձյալ 2 գերբեռնված ճամպրուկ քարշ տալով: Այնտեղ, Ադրիատիկ ծովի ափին, Մոնթեն վերջապես հնարավորություն ունեցավ վերանայելու տարիների ընթացքում իր գրած հոդվածներն ու ակնարկները: Նա ուզում էր դրանք հրատարակել մեկ՝ ազգային հարցին և հայերի պայքարին նվիրված գրքով:

Կյանքը Դուբրովնիկում համեմատաբար էժան էր, բայց շուտով դրամի արժեզրկումն սկսեց բացասաբար ազդել Մոնթեի խղճուկ բյուջեի վրա: Եվ քանի որ դրամական օգնությունը Ֆրանսիայից ժամանակին տեղ չհասավ, նա ու Սեդան գազով ըմպելիքների շշեր հավաքեցին այգիներում և դրանք հանձնեցին մի փոքրիկ խանութի՝ փոխարենն ստանալով մի տուփ խխունջաձև մակարոն: Հաջորդ օրը նրանք դարձյալ շշեր հավաքեցին, բայց երբ իրենց ավարը տարան նույն խանութը, պարզ դարձավ, որ դրանք այդտեղ գնված ըմպելիքների շշեր չէին, և խանութպանը նրանց դուրս վռնդեց: Քաղցած ու հիասթափված՝ զույգը կանգ առավ մի փոքր առվի՝ հիանալով ցուցափեղկում դրված՝ թարմությունից շոգարձակող բուլկիներով: Մոնթեն հարցրեց, թե ինչ արժեն դրանք՝ մի բուռ մանր հանելով գրպանից ու հաշվելով: Պարզվեց, որ դրամը բավարար չէր. նա ներողություն խնդրեց և շուռ եկավ՝ հեռանալու: Հանկարծ հացթուխը վազեց նրանց հետևից, առանց հաշվելու վերցրեց Մոնթեի մանրադրամը և նրա ձեռքը մի բուլկի դրեց:

Վերադառնալով իրենց սենյակ՝ նրանք հիշեցին, որ նախասրահում տեսել էին լողափի իր սրբիչը կորցրած մի կանադացի զբոսաշրջիկի: Սեդան բացեց իր ճամպրուկն ու հանեց երկու սրբիչ, որոնք մի ընկերուհի տվել էր իրեն՝ որպես հարսանեկան վաղաժամ նվեր: Մոնթեն թակեց զբոսաշրջիկի դուռը և, չփոթված ժպիտը ծածկելու համար սրբիչը մինչև քիթը բարձրացնելով, առաջարկեց գնել այն: Ահա թե ուր էր նա հասել՝ 10 տարի չարչարանքից, լկանքներից ու վանգներից հետո՝ սրբիչ վաճառել մի զբոսաշրջիկի: Որքան էլ այս իրավիճակը տխուր էր, այն ծիծաղաշարժ թվաց նրան:

Երբ Մոնթեն ավարտեց ազգային հարցին նվիրված իր ակնարկների խմբագրումը, թերթերը երկու տակ ծալեց և մի վստահելի հասցեով ուղարկեց ինձ՝ Սան Ֆրանցիսկո: Ես նյութերն ստացա 1989 թ. հունիսի 12-ին ուղարկված չորս մեծադիր դարչնագույն ծրարներով, որոնց վրա փակցված էին Դուբրովնիկի դրոշմանիշեր: Մոնթեն խնդրում էր ակնարկները հրատարակել մի գրքով՝ ընկերների շրջանում ավելի լուրջ քննարկումներ և միասնություն քաջալերելու նպատակով: Ես գիրքը վերնագրեցի՝ «Պայքարելու իրավունքը»: Քանի որ մի քանի ավելի երկար ակնարկներ գրված էին հեղինակակիցների հետ, Մոնթեն խնդրեց, որ ես գիրքն անանուն հրատարակեմ կամ մի հավաքական հեղինակի անունով: Նա չէր ուզում, որ իր անունը տպվեր որպես գրքի միակ հեղինակ. «Այն, ինչ ես մտածում եմ, էական է, – բացատրեց նա. – գիրքը պետք է գաղափարներ ու տեղեկություններ ներկայացնի, ոչ թե այս կամ այն անձնավորության խոսափողը դառնա»:

Չգիտեմ, թե ինչու զանց առա նրա հրահանգները: Գուցե կարծում էի, որ դրանք նրա ծայրահեղ համեստության հետևանք էին: Ի վերջո, գրքի հեղինակը հստակորեն Մոնթեն էր. ամբողջը գրված էր նրա՝ սարդոստայնի նման բարակ ձեռագրով, և ամեն մի էջ լցված էր նրա չոր ու ցամաք արձակով: Միայն հետագայում ես հասկացա, որ լուրջ սխալ էի գործել, բայց արդեն ուշ էր: Քանի որ ես արհամարհել էի Մոնթեի խնդրանքը և նշել միայն նրա՝ իբրև միակ հեղինակի անունը, գիրքը հրահրեց Մոնթեի ընկերների նոսրացող շարքերի մեղադրանքները: Ընկերները նախատեցին նրան՝ ամեն ինչ իրեն վերագրելու համար, երբ ինքը միայն մասամբ կարող էր հեղինակ համարվել:

Երբ Մոնթեն 1989 թ. ամռան սկզբին ուղարկեց խմբագրված ակնարկներով ծրարները, նա ավելի քան թեթևություն զգաց: Առանց իր ճամպրուկի մեջ հատ, մեղադրանքի բուն հանդիսացող ձեռագրի, այժմ մի քիչ ավելի հեշտ էր ճամփորդելը: Նա գիտեր, որ չի կարող մի տեղում երկար մնալ. DST-ն, Interpol-ը և ո՞վ գիտե՝ էլ ով հետևում էին նրան: Դուբրովնիկից նա ու Սեդան գնացին Դալմատական ծովափ և նստեցին լաստանավ, որ տանում էր Հվար կղզի: Այնտեղ, ինչպես լսել էին, իրենք կարող էին մի մասնավոր տանն էժան սենյակ վարձել. նման գործարքը սերբո-խորվաթերեն կոչվում է՝ soba:

Հվարում իրենց առաջին առավոտյան Մոնթեն ու Սեդան գնացին մի ավազոտ լողափ՝ վերսկսելու լողի դասերը: Դրանք բավական լավ էին ընթանում, չնայած Սեդան մեծ առաջխաղացում չէր ցուցաբերում ազատ ոճում: Հաջորդ օրը նրանք ավելի հեռու գնացին՝ գտնելով մի մեկուսի լողափ, որտեղ կարելի էր մերկ լողալ, և դրանից հետո ամեն օր գնում էին այնտեղ: Մի անգամ, երբ սննդի փողը սպառվելու վրա էր, նա կանչեց Սեդային և ցույց տվեց մի սիրունիկ ձուկ, որ մնացել էր տեղատվությունից գոյացած ջրափոսի մեջ:

– Երևում է՝ մենք այսօր ընթրիք կունենանք, – հրճվեց Մոնթեն:

Նա արդեն բացատրել էր Սեդային, թե ինչպես կարելի է ձկանն արագ սպանել՝ քիթն ավազին սեղմելով: Նա բռնեց ձկանը, պպզեց ու նայեց նրա աչքերի մեջ: Սեդան մի քայլ ետ գնաց ու աչքերը մի կողմ թեքեց, բայց երբ մի ակնթարթ հետո նա նայեց Մոնթեին, ապա տեսավ, որ իր փեսացուն իրեն է մոտենում դատարկ ձեռքերով: Նա բաց էր թողել ձկանը ծովի մեջ:

– Թո՛ղ գնա ու իր կյանքն ապրի, – ասաց Մոնթեն՝ ցուցադրելով իր խոշոր սպիտակ ատամները, և այդ երեկո նրանք քաղցած մնացին:

Օրեցօր Մոնթեն ավելի անհարմար էր զգում, որ փախստականի իր կյանքն ապահովելու համար ստիպված էր դրամ ստանալ ընկերներից: Ամիսներ շարունակ սահմաններ կտրելով ու երկրերկիր թափառելով՝ նա ավելի մոտ չէր Հայաստանին, քան երբ մեկնել էր Ֆրանսիայից, և ամառվա վերջում նրա գրպանում ոչ մի ցենտ չկար: Հոկտեմբերի 8-ին ինձ գրած նամակում նա, ամաչելով, խնդրում էր «մոտ 3000 դոլլար»: Խնդրանքը զարմացրեց ու շփոթեցրեց ինձ. եղբայրս նախկինում երբեք այդպիսի գումար չէր խնդրել իր ընտանիքից, նույնիսկ պարտքով: Եթե նա այժմ խնդրում էր, ուրեմն հրատապ անհրաժեշտություն կար:

Այդ աշուն Շիշկոն Հարավսլավիայում հանդիպեց Մոնթեին՝ քննարկելու իրենց ընկերներին մի նոր կազմակերպության մեջ վերամիավորելու հարցը. այն պիտի կոչվեր «Հայաստանի ազատագրման հայրենասիրական ճակատ» (Patriotic Front for the Liberation of Armenia, PFLA): Մոնթեն արդեն վաղուց հրաժարվել էր իր այն «հիմար» ու «շատ միամիտ» գաղափարից, որն առաջ էր քաշել 1985 թ. Փարիզի նեղ սենյակում տեղի ունեցած ժողովում՝ սփյուռքով մեկ ցրված տեղական խմբերը միավորել մեկ կենտրո-

նական ղեկավարության ներքո: Այժմ ինքն ու Շիշկոն համամիտ էին, որ շատ ավելի լավ կլիներ սփյուռքի տեղական խմբակները միավորել ազատ կազմակերպված «Հովանոցային» մի կառույցի մեջ՝ ընտրովի համակարգող կոմիտեով, որն ուղղորդելու էր օգնությունը Լեռնային Ղարաբաղում և, ի վերջո, նաև Թուրքիայի նվաճած Հայաստանում կովող առաջապահներին: Ավելի ազատ կազմակերպությունն ապահովելու էր յուրաքանչյուր տեղական խմբի անկախությունը և միևնույն ժամանակ բարձրացնելու «արդյունավետությունը պայքարի որոշակի՝ անհրաժեշտաբար կենտրոնացված ոլորտներում», մասնավորապես՝ զինված պայքարի:

Մշտապես զգուշանալով ոստիկանության հետապնդումից՝ Մոնթեն ու Սեդան Բուդապեշտ մեկնող գնացք նստեցին, իսկ Շիշկոն վերադարձավ Հունաստան՝ օգտագործելով իր 47 անձնագրերից մեկը: Հունգարիայի մայրաքաղաքում Մոնթեն թերթերի հաղորդագրություններ էր կարդում, որոնք նրա հոգին ալեկոծում էին՝ ինչպես Գորբաչովի հանդեպ զայրույթից, այնպես էլ հուսահատությունից, որ ծավալվող իրադարձություններին ինքը չի կարող մասնակցել: 1990 թ. հունվարի 13-14-ին Ադրբեջանը ցնցվեց հակահայկական անկարգությունների մի նոր ալիքից, այս անգամ՝ մայրաքաղաք Բաքվում: Ֆաշտոնական տվյալներով՝ մարդասպանները ծեծել, վառել ու ուղի տակ դցելով սպանել էին 56 հայի, իսկ տասնյակ-հազարավոր մարդկանց վռնդել իրենց տներից: Հունվարի 20-ին, Գորբաչովի հրամանով, քսանհազարանոց խորհրդային զորք մտավ քաղաք: 150 հոգի, հիմնականում՝ ադրբեջանցիներ, սպանվեցին, հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին: Ի պատասխան խորհրդային ղեկավարի՝ ամբոխին վախեցնելու այդ փորձին, ադրբեջանցիներն իրենց տարածքում լիովին շրջափակեցին Հայաստան տանող երկաթուղային ու ավտոճանապարհները, իսկ Բաքվի Ազատության հրապարակում ցուցարարների շարքերն ավելի բազմամարդ էին դառնում:

1 ամիս Հունգարիայում թաքնվելուց հետո և այդ երկիր մտնելու արտոնագրի ժամկետը լրանալուց անմիջապես առաջ Մոնթեն սկսեց անհանգստանալ, որ սահմանն անցնելիս կարող էին Սեդային իր հետ ձերբակալել: Ճիշտ է, նրա իռլանդական անձնագիրը լավ կեղծիք էր, բայց 1 տարի բազմիցս սահմաններ անցնելուց հետո սահմանապահները կասկածանքով էին նայում անձնագրի էջերը ծածկող զանազան ժամկետանց արտոնագրերի

գույնզգույն խճանկարին: Նա որոշեց ապահովության համար Զեխոսլովակիա գնալ մենակ, իսկ Սեդան պետք է գնացք նստեր հաջորդ օրը: 1990 թ. հունվարի վերջին օրը Մոնթեն տրամվայ նստեց ու մեկնեց երկաթուղային կայարան: Երբ տրամվայը տեղից շարժվեց, Սեդան մի շիշ ջուր լցրեց ճանապարհին և շշնջաց.

— Ջրի պես գնա՛, ջրի պես վերադարձի՛ր:

Բարեմաղթանքի այս ծեսն ընդունված է Հայաստանում. այն հեթանոսական անցյալի մնացուկ է:

Մյուս օրը նրանք հանդիպեցին Պրագայի միջազգային փոստատանը և սենյակ վարձեցին քաղաքի ծայրամասում: Երկու շաբաթ անց Սեդան Մոսկվա մեկնող գնացք նստեց, իսկ այնտեղից թռավ Երևան: Նա վճռել էր ամեն հնարք գործադրել՝ իր փեսացուին Հայաստան տանելու համար:

Մայիսի 15-ին Մոնթեն վերադարձավ Հարավսլավիա և 1 ամիս անցկացրեց հերթական էժան սենյակում՝ Դուբրովնիկից հարավ գտնվող Բուդվա քաղաքում: Այնտեղ, սև ավազով լողափին, նա ավարտեց իր՝ երկար հետաձգված «Ինքնաքննադատությունը»: Երբ այն հրատարակվեց լուսապատճենված գրքույկի տեսքով, լավ ընդունելություն չգտավ: Արա Թորանյանին թվաց, թե դա հրապարակային մազոխիզմի նմուշ էր, իսկ Շիշկոն կարծիք հայտնեց, թե այդ գրքույկով Մոնթեն ինքնադովազդման փորձ էր անում: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես չհասկացա, թե ինչու էր Մոնթեն այդքան ժամանակ ու եռանդ ծախսել յոթ տարի առաջ «Գաղտնի բանակի» պառակտման երկարաշունչ նկարագրության վրա, հատկապես այն օրերին, երբ երկրաշարժից փրկվածները հյուսիսային Հայաստանում դեռ եղունգներով իրենց համար ճանապարհ էին բացում փլատակների միջից, իսկ Լեռնային Ղարաբաղում որսորդական հրացաններով փոխհրաձգությունը սպառնում էր վերաճել մեծ պատերազմի: Ամեն դեպքում, «Ինքնաքննադատությունը» լիովին համապատասխանում էր Մոնթեի բնավորությանը. նա հնազետ էր և մտածում էր ապագա սերունդների դատաստանի մասին, ուստի պետք էր նրանց ճշմարիտ տեղեկություններ հաղորդել:

Երևանում Սեդան գիտեր, որ իր փեսացուի ու նրա՝ գնալով ավելի տաքարյուն դարձող ընկեր Շիշկոյի դրամի և ժամանակի պաշարներն սպառվելու վրա էին: Պետք էր երկուսին էլ անհապաղ Հայաստան բերել, քանի դեռ Interpol-ը նրանց չէր բռնել, կամ քանի դեռ նրանք չէին դժտվել: 1990 թ. հունիսի սկզբին Սե-

դան մտավ «Հայոց համազգային շարժման»՝ ՀՀՇ-ի շտաբի դեղին կրաքարից շենքը Բաղրամյան պողոտայի վրա: Նա պետք է հանդիպեր Հայաստանի անկախացմանն ուղղված շարժման պարագլուխներից մեկին՝ Խաչիկ Ստամբոլցյանին: Գուցե վերջինս կամ նոր ազգային առաջնորդներից մեկ ուրիշն օգներ Մոնթեին ու Շիշկոյին՝ գալ Հայաստան:

Իր գիսախռիվ ալեխառն մորուքով՝ Ստամբոլցյանը նման էր սպորտային բաճկոն հագած հինկտակարանային մարգարեի: Նա Սեդային ներկայացրեց Բաբկեն Արարքցյանին՝ «Ղարաբաղ կոմիտեի» մեկ այլ անդամի, այնուհետև՝ մի բարձրահասակ, նիհար մարդու, որին Սեդան անմիջապես ճանաչեց. դա Լևոն Տեր-Պետրոսյանն էր՝ ՀՀՇ-ի՝ ժողովրդականություն վայելող ղեկավարը: Տեր-Պետրոսյանն էլ ճանաչեց նրան. 6-7 տարի առաջ Սեդան նամակներ ու գրքեր էր բերել Բեյրութի նրա ազգականներից:

Մոնթեի նման, Տեր-Պետրոսյանն էլ կահույքագործի որդի էր: Նրա հայրը՝ վարպետ Հակոբը, հականացիստ պարտիզան էր եղել և Սիրիայի ու Լիբանանի «Միացյալ կոմունիստական կուսակցության» հիմնադիր անդամ: 1946 թ. նա Հալեպից (Սիրիա) տեղափոխվել էր Խորհրդային Միություն: Այնուհետև վարպետ Հակոբն աշխատել էր կահույքի ֆաբրիկայում և երևանյան մի համեստ բնակարանում հինգ երեխա մեծացրել: Իր երրորդ որդու՝ Լևոնի մասին խոսելիս՝ վարպետ Հակոբը հեգնական ժպտում էր. «Նա կոմունիզմին դեմ է, իսկ ես կոմունիստ եմ»: Երբ Սեդան 1991 թ. այցելեց Տեր-Պետրոսյաններին, վարպետ Հակոբը հարցրեց.

— Ե՞րբ ես Մոնթեին բերելու տեսնենք:

Մեռնելուց առաջ այդ բարձրահասակ ու սիրալիր մարդը՝ ութսունամյա ծերունին, ցանկացավ հանդիպել այն կալիֆոռնիացուն, որը կիսում էր ապագա անդասակարգ ու անբանակ հասարակության մասին իր երազանքը: Այդ ժամանակ Երևանում հարկավ քիչ էին նման երազողները:

Լևոն Տեր-Պետրոսյանն արդեն գիտեր Մոնթեի ու Շիշկոյի դժվար կացության մասին. երբ մեկ տարի առաջ Փարիզ էր այցելել, Արա Թորանյանը երկու ժամ խոսել էր նրա հետ՝ համոզելով, որ փախստականների համար ապաստան ապահովի: Այժմ, ամիսներ անց, Սեդան հավատիացրեց Տեր-Պետրոսյանին, որ Մոնթեն ու Շիշկոն պիտանի կլինեին Հայաստանին, եթե նրանց թույլ տրվեր մտնել երկիր: Մի պահ մտածելուց հետո, Արարքցյանն առաջարկեց պարզապես փախստականների կեղծ անձնագրերում նշված անուններով պաշտոնական հրավերներ ուղարկել նրանց: Տեր-Պետրոսյանին այդ գաղափարը դուր եկավ, և նա խոստացավ գործն արագ գլուխ բերել:

Սեդան հանդիպումից դուրս եկավ սրտապնդված, բայց որքան շատ էր մտածում Արարքցյանի ծրագրի շուրջ, այնքան ավելի անհանգստանում էր: Նախ, ՊԱԿ-ը կարող էր հետաքրքրվել Մոնթեով, եթե պարզվեր, որ Տեր-Պետրոսյանն ու նրա հակախորհրդային գործակիցներն են հրավիրել նրան Հայաստան: Մյուս կողմից՝ Տեր-Պետրոսյանը, Մոնթեին այդ լավությունն անելուց հետո, կարող էր սահմանափակել նրա անկախությունը: Այլընտրանք, սակայն, չկար, և Մոնթեն ու Շիշկոն ստիպված էին ապավինել Արարքցյանի ծրագրին:

Սեդան իր զարդերը վաճառեց, տոմս գնեց և թռավ Մոսկվա: Այնտեղից նա գնացքով գնաց Հարավսլավիա՝ Արարքցյանի ծրագիրը քննարկելու և հաջորդ քայլին դիմելու համար: Մոնթեն ու Շիշկոն նրան Բելգրադի կայարանում դիմավորեցին հունիսի 14-ին: Երկուսի տեսքն էլ ուրախ չէր: Նրանք քննարկեցին Արարքցյանի ծրագիրը մինչև մայրամուտ, և հանկարծ Շիշկոն, Սեդայի համար անսպասելի, հրաժեշտ տվեց նրան ու նստեց Բելգրադից երեք հարյուր մղոն դեպի արևմուտք գտնվող Ռիյեկա քաղաքը մեկնող գնացքը: Երբ գնացքը շարժվեց, Մոնթեն բացատրեց, որ իրենք մինչ այդ խիստ վիճաբանել էին «Պայքարելու իրավունքի» հրատարակման շուրջ, և որ դա վերջ էր տվել իրենց ընկերությանը: Շիշկոն Մոնթեին մեղադրել էր մարդկանց աչքերին թոզ փչելու, իրենց գործը վարկաբեկող ու անվտանգությանը սպառնացող տեղեկություններ հրապարակելու և սեփական կարծիքները որպես իրենց բոլոր ընկերների հավաքական հայացքներ ներկայացնելու համար: Ի պատասխան, Մոնթեն ասել էր, որ գրքում եղած նյութի մեծ մասն արդեն հրատարակված էր, և՝ որ ինքը սկզբունքորեն դեմ էր իրեն լռեցնելու Շիշկոյի փորձերին. ինչպես որ ցանկացած այլ ընկեր, ինքն էլ իրավունք ուներ կարծիք արտահայտելու:

Դեմենից հետո 15 ամիս էր անցել: Դրամ այլևս չկար, հին ընկերները հեռացել էին, իսկ այժմ Մոնթեի ամենամտերիմ ընկերը՝ Շիշկոն, այլևս նրան տեսնել չէր ուզում: Կեղծ անձնագիրը մուտքի արտոնագրեր էր կուտակել՝ նման խեցեմորթներով բեռնված ու ծանրությունից թեքվող նավի: Իսկ Մոնթեն դեռ չէր արել

այնպիսի վճռական քայլ, որ իրեն անդառնալիորեն մոտեցներ Հայաստանին: Այնտեղից նրան հասնում էին վատ, հետո՝ ավելի վատ, հետո՝ վատագույն լուրեր:

Սեպտեմբերի 8-ին Մոնթեն ու Սեդան նստեցին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիա մեկնող գնացքը և հրաժեշտ տվեցին Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությանը: Երկիրը փոխվել էր նրանց աչքի առաջ: Մոնթեի հիշողության մեջ տպավորվել էին այն ազատասեր բելգրադցիները, որոնց նա տեսել էր քսան տարի առաջ: Իսկ հիմա նրանց որդիներն ու դուստրերը հավաքվում էին մարզադաշտերում, որտեղ Սլոբոդան Միլոշևիչ անունով մի ամբոխավար սերբերի զայրույթի ածուխների վրա յուղ էր լցնում: Մոնթեն դիտում էր, թե ինչպես էին անձրևոտ բնապատկերները, ուրվականների թափորի պես, արտացոլվում վագոնի պատուհանի մեջ:

— Այս երկիրը գնում է դեպի պատերազմ, — բարձրաձայն մտածեց նա:

Հասնելով Բուլղարիայի մայրաքաղաք՝ Մոնթեն ու Սեդան սենյակ վարձեցին մի ծեր կնոջ տանը: Նրանք այնտեղ մնացին մինչև սեպտեմբերի 15-ը, երբ Սեդան վերադարձավ Երևան: Մոնթեն ուղևորվեց Վառնա, որտեղ 2 շաբաթ առաջ Երևանի տոմս պատվիրեց՝ այդ սեզոնի նախավերջին թռիչքի համար:

Չնայած Մոնթեն տոմս ուներ, Հայաստան հասնելու հավանականությունը մեծ չէր: Տիմոթի Մաքֆորմիքին հրավեր ուղարկելու համար անհրաժեշտ թղթատարությունը Երևանում ձգձգվում էր, և թվում էր, թե Մոնթեն չի ստանալու իր ճամփորդական փաստաթղթերը մինչև սեպտեմբերի 30-ի թռիչքը: Նա ոչ փող ուներ, ոչ էլ կարող էր վստահել իր կեղծ իռլանդական անձնագրին՝ մեկ այլ քաղաքից թռչելու համար: Իսկ Վառնա-Երևան հաջորդ՝ այդ սեզոնի վերջին թռիչքի բոլոր տոմսերը գնված էին շաբաթներ առաջ:

Սեդան նույնպես խիստ անհանգիստ էր: Երբ սեպտեմբերի 30-ն անցավ, նա հանդիպեց Ստամբոլցյանին և խնդրեց, որ Մաքֆորմիքի հրավերը տելեքսով ուղարկեն անմիջապես Բուլղարիայում Խորհրդային Միության դեսպանատուն: Մոնթեն վերցրեց տելեքսը, ստացավ արտոնագիրը և հետո աղաչեց Վառնայում «Աերոֆլոտի» գործակալությունում աշխատող մի հայ կնոջ, որ իրեն թույլ տրվի սեզոնի վերջին թռիչքով հասնել Երևան: Կինն ինչ-որ մեկի անունը հանեց ցուցակից՝ փոխարինելով այն Մոնթեով, բայց նա ավելի շուտ թեթևացած չունչ քաշեց, քան մեղքի զգացում ունեցավ, երբ իր տեղը գրավեց ինքնաթիռում: Գրպանում ուներ 57 դոլլար՝ իր ողջ հարստությունը:

Այդ ընթացքում Երևանում Սեդայի ծանոթներից մեկը՝ ալիքաձև մազերով և ուռած կոպերով մի երիտասարդ, որին Սեդան անվանում էր «ՊԱԿ-ի Արմեն», հայտնեց նրան, թե իր ղեկավարները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Մոնթեի հանդեպ: Լսած լինելով Երևանում «Գաղտնի բանակի» համախոհների կողմից նրա դեմ ծրագրված մահափորձի մասին, ՊԱԿ-ն Արմենին խնդրել էր անվտանգության համար օդանավակայանում դիմավորել փախստականին, եթե նա ժամաներ Հայաստան:

Ուրբաթ օրը, հոկտեմբերի 5-ին, Մաշտոցի պողոտայի վրա գտնվող՝ Պետական համալսարանի հանրակացարանի մոտ Սեդան հանդիպեց իր ընկերուհի Աշխենին: Նա այնտեղ էր տեղափոխվել՝ 1987 թ. համալսարանի ասպիրանտուրա ընդունվելուց հետո: Աշխենի աչքերը լայն բացվեցին, երբ Սեդան նրան հայտնեց իր երթուղու մասին. նա ՊԱԿ-ի գործակալի հետ պիտի գնար օդանավակայան Մոնթեին դիմավորելու: Եթե Աշխենը երեք օր նրանցից լուր չունենար, պետք է խնդրեր Ստամբոլցյանին՝ փնտրել նրանց:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ. ՎԵՐՁԱՊԵՍ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գլուխ 13. Դաշը հաց

Փոքր ավտոբուսի վարագույրների արանքից Սեդան նայում էր երկնքին, և այդ բոպեները նրան հավերժություն էին թվում: Վերջապես նա հորիզոնում մի կետ նկատեց: Օդանավը, դեպի վար ուղղվելով, շուտով սլացավ Երևանի Զվարթնոց օդանավակայանի վայրէջքի գոտիով: Երբ այն կանգ առավ, Սեդան դեմքը սեղմեց ապակուն: Ուղևորները, Туполев ինքնաթիռից հերթով դուրս գալով, իջնում էին օդանավասանդուղքով: Ի վերջո մաքուր սափրված մեկը՝ ջինսով ու բամբակե կապույտ վերնաշապիկով, դուրս եկավ օդանավից՝ ուսին ճամփորդական պայուսակ ու թևին մի հին կաշվե բաճկոն: Իր ծննդավայրը թողնելուց 12 տարի անց, Մոնթե Մելքոնյանը կամ Տիմոթի Մաքֆորմիքը վերջապես ոտք դրեց այն «հայրենիքում», որը պատկերացրել էր իր հասուն կյանքի ամեն օր, բայց երբեք չէր տեսել:

ՊԱԿ-ի Արմենը Մոնթեի հետևից տերմինալ մտավ ու նրան հանձնեց Սեդայի ձեռքով գրված մի գրություն: Մոնթեն խեթ նայեց փողկապավոր անծանոթին: Մի՞թե սա խաբեություն էր, և մի՞թե իրեն պիտի ձերբակալեին ու բանտ նստեցնեին: Նա ուրիշ ոչինչ չէր կարող անել. պետք է հետևեր անծանոթին: Միկրոավտոբուսի դուռը բացվեց, և Մոնթեն ճառագեց՝ տեսնելով Սեդային: Նրանք գրկախառնվեցին, բայց Մոնթեն ասաց, որ նյարդայնացած է. նա գիտեր, որ ՊԱԿ-ի ձեռքում է:

Հայաստանում իր առաջին օրերը Մոնթեն անցկացրեց որպես ՊԱԿ-ի «հյուր» Հրազդանի մի նախկին հանգստյան տանը, հետո՝ մեկ այլ հանգստյան տանը՝ Դիլիջանի լեռներում: Նա իր հյուրընկալների՝ Արմենի ու նրա բարձրահասակ, ճաղատացող պետի հետ քննարկում էր իրավիճակը Հայաստանում: 2 ամիս դրանից առաջ, օգոստոսի 4-ին, Հայաստանի ընտրողների ճնշող մեծամասնությունն իրենց ձայնը տվել էին Լևոն Տեր-Պետրոսյանին՝ նրան, որ օգնել էր կազմակերպել Տիմոթի Շոն Մաքֆորմիքի հրավերը Հայաստան: Նա էր այժմ Գերագույն խորհրդի նախագահը և 70 տարվա մեջ՝ երկրի առաջին ոչ կոմունիստ ղեկավարը: Ընտրությունից մոտ 1 ամիս անց Հայաստանի Գերագույն խորհուրդը հրապարակել էր «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբն» ազդարարող հռչակագիրը: Օրենսդիրները

Երևանում ընդունել էին նոր դրոշ ու պետական հիմն և Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել «Հայաստանի Հանրապետություն»: Այդ նույն ժամանակ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը՝ հետևելով հայերի օրինակին, ընդունել էր իր սեփական եռագույնը և նույնքան վագներյան հիմնը:

Մոտ 2 շաբաթ քննարկումներից և գյուղական ճանապարհներով երկար զբոսանքներից հետո, Մոնթեն այլևս չկարողացավ թաքցնել իր անհամբերությունը: Նա պնդեց, որ ուզում է Երևանում հանդիպել նոր ղեկավարների հետ՝ Հայաստանում իրեն մշտական բնակության իրավունք տրամադրելու խնդրանքով: Արմենի պետը հոգոց հանեց ու մեկնեց Երևան՝ հանդիպումը կազմակերպելու: Երբ Արմենը եկավ Մոնթեին ու Սեդային տանելու, նրանք կազմ ու պատրաստ էին: Արմենն անհանգիստ էր թվում, և երբ նրանք մոտեցան մեքենային, նա Սեդային մի կողմ տարավ: Նրա փեսացուն, ցածրաձայն հիշեցրեց Արմենը, գնում էր երկրի բարձրագույն ղեկավարների հետ հանդիպման. չէ՞ր կարող Սեդան նրան ստիպել մի ավելի պատշաճ բան հագնել, քան գունաթափ վելվետե շալվարը, ռետինե կոշիկներն ու այն նույն կապույտ վերնաշապիկը, որով նա ժամանել էր Երևան: Սեդայի դեմքին ներողամտություն հայցող ժպիտ հայտնվեց. դրանք իր փեսացուի լավագույն շորերն էին: Սրտնեղած՝ «Լավ, ի՞նչ կարող ենք անել» նշանակող ժպիտից հետո, Արմենն իր հյուրին տարավ Երևան:

Մոնթեն սեղմեց Լևոն Տեր-Պետրոսյանի խորհրդական Բաբկեն Արարքցյանի ձեռքը: Նրանք քննարկեցին երկրում Մոնթեի անելիքը, և Արարքցյանը գոհ էր իր լսածից: Երբ Մոնթեն վերադարձավ Դիլիջան, ՊԱԿ-ի աշխատակիցները որոշ «չեմ ու չում» անելուց հետո վերջապես համաձայնեցին առանց հսկողության թողնել իրենց «հյուրին»: Արմենը նրանց դարձյալ տարավ Երևան, և Մոնթեն գրանցվեց Սեդայի հանրակացարանում՝ «Սիմոն» անունով:

Արարքցյանը պնդեց, որ Մոնթեին թիկնապահ տրվեր, գոնե մինչև պարզ դառնար, թե ինչ վտանգ էր նրան սպառնում: Ատրճանակավոր թիկնապահ Սմբատը հայտնվեց 6 ժամ ուշ՝ իրենց առաջին (ու վերջին) հանդիպմանը: Նա Մոնթեին ու Սեդային հրավիրեց վաղ ընթրիքի Ալավերդյան փողոցի վրա գտնվող մի ռեստորանում, խմեց Մոնթեի ժամանման կենացը և հետո նրանց

հաճելի երեկո մաղթեց: Նրանք թիկնապահին այլևս չտեսան, և Մոնթեն հենց այդ էր ուզում: Նրա դեմ սպասվող մահափորձի վերաբերյալ լուրեր էին պտտվում, բայց նա միշտ գերադասում էր ինքնուրույն հոգալ իր անվտանգության մասին:

Հաջորդ մի քանի օրը Մոնթեն ընտելանում էր քիչ թե շատ ազատ կյանք վարելուն: Առաջին անգամ տարիների ընթացքում նա ոչ բանտում էր, ոչ թաքստոցում, ոչ էլ փախուստի մեջ: 1 ամիս էր մնում Մոնթեի 33-ամյակին, իսկ Սեդան 27 տարեկան էր: Նրանք թևանցուկ զբոսնում էին փողոցներով և կանգ առնում լեհական մի սրճարանի առաջ՝ յուղալի մակարոն, մսի գնդիկներ և տապակած կարտոֆիլ ճաշակելու համար: Ուտելիս քննարկում էին Հայաստանում իրենց հետագա քայլերը:

Շաբաթը մի քանի անգամ Օպերայի մոխրագույն բազալտե շենքի առջևի հրապարակում՝ Սեդայի հանրակացարանի պատուհանից ընդամենը երկու և կես փողոց Մաշտոցի պողոտայով ներքև, ցուցարարների մեծ բազմություն էր հավաքվում: Մոնթեն Իրանի հեղափոխության խենթ օրերից հետո երբեք նման բազմություն չէր տեսել: Ցուցարարները դատապարտում էին Կրեմլի կողմից տասնամյակներ շարունակ Բաքվի հովանավորությունը, որի ամենացայտուն արտահայտությունն էր Լեռնային Ղարաբաղի և հայաբնակ Նախիջևանի նվիրաբերումն Ադրբեջանին: «Ղարաբաղը մե՛րն է, Ղարաբաղը մե՛րն է», — ավելի ու ավելի խռպոտող ձայնով գոռում էին ցուցարարները:

Միաժամանակ Բաքվում ուրիշ ցուցարարներ նույնպես իրենց զայրույթն էին արտահայտում Կրեմլի դեմ՝ Հայաստանին՝ Կովկասի այդ «փչացած երեխային» հովանավորելու համար: Խոսնակները հայհոյում էին Ստալինին՝ Զանգեզուրի ադրբեջանաբնակ շրջանը Հայաստանին հանձնելու համար, որի նպատակը, նրանց կարծիքով, Նախիջևանի և մայր Ադրբեջանի միջև սեպ խրելն էր:

Մոնթեն ուսումնասիրում էր Օպերայի հրապարակում հավաքվող բազմությանը: Այստեղ վստահաբար «ժողովուրդն» էր, որի հետ նա կապել էր իր բոլոր հույսերը, և նրանք վճռականորեն իրականացնում էին «Ազատ, անկախ Հայաստանի» գաղափարը: Մոնթեն երբեք չհրաժարվեց 80-ականների ընթացքում իր այնքան կտրուկ արտահայտած մտքից, որ բազմազգ Խորհրդային Միությունից անջատումը Հայաստանի համար աղետալի պիտի լիներ: Բայց Երևան գալուց հետո երկաշարժի հետևանքները վերացնելու ապաշնորհ ջանքերի և Լեռնային Ղարաբաղի հարցում Մոսկվայի անզիջում դիրքորոշման մասին լուրերը սասանել էին խորհրդային իշխանության հանդեպ նրա հավատը: Այդ հավատը, ինչպես նա այժմ խոստովանում էր, ավելի «ցանկություն էր, քան իրականություն»:

Երևանում մի երկու շաբաթ անցկացնելուց հետո Մոնթեի համար պարզ դարձավ, որ Խորհրդային Միությունն արդեն մահացել էր, միայն անունն էր մնացել, և՝ որ շատ ուշ էր հակամարտության խաղաղ կարգավորման համար: Հարավսլավիան քանդող խելահեղությունը տեսնելուց հետո նա այժմ ականատես էր լինում, թե ինչպես Խորհրդային Միությունում Գորբաչովի ձեռնարկած перестройка-ն վերափոխվում էր փոխհրաձգության՝ перестрелка-ի: Զինապահեստների դռները լայն բացված էին, տեղական ռազմաջոկատներն արհամարհում էին Մոսկվայի հրամանները, և փոխհրաձգությունները Լեռնային Ղարաբաղում զուգակցվում էին հրթիռների պայթյուններով: «Սիբելիներին» ուղղված նամակներում նա նկարագրում էր ջղաձգվող, Ադրբեջանի երկաթուղային և ճանապարհային շրջափակումից ուշաթափվող մի երկիր: Վնասարարները Վրաստանի տարածքում պայթեցրել էին Հայաստան մտնող գազամուղը, էլեկտրականությունը Երևանում տրվում էր օրը մի քանի ժամ միայն, իսկ մատչելի գնով սննդամթերք քիչ կար: «Սա քառասային մի տեղ է», — գլուխն օրորելով գրում էր Մոնթեն:

Այն ժամանակ, երբ Երևանի ամենաբարեկեցիկ ու կրթված բնակիչները վաճառում էին իրենց բնակարանները՝ Լոս Անջելես մեկնելու համար, Մոնթեն ամեն գնով ձգտում էր խուսափել Հայաստանից վտարվելուց: Նախորդ տարի Բուլղարիայում ստացած մուտքի արտոնագրի ժամկետն անցել էր, և նա ապրում էր՝ ՊԱԿ-ի կողմից բռնվելու ու երկրից արտաքսվելու մշտական սպառնալիքի տակ: Վերջապես Գիտությունների ակադեմիայից մի ընկեր՝ Զավեն Խառատյանը, Մոնթեի իտալական կեղծ անձնագիրը ներկայացրեց Ազգագրության ինստիտուտի տնօրենին և խնդրեց նրան ստորագրել մի նամակ՝ անձնագրի տիրոջը որպես ինստիտուտի գիտաշխատող գործի ընդունելու համար:

— Ի՞նչ, — փորձեց բողոքել տնօրենը, — ո՞վ է, գրո՛ղը տանի, այդ տղան:

— Պարզապես ստորագրի՛ր, — գոռաց Խառատյանը:

Եվ այնպես եղավ, որ ՕՎԻՐ-ը՝ «Խորհրդային վիզաների ու գրանցումների բաժինը», երկարացրեց Ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Տիմոթի Շոն Մաք-Քորմիքի՝ երկրում մնալու արտոնությունը:

Արտագաղթի ալիքին հակառակ՝ «Տիմոթին» հրավիրում էր ընկերներին միանալ իրեն Հայաստանում: 1991 թ. փետրվարի կեսին նա մի ութէջանոց նամակ գրեց Բեյրութի իր հին ընկեր Ալեքին: «Տարիներ անցած են, բայց երբեք չեմ մոռացած», – գրում էր Մոնթեն և ասում, որ պատրաստ է ամեն ինչ անել, որպեսզի օգնի Ալեքին, եթե նա ցանկանում է, հաստատվել Երևանում: Երբ Ալեքը ժամաներ, նա ազատ կլիներ՝ իր ցանկությամբ մասնակցելու ազգանպաստ աշխատանքին կամ էլ՝ «եթե կուզես պարզապես սեփական կյանքդ ապրիլ, կապրիս»: Ամեն դեպքում, գոհունակությամբ գրում էր Մոնթեն, «ապագաղ կկապվի ուղղակի ձևով հայրենիքիդ հետ»:

Այդ ժամանակ Մոնթեն ու իր ընկերները վիճելի տարածքն այլևս «Լեռնային Ղարաբաղ» չէին կոչում, այլ օգտագործում էին հայերի համար նախընտրելի «Արցախ» անունը, որ վերաբերում էր գրեթե նույն տարածքին: «Արցախի դոյատևման միակ գրավականը Հայաստանի հետ վերամիավորվելն է», – ասում էր Մոնթեն բանավոր զրույցներում և գրավոր: Ուստի նա վճռական էր՝ կիսելու տարբերների իր մարտական փորձը Լեռնային Ղարաբաղի՝ պաշարման մեջ գտնվող պաշտպանների հետ: Նա խորհրդային ռազմական դասագրքեր ու ԱՄՆ բանակի դաշտային ձեռնարկներ կլանեց և խորհրդարանական «Պաշտպանության կոմիտեի» նախագահից պարտիզանական ջոկատ կազմելու թույլտվություն ստացավ:

«Պաշտպանության կոմիտեն», որի շտաբը գտնվում էր Երևանի նախկին՝ Ստեփան Շահումյանի անվան հանգստյան տների պալատում, Հայաստանի ազգային բանակի սաղմն էր: Այն շուտով Հայաստանում պիտի փոխարիներ քայքայվող խորհրդային բանակին: Կոմիտեի նախագահ երեսունմեկամյա Վազգեն Սարգսյանը տարբերվում էր տարեկիցներից: Նա ժպտադեմ էր, և այդ ժպիտը ցույց էր տալիս խոշոր սպիտակ ատամների շարքը: Նրա՝ դեռևս ոչ այնքան կենտրոնացված հրամանատարության տակ Արցախում ու շրջակայքում արդեն գործում էին 40-50 տարբեր չափի, տարբեր աստիճանի մարզվածության ու կարգապահության ջոկատներ: Այդ ժամանակ ընդունված տերմինաբանությունը, սակայն, կարող է թյուրիմացության մեջ գցել: Հիշյալ «ջոկատներից» ոչ մեկը չէր կարող հպարտանալ դաշտում տվյալ պահին կռվող երկու տասնյակից ավելի մարտիկներով, իսկ մեծ մասը բաղկացած էին 10-ի չհասնող մշտական անդամներից: Ավելին, դրանք կառուցվածքային կամ ենթակայական կապեր չունեին դասակի կամ ավելի խոշոր միավորների հետ և նույնիսկ ավելի մեծ բանակի բաղկացուցիչ մասեր չէին, եթե «բանակ» բառը հասկանանք քնարականից զատ որևէ այլ իմաստով:

Սկզբնապես Մոնթեի ջոկատը կազմված էր յոթ կամավորներից՝ Կոմիտեից ստացած կանաչ-դարչնագույն համազգեստներով: Մյուս ջոկատները կոչվում էին առասպելական կամ պատմական հերոսների անուններով՝ «Սասունցի Դավիթ», «Տիգրան Մեծ», «Վարդան Մամիկոնյան» և այլն: Սակայն Մոնթեի ցանկությամբ նրա խումբը կոչվեց «Հայրենասիրական ջոկատ» պրոզայիկ անունով:

Հանրակացարանի Գպրանյան-Մելքոնյան սենյակում մի հանդիպման ժամանակ Մոնթեն Սեդային խնդրեց կազմել ջոկատի անդամների ցուցակը: Երբ նա գրի էր առել մյուսների անունները, Մոնթեն խնդրեց վերջում ավելացնել՝ «Ավո»: Սեդան գիտեր, որ «Ավոն» «Ավետիս» անվան համառոտ տարբերակն է, բայց ենթադրում էր, որ բառի «բարի լուր» նշանակության պատճառով չէ Մոնթեն ընտրել այդ մականունը: Երբ Սեդան բացատրություն խնդրեց, Մոնթեն իրեն բնորոշ գործնական տոնով պատասխանեց.

– Դա տարածված անուն է, բացի այդ՝ կարճ է և ռադիոկապով հեշտ լսելի:

«Ավոն» հաճախ էր գալիս «Պաշտպանության կոմիտեում» Սարգսյանի գրասենյակը՝ զենքեր ձեռք բերելու և մարտիկներին ճակատում միանալու թույլտվություն ստանալու խնդրանքով: Սարգսյանը համակրում էր տարօրինակ առոգանությամբ ու մաշված ջինսով նորեկին, բայց գիտեր, որ շատ վտանգավոր կլիներ նրան Արցախի ռազմաճակատ ուղարկելը: Խորհրդային Ներքին գործերի նախարարությունը՝ ՄՎԴ-ն, դեռևս պահակակետեր ուներ ճանապարհներին և պարեկային ծառայություններ՝ քաղաքներում: Մի չար դիպվածով Մոնթեին՝ դատապարտված «միջազգային ահաբեկիչին», կարող էին բռնել պահակակետերից մեկում կամ փողոցներում՝ փաստաթղթերի սովորական ստուգման ժամանակ, և դա գլխացավանք կլիներ Հայաստանի իշխանությունների համար: Ուստի, Մոնթեին ու նրա ջոկատն ուղիղ Արցախ ու-

ղարկելու փոխարեն, Սարգսյանը հանձնարարեց նրան հետախուզել հյուսիս-արևելյան սահմանը, որտեղ ձերբակալվելու կամ գերի ընկնելու վտանգն ավելի քիչ էր: Քանի որ «Հայրենասիրական ջոկատը» շատ փոքր էր, նրան միանալու էր մեկ ուրիշը՝ ինքնակոչ «Հատուկ նշանակության խումբը», որի ղեկավարը բարետես կապիտան Վովան էր:

Մոնթեն ավելի քան երջանիկ էր՝ Հայաստանում իր առաջին հանձնարարությունն ստանալու համար: 1991 թ. մարտի սկզբին ինքն ու միացյալ ջոկատը մագլցեցին մի բեռնատարի մեջ և հաջորդ ամիս ճամփորդեցին փոշոտ ու խորդուբորդ ճանապարհներով՝ Ադրբեջանի հետ Հայաստանի արևելյան սահմանի երկայնքով՝ հյուսիսում գտնվող Նոյեմբերյանից մինչև Գորիս, որ 150 մղոն դեպի հարավ էր գտնվում: Ճանապարհին Մոնթեն զրուցում էր տեղացի պաշտպանների հետ, ստուգում խրամատները և նշումներ անում իր տեսած պաշտպանական խղճուկ պատրաստությունների մասին:

Երբ նրանք հասան հյուսիսային Տավուշի մարզի Այգեպար և Ջինար գյուղերը, տեղացիները ենթադրյալ պաշտպաններին խնդրեցին հեռանալ: Սկզբում Մոնթեն կարծեց, թե չի հասկանում նրանց գյուղի բարբառը: Գյուղացիները բացատրեցին, որ եթե մարտիկները հարձակվեին մոտակա գյուղերի իրենց հարևանների վրա, պատերազմ կլիներ, իսկ նրանք դա չէին ուզում: Ոչ իրենք, ոչ էլ իրենց ադրբեջանցի հարևանները չէին խնդրել, որ պատերազմ լինի: Մոնթեն պատասխանեց, թե պատերազմն արդեն անխուսափելի էր՝ իրենք ուզեին թե ոչ, բայց նրան առարկեցին: Երբ բեռնատարը դուրս եկավ գյուղից՝ դեպի հարավում գտնվող Վարդենիսի շրջանը, Մոնթեն շարունակում էր տարակուսանքով գլուխն օրորել:

Մոնթեն Երևան վերադարձավ ապրիլի առաջին շաբաթը՝ իր հաշվետվությունը Վազգեն Սարգսյանին ներկայացնելու: Այդ ժամանակ «Հայաստանի ազատագրման հայրենասիրական ճակատի» հուշակագրի նրա մտահղացումն ընդլայնվել ու դարձել էր բարձրակարգ ուսումնական ծրագրի նման մի բան: Մոնթեի «Հայ ժողովրդի ու նրա հայրենիքի պատմության համառոտ ակնարկն» ընդգրկում էր այնպիսի խորհրդավոր թեմաներ, ինչպիսիք են՝ Խեթական ու Միտաննի պետությունների ծագումը մ.թ.ա. 2-րդ հազարամյակում և զրադաշտական ու միթրայական ուսմունքների ազդեցությունը հայկական նախաքրիստոնեական

պանթեոնի վրա: Ամեն առավոտ նա թևի տակ էր դնում իր թղթապանակներն ու երեքական աստիճան ցատկելով՝ բարձրանում Բաղրամյան պողոտայի վրա գտնվող՝ Գիտությունների ակադեմիայի մգլած աստիճաններով: Ներս ու դուրս անելով խցերի նման փոքր աշխատասենյակներ՝ նա բաժանում էր Հուշակագրի տարբեր մասերի մատենագիտությունն ու նախագծերը: Թղթերի մի կապոց նա տվեց քրդական ազգագրությամբ զբաղվող մեկին, մի ուրիշը՝ միջնադարյան վրացական գրականության մի մասնագետի, մեկն էլ՝ իրանական բանասիրության մի հետազոտողի: Նրա գործընկերները, սակայն, թվում էր՝ ոչ մի այլ բանով երբեք չէին զբաղվում՝ բացի ծակոտկեն պլաստիկատից պատրաստված գրասեղանների մոտ կատակելուց ու տեղական թունդ ծխախոտ ծխելուց: Այդ գրասեղանների վրա ոչ գրքեր կային, ոչ էլ գրառումներով թղթեր: Հիշեցնելով նրանց իրենց աշխատանքի հրատապության մասին՝ Մոնթեն հրաժարվում էր խմել իրեն առաջարկվող՝ երկու անգամ նույն մրուրից եփված սուրճը և գնում էր ուրիշ հանդիպումների:

Հուշակագիրը հանդիսատ չէր տալիս Մոնթեին, բայց ահագնացող պատերազմի պայմաններում այդ նախագիծը նման էր մակընթացության ալիքի դիմաց ավազե ապարանք կառուցելուն: Ալիքն իր դագաթնակետին հասավ ապրիլի երկրորդ կեսին, երբ Երևանի հեռուստատեսությունն սկսեց ցուցադրել տեսանյութեր, որոնցում Միջապանման МИ-24 ուղղաթիռները հրթիռներ էին արձակում հայաբնակ գյուղերի վրա՝ Լեռնային Ղարաբաղից փոքր-ինչ հյուսիս: Մոնթեն տնտղում էր լրագրերն ու հեռուստացույցների էկրանները՝ տարածաշրջանից վերջին լուրեր իմանալու համար: Ապրիլի 21-ին խորհրդային 4-րդ բանակի՝ հիմնականում ադրբեջանցիներից բաղկացած 23-րդ մոտոհրաձգային գումարտակի զինվորները, գորշ համազգեստներով ՕՄՕՌ-ականների (ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության հետ կապված՝ ռազմականացված ոստիկանություն) հետ միասին, սկսեցին Операция колцо կոչված հարձակումը: Հունիսի 12-ին Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի շրջակայքի համարյա բոլոր հայերը, ընդհանուր առմամբ՝ մոտ 5000 գյուղացիներ, տեղահանված էին:

Ադրբեջանցի գրոհայիններն այնուհետև առաջացան մի քանի կիլոմետր դեպի հարավ գտնվող Շահումյանի շրջանը, որի 20000 բնակիչների 85 տոկոսը հայեր էին: Հուլիսի 13-ին գրոհայինները բարձրախոսով վերջնագիր ներկայացրին Բուզլուխի, Մանաչիրի

ու Էրքեջի գյուղացիներին՝ լքել իրենց տները կամ սպանվել: Մյուս օրը գյուղացիները հեռացան՝ թաշկինակների մեջ մի բուռ հայրենի հող լցնելով ու դրանք իրենց գրպանները դնելով: Նրանք մեջքների վրա կրում էին իրենց ունեցվածքից այն ամենը, ինչ հասցրել էին փաթաթել սավանների մեջ: Ուղղաթիռներն ու զրահամեքենաները կրակում էին նրանց գլխավերևով, տարբեր կողմերից վրա էին տալիս 23-րդ գումարտակի հետևակայինները, իսկ թալանչիներն անհանգստացնում էին վերջից գնացողներին: Երբ գրոհայինները գործն ավարտեցին, նրանք իրենց դրոշը բարձրացրին գյուղի վրա՝ ոչ թե Խորհրդային Ադրբեջանի կարմիր, այլ անունով անկախ Ադրբեջանի Հանրապետության եռագույն դրոշը: Ընդհանուր առմամբ նրանք դատարկեցին 23 գյուղ Շահումյանի և Հադրութի շրջաններում՝ 17000 հայերի արտաքսելով իրենց տներից: Մի հողագործի հետևյալ պարզ խոսքերը ճշմարիտ արտացոլում էին իրավիճակը. «Թուրքերն ուզում են խլել մեր հողն ու մեզ քշել այստեղից»:

Բաքվի իշխանություններն արդեն չեղյալ էին հայտարարել Լեռնային Ղարաբաղի՝ ինքնավար կարգավիճակը, և ուժեղացող ընդդիմության լիդերները Բաքվում արդեն բացեիբաց խոսում էին բոլոր հայերին լեռներից վտարելու մասին: Մոնթեն և ուրիշները հավատացած էին, որ եթե թշնամուն հաջողվեր Լեռնային Ղարաբաղը գրավել, նա կանգ չէր առնի, այլ կշարժվեր արևմուտք՝ մտնելով բուն Հայաստանի Հանրապետության տարածք: «Նույնիսկ եթե մենք կորցնենք Արցախը, չպետք է կարծենք, թե կռիվն ավարտվելու է», — մտորում էր Մոնթեն: Նա լսել էր, որ որոշ «մտավորականներ» Բաքվում նիմիտե էին կազմել՝ Զանգեզուրը՝ Հայաստանն Իրանի հետ կապող նեղ հողակտորը, գրավելու նպատակով: Եթե Ադրբեջանն Արցախում հաղթի, եզրակացրեց Մոնթեն, «հաջորդը Զանգեզուրն է լինելու»: Իսկ եթե Ադրբեջանը Զանգեզուրը գրավեր և Հայաստանը կտրեր իր միակ՝ բարեկամաբար տրամադրված հարևան Իրանից, Հայաստանը կվերածվեր Ադրբեջանի դաշնակից Թուրքիայի արբանյակի նման մի բանի: Հարկավ, դեպքերը կարող էին զարգանալ նույնիսկ ավելի վատ սցենարով, ինչպես ամեն առիթով նշում էր Մոնթեն. Ադրբեջանի ազգայնամոլ «Ժողովրդական ճակատի» Բաքվում գործող ընդդիմադիր կուսակցության կողմնակիցները քարտեզներ էին տպում, որոնց վրա Երևանն էլ (որտեղ ապրում է Հայաստանի բնակչության մեկ-երրորդը), որպես «Իրավան», հայտնվել էր մեծ Ադրբեջանի կազմում:

Մոնթեի համար, ուրեմն, Արցախում առհասարակ վտանգված էր հայ ժողովրդի գոյատևումն իր հայրենիքի այն փոքր կտորի վրա, որը Թուրքերին չէր հաջողվել կլանել: Փարիզի իր մի ընկերոջն ուղարկած նամակում նա գրել է. «Արցախի կորուստը կարող է Հայաստանի կորուստը դառնալ»:

Թեև նա վճռական էր՝ ռազմաճակատ մեկնելու, այլ հանգամանքներ չեղում էին նրա ուշադրությունը: 1991 թ. գարնանը, երբ Մոնթեն ու Սեդան նոր էին որոշել իրենց հարսանիքի ենթադրյալ օրը, «Գաղտնի բանակի» մի վետերան հևալով ու շնչակտուր հայտնվեց նրանց դուռն առջև: Նա վազելով բարձրացել էր հանրակացարանի աստիճաններով՝ հայտնելու համար, թե «Գաղտնի բանակի» մեկ այլ վետերան Երևանում համոզել էր Համլետ անունով մի երիտասարդի, որ Մոնթեն դավաճան էր և ազգային պայքարի թշնամի՝ արժանի մահվան: Նույն օրը Համլետի դուռը թակեցին, և նա, այն բացելով, ապշած հետ-հետ գնաց:

— Բարև, ես Մոնթե Մելքոնյանն եմ, — սառը ձայնով ասաց այցելուն, — կուզեի խոսել քեզ հետ:

Համլետը գլուխը քորեց ու ներս հրավիրեց նրան: Թեյի ժամանակ Մոնթեն պատմեց 1983 թ. «Գաղտնի բանակի» շարքերում տեղի ունեցած պառակտման մասին՝ շեշտելով, որ, հակառակ Համլետին տրված տեղեկությանը, ինքն Անկարայի վարձու գործակալ չէր: Այցելության վերջում Համլետը խոստովանեց, որ, այո՛, մի քանի օր հետևել էր Մոնթեին և պատրաստվում էր «Նափրի» կինոթատրոնի դիմաց նրա վրա կրակել: Նա ուրախ էր, որ զրուցելու առիթ եղավ, և դա հետ պահեց իրեն սխալ քայլից: Հրաժեշտ տալով իր նախկին ենթադրյալ մարդասպանին՝ Մոնթեն սեղմեց նրա ձեռքն ու հրավիրեց իր հարսանիքին:

Մոնթեն հոգնել էր մանր խարդավանքներից: Որքան շուտ նա կարգավորեր իր գործերը Երևանում, այնքան շուտ կարող էր լիովին նվիրվել Արցախի պաշտպանությանը: «Մեր նպատակներից մեկն այստեղ, — գրել էր նա Հայաստանից ծնողներին ուղարկած առաջին նամակում, — հարսանիքի հետ կապված ձևականությունների կարգավորումն է»: Ժամանակն ու փողը սուղ էին, բայց նա համաձայնեց Սեդայի հետ, որ կարճ քաղաքացիական արարողությունը բավարար չէր լինի: Այդքան ժամանակ ծնողներին, եղբորն ու քույրերին չտեսնելուց հետո նվազագույնը, որ նա կա-

ղող էր անել՝ բանտում ու փախուստի մեջ եղած ժամանակ իրեն սատարելու համար իր երախտագիտությունը հայտնելն էր՝ հրավիրելով նրանց եկեղեցական հարսանիքի:

Երբ մեր մայրը, հայրը, Մայլեն, Մարսիան ու ես 1991 թ. հուլիսի վերջին ժամանեցինք Զվարթնոց օդանավակայան, Մոնթեն դիմավորեց մեզ իր սովորական ջինսով ու ռետինե չստերով: Մենք գրկախառնվեցինք, և ես, նրա ուսերից բռնած դեմքին նայելով, ասացի, որ տասնուկես տարի առաջ Բեյրութում իմ տեսածի համեմատ նա բոլորովին չէր փոխվել:

— Իրո՞ք, — ասաց Մոնթեն՝ գլուխը խոնարհելով և ծաղրական շարժումով իր ճաղատացող գագաթը ցույց տալով, — իսկ սա՞:

Մոնթեն մեզ համար բնակարան էր վարձել Երևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ վարդագույն տուֆով պատված անավարտ, բայց արդեն քայքայվող բարձրահարկերի մի լաբիրինթոսում: Հաջորդ օրերի ու երեկոների ընթացքում ես ու եղբայրս մղոններ քայլեցինք այդ լաբիրինթոսով, մինչ նա մանրամասն պատմում էր «Գաղտնի բանակի» վախճանի մասին: Նույնիսկ Հայաստանի սահմանների երկայնքով ընթացող կռիվների ու հարսանիքի թեժ պատրաստություններ պայմաններում, «Գաղտնի բանակի» և հատկապես Կառլենի ու Արամի մահվան հանգամանքների մասին իր կարծիքը պարզորոշ հայտնելը նրա համար առաջնահերթ պարտականություն էր: Ժամանակ առ ժամանակ նա աչքերը հառում էր երկնքին կամ խոժոռվում՝ փորձելով ոգեկոչել որևէ անուն կամ ամսաթիվ իր գերմարդկային հիշողությունից: Ապա, առաջ քայլելով, նա նորից աչքերը հառում էր ճանապարհին՝ ասես հորիզոնի վրա գրված տողեր արտասաներ:

Ի թիվս այլ լուրերի, ես նաև իմացա, որ Մոնթեն այժմ կասկածում էր իր նախկին ենթադրության վրա՝ թե Շիշկոյի տղաներն էին սպանել Հակոբյանին: «Գաղտնի բանակի» պարագլխի այրի Ժանետ Հակոբյանը շուտով հաստատելու էր Մոնթեի նոր կասկածները՝ թե ձգանը քաշել էին Հակոբյանի մտերիմ գործակիցները: 1991-ի սեպտեմբերին գրած մի հոդվածում Ժանետը սպանությունը վերագրեց Հակոբյանի չորս ամենամերձավոր օգնականներին՝ Հովսեփ Ա.-ին, Վարդան Կ.-ին, Կարապետ Գ.-ին ու Ալբերտ Ա.-ին: Իսկ 6 տարի անց Հակոբյանի վաղեմի հովանավորյալ գրող Գևորգ Աճեմյանը հաստատելու էր Ժանետ Հակոբյանի մեղադրանքը. մարդասպաններն իսկապես հենց այն մարդիկ էին, որոնք շարունակում էին իրենց պաշտոնական հայտարարությունները զարդարել «Հակոբ Հակոբյանը ո՛ղջ է, մենք բոլորս հակոբյաննե՛ր ենք» կարգախոսով: Եվ հենց նրանք էին դեռ մեղադրում Մոնթեին ու նրա ընկերներին՝ ժամանակին ընդդիմանալու համար այն նույն Հակոբյանին, որի կյանքին իրենք վարազի փամփուշտներով վերջ էին տվել Հունաստանի մի մայթի վրա:

Ես նկատեցի, որ Մոնթեն երբեք ներսում լուրջ խնդիրներ չէր քննարկում, և կային թեմաներ, որոնց մասին դրսում էլ չէր խոսում: Երբ, օրինակ, ես նրան հարցրի աջ բազուկի վրա մնացած սպիի մասին, նա բնազդաբար թևը հետ քաշեց, ձախ ձեռքով սպին ծածկեց և ուսերը թոթվեց.

— Ա՛հ, ոչինչ:

Նա նաև երբեք չէր հիշատակում Աթենքում մեքենայի հետևի նստարանին նստած աղջկան: Բացի այդ, Մոնթեն դադարել էր դժվարությունների հաղթահարումը խաղ համարել: Նա նախկինում իր կերակրին երբեք այնքան աղ չէր անում, որքան այժմ: Վաղ պատանեկության տարիներին ասուր ցնցուղի կողմնակից լինելով՝ նա հիմա լողանալու համար կաթսայով ջուր էր տաքացնում վառարանի վրա: Իսկ ամենից շատ ինձ զարմացրեց, որ նա չէր ուտում հացի փափուկ միջուկը՝ թողնելով այն անձեռոցիկի վրա: Ես տեսել էի ուրիշներին այդպես վարվելիս, բայց մտքովս չէր անցնի, թե Մոնթեն էլ ձեռք կբերի այդ սովորությունը. նա միշտ մինչև վերջ ուտում էր իր ափսեի պարունակությունը, իսկ հացը հատկապես՝ դա սրբության նման մի բան էր, որ չէր կարելի փչացնել: Երբ հարցրի այդ մասին, նա ասաց, որ մի անգամ քիչ էր մնացել քարն իր ատամը կոտրեր, և որ Սեդան իր հացի մեջ փայտի, մետաղի բեկորներ ու միջատներ էր գտել:

— Եթե դու Իրանում այսպիսի հաց ուտեիր, կիմանայիր, թե դա ինչպես է լինում, — ավելացրեց նա:

Հացը դարձել էր երկրի թշվառության խորհրդանիշ: Ուրիշների պես Մոնթեն էլ հավատացած էր, որ նոմենկլատուրան ուտում էր միայն ընտիր սպիտակ ալյուրից թխված փափուկ հաց: Այդպիսին էր կացությունը նաև մյուս առաջին անհրաժեշտության ոլորտներում: Երևանում հեռախոսակապի տխուր վիճակի վերաբերյալ փնթփնթալուց հետո, Մոնթեն մերժեց այն մաս-մաս բարեփոխելու գաղափարը՝ արհամարհական մի «Թո՛ւհ» անելով ու բացականչելով. «Նրանք պետք է ողջ համակարգը դեն նետեն ու նորը դնեն»: Քաղաքի փողոցները, ճանապարհները, հիվանդա-

նոցները, բնակելի շենքերը՝ բոլորն, ըստ նրա, պետք էր հիմնահատակ քանդել ու նորերը կառուցել:

Որոշ մեկնաբաններ եզրակացրել են, որ Երևան գալով Մոնթեն դարձել էր կապիտալիզմի ջատագով: Հանրակացարանի մի ծանոթ՝ ԱՄՆ բանակի նախկին սպա, որ եկել էր ինչ-որ հետազոտական առաքելությամբ, անվերապահորեն հայտարարում էր, թե Մոնթեն հակակոմունիստ էր, քանի որ հավատում էր «տնտեսական զարգացմանը»: Սակայն դա չէր համապատասխանում իրականությանը. երբ ես եղբորս հանձնեցի իր «Հունիս 1990, սոցիալիզմ, խառնաշփոթ» մենագրության համառոտ տարբերակը և խնդրեցի այն պատրաստել հրատարակության, նա տխուր խոստովանեց, որ սոցիալիզմը պարտվել էր ամենուրեք, բացի Կուբայից: Ապա նա կրկին հաստատեց ձեռագրի առաջին տարբերակում արտահայտած իր ցանկությունը.

— Մենք կարող ենք միայն հուսալ, որ իրադրությունը կբարելավվի «մյուս անգամ»:

Քանի որ «Բանգլադեշի» այդ բնակարանում տեղ քիչ կար, հարսանիքի որոշ՝ դրսից եկած հյուրեր Իջևանեցին Մաշտոցի պողոտայի հանրակացարանում: Մոնթեն սովորություն ուներ սենյակի դուռը բաց թողնելու՝ այցելուներին ընդունելու համար: Ամբողջ օրը, սկսած արևածագից, նորանոր բարեկամներ, զինակից ընկերներ ու հարևաններ թխկացնում էին բաց դռան շրջանակը՝ իրենց ներկայությունն ազդարարելու համար, ու ներս գալիս: Նրանց թրքատյաց զրույցներն ինձ ուժասպառ էին անում, մինչև որ այլևս ժպտալու եռանդ չէր մնում: Մի անգամ, նոր գնացած մի հյուրի՝ «բոլոր թուրքերին սպանելու» վերաբերյալ մտավարժանքներից համբերությունս կորցրած՝ ես ճակատս հուսահատորեն ափերիս մեջ առա.

— Գրո՛ղը տանի, ի՞նչ են մտադիր այս մարդիկ անել, Մոնթե՛. կարծում են, թե ուղղաթիռներ են վարձելու, որ այս երկիրը Միջին Արևելքից բարձրացնեն ու տանեն-գցեն խաղաղ օվկիանոսի հարավո՞ւմ:

Եղբայրս գլուխն առաջ բերեց ու աչքերը կկոցեց, մինչ ես շարունակում էի.

— Մի օր նրանք պիտի ստիպված սովորեն իրենց հարևանների հետ ապրել:

Նախքան Մոնթեն կհասցներ արձագանքել, մի ուսանողուհի, որ միջանցքից պատահաբար լսել էր իմ դիտողությունը, գլուխը

բաց դռնից ներս մտցրեց: Համարյա արտասվելով՝ նա ասաց, որ իմ խոսքն իրեն հանգստացրեց. վերջապես մեկը բարձրաձայնում էր այն, ինչի մասին ինքը երկար մտածել էր: Երբ նա գնաց, ես ինձ մեղավոր զգացի, որ խոսել էի միջանցքում լսելի լինելու չափ բարձր: Նաև զղջացի, որ նման հավակնոտ ելույթ էի ունեցել: Մոնթեն այդ ամենի համար մեղավոր չէր:

Քիչ անց երկու մորուքավոր մարդ մտան հանրակացարանի սենյակը՝ կատակախառն ողջույններով: Նրանք զինվորական հագուստով էին, մեկի ձեռքին՝ AKSU ինքնաձիգ, որի կարիքը թերևս կարող էր ունենալ միայն որևէ «բիզնեսմենի» թիկնապահ: Մոնթեն առիթն օգտագործեց՝ ներկայացնելու ինձ իր ջոկատի անդամներին: Նրանցից ավելի թխադեմի անունը «Քաչալ Սերգեյ» էր՝ շնորհիվ փայլող գագաթի: Նրանք Մոնթեի ջոկատի հետ միասին 1991-ի մարտին ճամփորդել էին Իջևան, և ապա «Հատուկ նշանակության խմբից» տեղափոխվել «Հայրենասիրական ջոկատ»: Մի քիչ կատակելուց հետո հյուրերը հեռացան: Հենց որ ոտնաձայները միջանցքում մարեցին, ես Մոնթեին անգլերեն ասացի.

— Լավ տղաներ են, բայց դու գիտես, որ եթե կես հնարավորություն էլ տաս նրանց, ադրբեջանական մի ամբողջ գյուղ կջնջեն երկրի երեսից...

Մոնթեն ինձ չառարկեց:

— Մենք կարող ենք մոռանալ ինտերնացիոնալիզմի ու նման բաների մասին, —ասաց նա հանգիստ ձայնով. — առաջին հերթին այս մարդկանց պետք է սովորեցնենք չսպանել խաղաղ բնակչությանը:

Օրեր անց, մի առավոտ, ես Մոնթեին ուղեկցեցի դեպի Հոկտեմբերյան (շուտով վերանվանվելու էր «Տիգրան Մեծ») պողոտայի վրա գտնվող մի դարպասով շինություն: Պետք դիմեինք ՕՎԻՐ՝ հարսանիքի հյուրերի մուտքի արտոնագրերը երկարացնելու նպատակով: Դարպասի առաջ, մայթի վրա, մենք խցկվեցինք մարմինների մի կույտի մեջ, որը հերթի հայկական տարբերակն էր: Մեզ երկու կողմից հրմշտող խնդրարկուների մեծ մասը եկել էր՝ արտագաղթելու փաստաթղթեր ստանալու: Ես զննեցի բազմությունը. սրանք էին Մոնթեի հայրենակիցները՝ մարդիկ, որոնց համար նա սպանել էր, մարդիկ, որոնց համար սպանվել էին նրա ընկերները. մարդիկ, որոնց համար նա տարիներ էր անցկացրել բանտում: Եվ ահա նրանք այնտեղ էին. այդ առավոտ՝ հարյուր-

ներով և այդ շաբաթ՝ հազարներով. նրանք գրեթե բառիս բուն իմաստով տրորում էին միմյանց՝ իրենց «նորանկախ» հայրենիքը լքելու համար:

Տեսարանը երկուսիս էլ շփոթեցրեց: Կարծես մի խելագար մեղ փողոցում հայհոյել էր: Այդ ամբոխի մեջ կանգնած՝ ես չէի կարողանում Մոնթեին հարցնել. արդյոք նրան մտածել չէ՞ր տալիս այն հանգամանքը, որ իր այդքան մեծաթիվ հայրենակիցներ կարող էին մի երեկո խռպոտ ձայնով հրապարակներում պահանջել «մեր հողերը», իսկ մյուս առավոտ հայտնվել ՕՎԻՐ-ում՝ Լոս Անջելես գնալու արտոնագիր աղերսելու: Ավելի ուշ ես նրան հարցրի այդ մասին՝ հնարավորին չափ մեղմ ձևով:

— Մարդկանց հեռանալը չի նշանակում, թե նրանք անկեղծ հայրենասեր չեն, — պատասխանեց նա հանդարտ, բայց սովորականից բարձր ձայնով. պատասխանն այնքան հուզիչ ու սրտաբուխ էր, որ ես առարկելու սիրտ չունեցա:

Ժամանակի մեծ մասը ես կրնկակոխ հետևում էի Մոնթեին՝ զբաղանալով, թե 1985 թ. իմ առաջին այցելությունից հետո որքան էին փոխվել քաղաքն ու նրա բնակիչները: Երևանն անխնամ էր, մարդիկ՝ ավելի անբարեհամբույր ու գրգռված: Իմ եղբայրը, սակայն, ինչ-որ առումներով բոլորովին չէր փոխվել: Մի առավոտ ես նրա հետ գնացի Բաղրամյան պողոտայի վրա գտնվող գրասենյակներից մեկը՝ հրատարակության պատրաստվող մի ձեռագիր սրբագրելու համար: Մտնելով քարանձավանման գրասենյակը՝ առաջին բանը, որ նկատեցի, այնտեղ ներկա միակ անձնավորությունն էր՝ մի ճկունիրան մեքենագրուհի՝ կարճ շրջազգեստով ու ժանյակավոր կրծկալը հմտորեն ցուցադրող վերնաշապիկով: Մոնթեն ուղիղ գնաց համակարգչի մոտ, թմփալով նստեց աթոռին՝ նրա օծանելիքի մշուշի մեջ, և սկսեց էկրանի վրա գնել տեքստը: Մտքերի մեջ դեմքը խոժոռելով՝ նա տեղ-տեղ կանգ էր առնում՝ փոփոխություն առաջարկելու կամ հարցեր տալու համար: Իսկ գեղեցկուհին կռացած էր ճիշտ Մոնթեի ուսի վերևում՝ մազերը քսելով նրա ականջին: Ահա մի տղա, որ կարող էր խավարի մեջ ամենաչնչին շարժումը նկատել, բնազդով կանխորոշել հակառակորդի հաջորդ քայլը՝ մինչև հակառակորդն ինքը որևէ միտք հղանար, և հարյուրավոր յարդ հեռվից դավաճանության հոտն առնել: Բայց նա ամբողջովին ու անհույս կերպով անգիտության մեջ էր լինում, և նրա «միացման կոճակն» անջատված (ինչպես բնորոշեց Սեդայի ընկերուհիներից

մեկը), երբ գործը հասնում էր իրեն շրջապատող կանանց ռոմանտիկ նկրտումներին: Վերջին էջն ավարտելուց հետո նա վեր կացավ, մի խուրձ թղթապանակներ խոթեց թևի տակ, գլխի բարեհամբույր շարժումով շնորհակալություն հայտնեց պարզամիտ օրիորդին և դռնից դուրս թռավ՝ շտապելով հաջորդ հանդիպմանը: Ես հետևեցի նրան ու երբեք մատնացույց չարեցի այն, ինչն ակնհայտ կլիներ ուրիշ տղամարդկանց համար:

Հարսանիքից մի քանի օր առաջ ես Մոնթեին կանգնեցրի մեր բնակարանի միջանցքի՝ ողջ հասակը ցույց տվող հայելու առջև ու մեկ-երկու պարզ պարային շարժում արեցի: Երկուսս էլ վստահ էինք, որ հարսանյաց հանդեսի ժամանակ բոլորն աչքերը հառելու էին հարսի ու փեսայի առաջին պարին, և ես գիտեի, որ Մոնթեն սարսափում էր այդ հեռանկարից: Նա իր կյանքի շատ պահեր չէր անցկացրել հայելու առաջ և ատում էր այն, իսկ պարի շարժումներն ընդօրինակելու նրա փորձերն ահավոր էին: «Կորած երեխա՛», — բացականչեց Սեդան՝ դիտելով այդ տեսարանը: Դա շռայլ գովասանք էր, որովհետև նա պարում էր ավելի շուտ կրկեսի արջի, քան կորած երեխայի նման: Մինչև այսօր չեմ հասկանում, թե ինչու Մոնթեն՝ շնորհալի բեյսբոլիստը, որ նաև քերթեի նման վազել ու ջրասամույրի պես լողալ գիտեր, կարող էր այդքան վատ պարող լինել:

Հարսանիքի առավոտյան, օգոստոսի 3-ին, ես ընտանիքի բարեկամ Վահրամի հետ գնացի Հրազդանի կիրճով հոսող գետի մոտ՝ լվալու նրա կանաչ «վիլիսը», որը պիտի հարսի ու փեսայի «լիմուզինը» լիներ: Երբ Մայլին և Սեդայի քույրերից մեկը վարդեր ու սպիտակ ժապավեններ կապեցին մեքենային, Վահրամը հարսին փոշոտ գալարապտույտ ճանապարհով տարավ Գեղարդի լեռները՝ հրաբխային ժայռի մեջ հազար տարի առաջ փորված վանքը: Սեդայի հագին եվրոպական ոճի հարսանեկան զգեստ էր, որ կարել էր նրա քույրերից մեկը, իսկ Մոնթեի հագին՝ մի պարզ եվրոպական կոստյում, որ սև կտորից կարվել էր մի քանի օր առաջ: Դա նրա՝ ավելի քան 10 տարվա մեջ ունեցած միակ կոստյումն էր: Նա նաև մեկից փողկապ էր վերցրել այդ օրվա համար, և, քանի որ սեփական ժամացույց չուներ (քանզի վաղուց հրաժարվել էր իր անունը կրող «Սեյկո»-ից, երբ այն դադարել էր ժամանակը ցույց տալ), ուստի նրա ձեռքին մի հին «Սիթիզեն» էր, որ Սեդայի տատիկն էր ժառանգություն թողել: Քարանձավանման մատուռի ներսում ես ավանդական խաչը պահել էի հարսի

ու փեսայի գլխավերևում, մինչ քահանան վարում էր արարողությունը: Երբ նորապսակները վերջապես դուրս եկան արևի լույսի տակ, հյուրերը, զուռնա-դհոլի ուղեկցությամբ, ոլորապտույտ հողե ճանապարհով իջան դեպի մի ժայռոտ ձորակի վրա թառած ռեստորանի ընդունելությունների սրահը:

Պարոն Գպրանյանն առաջարկեց խմել իր նորաթուխ փեսայի կենացը: Նա Մոնթեին չէր տեսել 8 տարի՝ այն գիշերվանից հետո, երբ Այնճարում երիտասարդն անհետացավ Զավեն Թաշճյանի մթերային խանութում: Պարոն Գպրանյանն ասաց, որ միշտ հարգել էր իր դստեր փեսացուին, բայց ընդունեց նաև, որ երկար ժամանակ ընդդիմացել էր նրանց ամուսնությանը: Մոնթեն Սեդային վտանգի էր ենթարկել և երբեք որևէ տեղ հաստատվելու նշաններ չէր ցուցաբերել: Այո՛, պարոն Գպրանյանն այնքան դեմ էր ամուսնությանը, որ մի անգամ նույնիսկ սպառնացել էր հրաժարվել աղջկանից, եթե նա ամուսնանար իր բանտարկյալ սիրեցյալի հետ: Հենց որ Մոնթեն իմացել էր այդ մասին, Poissy բանտից հեռաձայնել էր պարոն Գպրանյանին՝ բուռն «Բարև՛, հայրիկ» ողջույնով: Հայտնելով Սեդայի հանդեպ իր սերը՝ Մոնթեն ապագա աներոջը խոստացել էր ամեն ինչ անել՝ նրան ապահով ու երջանիկ պահելու համար: Միայն դրանից հետո պարոն Գպրանյանը հավատացել էր, որ Մոնթեն լավ փեսա է լինելու:

Պարոն Գպրանյանի կենացից հետո Մոնթեն զգաստ կանգնեց սեղանի գլխին՝ աչքերը հառած ընդունելությունների սրահի պատից այն կողմ մի հեռավոր կետի: Երաժշտությունը դադարեց, և բոլոր հյուրերը լռեցին: Մոնթեն բարձրացրեց «օղի» կոչվող զուլալ խմիչքի բաժակն ու առաջարկեց Ալեքի և «մյուս ընկերների կենացը, որոնք այսօր մեզ հետ չեն»: Նույնիսկ Մոնթեի կյանքի այդ ամենաուրախ օրը Կաուլենն ու Արամը համարյա շոշափելիորեն ներկա էին: Լռություն տիրեց, և Սեդան երգեց «Ղաբաբաղի ողբը»՝ Մոնթեի սիրած երգերից մեկը:

Դհոլները հնչեցին ողջ գիշեր, և գինին հոսեց մինչև վաղ առավոտ: Մեր հոր պնդումով՝ նորապսակներն իրենց մեղրամսի առաջին գիշերն անցկացրին Երևանի «Դվին» հյուրանոցում:

Հարսանիքից 2-3 օր հետո ես Մոնթեի հետ գնացի ինչ-որ «լավ տղաների» հետ ենթադրյալ կարճ հանդիպման՝ Երևանից 10 մղոն դեպի հարավ, ճանապարհի վերջում. ծվարած Մասիս քաղաքում, որ 10000 բնակչություն ունի: Քաղաքացիները ոչ վաղուց վտարել էին իրենց ադրբեջանցի հարևաններին և ընտրել մի երիտասարդ, ազգայնական քաղաքային խորհուրդ: Մեր գնալու նպատակն էր՝ կարգավորել «Հայրենասիրական ջոկատի» կողմից «ԳԱԶ 66» երկառանցքանի ռազմական բեռնատարի օգտագործման հարցը (հավանաբար այն բռնագրավվել էր մի վտարված ադրբեջանցի հարևանից): Ես նախկինում էլ լսել էի այդ նշանավոր բեռնատարի մասին. Մոնթեն հավատացած էր, որ այն առաջինն է լինելու իր ջոկատի տրամադրության տակ դրվելիք ռազմական մեքենաների պատկառելի շարժակազմի մեջ:

Գալով Մասիս՝ մենք հայտնվեցինք քաղաքապետարանի պատի տակ ու նստեցինք այնտեղ դրված աթոռներին: Կես տասնյակի չափ 20-30 տարեկան տեղացի ծառայողներ հանքային ջուր էին խմում ու քննարկում հետխորհրդային հավանական վարչակարգը: Գլխավոր հավակնորդներն էին միապետությունը կամ իսրայելական մոդելը: Երկրորդ դեպքում Հայաստանը պիտի դառնար Քեռի Սեմի տրամադրության տակ դրված մի կայազոր: Մոնթեն լուռ էր, մինչ նրանք շարունակ միապաղաղ ձայներով նկարագրում էին Հայաստանի փառահեղ ապագան Նոր Աշխարհակարգում: Մի պահ ես միլիամտեցի զրույցին ու հարցրի. արդյոք նրանք հաշվի առե՞լ են այն հնարավորությունը, որ Հայաստանը կարող է շուտով հայտնվել նույն դժվար կացության մեջ, ինչպես մի քանի տասնյակ այլ ազատացած կապիտալիստական «դեմոկրատական» երկրներ Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում:

— Էէ՛հ, — ինքնագոհ տեսքով ասաց մի երիտասարդ պաշտոնյա, — էդ կապիկները նախ պիտի ծառերից իջնեն, հետո նոր քայլել սովորեն:

Ես նայեցի եղբորս, որ խորասուզված տեսքով նստել էր աթոռին ու խուսափում էր հայացքով ինձ հանդիպելուց: Նա գիտեր, թե ինչ եմ մտածում, ես էլ գիտեի, որ նրա համար պարզ է, թե ինչ եմ մտածում:

Հանքային ջրի ևս մի տասնյակ չշերից հետո Մոնթեն վերջապես ընդհատեց վեճը՝ կրկնելով հարցերի հարցը՝ ո՞ւր է բեռնատարը: Զրուցակիցներից մեկը պատասխանեց, որ, ցավոք, իրենց չէր հաջողվել մեքենայի տեղը պարզել: Ինքներս մեզ հայհոյելով՝ մենք գնացինք դեպի մեր մեքենան: Երբ «Լադան» խճաքարով պատած ճանապարհով ճարճատյունով դուրս էր գալիս Մասիսից, ես նկատեցի դաշտի եզրին ժանգոտող մի «ԳԱԶ 66»: Զորս

անվադողերն էլ տափակած էին, տակը հաղորդակների բարձրությամբ խոտ էր աճել, և ես վստահ չէի, որ մեջը շարժիչ կար:

— Սա՞ է քո բեռնատարը, — հարցրի կողքս նստած եղբորս, որ հայացքն ուղղել էր այդ ավերակին:

— Հա՛, — ասաց նա՝ հավասարապես չփոթված ու զարմացած:

Պատասխանն ինձ տարավ անցյալ, երբ Բեյրութում Մոնթեի հետ գնացել էինք հերթական «լավ տղայի» բնակարան: Ենթադրվում էր, թե նա պիտի եղբորս ընկերակցեր հեղափոխական ինչ-որ գաղտնի ձեռնարկում: Հեղափոխության փոխարեն, սակայն, այդ «լավ տղան» մի ողջ ցերեկ մեզ զբաղեցրեց «Սուպեր-8» կինոժապավենի վրա նկարահանված հոգեմաշ էժանագին western-ներով:

«Լավ, համարե՛նք սա մի կորած ցերեկ», — տուն գնալիս նույն չփոթվածության ու զարմանքի ձայներանգով ասել էր ինձ Մոնթեն: Այժմ, 12 տարի անց, պատմությունը կրկնվեց: Ես թեև գցեցի եղբորս ուսով: Որքան էլ դոնկիխոտական՝ այդ հուսահատ մարդկանց հանդեպ նրա հավատի մեջ ինչ-որ սրտառուչ բան կար:

Մի երկու օր անց Մոնթեն ինձ ուղեկցեց օդանավակայան. ես պետք է թռչեի Մոսկվա՝ Չիկագո վերադառնալու համար: Թռիչքը սովորականի պես հետաձգվեց, այնպես որ մենք թափառում էինք սպասասրահում: Ուշացումը հնարավորություն տվեց անդրադառնալու մի թեմայի, որը քննարկելուց Մոնթեն խուսափում էր: Երկու շաբաթ առաջ ես փորձել էի երեխաների հարցը բարձրացնել, բայց Մոնթեն աչքերը պտտեցնելով փակել էր այն: Նա իր առաջնահերթ խնդիրներն արտահայտել էր 1988 թ. Poissy բանտում գրած մի հոդվածում. «Ամենակարևոր ազգային պարտավորությունն այսօր մեր պայքարին մասնակցելն է: Ով անձամբ չէ՝ մասնակցում հիմա, չպետք է փորձի այդ թերին լրացնել՝ դաստիարակելով մի նոր սերունդ, որի վրա կընկնեն իր չկատարած պարտականությունները»:

Բայց մի՞թե դրանից առաջ, 1983 թ., նա չէր նշել մեկ այլ պարտավորություն՝ լույս աշխարհ բերել Կառլեն Անանյանի ու Արամ Վարդանյանի անունները կրողներին: Եվ մի՞թե Մոնթեն երջանիկ չէր եղել, երբ «Բանգլադեշի» բնակարանում զվարճացել էր այցելության եկած իր քրոջ երեխաների հետ՝ մինչև ծնողները թե՛ երեխաներին, թե՛ քեռուն կզգուշացնեին, որ նրանք կարող են կահույքը կամ այլ առարկաներ փչացնել:

Օդանավակայանում, երբ ես բարձրացրի երեխաների հարցը, Մոնթեն ինձ զարմացրեց: Փոխանակ հարցից ազատվելու կատակով կամ քիթը կնճռոտելով՝ նա նախ լսեց, հետո պատասխանեց: Այո՛, ինքն ու Սեդան մանրամասնորեն խոսել էին այդ մասին, բայց հիմա հարմար ժամանակ չէր: Ինքը դեռ երկրում օրինական կարգավիճակ չուներ, և իրենք ապրում էին հանրակացարանում: Իսկ ավելի կարևոր էր այն, որ եթե Սեդան հղիանար, ինքն ուզելու էր «օրվա բոլոր պահերին նրա հետ լինել»: Ինչպե՞ս պետք է այդ աներ, երբ շուտով, հավանաբար, Լեռնային Ղարաբաղում ցատկելու էր խրամատի մեջ: Ոչ ինքը կարող էր միաժամանակ երկու տեղում լինել, ոչ էլ Սեդան կարող էր իրեն միանալ խրամատներում՝ առնվազն հղիության վերջին երեք ամիսների ընթացքում:

— Պարզապես արա՛ այդ, — ասացի ես, — արա՛ հիմա, և ամեն ինչ իր տեղը կընկնի:

Նա հոգոց հանեց, նայեց իմ գլխավերևն ու ասաց.

— Տեսնենք...

Իմ թռիչքը հայտարարվել էր: Ես զրկախառնվեցի մանուկ եղբորս հետ:

Միշտ խուսափելով զգացմունքները հրապարակավ ցուցադրելուց՝ Մոնթեն մի կոպտավուն «Չէչ՛...» արտաբերեց. կարծես բեյսբոլի մանկական թիմի անդամը քառորդ դարի ընթացքում չէր մեծացել:

Գլուխ 14. Ինձ «Ավո՛» ասեք

1991 թ. օգոստոսի 19-ի առավոտյան Մոնթեն միացրեց իր ռադիոընդունիչն ու խոժոռադեմ լսեց BBC-ի հաղորդագրությունը Մոսկվայից: Ռուսաստանի ալիքները բռնող երևանցիներն այդ առավոտ լսեցին Զայկովսկի՝ «պուտչի» երաժշտությունը: Մոսկվայի հեռուստաալիքներից մեկը մի տեսահոլովակ էր ցուցադրում, որի վրա եղջերուն լճակից ժամերով ջուր էր խմում, իսկ մի այլ ալիք ցույց էր տալիս «Կապիկների մոլորակը» ֆիլմը: Երևանից իմ հեռանալուց մի քանի օր անց երեք բարձրաստիճան խորհրդային պաշտոնյա՝ ՊԱԿ-ի ղեկավար Կրյուչկովը, պաշտպանության նախարար Յազովը և փոխնախագահ Յանաևը պետական հեղաշրջում էին կատարել գերագույն քարտուղար Գորբաչովի դեմ, որին նրանք մեղադրում էին երկիրը քանդելու համար:

Նույնիսկ երբ զրահամեքենաները դիրքեր գրավեցին Երևանի խաչմերուկներում, Լևոն Տեր-Պետրոսյանը դատապարտեց հեղաշրջումը և իր աջակցությունը հայտնեց Գորբաչովի մրցակից՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ, գնալով ավելի մեծ ժողովրդականություն վայելող Բորիս Ելցինին: Մի քանի օրից, որոնց ընթացքում Երևանում որևէ կարևոր իրադարձություն տեղի չունեցավ, հեղաշրջումը ձախողվեց՝ չգտնելով ժողովրդի աջակցությունը: Շուտով Ելցինը կատարելու էր իր հակահեղաշրջումը՝ դարձյալ Գորբաչովի դեմ, և կայսերական Ռուսաստանի սպիտակ-կապույտ-կարմիր դրոշը բարձրացնելու Կրեմլի վրա: Այդ միջոցին Երևանում Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920) կարմիր-կապույտ-նարնջագույնը կրկին ծածանվում էր կառավարական շենքերի վրա՝ 70 տարի նավթալինի մեջ մնալուց հետո:

Մոնթեն հանգիստ կանգնել էր իր հանրակացարանի սենյակի լուսամուտի մոտ և դիտում էր, թե ինչպես է փողոցում վերակենդանանում առավոտյան երթևեկությունը: Poissy բանտից մի երկու տարի առաջ գրելով՝ նա նկարագրել էր Հայաստանի անկախության պահանջը (անդիմադրելի մի ուժ ստիպում էր նրան այդ բառը դնել չակերտների մեջ) որպես «ազգային ինքնաոչնչացման», «աղետի» և «դիմակավոր մղձավանջի» կոչ: «Ջնայած ամեն կողմից հնչող քննադատությանը, – գրում է նա, – փաստորեն Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բնակիչներն այսօր վայելում են ավելի բարձր կենսամակարդակ ու անվտանգություն, քան երբևէ հայերն ունեցել են իրենց երեքհազարամյա պատմության ընթացքում»: Բայց այժմ օգոստոսյան հեղաշրջման փորձի և Ելցինի հակահեղաշրջման արդյունքում ոչինչ չէր մնում անել, բայց միայն փաստացի իրավիճակից հնարավորինս օգուտ քաղել:

Ռուսական բանակը և Ներքին գործերի նախարարությունն իջեցրին կարմիր դրոշն ու դադարեցրին իրենց գործողությունները Լեռնային Ղարաբաղում: Հենց որ ռուսները հեռացան, ազատ դաշտ ստեղծվեց հայերի և ադրբեջանցիների միջև ռազմական հակամարտության ծավալման համար: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը և Շահումյանի շրջանի տեղական կառավարման մարմինն ազդարարեցին Ադրբեջանից անկախ փոքր հայկական պետության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնադրումը: (Իսկ ինչո՞ւ ոչ: Եթե Ադրբեջանը կարող էր դուրս գալ Խորհրդային Միության կազմից ինքնորոշման իրավունքով, ինչո՞ւ Ղարաբաղը չէր կարող դուրս գալ Ադրբեջանի կազմից՝ նույն պատճառաբանությամբ):

Տեր-Պետրոսյանը, սակայն, պաշտոնապես չէր կարող ճանաչել «մայր Հայաստանից» դեպի արևելք գտնվող նորաստեղծ պետությունը. նրա ղեկավարած Հայաստանի Հանրապետությունը քարուքանդ էր սեյսմիկ ու սոցիալական ցնցումներից, և նա հնարավորություն չուներ կատարելու մի քայլ, որ համազոր կլիներ Ադրբեջանին պատերազմ հայտարարելուն: Ադրբեջանի իշխանություններին, սակայն, շատ չհուզեց Լեռնային Ղարաբաղի իրադարձություններից դիվանագիտական հեռավորության վրա մնալու Տեր-Պետրոսյանի փորձը: Նրանք գիտեին, որ Պաշտպանության նախարարության նրա զինակիցները վառելանյութ, սննդամթերք ու զինում էին մատակարարում Լեռնային Ղարաբաղի անջատողականներին, ուստի խստացրին Հայաստանի Հանրապետության ադեստալի շրջափակումը: Նրանք գրազ էին գալիս, որ եթե կսրողանային խեղդել Հայաստանը տնտեսապես, Լեռնային Ղարաբաղի ապստամբությունը կմարեր:

Միևնույն ժամանակ գեներալները Մոսկվայում ապստամբությունը որպես առիթ օգտագործեցին՝ անհնազանդ Ադրբեջանն ու նրա նավթի հանքերը Ռուսաստանի շահերի ոլորտ վերադարձնելու համար: Ռուսական զորքերը՝ «մեր խարտյաշ եղբայրները», ինչպես մի հայ սպա նրանց ինձ մոտ բնորոշեց հեգնական կիսաժպիտով, Երևանում մնացին իրենց դիրքերում:

Ռուսաստանի կայսերական դրոշը Կրեմլի վրա բարձրացնելուց մի քանի օր հետո անցյալից մեկ այլ դեմք թակեց Մոնթեի դուռը Երևանում: Միրիամ Գոմը՝ մի համակրելի թղթակից, հեղաշրջման հետևանքներն էր լուսաբանում ֆրանսիական l'Evénement պարբերականի համար: Մոնթեն առաջին անգամ այդ կնոջը հանդիպել էր Փարիզում, «Արդարադատության պալատում», Ֆրանսիայից իր վտարումից մի քանի օր առաջ: 1989 թ. տեղի ունեցած 20 րոպեանոց հայցադրույցի ընթացքում Գոմը զարմացել էր, որ սարսափելի ահաբեկիչն իրականում քաղաքավարի, զվարճալի ու խելացի էր՝ իր սպասած մարտաշունչ մոլեռանդից բոլորովին տարբեր: Այժմ, իրենց վերջին հանդիպումից մոտ 3 տարի անց, Գոմը եկել էր այցելելու նրան Երևանում: Երբ Մոնթեն առաջարկեց ուղեկցել նրան Ղարաբաղում որպես թարգմանիչ, Գոմը շնորհակալությամբ ընդունեց առաջարկը:

Սեպտեմբերի 12-ին Սեդան մի բաժակ ջուր լցրեց ճանապարհին, երբ ամուսինը մեկնում էր Էրեբունի օդանավակայանի ռազմական բաժինը՝ Լեռնային Ղարաբաղում իր առաջին ճամփորդության առաջին փուլն սկսելու: Քիչ հետո Մոնթեն ու Գոմը պայուսակները ձեռքներին կորեցին-անցան թռիչքադաշտն ու տեղավորվեցին մի հին МИ-8 ուղղաթիռի թունելանման ճամփորդասրահի նստարանին: Ուղղաթիռն այն 6 կամ 7 տարիքավոր քաշող ձիերից էր, որոնց վրա դեռ երևում էին «Աերոֆլոտի» նարնջագույն ու կապույտ գունաթափ տարբերանշանները՝ հիշեցնելով իրենց նախկին՝ տեղական փոխադրամիջոցի գործառույթը: Քանի որ Արցախը բոլոր կողմերից շրջապատված էր Ադրբեջանով, և բոլոր ավտոճանապարհները փակ էին, ուղղաթիռներն էին Հայաստանի հետ օդային կամուրջ ապահովում:

Օդաչուի իր խցիկից Ռաֆոն դիտում էր, թե ինչպես էին զինվորները ուղղաթիռի ետևամասում բարձում ալյուրի ու բրնձի պարկեր, դիզելային վառելանյութով տարաներ, փամփուշտների արկղեր: Ուղղաթիռը նախատեսված էր առավելագույնը 30 ուղևորի համար, բայց երկու անգամ ծանր բեռ էր տանելու: Շարժիչի պտույտների աղմուկը վերաճեց զորեղ հոնդյունի: Մոնթեն դարձավ դեպի Գոմն ու բղավեց շարժիչի ձայնի մեջ լսելի, բայց ոչ շատ բարձր ձայնով.

— Այսուհետև ինձ «Ավո՛» ասեք:

Նա Երևանում էր թողնում իր իսկական անունը, որի հետ նաև՝ «Գաղտնի բանակի» հետ կապված անցյալը:

Մեղմ օրորվելով՝ գերբեռնված ուղղաթիռը հևոցով գնում էր դեպի արևելք՝ Հայաստանի Հանրապետությունն Արցախից բաժանող նեղ ժայռոտ արանքի վրայով: Հակաօդային հրաձիգներից խուսափելու համար այն ընթանում էր լեռների բարձրացող կատարների երկայնքով՝ ամենաբարձր սոճիներից վեր՝ հասնելով ծովի մակերևույթից 3000 ոտնաչափ բարձրության: Այն ճախ թեքվեց՝ թռչելով դեպի հյուսիս, Արցախի ամենահյուսիսային սահմանից այն կողմ գտնվող հայաբնակ մի տարածք: Դա Գյուլիստանն էր՝ «Վարդերի երկիրը»:

Ուղղաթիռը վայրէջք կատարեց մի ցածր բլրի վրա, իսկ գյուղացիները սաստկացող աղմուկով գրոհում էին այն: Կոպիտ, չսափրված, հնամաշ կոստյումներ հագած լեռնցիները պտտվող շարժիչների ձայնի միջից ողջույններ էին բղավում, իսկ անհեթեթ զգեստներով դպրոցական աղջիկները և կապույտ ու դեղին ծաղկավոր գլխաշորերով կարճահասակ կանայք բարձրացած փոշու մեջ ուրվականների նման առաջ էին խցկվում: Բղավող գյուղացիները բեռնաթափում էին «կատյուշա» հրթիռներ, մի խրտնած ձի ծառա էր եղել, իսկ զինվորական հագուստով մի հայր ուղղաթիռի պատուհանից ներս էր հրում իր փոքրիկ՝ մազերի մեջ սպիտակ ժապավենով աղջկան:

Մոնթեն վերցրեց իր պայուսակն ու դուրս ցատկեց ուղղաթիռից: Երբ կանգնած տեղից նայում էր ներքև՝ հորիզոնին, նրան թվում էր, թե կարող է տեսնել երկրագնդի կորությունը: Կյանքի կեսը նա անցկացրել էր մութ, նեղ տեղերում: Այժմ կանգնած էր քամուց մտրակվող բլրի վրա. վերևում՝ ոչինչ, բացի կապույտ երկնքից, շուրջն էլ՝ ոչինչ, բացի արևի լույսից:

Մոնթեն ու Գոմը մագլցեցին միկրոավտոբուսի մեջ, որը ցնցվելով շարժվեց անասֆալտապատ ճանապարհներով՝ անցնելով կարտոֆիլ փորող-հանող կանանց, դոտկատեղին պարան կապած երեխաների մոտով: Ադրբեջանցիները վաղուց զրկել էին շրջանն էլեկտրականությունից ու վառելիքից՝ նախքան հյուսիս-արևմուտքում գտնվող գյուղերից փախստականներ կգային:

— Ես չէի կարող պատկերացնել, թե որքան ավելի աղքատ ու հետամնաց էր այդ տարածքը՝ նույնիսկ Հայաստանի՝ ամենավատ վիճակում գտնվող գյուղերի համեմատ, — գրում էր Մոնթեն մեկ երկու շաբաթ անց. — կարծես Աֆղանստանի լեռներում լինեի:

Երբ նրանք մտան Շահումյան քաղաքը, այնտեղ բազմաթիվ՝ հավանաբար մոտ 200 տղամարդիկ կային. նրանք թրև էին գալիս

կամ պպզել էին՝ գունաթափ կոստյումներով ու ջարդված, կրունկները մաշված կոշիկներով: Մոնթեն ճանաչեց 2-3 փոքր ջոկատների մարտիկների՝ խառնված կողքի գյուղերից եկած մոտ 40 կամավորների հետ: Ոմանց ծնոտներին պատանեկան աղվամազեր կային, ոմանք էլ ալեխառն բեղերով էին: Մեծ մասն անկոշիկ էին, շատերն՝ առանց համազգեստի, և ոմանք առանց հրացանի էին: Նույնիսկ համազգեստավորները զինվորական հագուստի, կամուֆլյաժի ու դահուկորդի համազգեստի աններդաշնակ շորակույտ էին կրում: Բացառություն էին կազմում երկու խումբ ահազդու մարդիկ՝ սև համազգեստներով ու վեր ոլորած բեղերով: Նրանց գոտիներից դաշույններ ու սվիններ էին կախված: Դրանք «Արարո» և «Արամո» ջոկատների մարտիկներն էին:

Այդ գիշեր Շահումյան քաղաքի շտաբում Մոնթեն, այժմ՝ Ավոն, կախ ընկած ծալովի մահճակալից դոշակը քաշեց-գցեց գետնին, պառկեց ու մտքերի մեջ ընկավ, մինչև որ կարողանար ննջել: Մթան մեջ մարդիկ էին գնում-գալիս, փամփշտակալները չխկացնում ու զրնգացնում: Մոնթեն լսում էր: Դա չափազանց մեծ իրարանցում էր՝ պաշտպանական պատրաստություն լինելու համար: Զայները պատկանում էին հարձակման համար գոտեպնդվող մարտիկների: Հավանաբար մեկը որոշել էր, Շահումյանի բնակիչներին տեղահանելու փոխարեն, հարձակվել ՕՄՕՀ-ի դիրքերի վրա: Մոնթեն խոժոռվեց. ափսոս որ սպորտային կոշիկներով ու անզեն էր եկել այդ լեռները:

Մյուս առավոտ Մոնթեն ու Գոռը Գոռի՝ 21-22 տարեկան մի նիհար մարտիկի ուղեկցությամբ գնացին զինապահեստ: Այնտեղ կողք-կողքի պատին հենված էին հին ժանգոտած Mosin-Nagant-ներ ու նոր պպզուն մարտական ինքնաձիգներ, «կատյուշա» և «ալազան» հրթիռներ, հրթիռարձակներ և մի 14,5 միլիմետրանոց հակաօդային հրանոթ: Այդ զինանոցը շատ ավելի մահաբեր էր, քան հակամարտության նախորդ փուլում օգտագործվող որսորդական ու կոտորակավոր հրացանները: Գոռը դիտում էր, թե ինչպես էր Մոնթեն մեկ առ մեկ ինքնաձիգները դնում ուսին ու զննում՝ նշելով արտադրողներին ու սերիական համարները: Նա ուսին դրեց մի նռնականետ.

— Ջրո՜ւ, ջրո՜ւ, ջրո՜ւ, — ընդօրինակեց Մոնթեն կրակ ժայթքող զենքի ձայնը. — ի՞նչ հոյակապ զենք է. ես կարող էի սրանից կրակած լինել առաջ, Լիբանանում... Կամ այս մեկից...

Գոռը ժպտաց: Շահումյանին միշտ պետք էին նոր մարտիկներ, իսկ Մոնթեն, թվում էր, գիտեր՝ ինչպես վարվել ինքնաձիգի հետ: Գոռը ներկայացրեց նորեկին իր զինակից ընկերներին: Այդ օրվա մի լուսանկարում Մոնթեն կանգնած է նրանց խմբի մեջտեղում, մի քարուքանդ գյուղական տան ստվերում շարված ավազապարկերի հետևում: Նա միակն է, որ ինքնաձիգ չունի, բայց գոտու տակ քողաներկված զինվորական վերնաշապիկ է մտցված: Թարգմանչից մարտիկ նրա փոխակերպումը համարյա ավարտված էր:

Սեպտեմբերի 14-ի՝ շաբաթ օրվա առաջին 5 ժամվա ու 45 րոպեի ընթացքում մարտիկները՝ ընդամենը 120 հոգի, Վերիշեն գյուղի մատույցներում այս ու այն կողմ էին վազում հնձած ցորենի դաշտի միջով: Ադրբեջանցի դիպուկահարները դիմացի բլուրներից ծրագծող գնդակներ էին կրակում, բայց հայ մարտիկները կրակին չէին պատասխանում: Մոնթեն ու Գոռը երկանիվ հրետասայլով մի փոքր հրանոթ, ավելի քան 500 մետր հրելով, բարձրացրին ու տեղադրեցին բլրի վրա: Բացի հրթիռներից ու մի երկու տեղական արտադրության թեթև ականանետերից, 72 միլիմետրանոց հրանոթը հայկական կողմի միակ հրետանային միավորն էր: Այն մնացել էր Հայրենական մեծ պատերազմից. խորհրդային բանակը նվիրել էր այն մի կոլտնտեսության, որն արծաթի յոդիդի գնդակներ էր կրակում երկինք՝ անձրևային ամպեր առաջ բերելու համար: Այժմ այն մարտական զինամթերք էր կրակելու:

Առավոտյան ժամը 5-ի մոտ խոսակցություններն ու շշուկները դադարել էին, իսկ մարտիկները խրամատների ու ավազապարկերի միջից աչքերը հառել էին մի քանի հարյուր մետր այն կողմ բարձր խոտի ու բարդիների մեջ գտնվող անտեսանելի թշնամուն: Խրամատների մեջ վայրի դաղձի հոտ էր տարածվել: Ադրբեջանցիները՝ ներառյալ խորհրդային 4-րդ բանակի 23-րդ գումարտակից մնացած մարտիկները, լավ դիրքում ունեին մի մահաբեր 100 միլիմետրանոց հրանոթ: Ճիշտ դրա հետևում Մոնթեի ընկերների առաջին նպատակակետն էր՝ Վերիշենից Բուզլուխ գյուղը տանող ճանապարհին նայող չորս բլուր: Բլուրների լանջին՝ 5-6 կիլոմետր դեպի արևմուտք, նրանց երկրորդ, երրորդ և չորրորդ նպատակակետերն էին՝ Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը: Երեք ամիս առաջ ՕՄՕՀ-ը տեղահան էր արել այնտեղից հայերին: Այժմ նրանց հետ բերելու ժամանակն էր:

Ժամը 6:20, երբ սարերի վրա, աջ կողմում, արևն սկսեց շողալ, Մոնթեն քաշեց հրանոթի ձգանի քուղը՝ առաջ բերելով մի խլա-

ցուցիչ պայթյուն, որը կաքավներին թռցրեց կարճ հնձած դաշտի վրայով: Հակահարձակումն սկսվել էր: Ավտոմատ զենքերի շարունակ կրկնվող «ռա-տա-տատ»-ը ոռնոցի վերածվեց, իսկ սև վառոդի ու կորդիտի հոտը խեղդեց դաղձի բուրմունքը: Տասնյակ փորձերից հետո վերջապես Գոռը ցուցամատը միացրեց բթամատի հետ՝ ի նշան այն բանի, որ իրենց վերջապես հաջողվել էր հարվածել ուղիղ ադրբեջանական հրանոթին: 8:30-ի մոտ նրանք արդեն հետ էին մղել ադրբեջանցիների առաջավոր դիրքերը, չնայած թշնամին դեռ պահում էր բարձունքները:

Հայերը վերալիցքավորեցին զենքերը և առաջացան դաղձի ու դեղին վայրի ծաղիկների միջով: Շուտով թշնամին սկսեց գնդակների տարափի տակ նահանջել բլուրներն ի վեր: Կռվի առաջին չորսուկես ժամվա ընթացքում Մոնթեի ընկերներին հաջողվեց գրավել չորս գագաթներից երեքը, ինչպես նաև՝ Բուզլուխ գյուղը: Ադրբեջանցիները նահանջեցին դեպի չորրորդ գագաթը, և հայերը շրջապատեցին նրանց: Թշնամու զինվորներն այժմ կռվում էին իրենց կյանքը փրկելու համար, ինչպես Մոնթեն նկարագրում էր սեպտեմբերի 27-ի մի նամակում, այնպես որ՝ նրանք «շատ խիստ դիմադրություն ցույց տվեցին»: 1:00 հանկարծ մի ադրբեջանական ուղղաթիռ հայտնվեց, կրակի տակ պտույտ գործեց ու անհայտացավ լեռան հետևում՝ ողջ մնացած ՕՄՕՀ-ականներին վերջին գագաթից բարձրացնելու համար: 1:30-ի մոտ Բուզլուխի ճակատամարտն ավարտված էր: Այն տևեց 7 ժամ և 10 րոպե:

Ճանապարհին կոտորակառումբերի բեկորներ էին թափված՝ բարձրանալով Վերիշենից դեպի բարձունքի վրա գտնվող Բուզլուխ, իսկ վառված մսի հոտը գերակշռում էր կորդիտին ու վայրի դաղձին: 3 հայ էր սպանվել, որոնց թվում՝ «Արաբոյի» էդիկը: Ադրբեջանական կողմից սպանվել էին 13 հոգի՝ բոլորը զինվորներ, բացի մի դիակապուտից: Մոնթեն զննեց մարտադաշտը: Մի ՕՄՕՀ-ական բարձրացրած ձեռքերով գրկել էր օդը՝ քիթը ցեխի մեջ, իսկ իրանն արկի պայթյունից իրիսի պես ձգված:

Սեպտեմբերի 27-ին գրած իր նամակում նա այդ օրվա իրադարձություններին զուսպ գնահատական տվեց՝ նշելով, որ «ճակատամարտը լավ ծրագրված էր ու բավական կազմակերպված»: Բայց հետո, 1992-ի հունվարի 22-ին, մի տեսագրված ելույթում նրա գնահատականն առավել ոգեշունչ էր. «Այսպիսով, նոր շրջանի հայոց պատմության մեջ առաջին անգամ, հայերը կարողացան տարածք վերագրավել»: Հայերը սովոր չէին հաղթանակներ տոնել. հիշվող մարտերի մեծ մասը՝ սկսած 451 թ. Ավարայրի ճակատամարտից մինչև 1896-ին «Բանկ Օթոմանի» գրավումը, ավարտվել էին պարտությամբ: Բելգիայում սովորելու տարիներին Մոնթեն կարդացել էր Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը և գրողի խոսքերը դարձրել իրենը. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն փառք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Բուզլուխի ճակատամարտը վերջ տվեց նահանջին: Մտնելով գյուղ՝ մարտիկներն այնտեղ փրկելու քիչ բան գտան: Տները բռնագրաված ադրբեջանցիները փախչելիս փչացրել էին այն ամենը, ինչ չէին կարողացել տանել իրենց հետ՝ կահույք, վարագույրներ, դոշակներ, ամանեղեն, թթուների ու պահածոների տարաներ: Նրանք նույնիսկ գնդակահարել էին շներին: Գոռը նայում էր մի վերաղարձող գյուղացի կնոջ, որ արցունքները սրբելով ասում էր. «Այնքա՜ն տարիներ էին պետք տունս կառուցելու համար... ամբողջ կյանքս. և հիմա տեսե՛ք, թե ինչ են արել»: Հայկական պղծված գերեզմանոցի տեսարանն ավելի հավոր էր. ջարդված գերեզմանաքարերի արանքներում քանդված գերեզմաններ էին, որոնցից դիակներ էին նայում:

«Արաբոյի» մարտիկների հետ ուրախ ճաշ ուտելուց հետո, Մոնթեն ու Գոռը տեղավորվեցին Բուզլուխի՝ լուսնի լույսով ողողված սարերի մեջ գտնվող մի մեծ տան մեջ: Երկար օր էին ունեցել, և անքուն գիշեր էր սպասվում: Ոմանք հերթով պահակ էին կանգնում, մինչ մյուսներն ընդհատումներով քնում էին խրամատներում՝ պարբերաբար արթնանալով հրաձգության ձայներից:

Մյուս առավոտյան Գոռը Մոնթեին լուսանկարեց՝ շտաբի բակում մի փայտե նստարանի վրա քնած: «Զվարճալի տղա» (Drôle de garçon), մտածեց թղթակիցը: «Նա մշտապես քարտեզներ է տնտղում և անընդհատ նայում իր ժամացույցին, – գրեց Գոռն իր նոթատետրում, – նա գիշերում է գետնին՝ քնապարկի մեջ, նույնիսկ եթե մահճակալ կա: Աչքերը բացելուն պես ռադիոն է միացնում՝ BBC, ամեն առավոտ, անգամ խրամատում, և ոչ մի բառ չի ասում մինչև նախաճաշելն ու լվացվելը»:

Ժամը 16-ին, հետախույզների ազդանշանից հետո, մարտիկների մի խումբ սկսեց առաջանալ դեպի Մանաշիդ՝ հյուսիս տանող ճանապարհի երկու կողմում կանգնած տների մի խումբ: Առանց դիմադրության գյուղ մտնելով՝ նրանք իջեցրին ադրբեջանական դրոշն ու այն պատռեցին ժապավենների, որոնք կապեցին իրենց զենքերի փողերին՝ ի նշան հաջողության:

Եղանակը վատացավ՝ երկինքը լցվեց գորշավուն-սպիտակ ամպերով: Ցեխաշաղախ մարդիկ խրամատում այլևս հազիվ էին խոսում: Հանկարծ մի ձայն խախտեց լռությունը: Դա Մոնթեն էր, որ նոր վերադարձել էր Բուզլուխից:

— Ես երբեք այդպիսի ականանետ չէի օգտագործի, — ծոր տվեց նա՝ աչքերը հառելով խրամատում գտնվող տեղական արտադրության ականանետին. — իմ մի ընկեր զոհվեց ճիշտ այդպիսի ականանետի պատճառով. նա 20 տարեկան էր: Խրամատում գտնվող մյուս մարտիկները, սակայն, իրենց նեղություն չտվեցին Մոնթեի զգուշացմանն ուշադրություն դարձնելու:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 16-ին, Մոնթեն ու նրա ընկերները ետ մղեցին ադրբեջանցիների երկու հարձակում: Կեսօրի մոտ, երբ պարզ դարձավ, որ թշնամին չի փորձելու մտնել Մանաշիդ, լուրեր հասան, որ ադրբեջանցիներն սկսել են հրետանակոծել Կարաչինարը՝ 15 մղոն դեպի արևելք գտնվող հայկական մի գյուղ: «Արարատի» մարտիկների ղեկավար Մանվելը ծալեց իր վերմակը, Սլավիկը զինամթերքի մի արկղ դրեց մեջքին, Վալերին ականանետը գցեց ուսին, ու նրանք մեկ-մեկ դուրս եկան խրամատից՝ ճանապարհ ընկնելով դեպի Կարաչինարի ճակատը: Նրանց կոպերն իջնում էին աչքերին, բայց, առանց մի խոսքի ու բողոքի, նրանք ոտքերը քարշ տվեցին ցածրադիր անցուղիների, ընկուզենիների թաց տերևների ու նռների բուրմունքով լցված այգիների և հեռավոր հրդեհների ծխի միջով:

Կարաչինարը քանդված պատերով ու փլված տանիքներով գյուղ էր: Ժամանակին այդ տներն ընտանեկան ունեցվածքի ու հետագա սերունդների ժառանգության պահեստներ էին: Դրանք հյուղակներ չէին. ունեին մանրահատակով ընդարձակ սենյակներ, սալիկապատ խոհանոցներ, պատշգամբներ ու տաղավարներ: Նույնիսկ այժմ, երբ Երևանում ամբոխները գրոհում էին ՕՎԻՐ-ը՝ Լոս Անջելեսյան մեկնելու համար ելքի թույլտվություն ստանալու փափագով, Կարաչինարի գյուղացիներն անտառում նստած սպասում էին, որ վերադառնան իրենց օջախները: «Ինչո՞ւ պիտի թողնենք մեր հողը», — բոլորովին ոչ հռետորաբար հարցրեց մի մրոտ երիտասարդ՝ հագին շատ նեղ վերնաշապիկ: «Մ՚ւր պիտի գնանք», — հարցրեց մեկ ուրիշը: «Ես երբեք չեմ գնա, — հայտարարեց մի գիսախիվ մայրիկ. — ուզում եմ այստեղ մեռնել»: Նրանց համար այդ լեռներն «իրենց հայրենիքն ու ամբողջ կյանքն» էին, և Մոնթեն հիանում էր նրանցով:

Գաշտապանները բեռները ցած դրեցին ու սկսեցին կրակելու դիրքեր գրավել այգիների պատերի հետևում, որոնք նայում էին ադրբեջանական Շաֆակ գյուղին՝ Կարաչինարի հյուսիսային ծայրում: Վալերի Ղամբարյանը՝ քառասուներեքամյա մի կամավոր Մարտակերտի շրջանի Ջայլու գյուղից, լիցքավորեց ականանետը: Մի կուրացուցիչ փայլատակում ու մի բարձր զմփոց պոկեցին նրա ձախ ձեռքն ու բեկորներով խոցոտեցին նրա մարմինը: Կորդիտի ծխի մեջ նրա ընկերներն առաջ նետվեցին՝ շորի կտորներով ու քուղերով կանգնեցնելու հորդացող արյունը, հետո նրան տարան Շահումյանի հիվանդանոց, որտեղ նա արնաքամ մեռավ՝ թողնելով չորս որբեր:

Կարաչինարի ռմբակոծումը տևեց երեք օր՝ քանդելով ու վառելով գյուղի մեծ մասը, բայց միայն երկու մարդկային կյանք տանելով: Երբ կռիվների մասին լուրերը հասան միջազգային տեղեկատվական գործակալություններ, մեր մայրը կրկին ընկավ «Գաղտնի բանակի» օրերի տագնապալից վիճակի մեջ: «Ես գիշերներ, շատ գիշերներ արթուն պառկում էի», — հետագայում պատմում էր նա Fresno Bee թերթի թղթակցին: «Սիրելի տղաս. նա այդպիսի կյանքի չէ արժանի: Մենք բոլորս նրանով էինք ապրում, իսկ նա հրաժարվեց ամեն ինչից»:

Կարաչինարում Մոնթեն նորից տեղադրեց թեթև հրանոթը, բայց սեպտեմբերի 18-ին, երբ պարզվեց, որ ադրբեջանցիներն առաջիկայում չեն պատրաստվում գյուղը գրավել, նա միացավ իր ընկերներին Մանաշիդի ճակատում, 20 կիլոմետր դեպի արևմուտք: Այդ օրը նրանք մոտեցան իրենց երրորդ ու վերջին նպատակակետին՝ լքված էրքեջ գյուղին, որտեղ այգիներում խնձորներ էին փտում: Կռվից հետո Մոնթեն վերադարձավ Կարաչինար՝ հարգանքի տուրք մատուցելու Վալերիին:

— Որտե՞ղ է պայթած ականանետը, — ասաց նա՝ մորուքի տակ ծնոտները սեղմելով:

Մյուս մարտիկներն աչքերը խոնարհեցին: Մոնթեն բռունցքները սեղմեց ու բացեց, հետո գնաց ականանետը փնտրելու: Վալ-

դիմիրը նրան ասաց, որ Վալերիի ընկերներից մեկին կատաղեցրել էր պայթած ականանետի բաց բերանը, ու նա զենքը դցել էր որպես զորանոց ծառայող հիվանդանոցի հետևում գտնվող զուգարանափոսը:

Մի ցախատուն տնտղելով՝ Մոնթեն մետաղալար գտավ, որից կեռի նման մի բան սարքեց: 10 րոպե անց նա վերադարձավ գարշահոտության ուղեկցությամբ ու թափահարելով մետաղե փողը, որ որսացել էր արտաքնոցից: Կեղտի տակ ժանգոտած փողը կոբացել էր թոշնած սև խոլորձի պես:

– Ցալլա՛, ահա՛ այն:

Մոնթեն նույնիսկ Բուզլուխ մտնելիս այդքան հաղթական կոչ չէր արձակել: Մյուսներն անտարբեր հայացքով նայում էին, թե ինչպես էր Մոնթեն ձեռքերը լվանում ու չորացնում: Գոմն այսպես է նկարագրել տեսարանը. «Ես պատրաստում եմ սա տեսագրել Վալերիի լուսանկարի հետ, որպեսզի տղաները հասկանան, թե որքան վտանգավոր է այս աղբը»: Նա պայթած փողը դարձրեց դեպի իր լսարանը. «Տեսնո՞ւմ եք, այն օդանցք չունի, իսկ ներքևի մասը պիտի քրոմապատ լիներ, այլապես ականանետը պայթում է: Հարյուրավոր տղաներ արդեն մեռած են այս անպետք սարքի պատճառով»:

Ռուբոն ուսերը թոթվեց.

– Հիմա ի՞նչ. այն վատ չէ կռվելու համար: Մենք ուրիշ բան չունենք:

Մոնթեն մի զայրացած հայացք գցեց նրա վրա: Բռնելով ականանետը մի ելուստից՝ նա լվաց այն բակի ծորակի տակ ու փաթաթեց մի հին շորի մեջ: Հետո ծալեց Վալերիի քրքրված բաճկոնը՝ ողողված սևացած, բայց դեռ թաց արյամբ, ու կապոցը դրեց մի ապահով տեղ՝ իր իրերի մոտ:

Սեպտեմբերի 20-ին Գոմն ու Մոնթեն խցկվեցին Երևան թռչող մի ուղղաթիռ, որպեսզի Գոմը ներկա լիներ Հայաստանի Անկախության հանրաքվեին, իսկ Մոնթեն «զենքեր հավաքեր»: Շարժիչների ու փոշոտ քամու ոռնոցի մեջ վիրավոր մարտիկները հրաժեշտի համբույրներ էին դրոշմում իրենց ինքնաձիգներին, մինչ ընկերները բարձրացնում էին նրանց ուղղաթիռի մեջ: Այդ ընթացքում ուրիշ մարտիկներ ուղղաթիռից իջեցրին մի ինքնաշեն ականանետ, այն տեսակից, որ պպանել էր Վալերիին:

Հասնելով Երևանի իր հանրակացարանը՝ Մոնթեն բացեց պատուհանն ու Վալերիի համազգեստը դրեց գոգին: Նա ուզում էր

չորացնել այն, որ դեռ խոնավ էր արյունից: Երբ Սեղան այդ երեկո սենյակ մտավ, նրա քթին դիպավ նեխած արյան գարշահոտությունը, և սենյակում չղջիկ էր պտտվում: Նա կենդանուն ավելով պատուհանից դուրս քշեց: Մյուս օրը՝ սեպտեմբերի 21-ին, Մոնթեն կանգնել էր հանրակացարանի երրորդ հարկի լսարանում՝ դրատախտակի ու տեսախցիկի մեջտեղում, և դրամահավաքի կոչ էր անում: Նրա հագին կարճաթև վերնաշապիկ ու ջինս էր, իսկ սեղանին՝ Վալերի Ղամբարյանի արնաթաթախ հագուստը և անհեթեթ ձևով ծռմռված ականանետը: Սեղանի եզրին դրված էին Ղամբարյանի և սխալ պատրաստված զենքերի այլ զոհերի մի քանի սև-սպիտակ սիրողական լուսանկար:

Տեսաժապավենի վրա Մոնթեն մի ծայրից բարձրացրել է ականանետը և հանգիստ ձայնով բացատրում է, որ որոշ նվիրյալ տղամարդիկ ու կանայք, որ պատրաստ են ամեն ինչ զոհել իրենց հայրենիքը պաշտպանելու համար, մեռնում են ոչ թե թշնամու ռումբերից ու գնդակներից, այլ սեփական սխալ զենքերից: Նա ասում է, որ Արցախի ապագան կախված է հայ մարտիկների կրթողությունից՝ ավտոճանապարհային կապ հաստատելու Հայաստանի Հանրապետության ու Ղարաբաղի միջև, Լաչին գյուղով անցնող այն կետում, որտեղ նրանք ամենամոտն են միմյանց: Իսկ դրան հասնելու համար վստահելի զենքեր են պետք, որոնք փող արժեն՝ ավելի շատ, քան ունեն ինքն ու իր ընկերները:

Երբ ես Չիկագոյում ստացա տեսաժապավենը, մոնտաժեցի այն կռիվների տեսագրությունների հետ ու պատճեններն ուղարկեցի Սան Ֆրանցիսկոյի մեր աջակիցներին: Նրանցից, ինչպես նաև Փարիզի, Լոնդոնի ու Երևանի ընկերներից ստացված դրամով Սեղան զենք ու զինամթերք գնեց, մի մասը՝ Հայաստանում գտնվող ռուս զինանձնակազմից, մնացածը՝ հարևան Վրաստանի հետ կապերի շնորհիվ:

Մոնթեի՝ Երևան վերադառնալուց 3 օր անց, երկուշաբթի, սեպտեմբերի 23-ին, Հայաստանի Խորհրդարանը երկիրը հռչակեց անկախ հանրապետություն: Դրանից 2 օր առաջ տեղի ունեցած հանրաքվեին մասնակցել էր քաղաքացիների 95 տոկոսը, և նրանց 95 տոկոսը քվեարկել էր Մոսկվայից անկախանալու օգտին: Մինչ այդ Բորիս Ելցինն ու Ղազախստանի նախագահ Նազարբաևը եկել էին Ստեփանակերտ՝ համատեղ ստորագրելու փաստաթղթեր, որոնք ազդարարելու էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջը:

Որքան Մոնթեն շատ էր քարտեզներ ուսումնասիրում, այնքան ավելի անհանգիստ էր դառնում: Ղարաբաղի պաշտպանները վստահելի ավտոճանապարհային կապ չունեին Հայաստանի Հանրապետության հետ, իսկ անշարժ թևերով օդանավերի համար միակ վայրէջքագոտին Արցախում՝ Խոջալուում, ադրբեջանցիների ձեռքում էր: Նույնիսկ ամռանն ուղղաթիռները կապի անկայուն միջոց էին Հայաստանի ու Ղարաբաղի միջև: Իսկ այժմ, երբ մոտենում էր ձմեռը, սարերում մշտապես մառախուղ էր լինում՝ ուղղաթիռների թռիչքն ավելի վտանգավոր դարձնելով: Մինչդեռ ադրբեջանցիների տրամադրության տակ ողջ ճակատի երկայնքով անխափան գործող ճանապարհներ կային՝ հյուսիսից հարավ, արևելքում ու արևմուտքում: Նրանք կարող էին Աղդամից, Գանձակից, նույնիսկ Բաքվից զինամթերք, թարմ համալրում, զրահամեքենաներ ու ծանր հրետանի բերել ասֆալտապատ ճանապարհներով, հարթ գետնի ու անցանելի բլուրների վրայով:

— Մենք մեր դիրքերը պիտի ապահովենք մինչև ձմեռ, — եզրակացրեց Մոնթեն: Եթե ոչ, և եթե թշնամին մինչև ձյուն գալն իր համար ճանապարհ հարթեր Շահումյանից դեպի հարավ, ապա ազատ կլիներ՝ դիրքերն ամրապնդելու ողջ ձմեռ և առաջանալու Ստեփանակերտի ուղղությամբ, երբ անցումները գարնանային վարարումներից բացվեին: Նույն վտանգը կար հարավում՝ Հադրութում և արևելքում՝ Մարտունիում: Քանի դեռ Լեռնային Ղարաբաղը մնում էր մայր Հայաստանից կտրված կղզի, իրավիճակն այսպիսին էր լինելու:

Մոնթեն պետք է հնարավորին չափ շուտ Շահումյան վերադառնար: Այս անգամ նա դատարկ ձեռքով չէր գնալու: Քանի որ «Հայրենասիրական ջոկատը» սպառել էր իր չնչին գումարները, Մոնթեն պիտի պաշարների համար արագ դրամ հավաքեր: Երբ Սեդան հարցրեց նրան, թե ինչ թիվ էր նա մտցրել ջոկատի հաշվեմատյանի մեջ, նա ուսերը թոթվեց.

— Դե, մենք ջոկատին 300 դոլլար ենք խոստացել:

Իսկ երբ Սեդան հարցրեց, թե որքան դրամ կար իրենց անունով, նա ծիծաղեց.

— 365 դոլլար:

Դա նվիրատվությունից առաջ էր:

Մի քանի օր հետո Մոնթեն արկղեր էր բեռնաթափում մեկ այլ ՄԻ-8 ուղղաթիռի շարժիչների սուլոցի տակ: Նա նորից վայրէջք էր կատարել Շահումյանում, բայց այս անգամ փամփուշտներով

տուփեր էր բերել, ինչպես նաև՝ 50 հակատանկային «Ֆագոտ», 2-3 РПГ-7 նռնականետ ու մի քանի ընկեր «Հայրենասիրական ջոկատից»: Նրանք իրենց իրերն ու ինքնաձիգները քարշ տվեցին լեռների միջով գնացող հողե ճանապարհով՝ կարաչինար գյուղի մոտ, խրամատներում տեղական կամավորներին միանալու համար:

Մոնթեն հավաքված մարտիկներին հրահանգներ էր տալիս. առաջինը կրակ չբացել, չկրակել, եթե ոչինչ չի երևում, 200 մետրից հեռու որևէ նշանակետի չկրակել, անգեն մարդու վրա չկրակել, երբեք զենք ու զինամթերք չթողնել: Նրա ձայնն ամեն հրամանի հետ ավելի ուժգին էր հնչում, և տեղացիները, թվում էր, օգուտ էին քաղում նրա ինքնավստահությունից: Նրանք գաղափար չունեին, թե ինչ էր պատահելու առաջիկա ժամերին ու օրերին. նրանք միայն գիտեին, որ իրենց ծնողների ու երեխաների կյանքը, տները, հողը, նախնիների գերեզմանները վտանգված էին: Նրանք կարիք ունեին առաջնորդի՝ ուժեղ ու վճռական, որը գիտեր, թե ինչ է անում, կամ գոնե մեկի, որը նման էր այնպիսի մարդու, որ գիտեր, թե ինչ է անում:

Ուժի և ինքնավստահության հարցերում Մոնթեն չէր հիասթափեցնում: «Հայրենասիրական ջոկատի» անդամներ Հովսեփն ու Արտուշը պատմում էին հետևյալ պատմությունը, որը ջոկատի մեկ այլ անդամ հաստատում էր մի փոքր փոխված ձևով: Շահումյան Մոնթեի երկրորդ այցելության ժամանակ տեղական մարտիկները նրան ընդառաջ եկան օղու դատարկ շշով՝ պահանջելով, որ պատասխանի, թե ինչ է արել պարունակությունը: Մոնթեն հիշեցրեց նրանց, որ ինքն արդեն օրենք էր հաստատել. չխմել ճակատային գծում: Մարտիկները պատասխանեցին, որ եթե իրենք իրավունք չունեն խմելու, գոնե իրավունք ունեն նրա թափած օղու հոտն առնելու: Այդ ժամանակ Մոնթեն քայլեց դեպի մոտակա ծառը, շալվարն արձակեց ու միզեց այնտեղ, ուր թափել էր օղին:

— Մենք ուտելուց առաջ խմում ենք, — բողոքեց մի մարտիկ, — դա մեր նախնիներից մնացած սովորույթ է:

— Ուրեմն ձեր նախնիներն էլ էշեր էին, — փնթփնթաց Մոնթեն:

Մոնթեն դեկտեմբերի 14-ին վերադարձավ Երևան՝ դրամ հավաքելու, նոր մարտիկներ հավաքագրելու և զինամթերք գնելու: Հայաստանի մայրաքաղաքը դարձել էր փախստականների ու բա-

րեգործական ճաշարանների քաղաք: Ադրբեջանը թույլ չէր տալիս, որ Հայաստան վառելիք մտնի, վնասարարներն էլ կանոնավոր կերպով պայթեցնում էին Վրաստանով Հայաստան մտնող երկաթգիծն ու գազամուղը: Այժմ, երբ օրերը ցրտում էին, բնակիչները բահեր էին վերցնում ու գնում «Հաղթանակի զբոսայգի» արմատախիլ անելու այն ծառերի կոճղերը, որոնք անցյալ ձմեռ կտրել էին որպես վառելափայտ: Այդ ձմեռ վառելու էին արմատները: Ուրիշ բնակիչներ վառելու համար դպրոցական նստարաններ էին կացնով ջարդում ու պետական շենքերի պարկետներ պոկում: Վառելիքի բացակայության պատճառով ավտոբուսները ժանգոտում էին բակերում: Շամպունը սառչում էր անպիտան լողասենյակներում, իսկ անլույս սենյակներում մահանում էին նորածիններ, թոշակառուներ ու հայրենական մեծ պատերազմի շքանշաններով զարդարված վետերաններ: Նույնիսկ ոմանք մտել էին Երևանի կենդանաբանական այգի ու որպես մսացու մորթել մի հազվագյուտ եղնիկի: Եվ դա տրամաբանական էր, որովհետև այգու կենդանիներն առանց այդ էլ մեռնում էին սովից:

Հայերը շփոթված էին. ո՞ւր էին այն հարուստ հայրենակիցները, որոնց մասին այդքան լսել էին, սփյուռքի այն մագնատները, որոնք, ինչպես ենթադրվում էր, պիտի հետխորհրդային ժամանակաշրջանում ազգը հասցնեին ամերիկյան տիպի բարգավաճման: Արևմտյան թղթակիցներից մեկը մեջբերել էր մի հայի խոսքերը. «Լավ կլինի միլիոնատերերը մեզ շտապ մի բան ուղարկեն, թե չէ մենք սովից կմեռնենք»:

1992 թ. Նոր տարվա նախօրեին Մոնթեն ու Սեդան մեքենայով պտույտ էին գալիս Երևանում՝ «Հայրենասիրական ջոկատի» անդամների երեխաներին կոնֆետ, չամիչ ու փուչիկներ բաժանելով: Կեսգիշերին նրանք գնացին Օպերայի հրապարակ, որտեղ հաղթավոր ուրախացողներ տաքանալու համար պարում էին: Տագնապի ու եռանդի խառը զգացումով դիմելով Սեդային՝ Մոնթեն հարցրեց. «Կուզե՞ս պարել»:

Լեռնային Ղարաբաղի համար 1992 թվականը չարաղետ սկիզբ ունեցավ: Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը ծայրահեղ ազգայնամոլ ընդդիմադիրների ճնշման տակ հայտարարեց, որ ժամանակն է Լեռնային Ղարաբաղը երկաթե բռունցքով ջախջախելու: Հրանոթային փոխհրաձգությունները սաստկանում էին Հայաստանի արևելյան սահմանի երկայնքով, և թշնամու նոր

խմբավորումներ դիրքեր էին գրավում ճակատագծերի երկայնքով՝ Ղարաբաղի հյուսիսից՝ Շահումյանից մինչև Հադրութ՝ հարավում: Իսկ հունվարի 10-ից սկսած՝ ադրբեջանցի հրամանատար Ռահիմ Գազիևը կարգադրեց հեռահար հրթիռներ ու հրանոթային արկեր արձակել յոթանասունհազարանոց, փախստականախեղդ եղած Ստեփանակերտ քաղաքի վրա: Գազիևի կրակակետը Շուշին էր՝ Ստեփանակերտից չորս մղոն հարավ, ժայռերի վրա ծվարած, 20000 բնակչություն ունեցող ադրբեջանաբնակ բերդը: Շուտով SU-25 կործանիչներն սկսեցին պտույտ գործել վերևում՝ պաշտպանների հնաոդարյան հակաօդային հրանոթների հասանելիությունից վստահելիորեն դուրս, և 250 ու 500 կիլոգրամանոց ռումբեր գցել Ստեփանակերտի վրա: Բայց ամենամահացու զենքը «Գրադ» հրթիռային համալիրն էր, որից արձակվում էին մինչև երեք տասնյակ՝ 22 կիլոմետր հեռահարությամբ 122-միլիմետրանոց հրթիռներ: «Թռչող հեռախոսասյուները» կրակում էին սուլոցների արագ հերթափոխով, և հրթիռներն, ասես կապոցներով, շախմատաձև թափվում էին դասարանների մեջ, մանկապարտեզների խաղահրապարակների և խիտ շարված բնակելի շենքերի վրա:

Այդ տարի Ստեփանակերտի վրա տեղացող դժոխային կրակը խլեց 2000 բնակիչների կյանքը և խեղանդամեց ավելի քան 2500 հոգու, մեծ մասամբ՝ երեխաների: Ռումբերն ու հրթիռները վնասեցին քաղաքի համարյա բոլոր շենքերը՝ քշելով բնակիչներին նկուղները և ավելի շատ ահ ու սարսափ առաջ բերելով, քան այս կամ այն կողմի նախաձեռնած նախորդ գործողությունները: Դպրոցներն ու գործարանները դատարկվեցին: Ջրատար խողովակները, կոյուղին, գազը, էլեկտրականությունը՝ ամեն ինչ Ստեփանակերտում շարքից դուրս էր եկել: Քաղաքի գլխավոր հիվանդանոցը, որի վերևի հարկերն ավերվել էին ռմբակոծությունից, միայն դեպքից դեպք էր էլեկտրականություն ունենում, իսկ հոսող ջուր առհասարակ չկար: Վիրաբույժները մոմով լուսավորված նկուղներում անդամահատում էին՝ որպես անզգայացնող միջոցներ օգտագործելով օղի և մարդկանց շոկային վիճակը, իսկ բաց վերքերի վրա ճանճեր էին հավաքվում:

Մոնթեն այդ ամենը 10 ամսա առաջ արդեն տեսել էր Բեյրութում: «Թվում է՝ տարածաշրջանի ապագան որոշվելու է այս տարի», – գրում էր նա իր «սիրելիներին» ուղղված վերջին նամակներից մեկում: Իր հանրակացարանի սենյակում հունվարի 2-ին

տեսագրված մի ելույթում նա կրկնում է այն միտքը, որ արտահայտել էր զրույցներում ու նամակներում. «Ադրբեջանի կառավարությունն անկասկած որոշել է հայերին վտարել, հետևաբար՝ դիմադրելուց բացի այլընտրանք չկա: Մենք իրավունք չունենք այս անգամ էլ պարտվելու: Մենք պետք է հաղթենք», — ասում է նա իր հանգիստ, հավասարակշիռ ձայնով:

Բայց ինչպե՞ս կարող էր փոքր, բոլոր կողմերից ցամաքով շրջապատված Հայաստանը կռվել ու հաղթել նավթով հարուստ Ադրբեջանին՝ ավելի քան երկու անգամ մեծ տարածք ու բնակչություն և Թուրքիայի պես հզոր հովանավոր ունեցող երկրին: Ինչպե՞ս կարող էին հայերը պարտության մատնել Ադրբեջանի ազգային բանակի 30000 զինվորներին, ՕՄՕՆ-ի 10000-անոց զորքին և Ադրբեջանի «Ժողովրդական ճակատի» հազարավոր կամավորներին:

«Շատ հայեր չեն հասկանում, որ մենք կարող ենք հաղթել, — նշեց նա իր հունվարի 25-ի տեսաելույթում, — բայց Վիետնամի օրինակը ցույց տվեց, որ ավելի փոքր ռազմական ուժը կարող է հաղթել շատ ավելի զորեղ թշնամուն, եթե այն վճռական է ու լավ կազմակերպված»: Ամեն դեպքում՝ Մոնթեն ու իր հայրենակիցները կռվելուց բացի այլընտրանք չունեին, որքան էլ որ հանգամանքներն իրենց դեմ լինեին: Մեկուկես տարի անց բրիտանացի թղթակիցներին տված մի ձայնագրված հարցազրույցում նա այսպես ամփոփեց իրավիճակը երկրում. «Ղարաբաղցիները գիտեն, որ կամ պիտի կռվեն, կամ կոտորվեն: Ուրեմն՝ նախընտրում են կռվել»:

Այսպիսի հուսահատ իրավիճակում յուրաքանչյուր մարտիկ անգնահատելի էր: Մոնթեն կոչ էր անում իր ընկերներին՝ միանալ «Հայրենասիրական ջոկատին»: Այդ ընկերներից մեկը՝ Հրայր անունով, թխադեմ ու բարետես, շրջակա միջավայրի մասնագետ էր: Ժամանակին Հրայրը Երևանում աշխատել էր օդի աղտոտումը նվազեցնելու ուղղությամբ:

— Դու այլևս անելիք չունես, — կես-կատակ նրան ասաց Մոնթեն, — Երևանի օդի որակը զգալիորեն բարելավվել է՝ շնորհիվ վառելիքի ջացակայության ու տնտեսության քայքայման:

Հրայրը մի պահ մտածեց ու անդամագրվեց ջոկատին:

Ստեփանակերտը պաշարված էր, և 6-7 իրենց դարն ապրած ՄԻ-8 ուղղաթիռները, որ օդային կամուրջ էին ապահովում Երևանի ու Ստեփանակերտի միջև, չէին կարող քաղաքի համար բավարար սննդամթերք, վառելանյութ ու դեղեր մատակարարել: Եթե տեղ լիներ ՅԿ-40 բեռնատար ինքնաթիռների վայրէջքի համար, կարելի էր բերել մարդկանց տառապանքները փարատելու և Ստեփանակերտի պաշտպանությունն ամրապնդելու համար անհրաժեշտ պաշարներ: Ինչպես նշվեց, անշարժ թևերով օդանավերի համար Արցախի միակ վայրէջքագոտին Խոջալու քաղաքի մոտ էր, իսկ այն մնում էր ադրբեջանցիների ձեռքում:

Մոնթեն ճակատը հենեց ձեռքին ու սկսեց քարտեզը զննել:

Գլուխ 15. Կարգապահության խնդիրներ

1992 թ. փետրվարի 4-ի առավոտյան Սեդան ամուսնու հետ կանգնած էր Երևանից դուրս գտնվող «Էրեբունի» օդանավակայանում՝ МИ-8 հնամաշ ուղղաթիռի շարժիչների տակ: Նրանց հետ էին Մոնթեի ջոկատից ևս 17 մարտիկներ, որոնց թվում՝ նաև շրջակա միջավայրի մասնագետ Հրայրը, 5 նոր կամավոր Աշտարակից ու Քաչալ Սերգեյը: Նրանց ջոկատն ուղևորվում էր Մարտունի կոչվող վայրը՝ Լեռնային Ղարաբաղի՝ հայերի հսկողության տակ գտնվող վեց հիմնական շրջաններից մեկը: Իսկ լրացուցիչ մանրամասներ ոչ ոք չգիտեր:

Շարժիչներն սկսեցին պտտվել: Հանկարծ մեկը վազելով մոտեցավ ուղղաթիռին ու Մոնթեին տարավ մի հյուղակ, որ ծառայում էր որպես թռիչքագոտու գրասենյակ: Երբ նա 40 րոպե անց վերադարձավ այնտեղից, ուղղաթիռ բարձրանալուց առաջ մի պահ դանդաղեց ու Սեդայի ականջին շշնջաց, որ հենց նոր հեռախոսով խոսել էր պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հետ: Բայց նա Սեդային չասաց, որ Սարգսյանն իրեն նշանակել էր Մարտունու շտաբի պետ: Սկզբում Մոնթեն հրաժարվել էր՝ պատճառաբանելով, որ ինքը երբեք չէր եղել Մարտունիում և ոչինչ չգիտեր այդ շրջանի մասին: Սարգսյանն առարկել էր, թե հուսահատ ժամանակներ են, և՝ թե այդ գործի համար ավելի լավ թեկնածու իրեն հայտնի չէր: Ի վերջո, մի ականջին լսափողը, իսկ մյուսում՝ ուղղաթիռի սուլոցը, Մոնթեն զիջել էր այն պայմանով, որ ինքը նշանակումը կընդունի ժամանակավորապես, մինչև որ Սարգսյանը գտնի մի ավելի հարմար թեկնածու:

Բայց ինչո՞ւ էր Սարգսյանը բոլոր մարդկանցից Մոնթեին ընտրել այդ նշանակման համար: Մոնթեն երկրամասի դիրքին ծանոթ չէր, նա ոչ ոքի չգիտեր Մարտունիում և հազիվ էր հասկանում տեղական բարբառը: Սակայն Սարգսյանը գիտեր Մարտունին. դա խոցելի շրջան էր՝ մասամբ ադրբեջանցիներից գրավված ու թշնամու հարձակմանը ենթակա: Հայկական կողմից այն ղեկավարում էին մրցակցող կլաններ ու նրանց դաժան կամակատարներ: Մոնթեի նման մի օտարական, որ շրջանում ոչ ազգական ուներ, ոչ բարեկամ, ավելի հեշտ կխուսափեր տեղացիների նախանձից ու երկպառակությունից:

Սեդան ձեռքին պահած շշից ջուր լցրեց բետոնե հարթակի վրա, և շարժիչներն այն պտտեցնելով մշուշի վերածեցին: Ուղղաթիռը թեթևորեն գետնից պոկվեց, օդ բարձրացավ և մի պտույտ գործելով ուղղություն վերցրեց դեպի Լեռնային Ղարաբաղ: Արցախի հարավ-արևելքում գտնվող Մարտունին 200 քառակուսի մղոն մակերեսով վայրի լեռնային շրջան էր՝ բնակեցված 28000 լեռնցիներով. նրանք մեծ մասամբ հողագործներ ու գինեգործներ էին: Շրջանը թերակղզու պես մխրճված էր Աղդամի ու Ֆիզուլու ցածրադիր հողերի մեջ՝ հյուսիսից, արևելքից ու հարավից շրջապատված լինելով լավ զինված ադրբեջանական զորքերով: Սա Լեռնային Ղարաբաղի ամենաթույլ օղակն էր:

Երբ ուղղաթիռն իջավ գետնին, Մոնթեն ու նրա ջոկատն աղի պարկերով բեռնված մի համընթաց բեռնատար նստեցին: Խորդուբորդ ճանապարհով գնալուց հետո բեռնատարը կանգ առավ շրջանի մայրաքաղաք Մարտունիից արևմուտք գտնվող ժայռոտ զառիթափի վրա, մի բետոնե ցածր շինության մոտ: Նախկինում այդ շենքը, որ հայտնի էր որպես Дор. отдел, պատկանել էր խորհրդային ճանապարհաշինական վարչությանը: Այժմ այն դարձել էր զորանոց:

Մոնթեն, իրերը թողնելով զորանոցում, վազից հեռադիտակ կախեց ու դուրս եկավ հետախուզության: Ստեփանակերտի «Պաշտպանության կոմիտեն» ուզում էր «մաքրել» Ղարադաղլուն՝ ադրբեջանական հարուստ, ցորենի մշակումով զբաղված 1200 բնակիչներով գյուղը՝ Ստեփանակերտի ու Մարտունու միջև եղած միակ ասֆալտապատ ճանապարհի վրա: Պատերազմին նախորդող ամիսներին ադրբեջանական ՕՄՕՀ-ը մեքենաներ էր կանգնեցնում Ղարադաղլուի ճանապարհի շրջադարձի վրա և ծեծում ու առևանգում հայ վարորդների և ուղևորների: Մի օր նրանք հայերի ընտանիք էին վառել մեքենայի մեջ: Ղարադաղլուի ադրբեջանցիները քանիցս բողոքել էին ՕՄՕՀ-ի սպաներին՝ ասելով, որ նրանց դաժանությունը լավ բանի չի բերի, բայց սպաներն ուշադրություն չէին դարձրել: Հետագայում, երբ ՕՄՕՀ-ը հարձակումների աճող սպառնալիքի տակ հեռացավ շրջակա գյուղերից, Ղարադաղլուի բնակիչները հայտնվեցին թշնամաբար տրամադրված հայերի շրջապատման մեջ: Ի վերջո ուղղաթիռներ եկան՝ կանանց ու երեխաներին դուրս բերելու, այնպես որ, երբ Մոնթեի վերադասները Ստեփանակերտում խնդրեցին նրան գրոհի ծրագիր մշակել, գյուղում մնացած բնակիչների մեծ մասը, բայց ոչ բոլորը, զինված պաշտպաններ էին:

Երբ Մոնթեն ու նրա հետախուզական խմբի մի քանի անդամներ իջնում էին ձյունածածկ զառիթափով՝ հայկական Հաղորտի գյուղից դեպի հարևան Ղարադաղլու, մոտակայքում գտնվող հայ գյուղացիներն սկսեցին գոռգոռալ նրանց վրա: Խումբը դադարեցրեց վայրէջքն ու վեճի բռնվեց նրանց հետ: Գյուղացիները բացատրում էին, որ Ղարադաղլուի վրա հարձակումը Հաղորտին կներքաշեր պատերազմի մեջ:

— Գնացե՛ք, — ասում էին նրանք, — մենք այստեղ պատերազմ չենք ուզում:

Մոնթեն պատասխանեց, որ խաղաղասիրական զգացմունքների համար շատ ուշ էր՝ պատերազմն արդեն սկսված էր: Պետք էր այդ փաստն ընդունել ու հնարավորին չափ արագ գործն ավարտել: Գյուղացիները, սակայն, չհամոզվեցին, և վիճաբանությունը գնալով ավելի բարձրաձայն էր դառնում: Ի վերջո Ղարադաղլուի ադրբեջանցի պահակները, վեճից ակնհայտորեն անհանգստացած, այն ընդհատեցին՝ կրակելով վիճաբանողների վրա, որոնք նետվեցին թաքստոց փնտրելու:

Հաղորտիի մոտ արգելակված հետախուզական օպերացիայից հետո Մոնթեն Մարտունիի շրջանում գյուղից գյուղ էր անցնում՝ ծոցագրպանում գրիչ ու մի կապոց նշումների թուղթ դրած: Նա հայտնվում էր որևէ գյուղում կամ ճակատագծում և, առանց մեկնումեկին տեղեկացնելու, որ ինքը շտաբի նոր պետն է, սկսում հարցեր տալ. որքա՞ն մարդ կա ծառայության մեջ, քանի՞ պահեստային կարելի է հավաքագրել: Ի՞նչ վիճակում են նրանց պաշտպանական դիրքերը, խրամատները, որտե՞ղ են տեղակայված թշնամու զորքերը: Քանի՞ ինքնաձիգ, հրացան, որքա՞ն զինամթերք ու փամփուշտ և քանի՞ լիտր դիզելային վառելիք ունի յուրաքանչյուր տեղական ղեկավար:

Դարավոր նվաճողներին վռնդելուց հետո Ղարաբաղի լեռնցիները զգուշանում էին հարցեր տվող օտարներից: Բացի այդ, լուր էր տարածվել, թե այցելության եկած մի թղթակից թշնամուն տեղեկություններ էր տալիս: Ուստի, երբ մայրենի լեզվի համարյա անհասկանալի մի տարբերակով խոսող օտարականը, բազում հարցեր տալով, հայտնվում էր տարբեր գյուղերում, տեղացիները խուսափում էին պատասխանելուց: Նույնը պատահեց սահմանային Բերդաշեն գյուղի շտաբում: Ենթահրամանատար Նելսոնը Մոնթեի ամեն հարցի մի սուտ էր դեմ տալիս, որը Մոնթեն բարեխիղճ կերպով գրանցում էր իր նոթատետրում:

մարդ էր, որն ազդրի վրա մի հսկայական «Ստեչկին» ատրճանակ էր կրում: Այն ռազմավար էր, որ գտնվել էր թշնամու խփված ուղղաթիռի բեկորների միջից: Մինչ Մոնթեն գրի էր առնում Նելսոնի ստերը, վերջինս խեթ հայացքով զննում էր նրան. եկվորի գլուխը դեպի հետ երկարավուն էր՝ ավելի Թուրքի, քան ղարաբաղցի հայի նման, հետևաբար՝ Նելսոնը պետք է աչքը նրա վրա պահեր:

Մարտունու շտաբի նախկին պետ, խորհրդային բանակի նախկին կապիտան Անաստաս Աղամալյանը չզարմացավ, երբ Մոնթեն, առանց որևէ նախաբանի, ներկայացավ որպես իր փոխանորդ: Աղամալյանը խրամատներ էր փորել տվել ու ակնապատել ռազմաճակատի որոշ հատվածներ, բայց վերադասներին անհանգստացնում էր այն, որ նա բավարար փորձ չուներ պաշտպանություն կազմակերպելու համար: Աղամալյանն իր պաշտոնանկությանը հանգիստ վերաբերվեց, բայց գնալուց առաջ Մոնթեին մի խորհուրդ տվեց՝ զգուշանալ շտաբի իր մարդկանց դավաճանությունից:

Փետրվարի կեսերին Մոնթեն ու նրա «Հայրենասիրական ջոկատը» ճամբար դրեցին Մեհդիչենում՝ Ստեփանակերտից հյուսիս, Մարտունու շրջանից բավական հեռու գտնվող մի գյուղում: Նպատակը լրացուցիչ հետախուզությունն էր՝ այս անգամ Խոջալու քաղաքի վրա հարձակվելու համար: 6000 բնակիչներով Խոջալուն Լեռնային Ղարաբաղի՝ Շուշիից հետո մեծությամբ երկրորդ ադրբեջանաբնակ քաղաքն էր: Խոջալուում ադրբեջանցիների հսկողության տակ էր գտնվում Արցախի միակ թռիչքագոտին, և զինյալներն այնտեղ փակել էին տարածքով անցնող երկու հիմնական ճանապարհները՝ մեկն արևելքում, մյուսը՝ հյուսիսում:

Փետրվարի 16-ին Մոնթեի հետախուզական օպերացիան ընդհատվեց, երբ նրան շտապ կանչեցին Ստեփանակերտի վերադասների մոտ: Մոնթեն հեռադիտակը կափարիչներով փակեց ու սլացավ դեպի պաշտպանական զորքերի շտաբ: Նա լսում էր, թե ինչպես էր տարակուսած Արթուր Մկրտչյանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ակնոցավոր նախագահը, բացատրում, որ «Արաբո» և «Արամո» ջոկատներն իրենց նախաձեռնությամբ, առանց թույլտվության հարձակվել էին Ղարադաղլու գյուղի վրա, և՝ որ ադրբեջանցիները ետ էին մղել նրանց՝ սպանելով հարձակվողներից մեկին: Մկրտչյանը գիտեր, որ Մոնթեն Ղարադաղլուի

մոտ հետախուզություն էր կատարել, և խնդրեց նրան ավարտել անհնազանդ ջոկատների ձախողած օպերացիան:

— Ձեր իրերը հավաքեցե՛ք, — հայտարարեց Մոնթեն՝ ներխուժելով «Հայրենասիրական ջոկատի» ճամբարը Մեհդիշենում, — գնում ենք:

Կեսօրից հետո, երբ նրանց УАЗ-ները մոտեցան Ղարադաղլուին, նրանք ճանապարհին հանդիպեցին «Արաբոյի» ու «Արամոյի» մարտիկներին: Սևազգեստ զինյալներն ասացին, որ կռիվն ավարտված է, գյուղը գրավված է, և այժմ հարձակվողներն այնտեղից դուրս են գալիս: Սա լսելով՝ «Հայրենասիրական ջոկատի» անդամների մեծ մասը վերադարձան Дор. Отдел-ի իրենց զորանոցը, բայց Մոնթեն շարունակեց առաջ գնալ դեպի Ղարադաղլու՝ համոզվելու համար, որ լուրը ճիշտ էր: Քիչ անց նա ներս ընկավ Дор. Отдел-ի զորանոցն ու բղավեց.

— Պատրաստվեցե՛ք:

Տեղեկությունը սխալ էր. Ղարադաղլուն մնում էր ադրբեջանցի պաշտպանների ձեռքում:

Մյուս առավոտ, ժամը 6-ի մոտ, «Հայրենասիրական ջոկատի» տասնյակ անդամներ դիրքեր էին գրավել դարչնագույն խոտի ու ձյան մեջ, Ղարադաղլուի հարավ-արևմտյան ծայրամասին նայող մի բարձունքի վրա: Նրանց դիմաց ադրբեջանցիների՝ մի քարե շինության մեջ տեղակայված պաշտպանական կենտրոնն էր: Տեղացի մարտիկները Մարտունու շտաբից շարվել էին Մոնթեի երկու կողքերը, իսկ «Արաբո» և «Արամո» խմբավորումները գտնվում էին գյուղի շուրջը: Ո՛չ հարձակվողները, ո՛չ էլ պաշտպանները չունեին տանկեր, հրետանի կամ նռնականետից մեծ որևէ այլ զենք:

9 տարի առաջ Մոնթեն իր «Ժողովրդական մարտիկի մարզման ձեռնարկում» գրել էր. «Հրամանատարը դարանից կրակ բացելու հրամանը տալիս է՝ ինքը թշնամու վրա կրակելով: Նախընտրելի է կրակն սկսել РПГ-7 նռնականետով կամ մեկ ուրիշ նման զենքով (եթե այդպիսին կա), որն անմիջապես մեծ կորուստներ կպատճառի»: Այժմ նա РПГ-7-ը հանգիստ դրեց ուսին, նշան բռնեց ու սեղմեց ձգանը: Սպիտակ բոցով ու ոռնալով՝ առաջին արկը մտավ պաշտպանական կենտրոնի երկրորդ հարկի անկյունային պատուհանից և ներսում պայթեց: Պատուհանից դեղին բոց դուրս եկավ, և հարձակվողներն սկսեցին արճիճ տեղալ գյուղի վրա: Բերդաշենի ենթահրամանատար Նելսոնը լայն բացած աչքերով նայում էր, թե ինչպես էր Մոնթեն կրակում, իջեցնում РПГ-7-ն՝ իր զորքերի առաջխաղացումը դիտելու, ենթահրամանատարներին բղավելով հրահանգներ տալիս (քանի որ ռադիոկապ չկար) և հետո հանգիստ վերալիցքավորում նռնականետն ու նորից կրակում:

Գնդակների տարափի տակ ադրբեջանցի պաշտպանները ռադիոյով օժանդակ ուժեր պահանջեցին՝ տեղեկացնելով մի քանի կիլոմետր հյուսիս՝ Աղդամի հովտում գտնվող իրենց հրամանատարներին, որ այլևս չեն կարող երկար դիմադրել: Մոնթեն իր դիրքից, որ նայում էր ադրբեջանական պաշտպանական կենտրոնին, կրակոցներ էր լսում շենքի ներսում: Նրան թվաց, թե պաշտպանները, հետագա գործողությունների վերաբերյալ համաձայնության չգալով, իրար վրա են կրակում: Երբ թշնամին դադարեց կրակին պատասխանել, Մոնթեն ցած դրեց B-7-ը և նայեց, թե ինչպես էին իր ընկերները տարբեր կողմերից մտնում Ղարադաղլու:

Ժամը 17-ի մոտ ջոկատները հասել էին իրենց նպատակին: Այդ օրը հայկական կողմից միայն մեկ մարտիկ էր զոհվել, մինչդեռ թշնամու 2 զինվոր սպանված էին, և 48 գերի ադրբեջանցի խմբված էին բեռնատարի թափքին: Գերիները տարվելու էին Ստեփանակերտ, որտեղ պիտի պահվեին՝ մինչև ադրբեջանցիների ձեռքն ընկած հայ գերիների հետ փոխանակվելը: Թվում էր, թե Ղարադաղլուն՝ Մոնթեի հրամանատարության տակ տեղի ունեցած առաջին ճակատամարտը, սահուն էր ընթացել:

Շուտով, սակայն, իրավիճակը փոխվեց: «Արաբոյի» ու «Արամոյի» մարտիկները 38 դերու, այդ թվում՝ խաղաղ բնակիչների, գյուղի ծայրում հրել էին մի առվի մեջ: Գերիներից մեկը քաշել էր ձեռքի վիրակապի տակ թաքցրած նռնակի ապահովիչը և այն նետել՝ պոկելով իրեն գերեվարողներից մեկի՝ «Հայրենասիրական ջոկատին» վերջերս զինվորագրված Լևոնի ոտքի ստորին մասը: Շփոթված ու զայրացած հայ մարտիկներն սկսել էին դանակահարել գերիներին ու կրակել նրանց վրա:

Մոնթեն խստիվ հրահանգել էր գերիներին չվնասել: Երբ նա հասավ դեպքի վայր և կատարվածը տեսավ, զայրույթից նրա պարանոցի երակները հյուսած կանեփաթելի պես դուրս ցցվեցին: Նա գոռում էր, մինչև որ ձայնը կտրվեց, բայց արդեն ուշ էր: «Արաբոյի» ու «Արամոյի» որոշ մարտիկներ բեռնում էին այդ օրը բռնագրավված զենքերը՝ 78 ինքնաձիգ և հազարավոր փամփուշտ-

ներ: Նրանք նաև դատարկեցին գյուղի մթերային պահեստը, իսկ ավարը հավաքելուց հետո Ղարադաղլուն հրկիզեցին:

Երբ Ղարադաղլուի «մաքրման» լուրը տարածվեց, 15 կիլոմետր հարավ գտնվող Կրասնի Բազար գյուղից մի քանի պատվիրակ եկան: 2 տարի առաջ ՕՄՕՀ-ականների համազգեստներ հագած տեղացի ադրբեջանցիները կանգնեցրել էին Կրասնի Բազարի չորս հայ գյուղացիների, որոնց թվում՝ մի կնոջ, և կենդանի այրել իրենց մեքենայի մեջ: Այժմ նրանց համագյուղացիները քաղաքավարի կերպով խնդրում էին ադրբեջանցի չորս գերի՝ մատաղի համար: Չէ՞ որ գրված է. «Ակն ընդ ական»: Մոնթեն խոժոռ նայեց նրանց, և նրանք ձեռնունայն հեռացան:

Ղարադաղլուի դեպքերը վնաս հասցրին Մոնթեի հեղինակությանը, բայց դա գրոհից հետո տեղի ունեցածի պատճառով չէր: Ընդհակառակը, լեռներում արմատացած էր վրիժառության գաղափարը, և երկու կողմից արյան դիմաց արյուն պահանջող կոչեր էին հնչում: Մոնթեի հեղինակությանը վնասողն այն հանգամանքն էր, որ նրա հրահանգն անտեսվել էր: Քաչալ Սերգեյը, որ մեջքը խոցած գնդակով տեղափոխվել էր հիվանդանոց, նաև ուրիշները բնականաբար հուզված չէին ադրբեջանցի գերիների ճակատագրով: Նրանց զայրույթն ուրիշ պատճառ ուներ. Մոնթեն չէր խանգարել «Արաբո» ջոկատին՝ տանել Թշնամուց գրաված զենքերի ու դինամիտների՝ «Հայրենասիրական ջոկատի» «արդար» բաժինը: Ղարադաղլուն հաստատեց այն, ինչ, թվում է, գիտեին Քաչալն ու բոլորը. շտաբի նոր պետ Ակ՝ն Թուլակամ մարդ էր: Մարտունեցիները խաբում ու մոլորեցնում էին նրան: Ժամանակին Մոնթեն ինքն էլ ընդունել էր դա. Ղարադաղլուից հետո մի մարտիկ հարցրել էր նրան, թե ինչու է որպես ռադիոկապի իր ծածկագիր ընտրել՝ «0-0»:

— Ես զրոյից էլ փոքր եմ, — պատասխանել էր նա:

Մոնթեն գիտակցում էր, որ եթե ինքը երբևիցե հեղինակություն պիտի վայելեր Մարտունիում, ապա այդ հեղինակությունը պիտի շահեր ոչ թե Ստեփանակերտում կայացված որոշումներով, այլ մարտի դաշտում: Փետրվարի 22-ին նա Վեսալուի ռազմավարական բարձունքներում ադրբեջանցիների դիրքերի դեմ հաջող կայծակնային հարձակում գործեց: Փետրվարի 26-ին նա կանգնել էր Խոջալուի մոտ գտնվող լանջին՝ երեք շաբաթ առաջ իր փնցկացրած առաջին հետախուզական օպերացիայի տեղում, և գնում էր դարչնագույն խոտի ու ձյան վրա թափված՝ ադրբեջանցիների արյունոտ շորերը...

— Ո՛չ մի կարգապահություն, — փնթփնթաց նա:

Այդուհանդերձ, գիտակցելով Արցախում ծավալվող իրադարձությունների բախտորոշությունը, Մոնթեն ընդունել էր «քաղաքական իրապաշտների» «նպատակն արդարացնում է միջոցները» բանաձևը, որ արծարծվում էր և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում: Այո՛, «Արաբո»-ի ու «Արամո»-ի որոշ մարտիկներ անողոք էին, բայց նրանք նաև խիզախ էին, իսկ այդ ժամանակ խիզախ մարտիկների մեծ անհրաժեշտություն կար:

Բայց անհնազանդությունը վարակի նման տարածվում էր նաև Մարտունիի տեղաբնակների մեջ. պահեստայիններն իրենց նեղություն չէին տալիս խրամատներում երևալու, ճանապարհները նորոգողները նվազում էին, իսկ դիզելային վառելիքով լեցուն ցիստեռններն անհայտանում էին սև շուկայում: Նույնիսկ Մոնթեի անմիջական ենթակայության տակ գտնվող շտաբի անձնակազմը խաբում էր նրան ու հրամաններն արհամարհում: Մարտի սկզբին, մի արևոտ օր, նրա մարտիկներից 4 հոգի, որոնց թվում՝ «Ցավ» մականունով մի տեղացի, առանց թույլտվության անցան չեզոք գոտու վրայով: Երբ նրանք մոտեցան Թշնամու՝ շարքից դուրս եկած մի տանկի, նրանց ջիպն ականի վրա պայթեց՝ վիրավորելով մարտիկներին ու պոկելով Ցավի ոտքի ներքևի մասը:

Երբ Մոնթեն լուրը լսեց, նրա ծնոտը թերահավատությունից կախ ընկավ: Այս հերթական անհնազանդությունը, որ անմիջապես հետևեց նախորդ դեպքերին, վերջին կաթիլն էր: Կամ Մոնթեն պիտի քայլեր ձեռնարկեր իր հեղինակությունն ամրապնդելու համար, կամ անկարգությունը տարածվելու էր ու նրան դուրս մղելու Մարտունուց: Եվ եթե դա պատահեր, ով էլ լիներ իրեն փոխարինողը, է՛լ ավելի մեծ դժվարությամբ էր խրամատները մարտիկներով լցնելու:

Ցավի վիրակապերը դեռ չէին չորացել, երբ Մոնթեն հրամայեց «Հայրենասիրական ջոկատին»՝ իր իսկ և իր իրավասության ներքո գտնվող վերջին ջոկատին, լքել Մարտունին: Նրանցից միայն 2 հոգու թույլ տվեց մնալ:

Քաչալը դեռ ապաքինվում էր գնդակի վերքից, երբ լսեց, որ իր նախկին ընկերը հրամայել է իրեն ու ջոկատին դուրս գալ Մարտունուց: Նա եզրակացրեց, որ Մոնթեն, իշխանություն ստանալով, «խելքը թռցրել էր» և արհամարհում էր իր հին ընկերնե-

բին ու վստահում կասկածելի տեղացիներին: Բայց եթե Մոնթեն ուզում է, որ ինքը հեռանա Մարտունուց, թող այդպես լինի. գերադասելի է ծառայել այլ տեղում՝ մի ավելի ուժեղ ու պակաս դյուրահավատ հրամանատարի մոտ:

Երբ Մոնթեն Քաչալին ու մյուսներին հեռացրեց Մարտունուց, ինքն արդեն դուրս էր եկել Дор. отдел-ի ժամանակավոր զորանոցից և իր իրերը թողել Մարտունու շտաբի մի փոքրիկ գրասենյակում: Այդ շտաբը՝ բետոնե մի շինություն, ժամանակին տեխնիկական ուսումնարան էր եղել: Շտաբում իր հեղինակությունն ամրապնդելու համար Մոնթեն պետք է միաժամանակ լիներ ամենուր՝ միշտ վերահսկելով ճակատագծի խրամատներն ու կրակակետերը: Այս խնդիրն իրագործելու համար անիվներ էին հարկավոր: Սակայն երբ նա մեքենա խնդրեց տեղական ոստիկանական բաժանմունքից, կապիտանը գլուխն օրորեց. ինքը չէր կարող մեքենա տալ առանց վարորդի: Դրանից ոչ շատ անց մի ջարդուխուրդ կանաչ ջիպ կանգ առավ շտաբի դիմաց, և միջից մի նիհար, գանգրահեր վարորդ դուրս եկավ: Նախկին ոստիկան կոմիտասը մեղմ ձայնով ներկայացավ իր նոր պետին՝ Մոնթեին: Նրանք ողջունեցին միմյանց, հետո Մոնթեն պատույտ գործեց իր առաջին և միակ ծառայողական մեքենայի շուրջը: Այն նույն մակնիշի «վիլիս» էր, որ 8 ամիս առաջ որպես հարսանեկան լիմուզին էր ծառայել:

Մոնթեն շուտով նոր հաջողություններ արձանագրեց մոտորացված փոխադրամիջոցների բնագավառում: Մարտի 15-ին նա մագլցեց շտաբի առաջ կանգնած մի զրահամեքենայի վրա և սկսեց խոսել տեսախցիկի առաջ: Տեսաժապավենի վրա նրա հագին զինվորական հագուստ է ու երկարաճիտ կոշիկներ, և նա կրծքին է սեղմել իր բուլղարական ինքնաձիգը: Նա իր հանգիստ, բայց լուրջ ձայնով բացատրում է, որ տանկը՝ БМП-2, մեկն է այն մի քանի տասնյակ զրահամեքենաներից, որոնք երկու շաբաթ առաջ քանդագրավվել են նախկին խորհրդային բանակի՝ Ստեփանակերտի զինապահեստից: Սակայն թշնամին նույնիսկ ավելի շատ ծանր զենքեր է զավթել Աղդամի և Արցախից 35 կիլոմետր հյուսիս գտնվող Գանձակ քաղաքի նախկին խորհրդային ռազմական գործարաններից: Այսպիսով, երկու կողմերի միջև սպառազինությունների բախում է նախապատրաստվում: Նայելով տեսախցիկի ոսպնյակին՝ Մոնթեն շարունակում է, որ պայքարը նոր մակարդակի է հասել, երբ պատերազմելու ֆիդայական եղանակներն

այլևս բավարար չեն: Անհապաղ պետք է բանակ կազմակերպել: Երկիրը պաշտպանելու համար անհրաժեշտ է նոր բանակ՝ իրական ուժ: Դա է Հայաստանի առջև ծառացած հիմնական խնդիրը:

Սակայն, նախքան այդ իրական ուժի համար Մարտունիում հող նախապատրաստելը, նա պետք է իր հեղինակությունն ամրապնդեր այնտեղ: Եվ դա հեշտ չէր:

Մարտի 24-ին կամ 25-ին Մոնթեն, իր ինքնաձիգը հենելով շտաբի սեղանին, նստեց քաղաքի ավագանու պատվիրակության առջև: Ժամանակին նրանք տեղական խորհրդի ղեկավարներ էին եղել, բայց երբ պատերազմը եկավ Մարտունի, զինվորական հագուստներով երիտասարդները դուրս մղեցին նրանց: Այսօր նրանք եկել էին՝ ներկայանալու շտաբի նոր պետին ու պարզելու, թե ինչ մարդ է նա, և ինչ կարելի է սպասել նրանից: Ալեհեր մարդկանցից մեկը Մոնթեին տեղեկացրեց, որ իրենք ուզում էին վերականգնել քաղաքային խորհուրդը:

— Խորհուրդը միշտ լավ բան է, — պատասխանեց Մոնթեն:

Բայց նա դեմ էր քաղաքապետարանի ու շտաբի միջև մշտական անցուդարձին.

— Շտաբ պիտի մտնեն միայն այն մարդիկ, որոնք եկել են ռազմական հարցերով, — ասաց նա, -- և իրենց գործերն ավարտելուն պես պիտի հեռանան:

Քաղաքացիական գործերն իր շտաբից դուրս պահելը, սակայն, հեշտ չէր: Մի ուրիշ ալեհեր՝ ելունդավոր մեծ քթով մի ծերունի, բարձրացավ տեղից՝ առաջ քաշելու համար պահեստապետ Մարատի հարցը, որը քաղաքային պահեստներից մթերք էր գողանում: Մոնթեին խնդիրը հայտնի էր, բայց այնտեղի ոստիկանության սպա Մավրիկը նրան խորհուրդ էր տվել չխառնվել. Մարատն ազդեցիկ ընտանիքից էր և Մարտունիում շատ ընկերներ ուներ: Մավրիկի խորհրդին հակառակ՝ Մոնթեն Մարատին հրամայել էր հանձնել պահեստի բանալիները և վերադարձնել շտաբի տրամադրած ինքնաձիգը: Ավելորդ է ասել, որ Մարատն արհամարհել էր հրամանը: Վճռականություն ցուցաբերելու ժամանակն էր:

Մոնթեն պատվիրակների հետ շտաբից դուրս եկավ Ֆուտբոլի դաշտին նայող դարիվարի վրա: Նրանց առջև կանգնած էր Մարտունու չափահաս տղամարդկանց մեծ մասը՝ հարյուրավոր մարդիկ, որոնք արձագանքել էին Մոնթեի՝ համախմբվելու կոչին: Տեսախցիկն արձանագրել է այդ տեսարանը:

Ելունդավոր քթով ծերուկը՝ այժմ մորթե ականջավոր «ուշանկա» գլխարկով, քայլ է անում դեպի վեր՝ ներկայացնելու համար շտաբի պետին.

— Ավոն չի խոսում մեր բարբառով, — ասում է նա, — ուրեմն մենք կխոսենք նրա փոխարեն:

Այստեղ Մոնթեն բարձրացնում է ձեռքը, և ծերուկը լռում է:

— Եկեք ժողովը շուտ սկսենք, որ շուտ ավարտենք, — ասում է նա:

Նրա արևմտահայերենը պետք է որ էկզոտիկ թվար լսարանին և, հավանաբար, հազիվ հասկանալի, բայց նրա ձայնը գործնական է ու հեղինակավոր:

— Դուք գիտեք, թե ինչ խնդիր ունենք: Այս շրջանում կարգապահության, կազմակերպվածության պակաս է զգացվում: Հարցը կարգավորելու համար մարդիկ են եկել Երևանից, նաև սփյուռքից: Մենք եկել ենք՝ պարզապես օգնելու և պաշտպանելու այս շրջանը որպես մեր հայրենիքի մաս...

Լսարանը հանգիստ է, իսկ Մոնթեն շարունակում է.

— Ամեն հայ իրավունք ունի Մարտունի գալու, Մարտունիում ձայն ունենալու, աշխատելու և Մարտունին պաշտպանելու:

Ուշադրություն չդարձնելով հատ ու կենտ ծափահարություններին՝ նա շարունակում է.

— Այժմ իմ տղաներն ուզում են իմանալ՝ դուք մեզ այստեղ ուզո՞ւմ եք, թե ոչ:

Դարիվարի վերևում կանգնած երկու գլխաշորով մայրիկ ձեռքերը վեր են բարձրացնում.

— Այո՛:

Մոնթեն աջ ձեռքի մատանեյը մոտեցնում է ճակատին՝ ի նշան ողջույնի:

— Շատ լավ: Մենք ուրախ ենք դրա համար:

Բայց, շարունակում է Մոնթեն, մարտունեցիները պիտի գործով ցույց տան իրենց օժանդակությունը: Նրանք պիտի ընդունեն, որ իրենց այն ընկերները, հարևաններն ու ընտանիքի անդամները, որոնք հրաժարվում են ենթարկվել հրամաններին, պատժվելու են՝ անկախ նրանից, թե որքան կապեր ունեն վերևներում: Ապա Մոնթեն բերում է ամենահրատապ օրինակը. իրենց հարևան Մարատը չարաշահել է պահեստապետի իր պաշտոնը և, հեռանալու հրահանգ ստանալով, արհամարհել է այն:

Հանկարծ նիհարավուն մի մարդ, անցնելով բազմության միջով, բարձրանում է դարիվարի վրա, որտեղ կանգնած է Մոնթեն: Դա պահեստապետ Մարատն է, որին մեղադրել են իր ընտանիքի, հարևանների, համագյուղացիների առջև: Մոնթեն ետ է գնում, որպեսզի նրան թույլ տա խոսել: Մարատն իրենց բարբառով դիմում է համագյուղացիներին՝ օդում թափ տալով մի չվաված ծխախոտ և հիշատակելով իր եղբոր զինվորական ծառայության փաստը. մի՞թե իր եղբայրը քաջաբար չի կռվել:

— Այո, նա քաջաբար է կռվել, — պատասխանում է Մոնթեն, — բայց նա քո եղբայրն է: Իսկ դո՞ւ ինչ ես արել:

Մարատը փոխում է թեման՝ հավաքվածներին հիշեցնելով Ցավի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարը: Թվում է, թե նա փորձում է վարկաբեկել Մոնթեին՝ ներկայացնելով նրան որպես նույնիսկ իր անմիջական ենթականերին վերահսկելու կարողությունից զուրկ, բայց սա չէ Մարատի բուն ասելիքը: Նա ավելի շուտ ակնարկում է, թե, այդքան խիստ պատժելով իր ամենամտերիմ ընկերներին ու վտարելով նրանց Մարտունուց, Մոնթեն ցույց է տվել իր անվստահելիությունը. չի կարելի համոզված լինել, թե նա Մարտունիում որևէ մեկին հավատարիմ կմնա: Ղարաբաղի լեռնցիները բարձր արժանիք են համարում հավատարմությունն ընկերներին, իսկ Մոնթեն այդ հատկանիշը չունի:

— Մի բոպե սպասե՛ք, — խռպոտ ձայնով բացականչում է Մոնթեն, — նա շատ ճիշտ բան ասաց...

Նա բարձրացնում է ձայնը և մատը տնկում մարգարեի պես.

— Իմ ամենամտերիմ ընկերները՝ իմ սեփական ջոկատի ամենամտերիմ ընկերները, հրամանին չենթարկվեցին, գնացին այնտեղ, ուր չպիտի գնային: Նրանք ականի դիպան: Մեկը կորցրեց ոտքը, իսկ մյուսը վիրավորվեց:

Նրա ցուցամատը կախվում է օդում, հետո ընկնում կացնի պես.

— Եվ մենք պատժեցինք նրանց: Մենք պատժեցինք նրանց:

Մոնթեի ձայնը կատաղի է, պարանոցի երակները դուրս են ցցվել, աչքերն այրվում են ածուխների պես.

— Ով սխալ բան անի, պատժվելու է: ՈՎ ՍԽԱԼ ԲԱՆ ԱՆԻ, ՊԱՏԺՎԵԼՈՒ Է:

Հավաքվածները հավանության կոչեր են արձակում, և չորանը պայթում է ծափահարություններից: Այս նոբեկը՝ շտաբի պետ Ավոն, դուցե և անհավատարմություն է ցուցաբերել իր ամենա-

մտերիմ ընկերների հանդեպ, բայց նա իսկապես հավատարիմ է, մոլեռանդորեն հավատարիմ՝ մեկ այլ բանի՝ երկրին, իրե՛նց երկրին:

Գլխաշորերով մայրիկները կանգնում են Մոնթեի առաջ ու գոռում Մարատի՝ իրենց հարազատ համագյուղացու վրա.

– Ընկեր Ավոն ճիշտ է:

Մարատն աչքերով օժանդակություն է փնտրում ներկաներից, բայց իզուր: Նա թևաթափ եղած հետ է գնում:

Մարատի հետ բախումից հետո որոշ մարդիկ Մարտունիում սկսեցին ասել այցելուներին.

– Մեր լիդերն Ավոն է:

Մյուսները չգիտեին՝ ինչ մտածել: Մոնթեն Մարատին ազատեց իր պաշտոնից ու փոխարինեց ուրիշով, բայց շուտով նա ստիպված էր փոխարինել փոխարինողին, և, ինչպես պարզվեց, նա երբեք չէր գտնելու ազնիվ պահեստապետի:

Մոնթեն է՛լ ավելի հիասթափվեց՝ հայտնաբերելով, որ իր նվաճած վստահությունը որոշ քաղաքացիների մոտ անմիջապես չէր վերածվում պաշտոնապես իր հրամանատարության տակ գտնվող մարտիկների միջավայրում հեղինակության: Գիշերում և Սպիտակաշենում զինվորները դեռ հրաժարվում էին ներկայանալ խրամատներ, և Մարտունի քաղաքում մի ինքնակոչ «Հատուկ գործողությունների բրիգադ» հրաժարվում էր պահակություն անել: Նրանք չէին փախել Երևան կամ Ռուսաստան, ինչպես շատ ուրիշներ, այլ պահել էին իրենց երկիրն ու կռվել: Այդ պատվավոր կենսագրությունը, նրանց կարծիքով, ազատում էր իրենց պարեկային ծառայության տաղտուկից և բարձրացնում հաղիվ հասկանալի բարբառով խոսող մի օտարականի հեղինակությունից վեր:

7-8 տղաներից բաղկացած մեկ այլ խումբ քաղաքի՝ Թոկից փախած «մաֆիան» էր: Նրանք առևանգում էին գինիով ու դիզելային վառելանյութով լի ցիստեռններ, խուսափում զինվորական պարտականություններից՝ շտաբում հայտնվելով միայն այնտեղ կռիվ փնտրելու համար: Իրավիճակն ավելի էր բարդանում, քանի երկու խմբավորումների անդամները պարբերաբար կանգնեցնում, ծեծում ու սպառնում էին միմյանց:

Այս խառնաշփոթի մեջ Մոնթեն հայտնվեց ավելի մեծ պատասխանատվության բեռի տակ: Մարտ ամսվա վերջին, երբ արյունը դեռ ամբողջությամբ Ղարաղալուի հողի մեջ չէր ներծծվել, Վազգեն Սարգսյանը, Մարտունու շտաբ գնալիս, անցավ անտանիք գյուղի մոտով: Սարգսյանը եկել էր Երևանից, որպեսզի Մոնթեին համոզի ընդունել մի ուրիշ նշանակում. այս անգամ, շտաբի պետից հետո, Մարտունու՝ Ղարաբաղի 6 հիմնական պաշտպանական շրջաններից մեկի հրամանատար:

Մոնթեն հրաժարվելու համար ծանրակշիռ պատճառաբանություններ բերեց. նախ՝ ինքը նախկինում երբեք մարտադաշտ չէր տարել տանկեր ու հետևակ և, չնայած վերահսկել էր Մարտունին մի ծայրից մյուսը, դեռևս բավարար գիտելիքներ չուներ երկրամասի դիրքի մասին: Բացի այդ, ինքը չէր խոսում ռուսերեն՝ զինվորական հրամանների լեզվով: Մարատի ու Ցավի հետ իր վեճերն էլ դեռ թարմ էին մարդկանց հիշողության մեջ. 7 շաբաթ էր անցել այն օրվանից, երբ Սարգսյանն իրեն ստիպեց ստանձնել շտաբի պետի պաշտոնը, և ինքը համոզվել էր, թե որքան համառ էին այս լեռնցիները, և որքան կասկածամիտ էին իր նման օտարականների հանդեպ, հատկապես՝ իշխանություն ունեցող օտարականների: Եվ հետո՝ այդ «կարգապահության խնդիրները», Ղարաղալուն ու Խոջալուն... Շտաբի պետ դեռ կարելի էր լինել, բայց ողջ շրջանի հրամանատա՞ր: Մի՛չ:

Սարգսյանը կետ առ կետ լսեց այս առարկությունները, և կրկնեց 7 շաբաթ առաջ իր բերած փաստարկները, երբ Մոնթեին նշանակում էր շտաբի պետ. ինչ թերություններ էլ ունենա Մոնթեն, և որքան էլ մեծ լինեն արգելքները, «Պաշտպանության կոմիտեն» այդ գործի համար ավելի հարմար թեկնածու չունի: Իրենք բոլորն էլ պիտի բավարարվեն եղած հնարավորություններով: Սա կյանքի ու մահվան հարց է Մարտունու 28000 բնակիչների և ողջ Արցախի համար:

Երկու մարտիկները՝ Սարգսյանն ու Մոնթեն, վիճեցին ողջ գիշեր: Վերջապես ժամը 3-ին Մոնթեն տրորեց կարմրած աչքերը: Ինքը կծառայի որպես շրջանի հրամանատար, բայց միայն՝ մինչև Սարգսյանը նոր թեկնածու գտնի: Սարգսյանը հետ նստեց ու հոգոց հանեց: Հետագայում նա նկարագրել էր հանդիպումը Սեդային. «Այդ ողջ գիշեր քո ամուսինն ինձ չթողեց գնամ քնեմ, մինչև չհամոզեցի նրան հրամանատար դառնալ»:

Որոշ տեղացիներ դժգոհ էին այս նշանակումից: Երբ Սարգսյանը կանչեց ենթահրամանատարներին և շտաբերի անձնակազմերին՝ ներկայացնելու նրանց նոր հրամանատարին, նրանցից շատերն առանձնապես ուրախ չէին. մի՞թե տեղացի ժողովուրդը

չէր կարող սեփական ռազմական առաջնորդներ առաջադրել: Ինչ էլ լիներ, իրենց նախահայրերը դարեր շարունակ դիմակայել էին խալիֆների, շահերի ու ցարերի: Նույնիսկ Զինգիզ խանի ու Լենկ Թեմուրի բանակները չէին կարողացել ինքնավարությունը խլել իրենց նախնիներից: Այս ժայռակուլտը Խորհրդային Միությանը տվել էր 3 մարշալ, 30 գեներալ, 20 Խորհրդային Միության հերոս և նույնիսկ մի ծովակալ: Այսպիսի ռազմական ժառանգությամբ՝ ինչպե՞ս կարող էր Վազգեն Սարգսյանը կամ որևէ այլ ոք սպասել, թե Ղարաբաղի լեռնցիներն իրենց սեփական հողի վրա կռվելու համար կենթարկվեն մի օտարականի:

Նոր նշանակումից հետո, ինչպես նկատեց Փարիզում տպվող Les Nouvelles d'Armenie ամսագրի մի թղթակից, անհնազանդությունը միայն սաստկացավ: Մարտի վերջին օրերին շտաբում հայտնվեց ժնևյան մի թղթակից՝ Վիգեն Չթըրյանը: Մարտունու նոր հրամանատարը նրան կեսժամանոց հարցազրույց էր խոստացել: Սակայն հենց որ նրանք նստեցին, ցնցոտիավոր մի խնդրարկու դռնից ներս եկավ ու աղաչեց 2 լիտր դիզելային վառելանյութ: Մինչ Չթըրյանը դիտում էր, Մոնթեն համբերատար բացատրեց, որ դիզել կար միայն ռազմական նպատակների համար և ոչ մասնավոր օգտագործման: Հայցվորը տեղից չշարժվեց: Մոնթեն կրկնեց իր բացատրությունը՝ ավելացնելով, որ այցելուն իզուր ժամանակ է կորցնում: Վերջապես խնդրարկուն գնաց, բայց մի բոպե անց դռնից մի մարտիկ ներս մտավ և իր ինքնաձիգը հետ պահանջեց: Չթըրյանն այսպես է նկարագրում տեսարանը.

— Միայն դավաճանի զենքը կարող է բռնագրավվել, — բողոքեց զինվորը՝ հետո մի սադրիչ հայց տալով. արդյո՞ք Մոնթեն իրեն դավաճան է համարում:

Ո՛չ, պատասխանեց Մոնթեն, բայց նա իր զենքով սպառնացել էր մի սպայի. ահա թե ինչու էր «Կալաշնիկովը» բռնագրավվել: Զինվորը գնաց խիստ զայրացած, իսկ նրան փոխարինեց մեկ այլ խնդրարկու, որ մի ուրիշ բան էր խնդրում: Վերջապես Չթըրյանը դիմեց Մոնթեին՝ հարցնելով, թե ինչպես կարող էր այդքան անկազմակերպ, անկարգ զորքն իրար հետևից հաղթանակներ արձանագրել:

— Որովհետև ադրբեջանցիները նույնիսկ մեզանից ավելի անկարգապահ են, — պատասխանեց Մոնթեն:

Սակայն չէր կարելի հուսալ, թե թշնամին միշտ կմնար անկարգապահ: Ի վերջո, Ադրբեջանի՝ նավթային պայմանագրերից ստացած շահույթով կարող էին գնվել վարձու օդաչուներ, սավառնակներ ու զրահամեքենաներ, ռազմական պատրաստությունը կարող էր բարելավվել, և նրանք կարող էին ավելի լավ սպայական կազմ ունենալ: Մոնթեն գիտեր այդ ու նաև անհանգիստ էր, որ Մոսկվան մի օր կարող էր Բաքվի կողմը բռնել, եթե Ադրբեջանի ղեկավարները Ռուսաստանի նախագահ Ելցինին նավթային խոստումներ տային: Լեռնային Ղարաբաղի անփորձ, վատ մարզված և վատ սպառազինված պաշտպանները մրցավազքի մեջ էին ժամանակի հետ: Նրանք պիտի անհապաղ դուրս մղեին թշնամուն հրանոթային հասանելիության սահմաններից և ամրացնեին պաշտպանական դիրքերը, քանի դեռ թշնամին չէր նորոգել իր բանակը:

Բայց ամենից առաջ պետք էր լուծել Մարտունուց արևելք տարածվող սարերի վրա տեղակայված թշնամու հրանոթները՝ փախստականների հոսքը շրջանից դադարեցնելու համար: Ադրբեջանցիները լեռների վրա Մարտունի քաղաքի ու շրջակա գյուղերի դիմաց հրանոթներ էին տեղադրել: Հարյուրավոր վախեցած գյուղացիներ կապոցներ էին բարձել բեռնատարների և ավտոբուսների մեջ ու լքել իրենց տները, և հազարավոր ուրիշներն էլ պատրաստ էին նրանց հետևել: Մարդկանց հեռանալով պաշտպանական ռեսուրսներն սպառվում էին, և մնացողների բարոյական վիճակը վատթարանում էր:

Բայց պատերազմը շարունակվում էր: Ապրիլի 2-ի վաղ առավոտյան Մոնթեն 50 տեղացի մարտիկների տարավ դեպի ամրացված Ղաչար գյուղի ադրբեջանական դիրքերը: Հենց որ հնչեցին առաջին կրակոցները, ադրբեջանցի պաշտպաններն արճիճի տարափ տեղացին հարձակվողների վրա: Անապատելի կատաղի դիմադրությունը ճնշելու համար Մոնթեն ռադիոյով կապվեց կողքի Կրասնի Բազար գյուղի ենթահրամանատար Գոգայի հետ՝ զորակցություն խնդրելու: Նա ապշած էր Գոգայի մերժումից. «Ինչո՞ւ պիտի Կրասնի Բազարի որդիները վտանգեն իրենց կյանքը Ղաչարի համար»:

Մոնթեն ռադիոն անջատեց, արաբերեն ինչ-որ բան քրթմնջաց և իր ինքնաձիգը հենեց ուսին: Չնայած կատաղի դիմադրությանն ու Գոգայի անհնազանդությանը, Մարտունու զինվորներն այդ օրը կարողացան առաջ գնալ ու Ղաչարը գրավել:

Մարտունու շուրջը, սահմանի երկու կողմերից, 270 սստիճան շրջագծով ասպատակություններ ու հրանոթային մենամարտեր

էին տեղի ունենում. հյուսիսում՝ Գուլաբլիի մոտ, արևելքում՝ ժամացույցի սլաքին համընթաց ձգվող լեռների մերձակայքում, և հարավում՝ հին Ամարաս վանքը շրջապատող կաղնու անտառներում: Ասես իբրև ծաղր՝ գեղեցիկ կատարով մի հոպոպ ծլվլում էր արկերի սուլոցի ու պայթյունների արանքներում: Մոնթեն շտաբից դուրս էր եկել լուսաբացից առաջ: Երբ նա գիշերը վերադարձավ, ենթարկվեց հայցվորների ու բողոքավորների հարձակմանը: Մի հարսի հայր 50 լիտր բենզին էր խնդրում, անկառավարելի խմբավորման մի անդամ կրկին մեկին խփել էր, սևազգեստ մի մայր խնդրում էր ևս մի դաշտակիր, և՝ այդպես շարունակ:

Մոնթեն չափազանց զբաղված էր, որպեսզի ավելին աներ, քան Արցախում տարածված լուրն արձանագրելը. ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երեսունչորսամյա նախագահ Արթուր Մկրտչյանին գտել էին սպանված: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ նա «սեփական հրազենի հետ անզգույշ վարվելու զոհ» էր դարձել, բայց կասկածներ կային, թե Մկրտչյանին սպանել էին նրա քաղաքական հակառակորդները: Ոչինչ, սակայն, հստակ չէր, բացի այն փաստից, որ նրան ադրբեջանական գնդակ չէր խոցել:

Փոխնախագահ Գեորգի Պետրոսյանը դարձավ փոքր հանրապետության նախագահի պաշտոնակատարը: Դիմագրավելով Տեր-Պետրոսյանի կողմնակիցների նկրտումներին՝ նոր նախագահն ու նրա դաշնակցական հովանավորներն Արցախում համակիրներ էին փնտրում: Մոնթեն դաշնակցական պատվիրակներին քաղաքավարի ընդունեց և լսեց, բայց հստակորեն բացատրեց, որ ինքը Դաշնակցական կուսակցության և Երևանի իշխանությունների միջև վեճում որևէ մեկի կողմը չէր բռնելու: Նա կուշտ էր քաղաքական հակամարտություններից: Երբ մի օր նրան հարցրին, թե որ կուսակցությանն է համակրում, հետևեց հայտնի ծաղրական պատասխանը. «Թխվածքների կուսակցությանը»: Նա պարզաբանեց, որ թխվածքից գոնե մի օգուտ կարող էր լինել այդ օրերին: Սա ավելին էր, քան կարելի էր ասել Երևանում գզվռտվող կուսակցությունների մասին:

Տեղացիների համար դժվար էր հասկանալ Մոնթեի արևմտահայերենը: Երբեմն, սակայն, անհասկանալի բարբառը ռազմական առավելություն էր տալիս: Հակամարտող կողմերի ռադիոօպերատորները կանոնավոր կերպով հսկում էին ռադիոալիքները՝ թշնամու խոսակցություններին հետևելու, ծածուկ լսելու, ծաղրելու կամ պարզապես մյուս կողմում մնացած նախկին հարևանների հետ զրուցելու նպատակով: Մի անգամ մի հայախոս ադրբեջանցի ռադիոօպերատոր կանչեց Աբոյին՝ Մոնթեից բողոքելու համար. վերջինիս նա ճանաչում էր միայն նրա «Օ-Օ» ռադիոկոդով.

— Մենք ձեր ռադիոկապին հետևություն ենք հետևում, — Աբոյին հավաստիացրեց ադրբեջանցին, — բայց այդ «Օ-Օ»-ի ասածներից բան չենք հասկանում:

Այն, որ Մարտունու նոր ղեկավարը մարտունեցի չէր, նրան տալիս էր նաև ուրիշ առավելություններ: Քանի որ Մոնթեն այդ շրջանում ոչ ազգական ուներ, ոչ բարեկամ, ապա խնամիության ու հովանավորչության մեջ մեղադրվելու տեսանկյունից նա անխոցելի էր: Տեղացիներն արագ ընտելացան նաև այն հանգամանքին, որ իրենց նոր հրամանատարը կաշառք չէր վերցնում: Երբ մի բարերար Ֆրանսիայից ուզեց նրան մի քանի հազար դոլլար նվիրել, Մոնթեն նրան խնդրեց այդ դրամը տալ բանակին: Իսկ երբ մի ուրիշ բարերար նրան նվիրեց շոկոլադով, թխվածքաբլիթներով, օճառով և կրակայրիչներով լեփ-լեցուն մի ճամպրուկ, Մոնթեն հանձնեց այն ոստիկանության սպա Մավրիկին և հրահանգեց պարունակությունը բաժանել ամենադժվար դիրքերում գտնվող մարտիկներին: Բացելով ճամպրուկը՝ Մավրիկն ակնածանքով հայտնաբերեց, որ ոչ մի հատիկ կոնֆետ չէր բացակայում: Նոր հրամանատարը նույնիսկ հրաժարվեց մի երկու շիշ տնական գինուց, որ նվիրել էր Կոմիտասի հայրը՝ Մոնթեի ամուսնության առաջին տարեդարձի նախօրեին: Նա բացատրեց, որ դա շատ նման էր կաշառքի:

Մարտունու շատ բնակիչներ սկսեցին իրենց նոր ղեկավարին դիտել ոչ այնքան որպես տեղական վեճերում միջնորդի (այդ վեճերը նա ամեն դեպքում չէր էլ կարող հասկանալ), բայց ավելի շուտ՝ որպես մաքուր, գրեթե վերերկրային մի էակի: Ճիշտ է, նա իրենց հայրենակիցն էր, բայց նա նույն հաջողությամբ կարող էր լինել հրեշտակ կամ մարսեցի, որ թևածում էր Մարտունու ու Ստեփանակերտի երկպառակություններից, կլանային հավատարմությունից ու կաշառակերությունից վեր: Տատիկները նրան ասում էին՝ «մեր սուրբ տղա» և կժերով գոմեշի մածուն խցկում նրա ձեռքերի մեջ, երբ նա շտաբի մեքենայով անցնում էր գյուղերի միջով: Մայրերը նրան բերում էին «ժինդյալով» հաց՝ թխած յոթ վայրի խոտերի խառնուրդով: Դրանք աճում էին այն սալե-

րում, որոնք նա իր կյանքով երդվել էր պաշտպանել: Խալաթներով ու գլխաշորերով ծեր կանայք համբուրում էին հրամանատարի ճակատը և լեռնցիների բարբառով օրհնում. «Կլխավդ շուռ կյամ»:

Մայիսի սկզբին Մոնթեն մասնակցեց Ստեփանակերտի նախկին երկաթուղային կայարանում տեղի ունեցած մի խորհրդակցության, որտեղ համակրելի դեմքով գեներալ «Կոմանդոս» Տեր-Թադևոսյանը ներկայացնում էր Շուշիի գրավման ծրագրի վերջին փուլը: Մի քանի շաբաթ շարունակ Կոմանդոսի զորքերը հրետակոծել էին ադրբեջանցիների վերահսկողության տակ գտնվող բերդը «Գրադ» հրթիռներով ու հրանոթներով՝ պատրաստվելով վերջնական գրոհին: Այդ ընթացքում ադրբեջանական ուղղաթիռները փետրվարի վերջից ներս ու դուրս էին անում Շուշի՝ հասցնելով հրանոթներ և դուրս բերելով կանանց ու երեխաներին:

Երբ Կոմանդոսն ավարտեց իր ելույթը, Մոնթեն ու մի քանի այլ մարտիկներ առաջ եկան՝ Շուշիի վրա հարձակմանը կամովին զինվորագրվելու: Կոմանդոսն աչքերը հառեց Մոնթեին ու գլուխն օրորեց. երբ Շուշիի գրոհի լուրը տարածվեր, ադրբեջանական զորքերը հակահարձակումներ էին ձեռնարկելու Լեռնային Ղարաբաղի արևելյան ճակատով մեկ՝ Մարտունին ներառյալ: Ուստի Մոնթեն պետք է տեղում լիներ՝ թշնամու հարձակումները հետ մղելու պատրաստ: Եղբայրս հանգիստ լսեց, հետո առանց վիճելու դուրս եկավ գրասենյակից ու վերադարձավ Մարտունի:

Մայիսի 9-ի վաղ առավոտյան Կոմանդոսի զորքերը տարբեր ուղղություններով գրոհեցին Շուշին: Մոնթեն չէր մասնակցում գրոհին, բայց «Հայրենասիրական ջոկատի» իր որոշ ընկերներ մասնակցում էին: Մուլդոն սպանվեց գրոհի ժամանակ, Հովսեփը վիրավորվեց, իսկ Քաչալն այն մարտիկներից էր, որոնք ներխուժեցին Շուշի՝ քաղաքի մատույցների մոտ գտնվող մի կարկառի վրա բարձրանալով: Ժայռն այնքան զառիթափ էր, որ ադրբեջանցիներն, այն անմատչելի համարելով, չէին պաշտպանել: Շուշիի գրավումը մտնելու էր տեղական բանահյուսության մեջ որպես այդ ժամանակի ամենափառահեղ հաղթանակը, իսկ գեներալ «Կոմանդոս» Տեր-Թադևոսյանը հիշվելու էր որպես Արցախի ամենահանդուգն և փայլուն ռազմական ղեկավարներից մեկը:

Մինչ Շուշիում հաղթանակ էին տոնում, Մարտունիում այլ տրամադրություն էր տիրում: Եղավ այնպես, ինչպես կանխատեսել էր Կոմանդոսը. հենց որ Շուշիի գրոհի լուրը տարածվեց, ադրբեջանցի գեներալներն իրենց մարդկանց ու զրահամեքենաները նետեցին հայկական պաշտպանական դիրքերի դեմ՝ Մարտունու ողջ ճակատի երկայնքով: Հայ զինվորները պահում էին իրենց դիրքերը, իսկ հետո անցան հակահարձակման: Մայիսի 15-ին Մոնթեն մի քանի հարյուր մարտիկների ու 2-3 տանկ տարավ Մարտունուց հյուսիս գտնվող Գուլաբլիի հովտում տեղակայված ադրբեջանական հրետանու դեմ: Ադրբեջանցիների զորքերը հովտում թվով մի քանի անգամ գերազանցում էին Մոնթեի մարտիկներին. նրանք ուղղաթիռներից «փխրեցնում» էին հայերի խրամատները և հրանոթներից ու տանկերից կրակ տեղում ողջ ճակատով մեկ: Չնայած զինամթերքի պակասին, Մոնթեի մարտիկները գրավեցին մի տանկ, ոչնչացրին մի հրանոթ և վայր գցեցին ադրբեջանական մի Крокодил ուղղաթիռ, որը վիշապի նման ծխի պոչ քաշեց հետևից, անցավ սարից այն կողմ ու գահավիժեց խոտի մեջ: Երբ փոշին նստեց, պարզ դարձավ, որ Մոնթեն կորցրել էր կես տասնյակ զինվոր, իսկ թշնամու դիակները ծածկել էին հովիտը:

Չնայած թշնամու մեծ կորուստներին, Մոնթեն մայիսի 15-ի Գուլաբլիի հակահարձակումը ռազմական անհաջողություն համարեց: Նրա մարտիկները հակառակորդին հետ էին մղել, բայց չէին կարողացել գրավել Գուլաբլի գյուղը, և բոլորը գիտեին, որ ադրբեջանցի հրետանավորները վերախմբավորվելու էին, որպեսզի կրկին Մարտունու վրա հրթիռներ ու տանկային արկեր տեղային: Շատ տխուր լուր էր այն, որ հայկական կողմից սպանվածներից մեկն Աշանի Արմենն էր՝ մի հանդարտ, ամաչկոտ ու քաջ երիտասարդ, որին Մոնթեն նկարագրել էր Սեղային՝ որպես «իսկապես լավ տղա»:

Գուլաբլիի վրա դեռ կոտորակառումբեր էին ընկնում, երբ մյուս հրամանատարները Շուշիի հաղթանակից հետո հարձակում գործեցին քրդական Լաչին քաղաքի վրա, որ գտնվում է Արցախը մայր Հայաստանի հետ կապող ոլորապտույտ ճանապարհի երկու կողմում: Շուշիի անկումից հետո Լաչինի 5000 բնակիչները խուճապի էին մատնվել, շատերն իրենց տները թողել փախել էին, քանի դեռ հայերը չէին սկսել հարձակումը: Չորս օր տևած կռիվներից հետո գրոհողները մայիսի 18-ին գրավեցին ու հրկիզեցին Լաչինը:

Երբ Շուշիի և Լաչինի կորստյան լուրը հասավ Բաքու, հազարավոր՝ զայրույթից կարմրատակած ցուցարարներ հավաքվեցին քաղաքի հրապարակներում՝ անարգանքի սյունին գամելու Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովին, որին մեղադրում էին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները ձախողելու համար: Լուտանքների տարափի տակ Մութալիբովն իշխանությունը զիջեց մի ազգային խորհրդի, որ բաղկացած էր Ադրբեջանի ընդդիմադիր «ժողովրդական ճակատի» պատգամավորներից:

Նախքան Լաչինի դեպքերը եղբայրս ինքն իրեն համոզել էր, թե Ադրբեջանի քրդերը պաշտպանում են Լեռնային Ղարաբաղի հայերի պահանջատիրությունը: Նա զարմացավ ու նույնիսկ զայրացավ՝ իմանալով, որ Լաչինի քրդերը չէին ողջունել հայերի հարձակումը:

— Քրդերին Լաչինում մեր դեմ օգտագործեցին, — հետագայում դառնացած ասաց նա մի լրագրողի, — և դա դեմ էր իրենց իսկ շահերին:

Լաչինի գրոհի ժամանակ լրագրող Վիգեն Չթըրյանը վերադարձավ Մարտունի՝ Մոնթեի հետ մի նոր հարցազրույց վարելու: Որոշ հին ընկերներ Փարիզում ու Երևանում սկսել էին Մարտունու հրամանատարին տարփողել որպես «կենդանի լեգենդ», բայց թղթակիցն այլ վերաբերմունք ուներ: Ֆրանսերեն մի հարցազրույցում Չթըրյանը Մոնթեին հարցրեց, թե նա առհասարակ ինչ էր մտածում այն փաստի մասին, որ երկու «գեղջկական բանակ», ինչպես ինքը որակեց, բռնել էին իրար կոկորդից ու զբաղված էին էթնիկ զտումներով՝ «ատամն ընդ ատամն» սկզբունքով:

— Այդպիսի հարցի պատասխանելու ժամանակը չէ, — ասաց Մոնթեն. — այս պայքարը մեր ազգի համար է, և մենք բոլորս պիտի միավորվենք հանուն հաղթանակի:

Չթըրյանն ուզում էր այդ թեմայով խոսակցությունը շարունակել, բայց ընկրկեց: Երեկոյան ժամը 11-ն էր, և Մոնթեն հոգնած տեսք ուներ: Բացի այդ, Չթըրյանին թվաց, թե իր հարցը «Մոնթեին նեղեց»: Տարիներ անց նա անդրադարձավ իրենց զրույցին՝ նշելով, թե անշուշտ Մոնթեին էլ շատ հարցեր էին հուզում, «բայց նա ոչ դրանց պատասխանն ուներ, ոչ էլ ժամանակ»:

Մայիսի 28-ին Երևանում գեղեցիկ, նոր համազգեստներով զինվորները հանդիսավոր քայլքով անցան Հայաստանի քաղաքական ու ռազմական ղեկավարներով լեցուն ամբիոնի մոտով.

այնտեղ էին Խորհրդարանի նոր նախագահ Բաբկեն Արարքցյանը, ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը, երկարամորուս Խաչիկ Ստամբոլցյանը, պայծառաժպիտ Վազգեն Սարգսյանը և «Արաքոյի» Մանվելը: Հայաստանի Անկախության օրն էր, և հաղթանակներ կային տոնելու՝ Խոջալու, Շուշի, Լաչին:

Հրամանատար Ավոն, սակայն, ոչ մի տեղ չէր երևում: Զինվորական շքերթները ժամանակի ու վառելիքի կորուստ էին: Բացի այդ, ռազմաճակատը թողնելու ժամանակը չէր: Մոնթեն գիտեր, որ թշնամին կարող էր ամբիոնի առջևով անցնող յուրաքանչյուր տանկի ու ծանր հրանոթի հակադրել դրան հավասար կամ էլ գերազանցող զենքեր, ինչպես նաև՝ յուրաքանչյուր МИГ-33-ի և Крокодил ուղղաթիռի, որ ոռնում էին գլխավերևում: Շքերթում ցուցադրվող զենքերը նշանակում էին միայն սպանության նոր համայնապատկերներ: Մարտունու բարձունքներում քամհար խրամատից խոժոռ նայելով հեռադիտակի միջով՝ նա դիտում էր մոտալուտ փոթորիկը:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ. ՀԵՌԱՎՈՐ ԼԵՌՆԵՐ

Գլուխ 16. Կանոնավոր բանակ

1992 թ. գարնանը, երբ հալված ձյան առվակները բարակեցին, և ցեխոտ անվահետքերը չորացան ու ճանապարհ դարձան, Արցախի լեռներում պատերազմ էր: Մոնթեն դիտում էր հորիզոնը հյուսիսից հարավ: Նա գիտեր, որ ադրբեջանական տանկերի անձնակազմերն այնտեղ դիտակետեր էին գրավում, շարժիչներն աշխատացնում ու սպասում առաջ գնալու հրամանի: Թևքը ոլորելով՝ նա նայեց իր կնոջ տատիկից ժառանգություն ստացած հին ժամացույցին: Մոնթեն ժամանակային տարբեր հաշվարկներ էր անում՝ գյուղից գյուղ հասնելու, խրամատների երկայնքով զորքերը վերահսկելու, օգնական ուժերի ժամանման և հրետանափողերի բռնկման ու արկերի պայթյունի միջև դադարների: Ժամանակն ինքնին նույնպիսի թշնամի էր, ինչպիսին ադրբեջանական տանկերն էին, և Մոնթեն համոզված էր, որ հայկական կողմն այդ թշնամուն տանուլ էր տալիս:

10-15000 ադրբեջանցի մարտիկներ և օժանդակ ուժեր շրջապատել էին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանը հյուսիսից, արևելքից ու հարավից՝ Մարտունու 4000 հայ պաշտպանների դիմաց՝ ներառյալ պահեստայինները: Ադրբեջանցիները պաշտպաններից ավելի շատ զինամթերք ունեին, և, հավանաբար, բոլորն էլ ամուր զինվորական կոշիկներ էին կրում: Նրանք ունեին նաև մոտ 300 տանկ, 800 զրահամեքենա ու անձնակազմ տեղափոխող բեռնատարներ և 330 հրանոթ՝ հայկական կողմի շատ ավելի փոքրաթիվ միավորների դիմաց: Վերջապես ադրբեջանցիները վերահսկում էին երկինքը. նրանց օդուժի 45 միավորների թվում կային զրահապատ ուղղաթիռներ, СУ-24 ցածր թռչող ռմբակոծիչներ և МИГ-21 գետնահար կործանիչներ: Հակառակ դրան՝ Արցախը բոլորովին զուրկ էր օդուժից, և չնայած Հայաստանի Հանրապետությունը մի քանի ռազմական ինքնաթիռ ուներ, այդ թվում՝ մեկ-երկու СУ-24, մեծ մասը հին СУ-17-ներ էին, որ ժանգոտում էին պահեստամասերի և օդաչուների բացակայության պատճառով: Ամիսներ անց մի արտասահմանցի լրագրողի հետ հարցազրույցում Մոնթեն այսպես է նկարագրել իրավիճակը. «Մենք փոքրաթիվ էինք ու վատ զինված: Մեր թշնամին անհամեմատ շատ զինամթերք ուներ, ավելի որակյալ զենքեր, ամեն ինչ: Մաթեմատիկական առումով մենք վաղուց պիտի պարտված լինեինք»:

Եթե Արցախի լեռնցիները դեռ տանուլ չէին տվել պատերազմը, դա կապ չուներ ավելի լավ մարզվածության հետ: Հիրավի, Մոնթեն ապշել էր ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում ռազմական փորձառության պակասից: Իրեն պատահած մարտիկներից քչերն էին, այդ թվում՝ նաև ջոկատների հրամանատարներ ու «Պաշտպանության կոմիտեի» անդամներ, որ կարող էին ազնվորեն պնդել, թե նախկինում որևիցե մարտական փորձ ունեցել էին: Նույնիսկ Վազգեն Սարգսյանը, որ այժմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարն էր, պատերազմից առաջ լողի մարզիչ էր եղել: Իրավիճակն ավելի բարվոք չէր ռազմական հիերարխիայի ստորին ոլորտներում: Հաճախ հայ զինվորի առաջին կրակոցը մարտի դաշտում էր տեղի ունենում: Ավտոմեքենա վարել հազիվ իմացող երիտասարդները տանկեր էին տանում մարտի: Նրանք կամ պիտի տանկի հրամանատարի հմտություն ձեռք բերեին իրենց առաջին մարտերում, կամ մեռնեին տանկի մեջ:

Իրավիճակը նույնն էր ադրբեջանական կողմում՝ այն տարբերությամբ, որ նրանք ավելի շատ փող ունեին հարցը կարգավորելու համար: Կասպիական նավթային պայմանագրերից արագ շահույթ ակնկալելով՝ նրանք պատերազմի մեջ վարձկաններ էին ներգրավում՝ մեծ մասամբ 4-րդ բանակից մնացած ուկրաինացի և ռուս, բայց նաև՝ բրիտանացի ու ամերիկացի հրահանգիչների: Թուրքական բանակի նախկին սպաներ նույնպես օգնում էին մարզելու ադրբեջանցի մարտիկներին, իսկ ռազմաճակատներում կռվում էին տանկերի չեչեն հրամանատարներ ու թուրք կամավորներ՝ «Գորշ գայլեր» կոչվող ֆաշիստական կազմակերպությունից: Համաձայն լուրերի՝ ադրբեջանական կողմում կային նաև պակիստանցի ու աֆղան վարձկաններ՝ վերջիններից ոմանք ամերիկյան «Կենտրոնական հետախուզական վարչության» (CIA) մարզում ստացած:

Դիմագրավելով թշնամու անհամեմատ գերակշիռ թվաքանակին ու սպառազինությանը՝ Մոնթեն արագ հասկացավ իր կողմի միակ առավելությունը՝ կռվի դրդապատճառը: Ի տարբերություն թշնամու զինվորների մեծամասնության՝ հայերը կռվում էին իրենց օջախի ու այն հողի համար, որի մեջ հանգչում էր իրենց նախնիների աճյունը: Այդ տարբերությունն ակնհայտ դարձավ

մարտի դաշտում. ամեն անգամ Մոնթեն տեսնում էր, թե ինչպես են ադրբեջանցիներն ընկրկում կռվի թեժ պահին, իսկ իր մարտիկներից ոմանք պնդում էին, թե նկատել են՝ ինչպես են ադրբեջանցի սպաները մեջքից կրակում սեփական մարդկանց վրա, երբ նրանք չեն ուզում առաջ գնալ: Բայց անողոք կռիվները շարունակվում էին, իսկ հայերի ոգևորությունը նվազում էր, և Մոնթեն գիտեր, որ այդ վճռորոշ առավելությունն անհետանալու էր, եթե ջոկատներն անհապաղ չմիավորվեին կանոնավոր բանակի մեջ՝ կենտրոնացված հրամանատարությամբ: Դաշտային կոմունիկացիաները խիստ կարևոր էին լինելու՝ պաշտպանական ուժերը ժամանակակից դարձնելու և շտաբի հետ կապված ճակատագծի դիրքերի ու խրամատների կանոնավոր համակարգ ստեղծելու համար: Բայց ամենակարևորն այն էր, որ Մոնթեն կարողանար ամրապնդել առաջնորդի իր հեղինակությունը:

Այդ միջոցին Բաքվում ցուցարարները պաշտոնանկ արեցին երկամյա ժամանակավոր կառավարությանը և նախագահի պաշտոնին առաջադրեցին Ադրբեջանի «ժողովրդական ճակատի» առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյին: Նոր նախագահը տարածաշրջանում Անկարայի հիմնական հույսն էր և, որպես այդպիսին, ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի ու Իրանի թշնամին: Ըստ Էլչիբեյի մարգարեության՝ այժմ, երբ Խորհրդային Միությունն այլևս գոյություն չուներ, կործանման ենթակա մյուս կայսրությունն Իրանն էր: Եվ այդ կործանումն ի վերջո ճանապարհ էր հարթելու «Մեծ Ադրբեջանի» համար, որ միավորելու էր նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունը սահմանից այն կողմ գտնվող «Հարավային Ադրբեջանի»՝ ներկայիս հյուսիս-արևմտյան Իրանի 10 միլիոն էթնիկ ադրբեջանցիների հետ:

1992 թ. հունիսի 12-ին, երբ Էլչիբեյը դարձավ նախագահ, ադրբեջանցի սպաներն սկսեցին իրենց՝ մինչ այդ ամենամեծ հարձակումը: Ադրբեջանի ազգային բանակը, ՕՄՕՀ-ի մարտիկների և Գանձակում տեղակայված ռուսական 104-րդ դիմարտակի տանկային անձնակազմերի հետ համատեղ, առաջ նետվեց հյուսիսային և արևելյան ռազմաճակատների երկայնքով: Ադրբեջանի զորքերը գլխավորում էր փոքրամարմին, բայց գեղեցկադեմ ենրիտասարդ գնդապետ Սուրաթ Հուսեյնովը: Երևաններեքամյա գնդապետը հյուսիս-արևելյան Ադրբեջանի Եվլախ քաղաքում գտնվող իր բրդի գործարանի եկամուտներով մարզել ու հանդերձավորել էր այսպես կոչված «Գյանջայի բրիգադը»:

Հուսեյնովի զորքերը հետ գրավեցին Շահումյանի շրջանը՝ Մանաշիդ, Բուզլուխ և Էրքեջ գյուղերով, որոնք ազատագրելու համար նախորդ աշունն այնքան չարչարվել էին Մոնթեն ու իր ընկերները: Մի քանի օր տևած կռիվներից հետո Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի պաշտպանական գիծը նույնպես տեղի տվեց: Այս անգամ 30000 հայ փախստականներ, էշերով, խարխուլ ավտոբուսներով, տրակտորներով ու ինքնաթափ բեռնատարներով, կամ էլ պարզապես ոտքով, իրենց ունեցվածքը մեջքներին գցած, վերջին անգամ նայելով այրվող տներին, սկսեցին տանջալից մի երթ դեպի հարավ: Շուտով Հուսեյնովի զորքերը գրավել էին Արցախի համարյա կեսը, այդ թվում՝ Մարտակերտի շրջանի մեծ մասը:

— Հողն եք սիրո՞ւմ, — ծաղրում էին նրանք՝ հող խցկելով իրենց գերիների կոկորդը, — դե կերե՛ք:

Թվում էր, թե Հուսեյնովի ու Էլչիբեյի վերջնական հաղթությունը զուտ ժամանակի խնդիր էր այնտեղ, ուր Զինդիզ խանն ու Լենկ Թեմուրը ձախողվել էին. թվում էր, որ երկու հազարամյակի ընթացքում առաջին անգամ բոլոր հայերը պիտի վռնդվեին Լեռնային Ղարաբաղից:

Հրթիռներ ու տանկի արկեր էին տեղում Մարտունու վրա: «Գրադի» արկ դիպավ տներից մեկին՝ այրելով ողջ ընտանիքին: Մայրերն իրենց մազերն էին պոկում ու Մոնթեին աղերսում երեխաներին տանել ապահով տեղ՝ Ստեփանակերտ: Երբ նա գլուխը բացասաբար օրորում էր, մայրերն աչքերը հառում էին նրան՝ իբրև մի խելագարի: «Ձեր երեխաների համար ամենից կարևոր է իրենց երկիրը փրկելը», — պատասխանում էր Մոնթեն: Եթե ծնողները գնան Մարտունուց իրենց երեխաների հետ, ո՞վ պիտի ճանապարհները մաքրի, դաշտերը խնամի, հաց թխի զինվորների համար:

Հունիսի սկզբին Նելսոնն ավտոբուսներ պահանջեց՝ Բերդաշենից կանանց ու երեխաներին դուրս բերելու համար: Երբ Մոնթեն լսեց այդ մասին, կանգնեցրեց ենթահրամանատարի ծառայողական մեքենան և հանգիստ, բայց վճռական ձայնով բացատրեց, որ եթե խաղաղ բնակչությանը թույլ տրվի հեռանալ Մարտունուց, ապա նրանց հայրերը, եղբայրներն ու որդիները չուտով կգնան նրանց հետևից: Իսկ առանց թիկունքում խաղաղ բնակչություն ունենալու՝ խրամատներում մնացած պաշտպանները կսկսեն տանուլ տալ:

Երբ Մոնթեն ճանապարհներին արգելքներ դրեց՝ Մարտունուց հեռացող փախստականներին կանգնեցնելու համար, նա «խաղադրույքը բարձրացրեց» մինչև վերջ: Թշնամու շարասյուներն արդեն հյուսիսում էին՝ Մարտակերտում, և իրենց առջևից քշում էին շվարած ու փոշեթաթախ փախստականներին՝ ինչպես կրակգծից փախչող նապաստակների: Եթե Մոնթեն թույլ տար թշնամուն Մարտունիում անցնել իր խրամատների վրայով, ապա քարերի տակ թաղված ամեն մի մոր ու երեխայի համար իրեն էին հաշիվ ներկայացնելու, և նա դառնալու էր իր արգելափակած բնակչության սպանդի պատճառը:

Թշնամուն պետք էր կանգնեցնել: Բայց դրա համար անհրաժեշտ էր աղբբեջանցիների ունեցածին համազոր զրահատեխնիկա: Կռիվներից առաջ Մոնթեն հրահանգում էր իր զինվորներին՝ խփել թշնամու տանկերն առանց դրանք «հալեցնելու»: Նա չէր ուզում, որ հակառակորդի տանկերն անվերականգնելի կերպով այրվեն, և իր մարդիկ չկարողանան դրանք քաշել-տանել իրենց թրթռուրներով, վերանորոգել Մարտունու՝ գյուղատնտեսական մեքենաների վերասարքավորված գործարանի բակում և հետո ուղղել իրենց նախկին տերերի դեմ: Ավելի ծանր վնասված տանկերը պետք է հասնեին Ստեփանակերտի երկաթուղային կայարանի նորոգման կայանը, իսկ օպտիկական սարքերը և գիշերային տեսողության գործիքները վերանորոգման էին տարվում Ստեփանակերտի կոնդենսատորների գործարան:

Բայց բռնագրավված տանկերն անօգուտ էին առանց վառելիքի: Մոնթեն ասում էր, որ դիզելը ոսկուց թանկ արժեր: Իրականում դիզելն ավելի թանկ էր, քան տանկերը, քանի որ շատ տանկեր անգործության էին մատնված վառելանյութի բացակայության պատճառով: Մոնթեն պիտի պահեստավորեր շրջանի ողջ դիզելը և այն բաց թողներ լիտր առ լիտր:

Փարիզից մի օպերատոր տեսաժապավենի վրա բնորոշ դեպք է արձանագրել. Մոնթեն մոտենում է մի միջին տարիքի մարդու, որին կասկածում է վառելիքի ոչ բարեխիղճ բաշխման մեջ: Մարդը վախեցած կենդանու նման հայացքն այս ու այն կողմ է թեքում, մինչ հրամանատարը նայում է դիզելի սպառման ցուցակը: Մոնթեն մտքում թվեր է գումարում՝ աչքերը սահեցնելով սյունակի երկայնքով, մինչև թերթի ստորոտը: Ընդհանուրը 1440 լիտր է:

— Որտե՞ղ է մնացած 260 լիտրը, — հարցնում է Մոնթեն:

Մեղադրյալը մի համարյա անլսելի մրթմրթոց է արտաբերում:

— Ի՞նչ է նշանակում՝ չունենք, — որոտում է Մոնթեն:

Էլի մրթմրթոց:

— Դու իրավունք չունե՞ս այն դուրս տալու...

Մեղադրյալ գողը հանկարծ հիշում է 120 լիտրի տեղը, իսկ Մոնթեն սպանիչ կերպով մռնչում է.

— Գտի՛ր 140 լիտր դիզելը: Եթե չգտնես, ուրեմն գողացել ես:

Մարդը տկարաբար բարձրացնում է ձեռքը, բայց Մոնթեն չուռ է գալիս: Տեսախցիկի հետևից նկարահանողը Ֆրանսերեն հարցնում է Մոնթեին.

— Խնդիր կա՞:

Մեջքը դեպի մեղադրվող գողը դարձրած՝ Մոնթեն փոխում է դեմքի մռայլ արտահայտությունն ու մեղմ ժպտում: Նա Ֆրանսերեն անձայն ասում է.

— Ամեն օր (Touts les jours):

Մոնթեի ժլատությունը վառելիքի հարցում և փախստականների առջև ճանապարհները փակելը նվազեցնում էին նրա ժողովրդականությունը: Մի առավոտ, կեսօրից մոտ մի ժամ առաջ, երբ թշնամու հրետանու ու զրահամեքենաների մի փաղանգ խորամանկ զորաշարժ անելով թափանցեց Մարտունու մոտ տեղակայված հրետանային դիրքերը, վառելիքի պահեստի մի բանվոր վախվխելով մոտեցավ հրամանատարին ու ցածրաձայն ինչ-որ բան փնթփնթաց: Մեծ գլանաձև պահեստային կոնտեյները, որի մեջ մի քանի ժամ առաջ 16 տոննա թանկարժեք դիզել էր եղել, այժմ դատարկ էր: Գողերը ցիստեռն էին մոտեցրել ծորակին, լցրել այն ու հեռացել՝ թողնելով, որ մնացած դիզելը բաց ծորակից թափվի գետնին:

Ահա այսպես. համառության մրցություն: Լեռնցիները համառ էին ինքնաոչնչացման աստիճանի, բայց Մոնթեն նրանցից էլ համառ էր, և նա այդ ապացուցեց:

Նա վերցրեց շակում ընկած մի դատարկ աման, պպզեց լճակ դարձած դիզելի կողքին և սկսեց սաթագույն հիղուկն այդ ամանով, ամեն անգամ ճզմփացնելով, լցնել մի ավելի մեծ տարայի մեջ: Պահեստի մի աշխատող էլ սկսեց նույն ձևով հավաքել հեղուկը, և նրանց միացան 2-3 զինվոր: Երբ հավաքված դիզելի մեջ ավազը նստել էր, նրանք մեծ ամանից հետ լցրին մի քանի լիտր փրկված վառելիքը դատարկ կոնտեյների մեջ:

Մոնթեն դժվարությամբ գնում էր Ստեփանակերտ ու վերադառնում՝ աշխատելով լցնել չողացած դիզելի կոնտեյները, իսկ

Թշնամու դիրքերից արձակված «Գրադները» ոռնում էին գլխավերևում: Ընդհատումներով 10 ամիս տևած ռմբակոծությունից հետո Մարտունի քաղաքի տների կեսն ավերվել էր կամ կրակի ճարակ դարձել: Այժմ Թշնամին հրետակոծում էր Մարտունին՝ պատրաստվելով վճռական գրոհի: Հակառակ Մոնթեի հրամանի՝ տեղացիներն սկսեցին կամաց-կամաց հեռանալ՝ հանելով ճանապարհային արգելքները, որպեսզի միանան Ստեփանակերտում գտնվող տասնյակ-հազարավոր փախստականներին: Որոշ պահեստայիններ էլ հետևում էին իրենց ընտանիքներին, իսկ պաշտպանները բարոյալքվում էին:

Հունիսի 20-ին կամ 21-ին շտաբի դիմացի բակը մտավ մի կապույտ մեքենա, որից դուրս եկավ խորհրդային գնդապետի համազգեստով մի մարդ: Նա գլխին զինվորական գլխարկ դրեց ու հովարն ուղղեց: Այցելուն ակնհայտորեն «Կարմիր բանակի» արհեստավարժ սպա էր: Նա նույնիսկ արտաքինով ռուսի նման էր՝ շիկահեր, մաքուր սափրած կզակով, նոր համազգեստով ու փողկապով: Նաև երևում էր, որ եկվորն առնվազն մի տասը տարով մեծ էր իրեն ողջունող անխնամ, չսափրված հրամանատարից: Գնդապետը եռանդուն շարժումով ողջունեց Մոնթեին: Ողջույնին պատասխանելու փոխարեն, հրամանատարը ձեռքը մեկնեց և հարցրեց տարօրինակ բարբառով.

— Ի՞նչ է քո կարճ անունը:

Գնդապետը կտրուկ պատասխանեց, որ ինքը «կարճ անուն» չունի, այլ իրեն պետք է դիմել «գնդապետ Հարոյան»: Իսկ Մոնթեին, քանի որ այլ տարբերակ չկար, գնդապետը դիմեց նրա «կարճ անունով»՝ Ավո:

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունը հանձնարարել էր գնդապետ Հմայակ Հարոյանին և չորս ուրիշ սպաների՝ Լեռնային Ղարաբաղում սպայական կազմ ստեղծել: Մինչ այժմ Մոնթեն սովոր էր Երևանից ժամանող խորհրդականների, որոնք ժամանակն անցկացնում էին շտաբում ու հեռանում, հենց որ լրանում էր իրենց մեկամսյա առաքելությունը:

— Նրանք նույնիսկ երեսունմեկերորդ օրը չեն մնում, — մի անգամ բողոքեց նա Սեդային:

Գնդապետը նման չէր նրանց: Նա գնաց իր գործերով, իսկ Մոնթեն հետախուզական տեղեկություններ էր հավաքում Թշնամու ուժերի դիրքերի վերաբերյալ: Մոտավորապես հունիսի 23-ին

Մոնթեի հետախույզներն արևածագին դեպի հայկական դիրքերը հետ սողալիս դիպան ականի: Հետախույզներից մեկը կտոր-կտոր եղավ, մյուսը՝ Միրզա Վալոն, վիրավորված կրծքով, կոկորդով ու գլխով, քարշ գալով տեղ հասավ: Երբ ընկերները նրան կիսաուշաթափ վիճակում հիվանդանոց էին տանում, նա շարունակ հարցնում էր՝ արդյո՞ք իր ընկեր Արամը խոսել է հրամանատար Ավոյի հետ: Խնայելով Միրզա Վալոյին՝ ընկերները չասացին նրան, որ ականի պայթյունը սպանել էր Արամին:

— Այո՛, — ասացին նրանք իրենց ընկերոջը, — նա խոսել է Ավոյի հետ:

Միրզա Վալոն չհամոզվեց: Հասնելով հիվանդանոց՝ նա մի ուրիշին էլ հարցրեց, որը խոստովանեց, թե Արամը չէր վերադարձել ականապատ դաշտից, որպեսզի հրամանատարին ինչ-որ բան ասեր:

— Ավոյին բերե՛ք, — խեղդվելով ասաց Միրզա Վալոն:

Նրանք կանչեցին Մոնթեին, և Միրզա Վալոն ատամները սեղմած մի քանի բառ ասաց նրա ականջին: Մոնթեն նետվեց Լեռնային Ղարաբաղի վարչապետի գրասենյակ, Երևանի հետ ուղիղ կապ ապահովող հատ ու կենտ հեռախոսներից մեկի վրա հավաքեց Սեդայի համարն ու ներողություն խնդրեց: Նա չէր կարող Երևան գալ Սեդայի ծննդյան օրը: Միայն հետագայում Մոնթեն նրան պատմեց մանրամասները: Արամն ու Միրզա Վալոն հետախուզական առաքելությամբ դուրս էին եկել լուսաբացից առաջ, մթնշաղի մեջ: Նրանք սողալով կտրել-անցել էին ականապատ դաշտը՝ Թշնամու ճակատագծերը շրջանցելու համար, և կուչ եկել ադրբեջանցիների հրամանատարական կենտրոնի պատուհանի տակ: Այնտեղ նրանք լսել էին, որ Թշնամու սպաներն առաջիկա մի քանի օրվա ընթացքում զանգվածային հարձակում էին ծրագրում Մարտունու վրա:

Մոնթեն շտապ վերադարձավ Մարտունի, իր զինվորներին մարտական պատրաստության բերեց և կանչեց պահեստայիններին: Նա հրամայեց դաշտային ամրությունները զորացնել, ավելի շատ խրամատներ փորել, խորացնել դրանք և հակատանկային հրթիռներ բերել: Դրանց փոքաքարկումն սկսվեց 1992 թ. հունիսի 27-ին: 20 տանկ ու ցրահամեքենա առաջացան Մաճկալաշենի ճակատի ողջ երկայնքով՝ Ալիբալիից մինչև Կրասնի Բազար. դրանց հետևում էին Թշնամու հարյուրավոր զինվորներ: Մոնթեի մարտիկները դիմադրեցին ու մնացին խրամատներում՝ տատա-

կափշերի ու վայրի ծներեկի մեջ: Չնայած փորձառության ու սպառազինության պակասին, նրանք գրոհողներին հետ մղեցին դեպի կաղնու անտառները: Գնդապետ Հարոյանը թեթևացած շունչ քաշեց:

Հաջորդ օրը, հունիսի 28-ին, գրոհին միացան Ճարտարի մոտ գտնվող ադրբեջանական ուժերը, և այնտեղ էլ Մոնթեի մարտիկների նոսր շարքերը դիմացան իրենց խրամատներում: Դիրքերից մեկում՝ խաղողի այգում, տասնյակ պաշտպանների դիմաց թշնամու 6 տանկ կար և բազմամարդ հետևակ: Պաշտպաններից մեկը՝ Մուշեղ անունով 12 տարեկան մի տղա Ճարտար գյուղից, ավելի կարճահասակ էր, քան իր բանեցրած հակատանկային «Ֆագոտը»: Մի թառմայից մյուսը սողալով՝ Մուշեղը 60 հրթիռ արձակեց՝ առանց որևէ մեկի օգնության կանգնեցնելով երկու տանկ: Մի պահ նա 10 մետրից պակաս հեռավորությունից, հիշելով Մոնթեի խորհուրդը, նշան բռնեց մի ԲՄՊ զրահամեքենայի հետնամասում գտնվող վառելիքի բաքին ու քաշեց ձգանը: ԲՄՊ-ն բոցավառվեց, իսկ Մուշեղի ընկերները հնձեցին դունակից դուրս նետվող անձնակազմին: 5 ժամ կռվելով առանց օգնական ուժերի՝ Մարտունու զինվորներն ի վերջո հետ գրավեցին այդ օրն ավելի վաղ թշնամու զավթած դիրքերը:

Նույնիսկ ինքնաձիգների ճարճատյունի և արկերի պայթյունների հորձանուտում Մարտունիում գողեր էին գործում: 1992 թ. հուլիսի 3-ի կեսօրից հետո զինվորները մի դիզել գողացողի բռնեցին Մոնթեի գրասենյակ և հրելով նստեցրին նրան աթոռին: Մոնթեն կռացավ գողի երեսին ու մռնչաց փոփրած հրեշի պես. մեզ հույժ գերազանցող թշնամու տանկերը 1-2 կիլոմետրի վրա պարապ սպասում են: Դրանք բերներերան լցված են դիզելով ու պատրաստ՝ գողին, նրա հարևաններին, ընկերներին ու ընտանիքն առհավետ իրենց երկրից սրբել-տանելու: Իսկ այդ գող սրիկան թացրել է այն դիզելը, որն անհրաժեշտ է իրենց պաշտպանվելու համար: Մոնթեն նրան հարվածեց իր ձախ ձեռքի հետևի մասով, և նրա ամուսնական մատանին խոր վերք թողեց զինվորի դեմքին:

Հաջորդ շաբաթվա ամեն օրը թշնամին ողջ ճակատի երկայնքով իրար հետևից հարձակումներ էր գործում՝ հարվածելով հայերի խրամատներին ու պաշտպանական պատնեշներին: Հուլիսն անցավ արյան հեղեղի ու կոտորակառումբերի փոթորիկի մեջ: Լրացավ գնդապետ Հարոյանի երեսունօրյա նշանակումը, սակայն նա մնաց Մարտունիում: Մոնթեն դա նկատեց ու նաև գիտեր, որ, ի տարբերություն Մարտունիով անցած այլ սպաների, Հարոյանն ավելի շատ ժամանակ էր ծախսել խրամատներում, քան իր գրասենյակում:

— Մի լիտր դիզելով մաքրեցե՛ք այս հրանոթը, — ասում էր նա հրետանավորներին՝ նախքան նրանց ողջունելն ու դեպի մյուս դիրքերը գնալը:

Իր հերթին գնդապետ Հարոյանը նկատել էր, որ Մարտունու հրամանատարի ուսերին էր այնտեղի ողջ պաշտպանության կազմակերպումը բոլոր տեսանկյուններից: Մոնթեն նույնիսկ անձամբ էր ճակատագծի մարտիկներին ամեն եղանակի պիտանի լուցկու տուփեր տալիս: Հարոյանը նաև տեսել էր, որ հրամանատարը խիստ օրինապահ է, ինչն իրեն դուր էր եկել: Երբ Ստեփանակերտի կոմիտեները կամ նախարարությունները մեկը մյուսի հետևից նրանց թղթերի կույտեր էին ուղարկում՝ երեք օրինակից լրացնելու համար, Մոնթեն համաձայնում էր գնդապետ Հարոյանի հետ, որ դա անկարևոր ու անիմաստ վարժանք է, բայց և հոգոց հանելով ասում.

— Մեծամեծներն են սա ուղարկել, ուրեմն՝ պիտի լրացնենք:

Հարոյանի աչքից չէր վրիպել, որ, ի տարբերություն մյուս հրամանատարների, Մոնթեն ժամանակ էր ծախսում՝ իր մարտիկներին բացատրելու համար, թե ինչ դեր էին խաղում իրենք Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ռազմավարության ու իրենց ազգի պատմության զարգացման ավելի լայն համատեքստում:

— Եթե կորցնենք այս հողը, — ասում էր Մոնթեն նրանց, — մենք կչրջենք Հայաստանի պատմության վերջին էջը:

Մարտունու հրամանատարը շարունակում էր ամեն օր մարտիկներին կռվի առաջնորդել, և գնդապետ Հարոյանը միանում էր նրանց խրամատներում: Ճակատամարտեր եղան Ղաջարի մոտ՝ հարավային ճակատում (օգոստոսի 9), Վեսալուի մոտ՝ արևելյան ճակատում (օգոստոսի 15-ից), Գուլաբլիի, Ավդալի, Ավդուրի, Դավաբելիի, Նորշենի և Մյուրիշենի մոտ՝ հյուսիսային ճակատում (օգոստոսի կեսեր): Որոշ ճակատամարտեր օրեր էին ձգվում՝ հարյուրավոր մարտիկների ու տասնյակ տանկեր իրար դեմ հանելով և դաշտերով, անտառներով ու բլուրներով մեկ բազում դիակներ շաղ տալով: Մեծ ճակատամարտերն ընդմիջող օրերին հակահարձակումներ, հետախուզական օպերացիաներ ու փոխհրաձգութ-

յուններ էին լինում: Միսի միջով Մոնթեն և Հարոյանն ուշադիր զննում էին թշնամուն՝ հետևելով նրա մարտավարությանը, զորաշարժերին, զորքերի ու տանկերի դիրքավորմանը, օգնության եկող օդուժին, զինվորների բարոյական վիճակին ու մարտական ոգուն:

Մի անգամ, երբ թշնամու մարտիկները գրավեցին Մարտունու հյուսիսում ամենաբարձր բլրի վրա գտնվող՝ «Մովեր» կոչվող խրամատների մի կարևոր համակարգ, գնդապետ Հարոյանը հեռադիտակով տեսավ, որ նրանք սկսել են տոնել իրենց հաջողությունը՝ երգելով ու պարելով: Մարտունու զինվորները փչացրին նրանց տոնն ականանետային կրակով, իսկ հետո հաջող հակահարձակում ձեռնարկեցին:

Կռվի թեժ պահին Հարոյանն ու Մոնթեն թանկագին ժամանակ էին խնայում՝ հրաժարվելով բացատրություններից: Նրանք մի ճակատից մյուսն էին նետվում, մի քանի բառ էին փոխանակում խրամատներում և հետո շարժվում տարբեր ուղղություններով: Քիչ անց նրանք հակառակ ուղղությամբ էին գնում՝ միմյանց ընդառաջ, համաժամանակյա ընթացքով. ինչպես թանկարժեք մեխանիզմի ատամները: Թվում էր՝ յուրաքանչյուրը բնազդաբար գիտի, թե ամեն վայրկյան որտեղ է գտնվում մյուսը և ինչով է զբաղված:

Նրանք նաև վտանգը գնահատելու ժամանակ չունեին: Վեսալուի երրորդ ճակատամարտում, օգոստոսի 15-ին, Արցախի 150 մարտիկներ հետ մղեցին թշնամու՝ երեք ուղղություններով գրոհող 4 տանկի և 420 մարտիկի հարձակումը: Երկու օր անց Մոնթեն գլխավորեց հետախուզական օպերացիա՝ հենց Վեսալու գյուղի վերևում՝ թշնամու դիրքերին շատ մոտ գտնվող մի բլրից: Հեռադիտակը ձեռքին, նա սողալով իջավ անդունդը: Հանկարծ նա գլուխը հետ դարձրեց և ուսի վրայով շշնջաց իր հետևում գտնվող երեք մարտիկներին.

— Տղե՛րք, նրանք տեսել են մեզ:

Նոր էր նա ասել այդ խոսքերը, երբ դիպուկահարի գնդակը քերծեց նրա գանգամաշկը, անցավ իր կողքի մարտիկի ազդրի միջով և մահացու վերք հասցրեց հետևում գտնվողին՝ խոցելով նրա լյարդը: Այդ մարտիկը՝ ճարտարցի Սերգո Հայրապետյանը, նույն օրը մահացավ:

Տուժածներին տեղափոխելուց հետո Մոնթեն վերադարձավ շտաբ ու փսխեց: Գնդակը նրա գանգամաշկին կոկիկ վերք էր թողել, որ նման էր դանակի կտրածի: Հարոյանի պնդմամբ, Մոնթեն երկու ժամ ննջեց հիվանդանոցում, մինչև իր քարտեզներին ու հեռադիտակներին վերադառնալը:

Ջնայած ադրբեջանցի մարտիկները ծանր կորուստներ էին կրել Մարտունու ճակատում, նրանց ընկերները դեռ արագ առաջանում էին հյուսիսում՝ Մարտակերտի շրջանում: Մարտակերտից եկող լուրերը պետք է որ ոգևորած լինեին Մարտունին պաշարող ադրբեջանցի սպաներին: Կռիվներն անդադար շարունակվեցին սեպտեմբերին. թշնամին հրետանիով ու մարտական ինքնաթիռներով անվերջ հարվածում էր լեռներին: Սկսում էր թվալ, որ ադրբեջանցիները, եթե չկարողանային ճեղքել պաշտպանությունը, իրենց հակառակորդներին ի վերջո թաղելու էին արկաբեկորների տակ:

Թշնամու ամենակատաղի հարձակումների օրերին Մոնթեն սկսեց ուշադրություն դրավել մի նոր՝ «հաղթանակ» բառով:

— Խաղաղություն պիտի ըլլա միայն մեր հաղթանակով, — ասել էր նա մի տեսագրված հարցազրույցում:

Հարոյանն էլ ներգրավվեց հաղթանակի մասին խոսակցությունների մեջ՝ կրկնելով այդ բառն իր՝ փոքր-ինչ հոգնած ձայնով, բայց Մոնթեն փորձության ենթարկեց գնդապետի հավատը՝ նրան ցույց տալով պատի չափ մի ուրվագծային քարտեզ, որի վրա գծագրված էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «վերանայված սահմանների» իր պատկերացումը: Մոնթեի կարմիր գրիչը պարագծել էր Լեռնային Ղարաբաղը հարավում իրանական սահմանից անջատող ողջ տարածքը, իսկ արևմուտքում այն ներառել էր ամբողջ Քելբաջարը՝ Ղարաբաղը Հայաստանից բաժանող ժայռոտ լեռնազանգվածը: «Վերանայված սահմանները» եռապատկելու էին Արցախի տարածքը: Այդ բոլոր հողերն, ըստ Մոնթեի, հայերի հայրենիքի մաս լինելով, բռնի դատարկվել էին իրենց իսկական բնակիչներից:

Աչքերը քարտեզին հառած՝ գնդապետ Հարոյանը կասկածեց, թե Մոնթեն խելքը թռցրել է: Բայց տարակուսանքի մեջ ընկնելու ժամանակ չկար: Սպասելով սեպտեմբերի 4-ի հակահարձակումներին՝ Հարոյանը մնաց Գուլաբլիում, իսկ Մոնթեն նետվեց իր հրամանատարության տակ վերցնելու մոտ 22 կիլոմետր դեպի հարավ գտնվող Մաճկալաշենի ճակատի մարտիկներին: Այնտեղ 500 զինվորներից և 30 տանկերից ու զրահամեքենաներից բաղկացած ադրբեջանական մի շարասյուն գալիս էր ուղիղ Մոնթեի հրետա-

նու վրա: Հարձակվողները կորցրին 7 տանկ, 3 զրահամեքենա և այնքան զինվոր, որ ոչ ոք հաշվելու ժամանակ չունեցավ: Բայց Մոնթեի ջոկատն էլ թանկ գին էր վճարել. ընդամենը մոտ 200 բնակիչ ունեցող փոքրիկ լեռնային Մաճկալաշեն գյուղն այդ օրը կորցրեց իր լավագույն որդիներից տասին:

Մյուս օրը Մոնթեն վերադարձավ Գուլաբլիի ռազմաճակատը Հյուսիսում, որտեղ թշնամին նախ ռմբակոծեց հայերի դիրքերը 100 և 120 միլիմետրանոց հրանոթներով, իսկ հետո կռվի մեջ նետեց 16 տանկ, 6 ուղղաթիռ և հարյուրավոր հետևակայինների: Մոնթեն ու Հարոյանը հանգիստ ղեկավարում էին պաշտպանությունը: Նահանջելով՝ թշնամին թողեց տանկեր, զինամթերք ու դիակների կույտեր, որոնցից շատերն այն աստիճանի կտոր-կտոր էին եղած տանկերի արկերից, որ հնարավոր չէր մարմինների ճշգրիտ հաշվարկ անել: Հաջորդ օրը հրամանատարն ու գնդապետը նորից բաժանվեցին, որպեսզի պաշտպաններին միավորեն՝ դիմագրավելու համար մի ավելի մեծ հարձակման հարավում՝ Ճարտար-Մաճկալաշենի ճակատում, և որպեսզի պաշտպանական դիրքերն ամրացնեն Հյուսիսում՝ Գուլաբլիի վրա մեկ օր տևած հրետանակոծության պայմաններում: Հերթական օրն ավարտվեց, և գրոհողները չկարողացան պաշտպանությունը ճեղքել՝ մեկ անգամ ևս մեծ կորուստներ տալով:

Հաջորդ երկու օրը՝ սեպտեմբերի 7-ին և 8-ին, ադրբեջանցիները հակահարձակումներ ձեռնարկեցին Հյուսիսում՝ Գուլաբլիի նեղ, թփուտներով ծածկված հովտում, միաժամանակ արևելքում՝ Աղդամի ճակատում, և կրկին Մաճկալաշենում՝ հարավում: Սովորականի պես Մոնթեն կռվում էր առջևի գծում: Մարտիկներին կլսակի ու երկաթի պատահողմի մեջ նետվել ստիպելու նրա կարողությունը կախված էր իր իսկ քաջությունից և ուժեղ անհատականությունից: Մի մարտունեցի դպրոցական տղա դա այսպես է նկարագրել.

— Ավոն երբեք չի ասում՝ «Հառա՛ջ», նա ասում է՝ «իմ հետևի՛ց»:

Սեպտեմբերի կեսերին ադրբեջանցիները վերախմբավորել էին իրենց ուժերն Աղդամի դաշտում և սկսել Մարտունու դեմ է՛լ ավելի շատ հետևակ ու հրետանի ուղարկել: Սեպտեմբերի 18-ին Մոնթեի շտաբում խոհարարները մի պահ իրենց գործը դադարեցրին՝ խոհանոցի պատուհանից դուրս նայելու համար. մի քանի հարյուր մետր դեպի արևմուտք, Ղուրուչուղ լեռնագագաթին, մագլցել էր ադրբեջանական մի տանկ: Մինչ խոհարարները բերանները բաց նայում էին, կրակի տակ տանկը կանգ առավ, և Մարտունու զինվորները հարձակվեցին տանկին հետևող ադրբեջանցիների վրա: Հերթական անգամ նահանջող թշնամիների ոտքերը դիպան իրենց մեռած ընկերների մարմինների կույտերին: Հաջորդ օրը 600 ադրբեջանցի մարտիկ ու 20 տանկ շրջապատեցին և գրոհեցին Մարտունու 120 պաշտպաններին մոտակա Դվլուխութ բլրի գագաթին: Մեկ օր տևած կատաղի մարտից հետո Մոնթեի զինվորները հետ մղեցին թշնամուն և խփեցին ևս 3 տանկ ու 6 զրահամեքենա: Մոնթեն զննեց տանկերը հեռադիտակով.

— Այդ տանկերը մե՛րն են, — ուրախացավ նա:

Ադրբեջանական ՍՍ և ՄԻԳ ինքնաթիռները նորից գործի անցան խաղաղ բնակչության դեմ Մարտունիով մեկ, և ադրբեջանցի հրետանավորները մոտակա Ամիրանլար, Մուղանլու ու Կուրոպատկինո գյուղերից «Գրադներ», հրետանային ու տանկային արկեր էին տեղում Մարտունու իրենց հարևանների վրա: Սեպտեմբերի 20-ին մի քանի հարյուր ադրբեջանցի հետևակայիններ մեկ այլ հարձակում ձեռնարկեցին հարավային ռազմաճակատում՝ կոտրատված թթի ծառերի անտառակներում, չորրորդ դարի՝ ավերված Ամարասի վանքի մոտ: Մոնթեն ու Հարոյանը Մաճկալաշենի մարտիկներին տարան նրանց դեմ: Մի վկա՝ տեղացի գրող Սեյրան Քամալյանը, հաղորդել է, որ տանկերի հրամանատարներն ու հետևակը «մեծ սխրանքներ էին գործում», և՝ որ պապիկներն ու տատիկները կռվողներին կամովին զենք ու զինամթերք էին մատակարարում: «Կանայք Աստծուն խնդրում էին փրկել իրենց որդիներին... Ո՛չ, թող Աստված ների մեզ. նրանք մտածում էին Ավոյի մասին, նրանք հարցնում էին Ավոյի մասին: Ասում են՝ Ավոն կռվի դաշտում է, տղաների հետ: Ավոն չի թողնի, որ թշնամին ոտք դնի մեր հողին»:

Նրանց հավատն իզուր չէր: Նահանջող ադրբեջանցիները հետևում 9 տանկ թողեցին, 3 զրահամեքենա և դիակների կույտեր:

Բայց փոշին դեռ չէր նստել հարավային ճակատում, երբ Հյուսիսում թշնամու հարյուրավոր հետևակայիններ և 8 տանկ դարձյալ սկսեցին առաջանալ դեպի Գուլաբլիի հովիտ: Աղդամի դաշտի մի բացվածքից հովիտը խոր մխրճվում էր Լեռնային Ղարաբաղի տարածք՝ 7 կիլոմետր չհասնելով Ստեփանակերտին: Ադր-

բեջանցի հրամանատարների համար, որոնք դեռ քաջալերված էին իրենց ամառային հաջողություններից, քարտեզի վրա հովիտը նման էր Արցախի սրտին ուղղված մի դաշույնի: Եթե նրանց հաջողվեր մտնել Գուլաբլի և հրետանին տեղակայել արևմտյան բարձունքներում, նրանք կկարողանային երկու ճանապարհ կտրել Ստեփանակերտից՝ արևելքում ու հարավում, և սեպ խրել Արցախի կենտրոնական հատվածի մեջ՝ հայտնվելով Ստեփանակերտից հրետանու և «Գրադի» անվրեպ հասանելիության սահմաններում:

Բայց Մոնթեի համար Գուլաբլիի հովիտը նման էր թակարդի և սպասում էր, որ իրեն լարեն: Մի բարձր տեղում դետնին սեղմված՝ նա հեռադիտակով դիտում էր ադրբեջանական տանկերը, որ գլորվելով մտնում էին հովիտ: Որքան խորն էին թափանցում թշնամիները և որքան շատ հեռավորություն էին թողնում իրենց ու Աղդամի դաշտի մեջ բացվող հովտի նեղ բերանի միջև, այնքան ավելի լրիվ շրջափակման մեջ էին ընկնում: Երբ Մոնթեն կրակ բացելու հրաման տվեց, նրա հրետանավորներն անմիջապես երկու տանկ խփեցին ու կանգնեցրին ադրբեջանցիների առաջխաղացումը: Ճակատամարտը շարունակվեց ևս 8 ժամ: Ամբողջ գիշեր ադրբեջանական հրետանին ու տանկերն անընդհատ կրակ էին թափում բարձունքներում տեղակայված հայկական դիրքերի վրա, իսկ լուսաբացին նրանք նորից գրոհեցին: Մարտունու տանկերը վերևից սկսեցին թշնամուց ավելի շատ երկաթ տեղալ հովտի վրա: Երբ նրանք երկու տանկ էլ խփեցին, թշնամու հետևակն սկսեց հետ դնալ, բայց նեղ հովտում տեղ չկար կազմակերպված նահանջի համար: Հայերի տանկերի 125 միլիմետրանոց հրանոթները հնձում էին թշնամու մեծաթիվ մարտիկների, ինչպես խուզում են ոչխարի բուրդը:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 23-ին, թշնամու 300 զինվոր, 5 տանկ և 2 զրահամեքենա մառախուղի մեջ կուտակվեցին իրար գլխի՝ մեկ այլ հարձակման համար, այս անգամ՝ հովտի հյուսիսում գտնվող դիրքերի դեմ: Երբ թշնամին հասավ պաշտպանների խրամատներից 200 մետր հեռավորության վրա, 2 տանկ պայթեցին ականներից, իսկ 17 տարեկան Ֆելիքս Առուստամյանը «ֆագոտով» մի ուրիշ տանկ խփեց: Կապարի ու արկաբեկորների տարափը դետին տապալեց ադրբեջանցիների առջևի դիծը, իսկ ողջ մնացածները խուճապահար փախուստի մատնվեցին:

Մյուս առավոտ ադրբեջանական հետևակը նորից առաջացավ դեպի Գուլաբլի՝ անընկատ սողալով խաղողի այգիների միջով: Այս անգամ Մոնթեն տեղակայել էր իր տանկերը պաշտպանական պատնեշների ու խրամատների հետևում՝ հաշվի առնելով այդ ուղղությամբ նման ծածուկ հարձակման հնարավորությունը: Հենց որ հնչեցին առաջին կրակոցները, համարյա անմիջապես Մոնթեի տղաները խփեցին թշնամու 4 տանկ, և հարձակվողները կրկին քաոսային նահանջի դիմեցին: Փախուստի միակ ճանապարհն այն բաց տարածության միջով էր, ուր դեռ մի քանի օր առաջ իրենց պատկանած տանկերն այժմ առաջ էին գնում ու կտոր-կտոր անում նրանց: Ճակատամարտն արագ ավարտվեց, բայց հարձակվողները հասցրել էին կորցնել 6 տանկ, 3 զրահամեքենա և 70 մարտիկ:

Գուլաբլիից առաջ Մոնթեն երբեք չէր պատկերացրել, թե որքան կործանարար կարող է լինել տանկը ճիշտ օգտագործման դեպքում: Նա նկարագրում էր հովտի տեսարանը կռվից հետո. «Ամեն տեղ՝ ոտք մը հոս, ձեռք մը հոն, այդ բոլոր դաշտերը... միսի կտորները ամեն տեղ»:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 25-ին, ադրբեջանցի հրամանատարները 6 տանկ, 2 զրահամեքենա ու երիտասարդ անփորձ զինվորների 2 գումարտակ նետեցին մի նոր հարձակման մեջ, այս անգամ՝ Աղբուլաղի բարձունքներում: Կրկին նրանք առաջ գնացին՝ միայն Մարտունու տանկային հրանոթների կրակի տակ հայտնվելու և նահանջելիս իրենց սպանվածների դիակներին դեմ առնելու համար: Կռվից հետո Մոնթեի զինվորները թշնամու դիակներից, ընկած տեղում նրանց թաղելուց առաջ, անձը հաստատող փաստաթղթեր հավաքեցին: Դրանք ստուգելով՝ Մոնթեն նկատեց, որ «մահացածների շատ մեծ տոկոս» ադրբեջանցիներ չէին, այլ՝ Ադրբեջանի ոչ թրքալեզու ազգային փոքրամասնությունների՝ թալիշների ու լեզգիների ներկայացուցիչներ: Նրա տեսանկյունից՝ այդ տղաները ներքաշվել էին պատերազմի մեջ՝ հանուն ադրբեջանական շովինիզմի մեռնելու համար, հանուն մի նպատակի, որից թալիշներն ու լեզգիները ոչ մի շահ չունեին: «Դա հիշեցնում է ինձ դարասկզբի և տասնիններորդ դարի վերջի թուրքական քաղաքականությունը, երբ նրանք հայերի դեմ օգտագործում էին քրդերին, — հետագայում ասել է Մոնթեն մի արևմտյան թղթակցի: — Նրանք քրդերին օգտագործեցին՝ հայերին կոտորելու համար, իսկ երբ բավական շատ հայեր էին կոտոր-

վել, սկսեցին տեղահանել ու կոտորել քրդերին: Այլ խոսքով՝ այժմ ոչ ադրբեջանցի ազգային փոքրամասնություններին մեր դեմ են օգտագործում այս պատերազմում՝ իմանալով, որ որքան շատ այդ երիտասարդներից սպանվեն, այնքան լավ կլինի ադրբեջանական շովինիստ իշխանությունների համար»:

Այդ ժամանակ պայթող տանկային արկերն այլևս մի ակնթարթից ավելի ուշադրություն չէին պահանջում Մոնթեից: Որոշ օրերի նա ղեկավարում էր երկու ճակատամարտ տարբեր ճակատներում: Մի տեղ նրա թևին արկի բեկոր դիպավ, բայց նա շարունակեց հրամանատարությունն առանց դադարի: Հետագայում, երբ Սեդան տեսավ վերքն ու սարսափահար հետ ցատկեց, նա ուսերը թոթվեց.

— Մեծ բան չէ: Արդեն անցել է:

Օգոստոսին ու սեպտեմբերին Մարտունու զինվորները հաղթանակ հաղթանակի հետևից էին տանում: Սակայն Մոնթեի և Հարոյանի համար կռիվների հեղեղը միայն բացահայտել էր իրենց ուժերի թերությունները, մասնավորապես՝ կենտրոնացված հրամանատարության պակասը: Մարտունու ամեն գյուղ իր սեփական ջոկատն ուներ, որի մարտիկները դեռևս կարող էին, և հաճախ այդպես էլ վարվում էին, հրաժարվել հարևան գյուղերի միանալուց կամ նույնիսկ ճանապարհի վրա հաջորդ գյուղի պաշտպանության համար մղվող կռիվներին մասնակցելուց:

Ամառվա և վաղ աշնան ընթացքում Հարոյանն ու Մոնթեն փորձում էին շտկել այս թերությունը՝ վերախմբավորելով զորքերը և ցամաքային ուժերի նոր կառուցվածք կազմակերպելով: Ճակատագծի յուրաքանչյուր հիմնական դիրք պետք է համալրվեր 30-60 մարտիկներով՝ կազմավորելով դասակ: Ամեն գործող դասակ պիտի ունենար մի պահեստային դասակ և ծառայությունից ժամանակավորապես ազատված մի երրորդ դասակ: Այդպիսով վերջիններս կարող էին խրամատներից ազատ ժամանակ վարել, ցանել ու հնձել իրենց դաշտերը: Դիրքերից յուրաքանչյուրը պիտի ունենար իր ենթահրամանատարը, որ հաշվետու պիտի լիներ մի քանի դասակից բաղկացած գումարտակի հրամանատարին և ենթաշրջանային կամ քաղաքային շտաբին:

Հարոյանն ու Մոնթեն 9 քաղաքային ու ենթաշրջանային շտաբ կազմակերպեցին Մարտունու շրջանում. երկուսը՝ Մարտունի քաղաքում, երկուսը՝ Ճարտար գյուղում, մեկը՝ Կրասնի Բազայում, մեկը՝ Մաճկալաշենում, մեկը՝ Բերդաշենում, մեկն՝

Աշանում և մեկն էլ՝ Գիշիում: Այս քաղաքային կամ ենթաշրջանային շտաբերից յուրաքանչյուրը հաշվետու էր Մոնթեի շտաբին Մարտունի քաղաքում: Մարտունու շտաբն իր հերթին Արցախի 6 շրջանային շտաբերից մեկն էր, որոնք գտնվում էին Ստեփանակերտում գործող՝ Լեռնային Ղարաբաղի նորակազմ «Պաշտպանության կոմիտեի» հրամանատարության տակ: Մի քանի օրը մեկ Մոնթեն պիտի խորհրդակցության համար ներկայանար Ստեփանակերտ՝ «Պաշտպանության կոմիտե», և իր փոշոտ կոշիկներով դոփեր գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանի գրասենյակի երեք շերտ գորգերի վրա:

Իսկ Մարտունիում Մոնթեի մարտիկները ճանապարհներն էին չափում՝ իրենց կարկատած տանկերը ճակատային դիրքեր արագ տեղափոխելու համար, և Հարոյանը հատուկ շարժական միավորներ էր կազմավորում՝ Մարտունու շտաբի անմիջական հրամանատարության տակ: Այդ միավորներն ընդգրկում էին տանկեր, զրահամեքենաներ ու բեռնատարներ, հրետանի, հակաօդային զենքեր: Անձնակազմում, բացի մոտոհրաձիգներից, կային նաև սակրավորներ, տանկեր նորոգողներ ու խոհարարներ: Շարժական միավորները պետք է ապահովեին նաև կոմունիկացիաները, մատակարարումը, հետախուզությունը: Ճանապարհների բարելավման և այդ միավորների շնորհիվ Մարտունու զինվորները կարող էին տանկերի պակասը հաստուցել ուժերն անհրաժեշտ տեղերում արագ կենտրոնացնելով:

Այդպիսին էր հրամանատարության և ցամաքային ուժերի նոր կառուցվածքը, որ կազմակերպեցին Հարոյանն ու Մոնթեն թեժ կռիվներին զուգընթաց: 1992 թ. հոկտեմբերին այդ կառույցը քիչ թե շատ ձևավորված էր, և վերջապես Մոնթեն կարող էր հայտարարել, որ «ամեն մարդ իր գործին է»:

Այդ ժամանակ Արցախում սկսել էին ռուսական հակաօդային կայանքներ գործածվել: Կիրառվում էին Стрела-10 շարժական բազմակի հրթիռանետներ, ինչպես նաև՝ ձեռքի Стрела-4 ու Игла՝ ջերմության աղբյուրների հարվածող հրթիռներով: Հաջորդ ամիսների ընթացքում Արցախի մարտիկները խփեցին ադրբեջանցիների մոտ 20 կործանիչ և ուղղաթիռ՝ դրանով հաստատելով, որ, գոնե Լեռնային Ղարաբաղում, արիությունը կարող էր ավելի որոշիչ լինել, քան օդուժը:

Մոնթեն կուսցավ իր սեղանին բաժակի մեջ դրված վարդի վրա և խորը հոտ քաշեց: Ժամանակն էր՝ գրավելու Ջնամու կրակա-

կետերը շրջակա բարձունքների վրա և ճեղքելու Մարտունու շրջափակումն ադրբեջանցի հրետանավորների կողմից: Ադրբեջանական կրակակետերից մեկը գտնվում էր Ամիրանլար լքված գյուղում, որն այնքան մոտ էր Մարտունի քաղաքին (500 մ), որ լսվում էր մոտոցիկլետի դոդոջը գյուղում: Հոկտեմբերի 2-ին Մոնթեն ու Հարոյանը դիրքավորվեցին Ղուրուչուղի գագաթին՝ պատրաստվելով Ամիրանլարի և մոտակա ադրբեջանական Մուղանլու՝ ու Կուրոպատկինո գյուղերի վրա հարձակման: Օպերացիան սկսվեց առավոտյան ժամը 6:50: Մավո անունով խարտյաշ երիտասարդ սպան մի խումբ մարտիկների հարձակման տարավ Ամիրանլարի վրա, իսկ Մերուժան անունով մեկ այլ ենթահրամանատար մի ուրիշ խումբ տարավ դեպի Մուղանլու: Երկու խմբերը սահուն ու արագ առաջացան՝ մի ժամից էլ պակաս ժամանակում գրավելով իրենց գյուղերը և միանալով մյուսներին՝ գրոհելու ու գրավելու համար վերջին՝ Կուրոպատկինո գյուղը:

Կուրոպատկինոյի գրավված ադրբեջանական շտաբի դիմաց հանգստացող ուժասպառված հարձակվողներն անակնկալի եկան, երբ այնտեղ կանգ առավ մի ծառայողական մեքենա, և մորուքավոր վարորդը դուրս ցատկեց ու ադրբեջաներեն բղավեց, որ հայերը պատրաստվում էին գյուղը գրավել: Հայ մարտիկները, որ այդ սպայից առաջ էին տեղ հասել, վեր ցատկեցին ու նրա վրա ուղղեցին ինքնաձիգները:

— Արի՛ այստեղ, — մոնչաց նրանցից մեկը, և ադրբեջանցին ձերբակալված էր:

Հարոյանը Կուրոպատկինոյի հաղթանակը շրջադարձային համարեց, և Մոնթեն 1992 թ. հոկտեմբերի 2-ը նշեց որպես ադրբեջանցիների կողմից Մարտունու ռմբակոծությունը դադարելու օր: Այդ մարտում նրանք կորցրել էին երկու զինվոր՝ թշնամու 47 սպանվածի և 2 խփված տանկի դիմաց:

Մինչև փոշին կնստեր, Մարտունու որոշ բնակիչներ իջան լքված գյուղերն ու սկսեցին իրենց վռնդված նախկին հարևանների տներից տանել գորգեր, դաշնամուրներ, զգեստապահարաններ, լուսամուտների ապակիներ, մետաղյա դարպասներ և նույնիսկ մահճակալներ: Երբ Մոնթեն տեսավ ավարը տուն քարշ տվող մարդկանց, խոժոռվեց, բայց ոչինչ չասաց: Նա գիտեր, որ այդ մարդիկ էլ մեծ կորուստներ էին ունեցել պատերազմում, և որոշեց այս անգամ չխանգարել նրանց:

Երբ Մոնթեի վարորդ Կոմիտասի հայրը դռնից դուրս եկավ վերցնելու ավարի իր բաժինը, որդին խնդրեց նրան դա չանել:

— Ես չեմ կարողանա նայել Ավոյի երեսին, եթե նա տեսնի քեզ կողոպտելիս, — հորն ասաց որդին:

Ավագ Ավանեսյանը հետագայում հիշեց, որ իր որդու աղերսանքը միակ բանն էր, որ հետ էր պահել իրեն ավարառուների խմբին միանալուց:

Երբեմն Մոնթեն չգիտեր՝ խեղդե՞լ իր հրամանատարության տակ եղած մարտիկներին, թե՞ գրկել նրանց: Նա մշտապես նյարդայնանում էր նրանց մանրախնդրությունից ու հիմարությունից, բայց քաջությունը նրան ակնածանքով էր լցնում: Մարտերի միջև Մոնթեն այցելում էր հիվանդանոցում գտնվող խեղանդամված, երրորդ աստիճանի այրվածքներ ստացած, գանգերը ճաքած ու աչքերից զրկված զինվորների, որոնք հենվում էին արմունկներին, բռնվում ճգող սարքերից, թափ տալիս հատված անդամները՝ աղաչելով հաջորդ մարտից առաջ միանալ իրենց ընկերներին ռազմաճակատում: Արտասովոր բան չէր, երբ անդամահատված, վիրակապված կամ երեք անգամ վիրավորված մարտիկները կաղեկաղ վերադառնում էին խրամատներ:

Մոնթեի հրամանատարության տակ սպանված ամեն զինվոր նրա կյանքից մի բան էր տանում: Հետագայում նա Սեդային պատմել էր իր սիրելիներից մեկի՝ լեռնային Մաճկալաշեն գյուղի՝ հանգիստ բնավորությամբ երիտասարդ հրամանատար Արմենի մահը: Հոկտեմբերի 8-ի վաղ առավոտյան, երբ իր զորքերը պատրաստվում էին հարձակվել Ղաշարի ադրբեջանական դիրքերի վրա, Մոնթին ոչ բնորոշ թախիծ էր նկատել երիտասարդի դեմքին: Օրվա վերջում Արմենն սպանված էր «Գրադի» բեկորով, որ դիպել էր նրան հարձակման ժամանակ: «Նրանք հավանաբար զգում են, որ պիտի մեռնեն», — ասել էր նա Սեդային: Մահվան օրվանից ի վեր Արմենը մարմնավորում էր Մաճկալաշեն քաջարի գյուղը՝ բազմաթիվ նահատակների տունը:

Նոյեմբերի 1-ին Մոնթեն իր շտաբը հին տեխնիկական ուսումնարանից տեղափոխեց Մարտունու արևելյան ծայրամասում՝ բարդիներով եզերված ճանապարհի վերջում գտնվող մի ամառանոց: Անցյալում բետոնից ու տուֆից կառուցված այդ երկհարկանի շենքում իր արձակուրդներն էր անցկացրել Հեյդար Ալիևը՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի նախկին առաջին տեղակալը և խորհրդային ղեկավարներ Բրեժնևի ու Անդրոպովի

հովանավորյալը: Մոնթեի նոր փոքր գրասենյակը երկրորդ հարկում էր՝ խցիկից ոչ մեծ մի խորշով, որտեղ նա տեղավորեց իր նեղ թախտը: Հարոյանը զբաղեցրեց նույն հարկում գտնվող մի ավելի մեծ սենյակ՝ լուսամուտները խարամաբետոնով ու ցեմենտով ամրացնելուց հետո:

Շնորհիվ Թշնամուց իրենց գրաված ու նորոգած զրահատեխնիկայի, 1992 թ. վերջին Մարտունու զինվորներն ունեին 30 սարքին տանկ, 20 զրահամեքենա, 4 շարժական «Գրադ» կայանք, 20 միավոր ծանր հրետանի, մի քանի լողացող զրահամեքենա և ուրիշ «խառը տեխնիկա»: Այդ զենքերի չորս-հինգերորդը գրավված էր ադրբեջանցիներից: Որոշ տանկերի դռնակների ու սարքերի վրա դեռ երևում էին Թշնամու անձնակազմերի չորացած արյան հետքեր, իսկ որոշ տանկերի աշտարակներին դեռ մնում էին ադրբեջանական դրոշի ու կիսալուսնի պատկերները կամ սպիտակ ներկով փնթի գրված կարգախոսները:

— Մենք շատ տանկեր ունենք, — զեկուցեց Մոնթեն վիրավոր զինվորներին՝ հիվանդանոցում նրանց այցելելով:

Նշելով, որ տանկերի մեծ մասը Թշնամուց էր գրավված՝ նա ավելացրեց.

— Ադրբեջանցիները զինում են երկու բանակ՝ իրենցն ու մերը:

— Ասված Էլչիբեյին առողջություն տա, — կատակով ասում էին զինվորներն Ադրբեջանի ռազմաշունչ նախագահի մասին, որն ակամա իրենց այդքան տանկեր էր մատակարարում:

Դեկտեմբերի 5-ին Մարտունու զորքերն իրենց տանկերի օգնությամբ գրավեցին Ջեյիլի բարձունքները՝ Աղդամի դաշտում գտնվող Մերզուլի գյուղին նայող բլուրների շարքը: Այդ երեկո տեղի ունեցած մարտից հետո Մոնթեն հեռադիտակով նայեց գրավված բարձունքից և տեսավ Թշնամու 400 զինվորի, 2 տանկ, 1 զրահամեքենա, ծանր հրանոթներ, որ հավաքվում էին Մերզուլիի մոտ գտնվող մի հողատարածքում: Նրանք հակահարձակման էին պատրաստվում:

Գիշերվա խավարում Մոնթեն իր 400 մարտիկների, 4 տանկ ու 4 զրահամեքենա տարավ սարերն ի վար, դեպի Ջեյիլի բարձունքներից հյուսիս-արևմուտք: Նախքան լույսը բացվելը Մոնթեի մարտիկները հասել էին Մարտունի-Աղդամ ասֆալտապատ ճանապարհին և հետևից շրջապատել ադրբեջանցիների դիրքերը: Երբ Մարտունու զինվորները գրոհեցին, նրանք երկու կողմից հուժկու հարվածեցին Թշնամուն՝ նրան անակնկալի բերելով:

Ադրբեջանական մի կործանիչ ցած իջավ՝ Թշնամու նահանջն ապահովելու համար:

Մոնթեն երկօրյա մարտերից հետո ուժասպառ ու ճնշված էր. դեկտեմբերի 5-ին ու 6-ին նա 9 մարտիկ էր կորցրել, որոնց թվում՝ ենթահրամանատար Վալոդին: Մյուս ռազմաճակատում նրա զինվորներն ադրբեջանցիներին հետ էին մղել Մերզուլիից 3 կիլոմետր արևելք՝ կռվի դաշտում թողնելով 150 Թշնամու դիակ:

Հաջորդ օրը հեռուստալրագրող Վարդգես Բաղրյանը Մոնթեից հարցազրույց վերցրեց Ջեյիլի բարձունքների ճակատային խրամատներում:

— Ավո՛ ջան, հիմա ես կխնդրեի, որպեսզի դու քո մասին պատմեիր, — քաղաքավարի, բայց հաստատուն ձայնով ասաց Բաղրյանը:

Նրան միշտ շատ էր հետաքրքրել հրամանատարը:

— Ի՞նչ ասեմ... Ձեմ ուզեր երկար-բարակ խոսել, — պատասխանեց Մոնթեն. — իսկական անունս Մոնթե է, Մոնթե Մելքոնյան: Այս Ավո անունը որդեգրեցի, երբ որ Շահումյան գացի 91 թվականին, տակավին խորհրդային բանակ կար և այլն...

Նրա ձայնը շատ գործնական էր:

— Անցյալին սփյուռքի մեջ պայքարած եմ մեր ժողովրդի իրավունքներուն համար և այստեղ կգտնվիմ նույն պատճառի համար: Ասիկա այդ նույն պայքարի շարունակությունն է:

Երբ Բաղրյանը զարմանք հայտնեց, որ սփյուռքահայը եկել էր Արցախում կռվելու, Մոնթեն ծիծաղեց.

— Շատ նորմալ բան է: Նորմալ բան է, որ հայը գա և իր հայրենիքը պաշտպանե, շատ նորմալ բան է: Իրավունքն է բոլորին և նաև պարտականությունն է: Եվ զարմանալին այն է, որ ավելի շատ հայեր չեն եկած նույնը ընելու, միայն այդ է զարմանալին:

Այդ թեմային նա անդրադարձավ նաև հետագայում՝ մեկ այլ հարցազրույցում. «Մենք տեսանք, որ մեր հայրենիքի մի մասը գրավում են, գրավում ամենաստոր եղանակով. պետությունը՝ ադրբեջանական պետությունը, դավեր էր նյութում՝ այն աստիճանաբար զավթելու համար, և նրանք զավթում էին այն՝ ճնշելով մեր ժողովրդի բոլոր իրավունքները, ճնշելով նրա մշակույթը, ահաբեկելով նրան. երբ մարդ տեսնում է այս ամենը, դժվար է չմասնակցել: Եվ զարմանալի է, որ ավելի շատ մարդիկ չեն մասնակցում»:

Մոնթեն անկեղծորեն զարմացած էր, ավելի ճիշտ՝ վրդովված Արցախում ազգային պարտքի կանչին սփյուռքի իր հայրենակիցների կողմից աննշան արձագանքով: Թշնամու քարոզիչները Բաքվում հայտարարում էին, թե, իբր, արաբական երկրների հայերից բաղկացած «էքսպեդիցիոն զորքեր» էին եկել Լեռնային Ղարաբաղ, բայց իրականությունն այլ էր: Սփյուռքից ընդամենը մեկ տասնյակ կամավորներ էին միացել պայքարին, և նրանց կեսից քիչն էր մնացել խրամատներում մեկ-երկու ամսից ավելի:

Ավելի շատ ռուսներ էին կռվում Արցախի պաշտպանական ուժերի շարքերում, քան սփյուռքահայեր: Այդ ռուսներից մի քանիսը, որոնց թվում՝ լեյտենանտ Դմիտրի Անատոլևիչ Մոտրիչը, հաղորդալարերով կառավարվող հակատանկային «Ֆագոտի» (ՊՏՈՒՐՍ) մասնագետներ էին: Մոնթեն սիրում էր բարձրահասակ, քաղաքավարի ռուսին, իսկ Դիման պաշտում էր իր հրամանատարին: Երբ Դիմայի հայրը՝ Անատոլի Դմիտրիևիչը, իմացավ, որ իր որդին ընկել էր Ճարտարի՝ նոյեմբերի 16-ի ճակատամարտում, Վլադիվոստոկից եկավ Մարտունի՝ Դիմային փոխարինելու ռազմի դաշտում: Հայրը քաջաբար կռվեց Մոնթեի հրամանատարության տակ Ստորին Վեսալուի մի ճակատամարտում:

Դեկտեմբերի 5-ին, Զեյլիի բարձունքների գրավումից հետո, լուր տարածվեց, որ մոտակա Բերդաշեն գյուղի շրջակա տարածքը հանդիստ ու ապահով է: Գյուղացիներն սկսեցին վերադառնալ իրենց տներն ու հողատարածքները, իսկ տղամարդիկ միացան խրամատների պահեստայիններին: Թիկունքում ունենալով ընտանիքներ ու հարևաններ՝ պաշտպաններն ավելի վճռական դարձան: Անվտանգության շնորհիվ հողագործներն իրենց դաշտերը վերադարձան, բեռնատար մեքենաները շատացան, և փուռերն ու գինեգործներն սկսեցին լրիվ թափով աշխատել: Շուտով Մարտունիում ավելի հեշտ էր լավ սնվել, քան Երևանում: Տնտեսական գործունեության աճն իր հերթին փախստականներին հետ էր գրավում դեպի իրենց լքված տներն ու դաշտերը, այդ թվում՝ նաև կռվելու ընդունակ տարիքի երիտասարդների, որոնք միանում էին պահեստայիններին ու փոխեփոխ հերթապահում խրամատներում:

Չնայած Մոնթեի արդելափակած ճանապարհներին ու նրա ժլատությանը վառելիքի հարցում, նա դարձել էր «ժողովրդի սիրելին», ինչպես նկարագրեց նրան բուլղարուհի կինոնկարահանող Ցվետանա Պասկալևան: 1992 թ. դեկտեմբերի 16-ին Գիշի

գյուղի բնակիչները՝ ահել ու ջահել, հավաքվել էին «Կուլտուրայի տանը», որտեղ մուգ կարմիր փալանով ու երկար բամբակե մորուքով մի հոգեբան կանգնել էր վարագույրի հետևում՝ պատրաստ որպես Զմեռ պապիկ բեմ դուրս գալու: Երբ աղմուկը մարեց, վարողը կռացավ դեպի առաջին շարքում նստած երեխաները և, աչքերը կլորացնելով, հարցրեց.

— Երեխաներ, ո՞վ է հիմա գալու: Ո՞ւմ եք դուք սպասում:

Ի հիասթափություն Զմեռ պապիկի՝ տաք-տաք հագնված երեխաների շարքն առաջ վազեց ու բղավեց.

— Ավո՜ն, ուզում ենք Ավոյին տեսնել:

Մայրերն, իրենց նորածիններին օրորելով, մրմնջում էին.

— Ավոն մեզ հետ է: Որտեղ Ավոն՝ այնտեղ հաղթանակ:

Նույնիսկ քաջությունից ավելի (որն, ի վերջո, հազվագյուտ գիծ չէր Ղարաբաղի լեռնցիների մոտ), Մոնթեի համոզելու կարողությունը գալիս էր նրա անբասիրությունից: Մարտունու հրամանատարի վարքն ու բարքը համապատասխանում էր Իբն Խալդունի ասույթին. «Անկեղծ մղումների անկումը հանգեցնում է մարտական ոգու անկման»: Մոնթեն անկեղծ մղումների մարմնավորում էր: Նա իր մարդկանց հետ էր ուտում, քնում էր իր գրասեղանից մի քանի քայլ այն կողմ դրված նեղ թախտին, բահ էր վերցնում՝ խրամատներ փորելու և ճանապարհների փոսերը լցնելու համար: «Պաշտպանության կոմիտեից» ստացած իր ամսական աշխատավարձը նա տալիս էր վիրավոր զինվորների ընտանիքներին և շտաբի՝ ամենից լավ աշխատող խոհարարներին ու հավաքարար կանանց:

Տեղացիները սիրում էին պատմություններ պատմել կենդանիների հանդեպ Մոնթեի ցուցաբերած բարիության մասին: Նշանք նկարագրում էին՝ ինչպես էր հրամանատարն իր ինքնաձիգի փողով օձերին հավաքում ճանապարհներից, կամ դուրս ցատկում զրահամեքենայից՝ մի դույլ ջուր լցնելու շերեփուկներով լի չորացող լճակի մեջ, կամ բղավում զինվորի վրա, որը սատկած բազե էր մեխել բունկերի բարավորին: Մարտունեցի մի աղջիկ՝ Հելեն Հակոբյանը, որ դեռահասության տարիք դեռ չէր մտել, նկարագրել է հրամանատարին՝ որպես «զարմանալիորեն բարի մարդու՝ համարյա միամիտ պարզությամբ»:

Ադրբեջանի պետական քարտուղար Փանախ Հուսեյնովը (նա ազգակցական կապ չունի Սուրաթի հետ) նոր տարին սկսեց այն հայտարարությամբ, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պիտի լուծ-

վի ոչ թե Մոսկվայում կամ Վաշինգտոնում, այլ մարտի դաշտում: Լեռնային Ղարաբաղի ապագային վերաբերող բանակցություններն ամիսներ էին տևել՝ Մինսկում, Հռոմում ու Ժնևում: Դրանց մասնակցում էին ԱՄՆ-ը, Ռուսաստանը և 9 ուրիշ երկրներ (հատկանշական է, որ Իրանը բանակցություններում ներգրավված չէր), բայց նրանք համարյա ոչ մի արդյունքի չէին հասել:

Մոնթեն ավելի քան համաձայն էր պետական քարտուղար Հուսեյնովի հետ. հարցը պետք է լուծվեր մարտի դաշտում: Հունվարի 4-ի գիշերը նրա մարտիկներն ադրբեջանցիներին հետ մղեցին Մարտունի քաղաքից մի քանի կիլոմետր դեպի արևելք, մինչև Կիզիլկայա (կամ Կարմիր ժայռ)՝ լեռների արևելյան ծայրին գտնվող մի բարձունք: Ճակատամարտի ժամանակ հայկական կողմից ոչ մի զոհ չեղավ, բայց հետո Ճարտարի ռազմաճակատից մի տանկ Կարմիր ժայռի վրա դիպավ ականի: Կարծելով, թե իրենց տանկը «Գրադի» համազարկի թիրախ է դարձել, անձնակազմը դուրս ցատկեց և այս ու այն կողմ վազեց ականապատ դաշտում: Տուժածների վերքերը դեռ վիրակապված չէին, երբ Մոնթեն հայտնվեց այնտեղ և հաշվեց անձնակազմի 8 սպանված ու 6 վիրավոր անդամ:

Մոտ ժամը 3:00-ին նա ոտքերը քարշ տվեց շտաբ ու ընկավ իր թախտին: 2 ժամ անց, սակայն, խռխռացող ռադիոն նրան արթնացրեց: Դա տեղեկատվություն էր ռազմաճակատից. թշնամին ուժեղ հակահարձակման էր անցել՝ նորից գրավելով Կարմիր ժայռը և գերի վերցնելով Կրասնի Բազարից 7 մարտիկների: Ուրիշ պաշտպաններ, զրահամեքենայով նահանջելիս, նույնպես ականի էին դիպել: Տանկը գլորվել էր մարտիկներից մեկի ձեռքի վրա, որն իր սվինով այն կտրել էր ու փախել:

Մոնթեն ճանկեց իր բաճկոնը: Մինչև լուսաբաց նրա մարտիկները շարքից հանել էին թշնամու 2 տանկ, գրավել 1 զրահամեքենա ու 100 միլիմետրանոց հակատանկային հրանոթ և սպանել թշնամու 60 զինվորի: Այնուամենայնիվ, թշնամուն հաջողվել էր նորից գրավել լեռնագագաթը՝ սպանելով Մարտունու ևս 6 լավագույն մարտիկների ու գերեվարելով 4 մարտիկների Կրասնի Բազարից, որոնց նրանք խոշտանգեցին և ի վերջո սպանեցին:

Այդ ժամանակ Մոնթեի աջ ձեռքը թպրտում էր մեռնող ձկան պես, և նրա հետ չփվող ամեն ոք նկատում էր, որ նա անընդհատ

աչքերը թարթում է: Նրան ամենից շատ պետք էր այն, ինչ նա ամենից քիչ էր ստանում՝ քնել:

Մոնթեն դեռ ճնշված վիճակում էր 2 օր անց, երբ Կոմիտասը մեքենայով նրան տարավ Երևան՝ մեր ավագ քույր Մայլեին օդանավակայանում դիմավորելու: Դա նրա առաջին այցելությունն էր Հայաստան՝ անցյալ ամառ Մոնթեի հարսանիքից հետո: Մարտունի վերադառնալիս թեթև ձյուն էր գալիս: Մինչ շտաբի մեքենան վաղ առավոտյան դմփդմփում էր փոսերով ծածկված ճանապարհի վրա, Մայլեն ննջել էր, բայց նրա եղբայրը լուսանի աչքերով հայացքներ էր նետում հետ ու առաջ՝ զննելով լապտերների տեսադաշտում գտնվող ճանապարհը: Ստեփանակերտից արևելք, Ննգի գյուղի մոտ, գիշերվա ժամը 1:30-ի մոտ նա հանկարծ Կոմիտասին հրամայեց կանգ առնել: Մոնթեն ցիստեռն քաշող հանդիպակաց բեռնատարի լույսերի տակ դուրս ցատկեց շտաբի մեքենայից: Բեռնատարը կանգնեցնելով՝ նա մի քանի բառ փոխանակեց վարորդի հետ և ստուգեց նրա բեռնացուցակը: Բեռնատարը տանում էր թույլատրվող 150 լիտրից դգալիորեն ավելի շատ գինի: Ինչ-որ մեկը փորձում էր մաքսանենգությամբ գինի դուրս բերել Մարտունուց՝ նախքան շրջանի հրամանատարը վերադառնար Երևանից: Մոնթեն իր ինքնաձիգի խզակոթով հարվածեց ցիստեռնի հետևում գտնվող ծորակին և բռնագրավեց վարորդի անձը հաստատող փաստաթուղթը, մինչ գինին թափվում էր ցեխոտ ձյան մեջ:

Հունվարի 16-ի երեկոյան Մոնթեն պատրաստվում էր մեկ այլ ճակատամարտի: Բայց այս անգամ մարտը լեզվակռիվ էր լինելու, և հակառակորդները՝ իր իսկ մարդիկ: Մոտ 100 սպաներ և հատուկ միավորումների ղեկավարներ բարձրացան Մարտունու շտաբի աստիճաններով ու նստեցին երկրորդ հարկի ընդարձակ միջանցքում, որը որպես նիստերի դահլիճ էր ծառայում: Քննարկման նյութն էր գնդապետ Հարությանի ներկայությունը Մարտունիում: Գնդապետը, թվում էր, բախվել էր տեղական մի խմբավորման հետ, որը նրան համարում էր ուրիշների գործերին անհարկի խառնվող մեկը: Խմբավորման անդամները բռնագրավել էին գնդապետի կապույտ ծառայողական մեքենան և հրաժարվում էին վերադարձնել, մինչև գնդապետը չհեռանար Մարտունուց:

Մոնթեն հառաչեց, ոտքի կանգնեց և իր ընկեր մարտիկներին հիշեցրեց ժողովրդի պաշտպանության գործում Հարությանի բացա-

ռիկ վաստակը: Նա գովաբանում էր գնդապետին, մինչև որ ձայնը խլպոտացավ, բայց հակառակորդներն աղամանդյա պնդություն ցուցաբերեցին, իսկ տեղացիներից քչերն էին ցանկանում Հարոյանի կողմը բռնել՝ ընդդեմ մարտունեցի տղաների, եթե նույնիսկ նրանք ավազակներ էին:

Ժողովից հետո շտաբի շենքից համարյա բոլորը դուրս եկան՝ վախենալով, որ հարցի ուժային լուծում էր հասունանում, մի կողմից՝ Հարոյանի ու Մոնթեի, մյուս կողմից՝ տեղական խմբավորման միջև: Երբ Մոնթեն ու Հարոյանն այդ երեկո կզակներն արմունկներին հենած նստել էին ճաշասրահի սեղանի մոտ, նրանց հետ միայն երկու հոգի կային՝ Սեղան ու Ռաշիդ (Սարիբեկ) Մարտիրոսյանը՝ տանկի մի քարտեզ հրամանատար, որը «թքած ուներ» բամբասողների ու ավազակների կարծիքի վրա: Սեղանի շուրջը հավաքված չորս մարտիկներն ավելի մռայլ էին, քան զայրացած: Երբ Սարիբեկը փորձեց Հարոյանին համոզել, որ մնա, գնդապետը միայն տխուր ժպտաց.

— Իմ գործն այստեղ ավարտված է, — ասաց նա:

Գնդապետի մեկնելուց հետո Մոնթեն տեղափոխվեց նրա նախկին գրասենյակը երկրորդ հարկում, իսկ փոխհրամանատար, Աֆղանստանի պատերազմի վետերան Մոսի Հակոբյանը տեղափոխվեց Մոնթեի ազատած ավելի փոքր սենյակը: Փետրվարի ընթացքում փոխհրաձգությունները, հետախուզական օպերացիաներն ու հրետանային մենամարտերը շարունակվում էին Մարտունու ռազմաճակատների երկայնքով՝ ձյան ու ցեխի մեջ, իսկ Արցախի ուժերը հյուսիսում շարունակում էին դուրս մղել Սուրաթ Հուսեյնովի «Գյանջայի բրիգադը» նախորդ ամռանը նրա գրաված հողերից:

Մինչ այդ Մարտունու շտաբում անհամաձայնություն էր տիրում: Քաջալերվելով հակահարոյանական արշավանքի հաջող ավարտով՝ անկառավարելի խմբավորման անդամներն այժմ հայացքներն ուղղել էին Մոնթեին: Փետրվարի 26-ի երեկոյան նրանք օդի մեջ կրակելով ներխուժեցին շտաբի շենք: Ինչ-որ մեկը կոտրեց Մոնթեի գրասենյակի դուռը, հետո Ցավը՝ ականի վրա ոտքը կորցրած մարտիկը, ցատկելով կտրեց-անցավ սենյակը մինչև այն գրասեղանը, որի առջև Մոնթեն նստած գրառումներ էր անում: Ցավը ձեռնափայտն ուսից վեր բարձրացրեց՝ Մոնթեին հարվածելու համար, բայց, ըստ մի ականատեսի պատմածի, Մոնթեն աչքերը թղթերից բարձրացրեց՝ առանց մատն անգամ շարժելու, և հանգիստ հայացքով հարձակվողին գամեց իր տեղում: Ցավը թեւաթափ եղավ: Հետո նա ձեռնափայտն իջեցրեց և կաղելով ու արցունքախառն դուրս եկավ սենյակից:

Ներխուժողներն այդ երեկո հեռացան շտաբից, բայց սպառնացին վերջնական ուժային լուծման համար վերադառնալ: Այս անգամ էլ շտաբի անձնակազմը փախել էր՝ շենքը դատարկ թողնելով, բացի Մոնթեի մի բուռ ամենահավատարիմ ընկերներից: Շուտով մի տանկ դղրդաց ճանապարհն ի վեր և հրանոթով նշան բռնեց շտաբի կողմը: Մոնթեն աստիճաններով ցած իջավ՝ հայտնվելով ուղիղ հրանոթի փողի դիմաց, և բղավեց շարժիչի ռռնոցի մեջ.

— Կամ դուք ձեր զենքերը կհանձնեք, կամ ես հեռանում եմ:

Մի բոպե անցավ: Հետո տանկը ցնցվեց և հետընթաց շարժումով հեռացավ՝ սև ծխի ամպի ուղեկցությամբ:

Ապստամբները չէին ուզում կրել «ժողովրդի սիրելիին» Մարտունուց վռնդողների խարանը: Տանուլ տալով այդ օրվա հակամարտությունը՝ նրանք պետք է մի որոշ ժամանակ չերևային:

Չնայած չարչարանքին ու շրջապատող չարակամությանը, Մոնթեի օրերը Մարտունիում չընդհատվող փորձություն չէին: Մի առավոտ, մինչև գնդապետ Հարոյանի մեկնումը Մարտունուց, նա ու Մոնթեն հետախուզության գնացին Ֆիզուլու ճակատը: Մի քանի քայլ նրանց հետևից հանգիստ քայլում էին 5 երիտասարդ զինվոր: Մինչ նրանք մեծ հեռավորություն անցան խաղողի որթերի միջով, մանր անձրև էր տեղում: Երիտասարդ զինվորները լսում էին առջևից քայլող երկու սպաների զրույցը, որոնք խոսում էին տերևների, թռչունների ու երկրի գեղեցկության մասին: Վերջապես հետախուզական խումբը թրջված ու քաղցած հասավ Դաղավարդ գյուղը, որտեղ նրանց հյուրընկալեց զինվորներից մեկի՝ Գուտի անունով քաղաքավարի երիտասարդի ընտանիքը: Նրանք հանեցին իրենց խոնավ հագուստներն ու չորացնելու համար կախեցին մի փայտից, վառարանի մոտ: Ընտանիքի կանայք կերակուր պատրաստեցին, և երբ տաք կերակուր մատուցվեց, Գուտին ժպտալով ասաց.

— Սա իմ կյանքի ամենալավ օրն էր:

Գլուխ 17. Կապի դուրս եկ, Զրո-զրո

1993 թ. մարտի սկզբին Մոնթեն սկսել էր զգալ, որ, չնայած անհնազանդ խմբավորման մարմրող դիմադրությանը, Մարտունու իր զինվորները բավական կարգապահություն և վստահություն էին ձեռք բերել, որպեսզի առանց իրեն կարողանային գործերը կարգավորել: Ժամանակն էր փորձել իր փոխհրամանատարին՝ խորհրդային բանակի երիտասարդ վետերան ճարտարցի Մոսիին՝ տեսնելու համար, թե ինչ հաջողություն կունենա նա՝ որպես Ավոյին փոխարինող: Ինչպես Մոնթեն ասաց իր ծնողներին ուղարկած տեսաուղերձում, ժամանակն էր՝ սկսել հաշիվները մաքրել Մարտունիում և տեղափոխվել ուրիշ ռազմաճակատ:

Նա որոշ քանակությամբ դիզել ապահովեց և կազմավորեց մի ջոկատ՝ հյուսիսում ոչ այնքան հստակ պատկերացված մի օպերացիա իրականացնելու համար: Ջոկատը բաղկացած էր մոտ 70 մարտունեցի և նույնքան՝ ամենահարավային Հադրութ շրջանի կամավորներից: Մոնթեի վարորդ Կոմիտասն էլ էր զինվորագրվել, ինչպես նաև՝ Սարիբեկն ու Աբո անունով մեկ այլ նվիրյալ ապա՝ Գիշի գյուղի մարտիկների և խարտյաշ մազերով Ավոյի ենթահրամանատարության տակ գտնվող մի ուրիշ խմբի հետ միասին: Նրանց միացան նաև «Գաղտնի բանակի» երկու նախկին ընկերներ Իրանից՝ Վահիկ Շ.-ն ու Մասիս Շ-ն, այլև՝ մոլորյալ պահեստապետ Մարատը, որը մեկ տարի առաջ հասարակական բանադրանքի ենթարկվելուց հետո մտափոխվել էր և այժմ իրեն համարում էր Մոնթեի հրամանատարության տակ կռվող հավատարիմ մարտիկ: Նելսոնը նույնպես ընդգրկված էր ջոկատում: Այն ներառում էր նաև մի քանի կանանց, որոնք անվանապես բուժաշխատողներ էին, բայց ինքնաձիգներ ունեին: Նաև՝ մի զրահամեքենայի անձնակազմ նահատակված Մաճկալաշեն գյուղից, գումարած՝ ևս 130 կամավոր: Այս կամավորներից քչերն էին, որ հստակ պատկերացում ունեին, թե որքան ժամանակ են իրենք ճանապարհ գնալու, և թե ուր է բերելու իրենց այդ ճանապարհը:

Կամավորներով լցված 2-3 նորոգված տանկ, մի քանի զրահամեքենա և մի քանի՝ անձնակազմ տանող մեքենա մարտի 5-ի վաղ առավոտյան, նախքան լուրը կհասցներ տարածվել, ճանապարհ ընկան: Մյուս օրը, հայկական ավերված Հաթերք գյուղից դուրս, Մոնթեն կանգնել էր տեսախցիկի առջև և խնդրում էր Մարտակերտի շրջանի հրամանատար Նորայր Դանիելյանին՝ վկայություն տալ իրենց ոտքերի տակի ցածր խոտի մեջ թափված՝ թշնամու թողած զինամթերքի մասին.

— Զինամթերքը բերված է Իրանից, Թուրքիայից, արաբական երկրներից... — ասաց Դանիելյանը՝ չհիշատակելով խորայելական միավորներն ու տեխնիկական օժանդակությունն Էլչիբեյի՝ խիստ հակաիրանական վարչակարգին: Քամին խփում էր խոսափողին՝ խլացնելով նրա ձայնը:

Մոնթեն ընդհատեց նրան և բաց ափը տարավ զինամթերքի կողմը.

— Պարզապես ասա՛, թե ինչ ես տեսնում:

Դանիելյանը կրկնեց իր խոսքերն Ադրբեջանին օգնություն ցույց տվող մահմեդական երկրների մասին:

Մոնթեն կրկին ընդհատեց.

— Ի՞նչ ես տեսնում, պարզապես ասա՛, թե ինչ ես տեսնում, — գրգռված բղավեց նա:

Դանիելյանը մի քանի անհասկանալի վանկ մրթմրթաց, հետո Մոնթեն վերցրեց տեսախցիկն ու մոտեցրեց այն թշնամու լքած զինամթերքի պլաստիկ փաթեթավորման վրա գրված կապույտ ու սև եբրայերեն տառերին: Դանիելյանը հավանաբար ցանկանում էր հաճոյանալ արևմտյան լսարանին՝ չտեսնելու տալով ակնհայտ փաստը, բայց նրանց ոտքերի տակ ապացույցն էր այն իրողության, որ Ադրբեջանը զինամթերք էր ստանում Իսրայելից:

Մոնթեի մարտիկները մյուս օրը կռվի բռնվեցին՝ թշնամուն դուրս մղելով Սարանգի ջրամբարի հյուսիսային ափին գտնվող Հաթերքից: Հաջորդ օրը (մարտի 8-ին) նրանք թշնամուն ևս 5 կիլոմետր արևմուտք քշեցին՝ հասնելով լքված Գետավան գյուղը: Այնտեղ նրանք իջևանեցին դպրոցի քարե շենքում, որ թառել էր զառիթափի անխնամ ճանապարհին: Ապա նրանք հետ դարձան՝ մասնակցելու Ջանյաթաղի լեռնագագաթների համար մղվող կռիվներին՝ Մարտակերտի արևելյան ճակատում:

Մանր կռիվներից հետո նրանք մարտի 17-ին գրավեցին բարձունքները: 3 օր անց ադրբեջանցիները կազմակերպված հակահարձակումներ ձեռնարկեցին Մարտակերտի արևելքում ու արևմուտքում, ինչպես նաև՝ Լաչինի միջանցքից հյուսիս ու հարավ: Մոնթեի մարտիկները հետ մղեցին արևելյան Մարտակերտի հակահարձակումներն ու առաջացան դեպի Գուշկեն Ցալ կոչվող ռազմավարական նշանակություն ունեցող բլուրը:

Մյուս առավոտյան, ժամը 7:29-ին, տեսախցիկը կրկին աշխատում էր, երբ տանկերի հրանոթների թնդյունն ազդարարեց, որ Գուշկեն Ցալի համար մղվող ճակատամարտն սկսվել է: Մորթե օձիքով ծանր զինվորական բաճկոն հագած՝ Մոնթեն պառկած է դարչնագույն խոտի մեջ, լեռան կատարի եզրին, որ նայում է հեռվում գտնվող բլուրներին ու ձյունածածկ գագաթներին: Նրա հրամանատարության տակ է մի թևը, իսկ քողարկաներկված բաճկոն հագած Դանիելյանն առաջնորդում է մյուսը: Նրանց «ուղթ-թոքիները» խռխռում են, ինքնաձիգները՝ ճարճատում, մեջտեղում ծուխ է բարձրանում, և նրանցից ոչ հեռու հրետանային արկ է պայթում:

Ժամը 8-ը չլրացած՝ Մոնթեն խուլոտ ձայնով բղավում է.

— Շտապ օգնությո՛ւն, շտապ օգնությո՛ւն: Նրանք խփել են մեր ԲՄՊ-2-ը:

Տեսախցիկը պտտվում է՝ տեսադաշտի մեջ առնելու համար հրամանատարին. նա այնքան բարձր է մռնչում, որ ձեռքերը դողում են.

— Շտապ օգնությո՛ւն, շտապ օգնությո՛ւն: Մենք խփել ենք մեր իսկ ԲՄՊ-2-ը:

Տեսախցիկից դուրս մի ձայն ասում է.

— Բայց մերը հենց նոր դուրս եկավ. — ուզում է ասել՝ խփված զրահամեքենան ադրբեջանական է:

Հեռվում մի այլ պայթյուն է բռնկվում, և Մոնթեն մի անմարդկային ճիչ է արձակում՝ կարծես փսխում է իր կոկորդը.

— Մե՛րն է, էշե՛ր, դուք բան չեք հասկանում:

Մի քանի րոպե անց 7-8 մարտիկ զինվորական դեղնադարչնագույն համազգեստներով լանջով ցած են վազում՝ ԲՄՊ-2-ի անձնակազմի մի վիրավոր անդամի մարտադաշտից դուրս բերող տանկին ընդառաջ: Նրանք տանկի դռնակից մի հազիվ շարժվող մարդու են հանում: Դա Վարդանն է՝ հրեշտակային դեմքով ու պատանեկան ցանցառ մորուքով մի սլացիկ մարտիկ:

— Թողե՛ք մեռնեմ, տղաներ, — ոնգում է նա ցնցվելով:

Նրա ընկերներից մեկը հուսահատ կատաղությամբ հարձակվում է տեսախցիկի վրա.

— Կորե՛ք այստեղից:

Նույն օրն ավելի ուշ Մարտունու զինվորները շրխկոցով բացում էին գոմերի ու զուգարանների դռները՝ մոտենալով Գուշկեն Ցալի կատարին: Սակայն բլուրը հեշտ չէր պահել: Ադրբեջանցիների հակահարձակումները շարունակվեցին մինչև մարտի 25-ը, երբ Մոնթեն Գուշկեն Ցալը թողեց Դանիելյանի զինվորների ձեռքում: Այդ պահին կարող էր թվալ, թե Մոնթեի մարտիկները կվերադառնան հարավ՝ Մարտունի կամ Հադրութ: Բայց փոխարենը՝ նրանք արևմուտք տանող ճանապարհով հետևեցին իրենց հրամանատարին:

Մարտի 26-ին Մարտունու զինվորները, զենքերն ու զինամթերքը մեջքներին, 15 կիլոմետրից ավելի քայլեցին զառիվեր սարերի վրայով, մինչև որ հասան այն կետին, որտեղից հարձակվեցին Աղդաբան ռազմականացված գյուղի վրա՝ 30 կիլոմետր Ջանյաթաղից արևմուտք: Մանր մարտից և ադրբեջանցիների կատաղի դիմադրությունից հետո նրանք ճեղքեցին պաշտպանության գիծն ու առաջացան ևս մի քանի կիլոմետր դեպի արևմուտք՝ մինչև Արցախի արևմտյան եզրը:

Հաջորդ օրը Մոնթեն հարձակում գործեց քանդված Ջարեքդար գյուղի վրա, որ գտնվում էր Մարտակերտից դեպի արևմուտք տանող միակ ասֆալտապատ ճանապարհի երկու կողմում: Այդ միջոցին մեկ այլ հայկական զորախումբ մոտենում էր մի քանի կիլոմետր հյուսիս գտնվող Աղդաբանից, իսկ մի երրորդ խումբ էլ դիրքեր գրավեց մի քանի կիլոմետր հիմնական ուժերից հարավ, Նալբեշտար գյուղի մոտ: Ոչ միայն Մոնթեի մարտիկների, այլև թշնամու հրամանատարների համար պետք է որ արդեն պարզ դարձած լիներ, թե ուր է տանում ճանապարհը: Ադրբեջանցիներն այժմ հայտնվել էին մի սպառնալիքի առաջ, որ մինչ այդ հաղիվ թե որևէ մեկը պատկերացներ. հայերը պատրաստվում էին մտնել Քելբաջար՝ Արցախը Հայաստանից բաժանող՝ 3000 քառակուսի կիլոմետրանոց սարերի ու ձորերի լաբիրինթոսը:

Նույն թվականին, դրանից առաջ, մի տեսախցիկ նկարահանել էր, թե ինչպես Մոնթեն ցեխոտ կոշիկներով դոփելով մտնում է իր դրասենյակը՝ Երևանից եկած՝ Տեր-Պետրոսյանի կողմնակից պատգամավորների պատվիրակությանն ընդունելու համար: Լսարանից ուշացած դասախոսի նման նա անմիջապես սկսեց Մարտունիում պաշտպանական պատրաստությունների մասին դասախոսությունը: Մի պահ Մոնթեն շրջվեց դեպի իր հետևում պատի մեծ մասը ծածկող քարտեզը և բաց դաստակը դրեց վրան՝ Արցախի ու Հայաստանի Հանրապետության սահմանների միջև:

— Այս տարածքը, — ասաց նա, — շատ կարևոր է:

— Մի պահ թերահավատ լռություն տիրեց, որից հետո պատգամավորներից մեկը՝ Բագրատ Ասատրյանը, քթի տակ մրթմրթաց, բայց դա լսելի եղավ հետևում գտնվող տեսախցիկին.

— Գեղեցիկ երազնե՛ր:

Երկու ամիս էր անցել այդ օրվանից: Այժմ, գտնվելով Քելբաջարի քարե լաբիրինթոսի շեմին, թվում էր՝ Մոնթեն պիտի փորձեր իրագործել այդ «գեղեցիկ երազները»:

Աղդաբանի և Նարեշտարի ուժերը մոտենում էին, բայց Մոնթեի՝ Զարեքդարի մոտ գտնվող մարտիկները՝ ոչ, համենայն դեպս՝ ոչ մարտի 27-ին: Ադրբեջանցի հրամանատարներն իրենց ամենալավ մարզված ու ամենավճռական զինվորներին, որոնց թվում՝ տանկերի ուկրաինացի ու չեչեն հրամանատարների և թուրք կամավորների, նետել էին Զարեքդարի պաշտպանության ճակատ: Հենց որ Մոնթեի առաջնորդող տանկը մի ժայռի ստորոտում շրջադարձ կատարեց ճանապարհին, թշնամու «ֆագոտից» արձակված մի հրթիռ խփեց այն՝ սպանելով անձնակազմի բոլոր երեք անդամներին՝ հերհերցի երիտասարդների: Թվում էր, թե միշտ նրա լավագույն մարտիկներն էին լինում առաջին զոհերը: Մոնթեի բղավոցը կանգնեցրեց առաջխաղացումը, հետո նա հետախույզներ ուղարկեց ժայռի գագաթը:

Այդ ընթացքում Քելբաջարից արևմուտք, Հայաստանի Հանրապետության Վարդենիս քաղաքի մոտ, մի չորրորդ զորամիավորում՝ բաղկացած կոկիկ համազգեստներով 50 մարտիկներից, արդեն սկսել էր մեծ ջանքեր գործադրելով Մռավի լեռների՝ ծնկներին հասնող ձյան միջով անցնել դեպի Քելբաջար: Այդ խումբը գլխավորում էր կարմիր բերետով մի թիկնեղ տղամարդ՝ մի հայ Արևմուտքից, որ խոսում էր Մոնթեի նման նույն տարօրինակ բարբառով:

Իսկ Զարեքդարում Մոնթեի մարտիկները վերսկսեցին իրենց հարձակումն ամսի 28-ին: Ի վերջո, 8 ժամ կռվելուց և հայկական կողմում մեկ կորուստ ունենալուց հետո, նրանք թուան պաշտպանների խրամատների վրայով և գրավեցին 2 զրահամեքենա ու 1 տանկ, որի փողի վրա կիսալուսին և աստղ էր պատկերված: Գերեվարված զրահամեքենաները միացան երկարած շարասյունը, որը ճղփճղփոցով անցնում էր ոլորապտույտ հոսանքով Քելբաջար մտնող Թարթառ գետը: Երբ նրանք հասան մյուս ափը, Մոնթեն և իր մարտիկները ցած թռան տանկերից ու շարունակեցին քայլել: Հանգիստ, անժպիտ, դեղին փոշիով ծածկված՝ նրանցից ամենաերիտասարդն անգամ տասնյակ կռիվներ տեսած կոփված վետերան էր:

Նույն օրը տեղացի թղթակից Բաղրյանը լքված Վանքվան գյուղի մոտ հասավ Մոնթեին: Հրամանատարն իրենից հարցազրույց վերցնողին ներկայացավ մարտական հանդերձանքով, զրահաժիլետի վրայից հագած փամփշտակալով, բայց առանց սաղավարտի: Հեռվում, լեռների կատարին, ուրվագծվում էր հայկական միջնադարյան Դադիվանքը:

— Հիմա հասած ենք [Քելբաջարի շրջանի]՝ մինչև Կիրովաբադի ճանապարհը, և մենք երբ որ ուզենք, առաջ կերթանք. հարցը այն է՝ արդյոք կուզե՞նք կամ ոչ, քանի որ պիտի նախընտրեինք, որ խաղաղ բնակչությունը ապահով ձևով դուրս ելլե այստեղեն, և հետո առաջ երթանք: Բայց կարծես թե իրենց զինվորականները թույլ չեն տար: Ուրեմն թերևս նորեն կսկսենք:

Բայց ինչո՞ւ մտնել Քելբաջար: Այնտեղ հայեր չէին ապրում:

Մոնթեն հետագայում պնդում էր, որ իրենք «պիտի գրավեին Քելբաջարը», որովհետև ադրբեջանցիներն այդ տարածքից սկսել էին հայկական գյուղերի հրետակոծությունը: Բայց նրա համար այս օպերացիայի հիմքում զուտ, և ոչ էլ՝ առաջին հերթին, անվտանգության նկատառումները չէին:

— Այս հարցը պատմական հարց է, — ասաց նա Բաղրյանին: Այսօրվա ժողովրդագրական կացությունն ու սահմանները Մոնթեի համար նշանակություն չունեին. Քելբաջարը պատմական Հայաստանի մաս էր:

— Անշուշտ ասիկա պատմական Հայաստան է, — ասաց նա՝ շրջվելով ու մատնացույց անելով վանքը հեռվում. — այն կամայական սահմանները, որ գծեցին 1921 թվականին, ոչ մեկ կապ ունին իրականության հետ, և մենք պիտի վերահաստատենք իրականությունը մեր զենքերով, դժբախտաբար: Լավ կլլար, եթե ազերիները հասկնային, որ՝ լա՛վ, իրականությունն իրականություն է, ընդունեին և ասեին՝ լա՛վ, ձեզի է, վե՛րջ:

Չնայած Քելբաջարի բնակչության կեսն ադրբեջանցիներ էին, կեսը՝ քրդեր, «իրականությունը հասկնալու» համար նրանք պետք է կամ հաշտվեին հայկական պետության մեջ որպես փոքրամասնություն ապրելու գաղափարի հետ, կամ թողնեին իրենց տները: Բայց հայ մարտիկներն արդեն բացառել էին առաջին հնարավորությունը՝ ինչպես Մոնթեն ինքը գրոհից անմիջապես առաջ խոստովանեց մի արևմտյան թղթակցի.

— Երկու կողմից էլ շատ արյուն է թափվել, — նկատեց նա. — կրքերը բորբոքված են, և դա չի կարող նպաստել տեսանելի ապագայում միասին ապրելուն:

Թվում էր, ուրեմն, որ, բացի զանգվածային տեղահանությունից, բոլոր տարբերակները բացառված էին:

Մարտի 31-ին Մոնթեի մարտիկները ևս 9 կիլոմետր առաջ էին գնացել երկկողմանի ճանապարհով, որը հետևում է Թարթառ գետի շրջադարձերին: Հանկարծ նրանք հայտնվեցին մի նեղ ու ոլորապտույտ ձորում՝ երկու կողմից ուղղահայաց 100 ոտնաչափանոց զառիթափերով: Մոնթեն տեսագրել է այդ պահը. Թարթառ գետի շագանակագույն ջուրը փրփրում է՝ քարերին բախվելով, իսկ արևի ճառագայթները սահում են ուղիղ վեր ձգվող ժայռերի մակերեսով:

— Ի՜նչ գեղեցիկ տեղ է, — ասում է Մոնթեն՝ տեսախցիկով շարժվելով գետի երկայնքով. — դեռ ձմեռ է, տերևները շատ չեն, բայց երբ շրջակայքը կանաչի, սա իսկապես գեղեցիկ տեղ կլինի:

Այս տեղանքի ևս 20 կիլոմետր էր նրա շարասյունը բաժանում Քելբաջարի շրջանի նույնանուն քաղաքից: Ձորի վերևից Մոնթեի հետախույզները զննում էին դեպի հարավ՝ Լաչին տանող միակ ճանապարհի հետ խաչմերուկը: Կապոցներով բեռնված մարդատար ու բեռնատար մեքենաներ, մի անընդհատ շղթա կազմած, հեռանում էին Քելբաջարից: Մոնթեն իր շարասյանը հրամայեց կանգնել, որպեսզի այդ մեքենաները կարողանան անցնել:

Նրանք 24 ժամ սպասում ու դիտում էին: Վերջապես, Ապրիլի 1-ին, ժամը 14:00, երբ հետախույզները զեկուցեցին, որ փախստականների հոսքը բարակ առվակի էր վերածվել, իսկ հետո բոլորովին ցամաքել, Արցախի մարտիկները վերսկսեցին հարձակումը՝ հասնելով Զուֆուլգարլիից հարավ տանող թունելի մուտքին մոտ գտնվող խաչմերուկը: Հանկարծ, թունելից դուրս գալով, նրանց կողմը սլացավ մի ռազմական կանաչ ԳԱԶ-52 բեռնատար: Մոնթեի զինվորները կտրուկ փոխեցին իրենց ուղղությունը և կրակ բացեցին ինքնաձիգներով ու նռնականետներով: Մարտիկների մտքով չէր անցնում, որ բեռնատարը կարող էր ռազմական փոխադրամիջոց չլինել: Բայց երբ նրանք մոտեցան ծխացող հսկային, նրանց ծնոտները կախ ընկան. բեռնատարը տանում էր 25 քուրդ ու աղրբեջանցի կոլոնտեսականների և ոչ մի զինվորի: Շատերը գնդակներից կամ բեկորներից վերքեր ու այրվածքներ

էին ստացել, իսկ 4 հոգի, որոնց թվում՝ վարորդն ու նրա դուստրը, սպանված էին:

Մոնթեն հրամայեց ողջ մնացածներին Ստեփանակերտի հիվանդանոց տեղափոխել: Նրանց մի մասը մեռնելու էին վերքերից: Հետագայում մի բրիտանացի թղթակցի տված հարցազրույցում Մոնթեն տխուր, ընդհատվող ձայնով բացատրեց, որ Զուֆուլգարլիի թունելի բերանին հասնելիս իր զինվորները ենթադրում էին, թե վերջին փախստականները հատել էին խաչմերուկը: Մարտիկները հոգնած ու նյարդայնացած էին, երբ կրակ բացեցին թունելից իրենց վրա եկող բեռնատարի վրա:

Մոնթեի շարասյունը ևս մի քանի կիլոմետր առաջ գնաց դեպի արևմուտք, հետո կանգ առավ՝ չհասած մեկ այլ խաչմերուկի, այս անգամ դեպի Հյուսիս՝ Ադրբեջանի՝ մեծությամբ երկրորդ Գանձակ քաղաքը տանող մեծ ճանապարհի հետ: Մոնթեի նպատակակետը՝ Քելբաջար քաղաքը, 15 կիլոմետր խաչմերուկից այն կողմ էր, դեպի հարավ-արևմուտք: Ձորի վերևից նրա հետախույզները դիտում էին մարդատար ու բեռնատար ավտոմեքենաների քարավանը, որ շարժվում էր դեպի Հյուսիս՝ Գանձակ, մինչ գլխավերևում հետ ու առաջ էին անում ադրբեջանցի փախստականներով գերբեռնված ՄԻ-8 ուղղաթիռները:

Մոնթեն իր զինվորներին հրամայեց մինչև առաջ գնալը 40 ժամ սպասել: Այս անգամ նա պիտի համոզված լիներ, որ նրանք չեն կրկնի Զուֆուլգարլիի թունելի մոտ գործած ահավոր սխալը: Նրանք պիտի սպասեին, մինչև փախստականներն անցնեին խաչմերուկով՝ նույնիսկ ադրբեջանցի զինյալներին տարածք թափանցել և դիրքերն ամրապնդել թողնելու գնով: Մոնթեի սպա Աբոն, որ ադրբեջաներեն գիտեր, ռադիոյով կապվեց Քելբաջարի մարզպետի հետ, որը ներկայացավ իր «Խան» ծածկագրով:

— Զենքերը վա՛յր դրեք, — ասաց նրան Աբոն. — դուք ազատ եք՝ հեռանալու մինչև ապրիլի 2-ի ժամը 14:00-ն. դուք և բոլոր խաղաղ բնակիչները:

— Մենք երբեք չենք հեռանա, — պատասխանեց «Խանը». — մենք կռվելու ենք մինչև վերջ:

Մոնթեն Աբոյին կարգադրեց բարձրախոս ուղղել խաչմերուկի կողմը՝ փախչող բնակչության հետ անմիջականորեն կապվելու համար՝ հույս ունենալով, որ նրանք լուրը կփոխանցեն իրենց այն ազգականներին ու հարևաններին, որոնք դեռ Քելբաջարից դուրս գալու ճանապարհին չէին: Աբոն 5 անգամ, ռուսերեն և

ադրբեջաններեն, հայտարարեց, որ ամեն ոք, ով չի ուզում փոխհրաձգության մեջ ընկնել, պետք է մինչև ուրբաթ՝ ապրիլի 2-ի ժամը 14:00-ն, առանց հարձակումից վախենալու հեռանա տարածքից: Հայտարարությունն արձագանքում էր ձորով մեկ՝ հասնելով խաչմերուկին և ավելի հեռու:

Ապրիլի 1-ի երեկոյան ուղղաթիռները վերջին փախստականներին տեղափոխել էին ապահով տեղ՝ Եվլախ, որ մեկ ժամ ճանապարհի հեռավորության վրա էր: Այդ ընթացքում ադրբեջանական տանկերն ու հետևակը հասել էին խաչմերուկին և դիրքավորվել՝ պատրաստվելով անխուսափելի հարձակման: Ապրիլի 2-ին, ժամը 2:45, Մոնթեի ուժերը ներխուժեցին խաչմերուկ՝ կրակելով ուղիղ ադրբեջանցիների դիրքերի վրա: Մի քանի րոպե անց խաչմերուկը լցված էր թշնամու այրված զրահատեխնիկայով ու սպանված զինվորներով: Զոհվել էին նաև Մոնթեի 4 մարտիկ:

Մինչև հայերը կավարտեին թնամու զինամթերքը գնելը, զինվորներ տեղափոխող մի ЗИЛ բեռնատար և մի քանի ուրիշ մեքենաներ՝ բեռնված ադրբեջանցի զինյալներով ու վառելիքով, շրջադարձ կատարեցին ճիշտ Մոնթեի մարտիկների առջևում ու սլացան ուղիղ նրանց վրա: Հայ զինվորներից մեկը տեսագրել է այդ պահը. տեսախցիկը պտտվում է՝ Մոնթեին որսալու համար, երբ նա ձեռքի հետ լիցքավորում է իր ինքնաձիգը՝ առանց թաքնվելու մասին հոգ տանելու: Նա ծունկը հենում է ճանապարհին, նշան բռնում և կրակում՝ այդ ամենը մեկ սահուն շարժումով, կարծես իր սովորության համաձայն, երբ մեկ ուրիշը կշփոթվեր: Նույն պահին տեսախցիկը հետ է դառնում դեպի շրջադարձը, և մարտունեցիների զրահամեքենայից մի արկ հարվածում է թշնամու վառելիքի բաքին՝ 60 ադրբեջանցիների գլորելով մի հսկայական նարնջագույն հրագնդի մեջ, որի լեզուները տարածվում են խցիկի շրջանակից այն կողմ՝ տեսադաշտը սպիտակեցնելով:

Երբ Գանձակի խաչմերուկում բոցերը նվազել էին, Մոնթեն վերցրեց տեսախցիկը՝ ավերածության տեսարանն արձանագրելու համար: Ճանապարհին, բարձր քարաժայռի ստորոտի կարմրավուն կավի ֆոնի վրա, թափված են ծռմռված ու այրված մեքենաներ: Տեսախցիկն անցնում է ածխացած ու դեպի դուրս ճկված դիակների վրայով, հետո ցույց տալիս արյունոտ դեմքեր ու դեպի երկինք բացված բերաններ:

— Ուզում եմ բոլորին մի բան տեղեկացնել, — տեսախցիկի հետևում լսվում է Մոնթեի ձայնը. — նրանց ոտքերին կոշիկ չկա: Մեր տղաները զինվորական կոշիկներ չունեն, և երբ մենք ադրբեջանցու ենք սպանում, վերցնում ենք նրա կոշիկները...

Հստակ երևում է, որ բոլոր դիակները գուլպաներով են: Մոնթեն տեսախցիկը մոտեցնում է երեսն ի վեր ճանապարհի եզրին պառկած մի խարտյաշ դիակի, հետո ցույց տալիս մեկ ուրիշին.

— Ռուս, — ասում է նա. — մեկ ռուս... երկու ռուս կար նրանց հետ:

Հետևում, անդունդի եզրին կախված է մի հալված զրահամեքենայի կմախքը, իսկ ճանապարհի մյուս կողմում զինվորներ տեղափոխող մի մեքենա է ծխում՝ շրջապատված ածխացած, մահվան մեջ քարացած դիակներով ու բազմաթիվ պատառոտված անվադողերով: Մոնթեն ցույց է տալիս խաչմերուկը, որտեղ ընկած է թշնամու մոտ 70 դիակ, և խցիկը շարժում ճանապարհի երկայնքով.

— Որքան գնաք այս ճանապարհով, — ասում է նա, — այնքան շատ դիակներ կգտնեք:

Երբ վիրավորները տեղափոխված էին Ստեփանակերտ, Մոնթեն հաշվեց իր մարդկանց. այժմ նրա հրամանատարության տակ միայն մոտ 60 հոգի կար: Որքան իրեն հայտնի էր, թշնամու պնդաճակատ պաշտպանների մեկ այլ խումբ պիտի որ դարանակալած լիներ Գանձակի խաչմերուկի ու Քելբաջար քաղաքի միջև անցնող ճանապարհի վերջին 15 կիլոմետրի վրա ինչ-որ մի տեղ: Նա օժանդակ ուժերի կարիք ուներ, բայց արևը մայր մտնելու վրա էր, և եթե ինքը սպասեր թարմ ուժերի ժամանմանը, իր մարդիկ կկորցնեին իրենց ոգևորությունը: Մոնթեն հրաման տվեց, և բեռնատարներն ու տանկերը սև ծուխ արձակելով առաջացան:

Տեսախցիկն արձանագրել է խմբերից հետ մնացած ադրբեջանցիների ու քրդերի հետ հանդիպումներ ճանապարհի վերջին հատվածում. թշնամու մի թախծոտ զինվոր՝ վիրակապված ձեռքով ու այրված ոտքով, էշ նստած՝ մոտենում ու հանձնվում է: Մի ծերունի՝ գունաթափված բաճկոնով, որի վրա Հայրենական մեծ պատերազմի բազմաթիվ մեդալներ կան, հեկեկում է՝ իր տունն ընդմիշտ թողնելուց առաջ: Մի տարիքով կին՝ սև «չադմայով», փայտի վրա մի պատռված սպիտակ լաթ սասանելով, ադրբեջաններեն ողջունում է Մոնթեին և Աբոյին, հետո հանկարծ

ծնկի իջնում՝ Մոնթեի ոտքերը համբուրելու: Զարմանքով ու անհարմարության զգացումով՝ Մոնթեն փորձում է ետ հրել նրան:

— Ցո՛խ, — բղավում է նա, — ո՛չ:

Մոնթեն բնազդաբար կռանում է և կնոջը թևից բռնած բարձրացնում.

— Ի՞նչ ես անում, — թուրքերեն հարցնում է նա, — երբեք այդպիսի բան մի՛ արա:

Դրանից ոչ շատ անց տեսախցիկը դեռ աշխատում է, երբ Մոնթեն և իր մարտիկների մի խումբ, իրար գլխի հավաքված, ձեռքից ձեռք են փոխանցում տեղական «Իդի սու» հանքային ջրի մի շիշ: Նրանք հենց նոր լսել են ռադիոյով, որ ուրիշ ռազմաճակատից եկած զորքերը գրավել են Քելբաջար քաղաքը:

— Քելբաջարը մե՛րն է, — բղավում է Մոնթեն:

Նելսոնը մի մեծ կում է անում ու շիշը տալիս Մոնթեին: Դրսից եկածը գուցե և խելագար է, բայց այս անգամ նա իրենց հաղթանակի առաջնորդեց:

Երբ Մոնթեն շաբաթ օրը՝ ապրիլի 3-ին, մտավ Քելբաջար քաղաքը, նա գտավ մաքուր, բայց անկյանք ցուցափեղկերի մի շարան ու մի քանի հավ: Քաղաքի բնակիչներն այնպիսի շտապողական վիճակում էին հեռացել, որ չէին մտածել հավերին վերցնել որպես ճանապարհի համար ուտելիք: Կյանքի մյուս նշույլը քաղաքի կենտրոնով անցնող ճանապարհի վրա պարապ կանգնած զրահամեքենան էր:

— Շնորհավորո՛ւմ եմ, — բղավեց Մոնթեն զրահամեքենայի վրա նստած մի մարտիկի, որ լքված քաղաքը Մոնթեի զինվորներից անմիջապես առաջ մտած զորախմբերից մեկի անդամ էր:

Վարլենիսից եկած զինվորները Մոնթեից շուտ Քելբաջար քաղաքը մտածների թվում էին: Ինչպես պարզվեց, խմբի ղեկավարը՝ կարմիր բերետով հրամանատարը, որ խոսում էր տարօրինակ բարբառով, Մոնթեի հին ծանոթներից էր: Շիշկոն Հայաստան էր եկել երկու ու կես տարի առաջ, ընդհատակի իր նախկին ընկեր «Տիմոթի Շոն Մաք-Քորմիքից» ուղիղ 20 օր հետո: Մարսելցին Հայաստան էր մտել իր 47 անձնագրերից մեկով, այս անգամ՝ իտալականով, Անջելո Ռոսսետտի («Կարմիր հրեշտակիկ») անունով: Քելբաջարի գրոհի սկզբից ի վեր Մոնթեն լսել էր Շիշկոյի արշավանքի մասին, բայց, ի թեթևություն իրեն, իր և իր օտարացած ընկերոջ ճանապարհները չէին հատվել:

Զորը հանդարտ էր: Քելբաջարի հարձակումն ավարտված էր: Մի վճռական գրոհով հայ մարտիկներն ապահովել էին Արցախի ողջ արևմտյան թևը՝ Մռավի լեռներից՝ հյուսիսում, մինչև Լաչինի միջանցքը՝ 90 կիլոմետր դեպի հարավ: Քելբաջարի գրավման շնորհիվ նրանք վերահսկեցին Արցախի ու մայր Հայաստանի միջև ընկած՝ 3000 քառակուսի կիլոմետրանոց մի՝ սարերի ու ձորերի դոտի: Այսպիսով, Մոնթեն և մյուս մարտիկներն Արցախը միացրել էին Հայաստանի Հանրապետությանը՝ միաժամանակ ամրացնելով պաշտպանական դիրքերը հյուսիսում: Իրենց տրամադրության տակ ունենալով անառիկ ու տարածքի վրա իշխող բարձունքներ՝ 100-200 մարտիկներ կարող էին այժմ պաշտպանել Մռավի լեռնանցքներն ադրբեջանցիների հակահարձակումից՝ ազատելով Արցախի մնացած ուժերին՝ հարավի ու արևելքի ռազմաճակատները տեղափոխվելու համար:

Քելբաջարը գրավված էր, բայց հաղթանակը Մոնթեի լավագույն զինվորներից 40-ի կյանքն արժեցավ: Ադրբեջանական աղբյուրները հաղորդում էին, թե նույն չորսօրյա ժամանակահատվածում իրենց 100 զինվոր էր զոհվել, սակայն նրանք հավանաբար քիչ էին հաշվել. մոտ 70 ադրբեջանցի պաշտպաններ ընկան միայն Գանձակի խաչմերուկում ապրիլի 2-ին: Զոհերի ճշգրիտ թիվը չիմացվեց, բայց մի բան պարզ էր. բացի զինվորականներից, ադրբեջանական կողմից նաև խաղաղ բնակիչներ էին զոհվել: Որոշ գյուղացիներ վախից խուսափել էին դուրս գալ ասֆալտապատ ճանապարհ և, հայտնվելով բարձր լեռնային արահետների ու լեռնանցքների ձնաթմբերի մեջ, սառել-մահացել էին:

Երբ հայկական կամ ադրբեջանական կողմն անհաջողություն էր կրում կռվի դաշտում, հռետորներն ու նախարարները Երևանում ու Բաքվում պարտության պատճառ էին համարում մյուս կողմին Ռուսաստանի ցույց տված օգնությունը: Ադրբեջանցիների հարձակումներից հետո հայերը մեղադրում էին Ռուսաստանին՝ Ադրբեջանի կողմը բռնելու համար, իսկ հայերի հարձակումներից հետո ադրբեջանցիները մեղադրում էին Ռուսաստանին՝ Հայաստանի կողմը բռնելու համար: Այսպիսով, Քելբաջարից հետո զարմանալի չէր, որ Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի գլխավոր խորհրդական Վաֆա Գուլուզադեն հայտարարեց. «Հայկական բանակը մերից թույլ է, բայց, ինչպես միշտ, ռուսական բանակն է կռվում»: Գուլուզադեն սխալվում էր. Քելբաջարի գրոհի ժամանակ մարտադաշտում ներկա միակ սլավոններն ադրբեջանական

կողմում կռվող վարձկաններն էին: Հայերի կողմից Քելբաջարում ռուսներ չէին կռվել, ոչ էլ ռուսներն էին ծրագրել հարձակումը. այդ պարտականությունը բաժին էր ընկել Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության սպիտակահեր գեներալ-գնդապետ Դարիբալթայանին:

Այդուհանդերձ, սա չէր նշանակում, թե Կրեմլը չողջունեց հայերի՝ Քելբաջար մտնելու մասին լուրը: Հարձակումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Ռուսաստանի դեմ ռազմական սպառնալիքները սաստկանում էին. Վաշինգտոնը ցանկանում էր ՆԱՏՕ-ն ընդլայնել մինչև Ռուսաստանի արևմտյան շեմը, ռազմական բազաներ տեղակայել Միջին Ասիայում և չեղյալ հայտարարել բալիստիկ հրթիռների դեմ համաձայնագիրը: Հյուսիսային Կովկասում Չեչնիան տատանվում էր անջատողական ապստամբության սահմանագծին, մինչ Հայաստանի հյուսիսային հարևանը՝ նորանկախ Վրաստանի Հանրապետությունը երեք քաղաքացիական պատերազմներում քայքայում էր ինքն իրեն, իսկ նախկին խորհրդային հանրապետություն Ադրբեջանը դարձյալ հայացքն ուղղել էր Ռուսաստանի վաղեմի թշնամի Թուրքիայի կողմը, որի ղեկավարները քնարական զեղումների մեջ էին ընկնում՝ Կովկասն ու Միջին Ասիան «Թուրքական դարաշրջանի» համար «ցատկահարթակի» վերածելու կապակցությամբ: Միայն Հայաստանը կարող էր Ռուսաստանի հավատարիմ դաշնակիցը լինել հարավային Կովկասում:

Երբ Մոնթեի մարտիկները մտան Թաղթաու գետի կիրճը, նրանք կտրուկ կերպով ընդհատեցին ԱՄՆ-ի կողմից հովանավորվող՝ Արցախի ապագային վերաբերող «խորհրդակցությունները» Ժնևում: Քելբաջարի գրոհն ուժերի հարաբերակցությունը հարավային Կովկասում փոխեց հօգուտ Ռուսաստանի՝ ի հաշիվ Անկարայի: «Այն, ինչ պատահեց այսօր, արմատապես փոխում է տարածաշրջանի ռազմական և աշխարհաքաղաքական իրավիճակը, — հայտարարեց Ադրբեջանի Պաշտպանության նախարարության խոսնակ Խաֆիզ Գայիբովն ապրիլի 4-ին: — Հայկական ուժերի գրաված տարածքը Լեռնային Ղարաբաղի չափ է»: Նախագահ Էլչիբեյը 18-27 տարեկան տղաների զորահավաք հայտարարեց, մամուլի գրաքննություն սահմանեց և պարետային ժամ, նաև արգելեց ցույցերն ու գործադուլները՝ վաթսունօրյա համազգային հատուկ դրության միջոցառումներ:

Այդ ընթացքում Երևանում նստավայրի պահակներն ընդունում էին խոժոռադեմ դիվանագետների, որոնք բողոքի նամակներ էին բերում Տեր-Պետրոսյանի գրասենյակը: ԱՄՆ Պետական դեպարտամենտն առաջիններից էր, որ ապրիլի 5-ին, երկուշաբթի, «խիստ բողոք» արձանագրեց: «Միացյալ Նահանգների կառավարությունը դատապարտում է այս հարձակումը», — կոկռում էր պետական քարտուղար Ուորրեն Քրիստոֆերը՝ մի մարդ, որ հրճվանքով էր լցվել, երբ Թուրքիան հարձակվեց Իրաքյան Քրդստանի վրա, իսկ Իսրայելը՝ Լիբանանի: Հետո Եվրոպական համայնքը և «Միացյալ ազգերի անվտանգության խորհուրդը» հետևեցին նրանց օրինակին: Թուրքիան և Պակիստանը համատեղ պաշտպանեցին ՄԱԿ-ի 822 որոշումը, որ կոչ էր անում անմիջապես դուրս բերել «էթնիկ հայկական ուժերը» Քելբաջարից և «անհապաղ հանել օկուպանտներին Քելբաջարի շրջանից ու Ադրբեջանի՝ վերջերս գրավյալ տարածքներից»: Որոշումն անցավ միաձայն:

ՄԱԿ-ում Թուրքիայի դեսպան Մուսթաֆա Աքսինը հայտարարեց, թե Թուրքիան «թույլ չի տա, որ որևէ մեկը, որևէ մեկը գրավի ադրբեջանական տարածքները»: Անկարայի նրա գործընկերները ճանաչեցին այն հրամանատարի անունը, որ Քելբաջարի հարձակման ժամանակ առաջնորդել էր հիմնական ուժերին: Անցյալ հուլիսին Թուրքական «Հյուրրիեթ» թերթը հաղորդել էր, թե «Գաղտնի բանակի» մարտիկ Մոնթե Մելքոնյանը, որ հարձակում էր գործել Թուրքիայի դեսպանատների պաշտոնյաների վրա Հռոմում ու Աթենքում, Լեռնային Ղարաբաղում կռվում է որպես հրամանատար, իսկ «Հյուրրիեթի» հրապարակումից մի երկու օր հետո, 1992 թ. հուլիսի 23-ին, Թուրքական «Միլլիեթ» օրաթերթի առաջին էջի վրա խոշոր տառերով ազդարարված էր. «Հայ ահաբեկիչը վերջերս դարձել է հրամանատար»:

Անկարայի հայտարարությունները գնալով ավելի մարտաշունչ էին դառնում: «Թուրքիան պիտի ատամներ ցույց տա Հայաստանին», — ապրիլի սկզբին հայտարարեց Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը: Հետո, երբ Թուրքական ուղղաթիռներ, տանկեր և հետևակ էր կուտակվել Հայաստանի սահմանի մոտ, Օզալը բարձրաձայն դատողություններ էր անում. «Ի՞նչ վնաս, եթե սահմանի մոտ զինավարժություններ կատարող Թուրքական զորքերը մի քանի ռումբ գցեն հայկական կողմի վրա»: Համարյա 1 տարի առաջ, Շուշիի անկումից անմիջապես հետո, ԱՊՀ ռազմական ղեկավար գեներալ Եվգենի Շապոշնիկովն արդեն պատաս-

խանել էր Օզալի հարցին՝ զգուշացնելով «երրորդ համաշխարհային պատերազմից, եթե Թուրքիան ներգրավվի Լեռնային Ղարաբաղի խնդրի մեջ»:

Կարծես ծաղրելով Ռուսաստանի նախազգուշացումները, Օզալն ուղևորվեց Միջին Ասիայի նախկին խորհրդային 5 հանրապետություններ՝ Ադրբեջանի համար օգնություն հայցելու նպատակով: Ապրիլի 14-ին, Բաքվի մամլո ասուլիսում, Թուրքիայի նախագահը հայտարարեց. «Մենք բոլոր անհրաժեշտ քայլերը կձեռնարկենք, այդ թվում՝ Ադրբեջանի հետ ռազմական դաշինք կնքելը, եթե Ադրբեջանի ու Հայաստանի միջև կռիվը չդադարի»:

Երեք օր անց, ապրիլի 17-ին, Օզալը 66 տարեկան հասակում մահկանացուն կնքեց սրտային անբավարարությունից: Անկարայի պաշտոնյաները ենթադրեցին, թե Թուրքիայի նախագահի տենդագին ուղևորությունն էր հանգեցրել մահվան: «Գաղտնի բանակի» նախկին մարտիկ Մոնթեն չէր կարող ինքն իրեն չչնորհավորել՝ Թուրգութ Օզալի մահվանը նպաստելու համար: Օզալը Թուրքիայի այն ղեկավարն էր, որի հանդեպ նա վաղուց հակակրանքով էր լցված:

Հարևան Իրանը ջանում էր պաշտոնապես չեզոք դիրք գրավել, թեև միացել էր հայերի հարձակումը Քելբաջարի վրա դատապարտած պետություններին: Իրանն արդեն խեղդվում էր Աֆղանստանից ու Իրաքից եկած փախստականներից: Ամենից քիչ նրան պետք էին այն տասնյակ-հազարավոր տեղահանվածները, որ Ադրբեջանից գալիս էին հյուսիս-արևմտյան Իրանի՝ ադրբեջանցիներով բնակեցված տարածքներ, որպեսզի զրգռեն ադրբեջանական ազգայնամոլությունն Իսլամական Հանրապետությունում: Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին սպառնաց, առանց մանրամասնելու, որ «ավելի խիստ դիրքորոշում կընդունի», եթե կռիվը շարունակվի:

Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանը Թեհրանում էր, երբ հրանոթները սկսեցին դղրդալ Քելբաջարի կիրճերում: Դատելով նրա շփոթված արձագանքից՝ նրան չէին տեղեկացրել հարձակման մասին, մինչև որ տանկերը մտել էին Թարթառ գետի կիրճը: Հենց որ լուրը նախագահին հասավ, նա մի զայրացած նամակ կրակեց պաշտպանական ուժերի ղեկավարությանը: Տեր-Պետրոսյանը վստահ էր, թե հարձակումը հանգեցնելու էր միայն Հայաստանի դիվանագիտական մեկուսացմանը, խանգարելու Անկարայի հետ բոլոր կարևոր առևտրական համաձայնություններին և ավելի բարդացնելու խաղաղ բանակցությունների՝ առանց այդ էլ բարդ գործընթացը, որ անհրաժեշտ էր՝ տարածաշրջանում կայունություն հաստատելու և օտարերկրյա ներդրումներ ապահովելու համար:

Տեր-Պետրոսյանն սկսել էր իր նախագահությունն Արևմուտքին հաճոյանալու վճռականությամբ՝ Մոսկվային արհամարհելու, Թեհրանից հեռու մնալու և ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ մերձենալու ճանապարհով: Բայց այժմ, երկամյա դիվանագիտական նախերգանքներից ու Անկարային զիջումներից հետո, պարզ էր, որ Տեր-Պետրոսյանի «նոր մտածողությունը» ձախողվել էր. Քելբաջարի գրոհի հետևանքով ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան հարվածեց Հայաստանին տնտեսական էմբարգոյով և սպառնաց գրավել երկիրը:

Այն փաստը, որ Արևմուտքը չէր ցանկանում մեղմել Անկարայի թշնամանքը, երևի զարմացրել էր Տեր-Պետրոսյանին ու նրա՝ լավ հագնված խորհրդականներին, բայց Մոնթեն զարմացած չէր: Ջարեքդարի գրոհից մի քանի ժամ առաջ տված մի տեսահարցազրույցում նախկին դպրոցական ուսուցիչը կոկորդը մաքրեց և իրավիճակն ամփոփեց այսպես. «Միացյալ Նահանգները վերին աստիճանի սերտ հարաբերություններ ունեն Թուրքիայի հետ: Նրանք շատ հարցերում Թուրքիային են ապավինում: Թուրքիան մի տեսակ նրանց խամաճիկն է տարածաշրջանում: Թուրքիան քիչ թե շատ անում է այն, ինչ նրանք ուզում են: Այն ուժեղ բանակ ունի: Միացյալ Նահանգներն ուզում են այդ բանակն օգտագործել՝ արաբական պետությունները, Իրանը վերահսկելու և ԱՄՆ-ի քաղաքականությունը տարածաշրջանում ուժեղացնելու համար: Ուստի Միացյալ Նահանգները պատրաստ են ամբողջովին անտեսել բազմաթիվ ժողովուրդների, որոնց թվում՝ հայ ժողովրդին»:

Այսպես, 7 կարճ նախադասությամբ, Մոնթեն բնորոշեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներն՝ ավելի հստակ ու իրատեսորեն, քան Տեր-Պետրոսյանի խորհրդականների գրած բոլոր մեկնաբանությունները:

Բայց աշխարհաքաղաքականությունը վերջին բանն էր Մոնթեի մտքում, երբ նա բարձրանում էր Մարտունու շտաբի աստիճաններով ապրիլի 5-ի առավոտյան ժամը 5:40: Նա Մարտունուց հեռացել էր ուղիղ մեկ ամիս առաջ՝ մարտի 5-ին, և այդ ամսվա վերջին շաբաթվա ընթացքում քնելու համար հրամանատարը կա-

բողացել էր ընդամենը մի քանի ժամ փախցնել՝ ջարդուխուրդ եղած իր ծառայողական մեքենայի հետևի նստարանին: Այժմ երազում էր մեկնվել և մի քանի ժամ անդադար մրափել: Պարզվեց, սակայն, որ չկար այն սենյակի բանալին, որտեղ նրա թախտն էր: Այսպես հրամանատարը՝ նրանցից մեկը, որ հենց նոր պատերազմի եզրին էին բերել Ռուսաստանն ու Թուրքիան, միջանցքում մի քնապարկ բացեց ու ներս սողոսկեց:

20 րոպե էր անցել, ինչ Մոնթեն աչքերը փակել էր, երբ նրան արթնացրին. թշնամին հարձակվել էր «Հովիկ 1» խրամատի վրա ու գրավել այն: Մոնթեն վեր ցատկեց, գոտին կոճկեց ու իր մարտիկներին հետ տարավ կռվի: Հաջորդ օրերին կռիվը շարունակվում էր առանց ընմիջման. «Հովիկ 1» և Սևանի խրամատների մոտ (ապրիլի 8 և 9), Կզիլկայա լեռնագագաթին (ապրիլի 10-ից սկսած), «Վալոդ» ու «Ռաֆո 5» խրամատների մոտ (ապրիլի 13-ից սկսած), «Հովիկ 1», «Սևան 4» ու «Վալոդ» խրամատների մոտ (ապրիլի 14-ից սկսած), Կրասնի Բազարի ու Մաճկալաշենի ճակատներում (ապրիլի 16-ից սկսած) և այդպես շարունակ: «Մեր կողմը շատ ադրբեջանցի է սպանել», — գրեց Մոնթեն իր օրագրությունում, «Վալոդ» խրամատի մոտ ապրիլի 13-ին տեղի ունեցած կռվից հետո: Բայց այդ հաղթանակները նրա 20-ից ավելի մարտիկների կյանքն արժեցան, և, ինչպես միշտ, լավագույնները միշտ առաջինն էին սպանվում:

Երբ տեղացի թղթակից Վարդգես Բաղրյանն ապրիլի վերջին շաբաթվա մի օր Ստեփանակերտում հանդիպեց Մոնթեին ու հրավիրեց նրան հեռուստահարցազրույցի, հրամանատարը գլուխն օրորեց և փորձեց հեռանալ.

— Ես իսկապես կշտապեմ:

Բաղրյանը պնդեց՝ հավաստիացնելով նրան, որ հարցազրույցը միայն կես ժամ է խլելու: Մոնթեն մի հայացք գցեց ժամացույցին ու գիջեց.

— Դե լա՛վ, գնացինք:

Հաջորդ պահին նա Բաղրյանին նայում էր հեռուստաստուդիայի բարձր հարթակից: Լրագրողը նպատակադրվել էր ինչ-որ բան բացահայտել լեգենդար հրամանատար «Ավոյի» անվան տակ թաքնված մարդու մասին:

— Ավո՛, երբ դու մենակ ես մնում ինքդ քեզ հետ, ինչի՞ մասին ես մտածում, — հարցրեց նա:

Մոնթեն ներողություն հայցելու շարժումով ուսերը կծկեց և

պատասխանեց.

— Ընդհանրապես կմտածեմ գործիս մասին, նույն բանի մասին: Այսինքն գործը այնքան ծանր է, որ միայն անոր մասին մտածելու ժամանակ կըլլա, իսկապես:

Զհիասթափվելով՝ Բաղրյանը հարցրեց.

— Ազատ ժամանակ ունենո՞ւմ ես արդյոք, և եթե ունենում ես, ինչո՞վ ես զբաղվում:

— Ո՛չ, ազատ ժամանակ չունիմ, իսկապես: Դժբախտաբար, դժբախտաբար չկա: Ադոր համար ոչ մեկ ուրիշ բանով չեմ զբաղվիր, — պատասխանեց Մոնթեն՝ կրկին մեղավոր շարժումով:

Հարցազրույցն ավարտելուց առաջ Բաղրյանն իր հյուրին հարցրեց. երբևիցե եղե՞լ են պահեր, երբ նա ափսոսել է Արցախ գալու համար:

— Զբսենք, որ կափսոսամ, — պատասխանեց Մոնթեն, — անշուշտ պահեր կան, որ որոշ մարդկանց անկարգապահ ըլլալը, կամ գիտակցության ցածր մակարդակի պատճառով ջիղերդ գրեթե պայթելու աստիճանի կհասնին: Այս տեսակ բաներ շատ են: Բայց չբսեմ, որ կզղջամ, որ եկած եմ Արցախ: Արցախը իմ հայրենիքիս մեկ մասն է, և ինչ որ պետք է ընենք այստեղ, նաև ես պիտի ընեմ:

Շուտով ուրիշ «բաներ» էին լինելու: Մայիսի 4-ին Լաչին գյուղի ավերակների մեջ Մոնթեն հանդիպեց իր հին ընկեր գնդապետ Հարությանին՝ մեկ այլ ծրագրված հարձակման համար հետախուզություն վարելիս: Այս անգամ նշանակետը Կուբաթլին էր՝ Լաչինից հարավ, Հյուսիսում Քելբաջարի և հարավում Իրանի հետ սահմանի միջև գտնվող մի փոքր հողակտոր: 18 ժամ Լաչինից հարավ գտնվող խոտածածկ բլուրների վրա թափառելուց և հեռադիտակով նայելուց հետո, նրանք թեթև անձրևի տակ հետ գնացին դեպի ծառայողական մեքենան: Դեպի Լաչին վերադարձի ճանապարհին մի հարբած զինվոր պահակակետում ինքնաձիգը բարձրացրեց ու կրակեց մեքենայի վրա: Կոմիտասը կանգ առավ, իսկ Մոնթեն, ինքնաձիգը լիցքավորելով, դուրս թռավ մեքենայից: Զինվորն ու Մոնթեն մոտեցան իրար՝ ինքնաձիգներն իրար վրա պահած, մինչև կանգնեցին դեմ առ դեմ: Հարությանը դուրս ցատկեց մեքենայից ու բռնեց հարբածի ինքնաձիգի փողից, բայց երբ նա դեպի վար էր հրում այն, ինքնաձիգը կրակեց, և երկու գնդակ մտան գնդապետի ձախ ազդրը: Հարբած զինվորին ձերբակալելուց հետո Կոմիտասը Հարությանին տարավ մոտակա գյու-

ղի պոլիկլինիկան: Այնտեղից Հարոյանին տեղափոխեցին Երևան բուժման:

Մոնթեն Հարոյանի հետևից գնաց Երևան՝ մի ընկերոջ թաղմանը ներկա լինելու: Մայիսի 9-ին, նախքան Մոնթեն կվերադառնար Մարտունի, Սեղան ու Կոմիտասը, հայտնվելով «Էրեբունի» օդանավակայանում, հետևում էին նրան: Այնտեղ, ինքնաթիռների մեջ, «նա երջանիկ էր՝ ինչպես մանուկն իր սիրելի խաղահրապարակում», – հիշում էր Սեղան: 30 տարի առաջ Մոնթեն երևակայել էր, թե մեծանալով արծիվ է դառնալու: Այժմ, խցկվելով հին ՍՍՍՌ ռազմական ինքնաթիռի խցիկը, նա հայտարարեց.

– Ուզում եմ սրանով թռչել սովորել:

– Զբաղվի՛ր քո գործով, իսկ ինքնաթիռները թո՛ղ օդաչուներին, – խորհուրդ տվեց մեկը:

Արհամարհելով դիտողությունը՝ Մոնթեն պտույտ եկավ օդաչուի աթոռին և աղմուկով շարժեց ղեկը: Մի պահ նա դարձավ այն տղան, որ իր ծննդավայրում սովորություն ուներ գյուղատնտեսական տեխնիկայի կայանում ցատկոտելու տրակտորների նստարաններին:

Երբ մայիսի կեսին Մոնթեն վերադառնում էր Մարտունի, իր շտաբի ճանապարհին, պահակի տնակի կողքին, կեղտափոսի մեջ մի գոմեշ էր լող տալիս: Արցախում ամառ էր: Իր գրասենյակում կրկին հաստատվելուց քիչ անց նա հյուրընկալեց բրիտանական ազնվականությանը՝ ի դեմս բարոնուհի Քերոլայն Քոքսի՝ Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակի: Հակառակ իր պես Պահպանողական կուսակցության անդամ, վարչապետ Մարգարեթ Թեթչերի, որ հստակ ադրբեջանամետ դիրքորոշում ուներ, լեդի Քոքսը պատերազմում հայերի կողմն էր բռնել: Մոնթեին Ստեփանակերտում՝ «Պաշտպանության կոմիտեի» շտաբում անցյալ ամառ հանդիպելուց ի վեր, խստաբարո բարոնուհին հիացած էր դատապարտված ահաբեկիչով, որ ամոթխած ժպտում էր ու ծուռտիկ համեմատություններ անում. «Ոչ ոք իրականում հաճույք չի ստանում պատերազմելուց, – ծոր էր տալիս Մոնթեն, – պատերազմելը նման է զուգարան մաքրելուն: Դա կեղտոտ աշխատանք է, բայց պիտի անես, թե չէ ավելի վատ կլինի»:

Քոքսի շքախումբը գլխավորում էր նախկին ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը, որ վերջերս երես էր դարձրել մարքսիզմ-լենինիզմից՝ որդեգրելու համար Դեյլ Քարնեգիի անպարտագիծ իմաստությունը: Երեկոյին մոտ Բալայանը Մոնթեին ու Քոքսի պատվիրակությանն ուղեկցեց Գիշի գյուղը: Երբ նրանք բարձրանում էին բլուրն ի վեր, դեպի գյուղապետի տունը, երեխաները վազվզում էին ու բղավում.

– Ավո՜ն է, Ավո՜ն է:

Նրանցից ամենահամարձակները փորձում էին դիպչել իրենց հերոսի համազգեստի թևքին:

Մառի տակ մի երկար սեղան էր բացված՝ թարմ հացով, մածունով, կանաչեղենով և գառի խաշլամայով: Մոնթեն աչքերը հառում էր ափսեին, երբ պետք էր դիմանալ մինչև սովորական կենացների ավարտը, իսկ հետո բարձրացնում գոմեշի մածունով լի բաժակը: Մարտունու ժողովուրդը սովորել էր Մոնթեի ժուժկալությանը և այլևս նրան չէր ստիպում կենաց խմել մածունի փոխարեն օղիով:

Ճաշի վերջում մի խումբ երեխաներ՝ մեծերից ժառանգած իրենց լավագույն հագուստներով, մի աններդաշնակ մեղեդի երգեցին, որի խոսքերի հեղինակը դպրոցի ուսուցիչ Նորիկն էր.

Փա՜ռք, Ավո՛ ջան, փառքդ շատ,
Մեր սիրելի հարազա՛տ,
Քեզ նմաններ թող լինեն
Հայության մեջ շատ ու շատ:

Առաջին տան ժամանակ Մոնթեն նստած մնաց՝ գլուխն իջեցնելով և զսպելով ժպիտը, որ կիսով չափ ամոթխածություն էր ու կիսով չափ զարմանք՝ երկուսն էլ շատ: Երբ երգչախումբը եռանդով մի նոր տուն սկսեց, նա կանգնեց, բռնեց ամենափոքր երգողին՝ մի 6 տարեկան փերիի, և նստեցրեց նրան իր ուսերին: Բռնելով նրա սրունքներից՝ նա մխրճվեց երեխաների մեջ, որոնք այժմ մի ուրախ ոտանավոր էին բղավում՝ հայհոյելով «Թուրքերին, սրիկա էշերին»:

Գնդապետ Հարոյանի ապաքինումը գնդակի հասցրած վերքից հետաձգեց Կուրաթլիի օպերացիայի նախապատրաստությունը: Այդ միջոցին Մոնթեին կանչեցին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն: Սակայն, երբ մայիսի 25-ի երեկոյան նա եկավ Երևան, պարզվեց, որ Պաշտպանության նախարարությունում կայանալիք հանդիպումը մի-երկու օրով հետաձգվել է: Ամիսների ընթացքում առաջին անգամ Մոնթեն ու

Սեղան միասին էին՝ ժամանակ ունենալով քննարկել իրենց ծրագրերը:

Գիշերն անկողնում և հետո առավոտյան նախաճաշի ժամանակ Մոնթեն բարձրացրեց երեխաների հարցը: Դեռևս դեկտեմբերին նա հավատացած էր, թե պետք էր սպասել պատերազմի վերջին, հետո ունենալ առաջին երեխան: Բայց անցած ամիսների ընթացքում պարզ էր դարձել, որ պատերազմը շուտ չէր ավարտվելու: Նրանք որոշեցին, որ Սեղան պետք է հղիանար հունիսին՝ իրենց ամուսնության երկրորդ տարելիցից առաջ, ապա միանար ամուսնուն՝ հղիությունը միասին անցկացնելու համար:

Մինչև ընտանիք ստեղծելը նրանք պիտի մի «բուն» գտնեին: Չնայած Մոնթեն գերադասում էր Արցախը, նրանք համաձայնության եկան, որ պետք էր տուն գնել Երևանում, որտեղ Սեղայի համալսարանն ու ընկերներն էին: Անշարժ գույքի մի կտոր Երևանում արդեն գրավել էր նրանց ուշադրությունը. դա Բաղրամյան պողոտայից մի քիչ ներս ընկած, երկբնակարան մի կեսքարե-կես-բետոնե տուն էր՝ երեք փոքր ննջասենյակներով, նեղլիկ նախասրահով և մեքենան կանգնեցնելու տարածությամբ այգիով: Դա խրճիթի պես մի բան էր, բայց երբ Մոնթեն առաջին անգամ խոհանոցի պատուհանից նայեց Արարատ լեռան ձյունածածկ գագաթին, որ ուրվագծվում էր Երևանի մշուշից վեր, նա հայտարարեց.

— Սա լավ տուն է:

Չնայած Մոնթեն տան տեր էր դարձել, նա հեռու էր նստակյաց կյանքի անցնելուց:

«Ի՞նչ եք անելու, երբ պատերազմն այստեղ ավարտվի», — հարցրել էր նրան Fresno Bee թերթի մի թղթակից: «Մասնակցելու եմ հաջորդին», — պատասխանել էր նա՝ առանց մի պահ անգամ վարանելու: Երբ Սեղան հարցրեց նրան, թե որտեղ կուզի գնալ Մարտունուց հետո, նա նշեց մոտակա Հադրութի կամ Մարտակերտի շրջանները: Մի ուղղության մասին, սակայն, խոսք լինել չէր կարող. դա նրա ծննդավայրն էր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Դեռ 1991 թ. աշնանը Մոնթեն նամակ էր ուղարկել մեր հորը՝ խնդրելով, որ նա դադարեցնի դիմել մի կոնգրեսականի՝ իր համար ԱՄՆ-ի անձնագիր ստանալու նպատակով: «Ինձ ամենևին չի անհանգստացնում՝ «Թույլ կտա՞ն» ինձ մտնել ԱՄՆ, թե ոչ, — գրել էր նա: — Ես ինձ լավ ու երջանիկ եմ զգում՝ որտեղ որ ե՛մ»: Բացի այդ, ինքը կարող էր յոլա գնալ առանց ամերիկյան անձնագրի, քանի որ արդեն ուներ երկու՝ խնամքով կեղծված խորհրդային-ռուսական անձնագիր, որոնցից մեկը նույնիսկ իր իսկական անունով ու ծննդյան թվով էր:

Ամսի 27-ին, Պաշտպանության նախարարությունում կայանալիք հանդիպմանը գնալու ճանապարհին, Մոնթեն իր մեքենայի մեջ վերցրեց Հարոյանին: Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը կոկորդը մաքրեց և ասաց, որ իրենք պիտի հրաժարվեն Կուբաթլիի վրա՝ հարձակումից: Մանուկյանը բացատրեց, թե Երևանի ու Բաքվի ներկայացուցիչները հենց նոր հայտարարել էին, որ ընդունում են Ռուսաստանի միջնորդությամբ հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիրը, և՝ որ նոր հարձակումը կոչնչացներ Քելբաջարից հետո Տեր-Պետրոսյանի կառավարության շահած դույզն-ինչ վստահությունը:

Մոնթեն հանգիստ լսում էր: Լուրը նրան չուրախացրեց, բայց նա, ինչպես միշտ, անշուշտ ենթարկվելու էր իր վերադասների որոշմանը: Դուրս գալով Պաշտպանության նախարարությունից՝ նա վստահ էր, որ իր աշխատանքը Մարտունիում ավարտված էր, և՝ որ հետագա քայլերի մասին մտածելու ժամանակն էր: Հրամանատարական նոր կառույցը գործում էր, և բոլորը՝ սպայական կազմից մինչև պահեստայինները, կռիվներում կոփված էին ու վստահելի: Կարծես ի հաստատումն այդ փաստի՝ լուր հասավ Երևան, որ Մարտունու զինվորները հենց նոր գրավել էին Ուլյան Դաղ բարձունքը հարավ-արևելյան Մարտունիում: Որպեսզի որևէ կասկած չմնար, որ Մարտունու զինվորները կարող էին հաղթանակ տանել առանց Մոնթեի ղեկավարության, Սեղան առաջարկեց նրան ներկա լինել հաջորդ կռվին, բայց ոչ որպես հրամանատար, այլ որպես դիտորդ:

Այդ երեկո՝ իրենց վերջին երեկոն, նախքան Մոնթեն վերադառնար ռազմաճակատ, նա իր կնոջ հետ գնաց ներկայացում դիտելու Պարոնյանի անվան թատրոնում՝ Հանրապետության հրապարակից ոչ հեռու: Նա արդեն որոշ ժամանակ իրեն մեղավոր էր զգում, որ իրենք գրեթե անուշադրության էին մատնել Սեղայի սիրած զբաղմունքները: Ներկայացումից հետո, մինչ Կոմիտասը նրանց մեքենայով հանրակացարան էր տանում, նրանք փողոցային վաճառողից մի տոպրակ «ադի-բուդի» գնեցին ու կիսեցին. դա հազվագյուտ հաջողություն էր այդ օրերի հետխորհրդային Երևանում: Մոնթեն դոփեց ատոիճաններով, վերցրեց իր մեջքի

պայուսակն ու ինքնաձիգը և հետ գնաց դեպի սպասող մեքենան՝ Մարտունի վերադառնալու համար: Սեդան նրա հետ ցած իջավ՝ ջրով լի գինու շշով: Մեքենայի մեջ մտնելուց առաջ Մոնթեն դարձավ իր կնոջը.

— Վստա՞հ ես, որ չես ուզում ինձ հետ գալ:

Մի պահ մտածելուց հետո Սեդան ասաց.

— Այո՛, կգամ:

Մոնթեն ժպտաց.

— Լավ, լավ... միայն մի երկու օր եմ բացակայելու. կգնամ ու շուտ հետ կգամ:

Կոմիտասը, մայթեզրից հեռանալով, շարժվեց Մաշտոցի պողոտայով ու արագությունների լծակը փոխեց: Երբ մեքենան մթան մեջ անհայտացավ, Սեդան ջուրը շշից լցրեց գետնին.

— Ջրի պես գնա՛, ջրի պես վերադարձի՛ր...

Գլուխ 18. Ջրի պես գնա՛

Մայիսի 28-ին Մարտունի վերադառնալով՝ Մոնթեն մի քանի հեկտար մշակովի հաշիշ հայտնաբերեց ավերված Ղարադաղլուի մոտ: Նա կասկածեց, որ տեղական խմբավորումներից մեկն էր ցանել հաշիշը՝ որպես արտահանելու ապրանք: Լուրն անհանգստացրեց Սեդային: Մարատի հետ բախումից հետո նա միշտ խնդրել էր ամուսնուն՝ չխառնվել տեղական «ընտանեկան գործերին»: Սեդան հիշեցնում էր, որ Մոնթեն զինվորական մարդ է և ոչ ոստիկան: Չնայած այդ խորհրդին՝ Մոնթեն որոշել էր դաշտն այրել: Բայց նախքան նա փոխհրաձգությունների միջև այդ անելու ժամանակ կգտներ, նրա հին ընկեր Արա Թորանյանը զանգեց Սեդային շտապ հաղորդագրությամբ: Մոնթեի հին ընկեր Շիշկոն խնդրել էր Թորանյանին, որն այդ ժամանակ այցի էր եկել Փարիզից, Մոնթեին տեղեկացնել հետևյալը. որ մարսելցուն ինչ-որ կերպ հայտնի էր դարձել, թե ով որ հաշիշ էր ցանել Ղարադաղլուում, նա էլ դաշտը շրջապատել էր ականներով՝ սահմանը խախտողներին դաս տալու համար:

Քանի որ Երևանի ու Մարտունու միջև ուղիղ հեռախոսակապ չկար, Սեդան պիտի հեռաձայներ Պաշտպանության նախարարություն Ստեփանակերտում և խնդրեր, որ Մոնթեին հայտնեն՝ իր հետ կապվի: Նա երեկոյան խոսեց իր կնոջ հետ, և Սեդան կրկնեց Շիշկոյի նախազգուշացումը: Երբ նա ավարտել էր, գծի մյուս ծայրում լսեց մտածկոտ «հմմ... հմմ»: Ականների մասին լուրը չէր, որ ստիպեց Մոնթեին կարկամել. նա արդեն հայտնաբերել էր վտանգը և դաշտն այրելու վերաբերյալ համապատասխան կարգադրություններ արել: Մոնթեն ավելի շատ մտածում էր այն փասատի մասին, որ իր օտարացած ընկեր Շիշկոն նեղություն էր կրել՝ Սեդային տեղեկացնելու վտանգի մասին:

Մոնթեն տանկով անցավ ականապատ հատվածն ու, մտնելով հաշիշի մեջ, դաշտը կրակ տվեց: Մուխը բարձրանալու հետ, սակայն, վտանգը միայն աճում էր. դաշտը դեռ ծխում էր, երբ Կոմիտասը հանկարծ կորցրեց Մոնթեի ծառայողական մեքենայի կառավարումը, և մի պահ թվաց, թե այն ձորն է ընկնելու ու ջախջախվելու: Կոմիտասն ու Մոնթեն դուրս թռան մեքենայից և տեսան, որ անիվներից մեկը համարյա առանցքից անջատված էր: Ինչ-որ մեկը թուլացրել էր անիվը, և ով էլ դա արած լիներ, պետք է որ իմանար այն, ինչ գիտեին Մարտունու բոլոր չափահասները.

հրամանատարի մեքենան ամեն օր վտանգավոր տեղերով էր անցնում:

Մարտունիում դարձյալ գործում էին նաև դիզելի գողերը, իսկ սահմանամերձ փոխհրաձգություններն անդադար շարունակվում էին: Ինչպես միշտ, Մոնթեն գիշերները բավարար չափով չէր քնում, և նրան բաժին հասած քունն ընդհատում էին թախտի մոտ դրված հեռախոսների զանգերն ու «ուոքի-թոքիների» խոխոջը: Նա սկսել էր աչքերն ավելի հիվանդագին թարթել, իսկ աջ ձեռքի ջղաձգումը, որ անցել էր մայիսի վերջին մի քանի օր Երևանում հանգստանալու շնորհիվ, նորից իրեն զգալ էր տալիս:

Անկառավարելի ստորագրություններից մեկի վրա բղավելու մի հատկապես կատաղի նոպայից հետո շտաբի սպաներից մեկը համոզեց Մոնթեին մաքուր օդի դուրս գալ: Վարդան անունով պարսկահայ այդ սպան Մոնթեի հետ դուրս եկավ՝ շտաբի հետևի խաղողի այգում զբոսնելու: Նրանք մի քիչ քայլեցին երեկոյան թուլացող արևի տակ, երբ Մոնթեն նկատեց կապույտ ու նարնջագույն թևերով մի փոքրիկ թռչուն: Դա սովորական տեսակ էր, բայց այդ մեկն ինչ-որ պատճառով չէր կարողանում թռչել: Մոնթեն բռնեց նրան ու գլուխը շոյեց: Մի խաղաղ ժպիտ կերպանափոխեց նրա դեմքը: Վարդանն առանց բառ ասելու հեռացավ՝ թողնելով, որ Մոնթեն ծիտիկին գուրգուրի:

Մոնթեի ձայնը տխուր էր, երբ հունիսի 10-ին նա զանգահարեց Սեդային: Նա բացատրեց, որ շտաբի անձնակազմը գարնան բերքը հավաքելու համար գյուղերն էր վերադարձել, իսկ փոխհրամանատար Մոսին իր հիվանդ մորաքրոջը տարել էր Երևան բուժման: Մոնթեն մենակ էր մնացել շտաբում և չէր կարող Երևան վերադառնալ իր ուզած ժամանակ: Նա կկարողանար արձակուրդ գնալ ամենաշուտը հունիսի 16-ին, չորեքշաբթի: Այդ օրն իրենք մի քանի օրով կանհայտանան՝ Սեդայի երեսնամյակը նշելու: Նրանք արդեն սենյակ էին պատվիրել Երևանից 40 մղոն դեպի հյուսիս գտնվող Վանաձոր քաղաքի «Արալեզ» հյուրանոցում, բայց դա գաղտնի էին պահում:

Սեդան իր ամուսնու ձայնի մեջ անհամբերություն զգաց: Ընայած պատերազմի վերջը չէր երևում, բայց արդեն ժամանակն էր ընտանիք ստեղծելու: Նրանք շուտով միասին էին լինելու, բայց Մոնթեն նախ պիտի մի փոքր գործ գլուխ բերեր:

Հունիսի 11-ի երեկոյան Մոնթեն բաց թողեց ընթրիքը, մի բաժակ մածուն խմեց շտաբի խոհանոցում և սովորականից շատ ավելի շուտ պառկեց իր թախտին:

Մի շաբաթ առաջ, 80 մղոն դեպի հյուսիս-արևմուտք, Սուրաթ Հուսեյնովի 709-րդ գումարտակի մի քանի հարյուր ապստամբ մարտիկներ Գանձակ քաղաքի մոտից սկսել էին իրենց արշավանքն արևելք՝ գլխավոր ճանապարհով դեպի Բաքու: Ադրբեջանի նախագահ Էլչիբեյը Քելբաջարի խայտառակ պարտության պատասխանատուներին վերաբերող վեճի առիթով իջեցրել էր Հուսեյնովի սպայական աստիճանը: Ապա նա զորք էր ուղարկել Գանձակի մոտ գտնվող ապստամբների կայազորի դեմ՝ պատերազմի ռենեգատ հերոսին բռնելու արյունալի փորձ ձեռնարկելով: Փորձը, սակայն, ձախողվել էր, և Հուսեյնովը պատրաստվում էր վրեժ լուծել: Երիտասարդ հրամանատարը երդվել էր Բաքուն գրավել, եթե Էլչիբեյը չթողներ Ադրբեջանի նախագահի պաշտոնը: Վախենալով քաղաքացիական պատերազմից՝ արևմտյան նավթային ընկերություններն սկսեցին իրենց աշխատողներին դուրս բերել Բաքվից: Դրանից մի քանի օր հետո Էլչիբեյը պետք է 10 միլիարդ դոլլարանոց պայմանագիր ստորագրեր Ադրբեջանի պետական նավթային ընկերության և արևմտյան կազմակերպությունների միավորման հետ, որի մեջ մտնում էին Amoco, Unocal, BP, Pennzoil ընկերությունները և այլ հսկաներ:

Քանի որ թշնամին ժամանակավորապես շեղված էր ու պառակտված, Մոնթեի Մարտունու զինվորները հայացքները դարձրին նույնանուն դաշտում գտնվող Աղդամ ադրբեջանական քաղաքին՝ նախապատերազմյան 50-հազարանոց բնակչությամբ: Աղդամ շրջկենտրոնն Ադրբեջանի՝ մեծությամբ երրորդ քաղաքն էր, Բաքվից ու Գանձակից հետո: Պատերազմից առաջ այն հարուստ գյուղատնտեսական քաղաք էր՝ շատրվաններով, թեյարաններով ու առանձնատներով: Բայց այդ ամենը փոխվել էր վերջին մի քանի տարվա ընթացքում: Պատերազմի սկզբում ադրբեջանական հրետանին Աղդամից ու շրջակայքից դժոխային կրակ էր թափել Ստեփանակերտի և ուրիշ հայկական քաղաքների ու գյուղերի վրա, որոնք գտնվում էին հրանոթների ու «Գրադի» հասանելիության սահմաններում: Հետագայում, երբ Արցախի ուժերը գրավեցին Աղդամից մի քանի կիլոմետր արևմուտք գտնվող բարձունքները, նրանք ադրբեջանցիներին ցուցադրեցին հակառակ ուղղությամբ թափվող դժոխային կրակի իրենց տարբերակը:

Արդյունքում երբեմնի՝ անտառակներով ու այգիներով ծածկված գեղեցիկ քաղաքում այժմ իշխում էին արկերից գոյացած փոսերը, իսկ տներից շատերը դատարկ էին: Եթե Արցախի մարտիկներին հաջողվեր գրավել Աղդամն ու քաղաքի շրջակա դաշտը, նրանք վերջապես կկարողանային Բաքվի գլուխը մտցնել, որ պատերազմը տանուլ է տրված. պետք է վերջ տալ անիմաստ զոհերին և ընդունել Արցախի անջատումն Ադրբեջանից:

Հունիսի 12-ի վաղ առավոտյան, հիմնականում հայաբնակ Մարտակերտ քաղաքը քարակույտի վերածած ադրբեջանցիների հարձակումից 1 տարի անց, Կոմիտասը շտաբում ողջունեց իր հրամանատարին: Մոնթեի հագին կանաչ կարճաթև շապիկ էր, քողարկաներկված շալվար, տեղական արտադրության սպորտային կոշիկներ և մի LED ձեռքի ժամացույց, որ նրան Ֆրանսիայից ուղարկել էր իր ընկերը: Սովորականի պես՝ նա չուներ ոչ գլխարկ, ոչ որևէ զարդ՝ բացի իր ամուսնական մատանուց: Նա երեք խմբով գնաց դեպի Աղդամի դաշտին նայող բարձունքները և սկսեց դիրքավորվել մոտ ժամը 3:00-ին՝ իր նախատեսածից փոքրինչ ուշ: Նրա մարտիկներն ու տանկերը պիտի գրոհեին բարձունքների ստորոտում՝ ադրբեջանական Մերզուլի ավերված գյուղում գտնվող կրակակետերը և այդ տարածքից դուրս մղեին թշնամու հրետանավորներին: Իսկ ավելի հեռահար նպատակ էր Աղդամի դաշտում հենակետի ստեղծումը՝ որպես դատարկված Աղդամ քաղաքը գրավելու առաջին քայլ:

Մոնթեն շրջեց ճակատային դիրքերում՝ հավաստիանալու համար, որ իր մարտիկները լավ էին հասկացել հրամանները. հրանոթներից ու տանկերից տարածքը ռմբակոծելուց հետո ենթահրամանատարներ Մավոն, Մերուժանն ու Նելսոնը պետք է իրենց մարտիկներին տաներն բարձունքներն ի վար, ապա բաժանվեին համապատասխան ուղղություններով: Մավոյի խումբը 4 տանկով առաջ էր գնալու դեպի Յուսուֆլանլի՝ Աղդամից 7 կիլոմետր արևելք գտնվող՝ 600 տնից բաղկացած գյուղը: Մերուժանի խումբը պիտի առաջանար դեպի Կիամաթլու հարևան գյուղը, իսկ Նելսոնի խումբը՝ դեպի Մերզուլի գյուղը: Թիկունքում ունենալով Արցախի զորամիավորումներ արևմտյան Ասկերանի շրջանից՝ յուրաքանչյուր խումբ պիտի դուրս մղեր տարածքում մնացած թշնամուն, հետո այրեր. գյուղերը՝ ադրբեջանցիներին պաշտպանությունից զրկելու համար, եթե նրանք փորձեին վերադառնալ ու նորից կրակակետեր գրավել: Իրենց առաջադրանքները կատարելուց հետո խմբերը պիտի հավաքվեին Մերզուլիի խաչմերուկում՝ նոր հրահանգներ ստանալու:

Մեկ ժամ շարունակ Մոնթեն հրամաններ էր տալիս: Հետո Կոմիտասը նրան, Սարիբեկին ու մի ռադիոօպերատորի տարավ Ջեյիլի բարձունքի հրամանատարական դիրքը, որ կոչվում էր «Խրամատ 08»: Նրանք ռադիոկապ հաստատեցին գիշերվա ժամը 3:30-ին: Մոնթեն միշտ նախընտրել էր մարտի ժամանակ ճակատագծում լինել, բայց այդ օրը նա պիտի մնար հրամանատարական դիրքում: Ժամանակն էր, որ նրա մարտիկները սովորեին կռվել առանց ճակատագծում իր առաջնորդության:

Առավոտյան ժամը 4-ին ադրբեջանցի մի հրամանատար զինվորներին արթնացրեց իրենց գիշերային ճամբարում՝ Գարգար գետի վրայով գցված կամրջի մոտ, դաշտի՝ Աղդամ քաղաքից ճիշտ արևելք գտնվող հատվածում: Խմբում մոտ 60 զինվոր կար, նաև՝ 1 տանկ և 2 զրահամեքենա՝ БМП-1 և БМП-2: Ադրբեջանցի հրամանատարն իր նորակոչիկներին տեղեկացրեց, որ թշնամին այդ առավոտ գրոհելու է: Նրանք սկսեցին իրենց հանդերձանքը հավաքել:

Մոնթեի հրամանով հրանոթներն ու տանկերը խախտեցին լուսաբացի լռությունը՝ ջարդվող տախտակների աղմուկ հանելով: Աղդամն ու շրջակա ադրբեջանական գյուղերը ռմբակոծելուց հետո՝ Մարտունու տանկերն ու զինվորներ տեղափոխող մեքենաներն սկսեցին իրենց սարերից իջնել դեպի թեթևակի թեքություն ունեցող Աղդամի դաշտը և հայտնվեցին երկկողմանի ասֆալտապատ ճանապարհին, որ ոլորվում էր Մերզուլիի լքված մրգատու այգիների ու ցորենի դաշտերի միջով: Մերզուլի չհասած, մի խաչմերուկում, նրանք բաժանվեցին երեք խմբի ու շարժվեցին դեպի իրենց նշանակետերը: Նելսոնի խումբը, առաջնորդող տանկով, հարավից մտավ Մերզուլի: Առավոտյան ժամը 10-ի մոտ Յուսուֆլանլիից ու Կիամաթլուից պարուրաձև ծուխ էր բարձրանում: Մավոյի խմբի գրոհի հետևանքով Յուսուֆլանլիում 5 գյուղացի էին սպանվել:

Բարձունքի վրա իր դիրքից Մոնթեն հոնքերը կիտած նայում էր հեռադիտակով: Նրա ռադիոն խշշում էր ենթահրամանատարների՝ դաշտից ուղարկած հաղորդագրություններից, բայց հյուսիս-արևմուտքում՝ Ասկերանում գտնվող իր զինակիցները որոշ ժամանակ դուրս էին ռադիոծածկույթից: Նրանց տանկերից մեկը կամ ձգանի էր դիպել, կամ խփվել արկով: Պայթյունի հետևան-

քով զոհեր էին եղել, և շարասյան առաջխաղացումը խափանվել էր՝ նախքան նրանք կավարտեին Թշնամու զորքերը Մերզուլիից հյուսիս գտնվող տարածքից դուրս մղելը: Քանի դեռ Թշնամու ուժերի՝ մոտակայքում դարանակալելու հավանականությունը կար, Արցախի մարտիկների համար վտանգավոր կլիներ Մերզուլիում դիրքեր գրավելը: Մոնթեն ի վերջո ռադիոյով կապվեց Ասկերանի հետ ու առաջարկեց, որ իր մարտիկներն ավարտեն օպերացիայի իրենց բաժինը: Այդ միջոցին Սարիբեկը մեկնվել էր մոտակա Թփերի մեջ՝ մի քիչ ննջելու:

Գարգար գետի մոտի ճամբարը լքած զորախմբի ադրբեջանցի հրամանատարն իր մարտիկներին ասել էր, և դա չէր համապատասխանում իրականությանը, թե Մերզուլի հայեր չէին ներխուժել: Ադրբեջանցի հետախույզների մի խումբ զրահամեքենայով հյուսիս-արևելքից մտավ Մերզուլի՝ կտրելով-անցնելով այն տարածքը, որն, ըստ Մոնթեի նախնական ծրագրի, Ասկերանի ուժերը պետք է որ գրաված ու մաքրած լիներին: Երկու կողմերն էլ չիմացան, թե ինչպես, երբ Մերզուլիի միջով անցնող գլխավոր ճանապարհին փոչին նոր էր նստել Նելսոնի տանկի թողած հետքի վրա, ադրբեջանական զրահամեքենան հայտնվեց նույն տեղում՝ անմիջապես Նելսոնի հետևից, մի հողե ճանապարհից, որ տանում էր դեպի հյուսիս-արևելքի դաշտերը: Զրահամեքենան պտույտ գործեց ու անցավ մի կարճ տարածություն՝ մինչև գյուղի հարավային ծայրը:

Մերզուլիի հյուսիսային ծայրից Նելսոնը ռադիոյով կապվեց ցլանման ենթահրամանատար Հովիկի հետ՝ ճարտար գյուղից, հաղորդելու համար, թե ինքը գրավել է մի տանկ և մի բեռնատար զինամթերք: Այս լսելով՝ Հովիկը դարձավ Մոնթեին ու թույլտվություն խնդրեց՝ նրա ծառայողական մեքենայով Կոմիտասի հետ դաշտ իջնելու և Նելսոնի տեղեկությունը ստուգելու համար: Քանի որ Նելսոնը կտրել-անցել էր Մերզուլիի մի ծայրից մյուսը, թվում էր, թե գյուղ մտնելն անվտանգ է:

— Ոչ, մեքենան ինձ պետք է, — առարկեց Մոնթեն:

Հովիկը պնդեց, և Մոնթեն ի վերջո զիջեց.

— Լավ, սպասի՛ր. միասին կգնանք:

Մոնթեն էլ, Հովիկի պես, շատ էր ուզում տեսնել, թե ինչ տանկ ու զինամթերք էր գրավվել: Թերևս բավական ժամանակ կար լուրը ստուգելու համար՝ նախքան Մոնթեն Մերզուլիում կմիանար իր երեք խմբերին՝ առաջանալու և գյուղից հյուսիս ընկած

դաշտերը մաքրելու նպատակով, ինչն Ասկերանի մարտիկներին չէր հաջողվել:

Արևն ուղիղ գլխավերևում էր, երբ Հովիկը, Մոնթեն ու Վարդան անունով սպան՝ Իրանից, Կոմիտասի հետ նստեցին մեքենան և շարժվեցին գորշադարչնագույն դաշտով՝ այն ճանապարհով, որով հենց նոր անցել էին իրենց տանկերը: Այդ պահին Սարիբեկն արթնացավ: Երբ նա գլխի ընկավ, որ Մոնթեն ու մյուսներն առանց իրեն էին գնացել, ռադիոն վերցրեց, կապվեց Կոմիտասի հետ և ասաց, որ ուզում է միանալ նրանց: Մինչ ծառայողական մեքենան իջնում էր լանջով, Կոմիտասը կողքից նայեց Մոնթեին: Մոնթեն լսել էր Սարիբեկի՝ ռադիոյով խռխռացող խնդրանքը, բայց ոչինչ չասաց: Կոմիտասը մեքենան կանգնեցրեց և սպասեց, մինչև որ Սարիբեկը սարն ի վար վազելով իրենց կհասներ: Երբ նա շնչակտուր մտավ մեքենան, նրանք շարունակեցին իրենց վայրէջքը դեպի Մերզուլի:

Լեռների ստորոտում նրանք վերցրին Սարո Երեմյանին՝ խոշոր աչքերով մի ենթահրամանատարի, որը քիչ առաջ մասնավոր մեքենայով անցել էր դաշտով՝ Մոնթեի Alinco «մայր» ռադիոյի համար մարտկոցներ բերելու: Կոմիտասը ծառայողական մեքենան ուղղեց դեպի դաշտի միջով հյուսիս՝ Մերզուլի թեքվող ճանապարհը: Այժմ նա 5 ուղևոր ուներ՝ Սարոն, Սարիբեկը, Վարդանը, Հովիկն ու Մոնթեն: Մոտենալով Մերզուլիից հարավ գտնվող մի տրակտորակայանի՝ նրանք դանդաղեցրին ընթացքը, որպեսզի ողջունեն Մերուժանին ու մարտիկների մի փոքր խմբի, որոնք հավաքվել էին ճամփեզրին կանգնած մի զրահամեքենայի շուրջը: Մերուժանի մարտիկները թաքցրին նոր սպանած օձին, որպեսզի այդ արարածի տեսքը Մոնթեին չզայրացնի: Մարտունու զինվորները գիտեին, որ նույնիսկ ծխածածկ մարտադաշտում պետք չէր հրամանատար Ավոյի համբերությունը փորձել անիմաստ սպանությամբ:

Մինչ Մոնթեն շնորհավորում էր Մերուժանին հաջողված օպերացիայի առիթով, հակառակ կողմից դեպի իրենց սլացավ մի եռառանցք բեռնատար: Մոնթեն դուրս ցատկեց իր ծառայողական մեքենայից և նշան արեց, որ բեռնատարը կանգնի: Պարզվեց, որ այն տանում էր Թշնամուց գրավված զինամթերք, այդ թվում՝ 25 տանկի արկ: Սա չէ՞ր արդյոք Նելսոնի ասած զինամթերքը: Քիչ առաջ բեռնատարը մի քանի մետր հեռավորության վրա անցել էր մոտ 1 կիլոմետր ճանապարհն ի վեր, մի խաչաերուկի մոտ կանգ-

նած զրահամեքենայի կողքով: Երկու կողմերն էլ՝ բեռնատարի մեջ գտնվող հայերն ու զրահամեքենայի անձնակազմը, պետք է որ ենթադրած լինեին, թե մյուս մեքենայի մեջ բարեկամական ուժեր են:

Մոնթեն Մերուժանին հրահանգեց իր տանկերից երկուսը վերալիցքավորել գրավված արկերով, որպեսզի դրանք իրենց առաջնորդեն դեպի Մերզուլի, և հետո իրենք առաջանան ևս 2-3 կիլոմետր հյուսիս-արևմուտք՝ Գարգար գետի ուղղությամբ: Մոնթեն ենթադրեց, որ թշնամին կարող էր տարածք թափանցել հենց այդ կողմից: Տանկերի մեջ, սակայն, քիչ վառելիք կար, ուստի Մերուժանի մարդիկ նախ պիտի վերադառնային Մարտունի՝ բաքերը լցնելու, իսկ հետո հասնեին Մոնթեի ծառայողական մեքենային Մերզուլիում:

Ցերեկվա մոտ 14:00-ն էր, երբ ծառայողական մեքենան իր 6 ուղևորներով անցավ Մերզուլիի ծայրամասի առաջին տների մոտով և մոտեցավ տատասկափշերով ու եղեսպակով եզերված մի խաչմերուկի: Հանկարծ, երբ նրանք անցնում էին մի քարե ցանկապատի մոտով, տեսադաշտում հայտնվեց մի ԲՄՊ-1: Զրահամեքենան կանգնած էր ճանապարհից ճյուղավորվող մի խճապատ հատվածում՝ մոտ 20 մետր հեռավորության վրա: Քողարկանետկված անծանոթ համազգեստով 3-4 զինվոր փռված էին զրահամեքենայի վրա, և մի քանիսն էլ պտտվում էին շուրջը:

Կոմիտասը դանդաղեցրեց ընթացքը, իսկ Մոնթեն հարցրեց.

— Ասոնք ո՞վ են:

Քանի որ Մարտունու շտաբը ԲՄՊ-1 չուներ, Կոմիտասը ենթադրեց, թե մարտիկներն ու զրահամեքենան օժանդակ ուժեր էին Ակերանից, իսկ Սարոն կարծեց, որ նրանք Բերդաշենից էին: Կոմիտասը մեքենան կանգնեցրեց ճանապարհի մեջտեղում և իջավ՝ բնազդաբար վերցնելով իր ինքնաձիգը: Մոնթեն էլ դուրս եկավ՝ մեքենայի դիմացով անցնելով դեպի վարորդի կողմը: ԲՄՊ-1-ի շուրջը պարապ կանգնած երիտասարդ զինվորները քիչ ուշադրություն դարձրին նրանց վրա: Կոմիտասն իր սիրելի զինվորական վերնաշապիկով էր, որ ռազմավար էր՝ ուսի վրա Ադրբեջանի դրոշով: Նա քայլեց դեպի խմբից մի քանի մետր այն կողմ՝ քարե պատի մոտ կանգնած զինվորը և տեղական բարբառով բղավեց.

— Էլի՛ արի էստեղ:

Զինվորը շփոթված դեմքով մի քայլ հետ գնաց:

Կոմիտասի աչքերը բոցավառվեցին.

— Տղե՛րք, սրանք թուրքե՛ր են, — գոռաց նա, լիցքավորեց ինքնաձիգն ու կրակահերթ արձակեց զինվորների վրա, որոնք վազեցին՝ զրահամեքենայի հետևում թաքնվելու: Մյուս 4 հայ ուղևորները դուրս թռան ծառայողական մեքենայից՝ փորձելով թաքնվել արճիճի տարափից:

Թե ինչ պատահեց հաջորդ մի քանի վայրկյանների ընթացքում՝ լիովին պարզ չէ. վկայությունների մանրամասները տարբերվում են: Սարոն պնդում էր, որ թշնամու 3-4 մարտիկ ընկել էին գետնին, և Կոմիտասը հաստատում էր, թե ինքն էլ տեսել է մի քանի տապալվող մարմին: Մոնթեն, թաքստոց գտնելու համար հետ-հետ գնալիս, կարող էր կրակած լինել իր «Կալաշնիկովից» կամ պառկած լինել ճանապարհին, որպեսզի իրեն չխփեն, և հետո կրակել:

Մինչ ադրբեջանցի զինվորները ծառայողական մեքենան մաղ էին դարձնում, Սարոն ու մյուսներն էլ էին կրակում՝ դրանով բացահայտելով իրենց դիրքերը: Թշնամու զինվորները կրկին նշան բռնեցին և երեք անգամ վիրավորեցին Սարոյին՝ թևից ու մեջքից: Նա սողալով հասավ ճանապարհի արևելյան կողմում գտնվող առվին ու մարմինը սեղմեց գետնին: Այդ ժամանակ թշնամու զրահամեքենայի հրետանավորն արդեն լիցքավորել էր իր հարթափող հրանոթն ու նշան բռնել: Սուլելով ինչպես գնացքը երկար թունելի մեջ՝ 73 միլիմետրանոց մի արկ թռավ ծառայողական մեքենայի վրայով և պայթեց՝ ճանապարհի մյուս կողմում գտնվող սպիտակ քարե պատնեշի մեջ անցք բացելով ու փոշու ամպ բարձրացնելով:

Երբ Կոմիտասը նեռվեց՝ մի քարե պատի ետևում թաքնվելու, երկրորդ արկը դիպավ պատի անկյունին ու նրան գետին տապալեց: Հետ նայելով պատվող փոշու միջով՝ նա փնտրեց Մոնթեին: Հանկարծ Կոմիտասը նկատեց Մոնթեին՝ 10 մետր այն կողմ աջ կողքի վրա պառկած, ծառայողական մեքենայից մի քանի քայլ հետ: Նա անշարժ էր:

Կոմիտասը մի քանի քայլ վազեց դեպի Մոնթեն, բայց ձախ ծունկը չէր ենթարկվում, և մի այրող ցավ խոցեց նրա ազդրը: Կոմիտասի ծնկին բեկոր էր դիպել: Նա Հովիկին կանչեց, որ գա տեսնի, թե ինչ է պատահել Մոնթեին, հետո սողալով մտավ թշնամու զրահամեքենայից մի քանի մետրի վրա, քարե պատի ու ճանապարհի միջև գտնվող ծանծաղ առվի մեջ ու փորձեց ծածկվել չոր խոտով:

Հովիկը նույնպես մի ոտքից վիրավոր էր, բայց դա չխանգարեց հսկա մարտիկին՝ կաղելկաղ վազել ճանապարհի մեջտեղը՝ ուղիղ ԲՄՊ-1-ի առաջ, Մոնթեին կրակագծից դուրս բերելու համար: Հասնելով նրան՝ Հովիկը հրամանատարին դեմքի խաղաղ արտահայտությամբ պառկած տեսավ: Նա Մոնթեին ուսերից բարձրացրեց, որպեսզի հանի նրա «ուղքի-թոքիի» փոկը, բայց ցած գցեց՝ տեսնելով ուղիղ աջ ականջի վերևում ճակատի ջախջախված մասն ու գլխի տակ լճացած թանձր արյունը: Արկի մի մեծ բեկոր էր դիպել նրան հետևից, հավանաբար՝ աջ ուսի վրայով, երբ նա մեջքը պատին դարձրած նայել էր ադրբեջանական զրահամեքենային (կամ բեկորը, ծառայողական մեքենայի հետևում գտնվող քարե պատից հետադարձվելով, դիպել էր նրան ձախ ուսի վրայով, երբ նա մի պահ գլուխը շրջել էր դեպի պատը):

Հովիկը ճանապարհի մեջտեղում կանգնած ողբում էր.

— Ավոն չկա՜:

«Նա մի տեսակ մոռացել էր Թշնամու մասին, — 4 տարի անց Սեդային պատմում էր Վարդանը. — կանգնել էր ճանապարհի մեջտեղում ու հեկեկում, գոռում էր: Ես երբեք չեմ մոռանա այդ ձայնը»:

— Սպանե՛ք ինձ, — տնքում էր Սարոն:

Հովիկը Մոնթեի ուսից հանեց Alinco ռադիոն, որի մեջ, լալով և հետ ու առաջ ճոճվելով, գոռում էր.

— Մեզ օգնությո՛ւն է պետք:

Ռադիոյի խշշոցի միջից լսվեց Նելսոնի ձայնը.

— Ես ճանապարհին եմ:

Ադրբեջանցիները շարունակում էին նրակել, իսկ ծառայողական մեքենայի մեջ գտնվող հիմնական ռադիոն անդադար խոխռում էր՝ ինչպես կովի ողջ ընթացքում: Ի վերջո, երևի մոտ 15 րոպե անց, ԲՄՊ-1-ն առաջ թեքվեց ու դեպքի վայրը լքեց՝ արագություն հավաքելով և հետո շրջադարձ կատարելով դեպի հողե ճանապարհը, որ տանում էր հյուսիս-արևելք՝ ադրբեջանցիների կողմից վերահսկվող տարածք:

Մարտունու վիրավոր զինվորներն անչարժ մնացին՝ սպասելով խոստացված օգնությանը: 5-10 րոպե անց նրանք Թրթուրի շռինդ լսեցին, որ մոտենում էր այն կողմից, ուր քիչ առաջ անհետացել էր ԲՄՊ-1-ը: Դա Թշնամու թեթև տանկ էր՝ ԲՄՊ-2. առանց շարժիչն անջատելու՝ այն կանգ առավ քարե պատից ոչ հեռու գտնվող խճապատ հատվածում, ճիշտ այնտեղ, ուր նրանք տեսել

էին զրահամեքենան: Հանկարծ Թշնամու մոտ 20 հետևակային հովհարաձև շրջապատեցին ԲՄՊ-2-ը, և Սարոյին թվաց, թե մի զինվոր թուրքերեն բղավեց.

— Վե՛րջ, դուք մե՛րն եք:

Մի քանի՝ երկար թվացած րոպեներից հետո Կոմիտասն զգաց, թե ինչպես է գետինը դողում մեկ այլ մոտեցող տանկի թրթուրներից, այս անգամ՝ հարավից, հայկական կողմից: Ադրբեջանական տանկի հրամանատարը կարգադրեց հեռանալ, և նրանք նահանջեցին զրահամեքենայի գնացած ուղղությամբ, երբ մի շրթայուն, որի մեջ կային նաև երկու ԲՄՊ, հակառակ կողմից մոտեցավ խաչմերուկին: Դրանցից մեկի վրայից ցած թռավ Աբոն ու վազեց դեպի Կոմիտասը, իսկ Թշնամին նահանջելիս կրակում էր ինքնաձիգներից, թեթև գնդացիրներից և նռնականետներից:

— Ավոն մեռած է, — տնքաց Կոմիտասը՝ երբ Աբոն նրան մի քանի մետր քարշ էր տալիս դեղին խոտի միջով, դեպի մոտակա փոքր ծառի ստվերը:

Մինչ Աբոն իր ինքնաձիգի ու ճկուն վիրակապի օգնությամբ բեկակալ էր ամրացնում Կոմիտասի ոտքին, Մարտունու ևս 4 տանկ եկան: Վարդանը մի թաշկինակ փռեց Մոնթեի երեսին և օգնեց Աբոյին մարմինը տանկի մեջ բարձրացնել:

Այդ ընթացքում Մարտունու զինվորները գտան Սարիբեկին, որ հենվել էր մի նռնենու և նռնակ սեղմել ձեռքում: Նրա ինքնաձիգի փողը դեռ տաք էր: Սարիբեկի որովայնի մեջ արկաբեկոր էր մտել, ու նա արյուն էր կորցնում ոտքին դիպած փամփուշտի անցքից: Երբ Մարտունու զրահամեքենան նրան հիվանդանոց էր տանում, նա հայհոյում էր, ջուր աղերսում ու հեծեծում.

— Այրո՛ւմ է:

Երբ հասան Մարտունու մանկապարտեզի նկուղում գտնվող հիվանդանոցը, Սարիբեկը գիտակցությունը կորցրել էր: Դրանից քիչ անց նա մեռավ արյան կորստից՝ հինգ երեխաներին թողնելով անհայր, իսկ աղքատացած ընտանիքը՝ առանց կերակրողի:

Մարտունու հիվանդանոցի առաջ հարյուրավոր մարդիկ էին հավաքվել՝ սպասելով շտապ օգնության մեքենայի ժամանմանը: Նրանց մեջ էր Սարիբեկի կինը՝ Լիլիան: Նրա զինվոր եղբայրն ասել էր նրան Սարիբեկի վիրավորվելու մասին, բայց Լիլիան չգիտեր, որ Մոնթեն սպանվել է: Վերջապես, ժամը 17-ի մոտ, շտապ օգնությունը կանգ առավ հիվանդանոցի մուտքի առջև՝ բեռնելով այդ օրը Մերզուլիից տեղափոխված վերջին մարմինը: Բժիշկները

լայն բացեցին մեքենայի դռներն ու մի պատգարակ դուրս քաշեցին՝ վրան սպիտակ շորով ծածկված մարմին: Մեկը շորը հետ քաշեց, և Լիլիան ուշաթափվեց:

Այդ օրը Սեդան արթնացել էր արևի շլացուցիչ շողերից, որոնք ներս էին թափանցել Երևանի հանրակացարանի իր պատուհանից: Ժամեր անց, երբ նա մասնակցում էր մի ընկերոջ հոգեհանգստին, մեկը հոգոց հանեց.

— Ամբողջ աշխարհը սուտ է:

— Ինձ համար՝ ո՛չ, — առարկեց Սեդան, — ես ունեմ Մոնթեին:

Երբ, սենյակ վերադառնալով, նա տեսավ իրեն սպասող Հարությանին՝ գլխարկը թևի տակ դրած. նրա շունչը կտրվեց:

— Ո՞ւր է Մոնթեն, — հարցրեց նա:

— Նա վիրավորված է:

— Վիրավորվա՞ծ:

— Ծանր վիրավորված, գլխից:

Սեդայի կոպերն ընկան.

— Կարող եք ինձ ասել:

— Նա մեռած է:

Նրա հաջորդ հարցը նույնն էր, ինչ իմը. ո՞վ էր սպանել նրան:

Սեդան հիշեց մի նամակ, որ ամուսինը գրել էր իրեն բանտից. «Ես գիտեմ, որ եթե ինձ ոչինչ չպատահի իմ աշխատանքի ժամանակ, գուցե և երկար կապրեմ»: 1978-ին գրած մի կարճ հոդվածում, սակայն, նա մի տող էր մեջբերել Շահան Շահնուրից, որտեղ գրողն ասում է, թե հայերը, որպես արևելցիներ, հավատում են ճակատագրին: Մեր հասակում մեռնելը Մոնթեի «ճակատին գրված չէր»:

Հաջորդ առավոտ, հունիսի 13-ին, Սեդան ուղղաթիռով թռավ Մարտունի: Այնտեղ ամբողջ քաղաքը խցկվել էր թատրոնի դահլիճը, որտեղ Մոնթեն՝ իրենց Ավոն, լրիվ հանդերձանքով պառկած էր բեմի վրա՝ անմշակ փայտից պատրաստված ծանծաղ դագաղի մեջ, ճակատը սպիտակ մարլայով կապած: Գլխաշորերով սևազգեստ կանայք ողբում էին.

— Ավո՛, վա՛յ, վա՛յ, վա՛յ... վա՛յ, Ավո ջան, վա՛յ:

Որոշ տեղացիներ աղաչում էին Սեդային՝ Մոնթեին հետ չտանել Երևան, այլ թաղել Մարտունիում: Նա մեռել էր որպես Մարտունու համար կռված զինվոր, իսկ այնտեղի ժողովուրդն իր զինվորներին թաղում է հարազատ հողում, ոչ հեռու գերեզմանոցներում: Կային այնպիսիք, որ հավատում էին, թե նրա աճյունը,

սրբի մասունքների պես, կպաշտպանի չարիքից: Սեդան գլուխն օրորում էր. Մոնթեն պիտի թաղվի Երևանում՝ Հայաստանի մայրաքաղաքում:

Հրամանատարի զինվորները նրա բաց դագաղը սահեցրին ուղղաթիռի մեջ, հետո կափարիչը մտցրին: Բարձրանալիս ուղղաթիռն ուժեղ քամի առաջացրեց, հետո երեք անգամ ժամացույցի սլաքի՝ կյանքի ուղղությամբ պտույտ գործեց դաշտում հավաքված սգավորների գլխավերևում և ուղղություն վերցրեց արևմուտք՝ դեպի Երևան:

Երբ ուղղաթիռը մի ժամ հետո վայրէջք կատարեց Երևանում, ինչ-որ մեկը հետևից մոտեցավ Սեդային ու գրկեց նրան: Նույնիսկ շրջվելուց առաջ նա գիտեր, որ դա Շիշկոն է: Նա դեմքն իջեցրեց Սեդայի ուսին ու հեկեկաց:

Մեր մայրը, հայրը, Մոնթեի մանկության ընկեր Զոելն ու ես ամսի 17-ին Փարիզի հերթական թռիչքով առանց մուտքի արտոնագրերի եկանք Երևան: Մայլեն այնտեղ միացավ մեզ՝ գալով Մոսկվայով: Երևանում մենք հանդիպեցինք Մոնթեի փարիզյան հին ընկերներին, որոնց թվում էր Արա Թորանյանը:

Հաջորդ օրվա այցելությունը դիարան պատասխան տվեց այն հարցերից մեկին, որոնք զբաղեցրել էին իմ միտքը՝ 5 օր առաջ գույժը հեռախոսով Մայլեից լսելուց ի վեր. տանջվե՞լ էր Մոնթեն մեռնելուց առաջ: Նրա հոնքի վերևի փոսը խորն էր՝ ձգվելով ճակատից մինչև ականջի հետևը: Ախտաբան մասնագետի համար դժվար չէր որոշելը, որ նա կամ միանգամից էր մահացել, կամ մի քանի վայրկյանի ընթացքում: Սա հանգստացնող լուր էր, ինչպես նաև Սեդայի տեղեկությունն այն մասին, որ նա մարմինը զննելու ժամանակ խոշտանգման նշաններ էր փնտրել, բայց չէր գտել:

Բայց ինձ նաև ուրիշ զգացում էր համակել՝ déjà vu-ի զգացումը. եզբորս ճակատի վերքն այն նույն վերքն էր, որ 12 տարի առաջ հայտնվում էր իմ գիշերային մղձավանջներում, երբ գնդակների տարափի տակ Մոնթեն դանդաղ կծկվում էր, իսկ իմ գլխում ծագում էր անտանելի միտքը՝ մենք մեռնում ենք շների նման:

— Ինչպիսի՜ կորուստ, — անգլերեն հառաչեց մեր մայրը, երբ իր համար անհասկանալի լեզվով ցավակցություններ լսեց սգավորների հերթական պատվիրակությունից: — Երբ մտածում եմ, թե ինչ կարող էր նա արած լինել որպես հնագետ...

Այս խոսքի վրա Զոելը մի հեգնական ժպիտ ուղղեց ինձ.

— Այո՛, նա կարող էր իսկապես մեծ մարդ լինել...

Թաղման օրը՝ հունիսի 19-ի լուսաբացին, մենք, դիակառքին հետևելով, դիարանից գնացինք մի փոքր քարե տուն՝ Բաղրամյան պողոտայից ոչ հեռու, հողե փողոցի վրա: Մինչ այդ ես չէի տեսել նշանավոր տունը, որ Մոնթեն նկարագրել էր այնպիսի պատկառանքով, կարծես դա մի պալատ լիներ: Ուստի ես զարմացա, երբ մտա մի քանի պստլիկ սենյակ պատնեշող քարակույտի նման մի տեղ: Տունը ոչ հոսող ջուր ուներ, ոչ ջեռուցում, բայց խոհանոցի պատուհանն իրոք Արարատ լեռան համար իբրև շրջանակ էր ծառայում:

Մոնթեի կոպիտ փայտե դագաղը դրված էր սեղանին, ամենամեծ սենյակում: Մարմինը ռազմահագուստով էր, ձեռքերն՝ ավանդույթի համաձայն խաչված կրծքին: Այդ ձեռքերը շատ ծանոթ էին, շատ երիտասարդ ու փափուկ, որպեսզի դիակի ձեռքեր լիներին: Բնազդաբար ձեռքս դրանց վրա դրեցի, բայց թևիս միջով մի սառնություն անցավ. դրանք քարի պես սառն էին:

Մեր հայրն ամբողջ առավոտ հանդիստ էր: Նա տանջված ու նիհարած տեսք ուներ: Շրջվելով դագաղից՝ նա անդլերեն ասաց Մայլեին ու ինքն իրեն.

— Սա մարդուն ոչնչացնում է:

Ջոելը ձեռքում բռնած կովբոյական գլխարկի ժապավենից դուրս քաշեց կարմրապոչ բազեի երկար փետուրն ու դրեց դագաղի մեջ: Խշխան զինվորական համազգեստով դագաղակիրներն այն բաբ-ձրացրին իրենց ուսերին ու դուրս բերեցին տան դիմացի փողոցը: Նրանք դագաղը երեք անգամ պտտեցրին ժամացույցի սլաքի ուղղությամբ ու սահեցրին դիակառքի մեջ՝ տնից գերեզման վերջին ուղևորության համար՝ մի կարճ ուղևորություն, որ տևելու էր օրվա մեծ մասը:

Արևն այդ օրը չափազանց ուժեղ էր այրում փողկապ կապելու համար, բայց մեր հայրը, ես ու Ջոելն այնուամենայնիվ փողկապներով էինք: Սև զգեստ չունենալով՝ մեր մայրը մուգ կապույտ էր հագել: Մայլեն պետք է սև շորով մի օր դիմանար: Ավելի անտարբերությունից, քան ավանդույթը հարգելով՝ ես չէի սափրվել Չիկագոյից մեկնելուց ի վեր: Միայն ավելի ուշ հասկացա, որ ես նույն կոստյումով էի, ինչ եղբորս հարսանիքին 2 տարի առաջ:

Սովորույթի համաձայն՝ դագաղի կափարիչը չպիտի փակվեր, մինչև այն իջեցնեին գերեզմանի մեջ: Ես գիտեի, որ թաղումը լինելու է օրվա ամենաշոգ ժամերին, և անհանդիստ էի՝ կդիմանա՞ արդյոք եղբորս մարմինը: Լսել էի ուրիշ նահատակների թաղումների պատմություններ, երբ դիակներն այնքան քայքայված էին եղել, որ սգացողները որոշկացել էին արցունքների միջից: Այդ առավոտ դիարանի աշխատող մի կին գալիս էր Մոնթեի դագաղի հետևից՝ պարբերաբար նրա դեմքին քսելով մի տեսակ փոշի, որ նա հանում էր փոքր մետաղե տուփից: Ինչպես պարզվելու էր, փոշու կարիքը չկար, քանի որ երկար շոգ օրվա ընթացքում Մոնթեի մաշկը չմքեց ու չծածկվեց բծերով:

Երբ մտանք «Սպայի տուն», մի քանի դուդուկ սկսեցին նվագել «Սիրեցի, յարս տարան»: Գնդապետ Հարությանն ու թաղման հանձնաժողովը հոգացել էին երաժշտության և իրենց ընկերոջ հուղարկավորության հետ կապված բոլոր մանրամասների մասին: Քելբաջարի գրոհի գաղտնի առաջնորդ գեներալ Դարիբալթայանը համարյա աննկատ մտավ դահլիճ ու գլխարկը հանեց: Աբոն, Մասիս Հրայրը, Մոսին և ուրիշ մարտիկներ հրաժեշտ տվեցին իրենց հեռացող հրամանատարին:

Մոնթեի մահից հետո հայրենակիցներն սկսեցին նրան կոչել «զորավար Ավո» պատվավոր անունով: Իր կյանքի ընթացքում, սակայն, Մոնթեն երբեք չհասավ նույնիսկ լիարժեք գնդապետի աստիճանին. Մեռնելուց 2-3 շաբաթ առաջ, մայիսի վերջին, Սեդան լսեց, որ «Պաշտպանության կոմիտեն» Ստեփանակերտում իր ամուսնուն փոխգնդապետի աստիճանի էր արժանացրել: Երբ Սեդան լուրը հայտնեց Մոնթեին, նա ուսերը թոթվեց ու ասաց.

— Ինձ համար մեծ տարբերություն չի լինելու:

Նա այդ աստիճանն առաջին անգամ չէր ստանում. մոտ 10 տարի առաջ Լիբանանում Զահեր ալ-Խաթիբը Մոնթեին «Աշխատավորների լիգայի» աշխարհազորայինների փոխգնդապետի աստիճան էր շնորհել:

Դուդուկները միապաղաղ ողբում էին: Երկու զինվոր կարմիր մեխակների մի պսակ հենեցին դագաղի պատվանդանին: Բեյրութից պատվիրված պսակի վրա ֆրանսերեն մակագրություն կար. «Քո հին ընկեր Ալեքից»:

Իմ հաշվարկով՝ այդ առավոտ ու կեսօրին սգո շարասյունով լուռ անցան մոտ 12000 հոգի, մեծ մասամբ՝ տանջահար տեսքով հասարակ ժողովուրդ: Կոստյումներ չունենալով՝ նրանք այդ շոգին հնամաշ սվիտերներ էին հագել, և ներկայանալի սպիտակ վերնաշապիկներ չունենալով՝ նրանք հագել էին իրենց լավագույն կարճաթև շապիկները: Հայաստանի նախագահը, փոխնա-

խագահը, նրանց նախարարները, խորհրդարանի պատգամավորներ, ռուս սպաներ՝ բոլորն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հրամանատարին: Լուռ ու հանգիստ էին նույնիսկ գրկի մանուկները:

Մոտ 2 ժամ անց Պաշտպանության նախարարության մի սպա մեր շարքում նստած հարազատներին ու ընկերներին ուղեկցեց դահլիճի հետևում գտնվող մի սենյակ՝ թեյի: Երբ մոտ 20 րոպեից մենք վերադարձանք մեր տեղերը, իմացանք, որ ԱՄՆ-ի դեսպան Հարրի Գիլմորն այդ ընթացքում երևացել էր ու գնացել: Ես կասկածեցի, թե մանրամասների հանդեպ միշտ բծախնդիր գնդապետ Հարոյանն էր կազմակերպել մեր չհանդիպելը, որպեսզի այդ օրը որևէ անհարմար իրավիճակ չստեղծվեր: Գլխումս ուրիշ միտք էլ ծագեց. որ դա դեսպանի վերջին հնարավորությունն էր՝ դադաղին մի հայացք գցելու և «Հետախուզության դաշնային բյուրոյին» (FBI) Մոնթեի մահը հավաստելու:

Մոտ ժամը 2-ին մենք պատվո պահակախմբի ու դագաղակիրների հետևից «Սպայի տնից» դուրս եկանք կիզիչ արևի լույսի տակ: Ես աչքերս կկոցած նայեցի Հանրապետության հրապարակում հավաքված հազարավոր մարդկանց: Դագաղը զրահամեքենայով տարան դեպի 17-րդ դարի Սուրբ Զորավոր եկեղեցի՝ վերջին արարողությունը կատարելու համար, իսկ այնտեղից՝ սգավորներով եզերված փողոցներով, դեպի Եռաբլուրի զինվորական գերեզմանոց: Պատերազմի սկզբից ի վեր այստեղ երիտասարդներ էին գալիս՝ Արցախի ռազմաճակատներ մեկնելուց առաջ իրենց համար գերեզմանի տեղ ընտրելու:

Բլրի գագաթին մի միայնակ դուդուկ էր հնչում բաց գերեզմանի վրա, խունկը ծխում էր, և սևազգեստ կանայք՝ լալիս ու բարձրաձայն ողբում: Մեխակներն ու վարդերը, որ սգավորները կիտել էին գերեզմանաթմբի վրա, թառամում էին արևի տակ: Մի խաչ տարուբերելով՝ քահանան կրկնեց հինգերորդ դարի պատմիչ Եղիշեի խոսքերը. «Մահ իմացեալ անմահութիւն է»:

Ես չգիտեմ՝ ինչպիսի թաղում էր սպասում մեր մայրը, բայց այդ օրը նա ցնցված էր: Այն բոլոր տարիների ընթացքում, երբ իր որդին ընդհատակում էր, բանտում կամ փախուստի մեջ, նա իր «ծաղկի ակումբում» քիչ բան կարող էր պատմել անշարժ գույքի գործակալների և իրավաբանների հպարտ մայրերին: Բայց հիմա, գերեզման իջնելով, որդին վերջապես վերահաստատեց իրեն մոր աչքում. կարմիր գորգեր, ուսադիրներ, բարձր քայլքով պատվո պահակախումբ, հյուրեր 9 երկրներից, շքանշաններով գեներալներ, լավ կարված կոստյումներով ալեհեր պաշտոնյաներ, հեռուստախցիկներ, լվացված ու փոսերը շտապ լցված փողոցներ, իսկ ամենից առաջ՝ սգավորների անվերջանալի հոսք: Այս ամենը վկայում էին, որ, գոնե մահվանից հետո, իր որդին այլևս դատապարտված ահաբեկիչ չէր. նա ազգային հերոս էր, ինչպես այժմ սովորել էր ասել մեր մայրը:

Սեղան Մարտունուց բերած մի բուռ հող լցրեց դագաղի մեջ, հետո Մոնթեի զինվորները փակեցին կափարիչն ու նրան իջեցրին այն հողի մեջ, որի պաշտպանության համար նա զոհվել էր: Բաց գերեզմանից փոշի էր բարձրանում: Կիզիչ արևի տակ կանգնած, շրջապատված հարյուրավոր այլ գերեզմաններով և որպես վառելիք կտրված ծառերի կոճղերով՝ գլխիս մեջ արձագանքեց գնդապետ Հարոյանի ցածր ձայնը.

— Թող Հայաստանի օրհնված հողը թեթև լինի քո աճյունի վրա:

Հաջորդ առավոտ մենք թռչում էինք սարերի ու ձորերի վրայով՝ մի հևացող, հնամաշ ՄԻ-8-ով, որ գերբեռնված էր մարտիկներով, վզին խաչ կախած մի պոռնիկով և մոտ 250 գալոն բենզինով: Ներքևում կռիվ էր գնում Մարտակերտի ավերակների համար: Միաժամանակ, 150 մղոն դեպի արևելք, Սուրաթ Հուսեյնովի ապստամբ բանակը, շարժվելով ճակատամարտի հակառակ ուղղությամբ, գտնվում էր Բաքվից 5 մղոն հեռավորության վրա: 2 օր առաջ, երբ Մոնթեն դեռ թաղված չէր, Ադրբեջանի քննադատված նախագահ Էլչիբեյը Բաքվից փախել էր իր հարազատ Քելեքի գյուղը մեկուսացված Նախիջևանում՝ իրանական սահմանի մոտ: Նա պաշտոնավարեց մեկ տարուց մի օր պակաս: Մինչ այդ Շուշիում և Լաչինում ադրբեջանցիների պարտությունը գահընկեց էր արել նախագահ Մութալիբովին և իշխանության բերել Էլչիբեյին: Այժմ Քելբաջարի ջախջախիչ պարտությունը գահընկեց էր արել նախագահ Էլչիբեյին և ճանապարհ հարթել նրա ախոյանի՝ նախկին խորհրդային խորամանկ պաշտոնյա Հեյդար Ալի-Ռեզա Ալիևի վերադարձի համար: Այսպիսով, Քելբաջարի գրոհի հրամանատար Մոնթեն Աբուլֆազ Էլչիբեյի՝ Կովկասում Անկարայի ու Վաշինգտոնի ապավենի անկման մեջ նույնքան ներդրում ուներ, որքան մյուսները՝ Հուսեյնովը, Ալիևը կամ Կրեմլի որևէ գեներալ:

Երբ հասանք Մարտունու շտաբ, այն բուֆետում, որտեղ հրամանատարը սնվել էր, նրա համար մի դատարկ աթոռ, ափսե ու բաժակ էր դրված: Ծալովի մահճակալի կողքի պահարանիկի վրա Մաքիավելլու «Իշխանի» թղթե կազմով մի հրատարակություն կար, նաև՝ Սուն Ցուի «Պատերազմի արվեստի» ֆրանսերեն մի քրքրված օրինակ: Աշխատասենյակի գրասեղանին, հսկայական ռազմական քարտեզի տակ, որի վրա Մոնթեն նոր սահմաններ էր գծել, նրա ամրությունոտ համազգեստն էր՝ խնամքով ծալված: Համազգեստի կողքը դրված էր արկի՝ աներևակայելիորեն մեծ մի ոլորաձև բեկոր՝ մարլյայով փաթաթված: Երևանում սգավորները լեզուները ճտտացնելով հոգոց էին հանում. «Եթե նա սաղավարտ դրած լիներ...»: Սակայն, գննելով բեկորը, ես մտածեցի, որ մի շաբաթ առաջ Մերզուլիի խաչմերուկում գլխին սաղավարտ չունենալը բարեբախտություն էր. չեղելով այսքան խոշոր բեկորի հարվածը՝ սաղավարտը միայն կերկարաձգեր նրա տառապանքը:

Գնդապետ Հարությունը հաստատեց այն լուրը, որ իմ եղբորը սպանած զորախմբի անդամներից մեկը գերի էր ընկել Մոնթեի մահվան օրը, և՝ որ նրան պահում էին Մարտունու բանտում: Հաջորդ առավոտ Սեդան ու ես հանդիպեցինք Հարությանին քաղաքային բանտի մոտ: Մենք չգիտեինք՝ ինչ է մեզ սպասում, երբ գրասենյակում նստեցինք մի սեղանի շուրջը: Հաջորդ րոպեին պահակները ներս բերեցին ճենապակու պես գունատ մի տասնութամյա պատանու և ինչ-որ բան գոռոցին՝ հրամայելով նրան կանգնել մեր առաջ: Դա մի շրջմոլիկ էր, համարյա երեխա: Ջնայած նրա ծնոտի աղվամազին, դեղնած ատամներին և բրդյա սև շալվարի ու վերնաշապիկի կեղտին, նա մի բարետես տղա էր՝ բարձր այտոսկրերով ու կանոնավոր դիմագծերով: Չեմ հիշում նրա աչքերի գույնը, բայց երբեք չեմ մոռանա լայնացած բիբերը: Նրա աչքերը վախեցած աջ ու ձախ էին վազում, և նա դողում էր: Ենթադրում եմ՝ սպասում էր, որ իրեն պիտի սպանեն, կամ էլ՝ տանջեն, հետո սպանեն:

Ձեռքի շարժումով ես հրավիրեցի նրան նստել սեղանի մյուս կողմում դրված աթոռին: Երբ նա նստեց, ցույց տվեցի եղբորս սև-սպիտակ լուսանկարը, որ ամրացրել էի իմ զինվորական հագուստի ծոցագրպանին: Պահակներից մեկը՝ գորշ համազգեստով տեղացի ոստիկան սպա, թարգմանեց ադրբեջաներեն.

— Սա այս մարդու եղբոր և այս կնոջ ամուսնու լուսանկարն է: Նա սպանվել է այն օրը, երբ դու բռնվեցիր:

Բանտարկյալն առաջ թեքվեց ու նայեց լուսանկարին:

— Դու նրան նախկինում տեսե՞լ ես, — հարցրեց թարգմանիչը:

Պատանին գլուխն օրորեց: Ես մի քանի հարց էլ տվեցի՝ թե ինչ էր պատահել Մերզուլիում հունիսի 12-ին, բայց նա այդ մասին էլ շատ տեղեկություն չուներ: Մինչև օրս չեմ հասկացել, թե ինչու էր այդ զորախումբը հետ մնացել Մերզուլիում, և, իմ տպավորությամբ, բանտարկյալն էլ դա չգիտեր: Թերևս նրանք հետախուզության էին դուրս եկել կամ պարզապես ճանապարհը կորցրել:

— Հուսով եմ՝ շուտով դու ողջ և առողջ կվերադառնաս քո ընտանիքը, ու բոլորս կկարողանանք խաղաղ ապրել, — ասացի նրան՝ լուսանկարը նորից փակցնելով վերնաշապիկիս գրպանին:

— Այո՛, — գլխով արեց նա՝ աչքերն արցունքոտ, — խաղաղ:

Նրան հրամայեցին գնալ իր խուցը, և մի պահակ վեր քաշեց նրան աթոռից: Կանգնելով՝ նա նայեց, թե ինչպես ես էլ եմ կանգնում՝ եղբորս ինքնաձիգը փոկից բարձրացնելով: Երբ պահակը նրան սենյակից դուրս էր բերում, նա դողում էր՝ ենթադրելով, թե իրեն տանում են ահավոր մահվան իմ՝ վրիժառու եղբոր ձեռքով: Ես առաջ գնացի և ափս նրա աջ ուսին դրեցի՝ հանգստացնելու համար: Երբ դիպա նրա թևին, նա վեր թռավ՝ ասես էլեկտրական հոսանքից:

— Հանգստացի՛ր, — շշնջացի ես նրա չիմացած լեզվով, — հանգստացի՛ր:

Միայն հետո հասկացա, որ ոչ Սեդան, ոչ էլ ես այդ պատանու անունը չհարցրինք:

Բանտի միջանցքում ես երկու խոսք փոխանակեցի մի պաշտոնյայի հետ.

— Լողացրե՛ք ու մաքուր շորե՛ր տվեք այս երեխային, — ասացի ես, — և, եթե հարգում եք Ավոյի հիշատակը, փոխանակե՛ք նրան, խնդրում եմ, մի հայ գերու հետ, հենց որ հնարավոր լինի: Վերադարձրե՛ք նրան իր ծնողներին ողջ և առողջ:

Ես դադար տվեցի, որպեսզի համոզվեմ, որ բանտապետը նայում է աչքերիս.

— Եթե հարգում եք Ավոյի հիշատակը, այդպե՛ս վարվեք:

Նա գլխով համաձայնության նշան արեց:

Այդ ժամանակ, իրար համընկնող վկայություններ տված չորս ողջ մնացածների ներկայությամբ տեղի ունեցած դեպքից հազիվ մեկ շաբաթ անց, հրամանատարի մահն արդեն պարուրվել էր դա-

վաճառության մասին լուրերով: Զարմանալի չէ, որ թուրքական թերթերը տարածում էին, թե հենց Մոնթեի մարտիկներն էին սպանել նրան: Բայց նույնիսկ սփյուռքում, Երևանում ու Մարտունիում կան մարդիկ, որոնք կառչած են այն մտքից, թե Մոնթեն զոհն էր «հայկական մաֆիայի, որ զայրացած էր նրա վրա՝ իրենց մաքսանենգ գինին թափելու կամ կանեփի դաշտերն այրելու համար» (մեջբերում՝ հայ հերոսներին նվիրված ինտերնետային մի կայքից): Ուրիշները փսփսում էին, թե հրամանատարը դարձել էր Տեր-Պետրոսյանի կողմնակից այն նույն զինյալների զոհը, որոնք սպանել էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արթուր Մկրտչյանին, և որոնք Մոնթեի մահվանից քիչ անց դարանից սպանեցին Մարտակերտի քսանյոթամյա հրամանատար Նորայր Դանիելյանին:

Կան նաև մարդիկ, ովքեր իրենց համոզել են, թե մի հայ զգուշացրել էր թշնամուն, որ Մոնթեն մոտենում է ծառայողական մեքենայով: Այս սցենարը, սակայն, հերքվում է Մարտունու բանտում պատանի ռազմագերու վկայությամբ և ականատեսների պատմածով՝ թե խաչմերուկում զրահամեքենայի շուրջը կանգնած ադրբեջանցիները պատրաստ չէին բախմանը և նույնիսկ չհասկացան, որ հայ մարտիկները թշնամիներ են, մինչև Կոմիտասն իր ինքնաձիգը չլիցքավորեց: Ես զարմանում եմ, թե, հակառակ փաստերին, որքան շատ հայեր են շարունակում պնդել՝ իբր Մոնթեն դավադրության զոհ էր:

Ուրիշ լուրերի համաձայն՝ Մոնթեն բնավ չէր մեռել, այլ նրա հայտարարված մահը հերթական հնարք էր՝ մի շինծու պատմություն, որ պիտի քողարկեր ահաբեկիչի անհայտանալն ընդհատակում ու տեղափոխությունն այլ ռազմաճակատ: Մոնթեի թաղումից ամիսներ անց FBI-ի աշխատակիցները շարունակում էին կասկածներ հայտնել նրա մահվանը վերաբերող հաղորդագրությունների մասին: 1994 թ. փետրվարի 25-ի մի գաղտնի տելեթայփի մեջ FBI-ի՝ Լոս Անջելեսի բաժանմունքը հայտնել է. «Չնայած լրատվամիջոցները լայնորեն տեղեկություններ են տարածել Մելքոնյանի մահվան ու թաղման մասին, նշվում է, թե անձնագրի, որ թաղվել է իբրև նրան պատկանող, երբեք պաշտոնապես չի հետազոտվել ինքնության հաստատման որևէ միջոցով՝ Միացյալ Նահանգների կառավարության որևէ ներկայացուցչի կողմից: Հարկավ, ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցներին թույլ չտրվեց թաղումից առաջ մարմինը զննել»:

Դավադրության մասին խոսակցություններն այսօր դեռ շարունակվում են: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես համոզված եմ, որ Մոնթեն ու Սարիբեկն սպանվեցին ադրբեջանցի մարտիկների հետ պատահական հանդիպման ժամանակ: Իմ զրույցները Կոմիտասի, Սարոյի, Հովիկի ու այլոց հետ և այցելությունը Մերզուլի ցրել են դավաճանության մասին իմ նախնական կասկածները: Հունիսի 12-ին պատահածն անսպասելի փոխհրաձգություն էր թշնամի զինվորների միջև, և այնպես պատահեց, որ հակառակորդ կողմերից մեկը՝ ադրբեջանցիները, զրահամեքենա ունեին և 73 միլիմետրանոց հրանոթ:

FBI-ի մի հատուկ գործակալ՝ Ուիլիամ Օ. Հիթոնը, Los Angeles Times թերթի թղթակից Մարկ Արաքսի հետ զրույցում Մոնթեին կոչել է «վարձկան»: Բայց եթե այդպես է, որտե՞ղ են նրա վաստակած փողերը. Մոնթեից հետո չմնաց ոչ կտակ, ոչ credit card, ոչ բանկային հաշիվ: Նա երբեք մեքենա չուներ, և երբ նա սպանվեց, նրա ձեռքի միակ ինքնաձիգը պատկանում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանական ուժերին: Հարկավ, հրամանատար Ավոն նույնիսկ սեփական ատրճանակ կամ ավին չուներ: Մի անգամ, երբ նրա մարդկանցից մեկը հարցրեց, թե նա ինչու ատրճանակ չի պահում, Մոնթեն ասաց. «Դա ավելորդ ծանրություն է»:

Այն, ինչ ուրիշները կանվանեին անձնազոհություն, Մոնթեն համարում էր պարզություն: Մինչ նրա հայրենակիցները տենչանքով հայացքներն ուղղել էին դեպի Արևմուտք՝ «ավելի լավ կյանքի համար», Մոնթեի համար լավագույն բաներից մեկը պարզ կենցաղն էր: 1981 թ. մարտին նա հետևյալ պատմությունն է պատմել Ալեքին. մեկ տարի առաջ, մի առավոտ, երբ ինքն աշխատանքի էր շտապում Բեյրութի «Թորոսյան վարժարան», հանկարծ թեթևության, երջանկության ու բարձր տրամադրության զգացում ունեցավ: Մի պահ նա չէր հասկանում, թե ինչն է պատճառը, մինչև նկատեց, որ սովորական կոշիկների ու գուլպաների փոխարեն ոտքերին չստեր էր հագել: Այդպիսին էր Մոնթեն՝ ամենից ոչ ամերիկյան կարգախոսով առաջնորդվող մարդը. «Որքան քիչ ունեմ, այնքան ինձ լավ եմ զգում»:

Քանի որ նույնիսկ Մոնթեին ամենից չարամտորեն վատաբանողները չէին կարող նրա գործունեության շարժառիթ համարել փողը, ապա FBI-ի գործակալ Հիթոնն, օրինակ, ստիպված էր նրան մի ուրիշ այլանդակ մղում վերագրել. «Ոմանք պարզապես սի-

ում են մարդ սպանել, այնպես չէ՞», – հեգնանքով ասաց նա Los Angeles Times-ի թղթակից Արաքսին: Բուլղարուհի տեսաթղթակից Ցվետանա Գասկալևան բոլորովին այլ կերպ է նկարագրել Մոնթեին. «Նա պրոֆեսիոնալ զինվորի մտածողություն ուներ՝ մտահոգություն չրջապատի հանդեպ, բարի կամք, անհանգիստ խիղճ», – ասվում է նրա վավերագրական ֆիլմերից մեկում: Մոնթեն ինքը հասկանում էր, գուցե և՝ իր ամենատխրիմ թշնամիներից էլ լավ, որ իր սխալ հաշվարկների ու վրիպումների պատճառով բազում խաղաղ բնակիչներ են վճարել իրենց կյանքով կամ խեղանդամ են դարձել: Նրա զոհերի թվում էին Բեյրութում մեքենայի մեջ դրված ռումբից տուժածները, 9 տուժած՝ 1980 թ. նոյեմբերի 9-ին Հռոմում տեղի ունեցած պայթյունի հետևանքով և Աթենքում մեքենայի հետևի նստարանին նստած 14 տարեկան աղջիկը: Հետո՝ Ղարաղալուն ու Քելբաջարը:

Պետք է, սակայն, արձանագրել նաև, որ Մոնթեն կյանքեր էլ է փրկել: Իհարկե, անհեթեթ կլիներ կազմել երկու ցուցակ՝ նրա փրկած կյանքերի թիվը համեմատելով խլած կյանքերի թվի հետ: Այդուհանդերձ, փաստը մնում է փաստ. բացի սպանելուց, Մոնթեն նաև պաշտպանել է անպաշտպաններին: Նա այդ արել է Բուրջ Համուդում՝ 1978-1980 թվականներին, Քֆար Թիբնիթում՝ 1981-ին, Իսրայելի կողմից Լիբանան ներխուժման ժամանակ՝ 1982-ի ամռանը: Նա նաև հակառակվեց Հակոբյանի «կուլր ահաբեկչությանը»՝ մի որոշ ժամանակ մահացու վտանգի ենթարկվելով: Հետագայում Մոնթեն ու իր զինակիցները պաշտպանեցին Շահումյանի բնակչությանն OMOH-ից, «Գորշ գայլերից» և Ադրբեջանի ազգային բանակից: Իսկ կյանքի վերջին նա ու իր մարտիկները հեռացրին մարդասպան հրետանին ու «Գրադ» հրթիռները Մարտունու քաղաքների և գյուղերի հասանելիության սահմաններից:

Հնարավորության դեպքում Մոնթեն արգելել է ադրբեջանցի խաղաղ բնակիչների և թշնամու զերիների ու պատանդների հանդեպ դաժանությունները: Նա կրակն ուղղել է ադրբեջանական գյուղերից այն կողմ և ջանացել չկռվողներին լրացուցիչ տառապանք չպատճառել: Քելբաջարի գրոհից անմիջապես հետո Երևանից իրանագիտության դասախոս Գուրգեն Մելիքյանը խոսեց Ստեփանակերտում մեքենայի մեջ նստած մի մոր ու նրա երկու երեխաների հետ: Նրանք Քելբաջարի քրդեր էին, պատանդներ, որոնց պատրաստվում էին տանել դեպի սահմանն ու փոխանակել

ադրբեջանցիների մոտ գտնվող հայ պատանդների հետ: Մայրը հանվանե օրհնեց Ավոյին.

– Նա մեր կյանքը փրկեց, – ասաց նա. – եթե նա չլիներ, մեզ անպայման կսպանեին:

Այս գրքի համար նյութ հավաքելիս՝ ես բազում նման պատմություններ եմ լսել:

Մոնթեի մահից քիչ անց, Բերկլիի մի պացիֆիստ ընկեր՝ Արմեն Ս.-ն, Սեդային նրա զոհված ամուսնու մասին գրեց. «Նա ինձ ստիպեց ամաչել ինքս ինձանից»: Ինչպես Արմենը՝ ես էլ «հարմարավետ ապրում եմ Միացյալ Նահանգներում, մի ազգի մեջ, որի հիմքում ցեղասպանություն ու նվաճումներ են»: Իմ համաքաղաքացիների պես՝ ես էլ հարկեր եմ վճարում և աշխատում չտեսնելու տալ այն արյունահեղությունները, որ CIA-ն, Գենտագոնն ու Քեռի Սեմի տասնյակ մահվան ջոկատները տարեցտարի գործում են իմ անունից և իմ մուծած հարկերի դոլլարներով: FBI-ի հույժ գաղտնի գործակալ Հիթոնը և իմ համաքաղաքացի ամերիկացիները՝ «ահաբեկչության» հանդեպ իրենց ծույլ ատելությամբ, միշտ կարողացել են իրենց ձեռքերը մաքուր պահել: Ինչ վերաբերում է իմ եղբորը, ապա նա գոնե թույլ չտվեց, որ իր փոխարեն սպանեն ուրիշները:

Մոնթեն մահացավ երեսունհինգ ու կես տարեկան հասակում՝ 110 տարի այն բանից հետո, երբ իր տատի քեռի Հակոբ Սերոբյանը մահացավ նույն տարիքում: Հինգ սերունդով բաժանված՝ նրանց ճանապարհները հատվեցին ու տարան հակառակ ուղղություններով: «Ես այստեղ օտարական եմ ու պանդուխտ», – գրել էր Հակոբն Ամերիկա գալուց հետո: Մոնթեն էլ մի տեսակ պանդուխտ էր, բայց, ի տարբերություն Հակոբի, նա իրեն պանդուխտ չէր համարում երկրագնդի վրա որևէ տեղ և, ի տարբերություն Հակոբի, նրա երկար ուղին նրան տուն էր բերել:

ՎԵՐՋԱԲԱՆ. ՏԵՍԱՐԱՆ ԵՈԱԲԼՈՒՐԻՑ

Ես դույլով ջուր եմ վերցնում ցիստեռնից ու լցնում գերեզմանաքարի վրա: Մեղունները բզզում են այստեղ աճող բալի չիվերի սպիտակ ծաղկաթերթիկների մեջ: Մի քանի գարուն առաջ միայն ծառերի կոճղերն էին փրկվել հրի ճարակ դառնալուց: Ես լցնում եմ ջուրը, իսկ Սեդան սրբում է սալաքարը՝ փայլեցնելով մոխրագույն մակերեսը: Միծեռնակները ծվծվում են իրենց պտուտաձև թռիչքի մեջ, իսկ հետկեսօրյա արևը ցած է իջնում:

Այժմ երևի 700 գերեզման կա Եռաբլուրում: Մեծ մասի գլխավերևում փայլեցված գորշ բազալտե քարեր են, դրանց վրա՝ նահատակների՝ ավազաշիթով պատկերված դիմանկարներ: Կան մանկական դեմքերով պատանիներ, զինվորական համազգեստով երկու կին, ինքնաձիգ բռնած մեկ-երկու եղբի: Մի քանի դեմք ինձ ծանոթ են, շատերը՝ ոչ:

Եռաբլուրում է թաղված պատերազմում սպանվածների միայն փոքր մասը: Մոնթեի վարորդ Կոմիտասն, օրինակ, թաղված է Մարտունու իրենց ընտանեկան գերեզմանոցում: Նա յոթ մարտիկներից մեկն էր, որոնք մեռան 1996 թ. հոկտեմբերի 31-ին, երբ, հետախուզական առաքելությունից վերադառնալիս, դիպան հակահետևակային ականի:

Բայց ոչ բոլորին են ադրբեջանցիներն սպանել. Մոնթեի գերեզմանից 80 քայլ դեպի հարավ Կառլեն Անանյանի և Արամ Վարդանյանի ոսկորներն են հանգչում: Կառլենի հայրն իր ձեռքերով քանդեց նրանց գերեզմանը և 1994 թ. սկզբին վերջապես կարողացավ նրանց աճյունը տեղափոխել Հայաստան: Այդպիսով ավագ Անանյանը կատարեց իր որդու՝ Հայաստանում վերաթաղվելու վերջին խնդրանքը, որն արտահայտված էր Կառլենի 1983 թ. նամակում: Կառլենի ու Արամի կողքին Դավիթ Դավթյանի գերեզմանն է՝ այն երիտասարդի, որի գործողությունները պատճառ էին դարձել նրանց մահվան: Տարիներ շարունակ Շվեդիայից Սուդան, Նեպալ և Ճապոնիա անդադար թափառելուց հետո նա վերջապես, Մոնթեի մահվանից առաջ, հաստատվել էր Երևանում: 1997 թ. հոկտեմբերի 29-ի առավոտյան ինչ-որ մեկը նրա երեքամյա որդու աչքի առջև կրակեց նրա գլխին:

«Նրանք հայրիկի գլուխը ծակեցին», — թաղումից հետո ասել էր փոքրիկ տղան մի այցելուի: Քննությունը ցույց տվեց, որ

Դավթյանին սպանած գնդակն արձակված էր այն նույն զենքից, որով 14 ամիս առաջ, 1996 թ. օգոստոսի 9-ին, սպանվել էր «Գաղտնի բանակի» նրա նախկին ընկեր Աբրահամ Խամիսյանը՝ թաղված Դավթյանի կողքին:

Գերեզմանի մուտքից աջ շինարարական շաղախը վերջերս է չորացել «Գաղտնի բանակի» նահատակներին նվիրված մի քարե հուշարձանի վրա: Նրանց թվում Հակոբ Հակոբյանն է՝ Կառլենին և Արամին տանջանքի ենթարկած ու սպանած մարդը: Այդպիսով մահը, որ երբեք խտրականություն չի դնում, մարդասպանին կապել է իր զոհերի հետ:

1993 թ. հունիսի 12-ից հետո Մարտունու շրջանի հրամանատարությունը բաժանվեց երկու շտաբի՝ մեկը Մոսու գլխավորությամբ, մյուսը՝ Նելսոնի: 1993 թ. հոկտեմբերին նրանց մասնակցությամբ գրավվեց Արցախից հարավ՝ մինչև իրանական սահմանը հասնող ողջ տարածքը: Տեղահանվեցին ևս 200000 ադրբեջանցի փախստականներ: Ադրբեջանը 1993 թ. հակահարձակում ձեռնարկեց, և կռիվները մոլեգնում էին շաբաթներ շարունակ: 300 հայ ու թերևս 4000 ադրբեջանցի մարտիկներ սպանվեցին, մինչև որ հակահարձակումը մարեց, և Ռուսաստանի միջնորդությամբ 1994 թ. մայիսին հրադադար հաստատվեց: 6 տարի տևած կռիվների արդյունքում միլիոնից ավելի մարդիկ փախստականներ էին դարձել, և հավանաբար նրանց երկու-երրորդն ադրբեջանցիներ էին: Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության հաշվարկով՝ պատերազմում երկու կողմից 25000 հոգի էին սպանվել: Հրադադարից հետո Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևն ուշադրությունն ուղղորդել էր Հայաստանի երկարատև դիվանագիտական ու անտեսական մեկուսացմանը: Դրան մինչև օրս նպաստում է Կասպից ծովում Ադրբեջանի նավթային պաշարների գրավչությունը:

1994 թ. ի վեր հրադադարն ավելի կամ պակաս չափով պահպանվում է, բայց ամեն շաբաթ այս բլրի վրա նոր գերեզմաններ են ծաղկում: Այսօր գերեզմանոցի եզրին 6 նոր շիրմափոսեր, բաց բերանների նման, պատրաստ են կլանելու Արցախում մի ուղղաթիռի վթարի զոհերին:

Մոնթեի գերեզմանից 17 քայլ արևելք Վազգեն Սարգսյանի շիրիմն է: Պատերազմի հերոսն ու «Պաշտպանության կոմիտեի» նախկին զեկավարը նոր էր նշանակվել Հայաստանի վարչապետ, երբ 1999 թ. հոկտեմբերի 27-ին Երևանում 5 զինյալներ ներխու-

ժեցին Խորհրդարանի նիստերի դահլիճը: «Հերի՛ք է մեր արյունը խմեք» բղավելով՝ նրանք թիկնոցների տակից «Կալաշնիկովներ» հանեցին: Երբ ծուխն անհետացել էր, Սարգսյանն ու ևս 7 պատգամավոր սպանված էին: Ասում էին, թե Խորհրդարանի վրա հարձակումը հետ-խորհրդային Հայաստանում աղքատության ու կոռուպցիայի դեմ ահագնացող զայրույթի ծայրահեղ արտահայտություն էր: Համենայն դեպս, այդպես էին փորձում իրենց կատարածը բացատրել այդ ոճիրի հեղինակները:

1990 թ. սեպտեմբերին, երբ Մոնթեն առաջին անգամ եկավ Երևան, քաղաքի հրապարակները հույս էին ճառագում, որը հետո մեռավ: Օպերայի հրապարակում միմյանց փարվող ջերմ մարմինները, խռպոտ ձայները և անհապաղ լուծում պահանջող խնդիրների՝ շնչահեղձ անող շարանը Մոնթեին ներքաշել էին ազգային միասնության գիրկը, որից, իբրև պատրանքից, նա տարիներ առաջ հրաժարվել էր: Երևանում նա մասնակցեց երթերին, հիմներ երգեց և հավատաց թերթերի առաջնորդող քառասունակ հոդվածներին ու նոր գործիչներին նվիրված ներբողյաններին:

Բայց մինչ հայերն ու ադրբեջանցիներն իրար էին սպանում Արցախի լեռներում, «ընտանեկան գործարարության» մի քանի հարյուր ներկայացուցիչներ, կառավարության նախարարներ և արտասահմանյան ներդրումների տեղացի միջնորդներ կողոպտում էին այն երկիրը, որը պաշտպանելիս Մոնթեն պիտի մեռներ: Նրա հայրենակիցները մատնվեցին աղքատության մի ձևի, որի խրտվիլակով նախկինում նրանց վախեցնում էին կոմունիզմի գաղափարախոսները: Իհարկե, հարուստներն ավելի հարստացան, նույնիսկ այն ժամանակ, երբ մանկական մահացությունն ու հիվանդությունները, գործազրկությունն ու ինքնասպանությունների քանակը խիստ աճում էին, իսկ աշխատավարձերը, կյանքի միջին տևողությունը, ամուսնությունները ու ծնունդները կրճատվում: Խորհրդային ժամանակների համալսարանների դիպլոմներով մարդիկ մուրացկանությամբ են զբաղվում բազմացող պիցցերիաների առաջ, որոնք լի են արտասահմանցիներով, իսկ «ձեռներեց» երիտասարդ կանայք և համարյա դեռատի աղջիկներ ավտոբուսի տոմսի համար դրամ են խնայում՝ իրենց բախտը փնտրելով Ստամբուլի պոռնկատներում:

Մի հրատարակված հարցազրույցում Հմայակ Հարոյանը հիշում է Մոնթեի պատասխանն «Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի ապագան» հարցին: «Կարելի էր կարծել, թե նա կպատասխաներ՝

«հաղթական» կամ «անվտանգ սահմաններով», — գրում է Հարոյանը, — բայց ո՛չ. նա պատասխանեց՝ «Առանց կոռուպցիայի և արդար»»: Քսաներորդ դարի վերջին տասնամյակում երկիրն ավելի ու ավելի էր հեռանում այդ արժեքներից: Մոնթեին ամենից շատ կանհանգստացներ արտագաղթի աղետալի մակարդակն այն ժամանակից ի վեր, ինչ Հայաստանը վերադարձավ կապիտալիստական հասարակարգին: «Շուկայի ազատականացման բարեփոխումների» 10 տարիներից հետո Հայաստանի Հանրապետության բնակչությունը նվազեց մեկ քառորդով՝ 1991 թվականի 4 միլիոնից մինչև 2001 թվականի 3 միլիոնից պակասը: Արտագաղթը պակասեցրեց նաև Արցախի բնակչությունը՝ ըստ որոշ հաշվարկների հասցնելով այն 100000-ից պակասի:

Սեղան ու ես ավարտում ենք Մոնթեի գերեզմանաքարը լվանալը և տեսնում հնամաշ բաճկոնով միջին տարիքի մի մարդու, որ կանգնած է պատկառելի հեռավորության վրա՝ ձեռքերը ծալած: Մենք նրան չենք ճանաչում, բայց պարզ է, որ նա եկել է Երևան՝ ծաղիկներ դնելու մի հարազատի կամ, գուցե, ընկերոջ շիրիմին: Մոնթեի գերեզմանի մոտ նրա՝ կարմրով եզերված աչքերում արցունքներ են հայտնվում:

— Էդ մարդ ուրիշ էր, — շշնջում է նա իր ոսկե ատամների միջով:

Այստեղ, Արարատ լեռան հովանու տակ, որտեղ Նոյի փրկության տապանը հանգրվանեց ցամաքի վրա, ես հիշում եմ մի հայկական ասացվածք. «Ձրհեղեղն անցնում է, ավազն է մնում. մարդն անցնում է, անունն է մնում»: Մոնթեն, թվում է, հետխորհրդային այն հատուկենտ հերոսներից է, որոնց շարունակում են ակնածանքով վերաբերվել Հայաստանում: Ազգայնականները, կոմունիստները, ազատականները և քաղաքականապես չեզոք մեծամասնությունը՝ բոլորը, մեծարում են նրան և իրենցը համարում: Նախագահ Տեր-Պետրոսյանը նրան հետմահու հայտարարեց Հայաստանի Հանրապետության յոթ ազգային հերոսներից մեկը: Նա ստացել է Արցախի բարձրագույն պարգևներ, որոնց թվում՝ «Առաջին կարգի մարտական խաչը» (1993 թ. նոյեմբերի 23) և «Ոսկե արծիվ» մեդալը (այն ստացած 5 հոգուց մեկը՝ 1999 թ. սեպտեմբերի 21): Այսօր նորակոչիկները երդվում են Մարտունու քաղաքապետարանի հրապարակում՝ հրամանատար Ավոյի կոթողային մարմարե հուշարձանի առաջ, որ պատկերում է Մոնթեին՝ իր «ուռքի-թոքիով», հեռադիտակով ու ինքնաձիգով: Հրամանա-

տարի մահվանից 7 տարի անց Արցախի շրջանային հրամանատարներից յոթից հինգը Մոնթեի օրոք Մատունիում ծառայած զինվորներ են:

Մոնթեի երկրպագուներից ոմանք պնդում էին, թե նա հանդես բերեց այն վճռական ազդեցությունը, որ անհատը կարող է ունենալ ազգի ճակատագրի վրա: Նայելով Հայաստանի այսօրվա տխուր կացությանը, սակայն, կարելի է նաև եզրակացնել, թե նույնիսկ ամենաբացառիկ անհատները չեն կարող փոխել ազգի ճակատագիրը: Ուրիշները՝ ինչպես հիացողներ, այնպես էլ չարախոսներ, Մոնթեի օրինակից կարող են այլ դասեր քաղել. մեկը թերևս նրա կյանքը համարի այն բանի ապացույց, որ պատմությունը կերտում են բացառիկ անհատները՝ հերոսներն ու չարագործները: Մի ուրիշը կարող է Մոնթեի կյանքով հաստատել այն իմաստությունը, թե մեծ մարդիկ իրենք պատմության արգասիք են: Մի երրորդը գուցե հիշի Մատթեոս ավետարանչի խոսքերը, թե՝ «ամենեքեան, որ սուր առնուցուն, սրով անկցին» (ԻԶ, 52), իսկ մի չորրորդը երևի կհամաձայնի Եղիշե պատմագրի հետ, որ՝ «Մահ իմացեալ անմահութիւն է»:

Ես ինքս չգիտեմ, թե ինչ են թելադրում Մոնթեի կյանքից, չհամընկնող նկարագրություններից և իրարամերժ պնդումներից բխող հակասական բարոյական սկզբունքները: Բայց գիտեմ, որ ինչ դասեր էլ քաղենք, դրանք նույնքան մեր մասին են լինելու, որքան Մոնթեի:

Ես շրջվում եմ՝ նայելու մշուշապատ հորիզոնին: Վայրագ հարյուրամյակի վերջին տարում այս բլրին կանգնած՝ հայացքս ուղղում եմ Արարատյան դաշտի կանաչ տարածությանը՝ հարյուրավոր ճակատամարտերի թատերաբեմին, որ ձգվում է թուրքական սահմանը եզերող դիտակետերից այն կողմ: Մշտապես ձյունածածկ Արարատը՝ «Ցավի լեռը», աշտարակի պես վեր է խոյանում դաշտի վրա, իսկ ճանապարհներն ու գետերը ոլորվելով կորչում են հեռվում՝ մեր տեսողության սահմաններից դուրս:

Երևան, 15 ապրիլի, 2000 թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1993 ԹՎԱԿԱՆ)

12 «Վարձկան» – Mark Arax, "The Riddle of Monte Melkonian," Los Angeles Times, October 9, 1993, էջ A1, A16. մեջբերումը A16 էջից է:

12 «Լավագույն աստվածը» – Raymond Bonner, "Martuni, Azerbaijan," New York Times, August 4, 1993, էջ A3:

13 «...Դաժանացած ու ամենամոլեռանդ դրդապատճառներով առաջնորդվող ուժ» – Thomas Caufield Goltz. "Azerbaijan Diary: A Rogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post-Soviet Republic," Armonk, New York and London: M.E. Sharpe, 1998, էջ 392:

14 «Սովետներին կոտորող» – Աֆղանստանի պատերազմի վետերան, գնդապետ Անատոլի Զինևիչն այսպես է Մոնթեին բնորոշել մի քանի անգամ, նաև՝ Հայաստանի հեռուստատեսությանը և 1998 թ. «Ազգ» թերթին տված հարցազրույցներում:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Գլուխ 1. Փոքր քաղաքի տղան

17 «Զարմանալի է, որ ողջ մնացի» – «Ինքնանկատություն» (հայերեն, անտիպ), էջ 8: Մոտավորապես 14.000 բառ պարունակող 32-էջանոց մեքենատիպ «Ինքնանկատությունը» գրվել է հիմնականում 1989-90 թթ. ձմռանը և տարածվել Մոնթեի մոտ ընկերների և զինակիցների շրջանում: Սեդան թարգմանել է այն անգլերեն:

24 «Փիթչեր», «քեթչեր» – Բեյսբոլի տերմիններ. Ռեյն Մարիչալը, Ուիլի Մեյզը և Ռոբերտո Կլեմենտեն նշանավոր բեյսբոլիստներ են եղել Մոնթեի մանկության ժամանակ: Բեյսբոլի գնդակը նետելու տարբեր ձևեր կան: «Փիթչերի» նպատակը պետք է լինի հարվածողի համար հնարավորինս դժվարացնել գնդակին խփելը: «Քեթչերը» հարվածողի հետևում պպզած խաղացողն է, որը պետք է գնդակը բռնի, երբ «փիթչերը» նետում է այն, եթե հարվածողին չի հաջողվում գնդակին խփել:

Գլուխ 2. Երկիմաստություն

33 «Կալիֆոռնիայի «ռոբին Հուդեր»» – Հարգարժան պատմաբան Հյուբերդ Հ. Բանքրոֆթը համամիտ էր մեզ հետ, որ Մուրիետան ավելի

վեհ նպատակներ ուներ, քան վրեժխնդրությունն ու զուտ կողոպուտը. *The Works of Hubert Howe Bancroft, Vol.XXXIV: California Pastoral: 1769-1848, (San Francisco: The History Company, 1888, էջ 646).*

Գլուխ 3. Նախնյաց պատմությունները

44 «Ոչ թե գենետիկան, այլ մշակույթն է եղել հայ ժողովրդի, հայ ազգի որոշիչ հատկանիշը» – Մելքերումը «Մեր ծագումը. ճշմարիտ և սուտ» ("Our Origins: True and False") վերնագրով կարճ հոդվածից է (էջ 5). այն հրատարակվել է Մոնթե Մելքոնյանի՝ «Հայկական հարցին» վերաբերող «Պայքարելու իրավունքը» հոդվածների ժողովածուի մեջ՝ Monte Melkonian, The Right to Struggle: Selected Writings by Monte Melkonian on the Armenian National Question, 2nd edition (San Francisco: Sardarabad Press, 1993) (այսուհետև՝ The Right to Struggle, էջ 3-6: «Մեր ծագումը» Մոնթեն գրել է 1981-ին, բայց գրառում արտահայտված հույզերն արդեն մի քանի տարվա հնություն ունեին:

44 «Ինձ հայ եմ համարում» – "Our Indo-European Roots," Լոս Անջելեսում հրատարակվող «Ասպարեզ» երկշաբաթաթերթ, մայիսի 24, 1978, էջ 2:

44 «Հայկական գաղտնի հեղափոխական կազմակերպություն» – Պարզվեց, որ այդ կազմակերպությունը «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան» կուսակցությունն էր:

45 Հակոբի ժամանումը Ֆրեզնո – Թվականը պարզ չէ, սակայն, ըստ Զեմայամա Քիրամիջյանի, նա ժամանել է տարբեր աղբյուրներում հիշատակվող 1881 թվականից մի քանի տարի առաջ: Հակոբի անտիպ օրագիրը հաստատում է Քիրամիջյանի վկայությունը:

50 «Նրանք իրենց զոհերին տանջում էին» – Rev. George H. Filian, "Armenia and Her People, or the Story of Armenia by an Armenian" (Hartford, CT: American Publishing Company, 1896), էջ 243:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Գլուխ 4. Բաց ճանապարհը

64 «Սփյուռքահայ» – 1984-ին գրած մի ակնարկում Մոնթեն բնորոշել է հային որպես «մեկը, ա) որի նախնիները հայ են եղել, և բ) ով իրեն հայ է համարում, կամ գ) ով ավելի շատ կապված է հայկական մշակույթին (որպես ամբողջության, այլ ոչ նրա կրոնական, լեզվական կամ մեկ այլ բաղադրիչի), քան որևէ այլ մշակույթի» (The Right to Struggle, էջ 27): Սփյուռքահայը, շարունակում է նա ակնարկի հաջորդ էջում, պարզապես իր «պատմական հայրենիքից» դուրս ապրող հայ է:

66 «Վաղ թե ուշ...» – Մարգարին ուղղված մի նամակից՝ թվագրված 3 սեպտեմբերի, 1987: Այս հատվածը մեջբերված է The Right to Struggle գրքում, էջ 15:

68 «Ոչ ոք չի մոռանա...» – Judy Sanoyan, "Hye Profile: Monte Melkonian," Hye Times, № 2 (March, 1987), էջ 2:

70 «Երևի ուսանողներին շատ եմ ցածր գնահատականներ գրել» – UCLA Daily Bruin, October 4, 1977, էջ 1:

70 «Դաշնակից պետությունների պրոպագանդիստներ» – Stanford J. Shaw and Ezel Kural Shaw, History of the Ottoman Empire and Modern Turkey, Vol. 2: Reform, Revolution, and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1975 (Cambridge: Cambridge University Press, 1977) էջ 315-16:

71 «30-րդ պարբերություն» – Երբ 1978 թ. սեպտեմբերի 12-ին ՄԱԿ-ի ենթահանձնախումբը «Հատուկ հանձնաժողովին» 187-էջանոց ուսումնասիրության վերջնական տարբերակը ներկայացրեց, գրառում հայոց ցեղասպանությունը հիշատակված չէր:

76 «Պետք է մէջէն ապրիս» – Նամակ Սեդա Գպրանյանին. 19 հունիսի, 1988:

77 «Ինձի համար այսքան պարզ էր» – «Ինքնաքննադատություն», էջ 4:

Գլուխ 5. Ուխտագնացություն

78 «Մի սեսակ մեքսիկական վերնաշապիկ» – Մոնթեի՝ 1978 թ. լոնդոնյան այցելության մասին տեղեկությունները հիմնված են Մարգարի հետ նրա նամակագրության և զրույցների, ինչպես նաև՝ 1991 թ. հոկտեմբերի և 2000 թ. միջև Նժդեհ Մելքոնյանի հետ Մարգարի ունեցած զրույցների վրա:

79 «Պարզապես նայեցի աշխարհի քարտեզին» – Նամակ Արմեն Սին՝ թվագրված 1988 թ. ապրիլի 25-ով:

81 «Լիբանանի մեջ որոշ հայերու վստահությունը շահիլը քիչ մը դժվար էր» – «Ինքնաքննադատություն», էջ 10:

85 «Երիտասարդ վրիժառուներ» – «Հայ Հեղափոխական դաշնակցություն» կուսակցության ղեկավարությամբ Արշավիր Շիրակյանը (1900-1973) և 5-6 այլ երիտասարդներ իրագործեցին «Նեմեսիս» օպերացիան՝ սպանելով Օսմանյան կայսրությունում ապրող հայերի՝ 1915-18 թթ. ցեղասպանության թուրք կազմակերպիչներին: 1921-ից հետո Շի-

բակյանն սպանեց Թուրքիայի նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, «Միություն ու առաջադիմություն» կոմիտեի ղեկավար Բեհաէդդին Շաքիր բեյին և Տրապիզոնի կառավարիչ Ջեմալ Ազմի փաշային: Սողոմոն Թեհլերյանը (1897-1960) 1921 թ. սպանեց Ներքին գործերի նախարար և «Միություն ու առաջադիմություն» կոմիտեի պարագլուխ Թալեաթ փաշային: Գերմանական դատարանը, դատաքննության ենթարկելով Թեհլերյանին, անմեղ ճանաչեց նրան:

85 և հաջ. Մոնթեի այցն Աֆղանստան – Հաջորդ տարի՝ 1979 թ. դեկտեմբերի 24-ին, Խորհրդային տանկերը մտան Աֆղանստան: 1980-ին, ընտանիքին ուղարկած մի նամակում, Մոնթեն գրել է, որ Խորհրդային ներխուժումն Աֆղանստան ի վերջո անասելի վնաս էր պատճառելու ԽՍՀՄ-ին:

85-86 «Ապշեցուցիչ դեպքերը», «ոստիկանների երկու այտերը համբուրելով» – 1978 թ. սեպտեմբերի 24-ին Բեյրութ վերադառնալուց քիչ անց նրա գրած նամակից, որը, սակայն, ուղարկված է Սիրիայից:

86 Ջալեհ հրապարակում տեղի ունեցած նախճիրը – 1977 թ. հունիսից մինչև 1979 թ. ապրիլ Թեհրանում ԱՄՆ դեսպան Ուիլլիամ Սալլիվանն ասում է, որ այդ օրը հրապարակում «երկու հարյուրից ավելի ցուցարարներ են սպանվել» (Waheed Uz-Zaman, Iranian Revolution: A Profile (Islamabad: Institute of Policy Studies,1985), էջ 64): Ըստ արևմտյան այլ աղբյուրների՝ զոհվել էին 1000 կամ ավելի մարդ (տե՛ս, օրինակ՝ Barry Rubin, Paved with Good Intentions: The American Experience and Iran [New York: Penguin Books, 1981], էջ 214, և Dilip Hiro, Iran Under the Ayatollahs [London, Routledge and Kegan Paul, 1985], էջ 77): Մեկ այլ աղբյուր գրում է, թե այդ օրը Շահի բանակը սպանել է «հազարավոր անմեղ ցուցարարների» (R.K. Ramazani, Revolutionary Iran: Challenge and Response in the Middle East [Baltimore and London: Johns Hopkins University Press, 1986], էջ 164 և 205): Ընդդիմության ներկայացուցիչներն Իրանում պնդում են, թե 4000-ից ավելի ցուցարարներ էին սպանվել Ջալեհ հրապարակում, մի թիվ, որը հաստատվում է Գեհիշտ-է-Զեհրա գերեզմանոցի տված թաղման վկայականների քանակով (Ali-Reza Nobari [ed.], Iran Erupts (Stanford, 1978), էջ 196, Uz-Zaman, էջ 64. մեջբերում մի ականատեսի վկայությունից, որ տպագրվել է Le Figaro թերթում, սեպտեմբերի 9-10, 1987): Ռամազանիի գրքի 159-րդ էջում նշված է, թե հրապարակում խորայելցի զինվորներ էին ներկա, որոնք միացել էին ցուցարարների վրա կրակող՝ շահի բանակին: Իրանից ուղարկած մի նամակում Մոնթեն որպես փաստ է ներկայացնում այս մեղադրանքը:

87 «Ես նրանց խելքի բերեցի» – 1978 թ. սեպտեմբերի 12-ով թվագրված՝ «սիրելիներին» հասցեագրված նամակից: Իրանական-ամերիկյան դպրոցում Մոնթեի կարճատև աշխատանքի մասին տեղեկությունները հիմնված են առավելապես Մարգարի՝ Մոնթեի և 2003 թ. հունիսի 14-ին Թեհրանցի Վահիկ Շ.-ի հետ ունեցած զրույցների վրա: 1979 թ. գործադուլից ամիսներ անց մի ռումբ ավերեց դպրոցի շենքը, որից հետո այն փակվեց:

92 «Սպիտակ ջարդ» – The Right to Struggle, էջ 6:

Գլուխ 6. Անհանգիստ ժամանակներ

103 և հաջ. Ճամփորդություն դեպի Հաֆթվան և Մահաբադ – Այս հատվածը մեծ մասամբ հիմնված է Ռայմոնդ Գևորգյանի (Փարիզ, ապրիլի 1, 1997) և Վահիկ Շ-ի (Երևան, ապրիլի 22, 2000) հետ Մարգարի հարցազրույցների, ինչպես նաև՝ Մոնթեի նամակների ու նրա հետ զրույցների վրա:

104 «Գյուղական կյանքի անհույս թշվառությունը» – Այս պարբերությունում մեջբերված հատվածները Մոնթեի՝ 1979 թ. սեպտեմբերի 9-ին ընտանիքին ուղղված նամակից են՝ ուղարկված Իրանից:

107 «Էլիաս Ֆրենսիսը... սկսեց հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղալ» – Այս և հաջորդ փաստերը մասամբ հիմնված են Մանուշակ ու Հակոբ Ստեփանյանների հետ Սեդայի հարցազրույցի վրա (Նյու Ջերսի, օգոստոսի 25, 2000):

109 «Որպես նվազագույն պահանջ» – Այս հատվածը քաղված է "The Question of Strategy" («Ռազմավարության հարցը») հոդվածից, որ առաջին անգամ լույս է տեսել 1984-ին (նաև ընդգրկված է The Right to Struggle գրքի մեջ, էջ 53-72. մեջբերումը 59-րդ էջից է):

110-11 Նազոյի տանը տեղի ունեցած վիճաբանությունը – Այս տեղեկությունը հիմնված է միջադեպից քիչ անց Մոնթեի ու Դավթի հետ Մարգարի զրույցի և 1997-ի հունվարին Վարդգեսի ու Սեդայի միջև տեղի ունեցած խոսակցության վրա:

112 «Մարքսիզմը պարզապես... մի «մոդայիկ ժարգոն» էր» – Թվում է, սա տարածված կարծիք է եղել Հայաստանում Մոնթեի համակիրների միջավայրում: Նույն տեսակետն է հայտնում նաև Սարգիս Լևոնյանը՝ Հ. Ջեկ Աալանյանի հետ մի հրապարակված հարցազրույցում ("Home at Last: Monte Melkonian," The Armenian Observer, October 12, 1994, էջ 7-11):

113 «Հասցեն փոխելու» – Fresnes բանտից 1987 թ. հունվարի 10-ին «սիրելիներին» գրված նամակից:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ
Գլուխ 7. Ընդհատակում

121 և հաջ. Հակոբյանի կենսագրականը – Տեղեկությունները քաղված են «Գաղտնի բանակի» նախկին անդամների (որոնց անունները պետք է անհայտ մնան) հետ վարած հարցազրույցներից, ինչպես նաև՝ երեք գրվածքներից, որոնք ամբողջությամբ կամ մասամբ հեղինակել է Մոնթեն: Դրանք են՝ «ASALA-ի պատմություն» (History of ASALA) (հատկապես՝ «Մվ է Հակոբ Հակոբյանը» հատվածը, էջ 88-151), «Իրականությունը» (The Reality) և արդեն հիշատակված «Ինքնաքննադատությունը»: «ASALA-ի պատմությունը» հրատարակել են անհայտ անձինք՝ առանց Մոնթեի թույլտվության, հավանաբար՝ Լոզանում (Շվեյցարիա), 1990 թ.: 17.000 բառից բաղկացած «Իրականությունը» 1984 թ. պատրաստել էին մի խումբ մարդիկ, ապա 1985 թ. հունվարին այն վերանայվեց և շրջանառվեց պատճենահանված տարբերակով, անգլերեն: Մեկ այլ խմբագրումից հետո երևանում 1992 թ. հրատարակվեց մի հայերեն թարգմանություն՝ երկու այլ գրվածքի հետ, «ASALA հեղափոխական շարժում» կազմակերպության դրոշմով: Մյուս աղբյուրներն են Սեդայի զրույցները Մոսուլում Հակոբյանի նախկին դասընկեր «Հոլլանդիայի Վարդանի» հետ, ASALA-ի պաշտոնաթերթ «Հայաստանի» որոշ հին համարներ (սկսած 1980 թ. աշնանը լույս տեսած թիվ 0-ից մինչև «ASALA 1975-95» վերնագրված հուշահամարը, հրատարակված հարցազրույցներ ASALA-ի ղեկավարի հետ, ինչպես նաև՝ Բեյրութում լույս տեսած "Memoirs of Hagop Hagopian" («Հակոբ Հակոբյանի հուշերը») վերնագրով անգլերեն մի գրքույկ (հրատարակության թվական կամ վայր նշված չէ):

122 «Հաղդադի խումբը... ի վերջո քայքայվեց» – Անդամ «Արտաքսահմանում գործող ենթախմբի» լուծարումից հետո, Հաղդադը շարունակեց անկախաբար գործողություններ ծրագրել, որոնց թվում՝ 1975 թ. դեկտեմբերի 21-ին OPEC-ի՝ Վիեննայում գտնվող կենտրոնական գրասենյակից 70 պատանդ վերցնելը: Դա արեց իրեն «Արաբական հեղափոխություն» կոչող մի խումբ: Վիեննայի օպերացիայի ղեկավարն էր վենեսուելացի «Կարլոսը»:

122 «Աբու Իյադ» – 1959-ին Աբու Իյադը (իսկական անունը՝ Սալահ Խալֆ)՝ մոտ քսանհինգ տարեկան, Յասիր Արաֆաթի (Աբու Ամմար) և Խալիլ Ուազիրի (Աբու Ջիհադ) հետ միասին հիմնեց «Ֆաթահ» պալեստինյան ամենախոշոր պարտիզանական խմբավորումը: 1970 թ. Հորդանանի Հուսեյն թագավորի կազմակերպած՝ պալեստինցիների կոտորածից հետո, Աբու Իյադը հիմնեց «Սև սեպտեմբեր» պարտիզանական խումբը, որը 1972 թ. Մյունխենի Օլիմպիական խաղերի ժամանակ սպանեց 11 իսրայելցի մարզիկների (նրանցից չատերն իսրայելական բանակի պահեստայիններ էին): Իսրայելցի գործակալները 1988-ին սպանեցին Աբու Ջիհադին, իսկ 1991 թ. հունվարի 14-ին, Թունիսում՝ Աբու Իյադին ու նրա երկու գործընկերներին:

122 և հաջ. «Գաղտնի բանակի» գործունեությունը – Այս և հաջորդ մի քանի գլուխներում ներկայացված տեղեկությունները հիմնված են տարբեր աղբյուրների՝ անմիջական դիտարկումների, ականատեսների վկայությունների, Մոնթեի պատմածների, Սեդայի հուշերի, մամուլում լույս տեսած ու անտիպ նյութերի վրա: Դրանք ի մի են բերվել այդ «փոքրիկ գրադարանի» քննադատական ընթերցմամբ: Պարբերաթերթերը ներառում են, մասնավորապես, «Գաղտնի բանակի» «Հայաստան» պաշտոնաթերթի և Արա Թորանյանի «Հայ պայքարի» հին համարներ (վերջինիս՝ թիվ 1-ից մինչև 124՝ տպված 1978-88 թթ. միջև): Օգտագործվել են նաև ամբողջովին կամ մասամբ Մոնթեի հեղինակած գրվածքներ: Դրանց թվին են պատկանում մի խումբ մարդկանց ջանքերով պատրաստված՝ «Հայկական զինյալ գործունեության քննադատությունը վաղ 1970-ական թվերից մինչև 31.12.1984» (A Critique of Armenian Armed Action from the Early 1970's until December 31, 1984), որ տարածվել է Լոնդոնի «Կայծեր» խմբի կողմից 1980-ականների կեսերին՝ "ASALA Revolutionary Movement" դրոշմը կրող 126-էջանոց լուսապատճեն գրքույկի տեսքով, և «Հայկական զինյալ գործունեության տեղեկագիր. 1985-1987» (A Critique of Armenian Armed Action from 1985 to 1987)՝ տարածված 1988-ին, «Կայծեր» խմբի կողմից, "ASALA Revolutionary Movement" դրոշմը կրող 17-էջանոց լուսապատճեն գրքույկի տեսքով (Մոնթեի ձեռագիր ուղղումներով և հավելումներով):

128 Մոնթեի՝ Հայաստան այցելելու ծրագիրը – 1980 թ. փետրվարի 22-ին քրոջը՝ Մայլեին հղած նամակում Մոնթեն գրել է, որ ծրագրում է Խորհրդային Հայաստանում լինել այդ տարվա հունիսի 18-ից առաջ. «Անշուշտ սրանք իմ այժմյան ծրագրերն են: Ամիսներ կան իմ առաջ, որոնք կարող են ազդել այս ծրագրերի վրա»:

129 Կոլեր, «բավարացի նեոնացիստ, որ չէր պատկանում որևէ կազմակերպության» և «միայնակ գայլ՝ առանց կազմակերպության» – Այս բնորոշումները հաջորդաբար մեջբերված են՝ George Rosie, "The Direc-

tory of International Terrorism" (Edinburgh: Mainstream Publishing, 1986), էջ 206, և Hans Josef Horchem, "Terrorism in Germany:1985," Paul Wilkinson and Alasdair M. Stewart (խմբագիրներ), Contemporary Research on Terrorism (Aberdeen, Scotland: Aberdeen University Press, 1987, էջ 141-63), էջ 150:

130 «Freikorps Adolf Hitler խմբավորում» – Տե՛ս Horchem, "Terrorism in Germany: 1985" (Wilkinson and Stewart, Contemporary Research on Terrorism), էջ 154-55: Հետագայում, երբ Աբու Իյադի հետ Հակոբյանի հարաբերությունները վատացան, «Գաղտնի բանակի» պաշտոնաթերթ «Հայաստանը» բացահայտեց պաղեստինցի ղեկավարի կապերը Հոֆֆմանի ավազակախմբի հետ («Հայաստան», թիվ 77-78, 1983, էջ 58): Արևմտյան Գերմանիայի ոստիկանությունը ձերբակալեց Հոֆֆմանին 1981 թ. փետրվարին կամ մարտին՝ կապված 1980 թ. դեկտեմբերի 19-ին Գերմանիայի Էրլանգեն քաղաքում երկու հրեա զրողների սպանության հետ: Ենթադրյալ մարդասպան Ուվե Բեհրենդտն ինքնասպանություն գործեց Լիբանանում 1981 թ.:

130 «Նեոնացիստի ներկայությունը «Ֆաթահի» ճամբարում» – Բեյրութում ապրող թղթակից Ռոբերտ Ֆիսքը գրել է Հոֆֆմանի՝ Լիբանանի փաղանգավորների հետ կապեր ունենալու մասին ("Pity the Nation," New York: Atheneum, 1990, էջ 169-172): Պետք է նշել, որ պաղեստինցի շատ ղեկավարներ, որոնց թվում՝ Ջորջ Հաբբաշը (ՊԱԺՃ), Նայեֆ Հաուաթմեն (ՊԱԺՃ) և Արաֆաթի տեղակալ Աբու Ջիհադը («Ֆաթահ»), բացառել են որևէ կապ նեոնացիստների հետ:

130 «Ֆաշիստ էր, այն տեսակից, որի պստճառով մեր հայրը...» – Երկրորդ համաշխարհային պատերազմում սերժանտ Ջարլզ Մելքոնյանն «Օդուժի կորպուսի» B-17 Flying Fortress-ի 22 թռիչքի է մասնակցել, որպես ռադիոօպերատոր, և հրաժարվել՝ «Օդուժի 8-րդ միավորման» ռմբակոծիչների 385-րդ խմբում: Մեր հայրը հազվադեպ էր խոսում իր պատերազմական փորձառության մասին և երբեք մեզ ցույց չտվեց «Օդուժի» իր մեդալն ու մյուս շքանշանները, որոնք պահում էր մի փոքրիկ տուփի մեջ մանժետակոճակների հետ: Այնուամենայնիվ, վկայակոչելով Երկրորդ համաշխարհային պատերազմում իր հոր օրինակը, Մոնթեն մի անգամ բացատրել է, թե՝ «Այդ ներշնչումն էր և ոչ թե «Հին երկրի» մասին մեր պապերի (որոնց ես երբեք չեմ տեսել) պատմածները, որ ինձ համակեց ֆաշիստական զավթողականության ու ճնշման դեմ պայքարելու համոզմունքով» («Հայաստան», թիվ 21-22 [մարտ 1982], էջ 66):

130 Կառլոս Մարիգելլա (1911-1969) – Նախկին կոմունիստական մարտիկ Մարիգելլան ճանաչված է որպես «Քաղաքային պարտիզանական պայքարի համառոտ ձեռնարկի» (The Mini-Manual of the Urban Guerrilla) հեղինակ: 1960-ականներին նա օգնել է հիմնադրել «Ազգային ազատագրական գործունեություն» կոչված մի ընդհատակյա խումբ: Այն պայքարում էր 1964 թ. մարտի հեղաշրջումով ամբոխավար ղեկավար Ժոաո Գուլարտի կառավարությունը տապալած՝ ԱՄՆ-ի աջակցությունը վայելող դաժան բռնատիրության դեմ: 1969 թ. Բրազիլիայի ոստիկանությունը սպանեց Մարիգելլային:

132 «Մուգ ապակիներ» – Մոնթե Մելքոնյան, «ASALA-ի պատմություն», էջ 198: Մոնթեն հետագայում զղջալու էր նաև դեսպանատան կցորդի կնոջ վրա կրակելու համար (Մարդարի հարցազրույցը Ալեք Ցենիգոմշյանի հետ, 1997 թ. ապրիլ): Տե՛ս նաև Critique of Armenian Armed Action, էջ 38 և «Ինքնաքննադատություն», էջ 28: Մոնթեն «ASALA-ի պատմությունը» գրել էր անգլերեն 1985 թ. վերջերին, սակայն շուտով մտափոխվել էր և վերացրել ձեռագրի՝ իր կարծիքով միակ օրինակը: Հինգ տարի անց նա զարմացած ու զայրացած հայտնաբերեց, որ ինչ-որ մեկն ինչ-որ ձևով հրատարակել էր գիրքը՝ առանց հեղինակի համաձայնության: Տպված գիրքը հրատարակության վերաբերյալ տվյալներ չի պարունակում՝ բացի մի կասկածելի հայտարարությունից, թե այն հայերեն է թարգմանել ոմն «Ազատ Մարտիրոսյան», և՝ թե այն տպվել է Լոզանում 1990 թ.:

146 Ռիտա Գորենա – Միլանի Panorama թերթում տպված հարցազրույցում (1 սեպտեմբերի, 1980, էջ 62-65). Գորենան նկարագրում է «Գաղտնի բանակը» որպես «Միջին Արևելքում և Եվրոպայում գործող ամենախորհրդավոր և ամենակազմակերպված զինյալ խումբը»: Թեև նրա գրածի ճշմարտացիությունը, թվում է, կասկածելի էր, սակայն Մոնթեն համակրում էր Գորենայի նվիրվածությունն ու անկեղծությունը:

137 «Անարխիկ և մաֆիային վայել» – Critique of Armenian Armed Action, էջ 29:

145 և հաջ. Ալեքը Ցանթայում – Այս տեղեկություններն առավելապես հիմնված են Ալեքի վկայությունների վրա, ինչպես նաև՝ Մոնթեի հուշերի, որոնք նա պատմել է Սեդային 1989 թ. և Մարգարին՝ 1991 թ. հուլիսին:

Գլուխ 8. Կասկածյալ ահաբեկիչը

147 «Պատմական ու մշակութային կապվածության» – The Right to Struggle, էջ 179:

148 «Անվրեպ ու կործանարար կրակ բացեցին» – Jonathan C. Randal, Going All the Way: Christian Warlords, Israeli Adventurers, and the War in Lebanon (New York: The Viking Press, 1983), էջ 242: Իսրայելցի հրամանատարները 1981 թ. հուլիսի 16-ի պաղեստինցիների հրթիռային հակահարձակումը նկարագրում էին որպես «վերջին տարիների ընթացքում ամենից ուժգին» (New York Times, July 16, 1981, էջ A3):

148 1981 թ. հուլիսի զոհերը – Զոհերի թիվը բերված է ըստ արևմտյան աղբյուրների, հիմնականում՝ New York Times-ի (որը հակված էր նվազեցնելու արաբ խաղաղ բնակչության զոհերի թիվը): Իսրայելցիների միայն մեկ օդային հարձակման ընթացքում, որ տեղի է ունեցել Ֆախանիի վրա 1981 թ. հուլիսի 17-ին, 350 քաղաքացիներ են զոհվել և հարյուրավոր ուրիշներ վիրավորվել (տե՛ս Դուգլաս Ուաթսոնի հաղորդումը՝ The Baltimore Sun, July 22, 1981)՝ «մի փոքր ռազմական վնաս կամ գրեթե դրա բացակայություն», New York Times, July 25, 1981, էջ A4:

149-51 Փարիզի Թուրքական հյուպատոսարանի գրավումը – Այս տեղեկությունները հիմնված են բազմաթիվ աղբյուրների վրա, ներառյալ՝ Ֆրանսիայի մամուլում հրապարակված հոդվածներ, «Հայ պայքարի» հին համարներ, Մոնթեի զրույցները Մարգարի հետ 1991-ի հուլիսին Երևանում, Մարգարի հարցազրույցը Արա Թորանյանի հետ 1997-ի ապրիլին Փարիզում և Մարգարի ու Սեդայի զրույցը Վազգեն Սիսլյանի ու Հակոբ Ջուլֆայանի հետ 1997-ի ապրիլին Երևանում: «Գաղտնի բանակի» պաշտոնաթերթ «Հայաստանը» մեծ տեղ է հատկացրել այս գործողության ու դրա հետևանքներին իր երկու համարում՝ թիվ 16 (հոկտեմբեր, 1981) և թիվ 17-18 (հունվար, 1982):

151 և հաջ. Մոնթեն Հռոմում, Միլանում և Փարիզում – Այս տեղեկությունները հիմնված են բազմաթիվ աղբյուրների վրա, այդ թվում՝ Երևանում 1991-ի հուլիսին Մոնթեի հետ Մարգարի զրույցների, Մոնթեի հետ Սեդայի զրույցների և «Գաղտնի բանակի» շատ նախկին անդամների վկայությունների, որոնց անունները պետք է անհայտ մնան: Գրավոր աղբյուրներն են՝ History of ASALA, Critique of Armenian Armed Action, The Reality և «Ինքնաքննադատություն»:

151 «Խորասուզված ճարտարապետության ու տարբեր ժողովուրդների բարքերի մասին մաքերի մեջ» – Մոնթեն այս մասին պատմել է Սեդային 1989 թ.:

152 և հաջ. Ջորջիուի միջադեպը – Այս տեղեկությունը մեծ մասամբ վերցված է Մոնթեի «Օռլին և Ջորջիուի միջադեպը» ("Orly and the Georgiu Affair") հոդվածաշարից, որը հրապարակվել է «Հայաստանում», թիվ 21-22 (մարտ 1982), էջ 60-66 և թիվ 23-24 (ապրիլ-մայիս 1982), էջ 56-62:

157-58 Ընտանիքի այցը «Ցոթերորդ հարկ» – Այս տեղեկությունը հիմնված է Մոնթեի՝ Սեդային պատմածի, ինչպես նաև Զարլզ, Զաքել, Մայլե և Մարսիա Մելքոնյանների հետ Մարգարի զրույցների վրա:

158 «Ի՞նչ կարող էինք անել» – John D. Cramer, The Fresno Bee, September 20, 1992, էջ A14:

159 «Ամենուն դիմաց» – «Ինքնաքննադատություն», էջ 21:

159 «Լիբանանցի ու պաղեստինցի» – Ներխուժման ժամանակ տարածաշրջան այցելած արևմտյան թղթակիցները նշում են, որ պաշտպանվողները բաղկացած էին 11200-12200 պաղեստինցիներից, լիբանանցիներից և սիրիացիներից (Michael Jansen, The Battle of Beirut: Why Israel Invaded Lebanon [Boston: South End Press, 1982], էջ 4): Բացառությամբ առանձին մարդկանց, շուրջ 1200 հոգի կազմող սիրիական զորամիավորումը խուսափեց իսրայելական՝ անհամեմատ զորեղ բանակի դեմ կռվելուց: Jerusalem Post-ը 1982-ի հուլիսի 7-ի համարում նշում է, որ ՊԱԿ-ի զինյալները հարավային Լիբանանում մոտ 6000 էին, որ ՊԱԿ-ի՝ Լիբանանում ունեցած ամբողջ զինուժի կեսն էր:

160 «Առանց կորուստների նահանջելը» – Critique of Armenian Armed Action, էջ 30: 1982-ին Իսրայելի ներխուժման մասին տեղեկությունը մեծ մասամբ գալիս է Մոնթեի հետ Սեդայի զրույցներից, Մոնթեի հետ 1991-ի հուլիսին Երևանում Մարգարի զրույցից և հետևյալ աղբյուրներից. History of ASALA, Critique of Armenian Armed Action, The Reality և «Ինքնաքննադատություն»: Ներխուժման ժամանակ Մարգարը պատրաստել էր ամերիկյան թերթերի հոդվածներից քաղվածքների մի մեծ տրցակ: Մյուս հրատարակված աղբյուրները ներառում են՝ Noam Chomsky, The Fateful Triangle: The United States, Israel, and the Palestinians (Boston: South End Press, 1983), Robert Fisk, Pity the Nation, Walid Khalidi, Conflict and Violence in Lebanon (Cambridge, MA: Center for International Affairs, 1979), Selim Nassib and Caloline Tisdall, Beirut: Frontline Story (London: Africa World Press 1983), Jonathan C. Randal, Going All the Way:

161 «Սպանվածների թիվը» – Fisk, էջ 418, Լիբանանի կառավարության տվյալների համաձայն՝ կռիվների առաջին 80 օրերի ընթացքում կորուստների թիվը կազմում էր 19000 հոգի:

161 Փախստականներին օգնելու Հաբիբի խոստումը – Տե՛ս Fisk, էջ 333-34:

161 «Շատ հեշտությամբ» – History of ASALA, էջ 252:

164 «Ավելի քան 1000 դիակները» – Fisk, էջ 389-90, Randal, էջ 15-16, Chomsky, էջ 369-70:

164 «Կապավոր սպա» – History of ASALA, էջ 66: Այդ սպան կարող էր լինել կամ Սիրիայի օդուժի հետախուզական բաժնի պետ, գնդապետ Հայթան Սայիդը (Gaidz Minassian, Guerre et terrorisme arméniens [Paris: PUF, 2002], էջ 79) կամ զազտնի ծառայության պետ Մոհամադ Խուլին: Խուլին մտերիմ էր Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի կրտսեր եղբայր Ռիֆաաթի հետ: Երիտասարդ Ասադը՝ Սիրիայի էլիտային պաշտպանական բրիգադների հրամանատարը, Հակոբյանի բարերարներից մեկն էր (այս ճշմարտանման ենթադրությունն արված է Agence France-Presse-ի մի հաղորդագրության մեջ), բայց միայն՝ մինչև նախագահ Ասադն ազատեց նրան պետական պաշտոնից: Մենք որևէ վկայություն չենք գտել, թե նախագահ Ասադը քաջալերել է Ռիֆաաթի հարաբերությունները Հակոբյանի հետ. ի դեպ, Սիրիայի ղեկավարն այդ ժամանակ հավանաբար չգիտեր էլ այդ հարաբերությունների մասին: Հաֆեզ Ասադն ի բնե զգուշավոր ղեկավար էր, որ ոչնչ չէր խնայում՝ թշնամաբար տրամադրված և անհամեմատ զորեղ իր հարևանների՝ Իսրայելի ու Թուրքիայի սադրանքներին դիմակայելու համար:

164 «Պետք է համարվեին մեկ կազմակերպություն» – Հակոբյանի հետ հարցազրույցը լույս է տեսել The Armenian Reporter-ում, սեպտեմբեր 30, 1983, էջ 1, 14:

167 «Ավելի արագ մտածել», «անիրատեսական» – «Ինքնաքննադատություն», համապատասխանաբար՝ էջ 23 և 27:

Գլուխ 9. Նահատակություն

168 և հաջ. Այս գլուխը մեծ մասամբ հիմնված է History of ASALA, «Ինքնաքննադատություն» և The Reality գրքերում Մոնթեի հաղորդած մանրամասն տեղեկությունների վրա՝ ի հավելումն Կառլեն Անանյանի ծնողների և Դավիթ Դավթյանի հետ հեղինակների զրույցների: Մյուս աղբյուրներն են՝ Անանյանի ու Վարդանյանի հարցաքննությունն ու գնդակահարությունը պատկերող՝ Հակոբ Հակոբյանի տեսաերիզը, ինչպես նաև՝ Մոնթեի նամականին ու նրա՝ այս դեպքերի նկարագրությունները Սեդայի հետ Արևելյան Եվրոպայում (1989 թ.) և Մարգարի հետ Երևանում (1991 թ. հուլիս) կայացած զրույցներում: Դեպքերն այլ կերպ մեկնաբանող ելույթները՝ «Հայաստան» պաշտոնաթերթում (հիմնականում 67-68 և 77-78 համարներում. 1983 թ. վերջ) և «Գազտնի բանակի» համակիր այլ հրապարակումներում հավաստի տվյալներ գրեթե չեն պարունակում:

172 «Շատ-շատ վտանգավոր» – «Ինքնաքննադատություն», էջ 25-26:

177 Գառնուզյանի ձախողված կազմակերպչական գործունեությունը – Պատվելին մահացավ Բեռնի արվարձան Մոսերորդֆում 1998 թ. ապրիլի 8-ին, 72 տարեկան հասակում: Ըստ ամերիկահայ մի թերթի հրապարակման՝ նա «իր ժողովրդի համար գործադրած ճիգերին վերջ դրեց» և հեռացավ որպես «ջախջախված ու հիասթափված մարդ» (The Armenian Reporter, ապրիլ 18, 1998, էջ. 28):

177 և հաջ. «Երկու անծանոթ մոտեցան Սեդայի հորը...» – 1983-ի հուլիսի 15-ից հետո Այնճարում և նրա շուրջ կատարված դեպքերի մասին տեղեկությունները հիմնված են Մոնթեի՝ Սեդային պատմածների, ինչպես նաև՝ Սեդայի ծնողների և քույրերի վկայությունների վրա, որոնք դեպքերից քիչ անց հաղորդվել են Սեդային:

183 «Եվ եթե հանցավորները պետք է պատժվին» – «Ինքնաքննադատություն», էջ 28:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ
Գլուխ 10. Բարեգործներ

186 և հաջ. Այս գլխի մեծ մասը հիմնված է Մոնթեի ու Լևոն Մինասյանի («Շիշկոյի») հետ Սեդայի զրույցների (1989-90 թթ.), 1997-ի ապրիլին Ֆրանսիայում Արա Թորանյանի և այլ նախկին համակիրների ու ծանոթների (Ստեփան Ինճեյանի, Վալերի Թորանյանի, Զեփյուռ Գասպարյանի, Բենիամին Ջեշիշյանի և Ժանետ Սամուրքասի) հետ Մարգարի հարցազրույցների վրա: Գրավոր աղբյուրներն են՝ The Reality, «Ինքնաքննադատություն», ինչպես նաև՝ Ֆրանսիայի ոստիկանության համապատասխան զեկույցները, գատական փաստաթղթերը և ֆրանսիական ու հայկական թերթերից և ամսագրերից քաղվածքներ:

190 «Խիստ անհավանական», «կոլեկտիվ մշակութային կյանք», «հնարավոր վերամիավորման տարբերակը» – Նամակ Արմեն Ս.-ին՝ գրված 1986-ի հոկտեմբերի 12-ին:

192 «Փոքր-ինչ բարդ պրոցես» – Զրույց Մարգարի հետ 1991-ի հուլիսին:

193 «Մարդասպանների ու դավաճանների օթևան» – Անստորագիր հաղորդագրություն. «Հայաստան», 1985 թ. նոյեմբեր, էջ 59:

198 «Մեր մեջ օրենք է գործում» – Ալեքը միակ ընկերը չէր, որ վիրավորվել էր պայթուցիկ պատրաստելիս. 1982-ի հուլիսի 30-ին, Beau-Site հյուրանոցի դեպքից 2 տարի չանցած, մի մեծ պայթյուն Խաչատուր Գյուլումյանին շտապեցրեց Փարիզի արվարձան Գայնիում գտնվող՝ ծխով լցված ձեղնահարկը, որտեղ նրա եղբայր Ֆիեռն ընկած էր աշխատասեղանին՝ գլխի մի մասը ցրիվ եկած: Նշելով, որ Ֆիեռը պայթուցիկի մասնագետ էր, Մոնթեն այս վրիպումը վերագրեց նրա հոգեկան խռովքին՝ անմեղ անցորդների ճանապարհին ռումբ տեղադրելու Հակոբյանի հրահանգից հետո (The Reality, էջ 22-23):

198 և հաջ. Մոնթեի իրավական պայքարը – Այս տեղեկությունները հիմնված են մասամբ Արա և Վալերի Թորանյանների (Փարիզ, մարտի վերջ - ապրիլի սկիզբ, 1997) և իրավաբաններ Անրի Լը Կլերկի ու Ֆրանսուա Սերրի հետ (ապրիլ, 1997) Մարգարի հարցազրույցների վրա, ինչպես նաև՝ համապատասխան ոստիկանական զեկույցների ու դատական փաստաթղթերի: Հեղինակները շնորհակալություն են հայտնում Միրիամ Գոմին՝ այս փաստաթղթերը ձեռք բերելուն օգնելու համար:

199 «Հանցավոր խմբավորման գործունեությանը մասնակցելու համար» – «Հայ պայքարում» տպված մի բաց նամակում Մոնթեն արտահայտում է իր զայրույթը. «Բենիամին Քեշիշյանն ու Զեփյուռ Գասպարյանը ձերբակալվել են ենթադրաբար ինձ հետ կապ ունենալու, և մեղադրվել՝ հանցավոր խմբավորման գործունեությանը մասնակցելու համար: Տրամաբանական կլինի եզրակացնել, ուրեմն, որ «հանցավոր խմբավորումը» ես եմ: Միաժամանակ, Ֆրանսիայի կառավարությունն ինձ նույնպես մեղադրում է հանցավոր խմբավորման գործունեությանը մասնակցելու համար: Ովքե՞ր են կազմում «հանցավոր խմբավորումն» այս անգամ: Բենիամին Քեշիշյանն ու Զեփյուռ Գասպարյա՞նը»: «Այստեղ, Ֆրանսիայում, – եզրակացնում է Մոնթեն, – հայրենասիրական գործունեությունը դարձել է ոճիր, իսկ հայրենասերները՝ ոճրագործներ»: Բաց նամակը գրված է 1986-ի փետրվարի 5-ին և տպվել է «Հայ պայքարի» փետրվարի 25-ի համարում, էջ 5:

201 «Ներանցից շատերը բավական ուսյալ են, կիրթ ու հաճելի» – Նամակ «սիրելիներին», 19 հունվարի, 1986:

203 «Մեքսիկական կերակուր» – Զրույց Մարգարի հետ. 1980 թ. գարուն:

204 Ֆրիորի և Մաֆարի ճակատագիրը – Նոր Զելանդիայի դատարանը 10 տարվա բանտարկության դատապարտեց մեղադրյալ գործակալներին: 2 տարին բանտում չբոլորած՝ նրանք ուղարկվեցին մի արձակուրդային վայր՝ Խաղաղ օվկիանոսի հարավում գտնվող, Ֆրանսիային

պատկանող Հաո Աթոլլում՝ հավանաբար իրենց կալանքի ժամկետը լրացնելու համար:

206 և հաջ. Մոնթեի դատավարությունը – Այս տեղեկությունները մեծ մասամբ հիմնված են դատարանին որպես ապացույց ներկայացված դատական փաստաթղթերի, ոստիկանական զեկույցների և Մոնթեի նամակների վրա: 1986-ի նոյեմբերի 28-ի դատական գործի մասին հաշվետվությունը լույս է տեսել «Հայ պայքարի» հետևյալ համարներում՝ 20 դեկտեմբերի, 1986 (առաջին էջի նյութը վերնագրված է "Procès Melkonian"), 25 հունվարի, 1987 (էջ 3 և հաջ.) և 25 փետրվարի, 1987 (էջ 5):

207 «Ոստիկանական լրագրող» – Մարգարի հարցազրույցը ոստիկանության մի սպայի հետ Փարիզում. փետրվար, 1997: Դարձյալ Միրիամ Գոմին ենք շնորհակալ՝ այս հարցազրույցը կազմակերպելու համար:

207 Զեփյուռի լիակատար մեկուսացումը – 1988 թ. հուլիսի 9-ին գրած նամակում Մոնթեն նշում է. «Համաներման միջազգային կազմակերպությունը քննադատել է Ֆրանսիայի կառավարությանը՝ տանջակ քաղբանտարկյալների լրիվ մեկուսացման մեջ պահելու համար (ինչպես որ ինձ՝ չորս շաբաթ 1981-ին և յոթ շաբաթ 1985-86-ին), ինչը կարելի է ճշգրտորեն նկարագրել որպես չարչարանքի միջոց»:

208 «Ես շատ եմ զարմացած», «պայքարը դեռ ավարտված չէ» – Նամակ «սիրելիներին». 13 դեկտեմբերի, 1986:

Գլուխ 11. Բանտում

209 և հաջ. Այս գլուխը հիմնված է Սեդայի հիշողությունների և Մոնթեի՝ նրան ու այլ հասցեատերերի՝ հիմնականում ընտանիքին ուղարկած նամակների վրա: Մոնթեն բանտից հարյուրավոր նամակներ է գրել՝ հաղարավոր թերթերի երկու երեսները լցնելով մանր, սարդոստայնի նման ձեռագրով:

209 «Շատ պահակներ ծայրահեղ ռասիստներ են» – 1986 թ. հուլիսի 28-ին գրված նամակ՝ ուղղված վավերագրական ֆիլմեր պատրաստող Թեդ Գոդոսյանին:

212 «Գրեթե պատիվ է» – «Սիրելիներին» գրած նամակ, 26 հուլիսի, 1986:

212 «Բոլոր դատավորներն աշխատանքի անցնելուց առաջ պետք է առնվազն 1 տարի անցկացնեին բանտում» – «Սիրելիներին» գրած նամակ, 23 մայիսի, 1987:

212 «Բանտ ուղարկելը միայն վնաս է հասցնում» – Նամակ. 28 նոյեմբերի, 1987:

213 «Հետադիմական պայծառ մտքեր» – «Սիրելիներին» գրած նամակ. 1 հոկտեմբերի, 1986:

215 «Լուրջ խնդիրներ են ծագելու» – «Սիրելիներին» գրած նամակ. 15 մարտի, 1987:

215 և հաջ. Բանտային խռովություն – Այս տեղեկությունը հիմնված է Մոնթեի նամակների, ինչպես նաև՝ Սեդայի և Վալերի Թորանյանի հետ զրույցների ու հարցազրույցի վրա:

234 «Անհավատալի չքեղություններ» – «Սիրելիներին» գրած նամակ. 13 նոյեմբերի, 1987:

221-22 Ջարդ Սումգայիթում – Ըստ Հելսինկիի «Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության» (Human Rights Watch)՝ ջարդերը խլել են երեսուներկու կյանք, մեծ մասը՝ հայերի (HRW/H, Seven Years of Conflict in Nagorno-Karabagh (New York, Washington, DC., Los Angeles, London, Brussels: HRW/H, December 1994), էջ 1): Տե՛ս նաև Samvel Shahmuratian (ed. and compiler), The Sumgait Tragedy: Pogroms against Armenians in Soviet Azerbaijan: Volume I: Eyewitness Accounts (New Rochelle, New York and Cambridge, Mass.: Aristide D. Caratzas and The Zoryan Institute for Contemporary Armenian Research and Documentation, 1990):

225 «Տարօրինակ պատգամաբեր» – Ի պատասխան Մարգարի՝ «Տեղեկատվության ազատության ակտի» վրա հիմնված շարունակական պահանջների, Ֆեդերալ դեպարտամենտի տրամադրած՝ էապես խմբագրված փաստաթղթերը լույս չեն սփռում այս այցելության ինքնության վրա, իսկ «Ազգային անվտանգության գործակալությունը» մերժել է Մարգարի բազմաթիվ դիմումները՝ բացել Մոնթեի անունով թղթապանակը: Տարբեր պատճառաբանություններ են բերվել, վկայակոչվել է «Գլխավոր հրահանգ 12958-ը», ըստ որի՝ «Տեղեկատվության ազատության ակտը» չի տարածվում այն նյութերի վրա, որոնք պետք է գաղտնի պահվեն՝ ելնելով ազգային անվտանգության և արտաքին հարաբերությունների շահերից): Մարվին Գրյոնեբերգը՝ Փարիզում ԱՄՆ հյուպատոսարանից, կարող էր տեղեկություններ տալ պատգամաբերի ինքնության մասին, սակայն Փարիզում ԱՄՆ դեսպանատան հյուպատոսական բաժնի աշխատակիցները 1997-ի մարտի վերջերին հայտնեցին, թե նա մահացել է:

225 «Պատմության ընթացքում տեղի ունեցած ամենամեծ մարդասպանության հեղինակների հետապնդումը» – Rodney Wallis, Lockerbie:

The Story and the Lessons (Westport, Connecticut and London: Praeger, 2001), p. xiii.

227-28 Շիշկոյի պայքարը Մոնթեի արտաքսման դեմ – Այս տեղեկությունները հիմնականում քաղված են Երևանում 1997-ի ապրիլին Սեդայի և Մարգարի՝ Շիշկոյի հետ ունեցած հարցազրույցից և 1991-ի հուլիսին Մոնթեի հետ Մարգարի զրույցից: Մոնթեի՝ Île de la Cité-ի ոստիկանական բաժանմունքում և Coqvert-ում անցկացրած օրերի նկարագրությունը հիմնված է Մարգարի զրույցների ու հարցազրուցների վրա՝ Արա և Վալերի Թորանյանների (Փարիզ, 1997 թ. ապրիլ), Միրիամ Գոմի (Փարիզ, 1997 թ. ապրիլ) և ՀԲՊՀ-ի անդամ Աշոտ Շմավոնյանի (Etape Coqvert, 1997 թ. մարտ) հետ, ինչպես նաև՝ Մոնթեի հետ Սեդայի զրույցների վրա:

Գլուխ 12. Դեգերումներ ավերակների մեջ

232 «Ավելի տաք տեղ» – Նամակ՝ գրված 1988 թ. սեպտեմբերի 10-ին: Այս գլխի մեծ մասը, ինչպես նաև Գլուխ 13-ը հիմնված են Սեդայի վկայությունների վրա: Սույն գլխի համար աղբյուր են հանդիսացել նաև Մարգարի զրույցը Մոնթեի հետ 1991 թ. հուլիսին և հարցազրույցը Շիշկոյի հետ 1997 թ. ապրիլին:

238 «Այս կամ այն անձնավորության խոսափողը դատնա» – Նամակ Մարգարին՝ գրված 1987 թ. հունվարի 10-ին:

239 ««Հիմար» ու «չատ միամիտ» գաղափար» – «Ինքնանքննադատություն», էջ 29.

240 «Արդյունավետությունը պայքարի որոշակի... ոլորտներում» – մեջբերում՝ խմբակային ջանքերով գրված՝ «Հայաստանի ազատագրման հայրենասիրական ճակատի քաղաքական ծրագրից» (Charte politique provisoire du Front Patriotique pour la Liberation de l'Arménie). անտիպ, 1989 թ., էջ 5:

241 «Հրապարակային մազոխիզմ» – Արա Թորանյանի հետ Մարգարի հարցազրույցից. 23 մարտի, 1997:

242 «Իսկ ես կոմունիստ եմ» – մեջբերում Միրիամ Գոմի Les Invités de la Terre (Paris: Editions du Seuil, 1993) գրքից. էջ 123: Գոմն ավագ Տեր-Պետրոսյանի հետ հարցազրույցը վարել է 1990-ին:

244 «Այս երկիրը գնում է դեպի պատերազմ» – Սեդայի հիշողություններից: 1990 թ. հունիսի սկզբին գրված մի անտիպ հոդվածում՝ «Սոցիալիզմ, խառնաշփոթ և մեր հայրենիքը» (Socialism, Confusion, and Our Homeland), Մոնթեն ցավում է Հարավսլավիայում տարածվող վանդա-

վոր ազգայնականության համար, մի բան, «որ արդեն խլել է հարյուրավոր կյանքեր և վտանգում է հարավսլավացի ժողովուրդների շահերը»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ
Գլուխ 13. Դառը հաց

246 և հաջ. Այս գլխի առաջին մասը մեծ մասամբ հիմնված է Սեղայի հիշողությունների, ինչպես նաև՝ Մոնթեի ընկերներ Արտյուշի ու Հովսեփի (ապրիլ, 1997 ու ապրիլ, 2000) և «Հայրենասիրական ջոկատի» այլ անդամների հետ հեղինակների հարցազրույցների վրա:

248 Կրեմլի կողմից Հայաստանին հովանավորելը – Տես՝ Leila Alieva, "The Institutions, Orientations, and Conduct of Foreign Policy in Post-Soviet Azerbaijan," Adeed Dawisha and Karen Darwisha (խմբագիրներ), The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia (Armonk, NY, and London: M.E. Sharpe, 1995), էջ 286-3087), էջ 292. և Audrey L. Altstadt, The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule (Stanford, CA: Hoover Institution Press, 1992), էջ 127: Altstadt և շատ ուրիշներ վրդովվում էին այն փաստից, որ խորհրդային իշխանությունները Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ էին պարգևել Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում: Նրանց համար «Լեռնային Ղարաբաղի կորուստը» խորհրդային շրջանում կորուստ էր Ադրբեջանի համար, և ոչ Հայաստանի (Altstadt, էջ 127):

253 Операция кольцо – Այս հարձակման վերաբերյալ տեղեկությունները հրատարակվել են. David E. Murphy, "Operation 'Ring': The Black Berets in Azerbaijan" in The Journal of Soviet Military Studies, Vol. 5, No. 1 (March 1992), էջ 80-96. և Joseph R. Masih and Robert O. Krikorian, Armenia at the Crossroads (Amsterdam: Harwood Academic Publishers, 1999), էջ 32-33:

254 «Նույնիսկ եթե մենք կորցնենք Արցախը...» – Մեջբերումը տեսաերիզային մի դասախոսությունից է (25 հունվարի, 1991): Մոնթեն այս միտքը հաճախ է արտահայտել՝ թե՛ Հայաստան գալուց անմիջապես առաջ և թե՛ հետո:

255 «Արցախի կորուստը» – Նամակ Միրիամ Գոմին. 26 հունվարի, 1992:

256 «Աճեմյանը հաստատելու էր» – Իր մահից քիչ առաջ Աճեմյանը հրատարակեց Հակոբյանի սպանության մի դրական տարբերակ. A Time for Terror (Herndon, Virginia: Books International, 1997: Գրքի հրապարակումից հետո Աճեմյանը հաստատեց (1997-ի հոկտեմբերի 24-ին, Լոս Անջելեսում Մարգարի հետ ունեցած մի հարցազրույցի ժամանակ), որ Հակոբյանին սպանողներն իսկապես այն նույն անձինք էին, որ հրապարակավ նրա ամենամեծ համակիրներն էին ձևանում:

264 «Ամենակարևոր ազգային պարտավորությունը» – «Անցյալի սխալների ներկա քննադատություն». The Right to Struggle, էջ 197:

Գլուխ 14. Ինձ «Ավո՛» ասեք

266 և հաջ. Այս գլխի տեղեկությունների մեծ մասը հիմնված է Սեղայի հիշողությունների, ինչպես նաև՝ Միրիամ Գոմի հետ 1997-ին Փարիզում անցկացրած հարցազրույցների և «Հայրենասիրական ջոկատի» նախկին անդամների վկայությունների վրա:

266 «Ազգային ինքնաոչնչացման» և այլն – Poissy բանտում նախապես հայերեն գրված «Ազգային ինքնորոշո՞ւմ, թե՞ ազգային ինքնասպանություն» վերնագրով հոդվածից: Այն անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել «Պայքարելու իրավունքը» գրքի առաջին հրատարակության մեջ (San Francisco: Sardarabad Press, March 1990), էջ 163-169, սակայն Մոնթեն հանել է այն երկրորդ՝ իր «Թույլատրած» հրատարակությունից:

269 «Աֆղանստանի լեռներում» – Նամակ. 27 սեպտեմբերի, 1991:

270 «Ջրո՛ւ, ջրո՛ւ, ջրո՛ւ» – Գոմի գրքից, էջ 176-177:

273 «Զվարճալի տղա» – Գոմ, էջ 176:

274-75 «Ինչո՞ւ պիտի թողնենք մեր հողը» – Այս պարբերության մեջբերումները քաղված են հեղինակների՝ Արցախ այցելությունների ընթացքում ունեցած զրույցներից:

275 «Նա հրաժարվեց ամեն ինչից» – John D. Cramer, "His Lifework: Fighting Oppression," Fresno Bee, կիրակի, 20 սեպտեմբերի, 1992: Հոդվածի վերնագիրն է՝ "Martuni, Azerbaijan":

275 «Որտե՞ղ է պայթած ականանետը» – Գոմ, էջ 163:

278 «Մենք մեր դիրքերը պիտի ապահովենք մինչև ձմեռ» – Գոմ, էջ 175: Մոնթեն կրկնել է նույն բանը նախորդ ամառ Մարգարի հետ ունեցած զրույցներում:

280 «Միլիոնատերերը» – "Old Struggle Flares Anew in Bitter Karabakh Battle," Los Angeles Times, 23 փետրվարի, 1992, էջ A17:

282 «Նախընտրում են կռվել» – Ձայնագրված հարցազրույց Մարտունիում և Գանձասարում (Մարտակերտի շրջան) 1993-ի մայիսի 15-

ին, որ վարել է Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսի պատվիրակությանն ուղեկցող մի բրիտանացի թղթակից:

Գլուխ 15. Կարգապահության խնդիրներ

284 և հաջ. Այս գլուխը հիմնված է Սեդայի հիշողությունների և ստորև հիշատակվող այլ աղբյուրների վրա:

285 և հաջ. Ղարադաղլու, 16 և 17 փետրվարի, 1992 – Այս տեղեկությունները մասամբ հիմնված են հարցազրույցների վրա. Աբո Հայրապետյանի և Վովա Մովսիսյանի հետ դեպքի վայրում (2000 թ. ապրիլի 25-ին), «Հայրենասիրական ջոկատի» անդամներ Էդիկ Բաղդասարյանի (1997 թ. ապրիլին), Հրայր Կարապետյանի, Հովսեփի և Արտյուշի (2000 թ. ապրիլի 20-ին) հետ Երևանում: Հրատարակված աղբյուրներն են՝ Ismet Gaibov and Azad Sharifov, Armenian Terrorism (Baku: Publishing House Azerbaijan, 1992), էջ 15-19 և United States Committee for Refugees («Միացյալ Նահանգների՝ գաղթականների կոմիտե»), Faultlines of Nationality Conflict: Refugees and Displaced Persons from Armenia and Azerbaijan (Washington, USCR, March 1994):

289 «Նա գոռում էր, մինչև որ ձայնը կտրվեց» – Աբո Հայրապետյանի հետ Ղարադաղլուում 2000 թ. ապրիլի 25-ին հեղինակների ձայնագրած հարցազրույցից: Այս փաստը հաստատել են նաև Էդիկ Բաղդասարյանը և այլ ականատեսներ, որոնց թվում՝ «Արաբո» ջոկատի մի նախկին մարտիկ՝ Մարգարի հետ 1993 թ. հուլիսի 30-ին Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած զրույցի ընթացքում:

291 «Նույնիսկ Մոնթեի անմիջական ենթակայության տակ գտնվող շտաբի անձնակազմը խաբում էր նրան» – ա) Տեսահարցազրույց Նելսոնի հետ (1998 թ. մայիսի 27-ին), բ) տեսահարցազրույց Կարո Թովմասյանի հետ (1998 թ. մայիսի 27-ին), որ վարել են Էդիկ Բաղդասարյանը և Արա Մանուկյանն Ալիբալիում, գ) հեղինակների վարած հարցազրույց Կարո Թովմասյանի հետ (2000 թ. ապրիլի 26-ին, Մարտունիում):

292 Քաչալ Սերգեյի ճակատագիրը – Արցախում 1994 թվականի հրադադարից հետո Քաչալն աշխատանքի էր անցել «Ազգային անվտանգության վարչությունում», որ հետխորհրդային Հայաստանում վերանվանված ՊԱԿ-ն էր: Մի քանի տարի անց Քաչալը ձերբակալվեց, դատվեց ու բանտարկվեց՝ հայկական մի համալսարանի ռեկտորի առևանգելու և սպանելու մեղադրանքով:

296 «Մարտի հետ բախումից հետո» – Մավրիկ Սարգսյան, հարցազրույց հեղինակների հետ Մարտունիում, 25 ապրիլի, 2000 թ.:

303 Գուլաբլիի՝ մայիսի 15-ի հակահարձակման հետևանքները – Այս տեղեկությունները հիմնված են հայկական կողմի ականատեսների՝ «Հայրենասիրական ջոկատի» Արտյուշի, Սպանդարյանի ջոկատի Աշոտի և Աբո Հայրապետյանի ու այլոց հետ Սեդայի հարցազրույցների վրա:

304 «Քրդերին Լաչինում մեր դեմ օգտագործեցին» – Տեսահարցազրույց Նյու Յորքից եկած թղթակից Էստի Մարպետի հետ. Ջեհար Հեքթար (Լեռնային Ղարաբաղ), 27 մարտի, 1993:

304 «Բայց նա ոչ դրանց պատասխանն ուներ, ոչ էլ ժամանակ» – Ջթըրյան, 2000 թ. նոյեմբերի 6-ին Մարգարին ուղարկած էլեկտրոնային նամակ, որը հաստատում է Սեդայի՝ 1997 թ. մայիսի 20-ին վերաբերող հիշողությունները: Ջթըրյանը հարցազրույցը վարել է՝ Փարիզի Nouvelles d'Arménie-ում հրատարակելու համար:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

Գլուխ 16. Կանոնավոր բանակ

306 և հաջ. Այս և հաջորդ գլուխներում կռիվների մասին տեղեկությունները քաղված են բազմաթիվ աղբյուրներից՝ զրույցներ, Մարտունիում զինվորների ու քաղաքացիների հետ հեղինակների վարած հարցազրույցներ, տեսաերիզային վկայություններ և մարտերի օրագրություններ՝ գրված Մոնթեի ձեռագրով: Հրատարակված աղբյուրներն են՝ Սեյրան Քամալյան, Ավոն մեր աչքերով (Երևան, Նայրի հրատարակչություն, 1995), Masih and Krikorian (վերը հվված), Joseph Masih, "Military Strategy in Nagorno-Karabagh," in Jane's Intelligence Review, vol. 6, No. 4 (April 1, 1994), էջ 160, Vicken Cheterian, "De la guérilla à guerre totale," Les Nouvelles d'Arménie (No. 0), Paris, June 1992, էջ 31-33, Max Svaslian, Le Jardin Noir: Karabagh recit de guerre 1992-1994 (Paris, UGAB/Editions Cape, 2001), Ara Tatevosyan, "Nagorno-Karabagh's New Army of Iron Will and Discipline," The Armenian Mirror-Spectator (October 5, 1996), էջ 8-9 և քաղվածքների մի մեծ թվաքանակ միջազգային մամուլից:

306 Ուժերի հարաբերակցությունը Մարտունիում և շրջակայքում 1992 թ. դարնան վերջում – Այս մոտավոր թվերը ներկայացվել են գնդապետ (հետագայում՝ գեներալ) Հմայակ Հարությունի կողմից (հարցազրույց հեղինակների հետ Հրազդանում. 1997 թ. ապրիլ): Թվերը համապատասխանում են այդ ժամանակ Մարտունու զորամասում ծառայած այլ հայ զինվորականների վկայություններին:

306 «Մենք փոքրաթիվ էինք ու վատ զինված» -- 27 մարտի, 1993. հարցազրույց Էստի Մարպետի հետ:

307 Օտար վարձկաններ Ադրբեջանում – Alexis Rowell, "U.S. Mercenaries Fight in Azerbaijan," Covert Action (Spring 1994), էջ 23-27, Garine Zeitlian, "So There Are Mercenaries in Azerbaijan," AIM ամսագիր, (մայիս, 1994), էջ 13-14, Hunter, էջ 165: Տե՛ս նաև Goltz 1998, էջ 270-279 և HRW/H, էջ 64: Գոլցը պնդում է, թե տեսել է աֆղան վարձկանների՝ «իրենց ազգային տարազներով հպարտ տեսքով Բաքվում շրջելիս, անգամ Պաշտպանության նախարարություն ներս ու դուրս անելիս»: Նա ավելացնում է. «Ավելի դժվար էր հանդիպել ամերիկացիների, որ Ադրբեջան էին բերվել՝ ժամանակին գեներալ Ռիչարդ Սեքորդի հետ կապված նավթային MEGA ծրագրի (MEGA Oil/force-multiplier project) շրջանակում, թեև ինձ հաջողվեց մի քանիսին հանդիպել». Thomas Goltz, "Requiem for a Would-Be Republic: The Rise and Demise of the Former Soviet Republic of Azerbaijan" (Istanbul: The Isis Press, 1994) (այսուհետև՝ Goltz 1994), էջ 499: Տե՛ս նաև Goltz 1994, էջ 432, HRW/H, էջ 46, Reuters, "Afghan Party Said to A in Azerbaijan," Boston Globe, December 26, 1993, Masih, "Military Strategy in Nagorno-Karabagh," էջ 160 (1000-1500 մոջահեդների՝ Մասիհի հիշատակումը ("1000-1500 mojahedin from Gulbeddin Hekmatyar's Hezb-i-Islami") տե՛ս text-only հին համարի էջ 4-ում):

309 «Հողն ենք սիրո՞ւմ» – Գոմի գրքում (էջ 188) հիշատակված այս փաստը հաստատել են նախկին պատանդների բարեկամներ:

309 «Ձեր երեխաների համար ամենից կարևոր է իրենց երկիրը փրկելը» – Սեդայի հիշողություններից:

311 «Ամեն օր» – Ստեփան Ինջեյանի նկարահանած տեսաերիզ. Մարտունի, 1992 թ. հոկտեմբեր: 1992 թ. ծանր ամառվանից հետո պատահած այս դեպքը կրկին ցույց է տալիս Մոնթեի զգոնությունը, երբ հարցը վերաբերում էր դիզելին:

311 Գողացված դիզելի պատմությունը – Սեդան պատմել է այս մասին որպես ականատես: Զորամասի անձնակազմից Վովան հաստատել է պատմությունը 2000 թ. ապրիլի 26-ին՝ Մարտունիում հեղինակների հետ զրուցելիս:

313 «Դեպի հայկական դիրքերը հետ սողալիս դիպան ականի» – այս տեղեկությունը մեծ մասամբ հիմնված է Սեդայի վկայության վրա: Միրզա Վալոն ապաքինվեց, սակայն վերքերի հետևանքով առաջացած խոսելու արատը չվերացավ:

313-14 Հունիսի 27-28-ի մարտերը – Այս տեղեկությունները մասամբ հիմնված են Մոնթեի պատմածի վրա, որ տեսագրել է Սեդան 1992 թ. նոյեմբերի 26-ին, հանրակացարանի իրենց սենյակում: 12 տարեկան Մուշեղի պատմությունը մասամբ հիմնված է Ճարտարի զորամասում 1993-ի հունիսին մի զինվորի հետ Մարգարի զրույցի վրա: Զինվորը նրան ցույց տվեց տղային: Agence France-Presse-ի թղթակից Լեո Նիկոլյանի «աջակցությամբ պատրաստված» մի նյութ ևս նշել է այս դեպքը:

315 «Կշրջենք պատմության վերջին էջը» – Հատվածը հրատարակվել է Վարդգես Բաղրյանի «Ավո. հուշապատում» գրքույկում (Ստեփանակերտ, «Մաշտոց», 1993) էջ 34 և վերատպվել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերի «Մարտիկ» թերթի 1993 թ. հունիսի համարում (թիվ 13, էջ 1). տե՛ս նաև Philip Marsden, New Statesman & Society, December 10, 1993, էջ 22:

316 «Դիպուկահարի դնդակը» – Այս տեղեկությունը հիմնված է հետևյալ աղբյուրների վրա. հարցազրույց գնդապետ Կարո Թովմասյանի հետ Ալիբալիում (Արցախ, 26 ապրիլի, 2000 թ.), հարցազրույց ականատես, Արցախի պաշտպանական բանակի հրամանատարի տեղակալ (հետագայում գեներալ-լեյտենանտ, իսկ 2007 թ. մայիսից՝ Արցախի պաշտպանության նախարար) Մովսես Հակոբյանի հետ Մարտունիում (25 ապրիլի, 2000 թ.) և Աբովյան քաղաքում (21 հունիսի, 2003 թ.), Սեդայի զրույցը Հարոյանի հետ 1996-ին, հեղինակների հարցազրույցը բժիշկ Գասպարյանի հետ Մարտունու՝ Ավոյի անվան զինվորական հիվանդանոցում (25 ապրիլի, 2000 թ.): Սրունքից վիրավորված զինվորի անունն Անաստաս էր, Գիշի գյուղից:

316 Հակահարձակում «Մովսերի» վրա – Այս տեղեկությունը հիմնված է գեներալ Հմայակ Հարոյանի (1997 թ. ապրիլ) և գնդապետ Կարո Թովմասյանի (2000 թ. ապրիլ, դեպքի վայրում) վկայությունների վրա: Հեղինակները չեն կարողացել ավելի ճշգրիտ տեղեկություններ գտնել երկու կողմերի զոհերի թվերի մասին:

317 «Միայն մեր հաղթանակով» – Տեսահարցազրույց Վարդգես Բաղրյանի հետ, հոկտեմբերի 3, 1992:

318 «Ասում է՝ «Իմ հետևի՛ց»» – վեցերորդ դասարանցի մի մարտունեցի աշակերտի՝ հոգեբան Էլեոնորա Զաքարյանի հանձնարարությամբ 1994-ին գրված շարադրությունից:

319 «Մեծ սխրանքներ էին գործում», «Ավոն կռվի դաշտում է, տղաների հետ» – Քամալյան, էջ 158:

321 «Ոտք մը հոս, ձեռք մը հոն» – 1992 թ. նոյեմբերի 26-ին Երևանի հանրակացարանում Սեդայի տեսագրած հարցազրույցից:

321 «Թուրքական քաղաքականությունը» – 27 մարտի, 1993. հարցազրույց Էստի Մարպետի հետ:

326 «Մենք շատ տանկեր ունենք» – Մայլեի տեսաերիզը Երևանի մի հիվանդանոցի սենյակում. 1993 թ. հունվար.

326 «Ադրբեջանցիները զինում են երկու բանակ» – Marsden, էջ 23:

326-27 Զեյիլի բարձունքների մարտերը դեկտեմբերի 5-6-ը – Այս տեղեկությունները մեծ մասամբ հիմնված են Զեյիլի բարձունքում դեկտեմբերի 6-ին Մոնթեի տեսահարցազրույցի, ինչպես նաև՝ մարտերի մասին Մոնթեի ձեռագիր նոթերի վրա:

327 «Զարմանալին այն է, որ ավելի շատ հայեր չեն եկած» – հեռուստահարցազրույց, որ տեղի է ունեցել 1993-ի ապրիլին և մեջբերվել Բաղրյանի գրքում, էջ 10:

329 «Ուզում ենք Ավոյին տեսնել» – Արևիկ Սարգսյանի հուշերից. Nouvelles d'Arménie. թիվ 35 (1998 թ. հուլիս-օգոստոս), էջ 29:

329 «Որտեղ Ավոն՝ այնտեղ հաղթանակ» – Էլեոնորա Զաքարյանի՝ Մարգարի հետ զրույցից (2003 թ. հունիս): Քամալյանը նույնն է ասել Սեդային 1994-ին:

329 Իբն Խալդուն Աբդուրրահման (1332-1406) – այս հյուսիս-աֆրիկյան արաբ պատմիչն ու քաղաքական առաջնորդը հեղինակն է նշանավոր «Մուքադդիմայի» (վերջին տարբերակը գրված 1402-ին)՝ քաղաքական փիլիսոփայությանն առնչվող պատմագրական մի փայլուն ու ինքնատիպ երկի, որ ինչ-որ չափով կանխատեսեց Մարքսի և Էնգելսի գործերը հինգ դար հետո:

329 «Օձերին հավաքում ճանապարհներից»– Սեդայի հիշողություններից և Կարո Թովմասյանի հետ հարցազրույցից: Շերեփուկների վրա ջուր լցնելը. հարցազրույց՝ ականատես Հարոյանի հետ (Նելսոնը նույն բանը նկարագրել է 1998-ի մայիսի 27-ի տեսահարցազրույցում): Սառկած բազեի մասին. Սեդայի պատմածը, որ կրկնել են նաև մարտուններները: «Բարի մարդու՝ համարյա միամիտ պարզությամբ» – Nouvelles d'Arménie, թիվ 35 (հուլիս-օգոստոս, 1998), էջ 28:

329-30 Հուսեյնովի հայտարարությունը հրապարակվեց 1993 թ. հունվարի 5-ին, ИТАР-ТАСС-ի հաղորդագրությունում:

331-32 Հունվարի 16-ի ժողովը – Սեդայի հիշողություններից և գեներալ Հարոյանի հետ զրույցներից:

Գլուխ 17. Կապի դուրս եկ, Զրո-զրո

335 Իսրայելի օժանդակությունն Ադրբեջանին – Le Figaro թերթի՝ 1992 թ. նոյեմբերի 17-ի համարում լույս տեսած մի հոդվածում թղթակից Պիեռ Ռուսելենը (Pierre Rousselin) հաստատում է Իսրայելի հետ զինվորական համագործակցություն ունենալու՝ նախագահ Էլչիբեյի շահագրգռվածությունը և պնդում, թե Իսրայելը ցանկանում էր ադրբեջանցիներին մարզել ու նրանց զենք մատակարարել: Իսրայելն Ադրբեջանին զենք էր տալիս՝ ամրապնդելու համար թուրք-իսրայելական հարաբերություններն ընդդեմ Իրանի. Covcas Bulletin: Nationalities, Conflicts, and Human Rights in the Caucasus, II 31 (November 5, 1992), էջ 77, Hunter, էջ 177:

338 «Գեղեցիկ երազներ» – Մայլս Մելքոնյանի՝ 1993 թ. հունվարի կեսին Մարտունու զորամասում կայացած ժողովի տեսագրությունից: Ականատես Հրայր Կարապետյանը հաստատեց տեղեկությունը՝ 2003 թ. հունիսի 15-ին Երևանում հեղինակների հետ իր ունեցած հարցազրույցի ժամանակ:

338 Զարեքդարի մարտերը – Տեղեկությունը հիմնված է զինվորների հետ հարցազրույցների, ինչպես նաև՝ Մոնթեի ձեռագիր նոթերի և 1993 թ. մայիսի 15-ին ձայնագրված հարցազրույցի վրա, որը նա ավել է Մարտունիում և Գանձասարում՝ լեդի Քոքսի պատվիրակությունից մի բրիտանացի թղթակցի:

339 «Պետի գրավեին Քելբաջարը» – 1993 թ. մայիսի 15-ին Մարտունիում և Գանձասարում ձայնագրված հարցազրույց բրիտանացի թղթակցի հետ:

339 «Անշուշտ, ասիկա պատմական Հայաստան է» – Հարցազրույց Վարդգես Բաղրյանի հետ Վանք գյուղի մոտ, 1993 թ. մարտի 29-ին: Դրանից մոտ 4 տարի առաջ Մոնթեն ուրվագծել էր մի քարտեզ (տպագրված The Right to Struggle գրքում, էջ 49), որտեղ ներկայացված են պատմական Հայաստանի սահմանները: Այդ սահմանների մեջ են մտնում Քելբաջարը, Արցախը, Նախիջևանը և Թուրքիայի Հանրապետությունում գտնվող տարածքները:

339 Քելբաջարի բնակչությունը – Պատերազմից առաջ Քելբաջարի բնակչության թիվը մոտ 60000 էր: Ըստ Բաքվի տվյալների, սակայն, տեղի ադրբեջանցի պաշտոնյաները հայտնել էին, թե հարձակման ժամանակ բնակչության թիվն ավելի մոտ էր 45000-ին (Goltz 1988, էջ 344): Հարձակման օրերին փախստականների՝ Խանլարի հավաքատեղիում գրանցվել է 30000 փախստական՝ մեծ մասամբ Քելբաջարի քրդեր, Եվլախի հավաքատեղիում՝ 3000 փախստական՝ տեղահանված ուղղափառներով, իսկ Դաշքեսանի հավաքատեղիում՝ մոտ 6000 փախստական: Հետևաբար, Associated Press-ի հաղորդագրությունում (8 ապրիլի, 1993) նշված 20-30000 փախստականների թիվը քիչ է թվում, իսկ Հելսինկիի «Մարդու իրավունքների պաշտպանության» կազմակերպության նշած «շուրջ 60000 հոգին» (HRW/H, էջ 9)՝ շատ: Տե՛ս նաև դեմոգրաֆիական

տվյալներ՝ Mehrdad Izadi, "You Too, Armenia," Kurdish Life, № 9 (Winter 1994), Brooklyn: Kurdish Library, էջ 1-5:

340 «Շատ արյուն է թափվել» – Մեջբերում Boston Globe-ի թղթակից Ջոն Աուերբախի պատմածից՝ "Martuni, Azerbaijan" (Boston Globe, March 9, 1993, էջ 8):

340-41 Զուֆուլգաբլիի թունելի զոհերը – Այս տեղեկությունը հիմնված է ականատեսներ Վահիկ Շ.-ի ու Մասիս Շ.-ի վկայությունների (Սեդայի հետ զրույցի ժամանակ, 2001-ի մարտին) և 1993 թ. մայիսի 15-ին Մարտունիում ու Գանձասարում ձայնագրված՝ Մոնթեի հետ մանրամասն հարցազրույցի վրա: Հարձակման՝ HRW/H-ի նկարագրության (էջ 12-13) որոշ մանրամասներ տարբեր են:

345 «Ռուսական բանակն է կռվում» – Ֆարուք Ասլանը Գուլուզադեի խոսքերը մեջբերել է «Գետք է պատրաստվել պատերազմի, ասում է Վաֆա Գուլուզադեն» վերնագրով հոդվածում, որը տպվել է Բաքվի «Զաման» թերթում. 1 ապրիլի, 2000 թ., էջ 5: Տե՛ս նաև Hunter, էջ 88. «Ադրբեջանցիները համոզված են, որ հայերի առաջխաղացումը հնարավոր չէր լինի առանց Մոսկվայի օժանդակության»: Հանթերը, սակայն, իրավացիորեն ավելացնում է, որ Մոսկվան լիովին չէր վերահսկում հայերի գործողությունները (Hunter, էջ 89): Տե՛ս նաև Daniel Sneider, Christian Science Monitor, April 16, 1993, "The World: International", էջ 6, և Daniel Sneider, Colin Barraclough, "Turkey and Russia Back Rivals in Azerbaijan Power Struggle", Christian Science Monitor, June 30, 1993, էջ 1, 4:

346 «Ոչ էլ ռուսներն էին ծրագրել հարձակումը» – Գեներալ-գնդապետ Դարիբալթայանը հաստատեց, որ ինքն էր Քելբաջարի հարձակման գլխավոր ծրագրողը (զրույց Մարգարի հետ. 20 հունիսի, 2003 թ., Երևան):

346 «Թուրքական դարաշրջանը» – Տե՛ս օրինակ, Hunter, էջ 163-64:

346 Ժնևի խորհրդակցությունները – Alieva, էջ 294:

346 «Այն, ինչ պատահեց այսօր» – Richard Boudreaux, "Armenian Forces Seize Key City in Azerbaijan," Los Angeles Times, April 4, 1993, էջ A1, A20: Gaibov-ի մեջբերումը՝ էջ A20:

347 «Խիստ բողոք» – Ապրիլի 5-ի առավոտյան, Քելբաջարի գրավումից 2 օր անց, Ռիչարդ Լեմանը, որը ղեկավարում էր ԱՄՆ կոնգրեսականների պատվիրակությունը Երևանում, Տեր-Պետրոսյանի հետ մի ոչ պաշտոնական հանդիպումից դուրս գալով՝ թղթակիցներին հայտնեց, թե ինքը Հայաստանի նախագահին ասել է «բավականին անկեղծ արտահայտություններով, որ Գետական դեպարտամենտը վրդովված է պատերազմի ընթացքից ու խաղաղ բանակցությունների վրա դրա ազդեցությունից»: Տե՛ս Warren Christopher-ի մեջբերումը՝ "U.S. Rebukes Armenia on New Drive in Caucasus," New York Times, April 7, 1993, էջ A3:

347 ՄԱԿ-ի 822 որոշումը – Սրան հաջորդելու էին ևս երեք որոշում՝ «Անվտանգության խորհրդի» որոշումներ 853 (29 հուլիսի), 874 (14 հոկտեմբերի) և 884 (12 նոյեմբերի): Դրանք բոլորը պահանջում էին հայկական ուժերի դուրսբերումն ադրբեջանական տարածքներից:

347 «Որևէ մեկը» – Fresno Bee, April 7, 1993, էջ A18.

347 «Ատամներ ցույց տա» – New York Times, April 18, 1993, էջ 46:

347 «Ի՞նչ վնաս» – AIM, April-May, 1993, էջ 20.

348 «Երրորդ համաշխարհային պատերազմ» – "Turkey Warned in Enclave," Boston Globe, May 21, 1992, էջ 2. Dmitri Trenin, "Russia's Security Interests and Policies in the Caucasus Region," Contested Borders in the Caucasus (ed. Bruno Coppeiters) (Brussels: VUB Press, 1996), էջ 97.

348 «Մենք բոլոր անհրաժեշտ քայլերը կձեռնարկենք» – Christian Science Monitor-ի թղթակից Դենիել Մնայդերի հաղորդումից. April 16, 1993, "The World: International" բաժին, էջ 6:

348 «Տենդագին ուղևորություն էր հանգեցրել մահվան» – Ըստ New York Times-ի թղթակից, Ալլեն Քոուելլի, օրինակ, «պաշտոնյաները հայտարարեցին, թե մահվան պատճառը սրտային անբավարարություն էր, և ենթադրեցին, թե այն սաստկացել էր դեպի միջին Ասիա 12-օրյա տենդագին ուղևորության հետևանքով, որն ավարտվել էր 2 օր շուտ» (New York Times, ապրիլ 18, 1993, էջ 46):

348 «Ավելի խիստ դիրքորոշում կընդունի» – Նախագահ Ռաֆսանջանիի այս խոսքերը տե՛ս New York Times, April 13, 1993, էջ A5:

349 «Միացյալ Նահանգները վերին աստիճանի սերտ հարաբերություններ ունեն Թուրքիայի հետ» – Հարցազրույց Էստի Մարպետի հետ՝ 1993 թ. մարտի 27-ին:

354 «Մասնակցելու եմ հաջորդին» – John D. Cramer, Fresno Bee, September 20, 1992, էջ A14:

355 Վազգեն Մանուկյանի հետ մայիսի 27-ի հանդիպումը – Այս տեղեկությունը հիմնված է Սեդայի հիշողությունների, ինչպես նաև՝ Մարգարի հետ զրույցի ընթացքում Հարոյանի վկայության վրա:

Գլուխ 18. Զրի պես գնա՛

358 «Միտիկին գուրգուրի» – Վարդանը նկարագրել է այս դեպքը Սեդային և կրկնել այն՝ Մարգարի հետ 2003 թ. հունիսին Երևանում զրուցելիս:

360 և հաջ. 1993 թ. հունիսի 12-ի հարձակումը – Այս տեղեկություններն ի մի են բերվել՝ ականատես զինվորների, բժիշկների և այդ օրը Մարտունիում ու Մերզուլիում ներկա գտնված խաղաղ բնակիչների վկայությունների հիման վրա: Աղբյուրները ներառում են՝ 1993 թ. հունիսին Երևանում Հակոբ Մկրտչյանի ձայնագրած հարցազրույցը Կոմիտաս Ավանեսյանի և Սարո Երեմյանի հետ, 1993 թ. նոյեմբերի 24-ին Մարտունու զորամասում Աբո Հայրապետյանի հետ և նույն օրը Մերզուլիում Աբոյի ու Կոմիտասի հետ հարցազրույցի տեսագրությունը, 2000 թ. ապրիլի 26-ին հեղինակների հարցազրույցը Սարո Երեմյանի հետ, Սեդայի՝ դեպքից քիչ անց ունեցած հարցազրույցն ականատես զինվոր, իրանահայ Վարդանի հետ, 2000 թ. ապրիլի 25-ի հարցազրույցը բժիշկ Գրիշա Գասպարյանի և Մարտունու հիվանդանոցի այլ աշխատակիցների հետ, հեղինակների զրույցը ճարտարի հրամանատար Հովիկի հետ Երևանում, 1993 թ. հունիսին, Սեդայի բազմաթիվ զրույցները Սարիբեկի այրու՝ Լիլիա Ավանեսյանի հետ, և հեղինակների հարցազրույցն ադրբեջանցի պատանդի հետ Մարտունու բանտում, 1993 թ. հունիսի 21-ին: Վկայությունները հաստատվել են հեղինակների անմիջական ստուգումներով Զեյլի բարձունքներում և Մերզուլիում (1993 թ. հունիսին, 2000 թ. ապրիլին և 2003 թ. հունիսին), ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության տրամադրած դատական փաստերով:

361 Գիշերային ճամբար՝ Գարգար գետի մոտ – Այդ օրը դերեվարված մի երիտասարդ ադրբեջանցի զինվոր հարցաքննության ժամանակ Աբո Հայրապետյանին հայտնել է, որ ինքը տարածքում գտնվող մոտ վաթսուն-հոգեանոց մի խմբի անդամ էր (Աբոյի զրույցը հեղինակների հետ Սպիտակշենում և Գուլաբլիում շրջագայելիս. 27 ապրիլի, 2000 թ.): Սարո Երեմյանը նույնպես, 2000 թ. ապրիլի 27-ին Մարտունիում հեղինակների հետ զրուցելիս, հաստատել է այս փաստը:

361 Ադրբեջանցի զոհեր Ցուսուֆլանլիում – HRW/H, էջ 23-25:

362 «Մերզուլի հայեր չէին ներխուժել» – Ադրբեջանցի զինվորները Մերզուլի էին մտել հյուսիս-արևելքից. դերի վերցված ադրբեջանցին այդ վկայությունն է տվել 1993 թ. հունիսի 21-ի հարցազրույցի ընթացքում: Մոնթեի խմբի անդամներն ասել են, թե իրենք տեսան ադրբեջանական մի զրահամեքենա, որը նահանջեց այդ հողե ճանապարհից: Նրանք ավելացրել են, թե մի թեթև տանկ մտավ Մերզուլի նույն հողե ճանապարհով և ապա նահանջեց նույն ուղղությամբ:

362 «Միասին կգնանք» – Սա Կոմիտասի վկայությունն է (Մոնթեի մահվանից անմիջապես հետո Սեդայի հետ զրույցի ընթացքում): Հեղինակներին նույնն է պատմել նաև հրամանատարի տեղակալ, ականատես Մոսին (2000 թ. ապրիլի 25-ին, Մարտունիում): Ըստ Աբոյի՝ տեսագրված վկայության (24 նոյեմբերի, 1993)՝ Մոնթեն ասել է. «Սպասեցե՛ք խաչմերուկում. ես իմ աչքով ուզում եմ տեսնել»:

365 «Մոնթեն կարող էր կրակած լինել իր «Կալաշնիկովից» կամ պառկած լինել ճանապարհին, որպեսզի իրեն չխփեն» – Երկու դեպքում էլ նա պետք է որ մի պահ կրակած լիներ, քանի որ հեղինակները դեպքից հետո Մոնթեի ինքնաձիգի մեջ 22 փամփուշտ հաշվեցին: Քանի որ նա սովորաբար առաջին իսկ առիթի դեպքում լիցքավորում էր իր զենքը, կարելի է ենթադրել, թե նրա փամփշտակալը լիքն էր, երբ Կոմիտասը կանգնեցրեց մեքենան դեպքի վայրում: Ուրեմն՝ նա հավանաբար կրակել էր ընդամենը 8 փամփուշտ:

365 «Պայթեց՝ ճանապարհի մյուս կողմում գտնվող սպիտակ քարե պատնեշի մեջ անցք բացելով» – Սա Կոմիտասի կրկնած վկայությունն է, որը հաստատվել է հեղինակների՝ տեղում կատարած ստուգումներով: Մեքենայի մյուս կողմի քարե պատնեշի վրա հստակ երևում են պայթյունի հետևանքները: Ըստ այլ վկայությունների՝ առաջին արկը խփել էր մոտակա էլեկտրասյանը՝ մանր բեկորների վերածելով այն: Սակայն այս վարկածը հավանական չէ, քանի որ էլեկտրասյունը շատ հեռու էր գտնվում զրահամեքենայի կրակի գծից:

367 Սարիբեկի մահը – Այս տեղեկությունը հիմնված է Սարիբեկի այրու՝ Լիլիայի և Սարիբեկին մարտադաշտից դուրս բերած զինվորի հետ Սեդայի հարցազրույցների, ինչպես նաև՝ 2000 թ. ապրիլի 25-ին Մարտունիում բժիշկ Գասպարյանի, բժիշկ Բաբսեղյանի և Մարտունու հիվանդանոցի աշխատակցուհիներ Մարգոյի ու Արեգայի հետ հեղինակների զրույցի վրա:

371 «Փոխգնդապետի աստիճան» – 2003 թ. հունիսի 19-ին Երևանում, Մարգարի հետ ունեցած զրույցի ընթացքում, Պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը հաստատեց այս տեղեկությունը (նա այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարն էր):

372 «Մոնթեի մահը հավաստելու» – Հետագա պարզաբանումները հաստատեցին հեղինակների նախնական կասկածները: 1993 թ. հունիսի 16-ին «Հետախուզության դաշնային բյուրոյի» (FBI)՝ Լոս Անջելեսի տարածքային գրասենյակը խնդրել է Վաշինգտոնի տարածքային գրասենյակին՝ տեղեկացնել Պետական դեպարտամենտի «Դիվանագիտական անվտանգության բյուրոյի» հրահանգիչ կենտրոնին և «հարցումով դիմել ԱՄՆ Պետական դեպարտամենտին՝ իր Երևանի պաշտոնական ներ-

կայացուցչի միջոցով հաստատելու Մոնթե Մելքոնյանի մահը և մանրակրկիտ զննումից հետո ձեռք բերելու նրա մատնահետքերն Interpol-ի ու FBI-ի համար»:

373 Էլչիբեյի, Հուսեյնովի և Ալիևի ճակատագրերը – Միացյալ Նահանգների ու Թուրքիայի համար Էլչիբեյի անկումը ցավալի էր, իսկ Ռուսաստանի ու Իրանի համար՝ ուրախալի (Alieva, էջ 305, Hunter, էջ 88, Goltz 1988, էջ 252): Իշխանափոխությունն իսկույն օգուտ բերեց Ռուսաստանին. 1993 թ. սեպտեմբերին Բաքուն հայտարարեց, որ ռուսական նավթային ընկերություն «Լուկոյլը» գործարկելու է Ադրբեջանի կասպիցծովյան հանքերից մեկը, և Ռուսաստանը 10 տոկոս բաժին է ունենալու կոնսորցիումում: Նույն ամսվա սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի խորհրդարանն ԱՊՀ երկրներին միանալու որոշում ընդունեց: Հուսեյնովը, սակայն, չարժանացավ Ալիևի բարեհաճությանը, թեև նպաստել էր նրա՝ իշխանության գալուն: 1999 թ. փետրվարի 16-ին, 7 ամսվա դատավարությունից հետո, Ադրբեջանի գլխավոր դատարանը տասնյակ մեղադրանքներ ներկայացրեց նրան, որոնց թվում՝ նաև դավաճանության, և ցմահ բանտարկության դատապարտեց: Մեկ տարի անց Աբուլֆազ Էլչիբեյը մահացավ «աքսորում»՝ Նախիջևանի մեկուսի շրջաններից մեկում: Նրա հետնորդ Հեյդար Ալիևը մահացավ 2003 թ. դեկտեմբերի 12-ին՝ 80 տարեկան հասակում: Նրա որդին՝ Իլհամ Ալիևը, հաջորդեց նրան որպես Ադրբեջանի նախագահ:

375 «Եթե հարգում եք Ավոյի հիշատակը» – Այդ հանդիպումից հետո տարիներ շարունակ հեղինակները քանիցս հարցրել են ադրբեջանցի գերու ճակատագրի մասին: Հավաստի աղբյուրների համաձայն՝ դեպքից մի քանի ամիս անց նրան փոխանակել են հայ գերիների հետ:

375-76 «Դավաճանության մասին լուրերը» – Հայտնելով, որ ինքը հանդիպել է «բազմաթիվ ադրբեջանցիների, ովքեր պնդել են, թե իրենք են սպանել նրան», մի արևմտյան թղթակից ավելացնում է. «Հայերն ինձ ասել են նաև, թե նա կարող էր սպանության զոհ դարձած լինել» (Goltz 1994, էջ 499):

376 Նորայր Դանիելյանի մահը – Մարտակերտի հրամանատարն սպանվեց 1993-ի հոկտեմբերի 19-ին, երբ անհայտ զինյալներ կանգնեցրին նրա ծառայողական մեքենան Ստեփանակերտի ու Մարտակերտի միջև և ինքնաձիգներից կրակահերթ տեղացին նրա վրա:

376 «Տինծու պատմությունն» – Տե՛ս Goltz 1994, էջ 499:

376 «FBI-ի գաղտնի տելեթայպ» – Մեջբերված պարբերությունից մի քանի էջ հետո փաստաթուղթում գրված է. «Հաշվի առնելով, որ խնդրո առարկա անձը [Մոնթեն] հրապարակավ հայտարարվել է մահացած, և առ այսօր հակառակը փաստելու համար ոչ մի ապացույց չկա, այս հարցը FBI-ի Լոս Անջելեսի տարածքային գրասենյակի կողմից համարվում է փակված»:

377 Ռետինե չստերի պատմությունը – Մոնթեն այս դեպքը պատմել էր Մարգարին, երբ այդ օրը՝ 1980-ին, վերադարձել էր աշխատանքից: Ալեքն այն կրկնեց Երևանում՝ 2003 թ. հունիսի 11-ին հեղինակների հետ զրուցելիս:

377 «Որքան քիչ ունեմ, այնքան ինձ լավ եմ զգում» – Նամակ Արմեն Ս.-ին՝ գրված 1986 թ. հոկտեմբերի 12-ին:

379 «Նա մեր կյանքը փրկեց» – Սեդայի զրույցը Գուրգեն Մելիքյանի հետ՝ փոխանցված Մարգարին 1997 թ. մայիսի 30-ին:

ՎԵՐՋԱԲԱՆ. ՏԵՍԱՐԱՆ ԵՌԱԲԼՈՒՐԻՑ

382 «Ազգային միասնության գիրկը, որից, իբրև պատրանքից, նա հրաժարվել էր» – Իրեն բնորոշ մի հատվածում՝ գրված 1985-ին, օրինակ, Մոնթեն գրել է. «Միասնությունը հանուն միասնության ձախողման և հիասթափության դեղատոմս է» (The Right to Struggle, էջ 173):

383 «Առանց կոռուպցիայի և արդար» – Nouvelles d'Arménie, թիվ 35 (հուլիս-օգոստոս, 1998), էջ 26: 1996 թ. Հարությունն ստացավ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի գեներալի աստիճան: 1997-ից նա պահեստայինների ցուցակում է:

383 Արտագաղթը հետխորհրդային Հայաստանից – 2002 թ. փետրվարի 15-ին Հայաստանի վիճակագրական ծառայությունը հրապարակեց մի տեղեկագիր, որտեղ ասվում է, թե 1991 թ. Խորհրդային Միության վերջնական փլուզումից 10 տարի անց Հայաստանի Հանրապետության բնակչությունը նվազել է 1 միլիոնով՝ երկրի ընդհանուր բնակչության թիվը իջեցնելով մոտ 3 միլիոնի: Այդ տվյալները ստացվել էին 2001 թ. հոկտեմբերի 10-19-ը անցկացված մարդահամարի արդյունքում («Արմենպրես» լրատվական ծառայություն, 15 փետրվարի, 2002): Ներկայացված թվերը հաստատեցին տարբեր հաստատությունների ու անհատների՝ ավելի վաղ հրապարակած գնահատականները, որոնց թվում՝ ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրի՝ մարդկային զարգացման տեղեկագիր. Հայաստան 1997» (The United Nations Development Project's Human Development Report: Armenia 1997), էջ 13, Ս. Կարապետյան, «Արտագաղթը Հայաստանից հետխորհրդային ժամանակաշրջանում», 1991-1995, Տեղեկագիր ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրի» Հայաստանի գրասենյակի համար, 1996 (մեջբերված Մարինա Գյուրքչյանի «Առողջապահությունը

Հայաստանում. անցումային շրջանի մարդկային վնասները» հոդվածում. "Health Care in Armenia: The Human Cost of the Transition," CACP Briefing Number 16 [London: The Royal Institute of International Affairs, March 1998], էջ 1): Տե՛ս նաև ԱՄՆ Պետական դեպարտամենտի «Հանրային հարցերի բյուրոյի» ("Background Notes: Armenia" [Washington, DC: U.S. Department of State, March 1996] էջ 1) և CIA World Factbook-ի՝ բնակչության աճի և ներգաղթ-արտագաղթի վերաբերյալ տվյալները: 1990-ականներին հայերի արտագաղթը մեծ մասամբ «տնտեսական պատճառներով» է տեղի ունեցել և հիմնական հոսքը եղել է դեպի Ռուսաստան («Մնարք» լրատվական գործակալության տեղեկագիր, 8 դեկտեմբերի, 1997): Նույն տեղեկագրի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը փոփոխական էր: 1990-ականներին այն նվազել էր, իսկ հեղինակների՝ 2000-ի և 2003-ի այցելությունների ժամանակ սկսել էր վերականգնվել: Ըստ մարդահամարի՝ 2006 թ. հրապարակված պաշտոնական տվյալների, Արցախում ապրում է 137000 բնակիչ:

ԲԱՌԱՐԱՆ

Առաջադիմական սոցիալիստական կուսակցություն — քաղաքական կուսակցություն՝ հիմնադրված 1940-ական թվականների վերջերին ճանաչված լիբանանցի դրուզ ղեկավար Քամալ Ջումբլաթի (1917-1977) կողմից: Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում (1970-ականների կեսերից մինչև 1980-ականներ) այս կուսակցությունն ու նրա զինյալները Լիբանանի ձախակողմյան ազգային շարժման կարևոր ուժերից էին:

Դհարմա — Վեդաներում և ավելի ուշ՝ որոշ բուդդայական ուսմունքներում պարտականությունների ու օրենքների մի շարք, որոնց հետևելով կարելի է հասնել ընդհանուր բարօրության ու արդարամտության:

Կարմիր բանակի ֆրակցիա (Rote Armee Fraktion, նաև հայտնի՝ որպես Baader Meinhof խումբ) — Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում 1970-80-ական թվականներին գործող՝ մի քանի փոքր ծայրահեղական ձախ «ճակատային կազմակերպություններից» ամենաճանաչվածը:

Կլոշար (clochard) — թափառաշրջիկ (ֆրանսերեն):

Համամ — հանրային բաղնիք (թուրքերեն, արաբերեն):

Ցաղմա — կանանց գլխաշոր (թուրքերեն):

Ուոքի-թոքի — ռադիոկապի միջոց (անգլերեն):

Փաղանգավոր (Քաթայիբ) — աջակողմյան զինված քաղաքական կազմակերպություն, որ 1936-ին հիմնադրել է հայտնի լիբանանցի մարոնիտ Պիեռ Ժեմայելը՝ ֆաշիստական «Իսպանական փաղանգի» (la Falange Espanola)՝ 1939-1975 թթ. Իսպանիայի միակ պաշտոնական կուսակցության օրինակով: Շնորհիվ Արևմուտքի ու Իսրայելի առատաձեռնության՝ լիբանանյան «Փաղանգավորներն» ամենախոշոր և լավ զինված ուժն էին Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Քեֆֆիյե (կամ քուֆֆիյե) — գլխաշոր, հաճախ՝ յուրահատուկ վանդակավոր նախշերով, որը միջին արևելյան որոշ երկրներում կրում են գլխի, վզի վրա, կամ գյուղացիները՝ մեջքի շուրջը (արաբերեն):

Քոմալա — Իրանական Քրդստանի հեղափոխական աշխատավորական կազմակերպություն. 1969-ին հիմնված ու Սանանդաջում կենտրոնացած այս կազմակերպությունն Իրանական Քրդստանի համար ինքնավարություն է պահանջում: 2003 թ., ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժելուց անմիջապես առաջ, «Քոմալան» սիմվոլիկ ներկայություն հաստատեց հյուսիսային Իրաքում՝ մի տարածքում, որ գտնվում է Անսար ալ-Իսլամ փոքր

իսլամական խմբավորման հսկողության տակ: Ենթադրվում է, որ վերջինս կապեր ունի Օսամա բին Լադենի «Ալ-Քաիդա» կազմակերպության հետ:

Քուրթուլուշ *– «ազատություն» (Թուրքերեն). Ճախակողմյան խմբավորում, որ գործել է Թուրքիայում 1970-ականների վերջերին ու 1980-ականների սկզբներին: «Քուրթուլուշը» համարվել է «անկախ ձախ» կազմակերպություն՝ այն առումով, որ չի խոնարհվել ոչ Մոսկվայի, ոչ էլ Պեկինի առաջ:*

Ֆաթահ *(տարբերակ՝ ալ-Ֆաթհ) – պաղեստինյան դիմադրության ամենամեծ կազմակերպությունը՝ հիմնադրված 1959-ին, ի թիվս այլոց՝ Յասիր Արաֆաթի (Աբու Ամմար), Սալահ Խալաֆի (Աբու Իյադ) և Խալիլ Ուազիրի (Աբու Ջիհադ) կողմից:*

chambre de bonne *– սպասուհու սենյակ (ֆրանսերեն):*

laissez-passer *– փաստաթուղթ, որը թույլ է տալիս կրողին մտնել կամ անցնել որևէ երկրով (ֆրանսերեն):*

Wehrsportgruppe Hoffman *– «Հոֆֆման մարզական խումբ». գերմանական նեոնացիստական խմբավորում, որ գործել է 1970-80-ական թվականներին:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ստորև ներկայացված է ամփոփ, ոչ լրիվ ցանկն այն աղբյուրների, որոնց դիմել ենք աշխատությունը գրելու ընթացքում: Դրանցից միայն մի քանիսն են հայերեն. մեծ մասն անգլերեն են: Գրքի անգլերեն տարբերակում սույն ցանկի նպատակն էր՝ հետաքրքրվողներին լրացուցիչ ընթերցանությամբ ուղղություն ցույց տալը: Այստեղ այն ծառայելու է զուտ որպես մեր հետազոտության տարբեր գլուխների՝ հրատարակված աղբյուրների ցանկ, որոնց մի մասից գրքում մեջբերումներ են արված:

Գլուխ 1-ի և 3-ի աղբյուրները. Սան Ուաքին Վելլիի պատմությունը

Arax, Mark and Wartzman, Rick, *The King of California: J.G. Boswell and the Making of a Secret American Empire*, New York: Public Affairs, 2003.

Daniel, Cletus, *Bitter Harvest: A History of California Farmworkers*, 1870-1941. Ithaca and London: Cornell University Press, 1981.

Garner, Van H., *The Broken Ring: The Destruction of the California Indians*, Tucson: Westernlore Press, 1982.

Heizer, Robert Fleming and Almquist, Alan F., *The Other Californians: Prejudice and Discrimination under Spain, Mexico, and the United States to 1920*, Berkeley: University of California Press, 1971.

McWilliams, Carey, *Factories in the Field: The Story of Migratory Farm Labor in California*, Santa Barbara: Peregrine Publishers, Inc., 1971.

Mitchell, Annie R., *Visalia: Her First Fifty Years*, Exeter, California: self-published, 1963.

———. *Visalia's Heritage*, Visalia: Visalia Heritage, Inc., 1986.

Norris, Frank, *The Octopus*, New York: Bantam Books, 1963 (Historical novel, first published in 1901.)

Preston, William, *Vanishing Landscapes: Land and Life in the Tulare Basin*, Berkeley: University of California Press, 1981.

Secrest, William B., *When the Great Spirit Died: The Destruction of the California Indians*, 1850-1860, Sanger, Calif.: Word Dance Press, 2003.

Գլուխ 1-ի և 3-ի աղբյուրները. Հայերի գաղթը
Կենտրոնական Կալիֆոռնիա

Avakian, Arra S., *The Armenians in America*, Minneapolis: Lerner Publications Company, 1977.

Bakalian, Anny, *Armenian-Americans: From Being to Feeling Armenian*, New Brunswick and London: Transaction Press, 1993.

Bulbulian, Berge, *The Fresno Armenians: History of a Diaspora Community*, Fresno: The Press at California State University, Fresno, 2000.

Davidian, Nectar, *The Seropians*, Berkeley: self-published, 1965.

LaPiere, Richard Tracy, *The Armenian Colony in Fresno County, California: A Study in Social Psychology*, Palo Alto: dissertation, Stanford University, 1930.

Mahakian, Charles, *History of the Armenians in California*, Berkeley: thesis, University of California, 1935.

Malcolm, M. Vartan, *The Armenians in America*, Boston: Pilgrim Press, 1919.

Saroyan, William, *My Name is Aram*, New York: Dell Publishing Company, 1966 (Fiction.).

Wallis, Wilson D., *Fresno Armenians* (ed. Nectar Davidian), Lawrence, Kansas: Coronado Press, 1965.

Yeretzian, Aram S., *A History of Armenian Immigration to America with Special Reference to Los Angeles*, Thesis, University of Southern California, 1923.

Գլուխ 2-ի և 3-ի աղբյուրները. Հայոց ցեղասպանությունը

Balakian, Peter, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*, New York: Harper Collins, 2003.

Bryce, James and Toynbee, Arnold, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Document Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce* (uncensored edition), Princeton: Gomidas Institute, 2000.

Hewson, Robert H., *Armenia: A Historical Atlas*, Chicago and London: The University of Chicago Press, 2001.

Hovannisian, Richard G., *Armenia: On the Road to Independence, 1918*, Berkeley: University of California Press, 1967.

Miller, Donald E. and Miller, Lorna Touryan, *Survivors: An Oral History of the Armenian Genocide*, Berkeley: University of California Press, 1993.

Morgenthau, Henry, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, New York: Doubleday, Page & Company, 1919.

Permanent People's Tribunal, *A Crime of Silence: The Armenian Genocide*, London: Zed Books, Ltd., 1985.

Raffi (Melik-Hagopian, Hagop), *The Fool: Events from the Last Russo-Turkish War (1877-1978)* (trans. Donald Abcarian), Princeton, New Jersey: Gomidas Institute, 2000 (Historical novel, first published in Armenian as *Khente* in 1881).

Riggs, Henry H., *Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoot, 1915-1917* (ed. Ara Sarafian), Princeton: Gomidas Institute, 1997.

Sarafian, Ara (ed.), *United States Official Documents on the Armenian Genocide*, Vols. 1 and 2, Watertown, Mass.: Armenian Review Press, 1993.

Walker, Christopher, *Armenia: The Survival of a Nation*, New York: St. Martin's Press, 1980.

Werfel, Franz, *The Forty Days of Musa Dagh*, New York: Viking Press, Inc., 1934. (Historical novel).

Գլուխ 5-ի և 9-ի աղբյուրները. Քաղաքացիական պատերազմը Լիբանանում

Chomsky, Noam, *The Fateful Triangle: The United States, Israel, & the Palestinians*, Boston: South End Press, 1983.

Fisk, Robert, *Pity the Nation: The Abduction of Lebanon*, New York: Atheneum, 1990.

Jansen, Michael, *The Battle of Beirut*, Boston: South End Press, 1982.

Khalidi, Walid, *Conflict and Violence in Lebanon*, Cambridge, Mass.: Center for International Affairs, 1979.

Randal, Johnathan C., *Going All the Way: Christian Warlords, Israeli Adventurers, and the War in Lebanon*, New York: Viking, 1983.

Գլուխ 6-11-ի աղբյուրները. «Հայկական ահաբեկչություն» և հարակից հարցեր

Chaliand, Gerard, and Ternon. Yves, *The Armenians: From Genocide to Resistance* (trans. Tony Berrett), London: Zed Press, 1981.

Feigl, Erich, *A Myth of Terror: Armenian Extremism: Its Causes and Its Historical Context*, Edition Zeitgeschichte, nd.

Gunter, Michael M., "Pursuing the Just Cause of Their People": *A Study of Contemporary Armenian Terrorism*, New York: Greenwood Press, 1986.

Gurriarán, José Antonio, *La Bomba*, Barcelona: Planeta, 1982 (Memoir.) .

Hyland, Francis P., *Armenian Terrorism: The Past, the Present, the Prospects*, Boulder, Westview Press, 1991.

Kurz, Anat and Merari, Ariel, *ASALA: Irrational Terror or Political Tool*, Tel Aviv: Jaffee Center for Stategic Studies, Tel Aviv University, 1985.

Melkonian, Monte, *The Right to Struggle: Selected Writings of Monte Melkonian on the Armenian National Question*, Second Edition (ed. Markar Melkonian), San Francisco: Sardarabad Press, 1993. *Հայերեն թարգմանությունը՝ Պայքարելու իրավունքը (Երևան, «Մոնթե Մելքոնյան» բարեգործական-հասարակական կազմակերպություն, 2003), Վահան Մկրտչյանի թարգմանությամբ (թարգմանության խմբագիր՝ Արամ Թոփչյան), Ալեք Ենիգոմշուլյանի առաջաբանով: Գարեգին Գրիգորյանի իտալերեն թարգմանությունը լույս է տեսել 2004-ին. La forza di combattere: Scritti scelti sulla questione nazionale armena*, Guasila: Editziones de su).

Minassian, Gaidz, *Guerre et terrorisme arméniens: 1972-1998*, Paris: Presses Universitaires de France, 2002.

Nalbandian, Louise, *The Armenian Revolutionary Movement*, Berkeley and Los Angeles: University of California Press, 1963.

Shiragian, Arshavir, *The Legacy*, Boston: Hairenik Press, 1976. (Memoir).

Ternon, Yves, *The Armenian Cause*, Delmar, New York: Caravan Books, 1985.

Villeneuve, Charles and Pèret, Jean-Pierre, *Histoire secrète au terrorisme*, Paris: Editions Plon, 1987.

Wilkinson, Paul and Stewart, Alasdair M., eds., *Contemporary Research on Terrorism*, Aberdeen,Great Britain: Aberdeen University Press, 1987 (*պարունակում է նաև հետևյալ հոդվածը՝* Khachig Tololyan, "Martyrdom as Legitimacy: Terrorism, Religion, and Symbolic Appropriation in the Armenian Diaspora" (pp. 89-103).

Գլուխ 11-ի և 13-18-ի աղբյուրները. Ադրբեջանի պատմություն

Altstadt, Audrey L., *The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule*, Stanford, Calif.: Hoover Institution Press, 1992.

Goltz, Thomas Caufield, *Azerbaijan Diary: A Rogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post-Soviet Republic*, Armonk, New York and London: M.E. Sharpe, 1998.

Shaw, Stanford J. and Shaw, Ezel Kural, *The History of the Ottoman Empire and Modern Turkey*, Vol. 2, Cambridge, Mass.: Cambridge University Press, 1977.

Suny, Ronald G., *The Baku Commune: Class and Nationality in the Russian Revolution*, Princeton, New Jersey: Princeton University Press, 1972.

Swietochowski, Tadeusz, *Russia and Azerbaijan: A Borderland in Transition*, New York: Columbia University Press, 1995.

Van der Leeuw, Charles, *Azerbaijan: A Quest for Identity*, Richmond Surrey: Curzon Press, 2000.

Գլուխ 11-ի և 13-18-ի աղբյուրները. Լեռնային Ղարաբաղ և Ղարաբաղյան շարժում

Adalian, Rouben Paul (ed.), *Armenia & Karabagh Factbook*, Washington DC: Armenian Assembly of America, July 1996.

Asenbauer, Haig, *On the Right of Self-Determination of the Armenian People of Nagorno-Karabagh*, New York: The Armenian Prelacy, 1996.

Bournoutian, George (ed.), *A History of Qarabagh*, Costa Mesa: Mazda Publishers, 1994. (Annotated translation of Mirza Jamal Javanshir Qarabaghi's *Tarikh-e Qarabagh*).

Chorbajian, Levon (ed.), *The Making of Nagorno-Karabagh: From Secession to Republic*, Houndmills, U.K. and New York: Palgrave, 2001.

Chorbajian, Levon, Donabedian, Patrick, and Mutafian, Claude, *The Caucasian Knot: The History and Geo-Politics of Nagorno-Karabagh*, London and New Jersey: Zed Books, 1994.

Cox, Caroline and Eibner, John, *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabagh*, Zurich, London and Washington: 1993.

Dawisha, Adeed and Dawisha, Karen (eds.), *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia*, Armonk and London: M.E. Sharpe, 1995. (Includes articles by Leila Alieva ("The Institutions, Orientations, and Conduct of Foreign Policy in Post-Soviet Azerbaijan," pp. 286-308) and Rouben Adalian ("Armenia's Foreign Policy: Defining Priorities and Coping with Conflict," pp. 309-339).)

Human Rights Watch/Helsinki, *Seven Years of Conflict in Nagorno-Karabagh*, New York, Washington, D.C., Los Angeles, London, Brussels: Human Rights Watch, 1994.

Hunter, Shireen T., *The Transcaucasus in Transition*, Washington, D.C.: The Center for Strategic & International Studies, 1994.

Libaridian, Gerard J. (ed.), *The Karabagh File: Documents and Facts on The Question of Mountainous Karabagh: 1918-1988*, Cambridge, Mass. and Toronto: The Zoryan Institute, March 1988.

Libaridian, Gerard J., *Armenia at the Crossroads: Democracy and Nationhood in the Post-Soviet Era*, Watertown, Mass.: Blue Crane Books, 1991.

Malkasian, Mark, *"Gha-ra-bagh!": The Emergence of the National Democratic Movement in Armenia*, Detroit: Wayne State University Press, 1996.

Masih, Joseph and Krikorian, Robert, *Armenia at the Crossroads*, Amsterdam: Harwood Academic Publishers, 1999.

Ministry of Foreign Affairs of the Azerbaijani Republic, *Information Bulletin on the Consequences of the Aggressions by the Republic of Armenia against the Azerbaijani Republic*, Baku, February 1994.

Shahmuratian, Samvel (ed. and compiler), *The Sumgait Tragedy: Pogroms against Armenians in Soviet Azerbaijan*: Vol. I: Eyewitness Accounts. New Rochelle and Cambridge, Mass.: Aristide D. Caratzas and The Zoryan Institute for Contemporary Armenian Research and Documentation, 1990.

Suny, Ronald Grigor, *The Revenge of the Past: Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union*, Stanford: Stanford University Press, 1993.

Swietochowski, Tadeusz, *The Problem of Nagorno-Karabagh: Geography versus Demography under Colonialism and in Decolonization in Central Asia*, New York: St. Martins' Press, 1993.

United States Committee for Refugees (USCR), *Faultlines of Nationality Conflict: Refugees and Displaced Persons from Armenia and Azerbaijan*, Washington, D.C.: USCR, March 1994.

Walker, Christopher J., *Armenia and Karabagh: The Struggle for Unity*, London: Minority Rights Publications, 1991.

Կենսագրական մենագրություններ Մոնթեի մասին

Alexandrian, A., "De Monte a Avo: Histoire d'une legende," *Nouvelles d'Arménie*, No. 87 (June 2003), pp. 18-31.

———. "Il est entré dans la légende," *Nouvelles d'Arménie*, No. 35 (July/August 1998), pp. 24-29.

———. "Itinéraire d'un enfant de la diaspora," *Nouvelles d'Arménie*, No. 2 (June/July 1993), pp. 5-13.

Gaume, Myriam, *Les Invités de la Terre: Arménie, Karabagh 1988-1992*, Paris: Éditions du Seuil, 1993.

Vorbach, Joseph E, "Monte Melkonian: Armenian Revolutionary Leader," *Terrorism and Political Violence*, Vol. 6, No. 2, (Summer 1994), pp. 178-195.

Բաղրյան Վարդգես, Ավո. հուշապատում, *Ստեփանակերտ, «Մաշտոց», 1993:*

Հասրաթյան Սենոր, Գաղափարի զինվոր, *Երևան, «Ամարաս», 2006:*

Պետրոսյան Աշոտ, Արցախյան հաղթականչեր, *Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2006:*

Քամալյան Սեյրան, Ավոն մեր աչքերով, *Երևան, «Նաիրի», 1994:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 5
ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ 7
ՆԱԽԱԲԱՆ. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1993 ԹՎԱԿԱՆ) 8
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ՆԱԽՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ 16
Գլուխ 1. Փոքր քաղաքի տղան 16
Գլուխ 2. Երկիմաստություն 29
Գլուխ 3. Նախնյաց պատմությունները 42
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ՄԵԿՆՈՒՄՆԵՐ 54
Գլուխ 4. Բաց ճանապարհը 54
Գլուխ 5. Ուխտագնացություն 78
Գլուխ 6. Անհանգիստ ժամանակներ 103
ԵՐՐՈՐԴ ՄԱՍ. «ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԸ» 120
Գլուխ 7. Ընդհատակում 120
Գլուխ 8. Կասկածյալ ահաբեկիչը 147
Գլուխ 9. Նահատակություն 168
ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ. «ԱՄԷՆ ԿՈՂՄ՝ ՊԱՏ» 186
Գլուխ 10. Բարեգործներ 186
Գլուխ 11. Բանտում 209
Գլուխ 12. Դեգերումներ ավերակների մեջ 232
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ. ՎԵՐՋԱՊԵՍ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 246
Գլուխ 13. Դաշը հաց 246
Գլուխ 14. Ինձ «Ավո՛» ասեք 266
Գլուխ 15. Կարգապահության խնդիրներ 284
ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ. ՀԵՌԱՎՈՐ ԼԵՌՆԵՐ 306
Գլուխ 16. Կանոնավոր բանակ 306
Գլուխ 17. Կապի՛ դուրս եկ, Զրո-զրո 334
Գլուխ 18. Զրի պես գնա՛ 357
ՎԵՐՋԱԲԱՆ. ՏԵՍԱՐԱՆ ԵՌԱԲԼՈՒՐԻՑ 380
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 385
ԲԱՌԱՐԱՆ 417
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 419